

1. ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՔԻԱԹՆԵՐ

1(1). ԱՆԱՅԱՅԱԿԱՆ ՃՈՒՐ ՊԻՐՈՂ ՏՂԵՆ՝

Ըլըմ ա, ըլըմ չի՝ մի թաքավոր: Մի կնիկ ու մըն էլ մի տղա ա ունենըմ: Կնիկը մեռնըմ ա, կնիկը, որ մեռնըմ ա հա, քնըմ ա մի կնիկ պիրըմ էտ մարթը՝ էտ թաքավորը: Կնիկը պիրըմ ա, հմի էտ կնիկը ուզըմ ա, որ էտ տղին մի հանք անի՝ տանիցը ռոզդ անի: Ուզըմ չի, որ տղեն կցած ըլի էլի կշտին, խորթ ա էլի կնիկը: Տա սուտից կյալիս ա հիվընդանըմ կնիկը: Ի՞նչ ճարըմ են պիրըմ են՝ ըլըմ չի, թե ասըմ ա.

- 2է՛, ես տրանով սըղանավ չեն:

Է՛, սաղ երգիրը, ինչ որ մարթ կա, իմաց ա անըմ, որ այսինչ պանն ա ուզըմ կնիկս, ճարեցեք պիրեք: Պիրըմ են:

- 2է՛, - ասըմ ա, - լավ:

- Բա ի՞նչ ես ուզըմ:

Թե. - Ես, - ասըմ ա, - անմահական ճուր են ուզըմ:

Դե, անմահական ճուրը ո՞րդիմա պիրեն:

Ստածըմ են, մտածըմ, ո՞վ կպիրի, ո՞վ չի պիրիլ, տղին ասըմ ա. - Եթե անմահական ճուր հըսցրիր, քու մերը սըղացավ՝ սըղացավ, թե հու չէ, ճիտըտ կտրիլ դեն:

Իլլաջ չկա, վեր ա կենըմ ճաճիա ընգըմ: Քյնըմ ա, քյնըմ ա, քյնըմ ա մի ճըղացպանի ռաստ կյալի: Քյնըմ ա տենըմ միրուքը ըստեղ նստած¹, ճաղացը պտիտ ա կյալի, աղըմ ա: Բարև ա տալի, թե ասըմ ա. - Պապի, բարև:

Ծեռը դեն ա անըմ՝ քարը կաղըմ ա:

- Ի՞նչ ա, բալա ջան:

Թե ասըմ ա. - Ապի, բա սհե, սհե պան կա, սհե ինձ դրգել են, որ անմահական ճուր պիրեն:

- Պահո՛, շատ, - ասըմ ա, - տըժար ա, - ասըմ ա, - ընդի քյնացողը էտ չի կյալի: Բա թե էտ ո՞վ ա ըտենց են իք արել, որ դու ա արել:

Ստածել ա, մտածել ա, թե ասել ա. - Ինձա-նից մեծ ախպերս, - ասել ա, - վիրեն ա, քյնա մրա՛ կուշտը: Նա մի պան կասի:

Տա էտ ա վեր ա կենըմ, մըն էլ քյնըմ, ոնց որ ըստեղ Ենոքավան քյնա, էն ա ճաղացըմ էլ էտ քյնըմ ա տենըմ մի պառա՛վ մարթ՝ միրուքը նստած: Բարև ա տալիս, ըլետ ծեռը դեն ա անըմ, քարը կաղըմ ա, թե ասըմ ա. - Ի՞նչ ես ասըմ, տղա ջան:

Թե ասըմ ա. - Բա սհե, սհե կործի են եկել, գիղըմ չեն, թե դիրը քյնա՛, որ ճարեն: Ինձ ստիպել են, որ պետք է անմահական ճուր պիրեն:

Կլխին պտտըմ ա, թե ասըմ ա. - Տա շատ տըժար պան ա, - ասըմ ա, - տա՛, - ասըմ ա, - անմահական ճուրը քյնացողը էտ չի կյալի: Քյնա, - ասըմ ա, - ինձանից եղը. - ասըմ ա, - մեծ ախպերս ա ընդեղ, մա՛, - ասըմ ա, - կարող ա գիրենա:

Վեր ա կենըմ քյնըմ, ըլետ տենըմ ա մի ճաղաց պան անըմ ա: ճաղացն ա մտնըմ բարև տալի էն մարթին, ըլետ մեծ ծեր մարթ ա ըլըմ, ու տրան պատմըմ ա, թե ասըմ ա. - Տըժար ա՛, կարա՛ս, - ասըմ ա, - իմ ասածին կատարես:

Տա արթեն դիլու ա ըլըմ, որ հա՛, գիղըմ ա տեղը: Թե ասըմ ա. - Կքյնա՛ս հորըտ կասես, որ, ա՛՝ գերա, քառասուն ոխճար խըշլամա ես տալի, էփըմ ու եղով, ինչքան թխվածքը տրա՛ հետ, ու վեր ես ունըմ, այսինչ տեղը մի դուզ-դուն կա՛՝ ընձբուլը վե՛ թափած ու ինքը շա՛տ պառավ, անճոռնի պան ա: Մի կենը մա՛ կարող ա թեզ հըսցնի էտ, որ ասըմ ես անմահական բաղ ա: Տա՛՛ անմահական բաղը, կորած ա էլի, որ փիաղա, ծիով-միով չես կարա հասնես: Էն

¹ Բանասացը ծեռըվ ցույց է տալիս կուրծքը (ծա-նոթ. բանահավաքի):

ղուզղուներ քեզ կտանի, բայց քառասուն ոխ-
ճարդ պետք է ըլի, որ նրան հարերդա ուտը-
ցնես, որ քեզ տընիլի դի թևերի վրա՝ տանի:

Քյնըմ ա, էտ ա հորը պատմըմ ա: Յերը, դե
թաքավոր մարթ ա, քառասուն ոխճար ա ինչ
անըմ, թխըմ ա: Յաց ա թխըմ, պան ա թխըմ,
էտ մարթը վեր ա ունըմ կյալի էտ ճըղացպանի
կուշտը: Էտ ճըղացպանը շիանց ա տալի, որ
այսինչ տեղը էտ ղուզղուներ էնքան պրեապել
ա՝ ընմբուլը վեր ա տառնըմ: Էտ տղեն վեր ա
ուներմ էտ ոխճարին տիե սորուքմա էփած
տանըմ էտ ղուզղուներն մըխելի ուտըցնըմ ա,
ուշն ա կյալի էտ ղուզղուներ: Ուշն ա կյալի, թե
ասըմ ա:

- Այ տղա,- ասըմ ա,- արթեն ինձ վըռաքել
եմ,- ասըմ ա:- Դե,- ասըմ ա,- նստի՛, ուսերիս
նստի, պինդ փռնի, բայց ամեն ղու անիլեն,-
ասըմ ա,- էսքան կկտրես պերանս կքցես: Ա-
մեն ղու անիլեն պերանս կքցես, մա դի ինձ
տանիլ:

Որ տղեն էտ ա տիե նստըմ ա, էն ա խելի
քյնըմ են, քանի տառ տենըմ ա ղու արալ. մսի-
ցը կտորմ ա պերտըն քցըմ, մսիցը կտորմ ա
պերտըն քցըմ: Յա հասնըմ ա, հասնըմ ա, հը-
սցնըմ ա էտ անմահական բաղը: Անմահական
բաղընը վեր ա տընմ՝ դրաղին:

Թե ասըմ ա.- Յմի որ,- ասըմ ա,- տու ուզե-
նաս բաղը մտնես, արթեն դրոտալ դի, էտ բա-
ղը դրոտալ դի. «Յա՛յ, տարան հա՛, տարան,
փռնեցե՛ք, հա փռնեցե՛ք», ուրենը ետ չըմտիկ
անես: Տու, զո՛, ուրենը, կքյնա: Քյնալ դե տե-
նալ առաջըտ մի ոխճար էլ դի կյալ՝ կապած,
մի կել էլ: Ոխճարի դաքին միս ա տրած՝ ջած-
դած, իսկը կիլի դաքին խոտ ա տրած: Խոտը
վեր կուրես ոխճարի դաքին կտընես, էն միսն
էլ կտընես կելի դաքին ու ըլետ կշարժես:

Քյնըմ ա տենըմ, իսկապես, էտ բաղը որ ա-
սըմ են, հե՛ն հայա տեղ ա էլի: Կելը՝ կապած
ընդի մսին ա մտիկ անըմ, էն ոխճարն էլ խո-
տին ա մտիկ անըմ: Էն խոտը պիրըմ ա ոխ-
ճարի դաքին տընըմ, միսը տանըմ կիլի դաքին
տընըմ ու անց կենըմ: Անց ա կենըմ, քյնըմ ա
տենըմ մի ախալուր ա, մի չինարի ծառի տակին
մի ախալուր ա:

Թե ասըմ ա.- Որ խմես, կասես. «Խվա՛յ, էս
ա լավը հա՛», ասես ոչ, թե՛ կեշ ա:

Էտ ա քյնըմ ա, քյնըմ ա էտ ախալիցը խմըմ
ա ու ընքելանը տենըմ ա կեշ ա էլի ճուրը: Թե
ասըմ ա.- Խվա՛յ, էս ա ճուր, հա՛:

Որ տենըմ ա, որ լավն ասեց, հա՛ տենըմ ա
մի եղունիկ գյուլիցը տուս եկալ ու թե.- Այ
տղա,- ասըմ ա,- տու խի՞ ասեցիր թե լավն ա
էտ ճուրը:

Թե ասըմ ա.- Դե լավն ա, ասեցի՛ լավն ա:

Բայց դե մա գիղըմ ա՝ եղունիկը, որ մա ա-
մեն եկող-խմող նրան ասել ա վաղն ա՝ էտ
ճյըրին, իսկը տառ էկալ ասեց՝ լավն ա:

Էտ եղունիկը թե ասըմ ա.- Բա քու կո-
րուստը ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Ես անմահական խնձորի եմ
եկել, եղող անմահական ճուր պետք է տանեմ՝
մի բոթիլ:

Թե ասըմ ա.- Այ տղա,- ասըմ ա,- կքյնա
այսինչ ծառիցը Էրկու հատ խնձոր կպուկես,
բայց,- ասեց,- ղըջըղը դեն անիլ. «Տարա՛վ հա՛
տարա՛վ, տարա՛վ հա՛ տարա՛վ», որ ետ մտիկ
արիր՝ քար դես տառնալ, էտ չըմտիկ անես,
ինչքան բոլավեն քըմակիցըտ, տու ետ չըմտիկ
անես՝ քար կտառնա: Եղող էտ ըխալիցը, որ
քյնա թե ճուր վեր ունես ու մի քիչ խմես ու
ընքելանը կասես. «Խվա՛յ, քու ակին մատաղ,
էս ի՞նչ լավ ճուր ա»: Ասես ոչ, թե՛ կեշ ա:

Ու էտ տղեն քյնըմ ա ու ընքելանը էտ խնձ-
որներիցը պուկըմ ա երկու հատ: Ինչքան ղը-
ջըղը են անըմ, տառ էտ չի մտիկ անըմ: Դե պահ
են տվել, չէ՛, էն ղուզղուներ ասել ա, որ ետ չը-
մտիկ անես: Քյնըմ ա էտ ըխալիցը էլ մի բոթիլ
ճուր լցնըմ, ինքն էլ խմըմ, թե.- Խվա՛յ, ակնիտ
մատաղ, էս ի՞նչ լավ ճուր ա:

Ու ընքելանը բոթիլը լցնըմ էլետ կյալի: Էն
կելը, էն ոխճարը հըմի, ինչքան քըմակիցը
ղըջըղ են անըմ, որ «Քյնա՛ց հա՛, քյնա՛ց, փռնե-
ցե՛ք հա՛, փռնեցե՛ք», սամսեն ժած չեն կյալի:

Թե ասըմ ա.- Էսքան տարի ա խոտը՝ դա-
քիս,- կելը,- միսն էլ՝ ոխճարի դաքին, ես մտիկ
եմ անըմ մսին, ոխճարն էլ էս խոտին ա մտիկ
անըմ, բայց տառ եկալ,- ասըմ ա,- խոտը
տրուց ոխճարի դաքին, միսը տրուց իմ դա-
քին:

Էն ա էն ախճիկն էլ տուս ա կյալի՝ Էն գյուլի,
որ ընքընդն ա՝ Էն գյուլընը, են ըխալիցը որ
ճուր ա խմել:

Թե բա.- ես ճուրբ,- ասըմ ա,- ամեն էկող էկել աս խմել, թե ասել. «ես ի՞նչ փչացած ճուրբ ա, սա ճուրբ ա որ»: Բայց տո՛ւ էկավ խմեց, ասեց լւովն ա:

Նմանապէս՝ են եղունիկը: Ուրեմը տհե անիլեն՝ ետ տղեն էտ ճուրբ հանըմ ա կյալի, ղուզղունին էլետ նստըմ ա կյալի: Կյալիս ա հոր տուն: Հոր տուն ա կյալի, հմի հերը տենըմ ա արթեն ճուրբ պիրել ա, տանըմ են մորը տալի: Մերը խմըմ ա, սուտ ա խտիր ընգած՝ հիվանդ չի էլի, մըհանա ա անըմ, որ էտ տղին գիղըմ ա, որ քյնա, ետ չղի կյալ: Ուզըմ ա հենց փորցանքի տա, որ ետ չկա՛մ էլի: Տանըմ ա ընդի, մերը խմըմ ա:

- Է՛,- ասըմ ա,- չէ՛, ըլավ ո՛չ, լավը չի:

Էտ թաքավորի նազիրներից մինը կյալիս ա ընդդեղ, թե ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, այսինչ տեղը մի պան կա՝ քըշերը լիս ա տալի, որ ուրեմը պիրես պալատըմ տնես, է՛ երգիրս էն ա լիս դի ըլի:

- Բա, ո՞վ կպիրի, ո՞վ չի պիրի:

Թե ասըմ ա.- էլետ էն անմահական ճուրբ պիրողին էլետ կարքադրի, նա քյնա պիրի:

Էլետ էտ տղի յախեն փոնըմ ա հերը, թե ասըմ ա.- Բա էս ինչ երգըմը, ասըմ են սհե մի լիս անող պան կա, որ պիրենք մեր պալատըմ կըտնենք, ուրեմը էտ լիսերը ոնց որ վառվըմ ա, մհե կվառվի:- Էտ տղին կարքադրըմ ա, որ.- Եթե պիրիր՝ պիրիր, պիրիր ոչ՝ ուրեմը՝ շլիքստ կտամ:

Տղեն վեր ա կենըմ քյնը՝մ էտ ղուզղունին քյըթըմը:

- Հը, տղա՛, ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Բա սհե, սհե պան կա:

- Պահո՛ւ,- ասըմ ա,- էս ինչ տըծար պան ա, տա՛մ ոնց կանենք,- ասըմ ա:

Պիրըմ ա էտ տղին ըլետ վեր ունըմ, էտ ղուզղունը ինքը տեղը գիղըմ ա, ու քյնըմ: Քյնըմ են, դե միի էտ լիսը ո՞նց դեն իրանց ճանգը քցիլ: Էտ ա քյնըմ ա ղուզղունը, տանըմ ա տեղ հըսցըմ, արթեն ինքը գիղըմ ա, որ լիսը որդի ա: Էնքան ուսումնասիրըմ են, որ մի հանքով էտ լիսը հանըմ են, կյուռնըմ են էլի: Հանըմ ա տալի էտ տղին: Էտ տղին վեր ա ունըմ պիրըմ հասցըմ իրան հողը, թող անըմ:

- Դե,- ասըմ ա,- քյնա:

Էտ լիսը պիրըմ ա, հերը կախ ա անըմ: Հմի է՛, երգիրը սհե լիս ա տալի, որ թաքավորի պալատըմը սա՛ղ լիս ա: Հմի արի տես, թե, որ ծնողը էլետ կաղնըմ ա ասըմ որ.- Հէ, ըլավ ոչ, սրանով ես,- ասըմ ա,- բավարարվեցի ոչ: Էս սըղանալ չեմ,- ասըմ ա:

Դե սըղանալ չես, էլ տրամից եղը անմահական ճուրբ պիրել ա, էտ իքը պիրել ա, ինչ որ պահանջել ա՝ պիրել ա: Հմի հապառակվել ա մերը, որ տրամ փորցի տա էլի, բալի էտ տղին ո՞ւղ անի էլի: Հերն էլ դե խաբար ա, խաբար չի, թե ասըմ ա.- Կնիկս հիվանդ ա, ինչ որ ուզըմ ա պետք ա պիրիլ տամ:

Էտ տղեն կյալիս ա ու հորիցը հրաժարվըմ ա ու ասըմ ա.- Այլես ես քու տղեն չեմ: Եսքան պանը պիրիլուց եղը, որ տու ինձ հարգեցիր ո՛չ, ուրեմը մի խորթ մոր ծրենա ուզըմ ես ինձ բաղա տա, մի տղա ունես՝ էն էլ ուզըմ ես, որ չը ըլի, լավն էն ա, ես հեկս քաշեմ քյնամ երգրե-երգիր, կորչեմ:

Այ տհե ա ըլըմ, իմ բալա:

2(2). ՀԱՋԱՐԻ ԲՈԼՈՒՆ

Մի թաքավոր ա ըլում հարևուտքի երկրում, էտ թաքավոր մի տղա ունի:

Սսել ա.- Լավ հաքմվի, քաղաք ման արի, քեզ համար ախչիկ հավմի, ես կերեմ:

Տղեն սկսեց քաղաքը ման կյալ, քյնաց մի շենքի տակով անց կացավ: Ըտեղ իրեք աղջիկ կար: Էտ աղջկերք իրար ասին.- Էս թաքավորի տղեն ա, եթե մեզ ամուսնի:

Մեծ քիրը ասեց.- Եթե թաքավորի տղեն ինձ ամուսնի, ես էնքան հաց կթխեմ, իրան գորքին կբավարարի:

Միջնակն էլ ասեց.- Էս էնքան շոր կկարեմ, որ իրան գորքին կբավարարի:

Փոքրիկ քիր ասեց.- Եթե ինձ տանին, ես մի ոսկի մազավոր ախչիկ կպիրեմ, մի ոսկիքաքուլ տղա:

Էտ թաքավորի տղեն իմացավ իրեքի ասածն էլ ու մի քանի օրից ետ եկավ՝ իրեքին էլ տարավ: Իրեք քվորն էլ տարավ, միառժամանակ մնաց, ասեց.- էտ տու ասեցիր, որ էն-

քան հաց կթխես, որ գործին կբավարարես, բա ու՞ր մնաց ասածը:

Ասեց.- Ես ետ ասեցի, որ ի՞նձ առնես:

Միջնեկն էլ նույնը ասեց: Փոքրիկ քիոր ասեց.- Ես աստծու հաջողութեամբ իմ ասածը կկատարեմ:

Մի քանի ամսուց ետո էտ թաքավորի երկիր պատերազմ ելավ, էտ թաքավորի տղեն գնաց պատերազմ: Եկավ էտ փոքրիկ քիոր ազատվեց, իրան ասածի մի ոսկի մագավոր ախչիկ պերեց, ոսկիքաքուլ տղա: Եփոր ազատվեց, երկու քիոր նախանձվեցին, ասեցին.- Մեր ասած չկատարվեց, սրա ասած կատարվեց:

Կանչեցին մի պառավ կախարդի փող տվեցին, ասեցին.- Ես երկու երեխեն կտանես ընենց կկորցնես, որ պոլորովին ըզրանց հետք չերևա:

Էտ պառավը եկավ երկու երեխեն տրուց յաշկի միջին ու հեռըցուց, տարավ ծով քցեց: Եփոր տարավ ծով քցեց, ղրաղին մի քարի տակին մի կույս կար, օրական մի մանանա էր ընգնում, ուտում էր ու աղոթք անում: Էտ կույս առավոտ վեր ա կենում, տեսնում ա մի յաշիկ կա: Էտա ծովու միջին, ալիք տանում-բերում ա: Մի քիչ մտնում ա էտա ծովի միջին էտ յաշիկ հանում ա: Տեսնում ա երկու երեխեն էլ սաղ են: Էտ կուս երփոր երեխեք պերում ա, ուրախանում ա: Մյուս օր իրեք մանանա ա վեր կալիս երկնքից: Էտ պառավ պահում ա էտ երեխանց, ուրախանում ա, որ էս ի՞նչ լավ երեխեք են, աստված մանանա ա հասցնում ըզրանց, ապրում են ըստեղ իրեքն էլ:

Էտ թողանք ըստեղ, նորից ետ տառնանք թաքավորի տղի մոտ: Էտ թաքավորի տղեն պատերազմից կալիս ա, ասում են.- Զու կնիկ երկու շան թուլա ա պիրել:- Ասում են.- Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք:

Թաքավորի տղեն ասում ա.- Կապեք էտա կնիկ էս տառն՝ եկող-գացող թքեն էրես, անց կենանք քյանք:

Մի քանի տարի անց կացավ, էտ երեխեք մեծացան: Ֆորսի ա քյնում էտ տղեն՝ սիրուն, մեծացած: Եփոր ֆորսի են քյնը, էտ թաքավորի տղեն՝ տրանց հերացուն, մա էլ ֆորսի ա կյալի: Նա մի ֆորս ուզըմ ա սպանի, էտ տղեն

ծեռիցը խըլում ա: Դետո որ մտիկ ա անըմ տղին, միտն ա ընկնըմ էն կընգա ասած, որ ըսենց տղա պտի ըլի: Ֆորսը ծեռից որ խլում ա, էտ ա իրիկուն հետ ա կյալի, էն տղեն էլ ֆորսը տանըմ ա իրա համար: Իրիկունը թաքավորի տղեն շատ տխուր քյնըմ ա իրա տուն, էն երկու կնիկ հարցնըմ են իրա մարթուն, ասում են.- Ի՞նչ ա պատահել հետք քե, որ տխուր ես:

Թե ասըմ ա.- Դետո մի չտեսնված պոն են տեսել.- ասում ա,- մի տղա են տեսել՝ մազերը բոլոր ոսկի, ու մի ֆորս հանեցի, մա իմ ծեռից խլեց:

Էտ երկու քիոր մտածեցին, ասին.- Էտ կըլի, երկի արշա են եկել երկրորդ:

Առավոտ կանչեցին նույն էն կախարդ պառավին, ասեցին.- Տըռանք երեվույթք են եկել, էտ երեխեք:- Պառավին ասին.- քյնա էնպես կորցրու, որ չերևան, եթե երևան, մեր վերջն ա:

Պառավ կնաց քթավ տրանց: Քիրն էլ, ախպերն էլ, ճընավոր պառավն էլ ըստեղ մի քարի տակի ապրըմ են: Պառավը ասեց.- Բա ընչի՞ էտ քարի տակին եք ապրում, ծեղ համար մի շենք շինեցեք, ախոս չե՞ք, էտպես սիրուն ու էս քարի տակ ապրում եք:

Թե.- Տառի՞, շենք ո՞նց դենք շինի բա:

Թե ասըմ ա.- Մի ուստա կա, անունը՝ Ուստա Նջար, որ կանչես, քեզ համար լավ պալատնի կշինի:

Էտ տղեն առավոտ վե կցավ ու հրքուրց, որ էտ Ուստա Նջարը որտեղն ա ու քյնաց քթավ: Զյնաց քթավ ուստին, ասեց.- Ես եկել եմ, որ ի՞նձ համար մի շենք շինես:

Էտ ուստեն նրան պատասխանեց, ասեց.- Իմ կործիքներ, իմ մալեն ու չաքում մի կախարդ պառավ խլել ա տարել շատ հեռու տեղ, թե կալիրես, քեզ համար շենք կշինեմ:- Ուստեն շանց տվուց ճանապարհ, ասեց.- Ես ճամփով պետե ա քյնաս էն պառավի կուշտ:

Բայց էտ ճանապարհ որ քյնըմ են, հետ չեն կյալի, պառավ ըստեց շիանց ա տվել, որ էլ հետ չկալն էն տղեն: Տղեն առավոտ ճանապարհ ընգավ, քյնաց տեհավ ճամփի կես տեղ մի պապիկ մատած՝ մի սև կծիկ թել, մի սիվոտակ կծիկ թել վրա ա տալի՝ ցերեկ ու քիշեր: Պա-

պիկ հրցրուց, ասեց.- Զահել ջան, էտ որդի՞ ես քյնըմ, ախր էտ ճանապարհով ով քյնըմ ա, հետ չի կյալի, քեզ սխալ են դնորգել:

Տղեն ասաց.- Պապիկ, ուզեմ-չուզեմ, պետք ա քյնոմ:

Էտ պապիկը տղին որ տեհավ՝ շատ գեղեցիկ ու սիրուն, ասաց.- Տղա ջան, դե որ կքյնաս էտ ճանապարհով, որ քյոցցիր, էլ հետ չկյաս, քեզ շանց տամ ճանապարհներ: Կքյնաս,- ասըմ ա,- առաջին անքամ մի հատ կել կապած ա ճամփի վրա ու խոտ ա տրած առաջ, մի հատ էլ ծի նրանցի մի քիչ հեռու կապած, նրա առաջն էլ ոսկրներ ա տըրած: Տրանցի մի քիչ առաջ կքյնաս մի բղտոր կետ ա կյալիս քո առաջ՝ շատ բղտոր, ցխի մման: Երփոր կհասնես կելի մոտ, խոտ կվերցնես կտընես ծիու առաջ, ոսկրներ կվերցնես կըտնես կելի առաջ, կասես. քու կերակուր էտ ա, քու կերակուր էլ էտ ա: Եփոր կքյնաս էտ պխտոր կետի կուշտ, կասես. «Երանի ես ծարավ ըլելի, ես լավ, պարզ ճուր խմեյի»: էտ իրեք էտպես կասես, տրոնք քեզ ճանապար կտան՝ անց կկենաս: Կքյնաս, կքյնաս, կտենաս մի շենք ա կյալի քու առաջ, մի կախարդ պառավ մտել ա հաց ա թխում, իրա ծծեր էքքան մծ եմ, որ մինը մի ուսով ա քցել, մին էլ մի ուսով ու հաց ա թխըմ: Ուստա Նջարի գործիքները ընդե պատուհանում տըրած ա, եմ պառավի մոտ: Եփոր կհասնես պառավին, կհասնես իրա ծծեր կծես: Նա կասի. «Այ խսան, ի՞նչ ես շինում», կասես. «Ես քու որթին եմ, քու ծիծ ծծում եմ»:

Պապիկ արթեն խորուրթներ տվուց էտ տղին, ու տղեն ճանապարհվեց: Տղեն քյնոց տեսավ մի ծի, մի կել կապած ա ճամփի վրա, կելի առաջ խոտ կա, ծիու առաջ ոսկրնի կա, փոխեց ըղրանք. ասեց.- Ծեր կերակուր էտ ա, կերեք:

Տրոնք ճանապար տվին, անց կցավ կնաց կետի մոտ, մի բղտոր ճուր ա սարսափելի, և էտ տղան ասեց.- Երանի ես ծարավ ըլելի, էս պարզ ճուր խմեյի, ես ի՞նչ լավ ճուր ա:

Տրանք ճանապար տվին, անց կցավ: Բյնաց տեսավ պառավ հաց ա թխում, մի ծիծ էտ ուսով քցած, մին էլ մի ուսով քցած: էտ

տղեն հասավ, սկսավ պառավի ծծեր ծծիլ: Պառավ ասավ.- Այ խսան, էտ ի՞նչ ես շինում:

Թե ասաց.- Մարիկ, ես քու որթին եմ:

Եփոր պառավ հանգստացավ, էտ տղեն հասավ մալեն ու չաքուչ վերցուց ու փախավ: էտ պառավ ետունուց վազ տվուց, կետին ասեց.- Փռնի՞, փռնի՞:

Կետը ասեց.- Զեմ փռնի, էքքան տարի ինձ պխտոր ճուր ես շինի, ինձ պարզ շինեց, չեմ փռնի:

Եփոր կետ ճանապար տվուց անց կացավ, հասավ ծիուն ու կելին, պառավն ասավ.- Ծի փռնի՞, ծի փռնի՞:

Ասավ.- Զէ՛, չեմ փռնի, էքքան տարի ինձ ոսկրնի ես տվել, իսկ նա ինձ խոտ ա տվել՝ իմ կերակուրը, չեմ փռնի:

Հասավ կելին, կելին ասավ.- Փռնի՞, փռնի՞:

Ասավ.- Զէ՛, չեմ փռնի, տու էքքան տարի խոտ ես տրել իմ առաջ, նա իմ ոսկրնի ա տրել իմ առաջ, քող քյնոմ:

Իրեքն էլ ճանապար տվին, էտ տղեն եկավ արթեն պերուց իրան գործիքներ տվուց Ուստա Նջարին: Ուստա Նջար կարճ ժամանակով իրան մի լավ շենք շինեց, և քիր, ախպեր, էտ պառավ եկան էտ սենյակներ արարելու համար: Ու նրանք մնացին էտ շենք:

Միառժամանակից էտ էլի էտ տղեն ֆորսի քյնոց, էտ թաքավորի տղեն էլ ֆորսի եկավ: Նորից էտ տղեն էտ ֆորս խլեց էտ թաքավորի տղից: Եփոր խլեց, էտ տղեն էլ իրիկուն էտ տռնոճով թաքավորի տուն՝ շատ տխուր, իրան քեֆ լավ չի: Իրան էտ երկու կնիկ էլի հարցրին.- Էտ ի՞նչ ա պատահել, որ քեֆը լավ չի:

Թե ասըմ ա.- Էսոր նույն են տղեն պատահեց, իմ ֆորս իմ ծեռից խլեց:

Էլի էտ երկու մեծ քիր են նույն կախարդ պառավին կանչեցին, ասեցին.- Էլ էտ երևացել ա, խնթրում ենք քյնձ կորցրու, էլ չերևան:

Պառավ խոստացավ, որ.- Ես քյնոմ էնպես տեղ ղնորգեմ, որ էլ չերևա:

Պառավ քյնոց տրոնք մոտ՝ էտ շենք, ասաց.- Տղա ջան, տեղեմ ե՞ս ինչ լավ պոմ ես շինել, ինչ լավ շենք ես շինել:

Էտ տղեն ասեց պառավին, որ.- Տատիկ ջան, իսկպես լավ շենք ենք շինել քու ասածով, քու խորուրթով:

Ասաց.- Բա մի պան պակաս ա մնացել, եթե էտ էլ պերես տընես թու բաղըմ, հավելի լավ կըլի:

Թե ասեց.- Տատիկ, ի՞նչ պերես:

Թե.- Այսինչ տեղ մի բլբուլ, հազարի են ասում, տասերկու լեզվով երթում ա, էտ էլ որ պերես տնես թու բաղում՝ երբի ծեղ համար, հավելի լավ կըլի:

Պառավ հետ տռռավ քննաց ասեց.- Էնպես ճանապարհով եմ դռըգել, որ մա էլ հետ չկայ:

Էտ տղեն առավոտ վեր կցավ էլի մույն ճանապարհով ճանապարհեց, որ քյնա հազարի բլբուլ պերի: Քյննաց տեհավ պապիկ էլի մույն տեղ մտել ճամփի կես տեղ՝ մի սև կծիկ, մի սիպտակ կծիկ իրան առայն ա՝ ցերեկ և կիշեր: Էտ պապիկ ասեց տրան.- էտ ճանապարհով ախր ով քյնում, հետ չի կայլի, թու դռըգողը թեզ ընենց ղըրգում ա, որ տու հետ չկայ:

Թե.- Պապիկ ջան, էն մի անքամ քյննացի, հաջողվեց, էս անքամ էլ պտի քյնամ:

Պապիկ իրան ասեց.- Կքյնաս կտենաս,- ասեց.- մի բաղ դի կայլ թու առայ, մի շենք էտ բաղի միջին՝ հազարի բլբուլ տրած, և երթում ա: Տու կհանիս էտ հազարի բլբուլից, յաշկի մեջ տրած ա, կվերցնիս ու հետ կկայնա, բայց պոլոր, սար, ծիր, քար պտի կանչին. «Հազարի բլբուլ տարա՛վ», պտի ետ չմտիկ տա: Եթե մտիկ անես, ետնուց քար դես տռռում:

Ու տղեն ճանապարհեց արթեն: Շատ քյննաց, քիչ քյնեց, մի շենք երևաց և շենքի առայ՝ մի բաղ, և հազարի բլբուլ տրած ընդեղ երթում ա, և հասավ տղեն յաշկով վերցուց ու փախավ: Եվ քար, սար կանչեցին.- Հազարեն բլբուլ տարա՛ն:

Բայց ես ետնուց մտիկ չարավ: Հազարի բլբուլ վերցուց պերուց ու տըրուց իրանց բաղ, և ամեն օր երթում ա էտ հազարե բլբուլ՝ տարբեր լեզուներով: Մի քանի օր եփոր հանգստացավ, էտ տղեն էլի ֆորսի տուս եկավ, էտ թաքավորի տղեն էլ ֆորսի ա տուս եկել էտ օրը: Էտ թաքավորի տղեն էլի ֆորս հանում ա, ետնուց վազում էտ երեխեն, էլի հասնում ա, ֆորս խլում ծեղից: Էտ թաքավորի տղեն տրան ասում ա.- Արի, տղա ջան, արի մստենք գրից անենք, էս էլ երրորդ ան-

քամն ա, որ տու իմ ֆորս խլում ես իմ ծեղքես, էտ ի՞նչ պան ա:

Զրուց են անըմ տրանք, էտ թաքավորի տղին տյուր ա կյալի, ասըմ ա.- Առավոտ կկայնա մեր պալատ՝ մեզ ղոնաղ:

Տղեն քյնըմ ա իրան տուն, իրան քվոր, իրան մոր ասըմ ա.- Թաքավորի տղեն ընծի կանչել ա, ես ղոնաղ դեմ քյնալ:

Եփոր առավոտը տղեն ճանապարհում ա քյնա թաքավորի պալատ, էտ հազարե բլբուլ գիտնական պան ա չէ՞, կանչում ա տրան ասըմ ա.- Դե որ քյնում ես հյուր, մի կնիկ կա ըտեղ շան տեղ, պոլոր եկող-քյնցող թթում են ղըրա իրես, պայց տու մի պուս ծաղիկ կքաղես, մա թու ծնողն ա, տու կքցես ծաղիկ վրեն:

Նա մի պուս ծաղիկ քաղում ա ու ճանապարհում, քյնում թաքավորի պալատ: Եփոր քյնում ա թաքավորի պալատ, տենում ա մի կնիկ կապած ա ընդեղ՝ շան լակամանի վրա, մա էտ ծաղիկ փռում ա իրա մոր կլիտ վրեն ու մտնում ա պալատ: Թաքավորի պալատ պոլոր իրար են դիպչում, թե էս ի՞նչ պան ա, որ պոլոր թթում են տրա երես, սա ծաղիկ պերուց շաղ տվուց վրեն: Ընդեղ, իհարկե, ասող եղավ տրան, թե.- Կարքարոված ա՝ պոլոր թթում են ղըրա երես, տու ընչի՞ ծաղիկ շաղ տվիր տրա վրա:

Նա պատասխանեց, որ.- Նա իմ ծնողն ա, ես, իհարկե, ծաղիկ պտի թափեմ ըտրա վրեն:

Եփոր կործ պարզվեց արթեն, պատմեցին էտ պոլոր պաներ, որ ես պատմում եմ, տեհան, որ էտ երկու քիր, կախարդութիւն տրանք են արել: Էտ տղու մոր հետ են անում, տանում են պաղմիք լվացվում, մաքրում, պիրում են, տառնում ա իրան ծնող: Կործը պարզվում ա: Թաքավորի պալատ որոշում հանում են, որ էտ երկու մեծ քիր կապեն երկու ծիրու պոչից և թող անեն սարեր: Էտ երկու ծիրին արթեն իրիկուն ղըրանց մազերն են պերում տուն: Էտ թաքավորի տղեն քյնում ա իրա քիրն ու են պառավել էլ ա պերում, միավորվում են ու արթեն վերչացնում են: Երկնքից իրեք խնձոր ա ընկնում, մինը՝ ասողին, մինը՝ ականջ տընդին, մինը՝ լսողին:

3(3). ԴՈՒ ԴԵՔԻԱԹԸ*

Ըլել ա, ըլել չի՝ մի հատ թաքավոր, իրեք տղա ա ունեցել: Թաքավորը եկել ա օրերի մի օրը հիվընդացել, տղերանցը կանչել ա իրան կուշտը, ասել ա.- Տղերք ջան, գիդեք ի՞նչ կա, ծեզանի մներդտ պի՞ճ եք, ինձամից չեք: Կքնանք թաքավոր Ղազինի կուշտը, մա ծեր պի՞ճը կճըլկի:

Թաքավորը մահացել ա, տարել են հողավեր քցել պրծել, եկել են արթեն բառասունքն էլ են տվել, վեր են կցել իրեք ախպերով քյնըմ են թաքավոր Ղազինի կուշտը, որ տհանց պի՞ճը ջըլկի: Ճամփա են ընգել քյնըմ են: Մեծ ախպերն ասել ա, թե.- Տղեք, հես-հես,- ասել ա,- մի դավա՞ն քյնձցել:

Էն միչնակն էլ ասել ա.- Բա տոււ էտ ես ասըմ, վրի վեշն էլ բաքձա՞զ ու չամիչ ա:

Էտ պուճուրն էլ ասել ա.- Բա տոււք էտ եք ասըմ,- ասել ա,- աշու աշկը բոռ ա:

Չատ չի կա հա՛, միտ ասըմ են ու քյնըմ: Որ մի խելի քյնձցել են, տեհել են էտ դավի տերը հրես կյալիս ա:

- Արա, տղերք ջան, դավա՞ն չտեհա՞ք:

Էն մեծը թե.- Բյնձոք:

Էն միչնակն էլ թե.- Արա, խի՞ իր բրախել, վրի պեռն էլ բաքձա՞զ ու չամիչ էր:

Էս պուճուրն էլ թե.- Աշու աշկը բոռ էր:

Թե ասըմ ա.- Ի՞մ դավեն ծեզ մոտ ա, տվե՞ք:

Թե ասըմ ա.- Դավա՞ն չենք տեհել:

Բա.- Էտ ձկնի ասըմ եք, էն ա ի՞մ դավեն ա էլի:

- Դե որ ասըմ ես, քյնձոք Ղազինի կուշտը՝ կորոշի, բու դավեն կտանք, իրեք չլենք, չորս չլենք:

Ճամփա են ընգըմ: Մի խելի քյնըմ են, էտ մեծ ախպերը ահըմ ա.- Զրես, հրես մի կնիկ ա քյնձցել:

Էն միչնակն էլ ասըմ ա.- Բա տոււ էտ ես ասըմ, ծանդրա՞ծ ա:

Էտ պուճուրն էլ ահըմ ա, թե.- Բա տոււ էտ ես ասըմ, մարթը թակել ա տոււ քցել:

Նհե խելի քյնըմ են, տեհըմ են էտ կյնգա տերը հրես կյալիս ա:

- Արա՛, տղեք ջան, կնիկ չքյնա՞ք:

Էն մեծը թե.- Բյնձոք:

Միչնակն էլ ասըմ ա.- Բա ծանդրա՞ծ էր:

Էն պուճուրն էլ ասըմ ա.- Էն խի՞ իր թակել, ա՛:

Թե ասըմ ա.- Դե էտ ի՞մ կնիկն ա, էն ա տոււք տեհել եք, ասեցեք տեղը:

- Բյնձոք Ղազինի կուշտը: Չորս չլենք, հինգ ըլենք:

Բյնձոքին հասան թաքավոր Ղազինի կողքը:

- Բարով հազար բարի ենք եկել, թաքավորն ապրած կենա, մենք իրեք ախպեր ենք, քեզ հետ գործ ունենք, մեր գործը հետո կվերջացնես, մաղդի էս դավա՞շու, մեկ էլ էս կյնգատիրունչ հաշիվը վերջացրու, սիւնք քյնձոք, մերն էլ՝ էլուց:

Ասըմ ա.- Շատ լավ:- Դավա՞շուն ասըմ ա. Ո՞նց ա ըլել:

Թե ասըմ ա.- Սիե, սիե, սիե.

Մեծ ախպրն ասըմ ա.- Բա տոււ ո՞նց տեհար:

Թե ասըմ ա.- Էն ա տեհա՛ ճամփեն մի ոտ-մատեղը մաշուր, տրանով որոշեցի, որ ըսիով դավա՞ն քյնձցել:

Միչնակին ահըմ ա.- Բա տոււ ո՞նց որոշեցիր, որ նրա պեռը՝ վեշը, բաքձա՞զ ու չամիչ ա:

- Ըս դու՛ն բաքձա՞զ էր վեր տառել, էս դու՛ն էլ՝ չամիչ: Տրանով որոշեցի, որ նրա վեշը բաքձա՞զ ու չամիչ ա:

Պուճուրին ասըմ ա.- Բա տոււ ի՞նչ գիդացար, որ աշու աշկը բոռ ա:

- Ղորդի միչին որ ըրածել էր, հարերդա ծախու դոլի վրա ա ծավել, աշու դոլիցը ըրածել չէր: Էս դոլի վրա էր, տրանով որոշեցի, որ աշու աշկը բոռ ա:

Ասըմ ա.- Դավա՞շի, տոււ էն դոլը կաղնի:

Կյնգա տիրունչն են հրցըմ:

Ասըմ ա: Մեծ ախպրն ասըմ ա.- Բա տոււ ո՞նց տեհար:

Ասըմ ա.- Դե տեհա, կյնգա ոտնամանը ու տղամարթի ոտնամանը հու մին չի: Տեհա կնիկարմատի իզ ա քյնձցել:

Միչնակին ասըմ ա.- Բա տոււ ի՞նչ գիդացար, թե ծանդրա՞ծ ա:

Ասըմ ա.- Նրանով գիդացա, որ նստել ա, ծեռներն էլ սիե դիմհար ա տվել նոր վե կցել: Տրանով որոշեցի, որ ծանդրա՞ծ ա:

Պուճուրին ահըմ ա.- Բա տու ի՞նչ գիդա-
ցար մարթը թակել ա տուս քցել:

Ասըմ ա.- Նրանով որոշեցի, որ հա՛մ քյնա-
ցել ա, հա՛մ ետ մտիկ արել, տենա մարթը կյա-
լիս ա՞ ետ տանի: Տրանով որոշեցի, որ մարթը
թակել ա:

Ասըմ ա.- Տղա, տու էլ քյնա:

Տիանք հիլ են անըմ ետ տունըմ: Տիանք
իդեցի հմար ճաշկերութին են սարըմ: Մի ա-
ռանձին օթախի միջին քյնալ դեն, որ իրեք
ախպերով հաց-մաց անեն: Թաքավոր Ղազին
քյնըմ ա տռան շեմըմը կուչ կյալի: Մեծ ախ-
պերը հաց ուտելու ժամանակ ասըմ ա, թե.-
Տղեք, հացիցը մուլաֆոտ ա կյալի:

Միջնակն էլ ասըմ ա, թե.- Մ՛ ախպեր, բա
տու ետ ես ասըմ, մսիցն էլ շնաֆոտ ա կյալի:

Էտ պուճուրն էլ ահըմ ա.- Մխպերտիք, բա
տուք ետ եք ասըմ,- ահըմ ա,- թաքավոր Ղա-
զին ինքը պի՛ն ա:

Որ ասըմ ա թաքավոր Ղազին ինքը պի՛ն ա,
հա ըստիան տուս ա վազըմ ու պուկ փախըմ
կյալի իրան մոր կուշտը:

Ասըմ ա.- Մերա, էտ շան տղերքը եկել են,
որ ես տիանք պի՛նը ճյկեն: Տիանք եկան ինձ
պի՛ն ճյկեցին, էս ի՞նչ հաշիվ ա:

Թե ասըմ ա.- Բա 17 թվի պատերազմի
վախտը սիե, սիե,- ասըմ ա,- քու հորիցը չես,
տու ուրիշ մարթից ես:

- Դա՛,- ասըմ ա.- բա ես տիանք պի՛նը ո՞նց
ճյկեն:

Տրան էլ մի նշանի հասած ախճիկ ա ու-
նենըմ:

Ասըմ ա.- Դայրիկ, ինձ թույլ տուր ես քյնա՞մ
տիանք պի՛նը ճյկեն:

Ասըմ ա.- Որթի քան,- ասըմ ա,- քյնա՞մ,
էնքան որ ետ ցավը ինձանից հանես:

Կյալիս ա էտ տղերսանց կշտին, բարև տալի
նստըմ:

- Բարի աչոըմ:

- Աստծու պարիմ:

- Դաց եք կերել, պո՛ծե՞լ:

- Դա՛:

- Տղեք,- ասըմ ա,- դե գյալի արեք էլի,
գյալի արեք: Դեռու տեղից եք եկել, տենանք
ի՞նչ կա, ի՞նչ չկա ծեր աշխարըմ:

Թե ասըմ ա. - Դե մենք բյղզա՞րծ ենք,- ա-
սըմ ա,- տու գյալի արա՛՛ մենք լսենք:

Ասըմ ա.- Դե անգամ արեք, ես մի էրկու
խոսք ասեն, ընդհան դենը,- ասըմ ա,- տուս եք
գիղըմ:- Ասըմ ա.-«Էրկու հնգեր-տղերք, մինը՝
իջևանցի, մինը՝ թալըցի իրար հետ ճամփա են
ընգըմ, որ կյան Բաքու աշխատեն, ապրեն:
ճամփա են ընգըմ,- ասըմ ա,- էտ մարթիկ
կյալի Բաքու: Ամեքը մի հարիր, էրկու հարիր
մետրը հեռավորությամ տնըվորըմ են ու
սկսըմ ըստի ապրիլը: Շատ են ապրըմ, քիչ են
ապրըմ, օրերի մի օրը էտ իջևանցին թեզ ա-
մուսնանըմ ա: Էտ թալըցուն կանչըմ ա, ասըմ
ա. «Բա սօր ի՞նչ հըրսանիքն ա, արի»:- Էտ թա-
լըցին էլ ասըմ ա. «Ես կյալ չդեմ, տու քու կյն-
գանը վե կուճես կկյա՛ս ի՞նչ տուն հըրսանիքից
հեղո: Կկյա՛ս ի՞նչ տուն, ես էլ՝ ես եմ գիղըմ, ի՞նչ
մարթկությունը»:- Էտ իջևանցին հըրսանիքը
վերջացըմ ա թե չէ, կյնգանը վեր ա ունըմ, որ
կյա՛ս թալըցու տուն, ճըմփին ավազակնին
պտահըմ են, ուզըմ են տիանք թեփռեն, ավա-
զակապետն ասըմ ա. «Հո՛ւփ, տիե չի: Երի-
տասարդնի են էլի, տիանք մի որև՛ նպատակ
կըլի, թո՛ղ քյնա՞ն»:- Բրախըմ են: Կյալիս ա էտ
տղեն իրան կյնգա՞ հետ թալըցու տուն: Էտ
թալըցին էլ ոտից մինչև կյլիս շոր ա կտրա՞ն
ըլըմ հարսի միար էլ, տղի միար էլ: Ուտըցըմ
ա, խմցըմ, հըքցըմ, ճամփու տնըմ: ճամփա
ա տնըմ ըլետ կյալիս են ավազակնին պը-
տահըմ, ըլետ ավազակապետը հիլ չի անըմ:
Կյալիս են իրանց տուն»:- Տղեք քան, ես ի՞նչ
բաժինը պրծա, ով ի՞նչ խոսք ունի, թո՛ղ ասի:

Մեծ ախպերն ասըմ ա.- Մալադեք տղեք, ի-
րանց խոսքի տերն եմ ըլել:

Միջնակն էլ ասըմ ա, թե.- Բա տու ետ ես
ասըմ,- ասըմ ա,- հնգիր շան տղի քանն էլ,-
ասըմ ա.- ոնց մարթի խոսքը կտորըմ չի, մար-
թի հետ տուս ա վազըմ քշերվա կիսին քյնըմ,
թե ես ի՞նչ ըխպրացվի տուն եմ քյնըմ:

Պուճուրն էլ ասըմ ա, թե.- Դա՛, հա՛, ես ի
ըլել,- ասըմ ա,- թալըցու տեղակ,- ասըմ ա,-
նրան ծեռին կնիլի ի հիլ արե՞լ, փարչափարա
կանի՛ ծեռիցը կիսի:

Թե ասըմ ա.- Պի՛նը տու ես:

Հիլ ա անըմ տուս կյալի: Քյնըմ ա, ասըմ.-
Դայրիկ,- ասըմ ա,- պի՛նը ճյկեցի:

- Ո՞վ էր, ախճիկ ջան:

Թե ասըմ ա.- Պուճուրն էր:

- Չա՛յ ես տրա հերն եմ անիծել,- ասըմ ա,- տա ինձ պիճ ջըկեց է՛: Մերա,- ասըմ ա,- դե էտ ա ես պիճ եմ էտ հեչ, բա հացիցը խի՞ ա մուլա-ֆոտ կալի:

Թե ասըմ ա.- Կրեզմանուտի կշտի արտիցն ա,- ասըմ ա,- էն հացը:

- Չա՛, բա մսիցը խի՞ ա շնաֆոտ կալի:

Թե ասըմ ա.- Որ ոխճարը ծնեց, մերն ըստակեց, կառը եթիմ մնաց: Չամ ուրիշ ծծեց, համ շան ծծեց, տրա համար շնաֆոտ ա կալի:

Թե.- Դե շան տղեքը ինչ որ ասըմ են, դուզ ա էլի:

Ըռավոտը հաց-մաց արին ու ճամփա ընգան եկան: Եկան հասան իրանց շենքին: Որոշեցին ճամփեն մի, տհանք՝ երկու ախպերով, որ տա որպես պիճ, լիզվիդացիա անել ըտիա: Առանձին շենքեր չինեցին, էտ պըճին տարան ընդի արին: Էտ միչնակ ախպերը քշերն երազըմ մի ժխտը հյուսանի ըխճըկա տեհավ: Որոշեց, որ քյա էտ ժխտը հյուսանի ըխճկանը պիրի: Առանց էտ պըճին տեղյակ պահիլ վե կցավ մի հրեղեն մատեց ու ընքե-լանը ճամփա ընգավ, քյանց: Դե չնայած առանձին հորից են, բայց մի մորից են: Մերը քյանց պըճի կուշտը, թե ասեց.

- Որթի ջան, ախպերդ տ էտ ժխտն օր ա տուս ա եկել էլի: Երազըմ սիե մի ըխճկա տեհել ա, քյանցել ա, որ քյթի: Բյնալ դի շան ու կիլի փայ ըլի: Բյնալ գոնե ոսկոռնին էլ ա պի:

Էտ տղեն ճամփա ընգավ ախպոր եղնա: Իրան գենք ու գրաիը կապեց ու ախպոր եղնա շարժեց: Տա թե ութ օր ա քյանցել, տա մի օրընը քյանց, եղենե հասավ:

- Ախպեր, ո՞ր տ քյըմ:

- Պա՛, ախպեր ջան,- ասըմ ա,- եկա՞ր: Օխտը հյուսանի ըխճկանն եմ քյըմ:

- Ա՛ տուճը քանդվի, ախր չէ՞ որ մա եռեսուն ախպեր ունի, մի հատ հեր, հերն էլ ժխտը կըլխանի ա, տու մհանց ծեռիցը կարա՞ս ախճիկ պիրես, որ քյըմը ես:

- Ախպեր, դե մին չըլենք, երկու ըլենք, քյեռըմ էլի, դե հմի թող իմ փայն էլ ընդի հատին:

Վե կցան քյեռցին: Բյնալ էտ եռեսուն դևին բարև տվուց, էտ ժխտը կլխանին էլ յոթերորդ հայաթըմ ա:

- Չա՛, բարև, բարև, հազար բարի եք եկել: Լավ եք արել, որ եկել եք:

Բյնալցին, էտ մրթկերանցը հյուրասիրեցին, մատեցին, կերան, խմեցին:

- Դե ըռավոտը քյնալ դենք ֆորսի, թող ծեր դժբոն ըտի մնա, տու հլեի ատչայաննի տղա ես ըրկըմ, մեզ հետ քյեռցը ֆորսի:

Ոնց որ թե քյեռցը ըստիան Ծակ քարը: Մի ճամփա խոռով ա քյըմը, մինն էլ քյնալ դի Չաչա քարով վրա կալ: Տրան դենն են դարգըմ, տհանք խոռով քյնըմ են, որպեզի Ծակ քարի տակին տապ անեն, տա էլ քյնալ Չասանի ուրթը, որ քամին կա տրան թոցնի, տանի սպանի: Հրեղեննի մատըմ ա քյըմը, Չասանի ուրթընը հրեղենն ասըմ ա, թե.

- Տղա՛, ֆոր կտրի մի ընգենք, որ փոթրիկը կալ դի մեզ երկուսիս էլ սպանի:

Ֆոր են կտրըմ մեչը տառըմ, քամին կալիս ա անց կենըմ: Ծին մատըմ ա ֆռըմ էտի-ենդի, երկու հատ կխտար ա սպանըմ, չաթըմ ծիու վրա քցըմ: Դենը տուս են կալի տենըմ, որ էտ տղեն ծիու վրա խաղ անըմ ա:

- Չա՛, - ասըմ ա,- ուրեմը որ սա էտ քամուրը պրծել ա, մեր վերը կտա: Զէ՛, սրա հետ պոժոժ անիլը պետը չի, մեր քվորն ուզըմ ա, հարգավոր ա իրան տանը:

Չետ էկան: Չետ են կալի:

Խաբըրը տանք էտ դժբոյիցը, որ ըտի մնացել ա: Չա՛, էտ տհանք էլ, մթա՛մ թե էտ ախճիկը էլ տրան ուզըմ չի հա՛, մրան ա ուզըմ, հա՛ ճաշ-մաշ են պատրաստըմ: Դե եռեսուն-մին հորի են, բացի իրանց հերը, ինչքա՞ն ճաշ դի, որ տհանք հերիք անի, քա՞նի չարխի դազ-դան ա պետկը: Ըտեղ տհանք ճաշն էկըմ են: Տա էտ պլեմիքենի վեր ա ունըմ, էտ հալաթենի պաճ անիլեն քյըմ ա էտ դժբոն: Բյնըմ ա տենըմ, որ մի հայաթի միչին մի Կիլունգ դուլ սնիցը պլետենըրով փաթա՛ծ, կշտին հաց էլ կա, ճուր էլ: Էտ ա ըտի ասըմ ա.

- Խսանաթ ես էլի,- ասըմ ա,- խղճով ես տու, մի քիչ հաց էլ տու, ճուր էլ տու էլի, մեռա՛:

Չաց էլ ա տալի, ճուր էլ ա տալի, ուտըմ ա, խմըմ թափ տալի պլետեննին կտրատըմ քցըմ

վրեն, փախչում: Տրան էլ բամփըմ մեռցնում ը-տի: Տիանք եկան տեհան, որ ո՞նչ տղեն կա, ո՞նչ՝ ախճիկը:

Թե ասըմ ա.- Ախպեր, տեհա՞ր, որ ախպերդ տամարդութիւն արավ, վեր ա կալել փախել:

Թե ասըմ ա.- Չի կարող պատահի, իմ ախպերդ տեհ պան չի անիլ, ման եկեք հայաթ-նին:

Հայաթնին ման են կլալի: Կլալիս են տե-նըմ, որ Կիսլանգ դովի տեղը տամ նդաված վեր ընգած: Ուրեմը Կիսլանգ դովը ըխճկանը վեր ա կալել փախել:

Թե ասըմ ա.- Տղեք, իրեք օր ծեգ ժամա-նակ եմ տալի: Իրեք օր: Եթե ծեր քվորը ետ պիրի՝ ետ պիրի, թե հու ետ չպիրի՝ տուք եք, ծեր խիխը, ինչ ուզըմ եք արեք իմ ախպորը:

Ծին մատըմ ա ու ըջըմ: Ծին մատըմ ա ու ըջըմ, քյըմ ա տենըմ մի մարթ կյուքանը լւ-նըմ ա: Են մի մարթն էլ եղնեն ճըմքները կուլ-կուլատիլեն եղնեն քյըմ ա:

Ասըմ ա.- Պարի աչողըմ, ախպեր:

Ասըմ ա.- Աստծու պարին:

Էտ պիճն ա ասըմ, ասըմ ա.- Էտ ի՞նչ ուժի տեր ես, որ տու Էտ կյուքանի Էտ խամ ճըմ-քները տեհ սաղ-սաղ կուլ ես տալի:

Թե ասըմ ա.- Ուժի տերը տու ես, հոււնա-րով տու ես, որ Կիսլանգ դովի եղնա քյըմ ես, օխտը հյուսանի ըխճկանը ետ պիրես: Մին չըլենք էրկու ըլենք:

Քյըմ ա տենըմ մինն էլ ծառերը տըկռա-տող ա անըմ:

- Պարի աչողըմ, ախպեր:

Ասըմ ա.- Աստծու պարին:

Ասըմ ա.- Էտ ի՞նչ ահեւելի մարթ ես, որ ծա-ռերը տեհ տըկռատող ես անըմ:

Թե ասըմ ա.- Սիւնելին տու ես, որ օխտը հյուսանի ըխճկա եղնա ես քյըմը: Էրկու չը-լենք, իրեք ըլենք:

Քյոցցին տեհան մի ծառի տակին մի սա-զանդար մատած սազին տալիս ա, ասըմ ա ու երքըմ:

- Բարև, ախպեր:

- Բարև:

- Քու հոււնարն ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Հենչ, ածըմ եմ էլի:

Թե ասըմ ա.- Չէ՛, հլեի ուժեղ ըլես,- ասըմ ա,- Էս քոլերը դմբդմբըմ ա:

Թե ասըմ ա.- Հոււնարով տու ես, որ օխտը հյուսանի ըխճկա եղնա քյըմ ես: Իրեքը չը-լենք, չորսը ըլենք:

Տիանք էլ քյմոցին: Քյմոցին տեհան Կիս-լանգ դովի հըրսանիքը մատած:

Սազանդարը թե ասեք.- Տղա, ինձ կլսես, հոււնարն ինձանըմ ա՛ տեհնցըմ չի:

Ծեմքըմ տեղ արին, Էտ չորս հոցին մատե-ցին, հարսն ու թաքավորն էլ վիրի պտըտա-կըմը մատած են: Արթեն սեղանը քաշել են, հաց-մացը քաշեցին, ճաշը-պանը: Կիսլանգ դովը կըլխի ըլավ, Էտ տղի ճաշը թունավորեց: Թունավորիլ տվուց, պիրին տրին առաչին:

Էտ սազանդարը թե ասեք.- Տղա՛, ճաշըտ թունավորած ա, չուտես: Մենակ թամադիցը իրավունք վե կալ, կասես իմ սազանդարը հիլա էրկու խոսք ասի, նոր քեվը Հարունա-կեցեք:

Ասըմ ա.- Շատ լավ:

- Կերեք, խմեցեք, դես-դեն:

Էտ տղեն ասըմ ա.- Հիլ արեք իմ սազան-դարը մի էրկու քյալմա խոսկ ասի՛՝ հետո:

Ասըմ ա.- Լավ:

Հենց տա սազին տալիս ա չէ՛ ըմբնին շրխկալա փոխվիլեն, տրամ ամանը քյըմ ա ընգըմ Կիսլանգ դովին: Կիսլանգ դովը ու-տիլն ու ծքվիլը մին անըմ ա: Տա որ հանքըմ ա հա՛, Էտ ա շուխտուն ընգըմ ա տեհնց մե-չը, օխտը հյուսանին ճղըմ ա: Օխտը հյուսա-նին ճղըմ ա: Կլալիս ա դալի միչին մի մադյան էլ կա, մի դուլան էլ կա կապած, թամբած: Մա-դյանին մատըմ ա Էտ ախճիկը, տղեն էլ իրան հրեղենին ա մատըմ, ըջըմ են: Քջըմ են, որ շատ են քյըմը, թե քիչ են քյըմը, խաբարը հասնըմ ա Կիսլանգ դովի ախպորը՝ օխտը հյուսանուն տարան: Տա դուլանին մատըմ ա տեհնց հետևիցը ըջըմ: Քջըմ ա, ըջըմ ա տեհ քյըմը ա: Մի վախտ մադյանը ճիտը ետ ա հլիլըմ տենըմ, որ դե իրան դուլանն ա էլի, Էն ա հա՛՝ հասնըմ ա: ճիտը ետ ա թեքըմ ու ըն-քելանը կաղնըմ, ինչքան Էտ ախճիկը տալիս ա, առաչ չի քյըմը: Խրխնջըմ ա, ընքելանը դուլանին ասըմ ա:

- Ի՞նչ ես անըմ, մի իզիթը իրեք իզիթի փայ ե՞ս անըմ: Մինը մեչկիս ա, մինը՝ ես, մինն էլ փորիս ա: Թափ տու հենք շարտի, որ քերծնը վեր քցի, շան փայ ըլի:

Թափ ա տալի վրա անըմ թե չէ, քյնըմ ա քարի տակին սատկըմ, դուլանն էլ ընգնըմ ա իրան մոր եղնա վեր կենըմ քյնըմ: Քյնըմ ա տենըմ դմբոյի չորս դուլը մթնցրել են: Իրեք սուտկեն էն ա հա՛ լրանըմ ա, ըրըզմաթեմ հընցնըմ ա: Կռիվը հըղըղըցնըմ ա, ըսի հաց-մաց են անըմ, քյնըմ: Ըռավոտը քշերիսանա պայմանավորվըմ են, որ չտան: Դամ տենըմ են, որ տհե ուժի տեր ա, համ էլ ուզըմ են չտան:

- Կոխ փռնենք, կարա՞ տա մեզ էքանիս հաղթի, օչերեղով փռնիլ դենք:

- Փռնենք:

- Սհե պիրըմ ա եռեսունին էլ կրուգոմ, ոնց որ սհե գիծ քաշես, կլոր սհե կընցնըմ ա, կենդ-կենդ փռնըմ տալի կըռնտակերիցը հետ ֆողըմը խըմ: Եռեսունին էլ սհե պլոլիկ թաղըմ: Ախճիկը ծղոտըմ ա, վազ տալի հորն իմաց անըմ:

- Տղերանցըտ եռեսունին էլ թաղել ա սհե մի տղա:

Տուս ա կյալի, կյալի տղի առաջը կաղնըմ, թե ասըմ ա.- էտ ի՞նչ ես արել.- ասըմ ա.- ճե- ուժելի.- ասըմ ա.- տու իմ ծենը մացել չե՞ս, քեզ պատառ-պատառ կանեմ:

Թե ասըմ ա.- Զէ՛, խոսալու վրա չի, տա ծե- ողի գործ ա.- ասըմ ա.- եթե կարաս, քու ուժըտ օգտագործի, հլա մի տենամ:

Տղին փռնըմ ա, տղին փռնըմ ա, տալիս ա թե չէ, կըռնտակերիցը հետ ֆողըմը խըմըմ ա:

Ասըմ ա.- Տեհա՞ր իմ ուժը:

Ասըմ ա.- Տա հաշիվ չի: Ուժը նրանըմ կասեմ.- ասըմ ա.- որ ինձ ըստիան հանես, կասեմ ա՛յ, տու ուժեղ ես:

Ընգաճիցը փռնըմ ա, որ ծիք ա տալի դյեր շարտըմ, անգաճը մըմ ա ծեռին:

Ասըմ ա.- Տու քու ուժը ցույց տվիր, հմի սպասի՛ ես:

Տրան տալիս ա թե չէ՛ կըռնտակիցը հետ ֆողըմը խըմըմ ա: Կրուգոմ եռեսուննեկի ճիտն էլ կտրըմ ա: Եռեսուննեկի ճիտը որ կտրըմ ա հա, ախճիկը ընդիան ծղոտըմ ա:

- Կոնյե,- ասըմ ա.- որ ես ըստեղ ներկա չի ըլել, տու էտ փորցանքը կատարել իր, էտ ուրիշ պան էր, բայց.- ասըմ ա.- իմ աչքի ա- ռաչին իմ եռեսուն ախպորն էլ էտ ձկի անես, հորս էլ, ես էլ.- ասըմ ա.- կյամ քու ախպոր կնիկը ըլեմ, կամ քու, չի կարող պատահի, տա աշխար եկած պան չի: Կամ՝ ես, կամ՝ տու, փռնըմ ենք իրար:

Փռնեցին, փռնեցին, ըխճկանը տրուց տա- կին, թուրը քաշեց, որ ճիտը կտրի, ախպերը թե ասեց.- Ախպեր, բա էքան չախ տրա հմար ենք տուժվըմ, էտ էլ ճիտը կտրըմ ե՞ս.- Թե.- տես եմթարկվըմ ա, տանենք:

Թե ասեց.- Զը, եմթարկվըմ ե՞ս, թե՞ կտրեմ:

Թե.- Էքանցըց հետո էլ ելք չկա, ես քունն եմ, տու՛ իմը:

- Իմը չես է՛, ախպորս ես:

Թե.- Նրան չէ: Էս խնդիկին ի՞նչ եմ առնըմ, ես քեզ կարամ առնեմ:

Ասըմ ա.- Լավ:

Թուրը վե կալավ դուլ ըլան եկան, հայա- թըմը նստեցին, կերան-խմեցին, քնեցին: Մյուս օրը հաց-մաց արին ու ճամփա ընգան: Իրե- քով ճամփա ընգան: Էկան: Շատ էկան, թե քիչ, եկան հասան Սողոմ թաքավորի հողը: Սողոմ թաքավորի հողըմը ըսկի ճանցն էլ չի վե կյալի: Էտ հողըմը էկան չաղիրը վե թողե- ցին ու սկսեցին իրանց հմար ճաշ-մաշ են եփըմ, սկսեցին, կերան-խմեցին, դես-դեն՝ Թա- քավորը մոխի արավ տեհավ՝ իրան էտ դողրի միչին ծիեթ են ըրածըմ, պալատկա կա:

Իրան նազիրին, թե ասեց.- Քյնա տես, թե մհենց կտրուկ տղա յա, ասա՛ Սողոմ թաքա- վորը քեզ կանչըմ ա, թե չէ, ասա՛ շարժվեցեք, կորեք:

Էկավ: Էտ պիճն էլ տրա վրա կնըզվեց, ա- սեց.- Ըստիան հենց կորի, որ տուս կկյամ հրես շլինքըտ կթոցնեմ: Ես որ նրան պետկն եմ, թող նա կյա:

Քյնաց ասեց, Սողոմ թաքավորը իրան գենք ու զրահը կապեց էկավ, էկավ տեհավ, պա- լատկի միչին նստած, ուտըմ ա, խմըմ:

- Արա՛, տուս արի, էտ ո՞վ ա ծեր քաջը:

Թե ասեց.- Քաջը՝ ես եմ, հաց եմ ուտըմ, սպասիր:

Կերան-խմեցին վերչացրին, տուա էկավ, թե ասեց.- Դը, ինչո՞վ ենք կարճ մեր ուժը օգտագործենք:

Թե.- Կոխ դենք փռնիլ:

Թե.- Փռնենք, ո՞նց ենք փռնում:

- Ով վե քցի, մա կտրի:

- Խնթրեն:

Էտ մի օրը սաղ օրը կոխ փռնեցին, մներն էլ ա կրացան ոչ վե քցեն: Էտ տղեն թե ասեց.- Դե տու մնա ըստեղ, ես քյնամ պալատը, էքուց կշարունակենք:

- Լավ, թող ըլի տե:

Սողոմ թաքավորը քյնաց իրանց պալատը, ըստիան լավօսալ դարգեց տհանց հմար, հաց-մաց արիմ:

Բայց էտ տղեն աչքընդ տիր ա էկել Սողոմ թաքավորի, որ պետք է առնի: Ըռավտը քշեր-հանա էկան սկսեցին կոխ փռնիլ: Պիճը վեր քցեց, թուրը տրուց ճտին, որ կտրի, թե ասեց.

- Տղա՛, ես ուխտ եմ արել, որ ով ինձ վեր քցի, ես մրան առնեմ: Խնթրեմ եմ ճիտս կտրիլ մի, ես քունն եմ, տու՛ ինձ:

- Շատ լավ:

Էտ մարթիկ վե կցան տռռռն չորսը, քյնացին, իրանց մոտ էլ թաքավոր նշանակեցին մի ուրիշի ու ճամփա ընգամ, վե կցան դույ ըլան: Եկան հասան իրանց հոր հողը, հմի օխտը հյուսանին էլ ա հեե քյնեմ, դե գաթի մա էլ իրանն ա, իրանն ա, մա էլ ա հեե քյնեմ: Էտ դժբոն էլ մնացել ա հեե կըղմած:

Ասըմ ա.- Ախպեր, բա էսքան, չէ՞ որ, ես տարի ա քաշել, ինձ միար ես տուժվել, բա էտ էլ ա եղմեստ կյալի:

Թե ասըմ ա.- Ախպեր, դե տար, հը՛, տար, քեզ ըլի:- Քոնիչ ա տալիս, ասըմ ա.- ըհը՛, տար, կյալիս չի, ի՞նչ անեմ: Քյնեմ չի:

Տա երկու կյնգանը վեր ա ունըմ քյնեմ իրանց շենքը: Պիճը քյնեմ ա իրանց շենքը, սկսըմ ա ըստի հաց-մաց են անըմ: Ապրըմ են ըստի քշեր-ցիրեկ, տե մի քանի վախտ: Օրերի մի օր տհանք երկու ախպերով որոշըմ են տրա տունը վերչացնեն, ընտանիքով ոչնչացնեն: Ոնց որ Սովետըմ¹ շայոնը ալելի շատ ա,

քանց թե ուրիշ տեղերը, ընդեղ էլ կա: Խաբարը հըսցնըմ են, որ բա գործը սեեսց ա: Կյալիս ա ու ժողովրթին վիաքըմ ու ընթելանը ժողով անըմ ա:

Ասըմ ա.- Տղեք, մենք իրեք ախպեր ենք ըլել, որից մեկը՝ ես, պիճ եմ ըլել:- Ասըմ ա.- Քյնացել ենք՝ թաքավոր Ղազին ինձ պիճ ա որոշել: Ինձ պղծանել են: Ես քանի տարի ա,- ասըմ ա,- պղծան ենք, մեկ ախպերս սեես, սեես քյնացել ա: Քյնացել եմ էտ ախճիկը պիրել: Միի էլ երկու ախպերով որոշել են իմ տունը վերչացնեն: Դմի ծեր հայեցողության եմ քցըմ, ի՞նչ եք որոշըմ կամ ստանք իմ ճիտը կտրեն, կամ թույլ տվեք ես ստանք ճիտը կտրեմ: Սեկ ա, որ մեր մեջը դյզզվիլ չի:

Ժողովուրթը մի մասը որոշըմ են, որ պի՛ տհանք արել են, տու անիլ մի, մի մասն էլ ասըմ են, որ՝ տհանք որ որոշել են, մեկ ա ա-նիլ դեն, երկուսի վիզն էլ կտրի:

Թուրը հանըմ ա, որ երկուսի վիզն էլ կտրի՝ մերը ծիծը հանըմ ա, ասըմ ա.- Բալա քան,- ասըմ ա,- առաջի հերթին իմ ծիծը կտրի, եղո տհանց վիզը:

Ասըմ ա.- Մերա, լավ, ես միեստն էլ քու ծծին են բաշխըմ, երգորթը անքամ նկատեցի՝ պետք է ճտերմուն կտրեմ:

Էտ տղեն ետ ա տռռնըմ կյալի իրան պալատը: Էտ Սողոմ թաքավորն ասըմ ա.- Լավ,- ասըմ ա,- էտ առաջին դեպքն էր,- ասըմ ա,- որ լսեցինք չէ՞, երգորթն էլ որ կատարվի,- ասըմ ա,- էլ քու գործը չի, տու ծած չկայա, հիմա տհանց դիվանը ես դեմ անիլ: Տհանց պալատը պետք է,- ասըմ ա,- սեես քարուքանդ անեն:

Սպասըմ ա երգորթը դեպքին, դե-դեն, ես կողմը, են կողմը, գատ չի տուս կյալի: Տհանք ամուսնանըմ են երկու ախպերով, ամուսնանըմ են, տհանց էլ կանչըմ չեն, որ իրանց հըր-սանիքին քյնան մասնակցեն, քյնեմ չեն: Տհանք հըրսանիք են ըլըմ, վերչանըմ ա, մի քանի տարի էլ պրծնըմ ա արթեն, որ ճուտըկալըմ են, ամեն ինչ, տռնանըմ են, մոր սկսըմ են, մոր, ախպոր հետ կապ ստեղծըմ, քյնալ-կյալ, դե-դեն: Տհանք իրանց մուրազին հասնեն, մենք էլ մեր մուրազին հասնենք:

¹ Բանասացը նկատի ունի նախկին Խորհրդային Միությունը և նրա կարգերը (ծանոթ. բանահավաքի):

4(4). ԹԱՔԱՎՈՐԻ ՊՈՒՇՈՐԻ ՏՐԵՆ ՈՒ ԴՐԱՅԻ ՓՈԼԱՐՁ

Լինում և, չի լինում՝ մի թաքավոր: Էտ թաքավորին քառասուն տղա և ունենում: Տիանք ասքմ են.- Այ հեր, բա մենք հասունացել ենք արթեն, մեզ պետք է ամուսնանալ:

Ահըմ և.- Այ բալամ, բա ես էտ դանդաղիտ ո՞րդիան ճարեն, քյացեք ամենքստ ծեզ համար ճարեցեք:

Վերչը տիանք ծիավորվքմ են, քյնքմ են: Պուււուր արիարքը թողքմ չեն, որ քյնք, ասքմ են.- Քաչալ, տու կյալ մի:

Էտ քաչալը անգաճ չի տնքմ, հետերնին քյնքմ ար:

Ասքմ ար.- Դե որ քյնքմ եք՝ հասնեք մի քանդվաճ ճաղաց կա, ընդեղ մնաք ո՛չ:

Յազիր հասնքմ են քանդվաճ ճղաջին, վեր են կյալի, ծիանք կապքմ, մնքմ ըտեղ: Տիանք քնոտքմ են, քնոտքմ են, էտ պուււուրն ասքմ ար.- Երեկ ըտեղ մի վտանգ կա, որ,- ասքմ ար,- մեր հերն ասեք, որ էտ ճղաջնքմ մնաք ո՛չ:

Էտ ար քնոտքմ են տիանք, էտ պուււուր արիարքը մնքմ ար արթուն, է՛, հնե քնքմ ար սուտունեմուկի ար տալի: Տենքմ ար հրեսիք մի պառաճ կնիկ՝ մի դե, եկաճ: Յա, մի դե եկաճ տիանք ուզքմ ար, որ ուտի: Էտ ար էտ դովի ճիտը՝ վիզը, տա կտրքմ ար, քիթ-պոռչնքը կտրքմ ար, տընքմ կրպանքմ, ու լիսանքմ ար, տիանք քյնքմ են: Դովին տանքմ ար կորցնքմ, որ արիարքիսնքը տենան ոչ: Վեր են կենքմ դույ ըլքմ ըռաճիտը: Վեր են կենքմ դույ ըլքմ տիանք, քյնքմ են հասնքմ հազիր էտ չայիր-չիման տեղը: Էտ չայիր-չիման տեղը վեր են կյալի, դե տա էլ են դովերի պաճն ար էլի տերիտորիեն ար, օչ-ով իրավունք չունի, որ ըտեղ քյնքմ:

Տիանք որ քնքմ են, մի պառաճ կնիկ կյալի ար: Քնաճ են ըլքմ, ըլտ էտ պուււուրը մնքմ ար արթուն, մնքմ ար արթուն, հնե սուտունեմուկի ար տալի, տենքմ ար հրեսի մի պառաճ կնիկ՝ քառասուն ճրազ վառաճ, մոճ ար, ինչ ար, վառաճ, ծեռին կյալի ար: Տա տազ անքմ ար, քյրուփ ար անքմ տազ անքմ: Կյալի ար էտ պառաճ էտ քառասուն արիարքը ընգաճնքը

քըռքնքմ ար, խուլ ար քըքմ, տրան էլ ինչքան տանքմ ար, կարքմ չի, կյալիք պտտքնքմ ար: Վերչը էտ պառաճ էտ ար տաճնքմ քյնքմ: Էտ պուււուր քաչալը վեր ար կենքմ եղնեն քյնքմ, եղնեն քյնքմ, արիքմ ար.- Տենաճ ո՞րդի ար քյնքմ:

Էտ դովին էլ ունենքմ ար քառասուն արիարք, քառասուն տղա: Տա էլ քյնքմ եղերնին, քյնքմ տեհաճ ըտեղ են, ու ըտիան հիլ արաճ էտ եկաճ: Յիլ արաճ էտ եկաճ, հմի ըռաճիտը զաթի լիսանքմ ար, դե արիարքիսնքը վե չեն կենքմ: Կտրվաճ են, ո՞րդի դեն վեր կենալ, մեռել են արթեն: Քյնքմ ար մտնքմ ըտեղ, ասքմ ար.- Տառի՛, - արիքմ ար,- Էն ի՞նչ արիք իճ արիարքանքը: Արի՛, թե չէ, - ասքմ ար,- վայը քե տարել ար:

Էտ քաչալը, նեղ քուլաճ ար ըլքմ, տա որ քյնքմ ար... Պառաճ տղերանքմ վրա ջղայնանքմ ար, ասքմ ար.- Ծեր հոր տերիտորիեն,- ասքմ ար,- չայիր-չիման տեղ ար, թաքավորի տղեքը, ծիանք կապաճ, իրար տրորքմ են, փշքմ են:

Էտ ար էտ դովի տղեքը պաճ են անքմ, որ կյան տիանք կտրքեն, որ կյան տիանք կտրքեն, տա կենանքը կաղնաճ, որը կյալի ար, տրաճ ճիտը թըռքնքմ ար: Էտ քառասուն տղին էլ փրքքմ ար, մնքմ են քառասուն արիարք, մնքմ են քառասուն արիարք: Էն ար քյնքմ ար մտնքմ տուն, արիքմ ար.- Էն ի՞նչ արիք,- արիք ար,- իճ արիարքտանքը, արի՛ քյնքմք,- ասքմ ար,- սըղըքրու:

Կյալի ար, խուլը հանքմ են, քյնքմ են էտ պըռաճի տղերանքմ էլ վեր են ունքմ դազաղ-մազաղ:

- Դե,- ասքմ ար,- քառասուն հոքի ենք՝ արմեքս մի արիարք: Պուււուր արիարքն ու պուււուր ծին կպահես ինձ միար, մնացաճ կբաճանես իճ արիարքտանքը:

Քյնքմ են, ո՞վ ար գիղքմ դորն են քյնքմ: Քյնքմ են հասնքմ Դոճի Փուլադի էրկաթա դաճբազին, Դոճի Փուլադին են հասնքմ, տա, օցն իրա պորտով, դուլն իրան թուճ տրաճ դաճբազը չի մտնի, թե.- Տուք ո՞նք եք իճ դաճբազը մտնի, գիղքմ չեն:

Էտ ար վերչը քյնքմ են, տա՛ էտ տղեն, հասնքմ ար թե չէ, մի վախտ տենքմ են հրես դովը կյալի ար՝ դուլը դեն արաճ:

- Էս ինչքան վախտ ա,- ասըմ ա,- մարթու համեղ միս չեմ կերել, էս ի՞նչ մըրթ-մըրթա-ֆուտ ա կյալի:

Կյալիս ա թուրը հանըմ ա, թե կտրի Դոմզի Փոլադի պանը՝ վիզը, արթեն թուրը կոտորըմ ա՝ երկաթից ա: Թուրը կոտորըմ ա, տա մնըմ ա, տա մնըմ ա, ասըմ ա.- Սիւն ա, ասըմ ա,- ծեզ բըրադիմիտ էլ կուտեմ, եթե ուզըմ եք ազատ-վեք, ծեր էտ պուճուր ախապորը ինձ տվեք, մնացածըտ ազատվեք:

Էտ ա ախապոր հետ սովետ են անըմ, ասըմ ա.- Դե քյնա քնի, ասըմ ա.- մենք էլ.- ասըմ ա,- սովետ անենք, տենանք հլա ի՞նչ ենք անըմ:

Սիւն ա.- Սիւպեր, բա որ ծեր հերն ասեր՝ ընդեղ մնալ միջ, են ճըղացըմը մնացիք, հրես հայ՝ նրանց քիթ-պոռոշը: Ընդեղ՝ են չայիր-չի-ման տեղն, ասեց՝ մնաք ո՛չ, մնացիք, ընդեղ քնոտեցիք սիւն, սիւն, սիւն ա ըլել: Կքյնաք ամե-քըտ ծեր կնիկը կտանեք, պուճուր ախճիկն ու պուճուր ծին ինձ միար հիլ կանեք:

Էտ ա տիւնը վեր են կենըմ կյալի, էտ պու-ճուր տղեն մնըմ ա: Էտ պուճուր տղին էտ դեղ հրաման ա տալի, ասըմ ա.- Զրե այսինչ սարի կըլիսին,- ասըմ ա,- մի ախճիկ կա, քյնա,- ա-սըմ ա,- ինձ հմար պի:

Տա քյնըմ ա պիրըմ: Դուվն ասըմ ա.- Զյնա էտ սարի կըլիսին,- ասըմ ա,- մի հայաթ կա, են հայաթըմը մի հատ ախճիկ կա, պետք ա ինձ համար պիրես, անըմ էլ՝ Դուճյա Գյուզալ:

Քյնըմ ա էտ տղեն, քյնըմ փախցըմը պիրըմ էտ սարի կըլիսիցը, էտ տանիցը:

- Դե,- ասըմ ա,- քու կորած ախապերն,- ա-սըմ ա,- եկել ա,- ասըմ ա,- արի՛:

Տընըմ ա թարթին, պիրըմ տընըմ ընդի, պի-րըմ ա, որ տալիս ա դուվին, ասըմ ա.- Վա՛յ, քու խիխըտ մեռնի, տու ի՞նչ տղա իր,- ասըմ ա,- որ ինձ իմ Գյուզալ տեղովը պիրիք քցիր էս դևի ճանգը:

Սիւն ա.- Ոչինչ տրա առաչն էլ կառնենք,- ասըմ ա:

Զմի տիւնը իրար հետ մալահաթ են ա-նըմ, էտ դուվն ու ինքը, բախտավորմին՝ մթաժ թե մարթ ու կնիկ են, ինչ են:

Սընըմ ա.- Զու հոջիտ ո՞րդի ա, ըլիլ չի՞ ինձ ասես:

Սիւն ա.- Ի՞մ հոջին մեր թորընխառմին ա, որ քցես թորոնը, են ա են կմեռնեն:

Ըռավոտը վեր ա կենըմ էտ ախչիկը, թորո-նը կըռցըմը, թորընխառմին քցըմ մեչը: Տենըմ ա դովը սաղ-սալամաթ կյալիս ա: Սիւն ասըմ ա.- Զէ՛լ լավ ո՛չ: Սիւն ա իրան ստիպըմ, որ,- քու հոջին ո՞րդի յա:

Սընըմ ա.- Էս ինչ սարի կըլիսին մի կարմիր եզը կա, եթե նրան սպանեն՝ ես կիկվընդա-նամ, նրան որ մորթեն, նրա փորըմն էլ նա-պաստակ կա, եթե նապաստակը փախչի, ես էլի կկենթանանամ, են նապաստակը որ փո-նեն, էլի կիկվանդանամ: Էն նապաստակի փո-րըմը կա մի յաշկի, յաշկի միջին կա իրեք հատ ծիտ, էտ ծտերը որ մորթեն, գոնե մների կըլուխը էլ ա տան ինձ՝ ուտեմ, էլի կկվանամ:

- Լա՛վ:

Էտ ա տա քյնաք ըռավոտը ֆորսի՝ էտ ձկն:

- Տղա՛, դե քեզ տենամ, քյալ դես եզը սպա-նի:

Տղեն քյնաք: Մորթեք, մաշկեք, նապաստա-կը փորիցը փախալ: Սիւնիկը տեհալ դուվն արթեն եկալ, պըռընչալ եկալ անկողին ըն-գալ: Նապաստակը որ փախալ, էտ չոբանցի կան ընդեղ, չոբանցեթին՝ հարա՛յ-հուրո՛ւյ, շները փռնեցին նապաստակը, տվին իրան, նապաստակը տվին իրան, պիրուց: Եկալ տե-հալ դուվը արթեն խաստա ընգած ա, մեռնըմ ա: Պիրին նապաստակը մորթեցին, նապաս-տակը մորթեցին, յաշիկը հանեցին, յաշկի մի-ջին էլ իրեք ծիտ ա, էտ իրեք ծիտն էլ մոր-թոտեցին: Արթեն դուվը դանչաք ա անըմ, թե ասըմ ա.- Սնի կլուխը տվեք ուտեմ:

Սիւն են տղեն ուզըմ ա թե տա, էտ ախչիկը հիլ չի արալ, հիլ չի արալ, վերչը տա արթեն մեռալ պոծալ: Էտ դուվի կարողութիւնը՝ էլած-չէլածը, վե կալան եկան: Սիւն էլ մի կնիկը, որ են քառասուն ըխըրկատերը, եկան էտ դևի տուն, էտ մի ըխճկանն էլ վե կալալ, գաթի էրկու կնիկ առալ, վե կալալ քյնաք թաքալու-րի տուն:

5(5). ԿՐՏՆԵՐ ԵՂԲԱՅՐՆ ՈՒ ԱՆՋԱՆ ԴԵՎԸ*

Մի թագավորի քառասուն տղա ունի: Քառասուն տղեքանց գլխի պուճուկը քաչալ ա, գլխի պուճուկը, պայց շատ ճարպիկ գյաղա յա: Էտ քառասուն տղեն կաղնել են հոր հետ սպողի:

- Այ հերա, տու մեզ տանիլ դես տասը՝ մի մարթի ախճիկ, տասը՝ մի մարթի ախճիկ, քսանը՝ մի մարթի ախճիկ, հինգը՝ մի մարթի ախճիկ, մենք տղենց չենք ուզում, մընք ուզում ենք, որ քառասուն տղա ունես, քառասուն ախճակ բաքավոր ճարի, ամենքս մինը քյանք վեր ունենք պիրենը:

- Արա՛, - ասեց, - ա՛ր շան տղեք, բա ես քառասուն ախճիկ որդիա՛մ ճարեմ, էտ պանը կիլի՞:

- Բա քու տանը խի՞ կա:

- Ու պան ա, պըտահել ա, կա՛:

Թե.- Զէ՛, դե էն ժամանակ մեզ ճանապարհ, մենք քյանք ման կյանք, քառասուն ախճիկ ճարենք:

- Դե ծեզ բարի ճանապարհ,- ասըմ ա,- ի՞նչ անեմ, քյնըմ եք՝ քյանցեք:

Էտ գյաղենին եկան, էի, աշխարհ տակին ինչքան լավ ծիան կա՝ թամբեցին, լավ էլ ծին նստեցին ճանապարհեցին, պայց պուճուկը չէ՛ պուճուկը գիղըմ չի: Պուճուկը գիղըմ չի, թե էտ պանի տերն են տղիանք, էտ քաչալը, հա՛, հասկանըմ ե՞ք ինչ են ասըմ: Պուճուկը գիղըմ չի, թե տղիանք ի՞նչ դերեր են կադարըմ:

Էտ պուճուկը... մենց հաղ ա անըմ, հաղ անիլի թուշըմ, էլի տիենց մի վտանգ պան ա պատահըմ: Մի պառավ կնիկ ասըմ ա.- Արա՛, ա՛ր ֆողեմ կլլուխըտ,- ասըմ ա,- դե հեռու, դրաղ կաղնի,- ասըմ ա,- խի՞ ես ճամփես կապըմ:

- Ա՛ր քու ճամփետ փուշ ու տատաշ տռռնա,- ասըմ ա,- ի՞նչ են ճամփետ կապըմ:

- Ի՛ր, կըտրվես տու,- ասըմ ա,- բա որ տու տղա ըլես,- ասըմ ա,- տու խոլոք տղա ըլես, հա՛, ճամուտով տղա ըլես, քու ախպերտինքը կքյնա՞ն կյնգա,- ասըմ ա,- քե ըստի հիլ կանե՞ն:

- Պան, մանի, ես քե մատաղ, էտ ի՞նչ ես ասըմ: Նանի՛, ես քու ցավը տանեմ, էտ ի՞նչ ես

ասըմ: Նանի՛, քու ծծին մատաղ, էտ ի՞նչ ես ասըմ:

- Բա՛, սիե՛, սիե՛, սիե՛, սիե՛՝ ախպերտինքըտ չիմ քյանցել են, էրեզի չէ մեկել օրին քյանցել են կյնգա, քե տարան ո՞չ:

- Չաստա՛տ:

- Չաստա՛տ:

- Լա՛վ:

Եկավ հոր կուշտը:

- Չերա՛:

- Չը՛:

- Չերա՛, ես որ մտածըմ եմ, ուզըմ եմ քե էն, էն, էն, էն դուշը որ հավին ուտըմ ա, ուզըմ եմ քե միե ուտըմ, ուտեմ:

- Խի՛, ի՞նչ ա պըտահել, տղա՛ ջան:

- Ո՛ր եմ իմ ախպերտինքը:

- Ա՛հ, քյանցին ամենք մի տեղի վրա, ի՞նչ են գիղըմ ո՛ր եմ:

Թե ասըմ ա.- Չա՛:

Թե.- Չա՛:

Թե.- Չերա՛, քու հոր ծին հանըմ ես տալի ինձ, քու հոր ծին:

Չոր ծին հանըմ ա, հանիլ ա տալիս, պիրըմ նալիլ ա տալի, թամբիլ ա տալի տրա հոր ծին, ըսկի գյաղենին գիղըմ չեն մինը էն: Նստըմ ա հուկ տալի, էտ իրեք օրվա ճանապարհ տա էրկու ժամվա միջին կտրեց, եկավ հասավ տղիանց: Եկան տյուս եկան մի անվուրու-վուրու աշխար: Էտ աշխարըմ տղիանք քյնըմ են, ըսկի տղըմ ասըմ չեն թե. «Դու-դետ ընչի՞՛ մճան ա», ճընանըմ են է՛, որ իրանց ախպերն ա, պայց մարթի տեղ չեն տընըմ: Քյնըմ են, ընդի էտ քշերը չըքել լիսը բուսը պահեց, մի դև սպանց: Քյնացին մի աշխար, ընդի քշերը չըքել լիսը պահեց, մի դև սպանց, տիե անիլով, տիե անիլով, տիե անիլով, տիե անիլով՝ տյուս եկան քյանցին չորս տեղ: Տա էտ չորսին ճաղ արավ, որ չորսին ճաղ ա արել, հմի տղիանք ըսի չորս օր պըտի օտոլիս դեն անիլ: Էտ չորս օրվա օտոլիսը էտ տղեն մի օր դիմջացավ ու ծին նստեց ու, մեր սարերի պես սիե դյուզ սարեր ա, էտ սարերի վրա դույ ըլավ, դույ ըլավ քյնաց: Քյնաց մտիկ արավ տեսավ, որ մի մարթ էն դուռը դեսը կյալիս ա, տըղօրմա

քրցիւով, քրցիւով կայծիս ա՝ մի փիլոն ուսին:
Եկա՛վ հասա՛վ ես տղին:

- Պա՛րի աչո՛ղըմ, ա՛յ տղա:

- Աստժու պա՛րհին,- ասեց,- պապի ջան:

- Ա՛յ տղա, տու անվախուս-վախուս ես, տու իսանաթ ես թլըմ, ես անվախուս-վախուս աշխարհըմ ի՞նչ ունես:

Թե.- Պապի ջան, գործըս պատահել ա էլի, եկել եմ էլի ըստիք ընգել:

- Հա՛, լավ ես արել, դե, քե մատաղ, պա՛մ չեմ ասըմ, ատո՛ծ գործիտ աշողութուն տա:

Թե.- Պապի,- ասեց,- մի պա՛մ եմ խընթըրըմ էլի:

Թե.- Ի՞նչ ա, քե մատաղ:

Թե ասեց.- Մաճաճ կըլես էլի, ես աշխարհեքըմ, ես դյուզերըմ ո՞ւմ կուենեա քառասուն ախճիկ, որ մի մարթուց ըլի էլի, մի մարթու քառասուն ախճիկ ունենա:

- Հա՛, քու տուըտ քանդվի,- ասըմ ա,- էտ ի՞նչ ասեցիր տու, տո՛ւ մաքանդ:

Թե.- Դե, բա ի՞նչ ասեմ:

- Բա բա՛լըմ մի՛նը պակաս ա, էրկուսը պակաս ա:

- Չէ՛, քառասուն ախճիկ:

- Դե,- ասըմ ա,- էտ գիղըմ չեմ ումն ա՛ ումը չի, ում կուենեա՛ ում չի ունենալ, պայց ես մի պա՛մը գիղեմ, որ հրե հա՛՛ էն դոշի սիպտակ քարը տենըմ ե՛ս:

Թե.- Հա՛:

- Էն սիպտակ քարը մե՛ծ սալ ա, էտ սալի տակին մի հոր կա՛ շատ խորությամ, էրկաթի նաղդվանները կախ արած ա, էտ հորի միջին կա քառասուն ախճիկ: Կա, հաստատ կա, էլ էտքանը չգիղեմ, քե մատաղ, ո՞նց եմ, ի՞նչ եմ, պայց գիղեմ, որ քառասուն ախճիկ կա:

- Վա՛յ, ես քու հորուտ մատաղ, պապի ջան:

- Դե քեզ պա՛րի ճանապար:

Պապը դենը քյնաց, տա՛՛ էն սարի վրա՛:

Տա՛ էտ սիպտակ քարին ասեց ու դուս ըլա՛վ քյնաց ընդի, տեսա՛վ մի հեյվարա սալ քար ա էլի վեր ընգա՛ծ ընդի: Ծիու սանձըը պիրա՛վ էտ քարի մի ունըըմը պի՛նը սըզըցրա՛վ, սըզըցրա՛վ ու ինըը եմ մի դոլիցը խըտըտեց, ծիուն թե ասեց.- Ու-ո-ո:

Ծիւն ու-ո-ո ա քյնըմ, տա՛ դիշեց ես քա՛րը, կեսը քաշեց, քաշեց: Կեսը քաշեց, հորի ըռե-խը պաճ ըլա՛վ, մի քիչ էլ հուկ տվա՛վ, հորի ըռեխը սամսեն պաճ ըլա՛վ: Ծիու սանձըը կըլխիցը հանեց, ծին բուրախեց, ծին բուրախեց, թող ըրա՛ծի: Փըլըքա՛մն ը վեր, փըլըքա՛մն ը վեր քյնըմ ա, վախըմ ա էլի, ծին ծեռին չի, վախըմ ա: Փըլըքա՛մն ը վեր դվերեց, քյնաց անգաճ տըրա՛վ, դվերեց քյնաց անգաճ տըրա՛վ, դվերեց քյնաց անգաճ տըրա՛վ, սիե ա-նիլո՛վ՝ հասա՛վ տակը: Մտիկ արա՛վ տեսա՛վ սիե մեծ օթախ ա, հայաթ ա, տխտակից շինա՛ծ թախտ ա սիե էրգար շինա՛ծ, ու չիմ յորդանի տակերին սիե քնոտա՛ծ եմ: Հիմի ախճիկն ու տղեն ո՞նց անի, որ սա կըլխի ըլի, մտիկ արա՛վ տեհա՛վ չի՛մ մազա՛վոր եմ, որ մազա՛վոր եմ հա՛, թե ասեց.- Ըխկե՛ք եմ էլի:

Հըմբարեց, ինքը հըմբարեց տեհա՛վ ուղիղ քառասուն ախճիկ: Տա՛ պիրա՛վ ընքեղ էտ ըխ-ճկերանը մատանըքերը սիե կուռներուն քաշեց տեհա՛վ մնինն էրկու մատանի ա, մնինն իրեք մատանի ա, մնին էրկու, մնին իրեք տղենց կա, ամեքիցը մի հատ մատանի հանե՛ց թելի մեչը շարեց, ամեքիցը մի՛նը հանեց շարեց թելի մեչը, գլխից էն վերչինը եմ պուճուր ախճիկն ա, էն վերչինն էլ ինքը տըրա՛վ իրան ծոցաջըրըմ ու՛՛ տյուս եկա՛վ, սան-ձըը տվա՛վ, ծին եկա՛վ, մտեց քյնաց, քյնաց ախպորտանց կուշտը, տեհա՛վ չի՛մ քնոտա՛ծ եմ: Ախպորտանց մատանըքերը մատերնուցը հանեց, ամեքին մի մատանի մատերնըմ տըրա՛ծ ա, հանեց էտ ըխկերանց մատանին, մեծ ըխկա՛ մատանին՝ մեծ ախպորը, պուճուրը՝ պուճուրին, պուճուրը՝ պուճուրին, պուճուրը՝ պուճուրին, տեհ՛ շարոտիլո՛վ՝ տյուս եկա՛վ քառասունին էլ: Տիե տյուս եկա՛վ, սեքի դե պուճուրն էլ իրան ջըրըմն ա: Էտ մատանիքը վե կալա՛վ վազ տվա՛վ, ծին քշեց քյնաց էտ

¹ «Պապի, բա ասըմ չի՛, որ պա՛մը, եմ որ սև, ասըմ ա, պա՛մը մտտե՛ս սև աշխարը դես քյալ, սիպտակին մտտե՛ս սիպտակ աշխարը դես քյալ,- միջա-մտում ա հարցնում է բանասացի թողը:

-Չէ՛ տա՛ չէ, տա՛ տեհեց պա՛մ չի, քե մատաղ, տա՛ չի: Ես ինչ որ ասըմ եմ, տու՛ք էտ մի պա՛մը ու-շաղորություն արեք, ես ինչ որ ասեմ, տոչեմն եմ ա-

սըմ էլ, ես տոչեմն...-պատասխանում է բանասացը (ծանոթ. բանահավաքի):

Ֆորի մեջը մտավ, Ֆորի մեջը մտավ, տո՛ռ տե-
հավ քնոտած եմ: Էտ մատանըները պիրավ
ընքելը տհե շարիլով, շարիլով, շարիլով, շա-
րիլով՝ ըխճկերանց մատըմը, դույ ըլավ քյնաց
էն դոլը ու եկավ կաղնեց, ես դոլեն կաղնեց:

- Դե, խըմթըմ եմ,- ասեց,- մի տեղերնու-
ցըտ վե կցեք, ընկեր օրյորքեներ:

Կամաց կըխնընուն պըրցըրցըրին, տեսամ՝
մի իսանաթ ըտի կաղնեց:

- Այ տղա, իսանաթ, ո՞նց ես եկել:

Թե,- Ծեր տըռնովն եմ եկել:

- Մեր տուը շինած, փակած ա:

- Ի՞նձ համար կապեի չի աժի, մատերնուտ
մտիկ արեք:

Մատերնուն մտիկ արին տեհան, որ մա-
տանին փոխված, փոխված, փոխված, չի՞մ
փոխված:

- Յա՛յ, հա՛յ, ընգճեք:

- Դե, խըմթըմ եմ, չի՞մուտ էլ մի վե կեմաք:

Վե կցան, հաքան-կապեցին, մեծ ըխճկա-
նիցը փըռնեց:

- Մեծը տյուս կյա, մեծի քըմակեց՝ նրա
պուճուրը, նրա քըմակե՛ն՝ նրա պուճուրը, նրա
քըմակե՛ն՝ նրա պուճուրը, տհե տյուս եկեք,
ըտեղ տհե շարքով կաղնեցեք:

Տյուս եկան, տյուս եկան, քաճու՛ղ տյուս
եկան, պուճուրին էլ ինը կըռնիցը փըռնած
հանեց պիրավ ըտի, ծիյու կապը քաշեց պի-
րավ ախպորտանց կուշտը, պիրավ ախպոր-
տանց կուշտը: Ախպորտանցը վե կըրցավ, մե-
ծին մեծ ախպորը տվավ, պուճուրին՝ պուճու-
րին, նրա պուճուրին՝ նրա պուճուրին, նրա
պուճուրին՝ նրա պուճուրին, տհե՛ տալո՛ւ, տա-
լո՛ւ, տալո՛ւ, եկավ, եկավ տյուս եկավ պու-
ճուրը սաքի իրան ծեղեկ ա: Եկավ ըտեղ:

- Ախպերտինը,- ասեց,- դե հի՞մա,- ասեց,-
դույ ըլեք, պճրի ճանապար, քյնաց՝ մեր հա-
րենիքը, մեր հերն ու մերն էլ մեխկ եմ:

Յժի ծանոթացել են է՛, ախպոր հետ, ծանո-
թացել են, ախպերն ա պիրել ա տվել տըռնաց
չէ՛, ծանոթացել են՝:

- Յա, ախպեր ջան, քյնաց:

Եկան էտ տուընը քանդվածնին էտ ճանա-
պարը բուրախեցին, ընգճե՛ն մի ճանապարի
մեջ, ես ճանապարը, տու մի ասիլ, կկա՛ կմտնի
Անջան դևի տեղը՝ Անջան դև ա, մի հատ դև ա՛
անջան, ուզըմ ե՛ս՝ թիքա-թիքա կըտորի, մի
դոլեն տու կըտորըմ ես՝ նա՛ սաղ ա: Սաղ ա,
սաղ ա, ջան չունի, պճն չունի: Մե՛ծ, բու հա-
վան կըցած, շատ մեծ ծառ ա՛ չընճրի, մի օ-
թախի դճոճոր պճն ա, եկան, ըտի Անջան դևը
տյուս եկավ դաքերնուն:

- Բարև ծեղ, դոճաղներ ջան, բարև՛, բարև,
հազար բարի: Յա՛յ, հա՛յ,- ասեց,- ես էլ սոված
ի,- ասեց,- քառասուն հոքի քառասուն օր ինձ
բու ա, զակուսկի, քառասուն զակուսկի ունե՛ն:

- Ա՛, շա՛շ չես, գի՛ծ չես, ճամփա տուր, դես-
դեն:

- Օլմա՛ղ, ծեղ ճամփա չկա:

Շատ որ տեղը նեղեցին հա՛, թե ասեց.- Գի-
դե՞ք ինչ կա, ով որ քյնա,- ասեց,- ա՛յ,- ասեց,-
ես ծովի քըմակին մի հատ թաքավորություն
կա՛ ընտեղ, ընդհան,- ասեց,- իմ հոքին հե ըն-
դի մի կըխտարի փորըմ, իմ հոքին հե մի
կըխտարի փորըմ, ով որ կըյնա իմ հոքին կպի-
րի, ես էս ծեղ ճամփա կըտամ, թե չէ՛ ճամփա
չկա՞:

- Ախպեր, տու քյնա:

- Կարալ չեմ:

Նա՛՝ նրա, նա՛՝ նրա, նա՛՝ նրա, նա՛՝ նրա՛՝, ըն-
գճով էտ քաչալին:

- Ես կըյնամ,- ասեց:

Կնիկը պահ տվավ ըտի ախպորտանը,
իրան կնիկը ու եկավ մտավ ծովի մեջը, ես
ծովիցը եկավ տյուս եկավ էտ պետությունը,
եկավ, եկավ որ ըտի, հա՛՝ քյնաց խընըմթա-
րին նստեց: Ծին բուրախեց ու քյնաց խընըմթ-
քարին նստեց: Էտ թաքավորը տյուս եկավ:

- Արի՛ տեսճ, տղա՛:

Դյուզ քյնաց:

- Ի՞նչ ես ման կյալի, անվուրու-վուրու,- ա-
սեց,- երգից եկած տղա:

Թե,- Եկել եմ էլի,- ասեց,- ո՞ւր կկյան,- ա-
սեց,- քարին կնստեն:

Թե ասեց.- Ըխճկա՛:

¹ Բանաստեղծ «Ժամոթանալ» բառի տակ հասկա-
նում է, որ ավագ եղբայրներն ընդունում են փոքր
եղբոր առավելությունը (Ժամոթ. բանահավաքի):

² Բանաստեղծ չփորձում է Անջան դևը ոչ թե հոգին,
այլ թագավորի աղջկան է պահանջում բերել (Ժա-
մոթ. բանահավաքի):

Թե ասեց.- Այո՛:

Թե ասեց.- Լա՛ւ: Դե,- ասեց,- դե որ էտ ախ-
ճկանս ես եկել, էլ քեզ կարալ չեմ, որ մի պան
ասեմ, միկուցեք քեզ էտ փշեակը ունես, տենըմ
ե՛ս էն յալը:

- Տեսնըմ եմ:

- Էն յալիցը միչև հե՛ հա՛ էն յալը հարուր-
հազար հոքի էլ ըլի՝ կարալ չի, որ մոտանա,
հըրամի ա, էլ չենք գիղըմ օփցն ա, էլ չենք
գիղըմ ինչից ա, էլ չենք գիղըմ, մարթ մոտա-
նըմ ա, քամու հետ կորչըմ ա, կորչըմ ա, գատ
չի կա: Եթե տու կարողանաս էտ ճանապարհը
պաց անես, իմ ախճիկը դուրբան ա քեզ, թե
հու չէ՝ քեզ ճամփա չկա՛:

- Լա՛վ, որդի՛ յա, մի քանի մարթ տու, տա-
նի ինձ ցույց տա:

Որ մարթին ասեց՝ լաց ըլավ, որ մարթին ա-
սեց լաց ըլավ, որ մարթին ասեց՝ լաց ըլավ:

- Այ մարթիք,- ասեց,- ծեր առաչին ես քյնըմ
եմ, տուք ինձ եղնա եկեք, վախիլ միք էլի, ես
քյնըմ եմ,- ասեց,- ծեր առաչին, եկեք ինձ
ցույց տվեք էլի:

Սեր ես Սըռի դիշի՛ պես, սիե մի թուճբ ա,
միչև էտ թուճբը դյերեցին ու ընքելը, թե ասե-
ցին.- Ըստիման դեճը ճամփա չունե՛նք, ըստի-
ման դեճը...- տիե ասեցին ու ընքելը մին-մնի
եղնա, մին-մնի եղնա դվեր տռռռե՛մ եկան: Էտ
տղեն մնաց ըստի, պըտտվեց, պըտտվեց, պը-
տտվեց, չիմ ծաղիկ ա, չիմ ծաղիկնի ա, էտ
ծաղիկների մեչերը պըտտեց, տեհավ ըրա-
ծած ա, տեհավ ճորթած ա, թըրիք կա, դես
կա՛ դեն, քյնաց մտիկ արավ տեսավ, որ մի
տեղ ոնց որ արխաջ ա, ոնց որ ոչխարը ար-
խաջ են տընըմ, հիե ոչխարի արխաջի պես մի
ծառի տակի հիե արխաջ ա: Մտիկ արավ տե-
հավ կըրտորդին տռռ հլա տաք ա, ման կյալ
ա քյնցել, տու մի ախլ:

Էս տղեն թե ասեց.- Չէ՛, ժամանակն անց ա,
ժամանակն,- ասեց,- անց ա, լավ ա:

Տա՛ դվերեց եկավ էտ թաքավորությունը, էտ
քըշերը կացավ ու դյերեց, քըշերով դյերեց
կամա՛նց եկավ տեսավ, որ նոր թրքել ա հե-

ռացել: Տա՛ ծառին լիի ըլավ, ծառին լիի ըլավ,
քյնաց ծառի կեճը հասավ, էտ անդերը ֆոտը
մացնավ, կըխտար ա, մի հատ կըխտար, մի
հատ կըխտար ա, ոնց որ մեր քոլի կըխտարը,
տիե մի կըխտար ա: Ֆոտը մացնավ, բըղավեց,
վրա քշած եկավ ըստի տվավ, ընդի տվավ,
բըղավեց, տա՛ ծառի վրա էնքա՛ն տա՛ տիե
պըտտեց, պըտտեց, հեռանըմ ա՛ ֆոտ չի կա,
կյալիս ա ըստի պըտտըմ, հեռանըմ ա՛ գատ չի
կա, կյալիս ա պըտտըմ, բըղակյա՞մ? ա տալի
պըտտըմ, ճարթըմ ա, փըշըմ ա ըտիեք դես-
դեն, նա ծառի վրա նստած: Եկա՛վ պըրա՛-
վեց, սիե պրանվեց ու սկսեց հեթալը հա՛, հա՛,
հա՛ հեթըմ ա, էս տղեն եկավ ճըղան վիճըլ ե-
կավ, եկավ իրան ուղղեց սիե, ոնց որ թե ինչ-
նեճին պլանը տալիս են, հիե պլանի պես
թելը պաց թողեց, տեսավ որ շատ ճիշտ ա, նա
սիե պրանված հեթըմ ա, էնդեղից էս իրան շա-
չկեն հանեց ու սիե տտնիցը փռեց, էն դա՛ս-
տիցը սիե, որ սիե պաց չթողեց, շաչկեն տոր
հա կտաս սըրա ըստիցըմ, որ տվավ կյուլիդ
անց կըքրավ, մորթին մնաց կպած, վե կցավ
ծուլ ըլավ, էստի տվավ, էնդի տվավ, տղեն
վեր եկավ, վեր եկավ ոտիցը փռեց տրավ
ծնգի տակին, փորը ճըղատեց, փորը ճըղա-
տեց տեհավ մի սիե ախա՛ւսը դուճի՛ փորըմը,
որ տեհավ փորըմը հա՛, ծեռը տարավ ընքելը
էտ դուճին տյուս վըստցրավ թը չէ՛ տա՛ ճըռ-
քի պես հաճգավ, ճըռաճքի պես հաճգավ՝ դը
հիվընդացավ ընդի, էտ Սնջան դըլ հա՛, մանըմ
ե՛ս²: Էտ Սնջան դըլ ընդի հիվընդացավ,
ծտերը, մտիկ արավ տեհավ իրեք հատ ծիտ
ա, յաչիկի միչին իրեք հատ ծիտ ա, սիե՛ հաղ
են անըմ: Ծըլերի միըմ մի հնարով կըլիփը
փռեց ընքելը իջլորեց, շըլիքը պուկեց: Ան-
ջան դըլ գյլից հիվընդացավ, յորդանի տակը
մտավ ու տյուս եկավ, եկավ դվերեց քյնաց
թաքավորությունը:

² Բըղակյա՛ւ տալ (բուլա+կյալա) - ցուլի գոռոց
կամ ցակամչ, ցուլի կողմից արձակվող հատուկ
գոռոց, որով կանչում է հակառակ սեռի ներկայա-
ցուցին: «Բըղակյա՛ւ տալ»-ն օգտագործվում է նաև
որպես դարձված այլաբանական իմաստով (ծա-
նոթ. բանասիակաջի):

³ «-Հավանեի՛ ա ծեզ,- հարցնում է բանասացը»
(ծանոթ. բանասիակաջի):

¹ «Սըռի դիշ» ասելով բանասացը նկատի ունի
Այգեհովիտ գյուղի դիմացի լանջը, որը գտնվում է
Աղստի ձախ կողմում, Սըռի գյուղից կամ Սա-
րիգյուղից ներքև (ծանոթ. բանասիակաջի):

- Թաքավորը ապրած կենա,- ասեց,- խընթեմ կյան,- ասեց,- ընթուներս քու քուր:

- Արա՛, շռչ չես, գիժ չես, ցնորված չես, այ բալա, ինչքա՛ն սալդաթ ես ուզոմ, քանի՞ թոփ ես ուզոմ, քանի՞ պղխոնոտ ես ուզոմ, էտ ի՞նչ ես ասոմ:

- Այ մարթ, ոչ մի թոփ, ոչ մի սալդաթ, ոչ մի դես, ոչ մի դեն, մի տասը մարթ տու, տանոմ եմ,- ասեց,- ընդեղ,- ասեց,- ցույց տամ, ծեզ ցույց տամ:

Սիւնն էլ ա մոտանում չեն, մոտանում չեն:

- Այ թաքավոր, դե ինձ ետ մի քցիկ, սիե, սիե պոն ա, քեզ ասըմ եմ ես քյոնմ եմ ընդի կաղնեմ,- ասեց,- Էն յալոմը հաղ կանչեմ,- ասեց,- ամզամ տի:

Եկավ յալոմը կաղնեց.- Դե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ, հե՛յ:

Ոչ դես, ոչ դեն, ոչ մի պոն, ըլետ եկավ: Պի-րավ մի պոլկ սալդատ տվավ, էրկու թոփ տվավ, էրկու պղխոնոտ տվավ:

- Արա՛,- ասեց,- դյերեցեք, ա՛ անամուս շան տղեք, խի՞ եք վախոմ, խի՞ եք... Արա՛,- ասեց,- եկեք է, վախիլ միք է՛ վախիլ:

Եկան մըչև յալի կիսընդ գիրթ կաղնեցին, ես գյաղեն դյերեք, քյոնաց յալոմը կաղնեց:

- Արա՛, էկեք, վախիլ մի՞ք, եկեք, վախիլ մի՞ք, եկեք, վախիլ միք:

Կյալիս չեն, կըխտարի ոտիցը փոնց քաշ տալով, քաշ տալով, քաշ տալով՝ պիրավ, պիրավ, ասեց.- Էս ա ծեր ինչը, զատ չի կա:

Էտ ճամփեն, ես քոլը պոց ըլավ, էտ Անջան դեղ ընդի հմի հիվանդ ա, տա՛ն էլ գիղոմ չի թե էտ յաշիկը, էտ թաքավորը գիղոմ չի թե սիե պոն կա, տա՛ն պոն չի պատմել, ախճիկը տվավ էտ տղին, ախճիկը տվավ էտ տղին, արթեն ճամապարը պոց ա ըլել, քոլը հան-գիստացել ա, ախճիկը տվավ տղին: Տղեն եկավ էտ ըխճկա հետ գյա՛փ արավ, թե ասեց.- Դրես, հրես ես ա՛յ քու հոր,- ասեց,- տուընդ քանդողը:

Էտ ախճիկը տեսավ, որ մեծ իգիթություն ունի ես տղին էլի, մեծ իգիթություն ունի ես տղին: Տըռնից պոլկ չի եկավ: Եկավ, թե ասեց.- Քեզ պաղաատի,- ասեց,- որ սա՛ տա, ես կյալիս եմ: Ծինն աստի,- ասեց,- ծովը մտի:

Ծինն ծովն արավ, ընթելը ըխճկա կընդից փոնց տրավ ըռաչին ու ծովն արավ ու քշեց եկավ: Եկավ, տյուս եկա՛վ Անջան դի մոտ: Դմի Անջան դեղ եկել ա, չոք-չոք քանդող ուզոմ ա, որ կյա՛ն էտ տղին, դիմզը հասավ պըրծավ, ծըտերի մընի շլիքն էլ պուկեց: Անջան դեղ գի՛րթ ցատեց, մնացել ա էն միկը: Մնաց էտ միկը, տեսավ, չէ՛, հնար չի ըլլոմ, մոտ չի կյա՛լի: Էտ մընի ծիտն էլ որ պուկեց հա՛, Անջան դեղ ոտները հա՛ մեզեմե՛ց, ոտները մեզեմե՛ց, սատկեց:

Էտ տղեքը քյոցեց եմ է՛, տղեքը քյոցեց եմ, ախպերտիկընը չիմ քյոցեց եմ: Դույ ըլավ: Տը-րան ունի իրեք հատ տի, կյովական ծիան, ու-նի մեծ կարողություն: Էն քանզ-քանզ պոնները պիրավ էտ ծիանը պեռնոտեց, թամուզ պեռնո-տեց, մին-մնի ոռիցը կապած, ինքն էլ ծինն ցա-տեց աղաթ ընգավ: Քըշերը եկավ ախպոր-տանց եղնա՛ր հասավ, ախպորտանց եղնա՛ն ե-կավ հասավ, եկան մի տեղ կաղնեցին, որ մի քիչ թաքաթաշ մըսլըհաթ անեն, գյոզդարոնոմ էս տղին պիրին ոնց արին, ինչ արին, էտ խեղճ տղին պիրին կոխեցին էտ հորի մնչը, հորի մնչը կոխեցին, ընթելը քցեցին ճուրը, հորի մնչը, ու սըռնըն էտ ըխճկանն էլ, էտ տըռնըն իրանց հետ վե կալան առան եկան տուըն:

Դերը կաղնեց.- Արա՛, ուրե՛ն ծեր ախպերը:

Թե.- Մենք ախպեր չենք տեսել:

- Արա՛, ծեր ախպերը եկել ա եղերնուտ, ո՞նց չեք տեսել, մա՛ էն ծիու ծեռին, ծիու ծե-ռին, որ տուք ամսով էլ քյոցած ըլեք հա՛, էն ծինն ծեզ ինչ չի թողիլ,- ասեց,- էտ ի՞նչ եք խոսոմ:

Թե.- Դե մենք տեսել չենք, հայրիկ, քե ա-սըմ ենք, տեսել չենք: Տեսել չենք, տեսել չենք:

- Դե յա՛լ:

- Ի՞նչ անենք, որ տեսել չենք՝ տեսել չենք:

Էս ի՞նչ ասեմ ծեզ: Եկան, եկան տյուս եկան էտ պետությունը, իրանց հոր աշխարը:

Տղեն տա՛ռ ընդի յա: Կաղնել եմ, որ.- Մենք էտ պոնը տեսել չենք, տեսել չենք:

Էս տղեն ըտի, մի մարթ կկյա՛ն էտ թալեն, ոնց որ Կաղանի թալեն¹: Էտ թալեն մի մարթ կկյա՛ն: Էտ մարթը կկյա՛ն, որ ըտի ինչ անի, չյուք

¹ Կաղանի թալա - հանդաման է Այգեհովիտ գյու-ղում (ձանթ). քանախավաքի):

վարի, եւ տղեն կատասի, եւ տղեն վեր կունի տղուն, սովածութենից թիւացել ա, էլ կարըմ չի շարժվի, թե նա, թե կնիկը սովածութենից շարժվում չի: Էս մարդը վե կալավ սելմը տըրավ տըիւնց տարավ տուն:

- Ա՛ կնիկ, առանց տղա տղատեր տառնը, առանց հարսը հարսնատեր տառնը:

Տարան ուտըցրին-խմըցրին, քեփ անիլ տվին, ըսի մի վեց օր պահեց: Էս վեց օրը հե-րը ինչ անըմ ա, անըմ, մինն էլ ա բոյիններ-նուն չեն ունըմ:

- Օջով չենք տեհել, օջով չենք տեհել:

- Լավ:

Հմի եւ խաբարը ո՞ւմից տանը:

Պունուր տղեն, վե կալավ տն ըխճկանը՝ թաքավորի ախճկանը, վե կալավ եկավ հա-սավ հոր կուշտը: Եկավ հոր կուշտը, հերը հարց տվավ, հերը հարց տվավ.- Բալա, խի՞ ես սըրունցից ընգել:

Թե ասեց.- Տըիւնց մարթիք չեն, մարթի էլ տղա չեն,- ասեց.- ըսիկ, ճիշտն ասած, հայրիկ ջան, և տըիւնց խեղ էլ չկա կըլխներըմ: Սիե, սիե, սիե ես քյնացել եմ անց կըցել ըն-դեղ, ընդիան եկել մըկել ըսիկ, ըսիան էլ ես ըխճկանը վե կալել եկել հասել, ըլետ եկել եմ քո կուշտը: Տըիւնց մարթացու չեն, սիենց, սիենց:

Դե հերն էլ ըսի կարքադրեց.- Տղեք ջան, իմ ես քաղաքից քառասունըտ էլ տուրս եկեք կորեք, որ տուր տըքան անամուս եք, մամուս չունեք, իմ քաղաքից տուս եկեք կորեք: Դուրը ատակ եք ըլըմ՝ ատակ ըլեք, ես քաղաքիցը տուս եկեք:

Տուրս արավ քաղաքից, եւ տղեն մնաց ը-տի հոր կըշտին, իսկ ես քառասունհի՛ տուրս արավ: Էտըքան պանն ա:

6(6). ԹԱՔԱՎՈՐԻ ՍԱՆԻԿԸ¹

Մի թաքավոր, սունքաւոր թաքավոր ա, ժառանգ չունի, եւ թաքավորը կյալիս ա ման կյալու: Ման ա կյալի մի վազիրի հետ, իրանք էլ՝ դերվիշի շորըմ, դերվիշի շորըմ: Ոչով չի

գիղըմ, թե նա թաքավոր ա, կամ նա վազիր ա, կամ վերչապեա ինչ ա: Դեվրիշի շորըմ են էրկունսն էլ, միմիայն տա, եւ թաքավորը վա-զիրին ասըմ ա.- Որ մենք ման ենք կյալի, հարուստի տան չի կարելի մենք կենալ, ամե-նաքավոր, ամենաքայտիք, օրհացի միտաջ մարթի տան պիտի մենք մնանք, էլ ինձ չի խոսցնես:

- Շատ բարի:

Մի քանի օր տըիենց ապրեցին եւ գյուղըմ, էն գյուղըմ, դեա-դեն, եկան մտան մի գյուղի մեջ: Էտ գյուղը մեծ գյուղ ա, մեր գյուղի պես: Է՛, պիտի կյալով, պըտիտ կյալով, ըրեքնակը արթեն մեր ա մտնըմ, մըտիկ արին տեհան մի պառավ կնիկ, մեծ պառավ կնիկ, մի պուհուր նիե կոկղա կա, էտ կոկղալի առաջը սըրփըմ ա: Եկան տիե կաղնոտեցին, էտ կնիկը, մեջկին բըզեց, թե.- Պառի ըրուգուն, նանի,- էտ թաքա-վորը:

- Աստծու պառին,- ասեց,- դեվրիշ բաբա, աստծու պառին:

Թե ասեց.- Խընթըրըմ եմ էլի,- ասեց,- հո-քուտ մատաղ, ես քըշեր տեղ տու էտ ծխի կըշ-տին, էտ կըրակի կըշտին յուլա քյնանք, վաղը կըճանապարկենք, նանի ջան:

- Այ դերվիշ բաբա,- ասեց,- ղոնաղն աստ-ծունն ա, միմիայն,- ասեց,- ի՞նչ ասեմ ծեզ, մի կտոր հաց չունեմ, ճուր չունեմ, ո՞նց ծեզ հյուր ընթունես:

- Մենք հաց էլ ենք, ճուր էլ ենք, քեզ էլ փող կըտամ կըքնա ի՞նչ ուզըմ ես կառնես:

Թե.- Համեցեք:

Տըրան էլ մի հարսն ունի, էտ պառավ կյն-գանը, տըրա մարթը մահացած ա, էտ կնիկը սանդեմա ցավըմ ա ազատվելու, էտ մարթիքը չեն գիղըմ: Էտ մարթը հանեց տըրան մի հատ ոսկի տըվավ՝ էտ պառավի: Էտ պառավը վե կցավ եկավ, վե կցավ եկավ բազաղը, հսկա-յական ուտելիքեղեն առավ, էլ կանեսրվից, էլ հացից, էլ յեղից, էլ պանրից, էլ ծըկնից, ամեն մի բան էլ առավ, մի մեծ ինչ շինեց՝ մեշոք, ըլլակեց, ընթելը դույ ըլլավ, պիրավ տուն: Դե տըիւնց հու սոված չեն, ծարավ չեն:

- Նանի ջան,- ասեց,- մենք կուշտ ենք,- ասեց,- տիր ըտեղ, կերեք տուր:

Ըսի էտ էրկու կինն ա, էլ ուրուշ ոչինչ չկա:

¹ Բանասացը շփոթում է և երեսունիննի փոխարեն ասում է քառասուն (ծանոթ. բանահավաքի):

- Լա՛վ:

Ժամի տասներկուսին շուտ-շուտ տո՛ւ մտիկ ա տալի տըռա՛ն ժամացույցին, մտիկ արա՛վ տեսա՛վ, որ հարսը ազատվեց, տո՛ւ ինչպե՛ս իմաստուն մարթ ա՛, վազիրին սիե կըռնո՛վ տվա՛վ, թե ասեց.

- Արա՛, քու տունը քանդվի,- ասեց,- է՛ն հարսը ազատվեց, տղա-ըրեխա պիրա՛վ:

- Դե լա՛վ, է՛,- ասեց,- թաքավորն ապրա՛ծ կենա՛:

Էտ քըշերը տըրանց ըտի ապրեցին, ըռա-վոտը լիսացա՛վ, արեքնակը տյուս եկա՛վ, ծեզ վրա է՛լ բարի, ըրիճաց վրա է՛լ բարի, արեքնա-կը տյուս եկա՛վ, տըհա՛նք վեշը վե կալան տու-րս եկա՛ն:

- Դե՛, նանի ջան, մեծապատիվ շնորակալ ենք քու օջաղիցը, մենք քյնըմ ենք:

- Պա՛րի ճանապար,- ասեց,- ծեղ մատաղ, բարի ճանապար:- Որ ըտիան մեր դըրվա՛ցն հեռացան,- Վա՛յ,- ասեց,- էս խի՞ չը ես էս մըրթ-կերանը մի-մին արաղ տըվի խմեն,- ասեց,- մի տըրիճաց ոտը պա՛րի ըլի, հարսըս հեշտ ազատվեց: Դեվրիշ բաբա՛, դեվրիշ բաբա՛:

- Համմե՛:

- Խընթրըմ եմ,- ասեց ետ տա՛ռեք մի բա-ժակ արաղ խըմե՛ցեք, հարսըս ազատվել ա, ոտերնուտ բարի ա ըլել:

Էտ տա՛ռան ու.

- Ածի՛լ մի՛, ածի՛լ մի՛,- ասեց,- սպասի:

Սպասեց:

- Նանի՛,- ասեց,- իրավունք կըտա՛ս էտ ը-րեխին ի՛մ ծախսովը, ի՛մ ծախսովը հալալենք, կընքենք, քավորը կաղենեմ ե՛ս:

- Վա՛յ,- ասեց,- դեվրիշ բաբա՛, բա տիե պա՛ն կըլի՞,- ասեց,- քըշերիս ա ազատվել, ո՛նց կըլի տըռա՛ն կընքիլը, ո՛նց կըլի էտ պա՛նը:

- Ի՛նչ անենք,- ասեց,- սոր կընքա՛ծ, էքուց կըն-քա՛ծ, միևնույն պա՛նն ա,- ասեց,- նանի ջան, վախի՛լ մի՛:

Էտ պառա՛վը մի քիչ ռեյի եկա՛վ:

Թե ասեց,- Ըստի՛ք մոտիկ հարևան չու-նե՛ս, սիենց տղամարթ:

Թե ասեց,- Կա՛:

Սի տղա կանչեց, էտ տղեն եկա՛վ, թե ա-սեց,- Քյնա՛ գյուղխորուրթին ասա՛ մեր ծեր գյուղ-

խորուրթին՝ մեր այսինչ պըռա՛վի տանը էրկու մարթ կա, քեզ կանչըմ են, շու՛տ, անպայման պի:

Էտ մարթը քյնաց, քյնա՛ց գյուղխորուրթին քյթա՛վ: Տո՛ւ ասեց,- Այսինչ մարթի տանը էրկու հոքի կա, քեզ անպայման կանչըմ են:

- Արա՛, նրա տունը ո՛րն ա, նա մի կոկոլ ա,- ասըմ ա,- Ի՛նչ տուն, Ի՛նչ դես, Ի՛նչ մարթ, էտ Ի՛նչ շա՛ն տղա յա, որ մեզ կանչըմ ա:

Թե,- Գիյըմ չեմ, կանչըմ ա քեզ, քյնա՛լ դես:

Էս մարթը վե կցա՛վ ու դուլ ըլա՛վ, քյնաց: Քյնաց տեսա՛վ էրկու մարթ է՛լ ըտի կաղենա՛ծ, որ տեսա՛վ տո՛ւ կյալիս ա հա՛, էս թաքավորը աղա-քի վրա քյնաց, քյնաց ու թե ասեց,- Կաղնի՛:

Կաղնեց: Շորե՛քը սիե կո՛ծակները տյուս ա-ծեց ու սիե արա՛վ.

- Սը լա՛վ նախ:

Սըտիկ արա՛վ տեսա՛վ, որ պա՛հ, թաքավորն ա՛: Գիրթ արունը առա՛վ՛: Եկա՛վ, թե ասեց,- Տերտեր ունե՛ք ծեզ:

- Ունենե՛ք:

- Քյնա՛, ասեց, տերտերին էլ, քյնա՛, ասեց,- ծեր տիրացվին էլ, կանչըմ ես,- ասեց,- էստեղ հետո տու՛ մի էրկու հատ ապրանք ես առնըմ, էսքան երկուհարի կիլո հաց ես առնըմ, էս ես առնըմ, էն ես առնըմ պիրըմ:

- Լա՛վ:

Քյնաց մի էրկու հատ ապրանք առա՛վ պի-րա՛վ մորթոտիլ տվա՛վ, էրկու հատ պովուր կանչեց, կերակուրները պաղրաստիլ տվա՛վ, էտեղ մե՛ծ պազմություն կանչեց, պիրին էս, էս ըրեխին, ճուլը տըրին ածեցին մի տաշտակի մեջ, էս ըրեխին հալալըմ են: Հալալեցին, քա-վորը կաղնեց էտ թաքավորը: Հալալեցին պըր-ծան, նստեցին հացի, հացը կերան պըրծո՛ւ, դե շնորակալությունը քցեցին: Պա՛, ներեղու-թյուն, ներեղություն, որ հալալեցին հա՛, էս թաքավորը ծերը տարա՛վ ջիբը մի հատ մե-դալ՛՝ էրծաթի, էրծաթի մեդալ ա, ցեպը՛ ոսկի, հանեց քցեց էտ ըրեխի շըլիկը:

- Տերտերն ապրա՛ծ կենա, ա՛յ գյուղխորուր-թի նախագահ, ա՛յ փըլան, ա՛յ փըստան, էս մեդալը ես հանձնըմ եմ էս ըրեխին՝ ընծա: Սի տարուց, հինգ տարի, հինգից-տասը տարի,

¹ Գիրթ արունը առնել – վախենալ, սարսափել (ծանոթ, բանահավաքի):

թե ես կկյամ, ես իմ ծերքովը ես մեղալը ես ըրեխիցը կհանեմ, եթե չեմ կռակ, ոչ-ով իրաւունք չունի մեղալը տղոն շըլընքիցը հանի, քշե՛ր-ցիրե՛կ ճըրքնը պահեցեք, տն խարաք ըլլո՛ղ, անցոտող-մընցոտող ապրանք չի:

- Լաւ:

Տըհանք տհե սկսեցին տղոն տհե պահպանիլը, տղանք էլ թողեցին քայցին: Քյնն-ցին, էտ թաքավորը էլ ման չեկաւ, քյնն-ց իրան տեղը մստեց: Էս ըրեխեն եկաւ տառնաւ տասնըվեց տարեկան: Տասնըվեց տարեկանը-մը, թե ասեց,- Աբալ ջան,- ասեց,- քյնն,- ասեց,- ինչ արա, մի քիչ փետից-մետից արա պի, կերակուր շինենք,- ասեց,- սոված ենք, հաց թըխենք:

Ժընգժընգընգաւ էտ ըրեխեն,- Է՛, կարաւ չեմ, դես-դեն:

Տա, մի փետ կար ըտի, վե կալաւ էտ ըրեխի միչկին հա՛ ծեփեց:

- Դիմար, իշի կլլաւ,- ասեց,- ո՞նց թե,- ասեց,- ինձ պաղասխանը ես,- ասեց,- խի՞ չես քյնըմ:

Էս ըրեխեն մի մտաւ տուն, մտիկ արաւ տեսաւ, որ մի հատ կորեկի հաց՝ փաթիր, ըտեղ տղոն, էլ ուրիշ պան չկա: Էտ փաթիրը վե կալաւ ջըրքնը տղոն ու տուրս եկաւ, լաց ըլիլո՛ւ ղուր ըլաւ կորաւ: Կորաւ: Դայ սօր կկյա, հայ էքուց կկյա, հայ էլօր կկյա, էտ ըրեխեն կորաւ:

Էտ ըրեխեն մի տարվա մեջ ման կռաւ ջը-շեր-ցիրե՛կ՝ մի տարվա մեջ տոյուս եկաւ էտ թաքավորի քաղաքը: Ի՞նչ ա գիղըմ, թե նա յա, ո՞ւլ ա գիղըմ, բայց տուրս եկաւ էտ քաղաքը: Նա ի՞նչ ա գիղըմ թաքավորը որդի՞ ա, կամ դես, կամ դեն: Էտ քաղաքըմ մտիկ արաւ տեսաւ, էս էրեխեն էլ շատ ծարաւ ա, շատ, է՛ չերեսչուր ծարաւ ա, լուզուն ճաթ-ճաթ ա ըլ-ըմ, ըտի մի ճըրահոր կա, էտ ճըրահորի դա-քին հըսկայական գլորք կա՝ բանակ, մոքաթ չեն տալի, մի բոչկա էլ կա ըտի, բոչկաչին՝ էն ճուրը տանողը, թաքավորի հմար ճուր ա տա-նըմ, արաք ա, ինքը արաք ա: Էտ գլորքը որ պըրծաւ հա՛, ծիու ոռին ծեփեց, ծին տարաւ բոչկեն դեմ արաւ էտ ճըրահորին, որ ճըրա-հորին դիպցաւ հա՛՝ տտ ողեն թե ասեց,- Ախ-

պեր ջան, հոքուտ մեռնեմ, լուզուս քայրթ-քայրթ ա ըլե, մի կու՛մ ճուր տու խմե՛մ էլի:

Տըրոն ուշուսնց տվաւ, վերդեն շարտեց քցեց առաւջը:

- Ան,- ասեց,- տու հանի լակի,- ասեց,- չէ՛, չէ՛, հըվատա մի,- ասեց,- մի մոյքոր էլ փըռնես քե հմար:

Էս ըրեխեն պիրաւ ընքելանը վերդեն կախ արաւ ծիք տվաւ, հանիլիս տեղը էտ մեղալը ըստիան հա՛ տոյուս պըրծաւ, յախիցը, կոճակ-նին մեր ածած չէր, որ տոյուս պըրծաւ, էս ա-րաքը մտիկ արաւ տեսաւ, որ ոսկա ցեպ ա, ինքն էլ խալիս էրծաթ՝ թաքավորի նկարը վրեն, էս ըրեխին փըռնեց ընքելը շըլինքը հը-լորեց, մեղալը կըլիիցը հանեց ջըրքնը տը-րաւ ու շըլընքիցը հըլորեց քցեց ֆորի մեջը: Էս ըրեխեն քյնն ցըրի տակին տվաւ ու տոյուս քցեց, ըտի թախտեր կա, էս պանը Էս ըրեխեն էլ կա, էտ թախտերը՝ շինած ա ըլըմ, որ տոն շինող ուստեն կամ մոյու մարթիք կալիս են էտ թախտի վրա կաղըմ, տեսնան որդիան ա էտ խարաքը, որ կըտըրվըմ ա: Տհե շարունակ ըստիան մըջև Աղըստափա՞՛ էլ տհե շինած հորեր ա: Էս ըրեխեն եկաւ ու էտ թախտին մստեց: Դժի էտ գյառնեն էլ լըցրել ա բոչկեն, քյննցեց: Մնաց էտ օրը, ջըքել ըլլու-գլու, տոն ըտի՝ թաց, ճըրքնը քյննալիս, էտ հորի միչին վեր ընգա՛ծ: Էտ քըշերը մի հնարով լի-սացաւ:

Խա՛րքը տոն քաղաքի՞ն, տանք մի բազըր-գյանից: Էտ բազըրգյանը քյնըմ ա Ամըրիկա: Էտ բազըրգյանը եկաւ ըտի կաղնեց էտ ըխ-պրի կըշտին, էտ ըխպրիցը դենն էլ միջև հա-րուր իցցուն վերստի վրա ճուր չկա, ուխտերը որ ճըրեն, կերակրեն: Կրակ արին, կերակուր շինեցին, բոլ միս ունեն, բոլ ուտիլիք ունեն, կերակուր չըլեցին, կերան-խմեցին, վերչա-պես ըտի տըհանք կերակրեցին: Դե ասեց,- Վե

¹ Բանասացի բացատրություն անորոշ է: Տիրորի ներսում, կատուցող վարպետը հատուկ ելուստներ է փորում՝ թախտանման: Այդ թարթեքներն արվում են այն նպատակով, որ ջրիտը պարբերաբար մաքրելու կամ վերանորոգելու համար վարպետը կանգնելու տեղ ունենա: Բոլոր ջրիտներում նմանօրինակ ելուստներ կան (ծանոթ. բանահավաքի):

² Աղստաֆան կայարանն է քաղաք է Աղստև գետի ստորին հոսանքում, Աղբեջանի տարածքում (ծա-նոթ բանահավաքի):

կաց,- ասեց,- քյնն մի ճուր հանի, ուխտերը ճըրեցեք:

Վե կցավ, որ քյնաց, ճուրը հանիլիս տեղը էտ ըրեխեն վեդրիցը փըռնեց, վեդրիցը փըռնեց հմի, որ տյուս կյա՛: Որ ե գյադեն մտիկ արավ տեսավ մի պոն կըպած կյալիս ա, էտ գյադեն բուրախեց ընքեխանը փախավ, տո ըլետ քյնաց ճըրի տակին տվավ, էլի տյուս եկավ ըտի նըստեց:

- Արա, խի՞ չես ճուր հանըմ:

- Խազեյին,- ասեց,- վախըմ եմ,- ասեց,- ըստի մի հըրամի,- ասեց,- հըրամի ա, էն ի՞նչ ա,- ասեց,- տյուս ա կյալի,- ասեց,- վըխծա,- ասըմ ա,- բուրախեցի, վախըմ եմ, կարըմ չեմ:

Էն միմը քյնաց, տո էլ նույը:- Էս խազեյինը կընըզվեց, ընքել տեկավ ինքն իրան ծեռովը կախ արավ, տեսավ կըպած կյալիս ա:

- Բուրախեք ո՛չ, ծեռ հերն անիծած, բուրախեք ո՛չ, ծեռ հերն անիծած:

Պանեցին, հանեցին ըտեղ, էն նդաված՝ եկավ թըմփալա հա՛ վեր ընգռավ: Տեսան լուզուն կապ ընգռած մի սուրուն տղա-ըրեխա ա էլի՝ տասնըվեցըմ, տասնըօխտը տարեկան տղա-ըրեխա յա: Ըտի վեր ընգռավ, էս մարթը խըտտեց տարավ կրակի կուտը, կրակի կըշտի՝ լավ չորեղը բիթավ հանեց, մաքուր հանեց ու իրան ինչը՝ չամադանը, պոց արավ մի սիե չոր պիրավ էտ ըրեխին մաքուր կեցրավ, պենջակ կեցրավ, շալվարը կեցրավ, ոտնաման կեցրավ: Էս երեխեն ետ եկավ, ետ եկավ, տոռռավ արագոննի տղա: Յե՛, կերան, խմեցին, կուտացան, դես-դեն, թե ասեց,- Բալա ջան, արի՛ տու ինձ տոռ տղա, ես քեզ,- ասեց,- ոսկի կաստումըմ կպահեմ:

Թե ասեց,- խազեյին ջան, չէ՛, չեմ ուզըմ,- ասեց,- միմիայն խընթորմ եմ, շնորհակալ եմ տափից երգիքը, որ,- ասեց,- էտ պառնը, էս լավությունը տու ինձ արել ես,- ասեց,- շնորհակալ եմ, իշտահիս չի քաշըմ:

Տեսավ, որ հմար չկա, թե,- Դե որ տիեց ա, տղա ջան, էլ չեմ ուզըմ,- ասեց,- էտ կաստումն

էլ քե, էտ ամեն մի բանն էլ քե: Տու ես գիղըմ,- ասեց,- ես թու լավն եմ ուզըմ:

Ու ուխտերը վե կալան ճամփա ընգռան: Էտ ըրեխեն քյնաց թաղաքի մեջը, էստուր հըրցրավ,- Բա որդե՞ղ գործ կըլի,- Էնդուր հըրցրավ,- որդե՞ղ գործ կըլի:

Սիեցին,- Դե իս՛,՝, րաբոչի բատալյոնի՞ շենքերն էն ա՛, քյնն րաբոչի բատալյոնըմ կընթունվես, ընդի գործ կանես:

Էտ ըրեխեն քյնաց էտ րաբոչի բատալյոնի կուտը: Տըռնաց մեծը տուրս եկավ:

- Դը՛:

Թե ասեց,- Ես եկած մարթ եմ, ուրուշ տեղից,- ասեց,- գործ տվեք ամեն էլի:

- Պաժալըստա,- ասեց,- մենք էլ ենք ուրախ, ե՛կ, արի՛:

Իրան ասկը, անուըն, բոլոր կյուտեց վե կալավ, էտ ըրեխին տարավ սենյակը, մի կարավաք հանձնեց իրան ամեն մի բանովը, էտ ըրեխեն հիմի տըրնաց մոտ էտ րաբոչի բատալյոնըմ ծառայըմ ա: Էրկու տարի տոն ըտի ծառայեց:

Դմի խաբարը տանը որդիի՞ց, խաբարը տանը էտ թաքավորիցը: Էտ գյադեն, տըռն էտ մեղալը տանող գյադեն ասըմ ա,- Դըքեք էն հիդեմ իմ ջըքըմն ապսիլի, էս խի՞ չեմ հենց անըմ թաքավորը տենա, ինձ ես ցավիցն ազատի էլի:

Տո քյնաց, ընքել թաքավորը որ կալիդորով տյուս ա կյալի ման կյալու, բալկոնըմ ման ա կյալի, ըլետ քյնըմ իրան շենքը, քյնաց ըտի միջկի վրա սիե պրանվեց, ընքել դիշերը սիե պոց արավ, մըթամ թե քնած ա, փըշըցըմ ա սուտ կատվի նման փըշըցըմ ա: Էտ թաքավորը, տուրս եկավ, որ բալկոնըմ կաղնի, մտիկ արավ տեսավ էտ գյադեն ըտի քնած, էտ մեղալը դիշին տըրնած, մտիկ արավ տեսավ իրան մեղալն ա, որ էն ըրեխին ա տվել, էն ըրեխին ա տվել:

- Վա՛յ,- ասեց,- քոռանամ ես, քոռանամ՝, ու ծըվաց ու էտ ըրեխին խըտտեց:- Արա, ա՛ բալա ջան, վե կաց, բալա ջան, վե կաց:

¹ -Ա՛, էս ի՞նչ ճուր ա կաթըմ կըլիս, ա՛յ տղա,- պատմությունը ընդհատելով՝ հարցնում է բանասացը: Զայնագրությունը կատարվել է բանասացի բալկուն շվաքարանի տակ (ծանոթ. բանահավաքի):

² Բաբոչի բատալյոն (ռուս. рабoчнyю батaльoн) - աշխատանքային գումարտակ (ծանոթ. բանահավաքի):

Վե կցավ, մըթամ թե վե կցավ: Էտ ըրեխին տարավ ռուպեական վագիրին տվավ, տարան լըղըցրին մաքուր, իստակեցին, պիրին թաքավորական գեյ կեցրին, ըսի արխային մնաց թաքավորին տղա՝ էտ արաքը: Լավ:

- Այ տղա, - ասեց, - բա խի՞ ես էտքան սևացել, էտ ի՞նչ ա տա՛, էտ ի՞նչ ես ըլել, էտ ո՞նց ա ըլել:

Թե.- Դե ի՞նչ եմ գիղըմ, հայրիկ ջան, շատ ե՞մ գիղըմ, պուճուր վախտեց եմ սիե էլի:

- Լավ: Տու ի՞մ տղեն ես:

- Լավ, քու տղեն ըլեմ:

Էտ թաքավորը տրա՛ տիե պաշտպանեց էրկու տարի, էս տղեն էկավ տառնավ տասնինը տարեկան, հի՛մա էտ ըրեխին ուզըմ ա, որ պսակի: Ման ա կյալի, ման ա կյալի, ինչ ախճիկ ա, ասըմ ա, ասըմ ա.- Չեմ ուզըմ, չեմ ուզըմ, չեմ ուզըմ՝ չեմ ուզըմ:

- Արա՛, բա ո՞ւմ ախճիկն ես ուզըմ:

Թե ասըմ ա.- Ի՛մ ուզած ախճիկը, հայրիկ ջան, ո՞նչ տու կճարես, ո՞նչ ես, էստի մի տղա կա ռաքոչի բատայլոնըմ, ի՛մ ուզած ախճիկը ցա կճարի:

Ուզըմ ա կյուխն ուտի էլի, էտ ըրեխի կյուխն ուտի, էտ տղի կյուխն ուտի:

Թե ասըմ ա.- Բի ի՛նձ ցույց տու:

Առավոտը ծեքին էտ բանվորությունը քյընըմ ա, իրեք-իրեք, չորս-չորս, իրեք-իրեք, չորս-չորս տիե քյընըմ են՝ իրանց գործիքնին վե կալած:

- Չայրիկ, - ասեց, - հրե հա՛յ, - ասեց, - էն իրեք տղեն տենըմ ե՛ս, կես տեղի տղեն ա, - ասեց, - ա՛յ էն տղեն ա:

Սի ծառայ ունեն, էտ ծառայը դարգեց, էտ տղին փղոնեցին, թե ասեց.- Թաքավորը քեզ կանչըմ ա:

- Արա՛, թաքավորն ի՞նչ կապ ունի ի՛նձ հետ:

Թե.- Գիղըմ չեմ, կանչըմ ա:

Էս ըրեխեն վե կցավ քյընաց թաքավորի մոտ:

- Բարյաչողըմ, թաքավորն ապրած կենա:

- Աստու՛ն պարին, տղա ջան, նստի՛:

Նստեց:

Թե.- Քեզ գիղե՞ս ո՞ւր եմ կանչել:

Թե.- Որ ասես, կգիղենամ, ի՞նչ եմ գիղըմ, թաքավորն ապրած կենա:

Թե ասեց.- Քեզ կանչել եմ ա՛յ էս գործին, տենըմ ե՛ս էս ծովը:

Թե.- Տենըմ եմ:

- Էս ծովի քըմակին կա մի հատ պետու-թյուն, էտ պետության թաքավորին մի հատ ախճիկ ունի, մի հատ ախճիկ, էտ ըխճկանը թե պիրի ի՛մ տղի հա՛մար՝ քեզ գյանը ունես, եթե չէ՛ քու կյուխը չկա՛:

Տա սկսեց մտածիլը:

- Այ, թաքավորն ապրած կենա, ես ա-ն գիղըմ չեմ, ք-ն գիղըմ չեմ, ես էն խեղը չունեմ, ես ո՞նց քյընմ էտ պետության ախճիկը պիրեմ քու տղի միար, էտ ի՞նչ ես ասըմ:

Թե.- Տիե ա, - ասեց, - տափի տակին էլ ըլես, էլ դեմ քե քըթմալ, երզնքի իրեսին էլ դեմ քըթմալ, թիքա-թիքա քեզ կըտորիլ դեմ: Վերչնակա՛ն, ա՛յ, էտքան պա՛ն, քյընալ դես:

Էտ ըրեխեն տյուս եկավ, մտավ էտ քաղաքի, ոնց որ թե Երևանա Արուսյան ուլիցը, նիե մի ուլիցա, լաց ըլիլով քյընմ ա էն տու՛տը, լաց ըլիլով կյալիս ա վիրի տուտը, լաց ըլիլով քյընմ ա ներքի տու՛տը: Ըսի մի պառավ կնիկ մտիկ արավ տեսավ էտ ըրեխեն շատ ա լաց ըլըմ, լաց ըլիլով ման ա կյալի:

- Այ բալա, խի՞ ես լաց ըլըմ, - կանչեց:

- Է՛, նա՛նի քան, - ասեց, բա ի՞նչ անեմ, - ասեց, - ալավը ծոցս ա ածել թաքավորը, բա ի՞նչ անեմ:

- Ի՞նչ ա:

Թե.- Ի՛նձ կանչել ա, - ասըմ ա՛՝ այսինչ ծովի քըմակին կա մի պետություն, նրան մի հատ ախճիկ ունի, քյընա էտ ախճիկը ի՛մ տղի միար պի, ես էլ ա-ն գիղըմ չեմ, ք-ն գիղըմ չեմ, ես դի՛րը քյընմ, որդի՛՝ քյընմ, նա՛նի ջան, բա ի՞նչ անեմ, որ լաց չըլեմ:

- Քոռանա՛, - ասեց, - տըրն աչկերը, խըվարի տրն աչկերն, - ասեց, - տա՛ տիե ըրեխա ուտող ա, բալա ջան, - ասեց, - տազ արա, քե մի պա՛ն ասեմ, ի՛մ ասածն արա:

Թե.- Ի՞նչ ա:

Թե.- Քյընա՛, ասեց, - թաքավորին ասա, քեզ մի շաշկա էլ տա, մի ծերք կաստու՛մ էլ տա՛ թաքավորի, մի հինգ կիլո էլ ապելսին: Պի ըստեղ, ի՛մ կուշտը:

Տա քյընաց:

- Թաքավորն ապրած կենա, ինձ կաստում էլ ես տալիս, մի շաշկա էլ:

Շաշկեն քցեց շղիները, կաստումն էլ պիրավ ոտից միջև կլուխ կեցրավ, հինգ կիտ ապելսինը ածեց մի պրավիզի¹ մեջ, տվավ իրան, վե կալավ եկավ: Եկավ էտ պառավի մոտ:

Թե ասեց.- Տղա ջան, էբուց ժամի էրկուսին պըրախտոը ատխող դի ըլիլ դըբի են պետու-թյունը, կըյնա պըրախտոըը կնստես, լավ կըհիշես իմ ասածները հա՛, լավ կըհիշես: Ես պըրախտոդի, էս արևը տենըմ ե՛ս, արև՛, արևի միջին կարըմ չենք նստենք, էտ պըրախտոը շղվաքի՛ միջին քյնըմ ա, էտ շղվաքը մի ճանց ա,- ասեց.- Ժպե ա տվել՝ ճանցը Ժպե ա տվել, ճամպիա չի գիղըմ, որ քյնա, էտ Ժպեմ,- ասեց.- շղվաք արած պըրախտոը տիե՛, պըրախտոդի հետ քյնըմ ա: Եըլսապկետ վե կունես իրեք անքամ,- ասըմ ա,- սիե կանես, ա՛յ, իրեք անքամ, մի վախտ կըտենաս պըրախտոը արևը տվավ, էտ ճանցը ճանապարհվիլ դի, պայց քեզ տը-ժաոր օրեր շատ ունես, տըժաոր օրեր շատ ունես, կըհիշես քու տըժաոր օրիտ էտ ճանցը: Քու տը-ժաոր օրիտ էտ ճանցին կըհիշես, էտ ճանցը քեզ օքնություն կանի: Ա՛յ, միտըտ կպահես հա՛:

- Դե լավ:

- Դե՛հ քյնա, քեզ պորի ճանապարհ²: Մեկ էլ,- ասըմ ա,- մի հատ ճիպոտ, մի հատ ճիպոտ, էտ պըրախտոդի լաշովը մի՛ մի չանգալ կախ արած, մի ծուկը կյոլ դի մտնիլ, էտ չանգալի մեջը դի ընգնիլ, շաշկետ կհանես, էտ չանգալը մի հնարով կըկտրես, էտ ծուկը կազատվի, քու տըժաոր օրիտ էտ ծուկը կաղ-նիլ դի՛, լավ կըհիշես հա՛:

Թե.- Աշկիս վրա:

- Դե քյնա, քեզ պորի ճանապարհ:

Էս տընե եկա՛վ, եկավ քնեց, էտ լիսացավ, ժամը էրկուսին քյնաց քիլետը վե կալավ, նստեց պըրախտոդին: Քյնաց տեսավ, որ արա՛, պըրախտոը եկել ա էս ա ծովը կես ա ըլըմ՝ շղվաքի միջին, էտ շղվապեն վե կալավ ու իրեք անքամ սիե տվավ: Արևը տվա՛վ, պարզվեց:

¹ Պրավիզ (ռուս. провизия) – պարեն, մթերք, պաշար, այստեղ բանասացը հասկանում է մթերապայուսակ (ժանոթ. բանահավաքի):

² Այստեղ բանասացը մի պահ լուռ է և ասում. «Հա՛, ներողություն, ես ուզեմ ի լոք տամ վըրիցը (ժանոթ. բանահավաքի):

Լավ: Քյնաց, մի քիչ քյնաց, մտիկ արավ տեսավ մի պա՛ն սիե տալիս ա, մտիկ արավ տեհավ, որ մի հատ ծուկն ա էտ չանգալի մեջը ընգած:

- Արա՛, բա ո՞նց կըտրեմ սըրոն, ի՞նչ կըտրեմ:

Դե պըրախտոդին ծակետ կան, էտ ծակետովը կուռը մեգնեց, շաշկեն վե կալավ ու կուռը մեգնեց շղիկը-շղիկը, շղիկը-շղիկը տվավ էտ չանգալը կըտրեց: Էս ծուկն էլ ըտի ազատվեց:

- Ենորակալություն,- կլուխը պըրցըրցրավ ու տո՛ւ էլ ըտենց ճանապարհվեց:

Հմի էսքան էտտեղ քյնացել են, տըժաոր տեղերը պետք ա, մի քիչ լավ լըսեցեք, Ժեզ մատաղ³:

Քյնաց տուս եկավ տըրանց... պրիստինըմ քյնաց կաղնեց, պրիստինըմ կաղնեց, էտիան վե կցավ դուլ ըլավ թաքավորի շենքի վրա: Քյնաց մտիկ ըրավ տեհավ՝ տըրանց, խընըմաքար են ասել, էտ խընըմաքարը ըտի տըրած, քյնաց նստեց վրեն: Թաքավորը տուս եկավ:

- Արի՛ ըստեղ:

Քյնաց: Պայց տըրոմ հայաթի չորս կողմը սըհե կն վերստեն վըրո չիմ իսանաթի կլուխ ա ու ոսկուռ ա պատած, թամու՛զ իսանաթի ոսկուռ ու կլուխ ա: Քյնաց՝

- Ո՛ր ես եկել:

- Եկել եմ էլի,- ասեց,- թաքավորն ապրած կենա:

- Հա՛, իմ ըխճկա համար ե՛ս եկել:

Թե.- Այո՛:

- Ոչինչ, սաղ ըլես, լավ ես ասըմ: Մի չորս ղոլըտ մըտիկ արա՛:

Մըտիկ արավ:

Թե ասեց.- Տես, էբուց-էլօր ինձանից չնեղանաս, քու կլուխն է՛լ տըհանց պես միըն:

Թե.- Դե հմի ի՞նչ անեմ:

Ասեց.- Դե տիե, կանես՝ կանես, ի՞նչ դեմ ա-սիլ:

Թե ասեց.- Լավ:

- Դե արի՛,- ասեց,- մի կերակրվիլ:

³ Դիմում է լսողներին բանասացը (ժանոթ. բանահավաքի):

Մի լավ ուղեցրավ-խմբցրավ ու ճանապարհ, ընչով:

- Ի՞նչ հորըս ունի,- ասեց,- մի բոթիլ անմահական ճուր, երեք հատ անմահական խրն-ծուր, էն քերծը տենըմ է՛ս, հրե հա՛յ, էն պաճըրը քերծը:

Թե.- Դա:

- Դրե նրա տակին տըրած, տակին տըրած ա, թե կըրացիր սոճա՞ քըթանաս մի հնարով էտ բոթիլը՝ ճուրն է, էտ խընծուրն էլ պիրի՛ր, ի՞մ ախճիկս բունն ա, թե հու չէ՞ քեզ թիքա-թիքա էսենց կորցնիլ դեմ:

Թե.- Դե հմի ինչ կանես՝ կանես, ի՞նչ անեմ:

Էտ տղեն վե կըցավ դուր ըլավ դրի դետը, քյնաց մտիկ արավ տեհավ, որ մե՛ծ, հեյվարա չինարի ծառ ա էտ ծովի լաշըմը սիե տյուս եկած, մեծ ծառ ա, շատ մեծ, հեյվարա ծառ ա, քունն էլ տանըմ ա, կարըմ չի վրեն պահի: Էս ծառի վրա կա մի հատ դուշի պուն, համարյա, ո՛րնց ասեմ, մի կալեն տեղ, մի կալեն տեղ, էսքան մեծ ա: Տա՛, մի թուփ չիկա, մի պուն չիկա, թե կյուխը վե տընի էտ շըվաքին, կոնյա կյուխն էլ ա շըվաքըմը ըլի: Տեհավ մի պու-ճուր թուփ ա հե, ֆողը դես ու դեն արավ ու կյուխը կոխեց էտ թուփի մեջը, էտ ըրեխեն, խըտոր ընձավ, որ խտոր ընձավ, որ մեծ մի պուն ճըղճըղըմ ա, որ ճըղճըղաց հա՛, վե կցավ չորս դուր մտիկ արավ, տեհավ գատ չկա: Մեկ էլ խըտոր ընձավ, մըն էլ: Իրեքինջինըմ վե կցավ, վե կցավ եկավ էս ծառի տակի վրա՝ մտիկ արավ տեհավ, որ սիե դյեր մի օց ա՛ մե՛ծ, հըրամի օց, կյուխը սիե տանըմ ա, թե ճուտին փըռնի, ճուտերը ճըղճըղըմ են, օցը ետ ա տաճըմ, տիե տազ անըմ ա, ըլետ կյուխը տանիլիս ճուտերը ճըղճըղըմ են:

- Արա՛, բա ո՛րնց անեմ, ի՞նչ անեմ:

Շաշկեն համեց ու էտ ծառի մի տեղ կտու-տեց մի ոտի տեղ արավ էլի, ոտը տընիլու, որ մի ոտը տընի, էն մի ոտին տեղ կա, փըռնի: Լիի ըլավ, Լիի ըլավ, էտիե արավ ու Լիի ըլավ էտտեղ շեքը տըրավ, շեք արավ ու նստեց էտ ծառի վրա, էս օցի հաքվի թուշիցը տըվավ, որ տըվավ հա՛, ծովն ընձավ քըշացավ, մըն էլ տըվավ՝ մըն էլ տըվավ, մըն էլ տըվավ՝ մըն էլ տըվավ, էտ անդերի ջամդաքը եկավ սիե՛ ճուրը իրեն ա-

րավ, սիե ճըրի իրեն արավ, էտ ճուրը կըր-մրել ա ընչի պես՝ արուն ա: Եկավ, որ կյուխը հասավ հա՛, կյուխն էլ ինչ ա, մի ոչխարի կըլ-խիցն էլ մեծ ա, կյուխը հասավ, կյուխ էս քու-շեն էլ որ տըվավ՝ կյուխն էրկուտակ քցեց թե չէ, արթեն ծովն ընձավ:

Վեր եկավ, վեր եկավ ըռնկուլու, ինքն էլ ա ըռնկուլու ըլել, քյնաց, քընի համար մեռնըմ ա, քյնաց էլի էտ փոսըմը կյուխը վե տըրավ, ու աչկը կըպավ, սորի ա կըպել, թե ըրեգի: Էտ ճուտը ըտիան թըռավ, եկա՛վ թեերը սիե ցից արավ, իրան թեերը էտ տղի վրա սիե ցից արավ, համարյա մի տասը շազեն վրա շըվաք անըմ ա, ճուտ ա՛ պուճուր ճուտ: Մերը՝ տրա՛ մեերը, մի ոչխար սիե կըտըցըմ պիրըմ ա, որ ճուտերին կերակրի, մտիկ արավ տեհավ՝ ճու-տը ըտի թեերը փըռած ինչ ա, տա՛ յէլ յոթ տա-րի ա ըտի պուն ա տընըմ՝ էտ դուշը, էտ յոթ տարի յա կարըմ չի մի անքամ մի ճուտ էլ ա փըխծնի, չի՛մ սաճեմա՛ էտ անդերը ուտիլիս ա ըլըմ: Տեհավ՝ ճուտը ըտի վեր ընձած, սիե արավ, որ ոչխարը քցեց ճըրի մեջն ու եկավ, որ էտ տղին լափի, հա՛, կուլ տա, ճուտը հա ծըվաց.- Այ, ա՛յ ամայ, ա՛յ ամայ, ա՛յ ամայ, մեզ թափողը տա՛ յա:

- Դե,- ասեց,- բռնի տու, բռնի,- ասեց.- քյնա:

Թըռավ ճուտը, քյնաց իրան պունը: Իրան սիե արավ հաքվիցը մի հատ բըմբուլ պուկեց, բըմբուլը էտ տղի կըլխի տակին սիե ցից ա-րավ, կվաղրատ, կվաղրատ մի վերստի վրա շվաք անըմ ա: Ինքն էլ թըռավ քյնաց էտ ոչ-խարը կըտորեց, ճուտերի ամեն մեկին մի փլանջա տըվավ, կուշտըցրավ, քյնաց մի քա-րի վրա նստեց: Մի վախտ էտ տղին ա մտիկ ա-նըմ, էտ տղեն վե կցավ նստեց, մտիկ արավ տեհավ, արա՛, շըվաքի միջի ա, էս ի՛նչ շվաք ա, վե կցավ դե-դեն մտիկ արավ տեհավ, որ, արա՛, էս բըլբուլն ա ըստի կվաղրատ մի վերս-տի վրա, շվաք անըմ ա: Ըսկսեց էտ բըլբուլի հետ հաղ անիլը, վեր ա ունըմ սիե դե-դեն ա անըմ սա՛ ի՛նչ պուն ա, դե-դեն: Դուշը ըտիան թռավ, եկավ տղի դաքին կաղնեց:

- Բարի աշողըմ,- ասեց,- գենթանի իսա-նաք:

- Աստու պաճին,- ասեց,- դուշ ջան:

- Տու ի՛նչ միլկաթ ես:

Թե՛ն Դե միլլաթ եմ էլի, գործ ա պտահել էլի:

- Ասա տենամ, գործըտ ասա:

Թե՛ն Դե ի՞նչ, ի՞նչ ասեմ քեզ, սհե, սհե, սհե, սհե, սհե: Ոճց որ ծեգ պատմեցի: Միէլ սհեճց ա գործը:

- Դո՛ւ, հո՛ւ,- ասեց,- շատ տըծվար գործ ա, պայց որ ես էլ,- ասեց,- ըստակեմ է՛, պըտի ես էտ լավությունը քեզ անեմ, որ ես յոթ տարի յա իմ ճուտերին հասարաթ, հիմա իմ ճուտը ինձ հասավ: Մեռնեմ էլ պըտի,- ասեց,- քեզ լավություն անեմ: Բյնա,- ասեց,- ետ տառ քյն՝ թաքավորի մոտ, ասա՛ ինձ յոթ հատ ոչխարի տը՝ մալ տու, էտ յոթ հատ ոչխարի տը՝ մալը՝ դոչի տը՝ մալը, էտ յոթ հատ տը՝ մալը կըպիրես ըստի վե կըտընես, ու ես կկամ թու կուշտը:

Ետ տառավ քյն՝ թաքավորի մոտ:

- Դա՛, ո՛ր ես եկել:

- Թաքավորն ապրած կենա,- ասեց, էնպես պան արել ես, որ,- ասեց,- մնացել եմ ալավ-կըրակըմ: Յոթ հատ,- ասեց,- ինձ դոչի տը՝ մալ տու:

Դասաթին կանչեց ասեց.- Յոթ հատ տը՝ մալ կըտըրի,- ասեց,- սղիաթի միչին, շուտ: Մի ճուրի էլ պի:

Էտ յոթ տը՝ մալը էտ ճուրուն վրա տըվավ, տըվավ էտ տղին:

Տղեն պիրավ ըտի վեր ածեց ու թե ասեց.- Դե տու քյն:

Ճուրին վե կալավ էտ տղեն, դուր ըլավ եկավ: Էտ դուշը եկավ կաղնեց, էտ դուշը եկավ կաղնեց, տա պիրավ ու ընթելանը վրա տըվավ, էտ յոթ տը՝ մալըն էլ դուշին վրա տըվավ, ինքն էլ ճուտեց, հոճերի միճը ես դուշը կախ արավ, միճը եմ դուշը կախ արավ:

- Բե պիրո կալախես, աչկերտ պիրո խուպ արա, ինչքան, ինչ ուզեմ ա ըլի, աչկերտ պաճց չի անես հա՛: Թե կասեմ՝ պաճց արա, պաճց կանես, թե ես ասեմ ո՛չ, աչկերտ պիրո պալի:

- Լա՛վ:

Էտ դուշը թռավ, թռավ:

- Բանի,- միճն էլ ետ ասեմ,- քանի ծեմ ածեմ, մի հատ տը՝ մալ ընթելս կկոխես, մի հատ տը՝ մալ ընթելս կկոխես:

- Լա՛վ:

Տե՛ն դուշը քյնըմ ա, քյն՝ առու եկավ էտ քարի կլլվիլը, թախճա, մե՛ծ թախճա յա, էտ թախճեն:

- Վեր արի՛,- ասեց,- տղա՛:- Վեր եկավ, թե ասեց.- տղա ջան, էտ տերատորեն տենըմ ե՛ս:

Թե՛ն Դա՛:

- Էտ տերատորեն,- ասեց,- մորմոնջը ի՞նչ ա, մորմոնջ էլ չես ճարիլ՝ մորմոնջ: Սա չիմ,- ասեց,- իմ ահիցն ա, մորմոնջ էլ չես ճարիլ, քեփըտ քյո՛ք քյնըմ ես ընդող արխեյին պրանվըմ, արխեյին պրանվըմ ես, քնի քեզ համար, քեզ համար քնի: Էտ քարը ժամի յոթին տըրաքիլ դի, էտ քարը պաճց դի ըլիլ մի տասն-հինգ հորպե, ըլետ կալ՝ դի խըփվիլ, ես ինձ տալ դեմ քարի տակը, ես ինձ տալ դեմ քարի տակը մեկ էլ էքսի օրը, ժամի յոթին տյուս դեմ կյալ, քեփըտ քյո՛ք քյն՝ ըտի՛, վախես ո՛չ, ոչ մի պանից էլ ա վախես ոչ, արխեյին քյն՝ ըտի քե համար քնի, վե կաց ըտի ճուտի:

Էտ էքսի օրը տա պիրավ ընթելը քարը էտ քյնալիս տա իրան տըվավ քարի տակը, քարի տակը տվավ, քյն՝ մտիկ արավ տեհավ, իսկապես էտ բոթիլն էլ, էտ ճուրն էլ ըտեղ տըրած, էն ինչն էլ՝ խընձորն էլ տըրած ըտի մի տըխտակի վրա: Խընձորնի կուլ տվավ, բոթիլն էլ տվավ, եկավ ծակի ըռիլըմ սհե կաղնեց: Էտ էքսի օրը, ժամը յոթին քարը ճըռճըռալա էտ քյնալիս տեղը, իրան տակեն դյեր տվավ, տվավ տյուս եկավ, տյուս եկավ կաղնեց: Տեհավ՝ տղեն ըտեղ, վե կալավ պիրավ՝ տալիին վե տըրավ, պիրավ տալիին վե տըրավ: Թե ասեց.

- Տղա ջան,- ասեց,- դե ըստի մի հինգ-տասը ըռալե սպալի կյալիս եմ,- ինքը թռավ:

Թռավ քյն՝ առու, որդի՛ քյն՝ առու, որդի՛ քյն՝ առու, ի՞նչ ա գիղվըմ, մի վախտ տեհավ դուշը ըլետ եկավ: Եկավ ըտի ծակըկաց, մի տառտալ բոթիլ վե տըրավ ըտի, մի տառտալ բոթիլ, ծակըկաց իրեք հատ խընձոր ըտի վե տըրավ: Մընէլ ծակըկաց իրեք հատ խընձոր հանեց, ըտէլ ճուլ վե տըրավ, մընէլ ծակըկաց էտ լիքը բոթիլ անմահական ճուրը հանեց ըտի տըրավ:

Թե ասեց.- Տղա ջան, հիմա,- ասեց,- մտիկ տու էտ խընձորներին էլ, էտ խընձորներին էլ, տե՛ս՝ տարբերություն ունեն տըրանցըմ:

Մտիկ արավ տեհավ՝ ոչ մի տարբերություն, իրեք խընձոր են ա, իրեքն էս, մի ծառի, մի ճղղան խընձոր են:

- Մի, մի ճղղան խընձոր ա,- ասեց,- դուշ ջան, ի՞նչ ասեմ, ոչ մի տարբերություն չկա:

- Յաստա՞տ:

- Յաստատ:

Թե.- Դե լավ: Դե ես իրեքը տի,- ասեց,- շըլ-վարիտ ջըբըմը, ես իրեքը տի,- ասեց,- ծոցիտ ջըբըմը, ծոցերըմը:

Էն իսկական, էն անմահական խընձորնին շըլվարի ջըբըմը տրավ, էն իրեք խընձորն էլ ծոցերըմը տրավ: Էն տարտառի բոթիլը ճուր ըղողեց, ծովիցը ճուրը լըցրավ ըղողեց, ծովիցը լըցրավ ըղողեց, բոթիլը մաքուր մաքրեց, ու տա պիրավ իրան չանգերովը ետ բոթիլի չորս դուր սիե քըռըփըշտեց, քըռըփըշտեց, քըռըփըշտեց չանգովը, մի վախտ սիե, սիե արավ տեհավ, որ պրոբկեն ժած ժա կյալի, կըտուցը տվավ պըրոբկիցը փըռնեց, ընքելը սիե պինդ ծիք տվավ, պրոբկեն, խալիս փեչատը վրեն, ամեն ինչը վրեն, հանե՞ց ըստի վե տըրավ, ետ անմահական ճուրը ետ տարտառի բոթիլի մեչը լըցրավ, մաքուր լըցրավ, պրոպկեն տվավ տըրավ ըստը, ետ ծովի ճղղիցը ետ բոթիլը լըցրավ, բոթիլը լըցրավ ու ընքելանը պիրավ ըստի, պիրավ ըստի, պիրավ ըստի ետ բոթիլի պրոպկեն տըրավ իրան տեղը, տեղը տըրավ ու ըսկսեց իրան լիզվովը, լուզվովը, լուզվովը չորս դուր էնքան լիզեց, էնքան լիզեց, էնքան լիզեց, ոչ մի տեղից մի աստղի նման պըռատ տեղ չունի, մաքուր մաքրեց: Տա որ տիե արավ պըրծավ ու թե ասեց.

- Դե քյում,- ասեց,- տղա ջան, քեփլտ քյո՞ք քյում,- ասեց,- վախես ո՞չ:

Ես տղեն ես խընձորնին ծերքին վե կալավ եկավ թաքավորի մոտ, հանեց խընձորնին էլ, ետ ճուրն էլ փեշքեշ արավ թաքավորին: Ետ թաքավորը մտիկ արավ տեսավ, որ, արա՛, իսկապես իրան հոր փեչատն ա:

Թե ասեց.- Տղա՛, ախճկա քունն ա, ախճիկս,- ասեց,- քունն ա, դե հիմա քե եմ տալի, քեզ համար մի պալատ պաղոթատըմ եմ, որ մնաս ըստի, տանիլու չի՞:

- Չէ՛, քեզ պես տասը թաքավոր ըլի, ես պիտի տանեմ, տանիլ դեմ:

Թե.- Չեմ տա, ո՞նց դես տանիլ:

Թե.- Դե տալ չես՝ տալ չես:

- Սիմիայն,- ասեց,- էրուց,- ասեց,- ժամի տասներկուսին յոթ հատ ախճիկ՝ մի ֆորմի, մի կասառումի, մի բոյի, մի բուսաթի, պիրիլ դե՛մ կըղըցնեմ ըստի՝ կըսկարանք՝, տու էլ կես տեղը կըկաղես, թե իմ ըխճկանը կճնան-չես՝ որն ա՛, կփըռնե՛ս՝ քունն ա, թե հու չէ, էլի չեմ տալու:

Ես տղեն մտածեց, մտածեց, ասեց.- Ի՞նչ ա-նեմ:

Պիրավ ոտն արավ, ես գյադեն էնքան պը-տտել ա միչին, այնըմը կտըրմ ա ետ ճանջը, որ գիրթ հանիրը տեհավ կտըրմ ա.

- Վա՛յ,- ասեց,- մի ճանջ հա՛:

Որ ասեց՝ վա՛յ, մի ճանջ, ետ համին ետ ճանջը հետ ըստի յա է՛, եկավ ետ տղի ճըկատին տվավ, որ սիե տվավ ու քյնաց մի ըխճկա մազերի վրա կաղնեց: Կըլխի ընգավ տա, քյնաց ետ ըխճկանը պինդ փռնեց:

- Տա չի հա՛ տա չի, տա չի հա՛ տա չի:

Թե ասեց.- Սա ա՛ սա չի, ես սըրտն եմ ու-զըմ:

Թե ասեց.- Ըլավ ո՞չ տա: Էրուց էլ,- ասեց,- մի ֆորմի:

Ետ էքսի օրը էլ պիրավ ըլետ կըղըցրավ, ըլետ մի ճուկ ֆորմի, ըլետ ճանջը եկավ, թը չէ, ճանջի անըմը տվավ թե չէ, ճանջը քյնաց մա-զերի վրա կաղնեց: Վերջը ետ էլ տիե եկավ գո-յացավ:

- Դե,- ասեց,- դե որ տանըմ ե՞ս, տղա, որ ուզըմ չես ըստի մնաս, քեզ ախճիկ չի դեմ տալ: Ես տալիս եմ,-ասեց,- որ ըստի մնաս, թե չէ տալիս չեմ:

Թե.- Դե տու ես գիղըմ:

Եկավ ըխճկա մոտ ես տղեն, թե ասեց.- Ախճի՛,- ասեց,- տու ի՞նչ ես ասըմ, հերըտ սիե յա ասըմ ա: Տու ի՞նչ ես ասըմ:

¹ Կըսկարանք (կասկարանք) - եռոտանի, այստեղ բանասացը նկատի ունի, որ աղջիկներին պետք է շուրջանակի կանգնեցնեն (ծանոթ. բանահավա-քի):

Թե՛.- Նա շատ պան կասի, քյնա՛.- ասեց,- պըրախտտի մաչալնիկին քըթի, տես՝ ժամի քանիսին ա ատխող ըլըմ պըրախտտը:

Էտ տղեն վազ տվալ քյնա՛ց պըրախտտի մաչալնիկի մոտ:

- Պըրախտտը ե՞փ ես ատխող անըմ:

- Էքուց, ժամի էրկուսին պըրախտտը ատխող ա ըլըմ:

- Հաստա՞տ:

- Հաստատ, ժամը էրկուսին:

Էս տղեն թե ասեց.- Դե տու՛ր քյնա՛.- ասեց,- ընդեղ սպասի չըքել իմ կյալը:

Տղեն քյնա՛ց, ըսի բոլթի ա տալի, մտիկ ա-րալ տեհալ՝ մի իրեք ըխճկա հետ դըվեղըմ ա: Էտ ըխճկեղանց հետ եկալ, եկալ, ըսի տղեն վազ տվալ կընմիցը փոռնեց ու պիրալ քցեց պըրախտտը, պըրախտտը քըցիլն ու սվիստո-կը տալը մին արալ, ատխող ըլալ: Պըրախտտը ատխող ըլալ: Էս հետի ըխճկեքը եկան՝ հարայը պիրին թաքավորի մոտ: Պըրախտտը քյնա՛ց՝ հսկայական, աճմիշ ըլալ: Քյնա՛ց: Հի-մա եկալ պըրախտտը, ծովը կես ա ըլել:

Թե ասեց.- Այ ախի:

Թե.- Ի՞նչ ա:

Թե.- Այ կետը քու խեքքտ տանի,- ասեց,- գիղըմ ես, թե քու հորը խընծիրին եմ տվել:

Թե.- Ա, բա ի՞նչ ես տվել, ա՛ տմաքանը, բա ե՛ն չի՞:

Թե.- Չէ՛, բոթիլի ճուրը ծովի ճուրն ա, խըն-ծիրնիս էլ հասարակ խընծիր ա, քու հոր խըն-ծիրնիս ու ճուրը հրեսայ սա՛ յա:

Հմի էտ ախճիկը չըզլագին արալ, որ մը-թամ թե բոթիլը ծեռիցը խըլի, էտ անդեր բո-թիլը ընգալ ծովը, որ բոթիլը ծովը ընգալ հա՛.

- Է՛, հե՛յ, հե՛յ, հե՛յ,- ասեց.- ծուկը, թե մա-տաղի, ծուկը:

Ստիկ արալ տեհալ՝ ծուկը բոթիլը ըռխած հրե դյերըցըմ ա, վեր ընգըմ, սիե դյերըցըմ ա, վեր ընգըմ, կուռը մեգնեց էն ծակսովը հըլե դյերըցընիլիս բոթիլիցը հա՛ փոռնեց, ծու-կը, կլիտվ արալ՝ շնորակալություն, ծուկն էլ դենը քյնա՛ց: Էտ բոթիլը պիրալ իրան ծեր-քովը հանձնեց էտ ըխճկանը: Խընծիրն էլ մույ-նը՝ հանձնեց էտ ըխճկանը: Պրիստիմիցը տյուս եկա՛ն, եկան, եկան պրիստիմըմ վեր եկան: Եկան արևըմ մատտեցին, թե ասեց.- Դե արի

ըստի թե հետ մի պատառ խոսամ, ես ցալ շատ ունե՛մ.- ասեց.- սրտիս փուլը մի վե թո-ղեմ¹, ու քյնեմը,- էտ տղեն:

Հասկանըմ ե՞ք, ի՞նչ եմ ասըմ:

Թե ասեց.- Ախի՛, թաքավորը սիե, սիե, սիե իմ քավորն ա, հիմա ես եկա սիե, սիե, ոնց որ ծեգ ասեցի՝ ճըրի համար, է՛ էտ արաքը խըլեց: Սիենց, սիենց էտ քյնալը պիրել ա կյուխըս՝ էտ արաքը: Հմի մա տառել ա մրտ տղեն, ես եկել եմ թե յեղմա սիե վազ-վազ արել, մրտ համար եմ տանը՛մ, քեփլտ քյուք պահի, քեգ ես մրտ համար եմ տանըմ:

- Պահո՛, բաս տա՛ր բարթ գործ ա:

Պիրալ, էտ տղեն էտ ըխճկանը պիրալ հանձնեց թաքավորին: Է՛, թուփ ըլան մազիկ, վաճիկ, դես-դեն, թուփ ըլան, կերան-խմեցին ուռաա՛ դես, ուռաա՛ դեն: Էս տղի ոռին տվալ, թե.- Դե քյնա՛:

Ոռին տվալ ու ճամփա տըրալ: Էս ախճիկը առալ կպալ, թե.- Շու՛ն տե՛նամ, կել տե՛նամ, տըրա՛ն չըտե՛նամ: Շու՛ն տե՛նամ, կել տե՛նամ, տըրա՛ն չըտե՛նամ, չե՛մ ուզըմ, չե՛մ ուզըմ, չե՛մ ուզըմ:

- Լալ, բա ո՞նց կիլի, ի՞նչ անեմը:

Էս տղեն որոշեց, որ էտ տղին սպանի՝ էտ արաքը, որ տղան սպանի՝ էտ տղին: Պիրալ մի յոթ հատ տղա հվաքեց, յոթ հատ տղա հվաքեց ու վե կցան եկան, թաքավորի բաղ կա ըսի, բաղի մեջը, էտ բաղի միջին քեփ անեն, բալքի էս տղին հետերնուն տանեն, էտ տղեքը սպանեն էլի էտ տղին, որ սպանեն: Էս ախճիկը նկատեց, էս ախճիկը որ նկատեց, թե ասեց.- Սըռմնից դենն էլ տըծար տեղ չկա, թաքավորն ապրած կենա, տու՛.- ասեց.- ինձ իրավունք տու՛, տղեքը քեփ են անըմ.- ասեց.- քյնա՛մ, ես էլ քյնեմ մտիկ անեմ տե՛նամ ո՞նց են քեփ անըմ, ես տառնամ.- ասեց.- ինչ կանես, կանես էլի:

- Լալ, քե մատաղ, աչկիս վըրտ:

Պիրալ տըրան վեց հատ ախճիկ տվալ, էտ վեց ախճիկը վե կցան էտ ըխճկա հետ եկան բաղը: Տղեքը համարյա կոպերատիվի կշտին

¹ Սրտի փուլը վե թողել - վիշտը պատմել, սիրտը թեթևացնել (ծանոթ. բանահավաքի):

են¹, իրանք եկան ըստիով սհե հեռացան, ետ ախճիկը ման ա կյալի: Տիւնք գիղըմ չեն, պայց տա՝ օցի պես ման ա կյալի, զուտ ման ա կյալի, թե բալքի արին, եթե տհե պան ըլի, արինը կըրնա: Մտիկ արավ ետ ախճիկը տեսավ, որ արինը ոնց որ թե ցնցուղով ճուր չաղ տաս, տհե տանըմ ա:

- Ախճեկ՞ք, կաղնցեցեք:

Կաղնցեցին:

- Բոլորըս էլ,- ասեց,- ազատ եք, քյաճեք ամեքըս ծեր տուն,- մի կենդ մի ըխճկա թե ասեց,- տու ըստի կաղնի:

Էտ ըխճեկը բոլորն էլ քյաճին կորան, հանց իրան ջրիցը մի հատ պըլանիք տվավ ետ ըխճկանը:

- Վազ տու,- ասեց,- չամադանըս հրե այսինջ տեղը, տուրը պաց կանես, էրկու պըրաստին էլ վե կունես կպիրես, մի հատ բոթիլ ճուր կա, ըն էլ,- ասեց,-մի հատ խընծուր է: Էն էրկուսը հիլ կանես կենա, մի հատ խընծուր կըպիրես, բոթիլ ճուրը, մի հատ էլ հավի բըլբուլ:

Էտ ախճիկը վազ տվավ քյաճ, ինքը քյաճ տեսավ ետ տղին կտորել են տըհե տաբսել, շաշկի տակին կտորել են: Կաղնցեց լաց ըլավ, լաց ըլավ, լաց ըլավ ու ինքը պիրա՛վ, կամաց մետրիցը սհե վեր ա ունըմ ըստի-ընդի վե տընըմ: Էտ ախճիկը հասավ, պըրաստինեն քըցեց, քանդաճը պիրա՛վ սհե դասավորեց, հետ տառնավ մտիկ արավ, ծուռ տեղերը դըզըցրավ, ծուռ տեղերը դըզըցրավ, դըզըցրավ տհե, տառն հլա շղուխքը ծուլ ա ըլըմ, դըզըցրավ պըրծավ ու բոթիլի ըռեխը պաց արավ, դուրը քաշեց, դենն էլ, թե ծեռիս միջին յարա կա, ծեռիս իրեսին յարա կա՝ ընդի էլ հնե, դուրը քաշեց՝ տհե, դուրը քաշեց՝ տհե, մաքուր սըղացավ, տառնավ են տըհեն, պայց հոքի չկա: Խընծուրը կտորեց, կծոճեց պերանը քեց ծամեճ, ծամեճ, ծամեճ, պիրավ ըռեխը սհե ճըղատեց ճուրն ածեց պերանը, գատ չկա: Մըն էլ ծամեճ, ծամեճ, ծամեճ, ծամեճ, պիրավ ետ մինն էլ ածեց պերանը: Մի վախտ տեսավ պըռոշը կամաճ,

պըռոշին ժաժ ա կյալի, մի դիլըմ էլ կտորեց, էլի մույնը, տհե, տհե անիլով, տհե՝ տհե անիլով՝ ետ տըհեն վե կըցավ տեղը հա՛ մատեց: Տեղը մատեց, շորերը կեցրավ, շորերը կեցրավ ու կուռը քըցեց կընոճը պաղորուկ արավ, եկան ետ դոլովը պատ տվին եկա՛ն թաքավորի մոտ, որ եկան թաքավորի մոտ, թաքավորը խի՞ մի տառնավ, կըտաղեց:

- Տու քանի՞ կըլխանի ես,- ասեց,- որ քաճեկ ես տըրմ հետ կուռն ընգել եկել,- ասեց:

Չլե ուզըմ ա թե սհե ճըղլամի՜շ անի:

- Չանգի՞ստ տեղըս մտի,- ասեց,- թաքավորն ապրած կենա, հանգիստ տեղըս մտի: Կանչի,- ասեց,- ետ րոպեյիս քու տղին ըստեղ, կանչի,- ասեց,- էն վազիրի հետ,- ասեց,- որ տյուս ես եկել,- ասեց,- քեզ համար ման կյալ քյաճեկ, ցրան էն վազիրին ըստեղ: Մի էրկու խոսկն ունե՛մ ասելու, ի՛մ արունն էլ քե դուրբան, էն տղի արունն էլ քե դուրբան:

Կանչեց: Եկան մտտոտեցին ետ թաքավորն ու վազիրը տհե մատա՛ծ, թաքավորն ու վազիրը սհե մատած են, են տղին էլ թաքավորի կըշտին մատըցրին, ինքը կես տեղը կաղնցեց, էն մի տղին, էն իրան պիրող տղին էլ ետ դուլեն սհե նըստըցրին:

- Թաքավորն ապրած կենա,- ասեց,- հի՛մա,- ասեց,- վճիռը վճիռ ա, վճիռը վճիռ ա, աշխարհիս մեչ,- ասեց,- մի դըզուբյուն կըլի՛ կըլի, լիլ չի,- ասեց,- արյունս քե դուրբան, տղիս խոսացրու՛ որդիի՞ տղա յես, ո՛ւմ տղեն ես, որդիանցի՞ ես, մի մըլավ խոսցրու տես՝ ի՞նչ ա, ի՞նչ չի:

- Չա՛, լավ: Դե, տղա քան, մի պաղապխանի,- ասեց,- տեսնամ:

- Չայրիկ,- ասեց,- ի՛նչ պաղապխանե՛մ, ես ի՛նչ եմ գիղըմ, թե ու՛մ տղեն եմ, հեր չեմ տեհել, միմիայն սհե եմ գիղըմ,- ասըմ ա,- որ էս-քան, որ սհե մեծանալով՝ ես մեղալը ի՛մ մերքս տվավ ի՛նձ, թե տու կպախես քեզ պետկը կկա՛ծ ժամանակով, դե չգիղե՛մ,- ասըմ ա,- ի՛նչ ասե՛մ քեզ: Էս պա՛ս ա:

- Չա՛,- ասեց,- լավ:

¹ Բանասացը հերոսների՝ իրարից եղած հեռավորությունն ունկնդրին հասկանալի դարձնելու համար համեմատում է իր տնից մինչև գյուղական խամուրը եղած տարածությունը, որը մոտ երկու կիլոմետր կլիներ (ծանոթ. բանահավաքի):

² Այստեղ բանասացն ակտիվորեն միջամտող ունկնդիրներին ասում է. «Դեհ, շըշկընցե՛կ միք, ես քու չըմը» (ծանոթ. բանահավաքի):

- Թաքավորն ապրած կենա, հիմա,- ասեց,-
էն տղին խոսցրու¹: Մի էն տղին խոսցրու:

- Տղա ջան,- ասեց,- մի տու պատմի տե-
նամ:

Ասեմ ա,- Ես ի՞նչ պատմեմ, թաքավորն
ապրած կենա, ես էն որ խելքիս հասել եմ, իմ
մերս, իմ տատս, գլուխ ինք անեմ, ասեմ ա՛
էրկու դեվոյիչ եկան մեր տուն ղոնաղ, ինձ փող
տվին սիե, սիե քյնացի հաց առա, պո՛ւն առա,
պիրի սիեց: Էտ դեվոյիչնի,- ասեմ ա,- Էտ
քըշերը մնացին մեր տանը, տու ազատվե-
ցիր,- ասեմ ա,- Էտ քըշերը: Էքսի օրը դեվոյիչ-
նիս քյնացիս տեղը կանցեցի, որ արաղ տամ
խըմեն, դեվոյիչնի,- ասեմ ա,- Ինտ տաճան,
թողեցին ոչ, որ արաղն ածեն, թե՛ իմ ծախսո-
վը, ես իմ ծախսովը կըքեմ, բավորը կաղնեմ
ես: Բավորը կաղնել ա էն դեվոյիչը, ինձ բա-
վորը կաղնել ա էն դեվոյիչը, ի՞նչ եմ գիղըմ
ո՞վ ա, ո՞վ չի, գյուղըմն էլ էսքան մասցու ա
առել, էսքան կերել-խմել, բեփ արել, Էտ
դեվոյիչը ինձ կըքեփի ա տվել, Էս մեղալն էլ
հաճին տըվել ինձ՝ ոսկու ցեպով, Էրծաթա
ընչով, իրան նկարովը: Էտպես եմ ես էլ գիղըմ,
թաքավորն ապրած կենա:

- Պահ, թու տունըս քանդվի:

Մտիկ անըմ ա տենըմ էտ տղեն նա յա, ոչ թե՛
նմ:

- Տա իմ շըլըմքին տվավ քցեց ճըրհորը,
տղիենց տա՛ ասեցի ո՛չ, այսինչ բազդայնը
ինձ հանեց Էտ հորիցը ուզեց ինձ տղա տանի,
քյացի ո՛չ: Տա ինձ հորի մեղը քըցեց ու մեղա-
լըս խըլեց վե կալավ եկավ, տղիե, տղիե, տը-
հե:

Տեհավ, որ տղեն նա յա, ոչ թե՛ նմ: Էտ ա-
րաքին պիրավ տըրա՞վ ոսի տակին, հենց էն
օքախի միչին, շաշկի տակին, ոնց որ դոլմի
միսը շինես, դոլմի պես սիե՛՝ դոլմա շինեց,
դոլմա շինեց ու քոծերին ասեց,- Դե սըրփե-
ցեք, շինեցեք, սարքեցեք:

Էս ըխկական ու էտ տղին վե կալավ տարավ
էն դղի օքախը, կերան-խմեցին ծեզանո՞վ, ծե-
զանո՞վ, ծեզանո՞վ, բեփ արին, Էտ ըխըրկանը

պըսակեց էտ տղի հետ, տաճա՞վ ըտի էտ տղեն
թաքավոր: Նհաճը՝ իրանց մուրազին, տուք էլ՝
ծեր մուրազին:

7(7). ՀՈՐԹԱՐԱԾԻ ՀԵՔԻԱԹԸ*

Լինում ա, չի լինում մի ախքատ կին ա լի-
նում, կնոջը ունենըմ ա մի միուճար տղա: Կի-
նը, որ տեսնըմ ա դժվար ա ապրըմ, տղային
կարքըմ ա քաղաքի հորթարած: Տղան հորթե-
րը հավաքըմ ա՝ քաղաքի, արուտ ա տանըմ,
մի քանի օր տանըմ ա, տկըմ ա համարյա մի
քանի տարի: Տա, անտառընը հորթերը արա-
ծացնելու ժամանակ, մի թըռչունի բըմբուլ ա
քըթնըմ, շատ գեղեցիկ բըմբուլ: Էտ բըմբուլը
տընըմ ա գրպանըմ, երեկոյան կյալիս ա
տուն, տանը հենց որ բըմբուլը հանըմ ա
մթնով, թե մորը ցույց տա, որ.

- Մամա՛, էսպի մի լա՞վ, կեղեցիկ բըմբուլ
եմ կըթել:

Հենց բըմբուլը կըրպանիցը հանելուն պես՝
ամբողջ տունը լուսավորվում ա այնպես, որ
կարծես՝ հազար մոմանոց մի էլեկտրական
լամպուչկա: Մընը են ապշա՞ծ, գարմանըմ են:

- Այ մարթ, բըմբուլիցը տա լուսավորությու-
նը որդեղի՞ց առաջացավ:

Կերչապես էտ բըմբուլը տըրանց տունը կը-
շերը լուսավորըմ ա, ցերեկը տընըմ են սն-
դուկընը փակը՞մ, քշերը հանըմ լուսավորեց-
նըմ տունը:

Խաբարը տանց մի թաքավորից, որ նա դա-
վրիշի հաքուտս մտած իրան վեզիրի հետ
գյուց-գյուղ ման ա գալիս, երբ էտ տան մո-
տովը քըշերվա մի ժամին անցնըմ ա, տեսնըմ
ա՛ շատ վառ լուս ա էտ տան մեջ, միայն թե
լույսը ոչ մի քաղաքըմ, ոչ մի գյուղըմ չկա, թե
տա՛ ինչ լույս ա, տա՛ արթեն անհայտ ա: Տը-
րանց մոտենըմ են տանը, մայըմ են տան էտ
տղան ծեղքերով, տեսնըմ են, որ, այ՛ մարթ,
շատ չտեսնված մի լույս ա, որ ոչ մի տեղ
հնարավոր չի տեսնել: Լուսին կյալիս են, երբ
տղան հորթերը մորից արուտի ա տանըմ,
կյալիս են տղայի մոր մոտ:

- Բարև, քույրիկ:

¹ Բանաստեղծ պատմությունն ընդհատում է ու ա-
տում. «Հա՛, մերեղություն, հա՛, էտ թող մնա, լավ»
ու շարունակում է պատմել (ծանոթ. բանահավա-
քի):

Ասըմ ա.- Բարև, դավրիշ եխայար:

- Քույրիկ,- ասըմ ա,- ծեգ էսպես մի լուսավորիչ բան ունենք,- ասըմ ա,- կծախե՞ք, մենք նրան առնենք:

Ասըմ ա.- Ո՛հ, չենք ծախիլ:

Ասըմ ա.- Լավ փող կտամ, ծեգ ոսկի շատ կտամ, տվեք էտ լուսավորիչը տանեմ, ինձ պետքն ա:

Երբ հարուր ոսկու անուըն լսում ա կինը՝ պառավը, աչկերը չորս ա անըմ: Տղայի մայրը հենց որ հարուր ոսկու անուըն լսեց՝ ասըմ ա, աչկերը չորս ա անըմ: Նա իսկույն էտ բըմբուլը վաճառըմ ա հարուր ոսկով, դավրիշը բըմբուլը վեր ա ունըմ տանըմ իրեն ապարանը, իրան պալատը լուսավորըմ ա:

Երեկոյան տղեն կյալիս ա հորթերից, դեռ հեռու ա ըլըմ, տեսնըմ ա տանը լույս չկա, նա ասըմ ա.- Ի՞նչ տառապ սա, ընչի՞ մեր տանը լույս չկա, կուցե՞ բըմբուլը կողացել են, կամ կորել ա:

Կյալիս ա հենց տուն, մորը հարցնըմ ա.- Այ մամա, ո՞ր ա մեր լույսը, ընչի չի լույս կա:

- Ա՛յ,- ասըմ ա,- որթի ջան,- ասըմ ա,- ուզես սպանես, ուզես խելտես, ծախել են:

- Բա ինչի՞ են ծախել, ո՞ւմ են ծախել:

- Մի վաճառական մարթ եկավ, բըմբուլ ուզեց, հարիր ոսկի տվուց, առավ:

- Է՛, մամա, - ասեց,- տու ոչ թե բըմբուլն են ծախել, այլ իմ կըլուխն են ծախել, են շուտով քեզանից կիրաժարվեն, ինձ կտանեն կըլուխս կկտրեն:

Ըստեղ տղանք մտառընթան մեչ են ընգնըմ:

Թաքավորը տանըմ ա էտ բըմբուլը տընըմ իրան պալատըմ, լույս անըմ ա էնպես, ինչպես կարքն ա: Օրերից մի օրը, նրան մի չար վեզիր ա ըլըմ, կյալիս ա ասըմ.- Թաքավորը ապրած կենա, էտ մի հատ բըմբուլը որ էտպես լույս ա տալի քու ամբողջ պալատիտ, ամբողջ քաղաքիտ, բա որ տրա թըռչունը բերեն,- ասըմ ա,- ո՞նց լույս կտա:

Թաքավորը լըմ ա, մտածըմ, մտածըմ, ասըմ.- Բա... Իսկ թըռչունը ո՞վ կպիրի:

- Թըռչունը կպիրի էտ բըմբուլը պերող տղեն, տա կերի տըռնից, ուրիշ մարթ չի բերիլ:

Թաքավորը հրաման ա տալի տըղային, որ տղան քյն իրան մոտ: Տղեն քյնըմ ա չըքըմ առաչին, խնթըմ ա, որ.- Թաքավոր, ընչո՞վ են ծառայըմ քեզ:

Ասըմ ա.- Տղա ջան, էն բըմբուլը որ տու պիրել են, են քեզ հրամայըմ են, քյնա են բըմբուլի թըռչունը պերես:

- Վա՛յ,- ասըմ ա,- թաքավոր, էտ էլ պատահաբար,- ասըմ ա,- բըմբուլ էր էլի, հանդըմ ճանգըս ընգավ բերեցի,- ասըմ ա.- Բա լավ, են ջահել տղա են, են տըռն թըռչունը որդեղի՞ց պիրեն:

Ասըմ ա.- Տա ինձ չի վերաբերվըմ, այ, քեզ տաս օր ժամանակ են տալիս, կամ տըռն թըռչունը կբերես, կամ կըլուխըտ ուսերիցըտ վեր կունեն:

Տղան օլոր-մոլոր՝ կյալիս ա տուն, մորը հայիոյըմ ա.- Այ մերա, են քեզ ասեցի, որ տու բըլբուլը չես ծախել, իմ կըլուխն են ծախել, այ տաս օրից եղով իմ կըլուխը իմ ուսերին չի ըլելու:

- Ի՞նչ անենք, այ բալա, ո՞նց անենք, ի՞նչ անենք:

Տըռն մի հորեխայար ա ըլըմ, էտ տղան քյնըմ ա հորեխայար մոտ:

- Հորեխայար,- ասըմ ա,- էսպիսի մի փորցանցի են եկել,- ասըմ ա,- խնթըմ են ճար անես:

Հորեխայարը մտածըմ ա, մտածըմ ու ասըմ ա.- Դե որ էտպես ա,- ասըմ ա,- կըյնա թաքավորին՝ իրան կասես, կասես քու պիտոըմը շատ ծիան կա կապած, միայն էն երեք տարեկան ամենաառաջավոր քուռակը կտաս ինձ, են քյնա էտ թըռչունը բերեն: Կըյնա էտ պիտոիցը ծին, թե կտա, կպիրես իմ տըռնը կկապես, կըյնա ինձ մոտ, քեզ ուրիշ խորուրթ էլ կտամ:

Տղեն վեր ա կենըմ քյնըմ թաքավորի մոտ, ասըմ.- Թաքավորն ապրած կենա, շատ տըծվար առաջադրանք են տվել, միայն,- ասըմ ա,- տըռն ձեռք բերելու համար,- ասըմ ա,- քու պիտոի էն երեք տարեկան ծին պտի տաս ինձ, որ են նրան նստեն քյնա բերեն:

Թաքավորը մտածըմ ա, ասըմ ա.- Լավ, կտամ,- ասըմ ա:

Ախռապանին կաքաղորդեմ ա, ծին բերեմ են թամբըմ տալի տղին: Տղեն տանըմ ա հորեխպոր տան մոտ կապըմ, քյնըմ հորեխպոր մոտ, ու ասըմ ա.- Գիդե՞ս ինչ կա, տղա ջան,- ասըմ ա,- էտ թռչունը,- ասըմ ա.- ամսական մի անքամ ա տեղիցը զարթըմըմ, ամբողջ օրը քնած ա մնըմ, նրան կերակըմ են բուերը, մյուս-մյուս թռչունները, իսկ մա՞՞ անընթատ մի ծառի փիչակըմ պառկած քնած ա: Ամիսը մի քանի օր՝ երկու-իրեք օր, տուս ա կյալի տըռներին ման կյալիս, իրան քամուն տալիս, էլի քյնըմ պառկըմ ընդեղ: Տու ծիտ կնստես կքյնաս նրա սածթընը կիչնես, կքյնաս էտ ծառին կոյերես, էնքան էլ պաղցորը չի փըչակը, ծեռքըտ կտանես թռչունը կփռնես, ինց որ թռչունը փռնեցիր, էնդեղ թռչուններ ա, քար ա, փետ ա, հող ա, բոլորը ձայն պիտ տան. «Տարա՛վ, տարա՛վ, տարա՛վ», տուս բոլորովին հետ չնայես, միայն հըրձքտու կանես ծիտ կնստես ու կփախցես, հետ չի նայես, որ հետ նայեցիր՝ քար, քար կըտռռնաս:

Տղեն հորեխպոր խորուրթը լսըմ ա, ծին նստըմ ա, տանըմ ծառի մոտիկ ծառից կապըմ ու բարցրանըմ ծեռը քցըմ փչակը, հենց էտ թռչունը հանելուն պես՝ ամբողջ ճըղցըռ էտեղեք փըռնըմ ա. «Հա՛յ տարա՛ն հա՛, տարա՛ն», թռչուններ ա, հող ա, քար ա, մյուսը, մեկէլ բոլորը. «տարա՛ն հա՛, տարա՛ն», տղեն բոլորովին հետ չի նայըմ, էնքան հասնըմ ա ծիտն նստըմ ու փախնըմ: Թըռչունը պիրըմ ա տալիս թաքավորին: Թաքավորը նայըմ ա, նայըմ ու ասըմ.- Դե, ինչո՞վ պարեհատրեմ քեզ, տղա ջան,- ասըմ ա.- Ես կմտածեմ քեզ մի պարեհ կնշանակեմ,- ասըմ ա.- միայն ազատես ես, քյնմ:

Տղան թողըմ ա քյնըմ: Էտ թռչունը ոչ թե բըմբուլի նման միայն իրան պալատն ա զարթարըմ, այլ զարթարըմ ա ամբողջ թաքավորական քաղաքը, իրան լույսով, տարբեր գույների լույսով: Զար վազիրը մոտանըմ ա մի օր թաքավորին ու ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, գիդե՞ս ինչ,- ասըմ ա.- Եթե ետ լույսը տուս ամբողջ երկըմ ունես, էս տեսակ փառավոր լույս ունես, էս պալատին հարգավոր ա մի հատ ախճիկ, իսկ էտ ախճիկը ապըմ ա ծովի խորքըմ:

- Բա ո՞վ կպիրի էտ ախճիկը,- հարցնըմ ա թաքավորը:

Հա՛: Վազիրն ասըմ ա.- Դե էլ ո՞վ պտի պիրի և ոչ թե տղան, էն որ էտ թռչունը, բըմբուլը պիրել ա, էտ նույն տղեն կպիրի նաև էտ հրեղեն ըխճըկանը:

Թաքավորը խաբար անըմ ա, տղեն քյնըմ ա իրան մոտը, ասըմ ա.- Տղա ջան, քեզանից պահանջըմ են, որ ծովի խորքըմ հրեղեն ախճիկ կա, մա իսկական թաքուհու վայել ախճիկ ա, կքյնաս կպիրես ինձ կնության, եթե պիրիր, ըտիից եղը ես քեզ ոչ մի խոսկ չեմ ախիլ:

Տղան մտածըմ ա, մտածըմ ա.- Այ մարթ,- ասըմ ա.- սա ի՞նչ շառի մեջ ընգա՞մ,- ասըմ ա.- ի՞նչ անեմ, ես հմի էլ ի՞նչ անեմ:

Հետ ա տռռնըմ քյնըմ մոր մոտ, մորն ասըմ ա.- Մայրիկ,- ասըմ ա.- տուս տեսա՞ր, որ ինձ ի՞նչ քյալակի բերիր, արթեն ես էլ թու տղան չե՞մ, հաշվի, որ տասը օրից եղը ես չկամ:

Քյնըմ ա հորեխպոր մոտ, հորեխպայրը սրան մի թամբաի անըմ ա, խորուրթներ ա տալի, ասըմ ա.- Կքյնաս թաքավորին կասես, որ ծովի խորքը քյնալու համար հարկավոր ա մի ոսկի նավ, էնքան նավ, որ մի հազար հոքի՝ կին ու ախճիկ, խաս ու դումաշըմ զուգված, ամբողջ աղանանդներով զարթարված, իսկ էտ ամբողջ նավը պետք է լինի ոսկուց, այն էլ վեզիրի ոսկուց, էտ վեզիրի ոսկուց, նրա սեփական ոսկուց, եթե մի կոպեկ նավիցը առանձին ոսկի կամ ուրիշի աշխատանք ըլավ կպած, էտ գործը կյուլիս չի կյա՛լ:

Տղայի հորեխպայրը տղային էսպես թամբաի անըմ ա, տղեն հետ ա տռռնըմ քյնըմ թաքավորի մոտ:

- Թաքավորն ապրած կենա,- ասըմ ա.- գիդե՞ս ինչ կասեմ, եթե տուս էտ տըծվարին հարցը ինձանից պահանջըմ ես, տուս պետկ ա ինձ ապահովես, մի նավ կառուցիլ տաս՝ ամբողջը ոսկուց, այն էլ էս փըլան վազիրի ոսկուց,- էն վազիրի, որ իրան չարչարըմ ա: Եթե մի կոպեկ ուրիշ աշխատանքից ըլավ, թաքավորի, կամ մյուս, մյուս ոսկուց, էտ աշխատանքը կըլուիս չի կյա՛լ: Բոլոր պետք ա լինի էտ վազիրի ոսկուց, և էտ նավը էնքան պետք ա մեծ ըլի, որ մըլա հազար մարթ ավել տանի և

հազար կին ու երիտասարդ կին ու ախճիկներ՝ պոլորը գուքված, զարթարված, պոլորը աղամանդներով ու անկին քարերով սիրուն ենայես, ինչպես կարքն ա, որ ես կըրենամ են ծովի խորքից ախճիկը հանեն ու տըրանց շարքըմ խափեն մի կերպ էս կողմը պիրեն:

Թաքավորը կանչըմ ա վեզիրին ու հրաման ա տալիս.- Վաղը այսինչ ժամին էտ նավը պաղրաստ ըլի, իսկ եթե էտ նավը իրա նպատակին չի հասավ, վազիր, լավ իմացի, որ կըլուխըտ կկտրեն, պետք ա ըլի զուտ և զուտ քու ոսկով, ուրիշի մի հատ կոպեկ չի լինի վրեն:

Վազիրը շատ ջղայնանըմ ա, նեղանըմ ա, որ ինքը էտ հսկայական ծախսի տակ ընգծվ, մի նավ կառուցի՝ բոլորը ոսկուց, որ հազար մարթից ավել տանի՞, տա՞ քանի, քանի փուտ ոսկի պետկ ա ըստել ծախսի: Վազիրը վրթով-ված քյընըմ ա էտ առաջադրանքը կաղարըմ ա, կաղարըմ ա կյալիս ա, որ զեկուցըմ ա թաքավորին, որ նավը պաղրաստ ա: Թաքավորը տղին կանչըմ ա ու ասըմ ա.- Դե պաղրաստ ա ամեն ինչ, նավն էլ ա պաղրաստ, հազար ախճիկ ու կին էլ ա պաղրաստ՝ իրան զարթարանքով:

- Հա՛, տըրանից եղը էրկու նվաք, էրկու խուճք նվաք, ամեն մի խուճքը նավի մի ծայրըմ պետք ա ամեն մի եղանակ, ամեն մի քաղթը եղանակներով մենք մտենք ծով, որ ըխճկանը գրավենք:

Էտ բոլորը պաղրաստելուց եղը տղեն նստըմ ա նավ, էտ ամբողջ կանանցով, ամբողջ նավավարով-բանով գնըմ ա ծովի երեսին ըսկըմ են, էտ նվաքը նվաքըմ են, քաղթը եղանակներ են նվաքըմ, գրավիչ եղանակներ, որ են ամեն ինչին էլ իրանց ա գրավըմ:

Ծովի հատակըմ երեք քույր են ըլըմ, երկուսը ամուսնացած, մեկը դեռ ամուրի: Էտ ամուրի քիրը իրան քվորտանըմ ասըմ ա.- Լավ նվաք կա, եկեք քյըմանք թամաշա անենք:

Ասըմ են.- Զէ՛, մենք չենք կարող, տու մենակ քյըմա:

- Զէ՛, ես մենակ չեմ քյըմալ:

Վերջապես համոզըմ ա քույրերին, հետերնուն տանըմ, տուս են կյալի ծովի երեսը, տեսնըմ են, այ մարթ, ի՞նչ զարթարանք, ի՞նչ կին ու ախճիկ, ի՞նչ ոսկի նավ, ի՞նչ նվաք, ամեն մի, ամեն մի աշխարհանը ըստել եռըմ ա: Տը-

րանք կյալիս են խառնվըմ ախճիկներին, կանանցը, ուրախանըմ են, պարըմ են, խաղըմ են, երքըմ են ախճիկների հետ, հետով, որ ուզըմ են վերադառնան հա՛, էտ տղան էտ ամուսնացած քվորտանըմ ասըմ ա, որ.- Տուք վերադառեք ծեր տեղը, իսկ ծեր էտ ամուրի քրոջը մեզ մոտ պատանդ թողեցեք, որ թաքավորը ծեզ մեծ նվերներով պղծի օքնի, էտ նվերները ծեր էտ ամուրի քույրը պոփ պիրի ծեզ հասցնի:

Տըրանք համաձայնվըմ են էտ բոլորին ու էտ ամուսնացած քույրերը վերադառնըմ են ծովի հատակը, իսկ էտ ամուրի քույրը մնըմ ա էտ նավում էտ կանանց հետ միասին: Նավը խող են անըմ ու անցնըմ էն մյուս ափը ու արթեն ըխճկանը պիրըմ են թաքավորի մոտ: Պիրըմ են թաքավորի մոտ, վազիրը, ժողովուրթը, բոլորը թաքավորին աշխատեսք են անըմ, որ.- Տղեն իրեղեն ըխճկանը ծովի տակից հանել ա, պիրմ ա, աշկըտ լույս:

Հենց որ տղեն կյալիս ա, թաքավորը համփուրըմ ա տղայի ճակատիցը և վազիրին կարքաղըմ, որ.- Քյըմ իրան քաշովը մին ոսկի տուր տղային:

Վազիրը քյընըմ ա իրան քաշովը մին ոսկի թաքավորի խազնիցը քաշըմ տանըմ իրան տանը տընըմ ու մի հատ ռուբլի գումար փող պիրըմ տալի տղային ու ասըմ.- Դե էտ ա քու հասանելիքը, քյըմա:

Եվ նա, երփ արթեն երրորթ հարկից իջնելու ժամանակ, տղայի հետևիցը ենպես քացով խփըմ ա ուժեղ, որ տղան էտ աստիճաններից ընգնըմ ա աստիճանների տակը՝ ներքևի հարկը, ու նրա կողերը ամբողջովին ծարթըմ ա: Հավաղարիմ մարթիք են ըլըմ, որ տըրան հասնըմ են, տղային վեր են ունըմ տանըմ հիվանդանոց, հիվանդանոցըմ բուժըմ են տըրան միառժամանակ, բուժվելուց հեղը քյընըմ ա իրան տուն:

Վերջապես էտ վազիրը, էտ վազիրը նորից ա մոտանըմ թաքավորին ու ասըմ ա.- Բու կարքաղրած ոսկին ես ամբողջը տվի նրան,- ասըմ ա,- բա չէ՞ որ,- ասըմ ա.- էտ նավը իմ ոսկով ա կառուցած,- ասըմ ա.- ինձ իմ ոսկու փոխարեն տալիս ե՛ս, թե՛ չէ:

- Ո՛չ,- ասըմ ա,- ընդեղ կարքաղրված ա, որ բոլորը պետք ա ըլի վազիրի ոսկուց, տըրա՞

համար էլ ես քու ոսկուց եմ կարքադրել, որ կառուցեք:

Օրեր և անցնում, ամիսներ և անցնում, հրեղեն ախճիկը թաքավորին չի ընթուներ, գլուխ չի խոնարհում, պատճառաբանելով, որ.- ես մի հրեղենն ծի ունեմ՝ իմաստուն ծի, ծովի հատակը, երբ էտ ծին ինձ մոտ կկայ, էտ ժամանակ ես էլ քեզ հետ կամուսնանամ, կլինեմ ես պալատի թաքուհին:

- Ի՞նչ անենք, ո՞նց անենք, բա ո՞վ կարա էտ հրեղենն ծին պերի:

Թե.- Ով որ ինձ պիրել ա, ցա կպիրի:

Վազիրին կանչում ա, դռըրըմ ա տղայի հետևիցը, տղան քյնում ա թաքավորի մոտ:

- Թաքավորն ապրած կենա, էկել եմ, ընչո՞վ եմ ծառայում քե:

Ասըմ ա.- Տղա ջան, ինչպես էս ըխճկանն ես պիրել, սղրա սեփական հրեղենն ծին, իմաստուն, ծովի հատակին ա, պտի քյնաա պերես:

- Վա՛յ,- ասըմ ա.- թաքավոր,- ասըմ ա.- բա էտքան դժվարության բաները բոլոր ես ո՞նց անեմ,- ասըմ ա.- կոնե մեկը մի ուրիշը անի, ուրիշին ասա, որ անեն:

Ասըմ ա.- Չգիտեմ. քյնա, շատ լավություններ ես արել, էս անքամ էլ քյնա էտ հերոսությունն արա:

Տղեն քյնում ա հորեխաոր կուշտը:

- Հորեխապայր, մի առաջադրանք էլ կա, ես ի՞նչ անեմ:

Ասըմ ա.- Տղա ջան, կքյնա,- ասըմ ա.- թաքավորին կասես, որ մի զամբիկ ծի, քու ամենածիծերին էն իմաստուն զամբիկ ծին թամքի քեզ տա ու մի մեծ պարան էլ տա՝ թոկ: Էտ ծիուն կստես, կքյնա ծովի ափին վե կկայա, տու կմտնես մի քարի քամակ, էտ ծին, որ պան ասես, խրխմջալու ա, որ խրխմջա մի քանի անքամ, էն հրեղենն ծին նրա ծեմին պդի տյուս կյա, հենց որ տյուս եկավ, տու աշխադիր էտ կախարդական սանձը նրա կյլուկը քցի, երբ որ քցեցիր կուխը, արթեն ծին հառուր տոկոտով կենթարկվի քեզ, էն ժամանակը կքաշես ու կպիրես:

Տղան քյնում ա թաքավորի մոտ, ասըմ ա.- Ինձ մի կախարդական սանձ էլ կտա, մի թոկ էլ կտա, ինձ քու այսինչ զամբիկն էլ կտա,

միայն թե զամբիկը նորից ետ եմ պիրելու, վախես ոչ, չի կորչելու:

Թաքավորը ուրախությամբ վեր ա ունըմ տալի էտ բոլորը, քյնում ա ծովի ափը, ինքը թաքնվում մի քարի տակ, ու ծին մի քանի անքամ խրխմջում ա, հենց որ խրխմջում ա, տեսնում ա է՝ ծովի վրա լողալով, լողալով, լողալով՝ մի հրեղեն, մի իմաստուն ծի հրես ծովը կտրած դեպի էտ խրխմջոցին ա կյալիս: Եկել ա, որ ծիուն մոտացել ա, ուզացել ա ծիու հետ համփուրվի էտ ծին, տղան մի կերպ կախարդական սանձը քցել ա ծիու վիզը, որ քցել ա ծիու վիզը, ծին արթեն ենթարկվել ա: Ենթարկվել ա, էտ ա վեր ա կալել էտ ծին նստել ու մեկն էլ հեղիկիցը քաշել պիրել թաքավորի մոտ: Թաքավորի մոտ ա պիրել, թաքավորը ուրախացել ա, ասել ա.

- Ես քու լավությունը ընչո՞վ հատուցեմ,- ասել ա.- որ լավ ըլի,- ասել ա: Ինչքա՞ն ոսկի տամ, քու, մըչև քու կյանքիտ վերջը ուտես ապրես:

Ասել ա.- Տա քու գործն ա, թաքավոր, ես չգիտեմ:

Վազիրին կարքադրել ա, ասել ա.- Քյնա,- ասել ա.- մի փուրդուն ոսկի,- ասել ա.- լցրու, ծիերը լըծի ու պեր,- ասել ա.- տուր էտ տղային, թող տանի:

Տա քյնացել ա էն փուրդունը ոսկին լըցրել տարել իրա տանը վեր տըրել ու եկել մի ռուբլի փող հանել տվել տղային, ու հա՛, էտ ա վազիրը փողը պիրում ա տանըմ ոսկին իրան տուն ածըմ, մի մանեթ փող տալի էտ տղային: Տղան իչենելու ժամանակ, չորրորթ հարկից, որ հենց հետևիցը քացով տալիս ա, տղեն հավասարակշռությունը կորցնում ա, վրա կըլխին ընկնում ներքև, տալիս ա ոտը կոտրում: Էլ էտ հավաղարիմ մարթիք հավաքվում են, տղան հիվանդանոց տանում, բուժում են, սաղացնում են, մի քանի վախտից եղը թաքավորի էտ հրեղեն ախճիկը թաքավորին չի ենթարկվում կըլուխը չի խոնարհում:

Ասըմ ա.- Ի՞նչն ա պատճառը, ի՞նչ ա քու պահանջը, ասա նորից պիրեմ:

Ասըմ ա.- Ոչ մի պահանջ չունեմ, տուք էնքան անգույթ մարթիք եք, էնքան անիրավ, գազան մարթիք եք, որ մի տղա ծեզ էքան օ-

քուտ, բարիքներ տալուց հետո, տուք նրան ամեն բարիք տալու ժամանակ էնպես արիք, որ նա ծախորթության մատուցեց:

- Բաս ի՞նչ ա պատահել:

Թե ասը ա.- Որովհետև.- ասը ա,- էն տղեն որ էն հավքը պերուց քեզ տվուց, քու ամբողջ պալատը լուսավորել ա, տու նրան ոսկու տեղը մի ռուբլի փող տվիր, անխիժ, բա քու խիժնըս մեռած ա՞: Տըրանից եղը, որ ինձ ծովի տակից ամեն, ամեն մի գաղտնիքով, ամեն մի էսպես ասած պանով հանցեց պիրուց քեզ տվուց, տու նրան մի ռուբլի փող տվիր, դե տառ բավական չի, հետևիցն էլ տվիր քցեցիր չորրորթ հարգից, ամբողջ մի ամիս նա հիվանդ՝ թեք, կողերը ճարթված մնաց, մի ամիս պառնեց, որ հազիվ, թե լըվացավ: Դետով.- ասեց.- ծին բերուց, ծիուն փոխանակ տու նրան մի փուրդուն ոսկի տեիր նրան, քու վազիրըս բոլոր ոսկեմին տարավ տըրուց իրան տանը, մի ռուբլի փող տվուց նրան, նորից էտ չորրորթ հարգից քցեց, քյանց ոտը կոտրվեց, էն տղեն դեռ էսօր էլ տառապում ա, հենց տրա համար էլ ես քեզ չեմ ենթարկվի, որ տուք բուրովին անիրավ մարթիք եք, գազան մարթիք եք:

Թաքավորը կանչըմ ա վազիրին.- Վազիր, էս ի՞նչ եմ լսըմ:

Թե.- Ի՞նչ ա ըլել, թաքավորն ապրած կենա:

- Տու էն տղին ինչքան փող ես տվել:

Թե.- Ինչ որ ասել ես, տվել եմ:

Տղային կանչըմ են, տղային պիրըմ են թաքավորի մոտ, հարցըմ ա.

- Տղա, ինչքա՞ն փող ես ստացել:

- Թաքավորն ապրած կենա, էսքան չարչարանքի համար միայն երեք ռուբլի փող եմ ստացել.- պատմըմ ա տղան.- և բացի տառ էսքան էլ ես վնասվածքներ եմ ստացել, և ոտըս, կողերըս ճարթել ա հեթայ էտ քու վազիրըս:

- Վազիր, էս ի՞նչ ա ասըմ:

Վազիրը մըմ ա լռած: Էտ ա պիրըմ ա վազիրին տեղն ու տեղը կապըմ էտ հրեղեն ծիու պոչիցը ու պաճ թողըմ, մի քիչ վախտից եղը վազիրի կըլուխն ա մենակ պոչիցը կապած կյալի: Էտ թող իրան տեղը մնա, հեղով ախ-

ճիկը ասըմ ա.- Դժի որ տհենց ա,- ասըմ ա,- պետկ ա տղին ամբողջովին տանես,- ասըմ ա,- սանատորյա, պան, առիժնըցնես և,- ասըմ ա,- որ ես քեզ հետ ամուսնանամ,- թաքավորին ասըմ ա:

Բայց ըխճկա մտկըմ կա, որ տըրանից հեղով ոչ թե թաքավորի հետ ամուսնանա, այլ՝ տղայի հետ ամուսնանա:

Էլետ մի քանի ժամանակ թաքավորից չի մոտանըմ, թաքավորն ասըմ ա.- Դժի ի՞նչ ես ուզըմ:

Ասըմ ա.- ուրուշ պան չեմ ուզըմ, հընձ մենց պետկ ա որպես թաքավոր ու թաքուհի, մենց քյանց բաղնիք լողանանք, լըվացվենք, լըվանվանք, որ կյանց մեր կըլուխը մին աննը, ես թաքուհի ըլեմ, տու թաքավոր ըլես:

Դենց որ քյնըմ են, ասըմ ա.- Բա տառ ա տըժվա՞ր:

Դենց որ բաղնիք են մտնըմ թե չէ, էն եռող ճուրը պան ա թողըմ թաքավորի վրա, թաքավորը տեղն ու տեղը խաշվըմ ա ու հոքին բախշըմ, ինքը ամուսնանըմ ա էտ իրան պիրող տղայի հետ, ու տըրանք կյանք են վալելը՝մ: Տըրանով վերջանըմ ա:

8(8). ԽՅՅԱՐ ԲԼՈՒՒԼԻ ՍԵՉԻԿԸ՞

Ըլըմ ա, ըլըմ չի՞ մի թաքավոր, թաքավորի էլ մի տղա ա ըլըմ: Տառ անընթատ բախշոթով քար ա քցըմ: Որ շատ քարը քցըմ ա հա՛, քյնըմ ա, մի պառավ ճուրը քյնալիս ա ըլըմ, քյնըմ ա էտ պըռավի փարչը կոտորըմ:

Ասըմ ա.- Տղա ջան, դե ի՞նչ անեմ,- ասըմ ա,- ո՞նց անըծեմ քեզ: Թաքավորի մինուճար ես էլի, անըծիլու պան չունեմ քեզ ասիլու, մենակ.- ասըմ ա,- տու խյար բլբուլի ըխճկանը պտահես:

Էտ տղեն էտ ա կյալի, կյալի՞ ընքելանը վրա ըռխիմ վեր ընգըմ, սկսըմ մտածիլը:

Ասըմ ա.- Էս ի՞նչ խյար բլբուլի ախճիկ ա:

Մտածըմ ա, մտածըմ ա, մտածըմ ա, մի օր օխտը հաց ա վեր ունըմ ու ճանփա ընգըմ: Շատ ա քյնըմ, թե քիչ, քյնըմ տենըմ մի դուզըմ, է՛, ծուխ ա ծուլ ըլըմ: Էտ ծխին ասըմ ա ու քյնըմ: Քյնըմ ա տենըմ, որ էտ հայաթի միջին

մի սիրուն կուկլա Խաճիկ՝ Գետած, մի օխտը կըլախանի դև էլ կլլուխը էտ ըխչըկա կլլաքին տրած՝ էտ Խաճիկը տրած կլլուխը քթված ա, ֆոչիկ ա հանքըմ: Որ մի ա մտնքմ, էտ Խաճիկն ասքմ ա.- Պա՛, պա՛, պա՛,- ասքմ ա.- օցն իրան պորտովը, դուշն իրան քեովը էտ տերի-տորյեն կոխքմ չի.- ասքմ ա.- տուս ո՛նց ես եկել: Չիտս վե կցավ, քե կուլ դի տալ, քնած ա:

Թե ասքմ ա.- Կուլ չի տալ, ասա՛ վեր կենա:

Նա էլ սուտըմեռուկ ա տվել, հու՛ քնած չի: Կլլուխը պրցնքմ ա, որ փչքմ ա, տղեն պատե-րովն ա դիպքմ: Էտ օխտը հացը հանքմ ա դևի ըռեխը կոխքմ: Տառ մի քիքա կերել չի, սոված մեռնքմ ա, դրդըռըմա ըլել էտ ըխճկա հըմար: Էտ դիվըռ ոռ-ռո անքմ ա, Գետած:

Ասքմ ա.- Տղա, ես սար էլ եմ կերել, քոլ էլ եմ կերել, քար եմ կերել կշտացել չեմ, քու օխտը հացովը ես կուշտացա: Ասա քու դարդը ու դարձնքմ ես կատարեմ:

Թե ասքմ ա.- Իմ դարդը ու դարձնքմ մեռակ.- ասքմ ա.- Խայար բլբլուկ Խաճիկն ա, ինձ տեղն ասես:

Ասքմ ա.- Խնթրեմ, ասեմ, բայց եթե տուս էլ մարթ կըլես, իմ ասածը կկատարես, կարաս պիտես: Թե հու կարալ չե՞ս, ես ի՞նչ անեմ, տուս ի՞նչ անես: Ես, ինձ եմ ա.- ասքմ ա.- ճամփին էլ շհանց տամ, բաղձանջու տեղն էլ ասեմ: Կքնաս ես թուխտը վե կուլես կտանես կտաս բաղձանջուն: Մի հատ խայար ա, խայարը պուկիլ դի քե տալ: Կտնես ծոցիտ ու ետ կտառնաս: Քար, քոլ եղնետ դի դի տալ. «Խայար բլբլուկ ըխչըկանը տարա՛վ», ետ չմտիկ անես, քեզ պես շատ-շատերը քննցել են՝ քար տառնել: Ետ տառնար քե չե՛ քար դես տառնալ, ետ չըմ-տիկ անես:

Ասքմ ա.- Շատ լավ, ետ չեմ մտիկ անիլ:

Դմբոյի միճն ա, ո՛նց չդի ետ տառնալ: Քյ-նքմ ա, ընքելանը թուխտը տանքմ ա բաղձանջուն տալի, խայարը պուկըմ ա իրան տալի, ծոցքմն ա տընքմ, ուրախ-ուրախ իլե էտ բաղը տուս ա կլալի թե չէ, սկսքմ են եղնեն հարա տալը.- Չայ տարա՛վ, հա՛, Խայար բլբլուկ ըխչըկանը տարա՛վ:

Տառ անգաճ չի տընքմ, կոխած կլալիս ա: Կլալիս ա, կլալիս ա, որ շատ հարա են անքմ եղնեն, հա՛ հենց գիղքմ ա, թե իլե կուկըռ տրո-

րիլեն եղնեն կլալիս են: Մի լավօսալ որ սեռ ա անքմ թե չէ՛, քար ա տառնքմ, հա՛ էտ Խայար բլբլուկ Խաճիկն ասքմ ա.- Լավ, էս ով որ ինձ միար կյա քար տառնա, բա վերքն ես ո՛ւմ հետ պետք ա ամուսնանա՛մ:

Տուս ա կլալի իրեսին խչըհանքմ, ըլետ մտ-նքմ ծոցը: Էտ տղեն շարունակքմ ա, ինչքան հարա են տալի, էլ ետ չի մտիկ անքմ, արթեն տեհավ: Ճամփա ա ընգնքմ կլալիս ա դիվի կուշտը:

Ասքմ ա.- Մալադեց, տղա՛, պիրի՛ր:

Ասքմ ա.- Պիրի:

- Դե,- ասքմ ա.- քյնա: Թուրքի քոչ ա կլալի, հենց արա ծեռիցըռ քցես ոչ, ծեր պալատը ինքսո՛ւ:

Ասքմ ա.- Շատ լավ:

Վեր ա կենքմ էտ խայարը ծոցին տրած դուս ըլքմ: Դե քանի սուտկա ճամփա ա էլել հասել Խայար բլբլուկին, միլե քանի սուտկա քյնալ դի, որ հասնի իրանց պալատը: Արթեն հանգ ու հռնիկը կտրել ա, սոված մեռնքմ ա, էլ ոտ-ներն առաչ չի քյնքմ: Քյնքմ ա տենքմ մի դա-րալքու տակին՝ մի լավ Խաճիկ: Ըխպրի դրաղին Գետած ա իրեսը լվանքմ: Դե չուրեն էլ կուլ չի քյնքմ, որ դվեր ածի, տակին գատ կա՞, որ խմի:

Ասքմ ա.- Լավ, էս ով որ որ մառա, որ ես Խայար բլբլուկ ըխչըկանն եմ եկել, իմի,- ասքմ ա.- Խայար բլբլուկ Խաճիկն էլ ըրեքմ չի, մի հատ խայար եմ տանքմ, ով էլ ըլի, իմ հերը կա-նքծի: Չլե մի դիլիմ էլ ա կտրեմ ուտեմ էլի:

Էտ ա խայարը դաքին ա տընքմ տառնալը հանքմ: Չմի սեռ մի հետ տալիս ա թե չէ, տենքմ ա, հո՛ւպ, մի Խաճիկ տուս եկավ, մի ճուխտ պատուրյա ծեռին ըխպրի վրի դուլին կաղնեց, թե ասեց.- Այ տղա, տուս ետ ա հռնիկըռ կտրել ա, ոտով կարքմ չես քյառ, տուս ինձ շլակով կարալ չդես տանես, յես էլ ոտով կարալ չդեմ կյա՛մ: Չմի ես քյալալի թու-փարքըմ կտրեցիր, ո՛նց դի ըլիլ մեր պանքմ:

- Պա՛ն, ես քու ցավը տանեմ, տուս ըստի կացի, ես քյնալ փայտոնը պիրեմ քեզ տանեմ:

Թուրքերն առնիլ դեն տանեն, բա ըտի կկե-նա՞ տա, թուրքի քոչը քյնքմ ա, կլալի: Տառ ար-

¹ Բանասացը ցույց է տալիս, որ թագավորի տղան հետ է շրջվում (ծանոթ. բանաստեղծություն):

թեն սնգուրը պնդեց: Է՞, ճամփի մեջն ընգավ ու վազ տալի դեպի պալատը, թող պալատը քյնն տո՛ւ:

Խառնորը տանք թուրքի քոչիցը: Արթեն կյալիս են, ըխպրի կուշտն են կյալի, էտ պատրույզներին ասըն ա.- Այ պատրույզ,- ասըն ա.- տու՛ չինարի,- ասըն ա.- ես՝ ծերին:

Էտ պատրույզներն տոռնըն են չինարի, էտ ախչիկն էլ ըլըն ա ծերը: Մի թուրքի պառավ լանթ-լունթ ա պիրըն էտ ըխպրի դրաղին լվա՜նալիս տեղը տենըն մի շղեվերք սիե ըխպրի վրա սիե քյնըն ա կյալի: Դյեր մտիկ անըն ա տենըն մի հուրի-մալաք ախճիկ վիրը:

Ասըն ա.- Այ ախչի է՛յ, հյուսերդ իրաքից կապի կախ արա,- ասըն ա.- ոյերեն, թե չէ,- ասըն ա.- ծառը տակիցը կտրըն են:

Յուսերը կապըն ա էտ ախչիկը, պառավը ոյերըն ա, քյնըն ա կուշտը, թե ինչ թլիսմն անըն ա, էտ ախչիկը տոռնըն ա եղունիկ: Էտ պառավըն էտ ըխչկա տեղը նստըն ա: Ֆայտոնն էկավ, պըռավին վե պիրին տրին ֆայտոնըն, զընգ հա՛ զընգ, ֆայտոնով խյար բլ-բուլի ախչիկ են տանըն, էտ եղունիկն էլ, տղի ուսին կըղնած, բրախըն չի: Տարան օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արին, կերան-խմեցին պըռավի հետ, եղունիկը տանիցը տուս չի կյալի: Մի օր էլ էտ հանգած պառավը եկավ հիվընդացավ:

- Ի՞նչ ես ուզըն:

- Էտ եղունիկի միսն են ուզըն:

Եղունիկը մորթեցին տվին իրան: Նա, ոտները պանը կտրատած պան, դես-դեն, որ սաղ փեչը դի կոխիլ վառիլ: Ո՞նց ըլավ ոտն ընգավ թախտի տակը, սրփեցին տարան քցեցին ըխպըհարը, ընդի տուս եկավ մի չինարի: Ըտի էլ ախպի տղեն էր, ախպի տեղը ոյըզեցին, մաքրեցին, նստարաննի պան չինեցին, պառավն ու մեկ էլ էտ դժբոն տակին նստըն են: Ծվաքըն էտ տղի վրա ա ընգընը, արևն՝ էտ պըռավի վրա: Էտ պառավը որոշեց, որ ըստի մի հաշիվ կա:

- Դրախին տակիցը մաքուր փրթել ու վառել:

Սկսեցին փրթիլը, տըկըռհան են անըն: Մի ճղրտովը ընգավ պաշի տակը: Հա են պառավը, որ անըծել ա, տարավ տրուց իրա քըթա-

լաճանընը, որ տա ուստին՝ քթալ չինի իրա հմար: Էտ պառավն էլ մեր էս կաղթական պըռավի պես պառավ ա էլի, քշերհանա տուռը փակըն ա կեղը չընըն, ըրուզուրը կյալի տուն: Այ մարթ, էտ պառավը կյալիս ա տենըն, որ է՛, մաքրած, սրփած, ճաշ էփած, մի քթալ վրիցը կերած, տանն օքծի չկա: Մին-հինգ, կարըն չի փռնի: Դե էտ ա բուսն ա պահըն ու փռնըն ա էտ ըխչըկանը: Էտ ըխչըկանը փռնըն ա, թե ասըն ա.- Մերա քան,- ասըն ա,- ինձ ոչ հեր ունեն, ոչ՝ մեր: Տու ինձ միար հերն ու մեր տոռ, ես էլ քե հմար որթի տոռնո՛ւն:

Ասըն ա.- Լա՛վ:

Մի էրկու ամիս, տիե աղքատ պառավ ա էլի, մանած անըն ա, փայ ա հվաքըն, ապրըն են:

Ասըն ա.- Մերա՛, էտ թաքավորի ծիանը սովից կտորվըն են էլի, քյնն էտ թաքավորիցը էրկու ծի պի ես պահեն:

Ասըն ա.- Այ բալա, մենք հաք չենք ճարըն, թե ուտենք, տու նրա կտորված ծիանը ո՞նց դես պահիլ:

Թե ասըն ա.- Քու գործը չի, քյնն էքուց պի:

Պառավը քյնըն ա: Պիրըն են տրան մխելի հաք, ալիք տալի, ասըն են.- Տա՛ր ապրի:

Ասըն ա.- Զէ՛ է՛, էրկու ծի տու տանեն պահեն:

- Ա՛, տու հաք չես ճարըն ուտես,- ասըն ա,- ծին ո՞նց դես պահիլ:

Ասըն ա.- Քու գործը չի:

Խաչիկ են տալի: Էտ հաք ու ալիքը պիրըն ա: Էքսի օրն էլ ա դառընըն ախչիկը, որ տենըն ա շատ գահլա ա տանըն, ասըն ա.- Սիէ էտ էրկուսը հաշվի, թե պաշի տակն են քցել, իրան տու տանի:

Էտ էրկու ծին վեր ա ունըն պիրըն էտ պըռավի կյանընը կապըն: Օրական իրեք անքան էտ ախչիկը իրան կլլուխը լվաճըն ա, կանաչը ծնգընդար կյալիս ա, ծիանն ըրածըն են: Թիմարըն ա օրական իրեք անքան էտ ախչիկը: Ծիանը կյալիս են չաղանըն: Էտ ծիանուն լիզու ա սվորցընը, ասըն ա.- Թե թաքավորի տղեն կկա՞ծ՝ ծեռ չտաք, թե վազիրնի կկա՞մ կտորեք, կսպանեք:

Մի օր թաքավորը վազըններին ասըն ա.- Քյնացեք ծիանու կաշին պիրեք:

Կյալիս են պըռավին ասըմ են.- Ծիանու կաշին:

Թե ասըմ ա.- Դե իմ ըխըկանը ասեցեք՝ տանի ծեզ տա: Ես տեղը գիղըմ չեմ:

Ախչիկը քյըմ ա կյոմի տուըը պաճ անըմ, ասըմ ա.- Նի մտեք կաշին հանեցեք:

Նի են մտըմ թե չէ՝ ծիանը կըպըհան են ըլ-ըմ, որ տիանց տորոնեմ, փախչըմ են կյալի:

- Թաքավորն ապրած կենա, ի՞նչ կաշվի մասին ես խոսըմ, սկի աշունքը էտ ձկի ծի չես ունեցել, որ հմի կա:

Տիանց վրա կնգվըմ ա, ասըմ ա.- Ի՞նչ եք ինձ ծաղըրըմ, դես-դեն, ի՞նչ եք ասըմ: Ծեզ ա-սըմ են քյաճեք կաշին պիթեք:

- Այ մարթ,- ասըմ ա,- էս ձկի,- ասըմ ա,- սիե ծի ա:

Վեր ա կենըմ կյալի ինքը, կյալիս ա, էտ ախչիկը որ տուըը պաճ անըմ ա, հա՛ էլ ծի-անուն չի մտիկ անըմ, էտ ըխըկա վրա սիե մըմ ա վե քաշված, տըմբըրվըմ ա, ոնց որ ա-ղոթած էլ ըլի:

- Այ մարթ,- ասըմ ա,- էս են ա է՛, հլեի հայար բլբլիկ ախչիկը սա ըլի: Էս ի՞նչ եմ կորցրել, ի՞նչ եմ քթել ես:

Էլ կարըմ չի էտ ըխըկա հետ խոսա: Ասըմ ա.- Դե ծիանու ջառնեն ասա:

Թե ասըմ ա.- Դե տար էլի, տու ու քու խիղ-ճը, ինչ կտա՛ս կտա՛ս:

Էտ ծիեըը քաշըմ ա, վե կենըմ պիթըմ ի-րանց տուն, տանըմ կանյուշնին քաշըմ: Ու ըն-քելանը ըտիան լաճ հաց, ալիոր, շոր-մոր ղա՛ր-գըմ էտ ըխըկա հըմար:

Սիե՛լ օրերի մի օր մաճըմ ա, որ թաքավորի հմար շատ ժղովուրթ քյմաճե՛լ են հվաքվե՛լ՝ պուրթ են կյըմ: Էտ ախչիկն ասըմ ա.- Նանի՛, հիլա ես քյմած կյըգեմ էլի, մի քիչ փող կառ-նեմ:

Ասըմ ա.- Յա՛, դե քյմըմ են՝ քյմա, որթի ջան, քյմա:

Ու քյմացին, դաքին մատած պուրթ են կյըմ՝ սանդերքնին դաքներուն տըրած: Էտ տղեն էլ էկել ա աթողը տրե՛լ էտ ըխըկա դաքին, մնացել ա տըմբըրված, մատել ա ու թամաշա անըմ ա ըխըկանը: Նատըմ ա, մատըմ ա, էկավ արթեն մթեք: Ամեքը իրանց հախը առնըմ են: Սինը հաց ա ուզըմ, մինը

ալիոր ա ուզըմ, մինը փող ա ուզըմ: Ամեքը մի պաճ են ուզըմ, թա՛մուզ առան քյմացին, մնաց տո՛ւ:

Թե ասեք.- Աքուր ջան, բա տո՛ւ:

Թե ասեք.- Մոտիկ արի, ասեմ:

Էկավ առաչին մատեք:

Թե ասեք.- Գիղե՛ս ինչ կա, ես չնչին պաճ եմ ուզըմ քեզանից, էն չղեմ ուզիլ, ինչ որ արել եմ: Կքյմա ինձ հմար մի տիկին կառնեմ, մի պիճրիկ ըստղ, մի հատ հայլի, մի հատ նուըը, մի հատ ծիլի: Վերջ: Էտքանը առ, պի ինձ տու:

Թե ասըմ ա.- Տա ընթածենը մի աքասու հա-շիվ ա:

Թե ասըմ ա.- Բու գործը չի: Ես մի աքասու հաշիվ եմ ուզըմ քեզանից: Քյմա առ, պի ինձ տու:

Քյմըմ ա ըտոնք առնըմ, պիթըմ ըրան տալի: Կաշիլուըմն ա տնըմ, վեր ունըմ տանըմ ի-րանց կյո՛մըմ պահըմ: Էտ տղեն որոշըմ ա, որ հետևի էտ ըխըկանը, թե սա ի՞նչ հաշիվ ա, էս ո՞ւր առնիլ տվուց սա, էս ի՞նչ դի ամիլ: Ը-ռավտըը քշերիանա էտ ախչիկը հաց-մաց ա-նըմ ա ու ճամփա ընգըմ, ըտոնք վեր ունըմ, էտ տղեն՝ եղնեն: Քյմըմ ա անտառըմ մատըմ: Քյմըմ ա անտըմ ու ընթելանը սիե մի թմբի մեչ-քը դեմ անըմ, էտ տաքուրեսկեն տնըմ դաքին, էտ տիկինը տնըմ վրեն, հայլեն տնըմ դաքին, նուըը՝ հետը, ծիլին՝ հետը:

Ասըմ ա.- Ա՛ տիկին, տու պատմի էն, ինչ որ իմ կըլխովը անց ա կցե՛լ:Ա՛ նուըը, տու ճոթ-ճոթ ըլի, հայլի, տու անգաճ տի, ծիլի, տու էլ իմ ճիտը կտրի:

Էտ տիկինը պատմըմ ա, որ տո ով ա: Չէ՞, տա՛ հայար բլբլիկ ախչիկն ա: Ընչե՛ր ա անց կցել կըլխովը, էտ տիկինը թա՛մուզ պատմըմ ա, հայլին անգաճ ա տնըմ, նուըը ճոթ-ճոթ ա ըլըմ: Ծիլին էլ թռչըմ ա, որ էտ ըխըկա ճիտը կտրի՛ էտ տղեն քմակին արթեն մատած ա, քա-շըմ ա սիե իրա վրա: Քաշըմ ա չէ՛, ծիլին են ղոլին վեր ա ընգըմ, հա՛ էտ ախչիկը ճիտը ետ ա թեքըմ տենըմ թաքավորի տղեն քըմա-կին մատած: Էտ ա էտ տղեն փաթվըմ ա տրա՛ն:

Թե ասըմ ա.- Բա ես գիղացել չեմ: Ես,- ասըմ ա,- դուքին եմ ըլել, քու պատկերքն ու նրանը,- ասըմ ա,- իրարից տարբերեցի ոչ,

նրա համար, որ ասեցի անձրևը, պաճը թակել և տհեմց ա ըլել:

Էտ ըխցկանը վեր ա ունըմ պիրըմ պալատը: Հորն ու մորը ասըմ ա, թե.- հայր բլբուլի ախ- չիկը ոչ թե տա յա, այլ սա յա, այլ: Այ թե որ- դիան են քթել էսքան չըրչըրվիւլուց եդո:

Էն էրկու ծին, որ էտ ախչիկը պահել ա, պը- ռապին պիրըմ են հյուսերը կապըմ տհանց պը- չիցը՝ ճալի վրա անըմ, ընքելանը թագենին եդ- նեն քսի տալի: Էնքան քաշ են տալի, տենըմ են՝ հրես չոր գանգը քաշ տալով պիրըմ են ծի- անը: Էտ տղեն եկավ նորից մեռնովեց, նորից ժամ քնաց, հայր բլբուլի ըխցկա հետ նորից զխտը օր, զխտը քշեր հըրսանիք ըլավ: Նհանք իրանց մուրազին հասնեն, տուք էլ ծեր մու- րազին հասնե՛ք:

9(9). ԲԱՉԱԼԸ

Ըլել ա, ըլել չի՝ մի հատ պառավ կնիկ: Տրան իրեք տղա ա ունեցել, մեկը՝ քաչալ: Տհանք էրկու ախպերով որոշել են, որ քնան դովին սպանեն՝ ոսկին պիրեն: Քաչալին տեղ- յակ չեն մի պահիւմ, վեր են կացել քյաճել: Քյան- ցել են մի չըբանի ռաստ էկել:

Չըբանն ասել ա.- Տղեք, էտ ո՞ր եք քյնըմ:

Թե.- Քյնըմ ենք դովին սպանենք՝ ոսկին պիրենք:

Ասել ա.- Դե սպասեցեք:

Քյաճել ա մի բաղյա կաթը կթել զխտը հաց փրթել:

Ասել ա.- Դե տուք կերեք, ես դըբըրին ցս- տեմ ոչխարի չորս դուլով պտտեմ, եթե եկա տեհա՝ կերել եք, ուրեմը պիրիլ դեք ոսկին, դովին սպանիլ դեք՝ ոսկին պիրիլ: Թե հու չէ՝ անտեղի քյնալ միք:

Մի բաղյա կաթը կթել ա իրանց տվել, հացը փրթել: Տհանք սկսել են ուտիլը, տա պտտել էկել տեհել՝ ըսկի կեսը չեն քցել:

Ասել ա.- Տղեք, քյնալ միք, պիրիլ չդեք:

Քյնաճել են թե չէ՝ դեն ածել ա ֆորը:

Քաչալը վեր ա կցել քյնաճել ըլետ էտ չը- բանին ռաստ էկել: Ըլետ մի բաղյա կաթն ա կթել տրել դաքին: Ոչխարի կիսիցը ետ ա

տվել, ասել ա .- Ետ արի մինն էլ կթի, էն մինը ռադ են արել:

Ասել ա.- Տղա՛, տու պիրիլ դեմ, քյնա՛:

Քյնաճել ա դովին տվել կիսան արել ու սկ- սել, ոսկին տուս տվել: Ախպորտանցը ման ա կյալի, քյքնըմ չի: Դի ա տվել էս կողմը, էն կող- մը, մտիկ ա արել տեհել՝ ֆորի միջին ծվըմ են: Ախպորտանցը ֆորիցը հանել ա, ասել ա.- Դե ոսկին իրեք տեղ կես արեք, որ շլակենք քյնաճը:

Ինքը քյնաճել ա մտել էտ դովի կանյուշին, մտիկ արել տեհել՝ իրեք հատ հրեղեն ծի, մի- նը՝ սիպտակ, մինը՝ կարմիր, մինը՝ սև: Տհանք թիմարել ա, լավ բեջարել, կորմը տվել: Տհանք ամեքը մի մագ են տվել, ասել են.- Որդի տե- դտ տեժրմոնա, կքսես իրար, կիսանենք, մեր ֆորմովը կյալ դենք քեզ մոտ:

Ասել ա.- Շատ Լա՛վ:

Ոսկին վեր են կալել էկել: Էկել են Դարադ- դայի՝ տակին որ քնել են հա՛, պիրել են տրա փայ ոսկին իրանց պարկերն ածել, տրա փայն էլ շիբինը լցրել: Իրանք դուլ ըլել էկել են էն Դանսաղըմ² քնել: Քաչալը վեր ա կցել տե- հել, որ, այ՛ մարթ, ախպերտիցը կան ոչ, իրա պեռն էլ անշնորթ ծանորն ա: Ակն ա տվել տե- հել շիբին ա, վեր ածել ա ու վազ տվել: Էկել ա տհանց պարկերի ոսկին ածել իրան մեշո- կը, տհանց էլ շիբինը լցրել ու քյաճել տապ ա- րել: Տուեն էլ կտրավոր տուն ա, էկել են:

- Նանի, տաշտը վե տի, ոսկին վեր ենք ա- ծըմ:

Տաշտը վեր ա տրել չէ, ոսկին ո՞րն ա, շի- բինը վեր են ածել խըռապա, տաշտը փուլ ա- ծել, կտորատել ա տաշտը: Նի են մտել:

- Հա՛յ՝ թռռանաք տուք, հա՛յ, ոսկին էս է՞ր, դեռ-դեն:

- Պա՛, - ասել են.- էս ի՞նչ ըլավ, ա՛:

Քաչալը էկել.- Նանի, տաշտը վե տի:

Ասել ա.- Սաղն ի՞նչ պիրուց, որ քաչալն ի՞նչ պիրի: Ջհանդամվի, կորի՛:

Մեշուկը շլակել ա պիրել տունը, որ վեր ա- ծել հա՛, տեհել ա, իրոք, ոսկի ա: Տհանք ի- րանց համար լավ շենքեր են շինել, կարողու-

¹ Դարադդայա - հանդամա Գետահովիտ գյուղի տարածքում (ժամոք. բանահավաքի):

² Դանսաղ - նույնպես հանդամա Գետահովիտ գյուղի տարածքում (ժամոք. բանահավաքի):

թյուն են ստեղծել, ամեն ինչովը ապահով են: Ըստի էլ մի թաքավոր կա տհանց քաղաքընը, մի ախշիկ ունի հինգերորդ հարգընը: Ով ծիով քյնմ են ըխճկա կուշտը մատանին հանի՝ ախճիկը նրանն ա: Էտ ախպերտիքը ծիերը նստըն են քյնըմ: Է՛, սաղ քաղաքը եղենն քյնըմ ա, թաքավորություն ա էլի: Տա կարմիր ծիու մազը քսըմ ա, իրան ֆորոնով քյնըմ են ըխճկա կուշտը: Երորոդ անքամ պետք է մատանին հանի: Քյնըմ ա կուշտը, որ կալի ծին բրախըմ, ըլետ կալի իրան դառին-մառինը կլուխը կոխըմ: Ախպերտիքը կալիս են:

- Ախպերտիքը, ի՞նչ կար, ի՞նչ չկար:

Բայց ախպորտանց էլ մի լավ սիլլա ա տալի չէ՛, էն մոմենտին, ետ տառնալու վախտը:

Թե ասըմ ա.- Ախպեր,- ասըմ ա,- ինչ լավ ա տու ընդի չիր: Մի տառած շան տղա կար,- ասըմ ա,- Էնքան ժողովուրդի միջին,- ահըմ ա,- մնի քեփին էլ ա դիբավ ոչ, եկավ մեր երկուսին,- ասըմ ա,- որ տվուց՝ . . . ու ծին քչեց քյնաց:

- Բա որ ասըմ եմ ինձ էլ տարեք:

- Պա՛, տու որ ընդի ըլիր, ոտըտակի կորչիլ դիր:

Ասըմ ա.- Դե պան չեմ ասըմ, էքուց էլ դեք քյնալ՝:

Թե.- Դա՛:

- Էքուց տարեք հա՛, ախպեր:

- Արա, ո՞նց տանենք, տու ոտըտակի կորչես:

Էքն էլ սև ծիու մազն ա քսըմ, ըլետ քյնըմ ա պալատը, դվերըմ կալի տհանց թակըմ, էլի քյնըմ: Երորոթ անքամը արթեն սիպտակ ծիու մազն ա քսըմ, որ մատանին հանիլ դի: Քյնըմ ա մատանին հանըմ, ետ ըխճկա հետ էլ պռոշտի անըմ, կալի ու ընքելանը ախպորտանը ոտնատակ տալի: Տառք իրեսներնուն խըջը-հանըմ են: Նա տրորըմ ա լաջու ճարթըխտը անըմ, հիլ անըմ քյնըմ: Դառինը կլուխն ա կոխըմ, մատանին էլ մատընը ու մատանին էլ մի դոլիցը փաթըմ ա մատը: Դա փաթըմ ա, սկսըմ ա, քյթալ-մթալ ա շինըմ, շիրեփ ա շինըմ փետի վրա:

Ասըմ ա.- Ախպեր, մատըդ ետ ի՞նչ ա ըլել:

Թե ասըմ ա.- Էս անդեր շիրեփ շինիլիս տեղը մատս կտրեցի:

- Բա ըռնտեղ ա,- ասըմ ա,- պի ետ պուկենք, բաձա փաթթենք:

Որ են մատի փաթթանը ետ են անըմ, տեղըմ են ըխճկա մատի մատանին մատընը:

- Պա՛, քու ցավը տանեմ, ախպեր, ինձ տու, էտ որդեղա՞ն ա:

Թե ասըմ ա.- Մի բոզ ծիավոր քյնալիս տեղը մատիցը վեր ընգալ:

- Պի՛, էտ ա են ըխճկանն ա, ես քե մատաղ:

Նա էլ ա ասըմ, նա էլ ա ասըմ:

- Պա՛,- ասըմ ա,- ես կտամ,- ասըմ ա,- ես ծեգ պես տղա ե՛մ, տալիս չեմ:

Մատանին են ըրեփի մատըմն ա էլի՝ քաչալի: Էտ քաչալը ըռավտը քչերիանա, հմի թեմուզ հրե մատանին են վե կալել տանըմ են, որ բալի թաքավորի ախշիկն ասի, թե էս ա: Ամեքը մի ձևի մատանի են վե կալել տարել. քաչալը ժած չի կալի՝ դառինը կլուխը կոխած: Սաղ քյնացել են, օչերեղով քյնըմ են, ետ են տալի, քյնըմ են, ետ են տալի: Քաչալը սամսեն վերջընն ա: Թաքավորը մտիկ արավ տեհավ, որ էտ ա վերջընը քաչալն ա մնացել, բրախեց, հիլ արավ քյնաց:

Թե ասեց.- Չէ՛, ով ա գիղըմ էտ ինչ տղա տարավ՝ ինչ տարավ, էլ կալ չի, ախճիկս մնաց նիե:

Վերջընը քաչալը քյնըմ ա մատանին ըխճկանը շիանց ա տալի չի՝ պինդ փռըմ ա: Քյնըմ են թաքավորին ընգընփռնուկ անըմ:

- Թաքավորն ապրած կենա, մատանին քաչալի ծեռին էր:

- Է՛, տարեք դազանոցը քցեցեք:

Քռինչ են տալի, տանըմ քցըմ դազանոցը, ըխճկանն էլ, տղին էլ: Դե դազանոցը մաքրել են մեչն արել, դազաֆոտ ա կալիլ, ծրտաֆոտ ա կալիլ, ըսպանըմ ա ֆոտը: Թաքավորի ախշիկը պալատիցը տուս կալ դազանոցը մտնի, ի՞նչ կըլի նրա հալը: Էտ ախճիկն ասըմ ա.- Այ մարթ,- ասըմ ա,- ի՞նչ անենք,- ասըմ ա.- բա ո՞նչ տու ես աշխատըմ, ո՞նչ ես եմ աշխատըմ, ինչո՞վ դենք ապրիլ:

Դե էլիե քիզյադ ա էլի, ծնողը թաքուն, աշկար դարզըմ ա՝ մերը, ապրըմ են: Ուտըմ են մի հինգ օր, տասն օր: Սև ծիու մազը քսըմ ա

¹ Այստեղ ձայնագրությունն անվերձանելի է (ծանոթ. բանահավաքի):

քաչալը, ասըմ ա.- Արի՝ թաքավորի բլբուլի բարը քանդի, սև ցել արա:

Կյալիս ա սև ցել ա անըմ, հիլ անըմ քյնըմ: Թաքավորը պալատիցը ըռավոտը շքերհանա մտիկ ա անըմ տեմըմ, որ բաղի տեղը մաշուր չի, ցել արած ա:

- Պա՛, սրա բալեն մեմնի,- ասըմ ա,- էս ո՞վ սիենց արավ:

Դրոքբողմա ա ըլըմ թաքավորը: Մի իրեք-չորս օր արանքովն անց ա կենըմ, կարմիր ծիու մազը քսըմ ա, ասըմ ա.- Թաքավորի բա-ղը ոնց որ ըլել ա, էն ձևի դարցրու:

Ըլետ էտ նույն ձևի ա դարցըմ: Թաքավորը շքերհանա մտիկ անըմ ա տեմըմ՝ բաղը ինչ ըլել ա, էն ձևի էլ կա: Մի օր կյալիս ա թաքավորը հիվընդանըմ, պրոֆեսորին ասըմ են, թե.- Բա քեզ մեմակ առյուծի կաթն ա պետքը, որ խմես կլըվանաս:

Բացի քաչալին վեց փեսա էլ ունի:

- Կանչեցե՞ք փեսեմուս:

Փեսեմուս վեր ա ունըմ դաղըմ: Էտ քաչալը կյնգանն ահըմ ա, թե.- Քյնա թաքավորին ասա մի ծի էլ ինձ տա, ես էլ քյնա՞մ:

Քյնըմ ա ախչիկն ասըմ ա.- Այ հեբա, մի ծի էլ տու,- ասըմ ա,- իմ մարթն էլ քյնա էլի:

Թե ասըմ ա.- Քաշվի, կորի՛, մա ըսկի Ղա-րաղդայի տեղը գիղըմ չի,- ասըմ ա,- առյուծի կաթը պիրի ինձ միար:

Կնիկն ասըմ ա.- Այ մարթ, մի ծի տու,- ասըմ ա,- քյնա շան ու կիլի փայ ըլի, մեր ախ-ճիկն ազատվի էլի տրանից:

Ասըմ ա.- Դե քյացեք էն չոլախ ծին իրան տվեք:

Չոլախ ծին իրան են տալի, նստըմ ա դն-գըլ-դնգըլ քյնըմ ա: Ըրեխեքը քարոփետ են ա-նըմ եղնեն: Տանըմ ա էտ չոլախ ծին բրախըմ, կարմիր ծիու մազը քսըմ, թուլյունըմ ըլըմ ու՛ յալլա:

Ասըմ ա.- Տղա, մի շափաթ ա տա՞մ ճուտը տակը չի ընգել,- ասըմ ա,- կուրծը տրաքըմ ա: Ես քեզ հենց տակին դեմ տնիլ,- ասըմ ա,- ճու-տը կյալ դի: Յենց կնգես,- ասըմ ա,- չվել ճու-տը տակը մտնիլը, մա տենա ոչ քեզ: Թռչիլ դեմ օթը ըլիլ:

Էտ ա տա կթըմ ա, իրան չեթվերը լցնըմ, ու ճուտը տակն ա մտնըմ, տակն ա մտնըմ թե չէ, տա տուս ա վազըմ:

- Յա՛յ, վա՛յ,- ասըմ ա,- իմ կաթն,- ասըմ ա,- լիս աշխար ընգավ:

Կյալիս ա դուզըմ չաղիրը վե թողըմ իրան հմար ճաշ էփըմ, ծին էլ բրախած, ծեմերը ոռին՝ բոթի ա տալի: Բաջանաղնին էն դոլիցը կյալիս են: Կյալիս են:

- Բա, խազեյին ջան,- ասըմ ա,- սիե, սիե հաշվով ենք ման կյալի: Մի կուցե,- ասըմ ա,- տիե դա՞րձան ունենաս քեզ մոտ:

Տա, ծին որ շռել ա, մի լիտրանոց լցրել ա վե կալել:

Թե ասըմ ա.- Ունեն:

Թե ասըմ ա.- Բա ոսկի տանք, փող տանք, դես-դեն:

Թե ասըմ ա.- Ոչ մի պա՞ն պետկը չի: Այ իմ էս ծիու նալովը վեցիտ ոռն էլ փեչատիլ դեմ, էս մի լիտր կաթը ծեգ տա՞մ:

- Յը՛, բաջանաղնի,- ասըմ ա,- ի՞նչ կարծիքի եք:

- Տիանդա՞մին, զատո,- ասըմ ա,- թաքավորը կասի, թե իմ փեսեմին պիրին: Չորս սնիմ, դավայ՛:

Էտ ա կըրմրցըմ ա, ոռերնին պա՞ց անըմ, վեցի ոռն էլ պիրը դաղըմ ա: Էտ մի լիտրը ծիու շեռը վեր ունըմ ու՛ յալլա, վեր ունըմ քյնըմ: Տա էլ հաջ-մաջ անըմ պրծնըմ, քյնըմ էտ չո-լախ ծիուն հասնըմ, ընքելանը չոլախ ծիուն նստըմ քյնըմ իրանց դազանոցը:

Տիանք էտ ծիու շեռը տանըմ են պրոֆեսո-րի կուշտը:

Ասըմ են.- Ծիու շեռ ա:

Ոռերնուն մխկտըմ ա քիչ չի, տարածն էլ պա՞նի նման չի: Կնըզվըմ ա թաքավորը, տիանք հիլ են անըմ փախըմ: Տա պիրըմ ա կես լիտ-րանոցը լցնըմ ա տալի կյնգանն, ասըմ ա.

- Տար տուր թաքավորին:

Թաքավորի էլ տառած վախտն ա: Յա՛, տա կես լիտրանոց կաթը տանըմ ա, ասըմ են.- Յրեսի քաչալը քե հմար կաթն ա դրգել:

¹ Չորս սնիմ, դավայ (Черт с ним, давай) – սա-տանան իր հետ, տուր (ծանոթ. բանահավաքի):

- Յա՛հ,- ասըմ ա,- առյուծի պես տղեքը ծիու շեռն են պիրել, տա կաթը պիրի՞, կարող ա պըտահի՞:

- Այ մարթ, հիլա ստուգենք էլի:

Անալիզ են անըմ ստուգըմ, դես-դեն, տե-նըմ, որ, իրոք, կաթն ա: Յա թաքավորը մի եր-կու բաժակ խմըմ ա, մեռած տեղից գենթա-նանըմ:

Ասել ա.- Ո՛վ ա գիղըմ, էտ ով ա տվել էտ շանը, մթած թե տա շատ ա հըսկանըմ, թե որ-դիան կարելի ա պիրել: Պատահական պան ա, պըտահել ա էլի: Գյուզալ տղեքը կրացան ոչ պիրեն:

Էլ չի հըվատըմ:

Օրերի մի օրը մի յուրիշ թաքավոր տրա՞ դեմ կռիվ ա եկել: Որ կռիվ ա վե կենըմ հա՛, տա ասըմ ա.- Բյնա՞ն ասա՛ մի ծի էլ ինձ տա, ես էլ քյնա՞մ կռիվ:

Էլետ էտ նույն չուլախ ծին տալիս են իրան, որ քյնա կռվըմ բաթմիշ ըլի: Սև ծիու մազը քսըմ ա, ծին նստըմ ու գենք ու գրահը կապըմ, քյնըմ սկսըմ ճարթիլը: Ինչքան ինքն ա ճար-թըմ, էրկու-իրեք ենքան ծին ա կտորըմ: Թուրը ծեռի մեջը հարըմ ա, դուգին ա կալըմ, արինը քյնըմ ա: Կյալիս տեղը թաքավորը թաշկինա-կը հանըմ ա տրա՞ծ ծեռը փաթըմ:

Կյալիս ա ծին բրախըմ էլի դառին-մառինը կյուլիսը կոխըմ, թաշկինակը տալիս ա կյնգա-նը, ասըմ ա.- Լվացի, լվացի, հա՞մա տա՞նը փռես ո՛չ:

Տա էլ լվանըմ ա, մտիցն ընգնըմ ա, տա՞նը փռըմ ա: Թաքավորը մտիկ անըմ ա տենըմ՝ թաշկինակը տա՞նը փռած:

Թե ասըմ ա.- Այ ախի, ա՛յ ախի,- կյնգա-նը,- թաշկինակս էն շան տա՞նը հրե փռած, ով ա գիղըմ էն մարթի ծեռիցը վեր ա ընգել, վեր ա կալել: Մի քյնա տես էն ի՞նչ ա:

Էտ ա կնիկը վեր ա կենըմ կյալիս ա:

- Այ բալա, ես թաշկինակն ի՞նչ մարթինն ա, ես ընչի՞ ա ման կյալի քու տանը:

Թե ասըմ ա.- Վեր ընգա՞վ,- ասըմ ա,- վե կա-լա՞վ,- ասըմ ա,- մեր մարթը պիրուց:

Թե ասըմ ա.- Դե տու:

Վեր ա ունըմ իրան տալի, հիլ ա անըմ կյա-լի: Մյուս օրն են կռիվ սկսըմ, էլի քյնըմ ա: Մեկ կարմիր ծիուն ա նստըմ, քյնըմ ճարթըմ, փշ-

րըմ: Որ կռիվը վերջանըմ ա հա՛, կյալիս ա թաքավորի դաքին կաղնըմ, թուրը հանըմ վրա ա պիրըմ, որ թաքավորի վիզը կտրի, ասըմ ա.

- Յանձնվըմ ե՞մ, տղա: Աշխարը քունն ա, ինձ դիպչի մի:

Ասըմ ա.- Դե քյնա:

Կյալիս ա, ծին բրախըմ, դառինը կյուլիսը կոխըմ, քյնըմ ըլետ մտնըմ իրանց դազանոցը: Բյնըմ ա դազանոցը մտնըմ կյնգանն ասըմ ա, թե.- Այ ախի, քյնա՞ քու հորն ասա, թե քաչալն ուզըմ ա կյա՞ քե հետ խոսա: Եթե համաձայնվի ո՛չ, ասա՛ քաչալն ասըմ ա՛ ճիտըտ կտրիլ դեմ, ինձ հիլա կյա՞մ հետըտ խոսա՞մ:

Կյալիս ա ախիկը հորն ասըմ թե.- Բա սհե, սհե, սհենց ասըմ ա:

Կնիկն ասըմ ա.- Այ մարթ, հիլա կյա էլի, մթած թե նրա ասածը ի՞նչ դի ըլիլ: Դիլա կյա տենանըմ էն ինչ ասըմ ա:

Վեր ա կենըմ կյալի, վեր ա կենըմ կյալի թաքավորին բարև տալի, կյուլիս տալի, նստըմ թաքավորի կշտին:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա,- նալը հետը տարել ա հա՛: Ասըմ ա.- փեսենուտ կան-չի՞՝ կյա՞ն ըստի:

Ասըմ ա.- Տու ո՞վ ես, որ ինձ կարքաղորըմ ես, որ ես փեսենուտ կանչեմ:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, քեզ ասըմ եմ փեսենուտ կանչի՞՝ կյա՞ն ըստի, կամ ես դեմ սաղ մնալ, կամ՝ տու: Այ քեզ ասըմ եմ:

Նազրնեթին ասըմ ա.- Էս քաչալին մի փլաքանովը շարտեցեք:

Որ ասըմ ա՛ քաչալին փլաքանովը շարտե-ցեք: Յա: Վեր ա թռչըմ ու դառինը կլխիցը հա-նըմ:

- Քաչալն ա,- ասըմ ա,- դե՛ով նստած, նստի տեղըտ:

Վազրնին մըմ են սառած:

- Փեսենուտ շուտ արա կանչի:

Ասըմ ա.- Սա քաչալը չի, ա՛, ես ո՞նց շան տղա յա:

Փեսենուտ կանչըմ են

- Կարքաղորըմ եմ,- ասըմ ա,- փեսենուտ ոռը պանց արա:

Փեսենուտ ոռը պանց անիլ ա տալի, ասըմ ա.- Տես էս համարը փռըմ՝ ա տրանց ոռին:

Հանրմ ա տնրմ, տնրմ ա, իրոք, դիպի ոռն էլ փռնրմ ա էլի էտ փեշտոք:

- Էտ ես եմ արել,- ասրմ ա,- ես: Էն ծիու շեռն էլ եմ տվել,- ասրմ ա,- ինձ եկել են կյուխ ին տալի, աղա ջան, բալի առյուծի կաթն ու-նենա՞ս: Ես էն տղեն եմ է՝ հմի ըստի նստած: Քեզ համար առյուծի կաթը կես լիտր չեմ պի-րել, մի չեթվեր եմ պիրել, իրեն ընդի տրած: Ես էն տղեն եմ, որ բաղըտ քանդեցի, շինեցի: Ես էն տղեն եմ, որ երկու անքամ ճակատ մտա սաղ ամբողջ զորքը ճարթուչիւր արի: Թաշ-կինակն էլ ասրմ եք, թե՛ փլան մարթիցը վեր ա ընգել, տա՛ վեր ա կալել:

Թե ասրմ ա.- Որթի ջան, ես նպատակ ունի, որ իմ ըխճկան,- ասրմ ա, ամուսնացնեմ, տան վրա նստըցնեմ, տղա չունեմ: Տու կտաննա՞ս թաքավոր, ես էլ կտաննա՞մ քու ծնողը:

Թե ասրմ ա.- Դե տհենց ասա էլ ասիլ մի թե՛ տու քաչալ ես դազանոցը քյնա: Ա՛, տո ես մի տարի ա տուժվեցի է՛:

Քաչալն իրա մուրազին հասնի, մընք էլ մեր մուրազին հասնենք: Էլետ ըսծանից հինգ խն-ծոր վեր ընգնի, մինը՝ ինձ, մինը՝ Ավետիքին, մինը՝ Զիլաքյանին¹, մինն էլ են լսողներին:

10(10). ՋՈՒՏՈՒՂՆ ՈՒ ՄՈՒՏՈՒՂԸ

Ըլել ա, ըլել չի՝ մի հատ մարթ, տրան էլ ժառանգ չունի, կնիկը էլի ասրմ ա, թե.- Այ՛ մարթ,- ասրմ ա,- վե կաջ քյնա,- ասրմ ա,- քո-լերն ընգի, չոլերն ընգի, մի կերպ արա էլի,- ասրմ ա,- բալի մեզ ժառանգ ըլի:

Որ շատ քյնրմ ա, քյնրմ ա էլի մի դովրիշի ռաժտ կալիս, տա՛ էլ տեղ ու դարձան ա տալի:

Ասրմ ա.- Քյնա, ժառանգ կըլի, երկու տղա կըլի, բայց մինն՝ ինձ, մինը՝ քեզ:

Ասրմ ա.- Շատ լավ:

Կյալիս ա, որ ինըր ամիս, ինըր ժամ, ինըր հրոպե, ինըր միմուտը թըմամըմ ա, տրան էր-կու տղա ա պիրըմ էտ կնիկը: Երկու տղա ա պիրըմ: Հմի արթեն պետք է էտ տեղորանըր տվողը պետք է կա, որ տղերանց անըմ տը-նի: Կյալիս ա դովրիշը էտ տղերանց մնի ա-

նըմ տնրմ ա Մոմշուդ, մնի անըմ տնրմ ա Ջոմշուդ:

Ասրմ ա.- Բայց մինն իմն ա հա՛:

Ասրմ ա.- Շատ լավ:

Էտ մարթը թողըմ ա քյնրմ: Որ կյալիս են էտ տղեքը հասունանըմ են, մեծանըմ են արթեն մեծ մարթիք են տանըմ՝ տրանք մարթ ու կնիկ որոշըմ են, որ.- Մենք պահել ենք մեծը-ցրել ենք, հու նրան էլ ճընանչըմ չի, որ մեր տղեն քյնա նրա կուշտը: Կասենք, տղեք ջան, ըստի կաղնեցեք, էն մարթի հետ էլ կըորոշենք, նրան եք սիրը՞մ, թե՛ մեզ եք սիրըմ:

Էտ մարթը կյալիս ա մի մտնըմ, թե ասրմ ա.- Հը՞, իլեի ծեր որոշուրմ փոխել եք:

Թե ասրմ ա.- Հա՛, թե քեզ կսիրեն, թող էր-կուսն էլ՝ քեզ, թե ինձ կսիրեն, երկուսն էլ՝ ինձ:

Ասրմ ա.- Շատ լավ, համաձայն եմ:

Երկուսին էլ դարգըմ են տուրը: Քյնրմ են տռանը կաղնըմ: Հերն ու մերը կանչըմ են.- Ջոմշուդ, Մոմշուդ, եկե՛ք ըստեղ:

Մինն էլ ա մի չի մտնըմ: Հենց էտ դովրիշը կանչըմ ա չէ՛ երկուսն էլ կյալիս են, ամեքը մի ծնգան վրա նստըմ:

Ասրմ ա.- Խնթըմ ենք էլի, կոնյե մինն էլ ա մեզ տու:

Թե ասրմ ա.- Բա տենըմ ե՞ք, ուզիք ոչ մինըմ էլ ա ինձ տաք: Լավ ծեզ փեշքեշ ըլի, էտ մինը՝ ծեզ:

Մոմշուդին վե կալավ ճամփա ընգա՞մ: Որ ճամփա ա ընգըմ հա, էտ Մոմշուդը ասրմ ա թե.- Միսպեր, կաղնի:

Իրանց բաղըմը կըղնցըմ ա ախպորը, ա-տրճանակը հանըմ ա, ծառին կրակ ա տալի, ասրմ ա.- Ես գյուլլեն,- ասրմ ա.- այ՛ հրե էս ա ծառի միջին ա: Ես քյնրմ եմ, եթե տենաս էտ գյուլլեն ծառի միջիցը վեր ընգա՞մ, կնշանակի իմ տեղը տժար ա, կիսանես ինձ:

Ասրմ ա ու դովրիշի եղնա ընգըմ, ճամփա ընգըմ: Տա՛ իլի ա անըմ էտ տռանըմ կյալի իրան հորն ու մոր կուշտը: Տիանց էլ, թե դո-նաղ ա պըտաիրը, հաջ են ուտըմ, թե հու չէ, տված ճամփա են պահըմ, թե մի մարթ պը-տաիր՝ հաջ ուտեն:

Խաբարը տանք էտ մարթիցը, որ դովրիշը էտ ըրեխին վե կալած քյնրմ ա: Շատ քյնաց՝

¹ Ավետիքը և Զիլաքյանը բանաստեղծ անուն - ազ-գանուն են (ծանոթ. բանաստեղծ):

քյննց, քիչ քյննց՝ քյննց, քյննց մի սարի դեմ առավ:

Թե ասեց.- Տղա ջան, ես սարին որ քացի տաս, մի հատ ուսուր դի պնց ըլիլ, կմտնես մեչը, միչին մի ճուխտ շամ կա կըռցրած: Էտ շամը վե կունես տուս կկայ: Միչին ոսկի կա, անկին քար կա, մի հատ վե չունես:

Ասըմ ա.- Շատ լավ:

- Էն ա,- ասըմ ա,- Էտ շամին վե կունես՝ ոռ-ռռ ետ կկայ:

Ասըմ ա.- Աչկիս վրա:

- Այ ըստի ճամփա եմ պահըմ հա՛:

Ասըմ ա.- Հա՛:

Էտ սարին քացի ա տալի չէ՝ տուռն ա պնց ըլըմ, մի ա մտըմ: Նի մտըմ տենըմ, իրոք, մի հատ շամ կըռցրած, անգին քար էլ կիտած, ոսկին էլ կիտած: Էտ տղեն Էտ ոսկին էլ ա քի-բն ածըմ, Էտ անգին քարերն էլ ա քիբն ածըմ, շամն էլ վեր ա ունըմ ծոցին տըմ չէ՝ տուռը փակվըմ ա: Մնաց միչին ու տեհավ, որ, տա, իսանաթի ոսկընդի կա վեր ածած: Տրտ պես մի քանիսը քյննցել են ըստը ֆոտել միչին:

Էտ դովդիչը իլի ա անըմ ետ տառըմ, ասըմ ա.- Արթն սա էլ հեչ:

Էտ տղեն ըսկըմ ա, իրան հմար փոս ա կտըմ, որ միչին մեմը: Դե Գրո համար քշեր-ցիրեկ մեկ ա, հա քանըմ ա էլի: Քանըմ ա, ասըմ ա.- Իրես ա, մի քիչ էլ խորըցնեմ:

Հա՛ խորըցըմ ա, խորըցըմ ա ու տենըմ ա մի հատ գյոռոց ա կլալի: Էլ ա քանըմ, քանի քանըմ ա, քանըմ ա, ծակվըմ ա դվեր ա ըն-գըմ, ընգըմ մի ճյուղի մեչը: Էտ ճուրը հանըմ ա տրան լիս աշխար, լիս աշխար ա հանըմ, Էտ տղեն քյնըմ ա տուս կլալի: Մի հատ տը-վարած տրան փընըմ ա, տրան էլ օխտն ախ-հիկ ունի, տղա չունի: Օրակամ տրան օխտը հաց են տալի, Էտ հացը տանըմ ա օխտը տեղ բաժանըմ, ութ-ինը տեղ, չէ՞: Հմի Էտ տղեն էլ տարել են, բա տրան բաժին չկա: Էտ պուռուր քիրը իրան հացի կեսը տալիս ա Էտ տղին, ասըմ ա.- Իմ ախպերն ա:

Դե տրան ծոցերքին հաս ոսկի կա, համ ան-կին քար կա: Հա վեր ա կենըմ քյնըմ մի խա-նութ, անկին քարիցը մինը հանըմ, փուրդուն-նին պենըմ շոր, տեղաշոր, հաց, ուտելիք, դես-դեն պիրըմ տուռը լցնըմ: Նիտնք էլ,

տկուր-տկիկ ըխճեք, ուտըմ են ու ծուլ ըլըմ, ինչ որ տեհել չեն տենըմ են:

- Այ քե,- ասըմ ա,- իմ մի կտոր հացը իմ ախպերը տես ի՞նչ արավ:

Վերը ըստի Էտ տղեն պիրըմ ա տիտնց մհար ամարաթնի շինըմ, մե-մեծ շենքեր շի-նըմ, թաքավորի պալատի պես շենքեր ա շի-նըմ: Որ շինըմ ա հա՛, Էտ մարթը արթեն տա-վարը բրախել ա, էլ քյնըմ չի: Թաքավորի ախ-հիկը Էտ տղին պիրըմ ա:

Ասըմ ա.- Հայրիկ, կա չկա, պետք է եմ տղին,- ասըմ ա,- համամայրըցնես, որ ինձ առնի:

Ասըմ ա.- Այ բալա, մա տըվարածի, մա-խըրչու տղա յա,- ասըմ ա,- մի տուրու ախճիկ ունի, քյափը ընտամիք են:

- Ես տեհել եմ հիտնց տները,- ասըմ ա,- քունիցն էլ լավ ա, պետք է եմ տղեն ինձ առնի:

Կանչըմ են եմ տըվարածին, ասըմ են.- Արի՛: Քյնըմ ա թաքավորի շենքը, ասըմ ա.- Թա-քավորն ապրած կենա, ի՞նչ կա:

Թե ասըմ ա.- Իմ ախճիկը տալ դեմ քու տղին:

Ասըմ ա.- Դե, ի՞նչ դեմ ասիլ, թաքավորն ապրած կենա, տալիս եմ,- ասըմ ա,- տու:

Տղին կանչըմ են:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, ես պնց չունիմ ասիլու,- ասըմ ա,- բայց նպա-տակ շատ ունեմ էլի կատարիլու: Թող ըլի քու ասածը:

Օխտն օր, օխտը քշեր հըրսամիք արին, կերան-խմեցին, ինձ մի բաժակ արաղ չտվին, սին դրաղիցը թամաշա արի էլի: Կերան-խմե-ցին իրանց հալալ ըլի, հարը պիրին իրանց տուն: Էտ տղեն, որ հանգըստարանի վրա քյնալիս տեղը, քյնըմ ա տենըմ, որ մի մեռելի հանել են, թակըմ են: Ասըմ ա.- Տղեք, խի՞ եք թակըմ:

Միմն ասըմ ա թե.- Բա ինձ տասը մանեթ էր տըլական, տուրո ոչ:

Էն միմն էլ ահըմ ա.- Ինձ քսան էր տը-լական:

Էն միմն էլ ասըմ ա.- Եռեսուն էր տըլական: Տիտնց փողերը հանըմ ա տալի, պիրըմ Էտ մեռելի վրա մի հատ վանք ա պատիլ տալի: Էտ վանքը պատիլ ա տալի, հա՛ կլալիս ա մի

քանի տարի ապրում ա: Մի քանի տարի որ ապրում ա հա՛, հորն ու մորը ասըմ ա թե: - Ինչ փայլի ու փառքի ծեղ տիրացրել եմ, ծեղ հալալ ըլի, մենակ: - ասըմ ա: - Ես խնթրում եմ հիլ արեք ես ճամփա ընգնեմ էլի, իմ հորն ու մոր աչքը ճըմփի յա:

Ասըմ ա: - Դե աստոծ քե հետ, քյնա:

Վեր ա կենըմ էտ տղեն կյնգանը վեր ունըմ, ամենքը մի ծի են նստըմ ճամփա ընգնըմ: Շատ եկան, թե քիչ, եկան մի դուռըմ մթնեց: Տհե մի տեղ կրակ արին, իրանց միար ճաշ-մաշ էփեցին, մարթ ու կնիկ մի վախտ տեհան: Էն դուռը մի մարթ տապուրը ծեռին էկավ տհանց կըշտին կաղնեց:

Թե ասեց: - Տղա ջան, վախես ո՛չ: Տու քնի քու կյնգա՛ հետ միասին, ես պահակ կաղնեմ:

Թե ասեց: - Բա ո՞նց կըլի տեհ:

Թե: - Դա՛, քու գործը չի: Տուք մարթ ու կնիկ քնեցեք, ես պահակ դեմ կաղնիլ:

Էտ տղեն էլ վախըմ ա էլի, ասըմ ա: - Առ ի՞նչ մարթ ա, ես ճըմանցըմ չեմ, պոն չեմ, ասըմ ա՛: Ես ծեր կշտին պահակ կկաղնեմ:

Մի աչքը խուփ, մինը պոն, լավօտալ քնըմ են էլի: Շատ քնեցին, թե քիչ քնեցին, էտ տղեն վե կըցավ. թե ասեց: - Մխպոր պես էլի, արի տու իմ կյնգա՛ կշտին մի ժամ քնի, մըն էլ ես պահակ կաղնեմ:

Թե: - Քու պանը չի տա, կարալ չես:

Էտ տերինքն ա, տիանց մոտ պահակ կաղնել, բայց դուրիշը կալ ղի, որ շամը կյուղանա: Դենց էտ տերինքն էտ տղի կյնգա՛ կշտին խտոր ընգնիլը՝ աչքը կաչըմ ա: Աչքը կաչըմ ա թե չէ՝ դուրիշը կալիս ա տղին բամփըմ ու շամը խըմ ու պուկ: Էտ տղեն որ վեր ա ընգնըմ, տերինքի կըլխին ա ընգնըմ: Տերինքը վեր ա կենըմ տապուրը վեր ունըմ ու հասնըմ դուրիշին պատառ-պատառ անըմ, շամը խըմ պիրըմ տալի տղին:

Ասըմ ա: - Տղա՛, էն լավությունը, որ տու արիք էն հանգստարանըմ, նրա պատասխանը ես քեզ տվի: Քյնա, սրանից եդր քեզ էլ շառ չկա, ազատ ես: Բայց ես շամի հուկարը՝ տու գիղըմ չես: Ասա՛ շամ, ուզըմ եմ իմ հորն ու մոր տներըմ ըլեմ, քեզ էն մոմենտին տամի: Ասա՛ շամ ուզըմ եմ էսքան շենք, էսքան կարողու-

թյուն, էսքան ուտելիք-խմելիք, էտ նույն մոմենտին քեզ հմար պաղորաստի:

Ասըմ ա: - Շատ լավ:

Էտ տերինքը թռչըմ ա քյնըմ: Էտ տղեն կյնգա՛ կշտին քնըմ ա: Ըռավտը քշերիանա լի-սացավ թե չէ, ամենքը իրանց ծին նստեցին, թե ասեց: - Շամ, ընդել, որդեղ իմ ախպերն ա, ախպորս եմ ուզըմ:

Մխպերն էլ, ասեցի ոչ չէ՛, որ գյուլլեն վեր ա ընգել արթեն, ծին նստած ախպորն ա ման կյալի: Քյնըմ ա ախպոր հետևիցը, թե ախպերը որդեղ ա: Մխպերը քյնաց:

Թող տա՛ քյնա, խաբարը տանք էն մի ախպորիցը, որ մա ախպորն ա ման կյալի: Քյնաց տեհավ մի հատ առյուծ մի քարափով կախ ըլած, ոտը կախ ըլած: Ոտը քարից ա ըլել, թարախակալել ա, պըտտող չկա: Էտ տղեն քյնաց քարի տակովը տռնակը տվուց, տրա ոտը պըտտաեց: Էտ առյուծը թե ասեց: - Առ, ասեց: - սա իսանաթ ա, պատառ-պատառ կանեմ: ասեց: - որ ճանգս ընգնի:

Քարի տակին կուչ ա կյալի տա, որ թարախը քյնըմ ա, ոտը հովանըմ ա հա՛, ասըմ ա: - Իսանաթ ե՛ս, տուս արի, ինչ ուզես կկատարեմ:

Տուս ա կյալի, ասըմ ա: - Ես եմ արել:

Ասըմ ա: - Իմ իրեք ճուտից մինը քունն ա:

Մինը վեր ա ունըմ: Տիանք երկու ախպեր, ոնց որ մի խնծոր կես արած, որ մինը դրաղ ա ըլըմ՝ էն մնին ճըմանցըմ չեն, գիղըմ են թե նա ա: Էտ տղեն վերչը ճամփա ա ընգնըմ՝ վե կալած էտ ճուտը: Տա՛ քյնըմ ա, քյնըմ ա էտ առյուծին հա ճառտ ա կյալի:

Թե ասըմ ա: - Դը՛, բա էտ քիչ առաչ տու: - ասըմ ա: - մի քանի օր անց ա կըցել: - ասըմ ա: - էլի ես եկե՛լ:

Թե ասըմ ա: - Բա նա սատկեց:

Կըլխի ա ըլըմ, որ ախպորը պոն ա տվել: Մինն էլ տրամ ա տալի: Թող տիանք իրար եդնա քյնան, խաբարը տանք Ջոմշուդիցը: Որ նա քյնըմ ա, ոնց որ թե խաչի դաքիցը թուխարի¹ վրա սիե վրա քյալլին դվերըմ ա²: Քյնալու ժամանակը մտիկ անըմ ա տենըմ ա՛

¹ Դանդամասեր Գետահովիտ (նախկին Թալա) գյուղի տարածքում (Ժամոթ, բանահավաքի):

² Վրա քյալլին դվերել: բարձունքից, լեռնալանջից գլխավայր ցած իջնել (Ժամոթ, բանահավաքի):

մի չոր գանձ՝ իսանաթի կլյուխ, խոտի միջին սիե, սիե թու-թու ա ըլմ, իրան-իրան սիե թու ա ըլմ էտ դյոշմը:

Սւըմ ա.- Զը, էտ ի՞նչ հաշիվ ա, չոր ոսկու-ռն,- ասըմ ա.- խոտի միջին սիե իրան-իրան թու-թու ըլի՞:

Թե ասըմ ա.- Տղա, գիդե՞ս ինչ կա, ես իսա-նաթի կլյուխ եմ հա՛, ինձ ճընանջըմ ե՛ս:

Թե ասըմ ա.- Զա՛:

- Տղա,- ասըմ ա.- ախպերտ քյնաց, բայց կախարդական պառավ,- ասըմ ա.- առաչնե-րուտ ա.- ասըմ ա.- ծեզ կախարդացնիլ դի, քար դի չինիլ՝ քար: Ծեզ հըվաքեցեք: Մինչի քու հասնիլը քյալ դես տենալ ախպերտ քար ա տառե: Ինչ պայման անի՞ նրա պայմանին ստորագրես ո՛չ:

Սւըմ ա.- Շատ լավ, շնորակալ եմ քեզա-նից:

Ճամփա ա ընգնըմ, ճամփա ա ընգնըմ քյնըմ: Բյնըմ ա, թող տա քյնա, խաճաճը տանք են Մոմշուդիցը, որ քյնաց հասավ կա-խարդական պառավին: Բյնաց հասավ կա-խարդական պառավին, բա պառավը եկավ:

- Պա՛, ես քու ցավը տանեմ, պա՛, բարով ես եկել արի՛, համեցեք, արի, ախճիկա քեզ փեշքեշ ա:

Տարավ մատրուց, ուտըրուց-խմըրուց:

- Որթի ջան, կարտի տանք:

- Կարտի տանք:

- Տու՛ քու ծիովը, ես՛ իմ ըխչըկանովը:

Պառավը տարավ՝ ծին քար տառեով:

- Որթի ջան, տու՛ քու շանովը, ես՛ իմ ըխչկա-նովը:

Կարտի տվին պառավը տարավ՝ շուըն քար տառեով:

- Որթի ջան, տու՛ քեզանով, ես՛ իմ ըխչկա-նովը:

Պառավը տարավ՝ տղեն էլ քար տառեով: Մոմշուդը հասավ, քյնաց տեհավ, որ էտ վի-ճակը կատարվել ա: Սկսեցին կարտի տալը: Կարտի տվին, հմի էլ են ըխչկանովը չի անըմ, ասըմ ա.- Տու՛ քու ծիովը, ես՛ իմ ծիովը:

Էն ծին որ քար ա տառե, էն շուըն որ քար ա տառե, էն տղեն որ քար ա տառե: Տրանց վրա ա կարտի տալի: Քանի կարտի տվին տղեն տարավ, միանք գեթաճանցան:

- Տղա ջան,- ասեց,- ես՛ իմ ըխչըկանովը, տու՛ քեզանով, նորից:

Թե ասեց.- Զե՛, ինձ վրա էրկու հետ չի կա-րելի, մի հետի կարտի եմք տվել՝ վերջ: Գոնե տու՛ քեզանով, մեկ էլ քու ըխչկանովը կարտի տանք:

Մխչիկը թե ասեց.- Մխպեր,- ասեց.- կըլմ-զանը վե կալ բեյնին տու, կըլմձգանը վե կալ՝ տու կըրկաժին:

Էտ ա անմեղցնըմ ա, պտտվըմ կըլմձգանը վեր ունըմ պըռավի կըրկաժին տալիս, ասըմ.- Քար դարցիդ:

Պառավը քար ա տառեմը: Էտ ախչիկը ա-սըմ ա.- Ես քունն եմ, տու՛ իմը:

Էտ տղեն վեր ա ունըմ, ասըմ ա.- Էլ ես ճամ-փեն մի քյնալ չղենք, թեքվիլ դենք էն մյուս ճըմփովը: Բյնալ դենք ընդեղ, որդեղ որ ծեր տունն ա, որդեղ որ քու հերն ու մերն են: Էսոր էրկու տղա ունեն, մինն էլ ա տանը չի: Նրանք թշեր-ցիրեկ ծեզ միար լաց են ըլմ: Բյնանք, քյնանք, քյնանք:

Ճամփեն թեքեցին դեպի իրանց տները: Շները վե կալած, ինչ ֆորս ըլմ ա փոնըմ են, ուտիլեն-խմիլեն՝ իրանց հմար միե քեփե-րուն քյոլ, մնալեն, քնիլեն, վեկենալեն՝ քյնըմ են: Էլ շամփն հարց ու փորց չի անըմ, թե.- Բա ընդեղ եմ ուզըմ, կըրճաղաք, քյնասա հասնեմ ընդեղ:

Էկան, իրանց հմար ուտիլեն-խմիլեն, եկան հասան իրանց հորն ու մորը: Էկան հասան ի-րանց հորն ու մորը: Էտ Ջոմշուդը թե ասեց.- Զայրիկ, մայրիկ,- ասեց.- գիդես ի՞նչ կա, սա կտրված տեղ ա էլի,- ասեց.- մեզ ըստեղ ապ-րիլը պետք չի: Բյնանք քաղաք, քյնանք ռա-յոն, ընդեղ, որդեղ որ ժողովուրթ շատ կա: Ում ա պետքը,- ասեց.- ես անվերի վիրու տեղը ապրըմ եմք:

Սսեց.- Դե, որթեք ջան,- ասեց, տուք եք գի-ղըմ, որդեղ ծեզ հմար լավ ա, ընդեղ քյնանք:

Վեր կըցան:

- Շա՛մ, փլան քաղաքն եմ ուզըմ:

Փլան քաղաքըմը քյնացին, ամառաթնի չի-նեցին, իրանց հմար սկսեցին ապրիլը: Սպրըմ են: Ըստեղ շատ հարուստնի կան, որ նրանց պալատներիցն էլ տիանց պալատը լավն ա: Զմի էտ հարուստնին խայնըվըմ են, որ էս ի՞նչ

մարթիկ ին, որ եկան սիե շենք շինեցին, տիանց շենքն էլ մերինին շվաք անըմ ա, հարգավոր ա սիանց լիզվիդացիա անել ըստիան, կըտորել, ջնջել ըստիան:

Էտ մոմենտին խաբարը հասնըմ ա Յոմշուդին, որ բա դրությունը սիենց ա:

- Բա ո՞նց անենք, ի՞նչ անենք:

Էտ հարուստին կռիվ են տուս կյալի երկու ախպոր դեմ: Յոմշուդը պալատըմ մատըմ ա շամին կարքադրըմ.- Դարուստներին ոչնչացնել:

Ձորքը տուս անըմ հարուստներին փորքըմ են: Դարուստներին փորքըմ են, որ տենըմ են արթեն գործը խարաբ ա, հա՛ պիրըմ են տիանց հարուստների Անդրեաս քյոխվա նշանակըմ: Ոնց որ մեզ մոտ Իջևանի միջին Անդրեաս քյոխվեմ՝ էր ամբողջ ռայոնըմ, տիանց կխափոր նաչալնիկ են որոշըմ: Նիանց իրանց մուրազին հասնեն, տուք էլ ծեր մուրազին հասնենք:

11(11). ԲԱՋՐԱՅԱՆԻ ԴԵՔԻԱԹԸ

Առաջներըմ մարթիկ, որ առըտուր անիլիս են ըլել, դժվով, քարվանդով են տանիլիս ըլել:

Երկու ընկեր են ըլըմ, իրար հետ որ աշխատել են, տառել են ախպոր պես: Կյալիս ա տիանցից մեկ հիվըմդանըմ ա, մեռնըմ ա: Եդր էտ որ մահանըմ ա, էտ ա մոիցը ընգնըմ ա: Շատ որ աշխատըմ ա, բիրդան կյալիս ա էտ քաղաքովն անց կենալիս միտն ա ընգնըմ, որ ըստի մի ընգեր ա ունեցել, ասըմ ա.- Քյանմ տենամ ի՞նչ կա, ի՞նչ չկա, ո՞նց ա, ո՞նց չի:

Քյանըմ ա տենըմ տան տեղը մաշուր չի: Վերջը իրցնըմ ա կյանա տեղը, շիանց են տալի: Ասըմ ա.- Բա, ա՛յ քիրա, էտ ո՞նց ա, ի՞նչ կա, ի՞նչ չկա, ի՞նչ ախպերը ո՞ր ա:

Ասըմ ա.- Դե մեռել ա: Ես էլ լվաճք եմ անըմ, պան եմ անըմ ըրեխին պաիրըմ:

Էտ որ տենըմ ա, ասըմ ա.- Քիրա ջան, ի՞նչ ախպերը՝ հնգերը, ի՞նչ որ սիե լավություն ա

արել, աշխատանքի տեր ա շինել, նրա տղին ես տանեմ մարթ շինեմ:

Էն ա էտ տղին կազմակերպըմ ա, էտ ըրեխին ասըմ ա.- Տանեմ, ոնց որ ի՞նչ ըրեխին, պահեմ, աշխատացնեմ, իրա հոր աստիճանին կաղնի: Իրա հերը ի՞նչ լավություն ա արել, ես էլ իրան լավություն անեմ:

Էտ ա էտ ըրեխին վերցնըմ ա հետը տանըմ: Էտ ըրեխին վերցնըմ ա հետը տանըմ ա միառժամանակ ման ա կյալիս, եդր, որ շատ ման կյալուց եդր քյանըմ են հենց տեղ հանդիպըմ, որ ճուր չի ըլըմ, ըստի մի ճըրըճորի տեղ են գիղենալիս ըլըմ, քյանըմ են էտ ճըրըճորի կուշուր, ասըմ են.- Ճուր կիանենք մեզ հմար, համ էլ անասունների հմար:

Էտ ըրեխեն ասըմ ա.- Ես փորքն եմ, ես կիջնեմ ներքե, վերորն կլցնեմ, կքաշեք:

Որ շատ ստիպըմ ա, հա՛ էտ խազեյինը՝ վաճառականը, ասըմ ա.- Չէ՛, ես քեզ թող չեմ աճի, տուս ըրեխա ես, կվախես: Ես կիջնեմ:

Վերջը, որ ըրեխեն շատ ստիպըմ ա, ասըմ ա.- Չէ՛, հրոխպեր, ես կիջնեմ:

Ու իչնըմ ա:

Էտ ըրեխեն, որ իչնըմ ա ճըրին ա հասնըմ ու մի քարի վրա կաղնըմ ա ու վերորն ուզըմ ա լցնի, տենըմ ա էն կողմիցը մի անցնորք կյորտն ա տուս կյալիս, ասըմ ա.- Ինձանից դենը լավ, գեղեցիկ աշխարքըմս կա՞, թե՞ չէ, ես եմ:

Էտ տղեն ասըմ ա.- Չէ՛, աշխարքըմ քեզ պես գեղեցիկ ու սիրուն, իմաստուն չկա:

- Դե՛, ասըմ ա,- լցրու՛ ճուր:

Էտ տղեն ճուրը լցնըմ ա, քաշըմ են: Տղին էտ կյորտը յաշիկ ա տալի, ասըմ ա.- Տար, քե պետքը կյալ: Էտ կյորտը ասըմ ա.- առաջ տուս պերցոացի, հետո յաշիկը քաշի, (թե չէ կարող ա...):

Էն ա էտ տղեն պերցոանըմ ա, հետո էլ յաշիկն են հանըմ: Էն ա որ յաշիկը քաշըմ են, ուզըմ են պան անեն, էն մարթը, որ էտ տղին պիրել ա, ասըմ ա.- Չէ՛, պետք ա պան չանենք, պետք ա դարգենք իրա մոր, էս իրա առաջին աշխատանքն ա:

Էտ յաշիկ վերցնըմ են դարգըմ իրան մոր: Որ ծնողին են ուղարկըմ, մերը վերցնըմ ա տանըմ ծալքի քըմակին տընըմ, ասըմ ա.- Էն-

¹ Անդրեաս քյոխվա - Մինչև հեղափոխությունը եղել է Զարվանսարայի (Իջևան) գյուղապետը (ծանոթ. բանահավաքի):

քան պահիլ դեմ էտ յաշիկ, իմ տղեն կյա՛ իրան ծեռով պա՛ց անի:

Մայրը ե՛ն յաշիկը ըտեղ ա տընըմ, իսկ ե՛ն տղեն իրան հրոխպոր հետ ման կյա՛լ ա քյնմ-ցել:

Հմի մենք խոսըմ ենք էտ պըռավիցը՝ էտ ըրեխի մորիցը: Էտ մերը ըռավոտը վեր ա կենըմ քյնըմ ա հարուստների տունը լվացք ա անըմ, պուրթ ա մանըմ, կյըզըմ, հաց ա աշխատըմ պիրըմ ուտըմ: Հմի էտ ըրիգյունը կյա՛լիս ա տուն, տենըմ ա տունը մաքրած, սարքած, ճաշը սարքած՝ սեղանի վրա տըրած: Մոիկ ա անըմ՝ օքմի չկա: Էտ ա ուտըմ ա, մտածելով պառկըմ ա քնըմ: Առավոտը վեր ա կենըմ էլի իրան աշխատանքին քյնըմ, իրիկունը կյա՛լիս ա տենըմ՝ էլի պատրաստ: Վերջը մի էրկու-ի-րեք անքամ տհե պտահըմ ա:

Երրորթ օր էտ պառավը ասըմ ա.- Ես պետք ա բուս պահեն, տենամ՝ էս ո՞վ ա կյա՛լիս սհենց մաքըմ, սարքըմ:

Տուս ա կյա՛լիս բուս պահըմ, կյա՛լիս ա ա-կոշկից մոիկ անըմ, տենըմ ա՝ մի սիրուն ախ-շիկ հրես մաքըմ ա, էփըմ ա: Էլ սիրտը չի դը-մանըմ, տուտը պա՛ց ա անըմ, խոտըմ ա, ասըմ ա, տուս իմն ես, ես քունն եմ:

Ըտենցով տառնըմ են հարս ու կեսոր: Մի օր էտ ախշիկը, խելըը հասնըմ ա, ասըմ ա.- Մայրիկ, բա ըստեղ պարեկամ, պա՛ն չունե՞նք: Թե.- Իմ տեքոր տղեն ա:

Ասըմ ա.- Նրան ասա,- էտ տղին կանչըմ ա, պիրիլ ա տալիս, ասըմ ա.- ինձ հմար մի էրկու հեկտար հող վեր կալ:

Էտ ա էտ հողամասը վերցնըմ ա, էտ ա հինգ հարկանի պալատնի ա սարքըմ: Ենքա՛ն լավը, որ թաքավորական պալատնին տրա՛ն կողքին կյլուխը քարովն են տվել: Էտ ախշիկն էլ՝ ինքը, ենքան սիրուն ա, որ սաղ կյա՛լիս են կողքին կաղնըմ մոիկ անըմ:

Հմի խոսանք վատ մարդից: Վատ ընկեր-տիցը հայտնվըմ են, պիրըմ են մի նամակ կյ-րըմ էտ տղի վրա, թե էս բոզին որտե՞ղից դը-գեցիր ըստեղ, պիրել ա սաղ քաղաքի չորան-չոլուղին կխի՛ն հվաքըմ: Նամակը փոշտն են քցըմ, որ փոշտն են քցըմ, քյնըմ ա էտ տղին համըմ էտ նամակը: Էտ տղեն նամակ կար-

թըմ ա ու ընքելանը ասըմ ա.- Հորխպեր, իրա-վունք տուր տուն կաչեմ, էտ կյա՛մ:

Ըտեղ ստիպըմ են, թե ի՞նչ ա ըլել, ի՞նչ չի ըլել, չի ասըմ:

Էտ տղեն վեր ա կենըմ կյա՛լիս ա տուն, կյա-լիս ա տենըմ, ի՞նչ, քաղաքի կողքին մի պա-լատ, որ թաքավորի պալատը ի՞նչ կանի տրա՛ն կողքին: Քյնըմ ա մոր կողքը, մերը փռնըմ ա պչպչորմ, թե.- Էս ի՞նչ լավ հարսն ես դրգել:

Նա էլ ծեն չի հանըմ, իրիգյունը էտ հարսին խոսցնըմ ա ու ընքելանը մի էրկու-ի-րեք տե-ղից տանձկով տալիս ա, պատուհանիցը էտ հարսին դվեր քցըմ:

Հմի խոսանք էտ ախշկանիցը: Էտ ախշիկը կիսամեծ վեր ա ընգըմ: Էտ մոտիկ հարևան մի ցիուղ ա ըլըմ, որ էտ ախշկա գեղեցկություն-իցը տարված, ամեն օր տուս ա կյա՛լիս մոիկ անըմ ու ըլետ տուն մտնըմ: Ման կյա՛լիս էտ ախշկանը քյնըմ ա ու տանըմ իրան տուն: Հմի թաքուն թշկնի ա պիրըմ էտ ախշկանը սղըցնըմ: Հմի ստիպըմ ա էտ ախշկանը, որ ինձ պետք է առնես: Էտ ախշիկն էլ ասըմ ա, թե.- Հայրիկ.- ասըմ ա.- էտ պա՛նը դժվար կըլի, ես քրիստոնյա եմ, տու՛՛ մահմեդական:

Էն ա, որ շատ ստիպըմ ա, թե ասըմ ա.- Քյ-նմաք պասկվենք:

Ասըմ ա.- Դե որ տուս իմ կյանքը ազատել ես, ես ի՞նչ պետք ա ասնե:

Էտ ա էտ ցիուղին խափըմ ա, դրզըմ տեր-րերի եղևից, որ նրան ղոբզըմ ա հա՛, ինքը վեր ա կենըմ փախչըմ, որ տուս ա կյա՛լի փախ-չըմ, հա՛ ասըմ ա.- Դե քյնած մեռնեմ ավելի լավ ա, քան թե տրա՛ն հետ աճուսանամ:

Որ շատ ա քյնըմ, փախչըմ, մի հովվի ա պտահըմ, հովվըմ էլ ասըմ ա.- Էս ի՞նչ լավ պա՛ն ա, ես էլ կնիկ չունեմ, կտանեմ ինձ հմար:

Էտ ախշկա գեղեցկությունից տարված՝ էտ չորան պիրըմ ա էտ ախշկան հաց-պա՛ն տա-լիս, եդր ասըմ ա.- Բա՛, ինձ պետք է առնես:

Որ դավուրմա ա հանըմ, էտ պարկը տենըմ ա, էտ տղին ասըմ ա.- Շատ լավ, կառնեմ: Բե-զանից էլ քաիել, ես որդի՞ան պետք ա ճարեմ: Տուս քյնա՛ն տուն մի տերտեր պի, որ պասկի:

Էտ չորանի խելըը կտորըմ ա, տրա՛ն ոչխարի կողքին թող ա անըմ ու քյնըմ: Էտ ախշիկը էտ թափանը լվանըմ ա կյլուխը կոխըմ, էտ չորա-

նի շորերն էլ հաքել ա, երեսին էլ ցեխ քսել ու փախել: Էտ ախչիկը էտ ա չորանից էլ ա փախչում: Շատ ա քյւնըմ, քիչ ա քյւնըմ, հմի քյւնըմ ա մի կետի հասնըմ: Զմի ո՞նց անց կե-
նա: Դես ա մտիկ անըմ, դեն ա մտիկ անըմ, տե-
նըմ ա՝ մի լողկա: Քյւնըմ ա լողկաչու մոտ, ա-
սըմ ա.- Ախպեր, ինձ անց չե՞ս կցնի կետիցը:

Ասըմ ա.- Խի՞ չեմ անց կցնի:

Էն ա վերցնըմ ա էտ լողկաչին որ տանի,
կետի մեջ տեղը կաղնացնըմ ա, ասըմ ա.- Ինձ
պետք ա առնես:

Ասըմ ա.- Այ տղա, դե ինձ անց կըցրու,
քյւնա ծեր տանից մի կնիկ դարգի, տերտեր
ճարի, որ քեզ առնես:

Անց ա կցնըմ կետի դրաղին թողըմ, որ քյ-
ւնա դրգի: Ըտիան էլ ա փախչում: Շատ ա քյ-
ւնըմ, քիչ ա քյւնըմ, քյւնըմ ա մի անտառի մեջը:
Անտառի միջին էլ դաշաղնին են առաջը կտ-
րըմ: Էտ դաշաղնին տրան տանըմ են մի էն-
պսի տեղ քցըմ, տրանց դեկավարն էլ էտ ախ-
չկա վրա սիրահարվըմ ա: Էտեղ մնըմ ա ընդի:
Էտեղ էլ խափըմ ա, թե.- Տարեք ծեր տուն, ես
քեզ առնիլ դեմ:

Վերջը ըտեղից էլ ա փախչում: Ըտիան տա-
նըմ ա, քաղաքին մոտենալիս, ժողովուրթի
մեջն ա ընգնըմ, փախչում:

Զմի խոսանք մենք էտ տղից: Էտ տղին եղո
մերը սկսըմ ա անըծիլը, թե.- Տու սիե ըլես,
սիե ըլես, տու ո՞նց էն տեսակ իմաստուն ախ-
չկան տիե արիք:

Էն ա թքըմ ա, ասըմ ա.- Ես պետք ա աշ-
խար-աշխար ման կյամ, էտ ախչկան քյթնեմ:

Ձիւղն էլ ա ման կյալի, քյւնըմ ա չորանին
հասնըմ: Չորանն էլ ա ման կյալի: Զմի լող-
կաչին էլ ա ման կյալ քյւնըմ, դաշաղն էլ տես-
նըմ ա, ոնց ա, մռ էլ ա ման կյալի: Եղո էտ
ախչիկը քյւնըմ ա մեկի տան ծառայող ա մտ-
նըմ, էտ մորթին էլ կյուլիսն ա կոխըմ: Սի լավ
հիեղեն ծի ա ըլըմ էտ խազեյիմին, էտ տանըմ
ա պահըմ, թիմարըմ: Ձուտ էտ ծին ա պահըմ:
Տանըմ ա ախպուրը ճուր տալի, հա՛ պիրըմ: Ի-
րան էտ մարթը, էտ չորանին, էտ պանին, որ
էտ ախչկա եղևից ման են կյալիս, կյալիս են
էտ ըխարի դրաղին մատըմ, որ հանգստանա-
ն: Էտ ախչիկը որ պիրըմ ա ճուրը տալիս ծիւն,
դե ֆորմը փոխել ա էլի, բայց աչքերիցը-պմ-

նիցը, սիրտը քաշըմ ա էլի, տենըմ ա հլեի տա
ախչիկ ըլի: Սի քանի օր էտ ըխարի դրաղին
մատըմ ա, տրան ա ճամփա պահըմ: Էտ ա որ
պան ա անըմ, հա՛ ըտոնը՝ չորան էլ, հիմզն էլ,
ըտի հվաքըմ են էլի: Էտ ախչիկ մի օր էտ
խազեյիմին ասըմ ա.

- Եթե կարելի ա, ըտի աշուղնի են եկել էլի,
էտ աշուղներին մի ըլուգու պիրես դոնաղ ա-
նես:

Տիանք էլ աշուղի ֆորմ են մտել, ամեքը մի
սազ են վե կալել, էտ ախչկա եղևիցը ման են
կյալիս: Որ խնթըմ ա խանըմին, խանըմն էլ
իրան մարթին ա խնթըմ, ըլուգուըն տիանց
պիրըմ են հյուրասիրըմ, սկսըմ են երգել,
պատմիլ: Էտ ախչիկը ասըմ ա խազեյիմին.-
Էսքան տարի ես քու տանը բատրակ եմ ըլել,
խնթըմ եմ մի ժամով քու իրավունքը ինձ
տաս, ես պատմութիւն անես:

Խանըմին ասըմ ա, խանըմն էլ խազեյիմին
ա ասըմ ու հա՛ սկսըմ ա պատմիլը, պոց ըլի-
լը: Էտ մորթին հանըմ ա, շորորը հանըմ ա,
տանըմ մի հուրի-փարի, տրանք մամենտալ-
նի կլխի են ընգնըմ: Էտ խազեյիմն էլ զարմա-
նըմ ա, որ էտ էրկու տարի իրանց տանը մո-
քյար ա ըլել ու իրանց գիղացել չեն: Էտ ախ-
չիկը իրան առաջին սիրածին ասըմ ա.- Ես
քեզ ի՞նչ ի արել, որ տիեք արիք:

Էտ տղեն ծոցիցը մամակը հանըմ ա տալի
էտ ախչկան:

Ասըմ ա.- Դե հմի փոշմանել ե՞ս:

Ասըմ ա.- Դա, ես էն օրվանից եմ փոշմա-
նել, որ քեզ խփեցի:

Ետ ա տանըմ մեկ էլ ցիւղին ասըմ ա.-
Տու ի՞նչ մտածեցիր, որ տու իմ եղևից ման ե-
կար:

Ձիւղն ասըմ ա.- Ես քեզ վնաս չեմ տվել:

Ետ ա տանըմ չորանին ա հրցնըմ, լողկա-
չուն ա հրցնըմ: Նրանք էլ են պատմըմ, մրա-
նից եղո դաշաղն էլ ա պատմըմ: Տենըմ ա, որ
էտ ախչիկ արդար ախչիկ ա, իրա պատիվը,
մամուսը վեր չի քցել: Էտ ա ըտի համաձայն-
վըմ են իրա սիրածին տալի, սիրածը տանըմ
ա տուն¹:

¹ Զեքիաբը բանասաց Զարուբուն Զարուբունյանի
հորը պատմըմ է վանեցի մի ծերունի (ծանոթ. բա-
նասացի):

12(12). ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՄԱՏԱՆԻՆ

Ըլըմ ա, ըլըմ չի՝ մի մեր, մի տղա: Տիռնք շատ քլմսիք են ըլել: Էտ տղեն վեր ա կցել քլմցել շլակով փետ պիրել, տարել շուկայըմը ծախել: Շուկայըմը ծախել ա, տեհել ընդեղ՝ մի պուճուր շան թուլա: Վեր ա կալել հետը պիրել, մի կուպել ա տվել, վե կալել պիրել:

Մեկ էլ ա քլմցցել, էլետ փետ ա արել, տարել շուկայըմը ծախել, ըտի մի կատվի տուխ ա քլթել, ըտ էլ ա պիրել: Մերն ասել ա.- Այ տղա, ըսկի մենք պան չկա ուտենք, էտ ո՞ւր ես էտ թուլեն ու էտ կատուն պիրըմ:

Ասել ա.- Այ մերա, ոչինչ, մեր տանը կկենան էլի:

Էտ ա անց ա կցել: Մեկ էլ ա քլմցցել, քլմցցել ա շլակով փետ պիրել, տարել շուկայըմը ծախել, տեհել՝ ընդի մի ոզնի՝ ըրեխանց ծեռին, ուզըմ են սպանեն: Էտ ոզնին ծեռնը-քերնուցն առել ա պիրել, ըրեխանց ծեռիցը առել պիրել: Պիրել տրել տանը: Էտ տհենցով մի քանի վախտ, ժամանակ ա անց կցել, էտ ոզնին ասել ա.- Քեզ ի՞նչ տամ՝ ինձ ազատես տանիցը, քլմամ ի՞նչ հանդերը, դաշտերը ման կլամ:- Ասել ա.- դե ի՞նչ տամ:

Էտ ոզնին իրա լուզվի տակիցը հանել ա տրան տվել մի մատանի, էտ տղին: Տվել ա մի մատանի, ասել ա.- Եթե ինչ կարիք ունես լիզվիտ տակին տի, տա՞ քու կարիքը կլա՞լ դի, քու նպատակտ կատարվի՞ դի:

Էտ տղեն վեր ա կալել ոզնուն տարել հանդըմ բրախել եկել, բրախել ա դաշտըմը, բրախել ա եկել: Եկել ա տուն: Պիրել ա լուզվի տակին տրել էտ մատանին ասել.- Ա՛ մատանի, տեր աստո՞ծ, ասել ա.- թաքավորի ախչիկն ինձ առնի:

Էտ ա կատարվել ա, թաքավորի ախչիկն եկել ա տրան առել, առել ա, իրան հոր կարողութիւնն էլ հետը պիրել ա էլի, կարողութիւնն էլ հետը պիրել ա, եկել ա տրա՞ հետ ամուսնացել: Էտի մի ախճիկ ասել ա.- Սա ո՞նց ըլա՞վ, որ սրան առա՞վ, ես քլմամ տրա գաղտնիքը մտնամ:

Էտ ա վեր ա կենըմ կլալի տրան քույրիկու-թին անըմ, դես անըմ, դեն անըմ, էտ ախչկա աղլըմը առնըմ, ասըմ ա.- Սա քու գաղտնիքը, տու՛ ո՞նց ըլա՞վ, որ տրան առար:

Յամա տա՞ կյնգանը ասել չի: Ասըմ ա.- Քու մարթին գաղտնիք ունի, տու՛ չգիտես:

Ասել ա.- Լա՞վ կմտնամ:

Տա՞ պիրել ա մարթի տուն կլալու վախտը ընքելը տիրել, տխուր նստել: Մարթը եկել ա:

- Ի՞նչ ա պատահել, ի՞նչ ա պատահել:

- Ի՞նչ ա պատահել.- ասըմ ա.- ես քու ընչի՞ տ կինն եմ, ասըմ ա.- որ ես քու գաղտնիքը չեմ գիտըմ:

- Այ կնիկ, ի՞նչ ա ի՞նչ գաղտնիքը, ի՞նչ ա պատահել:

- Չէ՛, տու՛ գաղտնիք ունես: Բա ո՞նց արիր, որ քեզ հետ ամուսնացա՞ւ: Թե ասըմ ա.- դե ո՞նց...

Որ շատ ըստիպըմ ա, ասըմ ա.- Դե ասեմ, ասըմ ա.- Ի՞նչ լուզվի տակին մի մատանի կա, ես եթե եմ մատանին խոսք եմ տալի. ա՛յ մատանի, էս գործս հաջողվի, նա կաջողվի:

Դե ասըմ ա.- Տո՛ւր ինձ:

Իրան ա տալի, ինքն էլ ա խոսըմ մատանու հետ, ծանոթանըմ ա, տըմը են զանդուկըմ: Էտ ախչիկը կլալիս ա, ասըմ ա.- Ի՞նչ ասեց:

Թե ասըմ ա.- Ասեց, որ լուզվիտ տակին տնես էս մատանին, ու՞մ սիրես, ու՞մ ուզես, ինչ կործ ուզես՝ կլա՞լ:

Ասըմ ա.- Լա՞վ: Էտ ախչիկը.- դե ինձի:

Պրոբ ա անըմ էլի: Էտ ախչիկը տըմ ա լուզվի տակին, ասըմ ա.- Ա՛ մատանի, ասըմ ա.- էս պալատը քոչի անց կենա Քոչի են դուր, էտ տղեն էլ՝ ինձ հետ: Ընքելանը քոչի անց կենա էն դրաղը, ծովի են դրաղը, էս ախչիկն էլ կյորտը տա՞ննա: Էտ ախչիկն էլի, որ մարթը չի առնի էլի, սա էլ կյորտը տա՞ննա:

Էտ ա տհենց անըմ ա, էտ ախչիկը հրոպեական կյորտն ա տա՞ննա: Էտ տան հարսը: Էտ ախչիկն էլ անց ա կենըմ, պալատը հետը, էտեղ՝ մատանին հետը: Տա՞ քլմըմ ա, տա՞ քլմըմ ա, ըրուզուրը մարթը կլալիս ա տենըմ իրանց հին տունն ա, մերի դայրի սենց աղքատ տուն ա, էտ կյորտն էլ կըրկըռալա աղաքն ա կլալի:

Ասըմ ա.- Էս ի՞նչ գորտն ա, իմ առաջն ա կյալի:

Էտ ա մտիկ ա անըմ տենըմ.- Ը՛ը՛, ասըմ ա.- մատամին, խափել են տարել, սա գորտն ա տռռել, իմ պալատն էլ քյնացել ա:

Սարի կյալին ա քյնըմ պարզաբանըմ տենըմ պալատն ընդեղ ա, մաշտիք պալատ ա: Էտ ա տռռ ասըմ ա.- Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ:

Դըղըղըղում ա ըլըմ: Դըղըղըղում ա ըլըմ: Հա՛, էտ թաքավորը կյալիս ա, կյալիս ա ասըմ ա.- Ո՛ւր ա իմ ախչիկը:

Սանըմ ա, կյալի էլի, որ տհե պա՛ն ա պտա-հել:

Ասըմ ա.- Ի՞նչ ախչիկն ո՞ւր ա

Ասըմ ա.- Չգիտեմ.- ասըմ ա:

Էտ ա էտ տղին քցըմ ա մի ֆորի մեչ, սաղ, ֆորի մեչ ա քցըմ: Էտ կատուն ու թուլեն կյալիս են, մտիկ ա էլի քաղաքիցը, կյալիս են ֆորի կլխովը պտիտ կյալի՝ ծեռքներովը պա՛ն չի կյալի: Տիռնը էլ նկատել են, որ տհե պա՛ն կա: Էտ ա, թե.- Ի՞նչ անենք, ո՞նց անենք:- Էս շունն ու կատուն ասըմ են.- արի մենք քյնանք էտ ծովն անց կենանք, քյնանք էտ մատանին են պիրենք:

Վեր են կենըմ քյնըմ: Ծովը, կետը անցկե-նալիս կատվին շունը շըլակըմ ա, անց են կենըմ քյնըմ են էտ շենքի չորս ղողեն պտիտ կյալի, տենըմ են մի հատ մուկը՝ չորս ծառ հետը կյալիս են: Էտ կատուն ասըմ ա.- Քու ծառքերը.- ասըմ ա.- Էս կվերչացնեմ, Էս մի նպատակ ունեմ, թե տուլ չկատարես՝ քեզ էլ, քու ծառքերին էլ կվերչացնեմ:

- Վի՛յ, ասըմ ա,- ա՛յ կատու,- ասըմ ա,- ասա տենամ ի՞նչ ա քու պահանջը:

Թե ասըմ ա.- Էս պալատըմ,- ասըմ ա,- մի մատանի կա, տու ոնց ուզըմ ա ըլի, հանես պիրես:

Ասըմ ա.- Էավ, իմ աքջիս վրա:

Էտ ախճիկը քնըմ ա մատանին պենըմըմ: Հանըմ չի, որ ասըմ են հանեն գոհութիը կընգնի: Պենըմըմ քնած ա: Էտ մուկը քյնըմ ա էտ ըխչկանը, իրեսին քյնըմ ա ման կյալի, մի թիք պոչը քսըմ ա քնթին, քնթին ա քսըմ պոչը, էտ ախչիկը ուժեղ փռշտըմ ա, մատանին ըն-գըմ ա պենիցը: Էտ մուկն ու կատուն վեր են

ուռըմ պիրըմ, կյալիս են կետն անց կենալիս շունն ասըմ ա.- Ինձի, պենըմս պահեմ:

Կատուն ասըմ ա.- Կկորցնես:

Ասըմ ա.- Չէ՛:

Էտ շունը պերանն ա քցըմ մատանին, էտ կատվին շլակըմ: Թե ոնց ա ըլըմ պենիցը ըն-գըմ ա կետը, ընգըմ ա կետը, էտ կետիցը ընդիան հրոպեական մի ծուկն ա փռնըմ, մատանին քյնըմ ա ծուկը: Ըսեղ ձկնորսնին ներքը ծուկն են ֆորսըմ, ծուկը փռնըմ ա: Էտ կատուն ասըմ ա.- Ծկան պերանը ընգած կըլի:

Քյնըմ ա նայըմ, տենըմ ծկան փորըմը շող-քն ա տալի մատանին: Պտիտ ա կյալի էտ ծուկը վեր ուռըմ փախչըմ կատուն: Կատուն փախչըմ ա քյնըմ ա, ֆորսկանը ասըմ ա.- Կատուն տարավ:

- Հա՛, տարավ, տարավ, մի հատ ծուկն ա, տանըմ ա՛ տանի: Կյալիս են էս ղողին ծուկն իրանը ուտըմ, մատանին պիրըմ: Պիրըմ են քցըմ տղի ֆորի մեչը: Էտ տղեն հրոպեական լեզվի տակն ա տնըմ ֆորիցը տյուս կյալի, ըն-քելանը ընդիան իրան հրամանը տալի, իրան պալատը, իրան կնիկը կյալիս են: Կյալիս են նույն իրա տեղը կրկնըմ: Էս մատանին էլ կյն-գանը չի տալի, ասըմ ա.- Տու թշնամքերի էս տալի:

Իրան ծեռին պահըմ: Խերն ըստի, շառը՝ Բեջանանց տանը:

13(13). ՍՍՈՒՌ ՂՈՒՄ ՈՒ ՀԱՍԱՐ ԴԵՎ

Մի թաքավոր ա ըլնում, իրեք ախչիկ ա ու-նենում, իրեք էլ տղա ա ունենում: Եփոր մա-հանալի ժամանակ կյալիս ա, հիվանդանում, տղերանց կանչում ա օսիաթ ա անում, ասում ա.- Ով կյալ մեր աթոռին կնստի, մեր ախչկե-րանց տրան կտաք, էլ դես ու դեն չկա:

Էտ որոշում ա, թաքավոր մահանում ա: Ե-փոր թաքավոր մահանում ա, մի քանի տարի անց ա կենում, աղջկեք նշանի հասնում են, մի օր տենում են՝ մի կել մտավ տուն, քյնաց էտ աթոռին նստեց: Ախպերներ հավաքվում են, տենում են մի կել աթոռի վրեն նստած: Միջնակ ախպեր, մեծ ախպեր ասում են.- Մեր քիթ կելին չենք տա:

Իսկ պլուճուր ակաբեր ասում ա.- Չէ՛, պետք
ա կելին տանք, մեր հոր ասած կատարենք:

Պատիկ ակաբեր զոռ ա ամուսն, մեծ աղջիկ
տալիս են կելին, տանում ա:

Մի տարի անց կացավ, տեհան՝ մի արջ ե-
կավ նստեց էտ խնամաթոռի վրա: Ու էլի երկու
մեծ ակաբեր համաձայն չեն, չեն տալիս, բայց
էտ պզտիկ ակաբեր զոռ արավ, աղջիկ տվին
արջին տարավ: Մնաց փոքր քիր: Մի օր տե-
հան մի Սմուռ դուշ (հարևանտի երկրներում
կա), եկավ էտ աթոռին նստեց: Էլի երկու մեծ
ակաբեր համաձայն չեկան տալու, իսկ պստիկ
ակաբեր ասեց.- Մեր հոր ասած պետք ա կա-
տարենք:

Եփոր իրեք քիրն էլ տվին, քյանցին: Ուրեմն
խանաթի չտվին, ընենց զազանների տվին
էլի: Իսկ էտ երկու մեծ ակաբերներ խռովեցին
պստիկ ակաբորից, նախանվեցին, որ իրանց
քվորտանց տվին վայրի տեղ, քյանցին:

Օրերի մի օր մի ղև ա ըլլեմ, անուճը՝ Դասաթ
դով, ծիով անց կենալիս էտ պզտիկ ակաբոր
կնիկ փախցնում ա տանում: Իրիգուն որ կյա-
լիս են տուն ակաբորից, գործատեղից, տե-
նում են իրանց հարս չկա: Էտ պզտիկ ակաբեր
մեծ ակաբերներուն ասում ա.- Ո՞նց անենք:

Ասում են.- Դե քու կնիկ մի քիչ պաց ա, ով
գիդա ում հետ ա ընկել քյանցել:

Հետո պլուճուր ակաբեր ասում ա.- Ես առա-
վոտ պետք ա քյանմ ման կյան:

Առավոտ նստում ա ծիուն քյուն: Շատ ա
քյուն, քիչ ա քյուն, քյուն ա իրան մեծ
քվոր քթնում ինչ-որ մի տան միջին: Քիր տա-
նում ա տուն ակաբոր, հյուրասիրում ա, վերջը
իրիկուն որ սկսում ա մթնի, քիրն ասում ա.-
Միսպեր, վե կաց քեզ պահեն, որ կել կյա, քեզ
ուտի ո՛չ:

Պերում ա ակաբոր պահում: Եփոր կել կյա-
լիս ա նստում ա, կընգան ասում ա.- Մեր տա-
նից մարդու՝ խանի ֆոտ ա կյալի:

Ասում ա.- Սարերից ես կյալի, ծիրերից ես
կյալի, մարթ-մարթաֆոտ մեր տանից ե՞ս առ-
նում:

Սխչկա տեղ որ նեղընում ա, ակաբեր աս-
ում ա.- Բա բալի մի օր իմ ակաբերներից
մինն ա կյալի, ո՞նց կանես: Սարից տու ես
կյալի, ծիրից տու ես կյալի, մարթ-մարթաֆոտ

մեր տանից ե՞ս առնում:- Հետո ասում ա.- իմ
ակաբերներ որ կյա՞ն ըստի, բա ո՞նց կանես:

Ասում ա.- Եթե քու մեծ ակաբեր կյա, քու
միջնակ ակաբեր կյա, տրանց շաղ կտամ: Եթե
քու պզտիկ ակաբեր կյա, իմ կըլխի վրեն կըն-
թունեն:

Ասում ա.- Պզտիկ ակաբերս ըստեղ ա:

Քյանմ ա ակաբոր հանում պերում:

Ասում ա.- Ի՞նչ կա, ի՞նչ չկա,- կելն ա հըրց-
նում:

Թե ասում ա.- Բա կնիկս փղխցրել են տա-
րել:

Կելն ասում ա.- Բա էրեզ ճաշին ես տեհա
դեվե Դասաթին՝ մի կնիկ ծիու վրա նըստըր-
րած քյեր:

Էտեղ մնում ա, նոր էքսի օրը կելն ասում
ա.- Քյանմք իմ բաջանաղ արջի կուշտ, մա ին-
ձանից ճարպիկ ա, տե՛նանք ի՞նչ կորորչի:

Էտ ա կել տանում ա արջի տեղ շիանց ա
տալի ու թող ա անում հետ ա կյալի: Միսպեր
քյուն ա միջնակ քվոր քյանում: Իրիգունը
արջը ֆորս վե կալած կյալիս ա տուն: Որ
նստում ա, կընգան ասում ա.- Մարթ-մարթա-
ֆոտ ա կյալի մեր տանից:

Ասում ա.- Սարից տու ես կյալի, ծիրից տու
ես կյալի, մարթ-մարթաֆոտ մեր տանից ե՞ս
առնում:

Մի քիչ որ մնում ա, էլի արջ կրկնում ա.- Այ
կնիկ, մարթ-մարթաֆոտ ա կյալի մեր տանից:

Էտ կնիկը ասում ա.- Բա բալի մի օր իմ
ակաբերներ եկան մեր տուն, ո՞նց կըլի:

Ասում ա.- Եթե մեծ ակաբեր կյա, միջնակ
ակաբեր կյա, կուտեն կըվերջընեն, իսկ եթե
պզտիկ ակաբեր կյա, իմ կըլխի վրա տեղ ունի:

Թե ասում ա.- Միսպերս եկել ա ըստի:

Թե ասում ա.- Քյանմ հանի պի:

Ուտում են, խմում են, արջ հըրցնում ա, թե.-
Ինչի՞ ես ման կյալի:

Թե ասում ա.- Իմ կին փխցրել տարել են,
հետևուց ման եմ կյալի:

Արջը ասում ա.- Էրեկ տեհա դե Դասաթին,
մի կնիկ իրա հետ ծիուն նստած քյեր, էտ կը-
լի:- Արջը ասում ա.- Սմուռ դուշ մեզանից խե-
լոք ա, քյանմք նրա կուշտ, տե՛նանք մա ինչ
խորուրթ կտա:

Արչը տաճուն ա Սմուռ դուշի տեղ շիանց տալի ու հետ ա կյալի:

Եփոր քյնըմ ա փոքրիկ քվոր տուն, Սմուռ դուշ Փորսի քյնցած ա ըլել, իրա քիր կենդու տանն էր: Ուտըմ են, խմում են մինչև իրիզվան դեմ, քիրը ասում ա.- Ախպեր ջան, վեր կաց քեզ պահեմ: Սմուռ դուշ որ կյա, ո՞վ գիդա քեզ ի՞նչ կանի:

Սմուռ դուշ իրիզում տուն ա կյալի, մի քիչ ցատում ա, ասում ա.- Մեր տանից մարթ-մարթաֆոտ ա կյալի:

Կնիկ ասում ա.- Սարից տու ես կյալի, ծուրից տու ես կյալի, մարթ-մարթաֆոտ մեր տանից ե՞ս առնում: Էլի Ախչիկն ասում ա.- բա բալի մի օր իմ ախպերներից միսն եկավ, բա ո՞նց կըլի մեր պանը:

Ղուշը ասում ա.- Եթե մեծ ախպերըտ եկավ, կամ միչնակ ախպերըտ եկավ, կտամ հրոպեական կվառեմ, իսկ եթե պստիկ ախպերըտ եկավ, իմ կըլիսի վրա տեղ ունի:

Թե աքըմ ա.- Ախպերս ըստեղ ա:

Ախպորն ասում ա.- Ինչի՞ ես ման կյալի:

Ասում ա.- Իմ կնիկ փղիցդել են, իմ կընկան եմ ման կյալի:

Ասում ա.- Էրեզ ճաչին ես տեհա դե Դասաճորին, ծիու վրա ցատած քյնըմ էր:

Ղուշը տանըմ ա էտ դե Դասաճորի տուն շիանց ա տալի: Զյնում ա ինչ-որ մի հեթի տակին, կնիկը ընդեղ ա, իսկ էտ դեղ քյնցած ա ֆորսի:

Կընգան ասում ա.- Վեր կաց քյնանը:

Կընգան վեր ա ունըմ տընըմ ծիու վրեն ճանապար ընգնում, որ պիրի հայրենիք:

Հիրիզում դե կյալիս ա տուն, մի լավ հրեղեն ծի ա ունենում, ծիու անուր Կալենքթաճուռ ա ըլում: Տենում ա տան մարթ չկա, կնիկ չկա, քյնում ա ծիուն ասում.- Ուտենք, խմենք մոր քյնանը, թե՞ հանգստանանք մոր քյնանը:

Ծին ասում ա.- Կերել, խմել, քնել մի երկու ժամ, ես մրան կըփռենեմ:

Էն ա ուտում են, խընում են, հանգստանում են, Կալենքթամուդին ցատում ա դեղ, քյնում են ծոտանում են: Մտիկ են անում տենում են՝ դե կյալիս ա, կընգան ասում ա.- Էս ա դե եկավ, ինձ կապանի, որ ինձ սպանի, իմ ջանդակ կըտընես ծիու վրա՝ ինձ կտանի:

Դե հասնում ա էտ մարթու կյլիս կտրում ա: Էտ կնիկ պերում ա տընում խուրջին միչին, տընում ծիու վրեն ու ասում ա.- Զյնան:

Դեղ արթեն կնիկ հետ պերուց իրա տուն: Էտ ծին էլ էտ ջանդակ վեր կալավ տարավ կելի տուն: Քիր տուս եկավ տեհավ ախպոր ջանդակ ծիու վրա, սպանված, եկավ իր տուն: Քիր լաց ըլավ, ախպեր ա էլի, մինչև իրիզում կելն եկավ: Իրիզում կելն եկավ քյնաց արչին էլ, Սմուռ դուշին էլ իմաց արավ, եկան մի տեղ խորիթակցեցին:

Էտ Սմուռ դուշն ասաց.- Մենք կարալ չենք էտ դեկից կընկան գոռով խլենք, մա ուժեղ մարթ ա, իրան ծին էլ հրեղեն ա,- Սմուռ դուշն ասաց.- ես կքյնամ անմահական ճուղը կըպերեմ, և մեր հաներոջ կըսըղենենք:

Սմուռ դուշ քյնաց մյուս օր անմահական ճուղը պերուց, կյլիս տըրին իրա տեղ, ճուր քսեցին, էտ մարթ սողացավ: Էտ Սմուռ դուշ իրա հաներոջ ասաց.- Մենք գոռով կարալ չենք քու կնիկ տտեղեն հանենք պիրենք, մա էտ ծին որ ունի, էտ ծին հրեղեն ա, ոչ մի մարթ կարալ չի մրան հասնի:- Էտ ախպորը Սմուռ դուշ ասաց.- Տու քյնա էլի էտ Դասաճորի տուն քու կընգա մոտ, քյնա ասա քու կընգան, որ խռովի, հաց մի չինի, ասա. «Էտ ծին որտեղի՞ց ես պերել տուն»:

Էտ մարթ քյնում ա Դասաճորի տուն, իրիզում կընիկը ըտրան պահում ա ու իրա կընգան պահ ա տալի, որ ոչ մի պան չանի, խռովի ցստի ու ասի, թե՞ էտ ծին որտեղից ա պերել: Կընիկ էտ օրը խռովում ա, ոչ հաց ա չինում, ոչ մաքրություն ա անում: Դե իրիկուն կյալիս ա խոսում ա, պատասխան չի տալիս, ոչ մի պան պատաստ չկա, ոչ՞ ուտելիք, ոչ՞ խմելիք:

Ասում ա.- Էտ ի՞նչ ա էլել, ի՞նչ չի էլել:

Կիկն էլ ասում ա.- Պերել ես ինձ տըրել եստեղ, ոչ խոսող կա, ոչ ասող կա, ոչ լսող կա:- Ասում ա.-Բու սրտին, տու ինձ ասա՝ էտ ծին տու որտեղի՞ց ես պերել, էտպես կտրիչ ծի, էտպես դոչաղ ծի:

Էտ դեմ ասում ա.- էտ ծին օվկիանոսից, քառասուն տիկ կինի տարել եմ, ծովափին քարե մովեր կա, ածեր եմ մովերը էտ կինին, ծովի միչից հրեղեն ծիան եմ տուս եկել, էտ

ծիան ծովից տուս են եկել, էտ կինին խմել են հարփել են, սըրան փըռնել են պերել, սրա մեծ քիրն էլ տեռ էտ ծովում կենում ա:

Արթեն ծիու տղեն ասաց, մարթեն էլ ընդիան լըտում ա: Առավոտ դև Դասաըը էլի ֆորսի քյնաց: Սընաց կընիկ ու իրա մարթուն պատմեց, որ ծին այսինչ տեղից ա պիրել: Էտ մարթը վե կցավ քյնաց փեսաների կուշտ՝ արչի, կելի, Սմուռ դուշի: Էտ մարթը քյնաց ասեց.- Ծին այսինչ տեղից են պերել, ըսենց, ըսենց:

Պատմում ա տղրանց: Էտ Սմուռ դուշ պահ տըվուց արչին և կելին, կելին ասեց.- Տու քառասուն տիկ կինի կըպիրես:

Աշուընք ա ըլում խաղողի ժամանակ:

Արչին էլ ասաց.- Տու քառասուն ոչխարի տըմակ կըպիրես, որ ճանապարհն քցիլ դենք՝ կյազաններ ուտեն, որ թույլ տան քյնացը:

Առավոտ կելն էլ, արչն էլ պերուց, ու Սմուռ դուշը վերցուց էտ քառասուն տիկ կինին էլ, էտ քառասուն տըմակն էլ, էտ մարթեն էլ՝ իրա հաներոջ ու տարավ ծովի դրաղ, որդի որ դեը ասել ա: Էտ տըմակ արթեն ճամփեն մսիտեցին, տվին կյազաններին ու անց կացան ծովի կըրաղ, էտ կինին լցրին էտ քարերի կոների (դերեր) միչին, ու էտ Սմուռ դուշը էտ եկավ, էտ մարթը մնաց ընդեղ, քաքըվեց: Մի ժամանակ էտ մարթը տեհավ, որ մի քանի ծի էտ ծովից տուս եկան, եկան էտ կինին խմեցին: Ե-փոր հարփեցին, էտ ծիան իրանց շաղեցին, էտ մարթ տուս եկավ մի ծիու փռենց ու ընստեց:

Ծին ասեց.- Այ խսան, էտ ի՞նչ ես չինում:

Թե ասավ.- Ես քու տերն եմ:

Ծին քշեց եկավ: Եկավ դի տուն՝ իրա կընկա մոտ: Կընգան ասեց.- Դե վեր կաց:

Երկուսն էլ նստան ծիուն ու տուս եկան փախան: Իրիգուն դևն եկավ տեհավ՝ կնիկ չկա տուն, պան չկա տուն: Քյնաց էլի Կալենքթամուշին հըրցուց.- Ուտենք-խմենք, նոր քյնացը, թե միի քյնացը:

Կալենքթամուշը ասեց դիին.- Որ ուտենք-խմենք նոր քյնացը, հասնիլ չենք, միի էլ որ քյնացը, հասնիլ չենք:

Դև քշեց քյնաց, մոտացավ, որ մոտացավ, էտ ծիու քիր տառավ տեսավ՝ ախպեր՝ Կալենքթամուշ, կյալիս ա:

Ծին ասեց.- Էնպես տափով կտաս էտ դիին, որ կտորներ հվաքվիլ չի:

Ծին դիին տափով տվուց կտոր-կտոր արավ, սպանեց էտ դիին: Վերջը էտ մարթ իրա կնիկ պիրուց, հասան իրանց մուրազներին:

14(14). ԴԵՎ ԱՆՉԿԱ ՇԱԲԻՔԸ

Մի մարթ էլ իրեք տղա ունի: Տղերանըը վասյաթ ա անըմ մահանալու ժամանակ, որ ասըմ ա.- Որդեղ ֆորս քյնաց՝ քյնաց ոչ, ուրեմը Ուազվի¹ վրա քյնաց ոչ:

Վերջը մարթը մահանըմ ա, մեծ տղեն ասըմ ա.- Ի՞նչ կար ընդեղ, որ մեր հերը վասյաթ էր անըմ, որ էն կողմի վրա քյնաց ոչ:

Վեր կալավ մի հինգ հոքի իրան հետ, ծիանը նստեցին, վե կցան քյնացին: Քյնացին, քյնացին տեսան մի դաշտի մեջ մի շենք շինած՝ չորս կողմը յոնջեն կոխած: Տարան ծիանը էտ յոնջի միչին բրախեցին, իրանք մտան հայաթը, ոչ ով չկա, բայց հինգ հոքու բաժին սեղանին տրած, բուղը ծուլ ա ըլըմ, տաք կերակուր ա: Դա՛, մտիկ արին տեսան ծիանու կորնը պաղրաստած՝ ախոըըմ: Պիրին ծիանը կորմի վրա կապեցին, իրանք եկան նստեցին, էտ ճաշերը կերան ու իրանք էլ շաշվեցին, ծիանն էլ շաշվեցին, ընգան էտ չուրը:

Ժամանակ անց կցավ, մի քանի վախտ, էտ մարթիքը եկան ոչ, միչնակ ախպերն ասեց.- Մի ես քյնաց տեսամ մի ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Վե կցավ տա էլ մի հնգերի վե կալավ, երկու հոքով ծիանուն նստեցին քյնացին: Քյնացին, մտիկ արին տեսան էտ շենքի չորս կողմը ըլետ տեհեց կանաչ, էտ մարթիք էլ ցնորված ըտեղեք ման եկ կյալի էտ դաշտըմ, ծիանն էլ բրախած:

- Ես ի՞նչ պան ա, էս ի՞նչ պան չի:

Քյնացին շենքը ըլետ ման կյալու, մտիկ արին տեսան՝ էրկու ծիու կորնը էլ պատրաստած, էրկու մարթու կերակուրն էլ: Տրանք էլ կերան, տրանք էլ՝ տեսնը եղան:

¹ Ուազլուն (այժմ Դիտավան) գյուղ է Իջևանի շրջանում, որը Այգեհովիտից 2-3կմ հարավ է գտնվում: Բանասացը հեքիաթում օգտագործում է թե՛ իրեն և թե՛ բանահավաքին ծանոթ տեղանուն (ծանոթ. բանահավաքի):

Վերջը անց կցավ մի քանի ժամանակ ըլետ
էտ պուճուր ախպերն ասեց.- Ա՛, ախպերտիմ-
քս քյնացիքն ետ չեկան, մի վե կենամ եմ քյնամ,
տենամ ի՞նչ եղավ:

Վե կցավ ինքը կենդու քյնաց: Քյնաց տե-
սավ, որ մի մարթու կերակուր էլ պաղրաստ,
մի ծիու կորմն էլ պաղրաստ: Ասեց.- Ըտեղ մի
պան կա, էս մարթիքն էլ, որ սիենց դաշտերը
իրանց համար կանանչ ուսիլով ման են կյա-
լի, ըստեղ մի պան կա, մի սպասեմ տենամ էս
ո՞վ ա էս պանը պաղրաստել, որ սիե պաղ-
րաստ ա, ու ինքը կա ոչ:

Նստեց ըտեղ, ծիւն էլ հեռու կապեց: Եկավ մի
ղև:

- Տու ո՞վ ես, ինչացո՞ւ ես, քանի՞ կլխանի
ես: Տենըմ ես իմ շենքի տ պատերը բութուն
մարթի կլլուխ ա, տու քանի՞ կլխանի ես, տու
որ եկել ես էտ բաժինը կերել չես:

Թե ասըմ ա.- Ուզըմ եմ բաժին պաղրաս-
տողին տենամ, հետո բաժինն ուտեմ:

- Բաժին պաղրաստողը ես եմ, հմի տենըմ
ե՛ս ինձ:

- Դա՛:

- Բա խի՞ չես եկրել:

- Կերել չեմ:

- Դե որ կերել չես, պետք է կոխ փռենք,
եթե տու հաղթեցիր էտ ա իմ վիզը կկտրես,
եթե ես հաղթեցի, քու վիզը կկտրեմ:

- Դա՛, կոխ փռենք:

Կոխ փռեցին: Առավոտից մինչև ըրուգուն
հա՛յ դես, հա՛յ դեն, կոխ են անըմ ըրզնաթե-
մին ուրեմը էտ դեը տենըմ ա, որ իրան հաղթիլ
դի էտ տղեն, վեր ա ընգնըմ:

Դա՛, որ տղեն վեր ա քցըմ հա՛, տա դիշը
պանց ա անըմ, տղեն տենըմ ա՝ կնիկարմատ
ա, կռները բռնանըմ ա, էլ վիզը կտրըմ չի էլի:
Կռները որ բռնանըմ ա հա՛, ծեռիցը տուս ա
պրծնըմ ու, ըտեղ մի ճըղացի քար ա ըլըմ, էտ
քարը պրցըցնըմ ա ու ընգնըմ ա էտ քարի
տակը, քյաց կորավ: Տղեն մտածըմ ա, մտա-
ծըմ ա.- Ի՞նչ անեմ, էս ի՞նչ պան էր, էս ի՞նչ
հնար էր:

Պիրըմ ա էտ քյնացած մարթերանց ծիա-
նու նոխտեն, քյանդիր ա, դես ու դեն, իրանն
էլ հետը, իրար ծերա ա անըմ, իրարից կապըմ

պնդըցնըմ, ասըմ ա.- Ես եղենե քյնալ դեմ,
տենամ սա ի՞նչ էր, էս որդի՞ քյնաց:

Պիրըմ ա էտ քարը մի կերպ դրաղ անըմ ու
քյանդիրը կախ անըմ, քյանդիրը ը վեր կա-
մաց դվերըմ: Դվերըմ տենըմ մի ախչիկ ըրեք-
նակին ասըմ ա. «Տու տուս մի կյալ, ես էն ա
կամ ու կամ»:

- Այ տղա, բա ես քու ծեռիցը փախա ըս-
տեղ հասա, տու ո՞նց ես եկել ինձ հասել:

Թե ասըմ ա.- Եկել եմ էլի:

- Դե որ եկել ես, ուրեմը տուս կյանց իրա-
րու հետ ապրենք:

- Դե տուս կյանք:

Տուս եկան ըտեղ իրարու հետ ապրըմ են:
Մարթը կարքադեց, որ դե ինչ արել ես՝ արել,
էտ մարթկերանցը առոխչացրու, քյնան իրանց
գործին:

Տիանց էլ կանչեցին առոխչացրին ճամփու
տրին ու տիանց մնացին մարթ ու կնիկ ըտեղ:
Ամեն օր ֆորս անըմ ա տղեն, ու պիրըմ են ու-
տըմ, ըտեղ էլ ապրըմ:

Դմի էտ կնիկը ամեն սենյակը ցույց ա տվել
մարթուն, մի սենյակ տուռը պանց չի անըմ: Ա-
սըմ ա.- Ըստեղ ի՞նչ կա, որ տուռը պանց չես ա-
նըմ: Բա վերջը մարթ ու կնիկ ենք, որ մի պանը
որ գիղենեք ոչ, էլ ընչի ենք պետք:

Թե ասըմ ա.- Դենց պան ա, որ տու տենալ
չղես:

Էտ կյնգա շաբիքն ա, որ հաքնըմ ա, դուշ ա
տառնըմ թռչըմ ըտեղ: Կնիկը քնած ժամանա-
կը մարթը պլանիքը վեր ա ունըմ թաքուն քյ-
նըմ տուռը պանց ա անըմ թե չէ, տա՛ էտ շա-
բիքը, տուս ա պրծնըմ հա՛ թռչըմ: Կնիկը քնըմ
ա, մի թուշըմ վեր ա կենըմ տենըմ արթեն ի-
րան գոյությունը կա ոչ: Քյնըմ ա սենյակը պանց
անըմ տենըմ՝ կա ոչ: Էլ մարթին պանց չի ասըմ,
մարթն էլ պիրել ա թաքուն պլանիքը ըլետ
իրան տեղը տրել: Էլ պան չի ասըմ տա՛ տիենց
իրան մտքի հետ ընգնած:

Էտ շաբիքը, ասենք թե, թռել ա քյնացել
Վրաստան, վրաց հողընը վեր ընգել: Ըտեղ էլ
վրաց թաքավորի տղեն ֆորսի ման կյալու
ժամանակը տենըմ ա՝ ինչ-որ մի գեղեցիկ շորի
կտոր ա, ու աշխարիս միջին ինչ որ էն ծաղիկ
ու գույն կա՛ տրա վրա: Ասըմ ա.- Ես իլե լավ

պանն ա, տանենմ մեր պալատընը սհե պանն չկա կախ անենմ, հլե ըշեր-ցիրեկ լիս տա:

Տանըն ա, տանըն ա: Օրերի մի օր մի պը-ռավի հետ գրից անըն ա, ասըն ա.- Նանի, բա սհե պանն ենմ թթել, գիղըն չենմ, թե նա ինչ ա: Պիրեկ ենմ պատիցը կախ արեկ, ըշեր-ցիրեկ լիս ա տալի:

Պառավ նանը կալիս ա տենընմ, ասըն ա.- Տա, ասըն ա.- այսինչ թաքավորի ախչիկն ա, այսինչ տեղն էլ վերջապես հող ունի, տեղ ու-նի, վերջը իրան համար շենք ունի: Նրան շա-բիքն ա, որ նա թռչըն ա տրանով, դուշի նման թռչըն ա:

- Բա ո՞նց կանենք, որ ես ախչիկը ինձ միայն պիրես:

Թե ասըն ա.- Եթե իմ ասածը կատարես՝ ես կալիրենմ:

Ասըն ա.- Հա, ասա տենանք:

Թե ասըն ա.- Ինձ միայն մի երկու տըռնա-նոց կարաս ես պաղրաստըն, ուտելիքը սար-քընմ, պերանին էլ մի սեկրետնի գործ, որ ես նրան պաղանիլը-փակիլը մեջ դուրսը գիղե-նամ: Կարասն ենմ մտընմ ու քյընմ ենմ էտ ըխ-նկանը պիրընմ, որդեղ... Ժովի էս դուլեն ա, էն դուլեն ա, պիրընմ ենմ:

- Լավ:

Պիրավ էտ գործը տհե կատարեց, պառավը մտավ կարասի մեջը, սեկրետը քցեց, թռչնչ տվին ծովը քցեցին: Ծովի ալիքի հետ եկավ, մի վախտ ժած եկավ, տեհավ, որ կարասը ժած չի կալի, ուրենմ վերջացավ, եկել ա, դրաղն ա տուս եկել: Տուռը պաղ արավ տեսավ, որ ար-թեն եկել ա դմին դեն առել՝ դրաղին: Կարասը պնդորեց ըտեղ ու ինքը կալիս ա, որ էտ պա-նը քյընիլ դի էլի:

Կալիս ա, էն ա էտ տղեն քյընացել ա ֆորսի: Ֆորս արած, կալիս տեղը տենընմ ա մի պա-ռավ իրեն լըքալեն քյընմ ա:

- Այ նանի, որդեղացի՞՝ ես, որդե՞ղ ես քյընմ:

- Ղարիբ տեղացի ենմ:

- Բա, էտ ո՞ւր ես քյընմ:

Թե ասըն ա.- Քյընմ ենմ էլի, աշխարիցը կորած քյընմ ենմ:

- Բա էտ հլե լավ պան ա, մենք մարթ ու կնիկ ենք, ո՞չ ըրեխա ունենք, ո՞նչ հեր ունենք,

ո՞նչ մեր ունենք, մի ասող-խոսող չունենք, քյ-նանք մեզ համար մեր ես, համ ըրեխու տեղ:

- Հա, դե բալա քան:

Հմի էտ մարթը ուզըն ա, որ պառավին փռնի թարքին տնի, որ հետը պիրի, ծին իմաստուն ա էլի, ծին մոտ չի տալի, որ էտ պառավը վատ պառավ ա: Հա, քանի նա ուզըն ա մոտանա, ծին փռեցընմ ա տուտուզը շուռ տալի ու էտ պառավին քացի տալի:

Վերջը ասըն ա.- Բալա քան, ծիտ մոտ չի տալի.- ասըն ա.- տա հլեի պան ա գիղըն,- ա-սըն ա.- քյընա, ես ոտով կկռնմ, քյընա:

Հա՛ տղեն կալիս ա տուս հասընմ, կյնգանը պատընմ, որ սհե մի պառավ էր, ծին մոտ չտ-վուց, թե թարքիս ի տրեկ պիրեկ, թե կկռն, թե կյալ չի, գիղըն չենմ:

- Բա խի՞՝ չիր պիրընմ, գրիցընգեր ա, դես-դեն:

Հա մի թուլըն տենըն են՝ պառավը եկավ, ե-կավ հասավ: Եկավ հասավ, հա ախչիկը պի-րըն ա լղըցընմ պառավին, մաքըն վերջապես, պաղրաստըն ուտիլիքը, տալի:

- Վա՛յ, նանի քան, էտ ա լավ ա, մեզ համար մեր ես, ո՞չ ես մեր ունենմ, ո՞չ նա մեր ունի, ը-րեխա չունենք, պան չունենք, մեզ հետ գյափ-հնգեր ես:

Սի շափաթ, երկու շափաթ պառավը մընմ ա, մի օր ասըն ա.- Խի՞ չես մարթիտ ուժը ի-մանընմ, թե ինչընմ ա:

Թե ասըն ա.- Ի՞նչ իմանամ ինչընմ ա:

Թե.- Հա, հրքորու տես մարթիտ ուժը ին-չունմ ա էլի, որ էտքան ուժը, էս քանի տարի տուս ըստեղ գործ ես կատարել, տա ուժ ա ու-նեցել քեզ հաղթել, քեզ առել, ուրենմ տրա ուժը իմացի:

Դե մարթ են, կնիկ են էլի, վերջը:

Ասըն ա.- Այ մարթ, քու ուժը ինչընմ ա, որ տուս ինձ կրացիր... հաղթեցիր էլի:

Թե ասըն ա.- Իմ ուժը իմ թրի մեջ ա: Եթե թուրս հանենմ, էն թուրը մի տեղ քցենմ, դուրըն մի տեղ քցենմ, ես գոյութուն չեն ունենա, կա-րող ա մի տարի էլ տեղը տնուղ չըլի, ես նիե քնած մնամ:

Ըռավտը պառավին ախչիկը պատընմ ա, թե ասըն ա՝ սհենք:

Քնած ժամանակը՝ տիանք քնած ժամանակը, պառավը վեր ա կենըմ թուրը հանըմ ա մի տեղ քցըմ, էն դուլը մի տեղ քցըմ ու ընչկանը ասըմ.- Ախչի, սոր քնածը, տանենք ծովի դրադին վազք անենք:

Ասըմ ա.- Բյնանք:

Վեր են ունըմ լավ-վատ, շոր են վեր ունըմ, անց կենըմ քյնըմ էտ կարասի թուշը հասնըմ: Կրասիցը մի քիչ հեռու: Հա՛ պառավը լավօտալ կրակ անըմ ա:

- Դե, ախչիկ ջան, քյնա ընդեղից չոր ու չոփ արա պի՛ կրակը կըռցենք, ճուր տքցենք:

Ախչիկը քյնըմ ա ու փախած կյալի, մա էլ էտ տեսակ պան տեսած չի, փախած կյալի: Ասըմ ա.- Էտ ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Ընդեղ հրե ծովիցը մի պան տուս ա կյալի՝ ըռեխը պոց արած, վիծա մրա-նի: Էտ ի՞նչ ա, էտ ի՞նչ պան ա:

Դե պառավը գիղըմ ա իրան գործը: Տղեն էլ քնեց, հա՛ թող քնած մնա: Վերը ասեց.- Բյնանք տենանք մի էտ ի՞նչ պան ա, որ տու տրանից վախըմ ես:

Վե կցան քյնացին:

- Վա՛, բա սրանից մարթ կվախի՞, էս սովորական, մենք կինի ենք ածըմ, թոու ենք տնըմ, կարաս ա էլի:

Թե.- Չէ՛ ես վախըմ եմ:

- Դե վախըմ ես, մտիկ արա տես ես ո՞նց եմ մի մտնըմ, տյուս կյալի:

Պառավը մի մտավ, տյուս եկավ:

- Բա սրանըմ ի՞նչ կա, որ վախըմ ես:

Որ պառավը մի մտավ, ասեց.- Տուս էլ արի, տուս էլ արի, իրար հետ տուս կկյանք, էն վախտը վախիլ չես:

Ախչիկն էլ որ մի մտավ, սեկրետը քցեց, հա՛, հու՛, էլ որդեղ: Կարասը տեղըհան ը-լավ, կարասը թող քյնա: Շատ քյնաց, թե քիչ քյնաց կարասը, մի վախտ պառավը ըլետ ի-րան թափահարեց, տեհավ կարասը էլ ժած չի կյալի, սեկրետը պոց արավ տեսավ, որ արթեն մի էլ էն դուլն ա քյնացել: Տուս եկավ, վե կալավ տարավ թաքավորի տղի մոտ, ասեց.- Բու ուզածը պիրել եմ:

Էս տանիլու օրեց էտ ախչիկը սկսեց.- Վա՛ իրվեցի՞ հա իրվեցի՞, իրվեցի՞ հա իրվեցի՞:

Ի՞նչ անեն. էրվըմ ա՛ կրակ ընգած, շափքը ընդեղ կախ արած, ինքն էլ ասըմ չի, միանք էլ գիղըմ չեն:

Հա՛, թաքավոր էր էլի, կարքադրեց ծովից վեդրով ճուր կրեն վրեն ածեն: Ժողովորթը, օ-չերեղ կաղնած, միներ մնի տալով՝ վեդրոն հասնըմ ա տնորտակ ծովը, լիքը կյալի վրեն ածըմ, մա ըլետ կանչըմ ա.- Էրվեցի՛, էրվեցի՛, էրվեցի՛:

Թող տա էլ ըտեղ էրվի:

Խաբանը տանք տղիցը: Տղեն շատ էր քնել, քիչ էր քնել, տիանք տանը լավօտալ մոքոր ունին, ասեց.- Խազեյինիս տղեքը քյնացին, եկան ոչ, էտ պուճուրն էլ միանք եղնա քյնաց, քյնած տենամ էտ ի՞նչ էր, էտ ի՞նչ պատահեց էլի:

Եկավ: Եկավ էտ հայաթին թուշ ըլավ, դեմ մտիկ արավ, դեմ մտիկ արավ, վերջը ըտի ման եկավ էտ հայաթի միջին, վերջը քյնաց տեհավ, որ խազեյինի տղեն փառավոր քնած: Ծեն տվավ, ծեն տվավ, տեհավ զարթըմ չի, տա տրա գաղտնիքը գիղըմ էր, էտ մոքորը ասեց.- Ով գիղի թուրը հանած ըլեն ա՛:

Դե-դեն մտիկ արավ, տեհավ թուրը մի տեղ ընգած, դուլը՝ մի տեղ: Պիրավ էտ թուրը որ տեղը տրավ հա՛, տղեն զարթեց, զարթեց տեհավ՝ իրան մոքորը:

- Արա՛, ընչի՞ ես ման կյալի

Թե ասըմ ա.- Եկել եմ էլի, էս քանի տարի ա եկել ես, խաբար-աթար չկա, եկել եմ տենամ ի՞նչ ա:

- Դե լավ ես արել եկել ես, որ եկար, էս տա-նը մի հարսն էլ կար, մի պառավ էլ, տեսա՞ր:

Թե ասըմ ա.- Չէ՛, եկա տեսա՛ քնած ես, ինչ-քան ծեն տվի, տեհա՛ զարթըմ չես, ուրեմը, մտածեցի, որ թուրտ հանած դեն ըլիլ, թուրը տեղը տրի, էտ ա զարթեցի:

- Ը՞դ, պառավն արավ, տարավ: Ես աշխա-րիս տակին ըլի, կըլխին ըլի, պռավին պետք է քյնենմ, վերջապես էտ կյնգոն էլ պետք ա քյ-նենմ:

Վե կալավ ծի մտեց, ճամփա ընգավ: Շատ քյնաց, քիչ քյնաց, ճամփին մտիկ արավ տե-հավ՝ իրեք հոգի իրար հետ կռիվ են քցըմ: Բյնաց մոտացավ:

- Բարև ծեզ

- Բարև:

- Տղեք, ես ընչի՞ եք կոչվել քցո՞ւմ:

Թե ասըմ ա.- Իրեք հոգի ենք, եկել ենք իրեք կտոր պան ենք քթել, ետ իրեք կտորն էլ, որ իրար հետ չըլեն, գործողություն չեն կատարի:

- Հա՛, ետ ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Մինը փափաղ ա, որ հազար մարթի միչի կլխիտ տնես, ըրալ չես, ետ մինն էլ ծեռնափետ ա, ետ մինն էլ խալիչա ա: Ուրեմը փափաղը կլխիտ տրիր խալիչին կաղնեցիր, փետով տվիր՝ երգարանք իրետովը կթռչես կքցո՞ւս:

- Հա՛: Հա՛, դե էն վախտը եկե՞ք.- ասըմ ա.- ես մի պան ասեմ մեծ արեք, ու ծեր գործը հա՛ հեշտ կըլի:

- Հա՛, ի՞նչ ա:

Թե.- Քյանցեք էն յալընը կաղնեցեք, ետ ծեռիս ասեմ՝ ո՛ւմ, ով ասեց շուտ՝ ի՛նձ, ուրեմը նրանն ա, էլ դըլմըղալ չանեք: Ով շուտ ասեց՝ ինձ, թող իրեքն էլ էն մարթին ըլի:

- Հա՛, ա՛յ դուզ պան ա ասըմ, լավ ասըմ ա:

Տիանք որ քյանցին, մինչև յալը հասնիլը ինքը փափաղը կըլխին տրավ, խալչին կաղնեց, փետով տվավ, թռավ քյանց, ծին մնաց ըտեղ կաղնած: Քյանցին յալը տուս եկան, ետ մտիկ արին տեհան, որ օքմի չկա:

- Վա՛յ ծեր տունը շինվի, ուրեմը տարավ:

Էն մի հնգերն ասեց.- Տիանդամին թե տարավ, գոնե ծին թող ա արել, կտանենք մի տասնհինգ մանեթի կծախենք, ամենքս հինգ մանեթ վե կունենք, բա էն ի՞նչ դինք անիլ, իրարից որ քցել ինք, մինը մի գոյություն չունեն:

Տղեն քյանց, շատ քյանց, թե քիչ քյանց, քյանց մի քաղաքի դրաղի մտիկ արավ տեսավ՝ ժողովուրդը օչերեղի կաղնած ճուր են կըրծ:

- Ա, ետ ի՞նչ պան ա:

- Բա՛, թաքավորի տղեն մի հարսն ա պիրել, ետ քանի ամիս ա քչեր-ցիրեկ հարա ա տալի. «Էրվեցի՛, էրվեցի՛»: Ծովընը ճուր չմնաց, կըրծ են վրա տալի, ասըմ ա. «Էրվեցի՛»:

Քյանց ա մի արտել, մի ա մտնըմ, կար ու ձև են անըմ էլի: Մինն ասըմ ա.- Հրեն մուշտարի եկավ:

- Փափաղը կլխին ա տընըմ, էլ ըրե՞րմ չի:

- Այ տղա, մուշտարիտ ի՞նչ ըլավ:

Փափաղը վեր ա ունըմ:

- Ա՛ իրե, հրեն չենքըմը:

Ըլետու կլխին ա տընըմ, էլ ըրե՞րմ չի: Մի հետ, երկու հետ տե՛ս փորցեց ու վերջը տեսավ տրանք գրից են անըմ:

- Էքուց էլ մեր արտելի օչերեղն ա, որ ճուր դենք կրիլ:

Հա՛, դիմաց ըլավ, թե ասեց.- Ծեր օչերեղն ա՞:

- Հա՛:

- Ո՞րոգ դոչաղ եք, որ կարաք, օրինակ, մի վեղրա ճուր հասցնեք նրան, որ մա հովամա:

Մինն ասեց.- Ես կտանեմ:

Ասեց.- Այ քցո՞ւմ մեղրի մեղը, մի վեղորո ճուր վեր ունըմ, ժողովուրթ են էլի, մինը ալի կասի, մինը վալի կասի, տու անգամ չանես, ճղեմ-ճղեմ անիլով կհասնես կտաս իրան, մա կասի հովացա ու քեզ կհարցնի, թե էտ տղեն որդեղ ա, ետ մատանին տվող տղեն որդեղ ա, էն վախտը կասես՝ որդեղ ա:

Մատանին քցեց վեղրի մեղը, եկավ մի կես վեղորո ճուր վե կալավ:

- Ա, տեղ տվեք, հա՛ տեղ տվեք:

Մինն ասըմ ա.- Ես վեց ամիս ա քչեր-ցիրեկ ճուր եմ կըրծ, ծովը ցմքըրել ենք, սա մի վեղրա ճուր ա տանըմ՝ տեղ տու: Ա՛, խի՞, մի վեղրա ճրու՞վ...

- Ա, ծեր գործը չի:

Մինն էլ ասըմ ա.- Տեղ տվեք էլի, բալբամ ջաներնուս ազատվի, տեղ տվեք էլի:

Վերջը ճամփա տվին, էտ մարթը հասավ տեղ, վեղրեն ուզեց ածի, մատանին աչքովն ընգավ, ասեց.- Ով՛, հովացա:

Դե հովացար, հովացար: Հա՛ տղին դրաղ կանչեց, ասեց.- Ես մատանին ո՛վ ա քե տվել:

Թե.- Սենեք մի տղա ա տվել:

- Որդե՞ղ ա:

- Տա մեր արտելընն ա, ասեց.- այսինչ փորցընը, քաղաքընը:

Հա՛, դե հովացավ, հովացավ: Արթեն ժողովուրդը քաշվեցին, ամենքը իրանց գործին քյանցին: Տիանք էլ, թաքավորի տղեն, մարթ ու կնիկ են: Ասեց.- Կարա՞ս ինձ համար կատու՞ն կարիլ տաս:

- Հա՛:

Յետո ասեց.- Ի՞նձ ամանաք կա քեզ մոտ, էն էլ տուր ինձ, քննանք էտ արտելը՝ զակազ տու ինձ միար մի կաստյում կարի:

Իրան շաքիքը վեր կալավ, գաղթերըմ փաթեց կոնտակին տրավ, քննացին: Արտելըմը, միի էտ տղեն մթամ թե մի ուրիշ անժանոթ տղա յա, հարսը տրա հետ գրից ա անըմ էլի: Թաքավորի տղեն էլ ի՞նչ ա գիղըմ, թե տա ո՞վ ա, ի՞նչ ա: Թե ասըմ ա.- Ա՛յ տղա, դե ես ի՞մ ամանաքը ծեռս եմ քցել, կարող եմ քյնամ էլի, թոչեմ քյնամ, բա տու ո՞նց կանես, քանի տա-րի կքաշի, որ կյառս հասնես ինձ:

Թե ասըմ ա.- Ես քեզանից շուտ կթոչեմ, տու կարըմ ես քյնմ:

Ախչիկը ըստեղ անց ա կենըմ մթամ թե շո-րերը փոխըմ ա, ընդեղ՝ շաքիքը հաքըմ: Յենց տուռը պաց եմ անըմ թե չէ, տուս պոժավ քյ-նաց: Տղեն էլ տուս ա կայլի խալիչին կաղըմ, փափախը կըլխին տըմ, փետով տալի թոչըմ կյալի: Երկուսն էլ կյալիս եմ արժանանըմ ըստեղ: Պառավը մըմ ա միե, էլ մի պանի տեր չի ըլըմ: Ուրեմը տրանք էտքան ծախսը ըլան: Էկան ապրեցին ըստեղ, միևնչև սոր էլ ապրըմ են:

15(15). ԹԱՔԱՎՈՐԻ ՊՈՒՆՈՒՐ ՏՂԵՆ ԷՆ ԴՈՒՆՅՈՒՐ՝

Մի թաքավոր իրեք տղա ունի: Ասըմ ա.- Տղերք, եկեք սոր կաղնեցեք իրեքտ էլ հրա-ցան կրակեցեք, որիտ գնդակը որդեղ վեր ըն-գնի, ընդեղից էլ ծեզ միար ախչիկ դեմ ուզիլ:

Եկան կրակեցին. միըմ Սևաթըմ վեր ըն-գավ, միըմ Աչաճըրըմ վեր ընգավ, էն մի՞նն էլ քյնաց կորավ, Զոի դրաղին վեր ընգավ: Յյնաց նրանը Աչաճըրիցը պիրավ, նրանը Սևաթիցը՝ պիրավ, էտ որն էլ որ քյնացել էր Զոի դրաղը, տա ասեց.- Միևնչև ես ի՞մ գնդակը քըքնեմ ոչ՝ որդեղ ա վեր ընգել, ես համգատանալ չեմ: Յյնամ:

¹ Յեքիաթն առաջին անգամ գրառվել է ձեռքով 1971 թ. Իջևանի շրջանի Այգեհովիտ գյուղում, բանասաց Ալբեկ Մուստամյանից (ծանոթ. բանա-հավաքի):

² Աչաճըր, Սևաթ - գյուղեր են Իջևանի շրջանում (ծանոթ. բանահավաքի):

Ման կյալով, ման կյալով՝ քյնաց Զոի դրա-ղին քյթավ: Ըստեղ փետից, քարից թուփ ա-րավ, սկսեց իրան միար մի լավօսալ տեղ շի-նիլը ու ապրըմ ա: Ո՞նչ կեղ կա, ո՞նչ քաղաք կա, ո՞նչ քար կա, ո՞չ ինչ կա:

Վերջը էտ մարթը ըստեղ ըստեց մի քյուլլանկ ա շինել միչին ապրըմ ա: Օրերի մի օրը, ֆոր-սի տեղից կյալիս տեղը, եկավ տեհավ մի աղ-վեսի պյուն կա, ու էս փեչի չափ՝ տեհ մի կտոր քյոթուկ՝ էտ պընի ղաքին վեր ընգած: Խի մի նիենց աչքին լավ քյոթուկ թվաց էլի: Ասեց.- Տանեմ ընդեղ ինձ մոտ վե քցեմ, հալքած մի պանի պետքը կկյա էլի:

Վե կալավ, ուսին տըրավ պիրավ ըստեղ վե քցեց: Ըռավտը վե կցավ, ֆորս քյնաց, ըրու-գունը եկավ տեսավ, ա՛յ մարթ, էտ տանը ինչ-որ շոր ունի, ինչ որ պան ունի, թափ տված, սարքած, ամեքը իրանց տեղը դասավորած, իրան տրած պանը չի էլի:

- Ա՛, էս ի՞նչ պան ա, էս ի՞նչ հրաշքն ա:

Մտածեց էս կողմը, էն կողմը, ասեց.- Ես պետք է տապ անեմ տեհամ՝ էս ինչ ա էլի:

Վերջը եկավ թաքնվեց ըստեղ, մտիկ արավ տեսավ՝ էտ քյոթուկը հետ քյնաց ու միչիցը մի ախչիկ տուս եկավ, սկսեց ըստեղ թափ տալը, պան սարքիլը, վերջապես ըստեղեք մաքրիլը: Յենց ուզեց, որ քյնմ քյոթկի մեջ մտնի, փեչի-ցը փռնեց:

- Դե էլ քյնալ մի, տու ինձ ես, ես՝ քունը:

Սկսեցին ըստեղ իրար հետ ապրիլը:

Խաբըրը հասավ թաքավորին, որ քու տղեն հրե Զոի դրաղին սիենց մի կնիկ ա ճարել, աշխարըմս նրա պետք կա ոչ:

- Բա ո՞նց կըլի, ես, թաքավոր ըլլիով, ես տիե կնիկ չունեմ, նա ո՞նց ա քյնացել Զոի դրաղին տիենց ճարել:

Տղին կաննեց, տղին կանչեց, ասեց.- Ես մացել եմ, որ տու սիենց լավ կնիկ ես ճարել:

Թե.- Դա:

- Դե պետք է ինձ միար պիրես:

- Դայրիկ, տիե պան կըլի՞:

- Կըլի, չըլի, պետք է պիրես:

- Դե հմի որ տու ծնող ես, տիե ես առա-ջարկըմ, ի՞նչ ասեմ:

³ Բանասաց Ալբեկ քեռն ցույց է տալիս իրենց վառարանը (ծանոթ. բանահավաքի):

- Կամ պետք է պիրես, կամ, առաջարկ եմ անձն, էտ առաջարկը կատարես:- Ասըմ ա: Թե ասըմ ա:- Ինձ միար թե կրացիր մի հետնց նու-
ռը պիրես, որ ամբողջ իմ քաղաքի ժողովուրդը ուտի, կեսն էլ մնա, ուրեմը, ազատ ես: Եթե կրացիր ոչ հա, էտ ա քու կնկը իմն ա, որ իմն ա:

Քյնաց՝ մտքի եղնա ընգած, մտածըմ ա: Կնիկն ասեց.- Ընչի՞ ես մտածըմ:
Թե ասեց.- Ի՞նչ հերը սիենց մի առաջարկ ա արել:

Ասեց.- Քյնաց, էն քյոթուկը որ էն պընի դա-
քիցը պիրել ես, ընդեղ կանչի. «Պապի՛, պա-
պի՛», պապը տուս կկայ, որ տուս կայ, կա-
սես.- «Ախչիկտ հիվանդ ա, նուռն ա ուզըմ»:
Նա նուռը կպիրի քե կտա, կտանես իրան
կտաս:

Տղեն վե կցավ քյնաց էտ պնի առաջին.-
Պապի՛, պապի՛:

Տուս եկավ:

- Չա՛, ի՞նչ ա:

- Ախչիկտ հիվանդ ա, մի նուռն ա ուզըմ:

Վե կալավ մի նուռը տվավ իրան, պիրավ
տարավ տվավ հորը՝ տղեն: Չերը կաղաղորեց՝
նուռը կտրեցին, քաղաքի մեծ-պուճուխը
կերան, կեսն էլ մնաց: Կանչեց ասեց.- Տրանով
պըծըմ չես: Ինձ միար մի խալըչա ես պիրըմ,
որ ամբողջ իմ քաղաքի ժողովուրդը նստի,
հլա մի դրաղն էլ տաճարակ մնա:

Ըլտ եկավ, մտածըմ ա: Ախչիկն ասեց.-
Մտածիլ մի, քյնաց ըլտ պապին ասա, պապը
կկատարի:

Չա՛, քյնաց:

- Պապի՛, պապի՛, բա սիենց մի խալչա:

Պիրավ խալչեն տվավ իրան: Պիրավ տվավ
հորը՝ թաքավորին: Խալչեն քանի փոքը են
ժողովուրդը նստըմ ա, խալչեն քյնըմ ա, քանի
ժողովուրդը նստըմ ա, խալչեն քյնըմ ա: Ինչ-
քան ժողովուրդ կար նստեցին, խալչու մի դոլն
էլ տաճարակ մնաց:

Ասեց.- Տրանով էլ չազատվեցիր, մի ուրուշ
առաջարկ դեմ անիլ: Էն էլ արիր՝ արիր, արիր
ոչ, ուրեմը՝ իմն ա, ինչ:

Թե.- Ասա՛:

Թե ասըմ ա.- Քու մերը որ միացել ա, խազ-
նի պլանիքը տարել ա, քյնաց դես պիրես:

Դե, որդեղ դի քյնաց մորը քյթնի որ: Քյնաց,
ըլտ տիե մտածիլոն, կնիկը ասեց.- Չմի ի՞նչ ա:
Թե.- Սիենց մի առաջարկ ա անըմ:

Ասըմ ա.- Քյնաց պապին ասա, տես՝ կարա
կատարի:

Քյնըմ ա:

- Պապի՛, պապի՛:

Պապը տուս չի կյալի, էտ քչերը մնըմ ա ը-
տեղ, մնըմ ա ըտեղ: Ըռավտը պապը տուս ա
կյալի:

- Չը՛, էտ ի՞նչ ա:

- Ի՞նչ հերը ասըմ ա, որ քու մերը մահացել
ա, քյնաց դես, խազնի պլանիքը հետը տարել
ա, պիրես:

Թե.- Բա էն ա ինքը կյոներ էլի պիրեր, խի՞
ա քեզ դարզըմ: Դե որ ասել ա՝ ասել ա: Արի
շալակա ըլի:

Շալակեց պապը տարավ էն աշխարհըմ, էն
դուռըմը մի տեղ վե տրավ, ասեց.- Ա՛, քյնաց
ընդեղ հարց-փորց արա, հլե կքթոնես, կհար-
ցես:

Չմի քյնըմ ա, քյնաց տեսավ՝ մի մարթ նս-
տած՝ սիե կենթանի, որթը կոխած ուտըմ ա
տրան:

- Ա՛յ մարթ,- ասեց.- բա տուս կենթանի մարթ,
էտ որթը քեզ կոխած ուտըմ ա, էտ խի՞ ա ու-
տըմ:

Թե ասըմ ա.- Քյնաց, էտ կյալիս տեղը կա-
սեմ:

Քյնաց մտիկ արավ տեսավ մի պառավ կը-
նիկ՝ մի կտոր հաց ծեռին:

- Վա՛յ, ես ծեզ մատաղ, ո՞վ ա սոված, էս մի
կտոր հացը իրան տամ, կարըմ չեմ ուտեմ,
կուլ չի քյնըմ:

- Ա՛յ մերա, բա էտ ի՞նչ ա, մի պերան հաց ա
էլի:

- Չէ՛, քե մատաղ, կերել եմ ես, էս մի պե-
րանն էլ ուզըմ եմ ուրուշի տամ:

- Չա՛, էտ ի՞նչ պոմ ա:

Թե ասըմ ա.- Քյնաց, կյալիս տեղը կասեմ,
էտ կյալիս տեղը կասեմ:

Քյնաց մտիկ արավ տեսավ մի կյնգա կող-
քի տաք հացը բուղամիշ ա ըլըմ:

- Վա՛յ, սոված մեռա՛, մեռա՛ հա, մեռա՛:

- Ա՛յ մերա, բա էտ հացը ըտեղ, խի՞՞ չես ու-
տըմ:

- Ո՞վ և ի՞նձ հաց տալի, որ ես ուտեմ:

- Խի՞, պատճառն ի՞նչ ք:

- Զյնն, ետ կյանքիս տեղը կասեմ:

Զյնն, հարց-փորց անկող մորը քթով, մորը քթով, մերն ասեց.- Բեյմուրազ ըլի նա, ինքը կկեր էլի, խի՞ ք թեզ դարգել.- թե,- հմի ո՞նց դես քյնալ, ո՞նց դի ըլիլ:

- Դե կքյնեմ, վերջը պլանքին եմ եկել:

- Պլանքիքը Դ՛ր եմ հետս պիրել, պլանքիքը հրե այսինչ տեղը պահած, տանը այսինչ սնի տակին պլանքիքը պահած ք:

Հա՛, պլանքի տեղը ետ ք իմացալ, վե կցալ եկալ: Ետդետ հմի կյանքիս ք: Եկալ, ետ որ հաց էր ուզեմ ետ պառալը, թե ասեց.- Բա ենքան հացը կողքիտ, խի՞ իր հաց ուզեմ:

Թե ասեմ ք.- Էն աշխարհըն ես մնիմ մի կտոր հաց չեմ տվել, հմէ էքան հացը շատ էլ ըստեղ ք, ինձ ո՞վ ք հաց տվող:

Եկալ եմ պառալին, որ ասեմ ք. «Էս մի պե-րան հացը՝ ո՞ւմ»:

Թե ասեց.- Բալա՛, մի կտոր պեռնիս քիքեմ էլ հանել եմ ուրիշի եմ տվել, սոված մնացել եմ, ուրիշի եմ տվել: Հմի էլ եմ մի քիքեմ ծեռիս ք, ըլտ ուզեմ եմ ուրիշի տամ:

Եկալ եմ մարթին հասալ:

- Բա կենթանի՞ թեզ որթը ուտեմ ք:

Ասեմ ք.- Հա՛, եմ աշխարհըն ես շատ մարթի վնասնի եմ տվել, շատ մարթի ծկծկոտել, հմի կենթանի, ինձ որթերը ուտեմ եմ:

Տրա ինչն էլ իմացալ, պլանքի տեղն էլ իմացել, եկալ որդեղ որ պապը վեր էր տրել, ընտեղ կաղնեց: Պապը եկալ ըլտ շլակեց պի-րալ: Եկալ ըտեղ:

- Այ կնիկ, քյնացել եմ պլանքի տեղը իմա-ցել եմ: Հմի արի քյնացել տենանք իմ հերը ի՞նչ պաղապխան ք տալի:

Դե Զեի դրաղին շատ վախտ կյանքիս չեմ, մանըմ չեմ, էկալ տեհալ, որ հերը մահացել ք: Դե մերը ետ ք մահացած էր, հերն էլ մա-հացել ք: Ախարտանցը էլ պան չի ասեց, ետ խազնի պլանքի տեղը գիղըմ էր, հանեց պան արալ, վերչապեմ իրան համար մի շենք շի-նեց, ու սկսեցին ըտեղ ապրիլը, մինչև սոր էլ ապրեմ եմ:

16(16). ՀՈՐ ՎԱՍԻԱԹԸ

Մի մարթու իրեք տղա ունի: Մահվան ժա-մանակը տղերանցը վասիաթ ք անըմ, ասըմ ք.- Առաջի ըրուզունը ինձ կպահեք, իրեք ըրուզու էլի, իրեք քշեր ինձ կպահեք՝ իմ հա-ն-գիստը, ընդդից եղը կըրախեք:

Էտ ք մահացել ք Էտ մարթը, տարել եմ թաղել: Առաջի քշերը մեծ տղեմ ք քյնեմ, մեծ տղեմ ք քյնեմ էս կողմը, Էն կողմը պտտըմ, վերջը մի վախտ, որ քունը տանըմ ք, քյնեմ ք, վե կենըմ տենըմ հոր կերեզմանի հողը տուս տված, կուբուն պան արած: Ըլտ ծածկըմ ք ու կյանքի, ախարտինքը հրցնըմ եմ, ասըմ ք.- Մի պան էլ ք կա ոչ:

Դե կա ոչ, կա ոչ: Էքսի ըրուզունը միչնակ տղեմ ք քյնեմ, ըլտ տեհեց քյնեմ, մի վախտ վե կենըմ տենըմ հողը տուս տված, նոր ծած-կըմ, կյանքի, արուշուրը հարցնըմ ք, ասըմ ք.- Մի պան էլ ք կա ոչ:

Հմէ պուռուր տղի հերթն ք, քյնեմ ք ըտեղ ման ք կյանքի էս կողմը, Էն կողմը, տենըմ ք՝ քունը տանըմ ք, պիրըմ ք մատը կտրեմ, աղ ածըմ, մղկտըմ ք, իլե մեհ մղկտալի՞ դես ք ման կյանքի, դես ք ման կյանքի, վերջը: Մի թու-շըմ մտիկ ք անըմ տենըմ մի բոզ ծիավոր եր-կնքիցը վեր էկալ:

- Հա՛յ, քու քյանլեն, հա՛յ քու սեհնցը, հա՛յ քու մեհնցը:

Կրեզմանը սկսեց քանդիլը: Կրակ տվալ տրա, ետ մարթուն սպանեց, ծին իրան շորովը, իրան հագուստովը, իրան ինչովը, մոտիկ, ասեց, մեր խաշթառակի կյունքի՞ պես կյունք ունեմ, թոցրալ պիրալ ըտեղ կյունքը կապեց, ինքը նորից ետ տունալ քյնաց: Տեսալ, որ մի կարմիր ծիավոր նույն ձևի.- Հա՛յ քու քյանլեն, սեհ, մեհ, վերջը մեր հնգերի կլուխն էլ կերաք:

Տրան էլ սպանեց, ծին պիրալ ըտեղ կա-պեց: Եկալ մի սև ծիավոր, տրան էլ սպանեց, տրա ծին էլ պիրալ ըտեղ կապեց: Իրեք ծին էլ պիրել ք իրանց կյունքը՝ խաշթառակի կյու-նըմ կապել ու եկել տուն: Ըռավորը լիսացել ք, եկել ք:

¹ Իջևանի շրջանի Այգեհովիտ գյուղի մոտ գտնվող տեղավայր է, որը կոչվում է խաշթառակի գոմեր (ծանոթ. բանահավաքի):

- Մխպեր,- ասըմ ա,- մի պան էլ ա կա ոչ:
Դե ոնց որ տուք եք տեհել, ես էլ՝ մեծ:

Դե կա ոչ, կա ոչ: Մի քանի օրից եղը թա-
քավորի հայտարարություն ա, որ իրեք ախ-
չիկ ունեմ, ով որ կըրենա, ախչիկը բալկոնըմը
կաղնած, ծի քշի կյա մատանին հանի մատի-
ցը, թող ախչկանն էլ տանի:

Է՛, կեղերըմը, քաղաքներըմը ովքեր կար,
ծի ուներ, ինչ ուներ, վերջը մատցիմ, քյնա-
ցիմ: Տրանց էլ մի լավօսալ ծի ունեմ, մեծ ախ-
պերը մտտել ա քյնըմ ա: Էտ պուճուրը, որ էտ
հերոսությունը արել ա, ասըմ ա.- Մխպեր ջան,
ինձ էլ տար էլի, թճաշա անեմ, տենամ:

- Այ տղա, ի՞նչ կա ընդի:

Վերջը քյնաց եկավ, կեղել: Տա՛ որ քյնաց,
ինքը քյնաց էտ բոզ ծին մտտեց, տրա էտ հա-
քուստը հաքավ, քյնաց էնքա՛ն ճամփա պա-
հեց, որ մտիկ արավ ժողովուրթը արթեն բզա-
րել են, դես ու դեն ցրվըմ են, քշեց եկավ մա-
տանին հանեց, ախչկանն էլ թարքին տրավ
պիրավ տրավ ըտեղ՝ էտ կյոմըմը, ու եկավ
տուն, ըլտ իրա հաքուստը հաքավ, ոտները
տրավ փեչի տակին: Մխպերը էկավ:

- Չը՞, ախպեր ջան, ի՞նչ կար, ի՞նչ չկար:

Թե ասըմ ա.- Է՛, ի՞նչ դի ըլի:

- Տարար էլ ոչ, թե հլե թճաշա անեմ:

- Էն ծիանու ոտի տակի փոշըմը կկորչի
տու, որդե՞ղ դիր ընդեղ թճաշա անի, որդեղ
դիր ընչիլ: Վերջը մի բոզ ծիավոր շան տղա,
հա՛ էկավ, ընքելանը մատանին հանեց, ախ-
չկանն էլ վե կալավ տարավ:

- Մի՛ս, ախպեր ջան, էռնակ ընդեղ ի ըլել,
տեհել ի էտ ոնց տղա էր:

Մթամ թե ինքը չի ըլել էլի: Դա՛, վերջը էքսի
օրն էլ քյնալ դեն՝ էն մնին, ցրա էքսի օրն էլ՝ էն
մնին:

- Մ՛ ախպեր, ես էլ կյամ:

- 2է՛, կյալիս ես ի՞նչ անես:

Վե կցավ էտ ախպերը քյնաց: Տա՛ քյնաց,
կարմիր ծին մտտեց, քյնաց ըլտ տեհ սպա-
սեց, մինչևը ժողովուրթը վերջացիմ իրան գոր-
ծը, հետ տառնալու ժամանակը կկալ ծիմ քշեց,
մատանին հանց, ախչկանը թարքին տրավ,
պիրավ ըտեղ, ասեց.- Սպասեցե՛ք:

Դա՛, տրանց կերը, դես-դեն, ինչ որ հարկա-
վոր էր տարավ ու ինքը ըլտ եկավ շորերը
փոխեց, փեչի տակին, ախպերը եկավ:

- Չը՛, ի՞նչ կա:

- Է՛, մեկ մի կարմիր ծիավոր շան տղա ե-
կավ, վե կալավ տարավ:

- Էռնակ ընդեղ ի ըլել, ախպեր ջան, յըս էլ ի
տեհել:

Էլ որդեղ: Էքսի օրը վերջինն ա, քյնալ դեն:
Դա՛:

- Մխպեր ջան, յըս էլ կյամ:

- 2է՛, կյալիս ես ի՞նչ անես:

Վե կցավ քյնաց: Տա՛ քյնաց էն սև ծիուն մա-
տեց, տրա հաքուստը հաքավ, քյնաց ըլտ
տեհ ճամփա պահեց էնքան, որ վերջացրին
գործը, էտ ա մատանին հանեց, տրան էլ պի-
րավ ըտեղ:

- Դե, իրեք քիրտ էլ եկել եք հմի ըստեղ
սպասըմ եք, մինչև գործը պարզվի:

Տիանք ըտեղ մըմ են: Ըրուզունը ախպերը
եկավ, հա՛:

- Դե մի սև ծիավոր շան տղա,- իրեք հետ էլ
շան տղա յա տառնըմ,- եկավ տարավ:

- Տարար ոչ թե, թճաշա անեմ, հմի ես ուզըմ
եմ ծեզանից պլծամվեմ: Եկեք մեր էս հաշ-
թառակա կյոմը քանդըմ եմ, քանի փառդի ինձ
հասնըմ ա, ինձ տվեք, ծախըմ եմ՝ մի տեղի
վրա ես թող անեմ կորչեմ: Տարաք էլ ա ոչ, թե
մի տարտակ թճաշա էլ ա անեմ, ա քու տունը
չինվի:

- Այ բալա, էն կյոմը քանդիլու չի է՛, մեր
պապի պապն ա չինել, էս քանի տարի ա մենք
ընդեղ ապրանք ենք պահըմ, լավն ա, քանդի-
լու չի:

- 2է՛, քանդեցեք, իմ փայը ինձ տվեք:

Էրկու ախպրոն էլ հետը վե կալան քյնացին,
մեծ ախպրոն ասեց.- Քյնա՛ հլա մի կյոմին
մտիկ արա:

Քյնաց, ետդքետ փախած եկավ:

- Արա՛, էտ ի՞նչ ա:

- Ղաչաղմին, հրե ծիանը կապած, հրե մի-
չին:

- Արա՛, ղաչաղը ըտեղ ի՞նչ ա չինըմ:

- Դա՛, հրեն միչին ղաչաղմին:

Էն միչնակին ասեց.- Քյնա՛ տես:

Նա՛ էլ քյնաց, ետդքետ փախավ եկավ:

- Այ մարթ,-ասեց,- հրե իրեք հոգի էլ կա, իրեք ծի էլ կապած ընդեղ:

- Ա, դե տհե պան չի ըլիլ:

- Ինքը քյնաց շեմքընը կաղնեց:

- Վաւ՛, ես էլ ասը եմ էս ընչի՞ եմ փախցըմ դաշաղ-դաշաղ, ա՛, ըխճկեք եմ, հազիկ դսմաք ա, ամեքս մինը հասնըմ ա: Եկեք ըստեղ:

- Եկան, եկան:

- Սիի ո՞նց եմք անըմ, կյունը քանդըմ ե՞մք:

- Այ բալամ, բա էս կյունը քանդիլու կյուն ա՞:

- Չէ՛, կյունը քանդըմ չենք, հմի էս գործը բաժանըմ ենք, ո՞նց բաժանենք:

- Թե ասըմ ա.- Դե տու ես գիղըմ, ո՞նց դի ըլիլ:

- Էս գործը ես եմ կատարել է՛, որ ամեն ըրուգու ասիր. «Սի շան տղա սհե ծիավոր եկավ՝ մի շան տղա սհե ծիավոր եկավ»: Էս մեր հերը, որ վասիաք արավ, էն քշերը ես նրա կրեզմանի վրա ես իրեք մարթին սպանել եմ, էս իրեք ծին պիտել ըստի կապել, մինըս էլ ա տեղակ չեք ըլել: Սիէ էս իրեք ըխչկանը պիտել եմ ըստե, մինըս էլ ա տեղակ չեք: Յմի մեծ ախպեր, էս բոզ ծին՝ իրա հաքուստովը, իրա ընչովը, մեծ ախչիկը՝ քե: Էս կարծիք ծին՝ իրան հաքուստովը, իրան, վերչապես, միչ-նակ ախչիկը՝ քե, միչնակ ախպեր, էս սև ծին, էս պուռուր ախչիկն է՛ ինձ: Յմի քյնըմ ենք, վերչապես, մեզ համար ապրիլու:

Վե կցան եկան իրանց համար ապրըմ են, թաքավորը գիղացավ ոչ, թե տն մի մարթ տարավ, թե քանի մարթ տարավ, թե ոնց ըլավ, թե ի՞նչ ըլավ: Նորից հայտարարեց, թե ասեց.- Ով որ տարել ա, թող դիմաց ըլի: Յա՛, ով որ տարել ա, թող դիմաց ըլի:

Եկան, իրեք ախպերն էլ ծիանը նստեցին, կնանուկն էլ, ծիան քրեհեցին, նստըցրին, քյնացին:

- Բա՛րև:

- Բա՛րև: Յա՛, տուք ե՞ք:

- Սենք ենք:

Յարց-փորց անիւն.- Իրեքս էլ ախպեր-տիւնք ենք, բայց տանողը ես եմ ըլել, տարել եմ ու էս բաժանմունքը կատարել եմ:

- Շատ էլ լավ:

Թաքավորը նորից տրանց ըստեղ հրսանիք արավ, կերան-խմեցին, քեփ արին, ինչ որ, ու-

րեմը, հասնըմ ա, բաժինք հատկացրավ ու վե կցան եկան իրանց հմար սկսեցին ապրիլը:

17(17). ԹԱՔԱՎՈՐԻ ԱՆԻՉԻԿ ՈՒ ԻՐ ՕՏ ԱՍՈՒՄԵՆԸ*

Սի նախըջի ա ըլել, էն ա աստու տարին նախիրն ա քյնալիս ըլել, աստծու տարին: Նախիրն ա քյնալիս ըլել, որ եկել ա էտ մարթը հիվանդացել, մեռնիլու թուլընը կյնզանը վասյաք արել ա, որ.- Իմ ըրեխեն, ես գիղեմ, իմ փեշակը դի պընըցնիլ, թողես ո՛չ, կասես էն էրի ծուրի վրա տանես ոչ տավարը, ընդի:

Որ քյնացեա ա տղեն տհենց տավարը հա՛, ասել ա.- Քյնամ տենամ էս ի՞նչ ա էլի, որ իմ հերը վասյաք արել ա, որ քյնաս ո՛չ:

Քյնացել ա տեհել ա՛ մի բա՛ղ, մի բա՛ղ, բըլ-բուլը միչին, թե ի՞նչ բաղ, էլ ասիլու չի: Պիրել ա էտ ա էտ տղեն փեշերը, ջքերը, ծոցերը լց-րել, տուս կյալիս ա ըլել, տեհել ա մի ճեհ օց կաղնած շեմքընը:

Ասել ա.- Օցն իրան ոտովը, ճուտն իրան թևովը իմ սաիրատովն եկել չի, տուս քա՛մի ըլիլիսին ես, որ եկել ես: Ո՞նց ես անըմ, յաղու տա՛մ:

Էտ ըրեխեն լաց ա ըլել, լաց ա ըլել:

Ասել ա.- Մյուս անքամ էլ կյաս ո՛չ:

Սի շափաք, մի ամիս անց ա կըցել, ասել ա.- Յա՛, օց ա էլի, ո՞վ ա գիղըմ՝ դվորը քյնաց:

Վեր ա կենըմ ետ քյնըմ էտ տղեն, ետ քյնըմ, ետ ուտըմ-խմըմ, ջըբերը լցնըմ, տուս կյալիս տենըմ ա՛ ետ էտ օցը կաղնած:

Ասըմ ա.- Ա՛, քե անեցի ոչ, այ՛ տղա, կյաս ո՛չ:

- Եսիմ գիղեմ:

- Թե որ,- ասըմ ա,- դե որ էտքան ռիսկով ես հա՛, թաքավորի ախչիկը քու անըմից ինձ միար ուզի: Թաքավորի ախչիկը:

Քյնըմ ա մորն ասըմ թե.- Քյնա թաքավորի ախչիկը ինձ միար ուզի:

Ասըմ ա.- Արա՛, տու նախըջի, քյնսիք, լան-թոտ, քրչոտ, ո՞նց դես տու քյնու... ո՞նց քյնամ ուզեմ:

Ասել ա.- Յա՛, քյնա ուզի:

Օցն էլ ասել ա.- «Ի՞նչ որ պահանջ տյընի, ինձ կասես»:

Տա պիրել ա տեղը նեղել ա, քյոցել ա են խնամխոսի քարի վրա նստել: Թաքավորն ա-սել ա.- Թաքուհի, հլւ տես են ի՞նչ պառապ ա, որ ընդի նստել ա:

Քյոցել ա թաքուհիրն ասել ա.- Էտ ի՞նչ ա, նանի:

Թե.- Ի՞, բալա քան, գիղըմ չեմ, էկել եմ էլի:

- Դա, խի՞:

- Իմ տղեն քու ըխչկանն ուզըմ ա:

Թե.- Շատ էլ լավ կըլի, դե միի կասենք, կըլի, ըլիլ չի՞ ըլիլ չի, տուլ քե հմար նստի:

Քյոցել ա ասել, թաքավորն ասել ա, թե.- Քյոն առա, թե ըռավորը մինչև ժամի տասը են շենքը շինըմ ես, արևը կա՞, շողը տո՞ռ մեր տան վրա ըլի, ընդով իմ ախչիկը քե եմ տալի:

Քյոնըմ ա ասըմ ա, քյոնըմ ա ասըմ ա.- Ա՛ մաղբուն ըլես, ա՛ մախրըմ ըլես, տուլ ո՞նց դես շենքը շինիլ, որ թաքավորի պալատին շող կաչի ոչ, չվաք ընգնի:

Քյոնըմ ա օցին ասըմ, քյոնըմ ա օցին ասըմ, օցը մի քար ա տալիս, ասըմ ա.- Ինչ թուշին ասել ա, ընդի վեր քջի:

Ըռավորը վեր ա կենըմ ասըմ ա.- Թաքու-հիրն ապրած կենա,- ասըմ ա,- էս ո՞նց ա ա-րևը տուս չի կել:

Ասըմ ա.- Ի՞ ի՞, թաքավորն ապրած կենա, մի շենք ա ստեղծվել, որ քու շենքերիցը լավը: Պիրըմ ա, պիրըմ ա:

- Սա հը՞մ, տարա՞վ:

Մերը քյոնըմ ա, ասըմ ա.- Էլ ինչ ես ուզըմ:

Ասեք.- Իմ շենքիցը քու շենքը ոսկե ճամփա կշինե՞ս, իմ ախչիկը քե կտամ:

Մերը քյոնըմ ա տղին ասըմ.- Ա՛ մաղբուն, տուլ ոսկի ունե՞ս, որ ճամփա շինես:

Տղեն քյոնըմ ա ասըմ, մի կտոր ոսկի ա տա-լի ես օցը, պիրըմ ա քցըմ, պիրըմ ա քցըմ: Տա պիրըմ ա քցըմ, հա՛ ըլետ ճամփա ա տոճըմ: Ասըմ ա.- Քյոն տես, թե ինչ ա ասըմ:

Թաքավորն ասըմ ա.- Քանի սենյակ որիս ա, նրա մեջը խալուխալա կշինե՞ս, իմ ախ-չիկը քեզ կտամ, թե չէ՛ չէ:

Քյոնըմ ա ասըմ.- Ա՛ մաղբուն, ես ի՞նչ անեմ, տուլ կարա՞ս էն տան մեջերը սարքես:

Քյոնըմ ա ասըմ, օցը մի կտոր խալա ա տա-լի, ասըմ ա.- Տար ակոչկովը մեջը քջի:

Տանըմ ա մեչն ա քցըմ: Տա պիրըմ ա, պի-րըմ ա քցըմ: Թե ասըմ ա.- Բա միի ի՞նչ ես ասըմ:

Ասըմ ա.- Դա՛, դե հրսանիք պի, հրսնքով պի:

Թաքավորին օխտն ախճիկ ունի, փեսենի ունի, չիմ գալուստիկը կապած, կրախմալած, հաքած-կապած կյալիս են՝ հրսանիք ա: Էտ ախչիկն էլ լաց ա ըլըմ, որ.- Իմ հերը շաշվել ա, ինձ նախրչուն ա տալի:

Լանթո՞տ, քրչո՞տ, էտ տղեն քյոցել ա պսակվի: Էտ ա պսակվըմ ա, պիրըմ ա տանը տյընըմ: Տանն ա տյընըմ հիլ անըմ տուս ըլըմ: Էս ախչիկն ասըմ ա, թե.- Բա՛, որ սա իմ մար-թն ա, էս խի՞՞ հիլ արավ քյոնց:

Էտ ախչիկը նստըմ ա լաց ըլըմ, լաց ըլըմ, մտիկ անըմ ա տենըմ, որ տուռը կամաց պաց ըլավ, կամաց: Տուռը պաց անըմ ա, էտ հարսը կյուրկյուրեցնիլիս ա ըլըմ, տուռը որ պաց ա ըլըմ, օցի հուլը որ աչքովն ա ընգնըմ, էտ հարսը նդավըմ ա: Օցն իրան խոթիը հանըմ ա են դղեն տյընըմ, ու մի լավ տղա տուս կյա-լի, քանի որ գիղա: Էտ ըխչկանը աղոթըմ ա, էտ ախչիկը եղ ա կյալի: Եղ ա կյալի, ըտիսն էտ ա մարթ ու կնիկ են, ցիրեկը օց ա, քշերը՝ տղա, ման ա կյալի: Օրերի մի օրը էտ տղեն կյալիս ա ասըմ.- Այ ախճի, քու հերանք կյալ դես քե տանիլ, ըխճեկը մեզ ծեռ են առել, ա-սել են, որ նախրչուն ես տվել էլի ըխչկանըտ, ասես ո՞չ: Ինչ ասեն, ասա՛ հա՛, իմ նախրչին ինձ հմար լավն ա:

Ասըմ ա.- Դա՛, ասիլ չեմ:

Դա՛ տարել են, ղոնաղ են տարել: Քյուրսի-նին նստած, ընդիսն դենը նախրչին ըստողի դրաղին սեռ նստած, ճիսնք էլ դե երեսի մար-թիք են էլի, տղերք են, ամենը իրանց կյոճա-նը վե կալած նստած են: Բվորտիքն ասել են, թե.- Գյոնի մարթըտ էտ չի՞, էտ ա էլի անթերը կախ ըլած, ցուլը կախ ըլած:

Որ շատ ասել են, ասել ա.- Դա՛, ինձ ո՞զի ա:

Որ շատ ասել են, սիրտը ճըքըցրել են, հա ասել ա.- Ի՞, ֆողեմ կյլխներուտ, մին մարթ ունեմ, որ ծեր մարթիքը ըսկի իմ մարթի ծեռին ճուր ածիլու չեն:

Ասըմ ա.- Նախրչին ա՞:

- Սա իմ մարթը չի, դեյին հետս եկել ա տա:

Օգն ասել ա.- ես պատուվն անգաճ դեմ տյընիլ հա՛:

Վեր ա եկել ընդհան ասել.- Դե, մնաս պա՛րով.- էտ տղեն, էտ օցը իրան ասըմ ա,- մնաս պա՛րով, էրկաթա տրեխ կհաքնես, էրկաթա կյ-վազան էնիք կանես, ինձ քթնիլ չես:

Էտ ախչիկը լաց ըլիլեն, սուբ-շիվան անի-լեն՝ կյալի տուն, էրկաթա տրեխ հաքնըմ, էր-կաթա գլվազան ծեռն ունըմ ու ճամփա ընգ-նըմ: Շատ ա քյնըմ, քիչ ա քյնըմ, վերջը քյնըմ ա: Քյնըմ ա տենըմ՝ մի քոլի միչի մի սիե դյու՛գ, սիենց քերձ ա, տախտ ա ըստի, միչին մի քսան հատ ոչխար ա, մի չորան, մի շուն: Էտ տղեն շիւ ածըմ ա:

Ասըմ ա.- Չորան ախպեր, ախպեր քան, ախպեր՝ քան, շանիցն անց կըցրու:

Ընդհան ասըմ ա.- Դա՛, հե՛, հե՛,- կոյնահար ա տալի՛:

Ասըմ ա.- Ախպեր քան, իսան եմ, օքմի եմ, խի՞ ես տիե անըմ:

Սիրտը շահըմ ա: Ասըմ ա.- Արի՛, անց կըց-նեմ:

Անց ա կըցնըմ, քյնըմ ա, քյնըմ ա տենըմ ա իրան մարթը՝ տա՛ էլ իրան կնիկը: Ըրուգունը արթեն կյալիս եմ տուն, մի հուր ու հեղեղ կե-տա ա ունենըմ: Ասըմ ա.- Ես քու հերն ու ախ-պերը թաղեմ,- ասըմ ա.- ես դժոճը չախ իմ տղեն տա՛ ես՝ պահիլիս ըլել, որ հմի եկել ես:

Էտ ա մի հերվարա տաշտ ա տյընը դաքին, դուն՛ էլ ածըմ երկու ծընգան տակին, ասըմ ա, որ.- Էնքան լաց կըլես, ես հըրեանի տունն եմ քյնըմ, էնքան լաց կըլես, աղի արտասուն-քո՛վ էտ տաշտը կըլցնես:

Դե լաց ա ըլըմ, մի՛ն ըստի ա տալի վեր ընգնըմ, մի՛ն՝ ընդի, կըլցի՞ ըրտասունքով:

Էտ տղեն կըլիլ ա ըլըմ մարթը, կյալիս ա աղաճուր անը՛մ, ընդհան լցնըմ:

Թե ասըմ ա.- Դը՛, հը՛, հը՛, ես քու հերն ու ախպերը թաղեմ,- ասըմ ա:

Վերջը պիրըմ ա էքսի ըռավոտն էլ մի սև շիջիմ ծեռին ա տյընըմ, ասըմ ա.- Կտանես էն-քան կըլվաճո՞ւմ սիպտակի:

Տարել ա կետընը վագել: Տանըմ ա էտ թո-կը քսըմ, քսըմ, քսըմ, սիպտակեց էլի, սև թոկը

կսիպտակի՞: Էտ տղեն կյալիս ա տենըմ, որ չէ: Աղոթըմ ա, թոկը սիպտակըմ ա, տուն են կյալի:

Ասըմ ա.- Չէ՛ սրանից կարալ չոքնք յախա թափիլ: Արի մի փարչ ճուր էլ վե կալ, ասեղ էլ վե կալ, մխելի անձղի կտորնի էլ վե կալ, մի դուն էլ, մոշի, քյնանք կորչենք, քյնանք քու հոր տերությունը, հորըտ մահալը:

Դա՛, պիրըմ ա, պիրըմ ա: Տենըմ ա արթեն տհանք փախած քյնըմ են, էտ ախչիկը որ եղ ա մտիկ անըմ տենըմ, որ մերը կյալիս ա հա՛, մերը հասնըմ ա հա՛, տղեն ասըմ ա.- Ասեղը վեր քցի:

Սինչև ասեղը վեր ա քցըմ, էտ ասղուտ ա տաճնըմ, քյնըմ են մի հինգ դաշ էլ են անց կե-նըմ: Ըտիան որ տենըմ ա շատ հասվեհաս ա, ասըմ ա, անձղի կտորնին ա վեր ածըմ: Մխելի որ անց ա կենըմ պոծնըմ, միէլ եղ ա տաճնըմ տենըմ ա կյալիս: Ասըմ ա.- Այ ախչի հնար չը-լալ, մոշին վե քցի:

Մոշին վեր ա քցըմ, մոշուտ ա տաճնըմ, մը-չև տհանք իրեք դաշ էլ են քյնըմ: Սճէլ որ ե-դերնուն կյալիս ա, տենըմ ա, որ եղ կյալի հասնըմ ա, պիրըմ ա էն պանը...

- Փարչը վե քցի,- ասըմ ա,- ծով տաճնա՛:

Փարչը վեր ա քցըմ ծով ա տաճնըմ, տաճ-նք արթեն թաքավորի սահմանն են հասնըմ, որ տենըմ են հասվեհաս ա հա՛, մի ճիթ հաղող են տաճնըմ էրկուսով քյնըմ ճըղացալանի կյիդ-քն ընգնըմ՝ կտրովը: Տա՛ էլ ճըբաքի ա տաճ-նըմ, ասըմ ա.- Խընթըրմ եմ՝ էտ ճիթ հաղողը ինձ տաս:

Որ շատ ամանդաճը կտրըմ ա, ասըմ ա.- Ինձ միար ա եկել, խու քե հմար չի եկել:

Որ շատ իք անըմ ա, վրա ա անըմ, սիե դո-շովը տալի, էտ ճըղացալանը:

Էտ մի գիլեն խնձոր ա տաճնըմ, քյնըմ թա-քավորի ակոշկովը ընգնըմ թաքավորի աղա-քը: Տա՛ էլ ըլետ քյնըմ ա փայ իղվաքիլեն, քյ-նըմ ա, ինչ ուզըմ ա՝ տալիս են, վե չի ունըմ, ասըմ ա.

- Աղքիտ խնձորն եմ ուզըմ:

Ասըմ ա.- Տալ չեմ:

Որ շատ ամանդաճը կտրըմ ա հա՛, վրա ա-նըմ ա, վրա անըմ ա, շաղ ա իընցնըմ, կորեկ ա տաճնըմ, տա՛ էլ հալ ա տաճնըմ ուտըմ ա:

¹ Կոյնահար տալ - ձայնարկություն, որն ուղղված է անասուններին (ծանոթ. բանահավաքի):

Մի կորեկը ասեղ ա տռռնըմ՝ թելը միջին, ըն-գնըմ թաքավորի մեշոքը:

Նա քյնըմ ա կորչըմ, նհանք հասնըմ են ի-րանց մուրազին, տուք էլ հասնեք ծեր մուրա-զին:

18(18). ԹԱԶԱՎՈՐԻ ՊՈՒՇՈՐ ՏՂԵՆ

Մի թաքավորի երեք տղա ա ունենըմ, երեք տղա ա ունենըմ, պուճուր տղեն մի քիչ քաչալ ա, քիչ: Էտ երկու տղեն, լավ գլխի քու հավան կըցած հըրեղեն ծիան վերցնըմ ա տալիս, քյ-նըմ են կյնգա, իրանց համար կնիկ ճարելու: Լավ:

- Ծեզ պորի ճանապար, տղե՛ք:

Մնըմ ա ես պուճուրը, ես պուճուրը չիլզի՛ ենք ասըմ, կարող ա տուք էլ գիղենաք, որ չիլ-զի հաղ են անըմ է՞, տա հմի տղերանց հետ չիլզի հաղ անըմ ա: Ես գյողեն չիլզի հաղ ա-նիլիս տեղը, մի պառազ կնիկ սհե քյալիս ա ըլըմ, էտ անդեր չիլիկը քյնըմ ա էտ պըռափի աչկին դիպըմ:

- Վա՛յ, տու բեմուրազ ըլես, վա՛յ, տու խը-ռըզնիատ ըլես, տու սհե ըլես, տու հնե ըլես, խի՛ իմ տունը քանդեցի:

Քյնըմ ա նանին փըռնըմ ճիտ անըմ:

- Նանի՛, քե մատաղ, նանի՛, քե մատաղ, նանի՛, քե մատաղ:

Նանը տազ անըմ ա:

- Արա՛, ա՛ քե թաղեմ, բա՛ որ տու խոլոք տղա ըլե՛ս, քու ախպերտինքըտ թողեցին քնա-ցին, քեզ ըստի հիլ արին, իրանք քյնացին կյն-

գա ման կյալ, որ տու էլ խոլոք տղա ըլես, խի՞ չեն քե հետը տարել: Խի՛ բա քեզ տարան ո՛չ: Թե.- Լավ:

Տա վե կցավ ու ընքեանը, ես գյողեն.- Նա-նի՛, քե մատաղ, ես ի՞նչ ես ասըմ:

Թե.- Սհե, սհե եմ ասըմ, ճիշտ եմ ասըմ:

Թե ասեց.- Նանի՛, դե լավ.- ասեց.- քու կա-տունըտ իմ քյոյնի ա:

Ետ տռռնով եկավ, որ կյա հորը տեղը նեղի, հորն ասեց.- Յերա՛, ես քեզ ասեմ, քու պապի ծին տալիս ես ինձ, քու պապի ծին հանըմ ես տալի ինձ:

- Այ բալա, իմ պապին ծի չունի:

- Ունի, ունի ո՛չ, քու պապի ծին եմ ուզըմ, տուր, քե չէ կյլուխըտ տալիս եմ:

Էտ մարթը տեսավ, որ չէ՛, տղեն շաշվել ա միանքամից, մի երկու մարթ կանչեց, քանդիլ տվավ, հորը պոց անիլ տվավ, ծին հանիլ տվավ, ընչեր քցեցին հանեցին: Ծին հանեցին, տնո-փինին կանչեց:

- Ամեն մի հատ նալը կկտրես մի փըթանոց, ամեն մի մեխը կկտրես կես փըտանոց:

Պիրին էտ ծին նալեցցին, թամքը պիրավ տըրնով վրեն՝ ընչով՝ մաշինով՝ հինգ փըթա-նոց: Թամքը տըրնով վրեն, տղեն նստեց:

- Դե, աստված, տու աչղդա:

Ու ճանապարկեց: Եկավ տղերանց եղնա ճըմփի կիսըմ հասավ, տղերանց, կամա՛ց տղերանց եղնա քյնըմ ա: Եկան տյուս եկան երեք ճանապարի մեջը, տղեն հասավ, քյնաց ըսի կաղնեց:

- Ախպերտինք, եկե՛ք:

Եկան:

- Կարթեցեք, տեհեք ի՞նչ ա կյրած:

Մինը կյրած ա. «Գյեղանգյալմազը», թուր-քերեն ա կյրել. «Քյնացողը ոչ ետ կյա»: Մինը կյրված ա. «Քյնացողը հետ տռռնա, աստված ա գիղըմ սաղն ու կաղը»: Մեկն էլ՝ «Քարև կյնմ, բարև կյնա»:

Մեծ ախպրը թե ասեց.- Ախպեր, տու ես ճանապարկըմ ես քյնըմ. «Քարև քյնա, բա-րև կյնա»:- Միչնակին.- ախպեր.- ասեց.- տու էլ ըստեղով ես քյնըմ, քեզ պապի: Ես էլ ես գյե-ղանգյալմազ եմ ընգնըմ:

Ճանապարկեց, քյնաց: Ամեքը իրանց ճա-նապարովը ճանապարկեցին, դույ ըլան:

¹ Չիլիկ – մանկական խաղ է, որի համար օգ-տագործում են երկու փայտիկ: Փոքր փայտիկը լինում էր 10-15սմ երկարության, ծայրերը թեու-րյամբ կտրած և սուր, իսկ երկրորդ փայտիկը, որով հարվածում են փոքրին, լինում էր մոտավորապես 50-60սմ երկարությամբ: Փայտիկների հաստու-թյունը մոտավորապես լինում էր 10 մմ (տրամա-գիծը): Փոքր փայտիկը գցում են գետնին և ծեծով հարվածում նրա ծայրին, հարվածից փայտիկն օդ է բարձրանում, և խաղացողն օդում նույնպես ծեծ-քի փայտով հարվածում է փոքրին այնքան, որքան այն մնում է օդում: Խաղացողն աշխատում է այն երկար պահել օդում: Ընկնելուց հետո խաղացողը նույնը կրկնում է: Շատ տարածված խաղ է երե-խաների միջավայրում (ծանոթ. բանահավաքի):

Էս տղեն քյնաց, քյնաց, տյուս եկավ մի հայաթի, ուզեց քյնա, ջընաց, նստեց: Մթնեց, տեսավ՝ իրես մի դև ա կլալի, աստոծ հեռու տամի, թե ինչ դև ա: Եկավ, որ Էս տղին տեսավ, հոմիրը քաշեց իրան, որ մըթած կուլ տա, Էս տղեն շաշկեն հանեց, Էս ծիու կարկաթի կիսընդ որ տվավ, տափընդ հլա բաթմիշ ըլավ, կես մետրն էլ քյնաց: Ա՛հ, արին ա քյնոմ, տարավ ծին կապեց, մի մեշուկ չամիչ ամեց աղաքը, դյերեց վերև՝ տուն, մի մտավ տուն, տեսավ մի ախճիկ նստած, էլ չեմ կարող ասեմ, թե ինչ կեղեցկություն ունի: Մի սեղան պաց անիլ տվավ, կերան-խմեցին, տեղը շինիլ տվավ, շորերը հանեց մտավ տեղի մեջը: Ախճիկը որ եկավ, որ կոխկը մտավ հա՛, իրան շաշկեն պիրավ տըրավ կես տեղը: Ախճիկը ծըվաց, ճըչաց:

- Սասըտ կըտրի, աստծու կըտրածի նման, դինջ տեղտը քնի, ինձ դիպչես ո՛չ:

Քունը ըլան: Ըռավոտը լիսացավ, վե կըցավ ըլետ կերավ-խմեց, պըրծավ ու ընթելանը մի պրիպաս էլ վե կալավ, ընթելանը ետ ճանապարհեց, մի մատանի տվավ ըխճկանը ու ճանապարհվեց: Քյնաց տյուս եկավ մի պալա-տի, երկու հարգանի՝ կարմիր, էլի ըտի նստեց, մըթնեց, տեսավ իրետ մի կարմիր դև ա կլալի, էտ դևը եկավ՝ տըրմնից բեթար: Էտ դևն էլ ինչ արավ՝ արավ, ի՛նչ դի անիլ, ըլետ քաշեց, քաշեց, քաշեց, քաշեց տղեն շաշկովը ըստիից որ տվավ հա՛, կիսիցը սենց երկուտակեց, էտ էլ ըտի վե քցեց: Քյնաց մտավ ծիի կորմիտն արավ պըրծավ, քյնաց վրիի հարզը՝ երկու հարգանի ա: Քյաց մի մտավ, դե տեսավ տըրմնից բեթար մի ախճիկ էլ ըտեղ: Ըլետ տե տեհավ, կերավ-խմեց, ընթելը տեղը շինիլ տվավ մտավ տեղը, անքուն մարթ, իրեք-չորս օր ա ճամփա ա քյնոմ, քնեց: Շաշկեն պիրավ էլի տըրավ կես տեղը: Ախճիկը ծըվաց, ճըչաց, թե ասեց.- Սասըտ կըտրի, աստծու կտրածի նման:

Ընթելը ըռավոտը վե կցավ ու ճանապարհվեց էլի: Քյնաց տյուս եկավ մի սև աշխար, մի դև ա կլալի, էլ չեմ կարալ ասեմ, թե ինչ դև ա: Էս դևը եկավ: Չասավ դևին, որ դևի ճըկատընդ որ տվավ հա՛, կեսը վե քցեց, կեսը մնաց կաղնած:

- Արա՛, մըն էլ տու, ա՛ նոմա՛րդ, մըն էլ տու:

Թե.- Չէ՛, չի կարելի, բոլ ա ըտել քեզ:

Դևը ըտի բալդի-բալդի անցմ ա:

- Կըսասուկես, ոչինչ:

Քաշեց քյնաց ըտեղ, ծիուն մի մեշոք չամիչ ամեց ու տյուս եկավ քյնաց իրեք, իրե, հարզ ա, իրեքընքի հարզ ա: Նիսանցից բեթար մինն էլ ըտի, ըլետ տե կերավ-խմեց, դես-դեն ու ըտի երկու օր ետ ընգավ, երկու օր: Երկու օրից եղը Էտ ըխճըկանը վերցրավ, վերցրավ ետդքետ: Եկավ տյուս եկավ կարմիր դևի մոտ, կարմիր դևի էտ ըխճըկանն էլ վերցրավ եկավ մտավ էտ ներքի ինչը, եկավ էտ ըխճըկանն էլ վերցրավ: Եկավ տյուս եկավ էտ ճանապարհ՝ մեջը, քարը... սանձքը քցեց ծիու շլինքը, քարը ծին պըտտեց, տեսավ իրեք մատանին էլ տառ քարի տակին տըրած ա: Էտ մատանըքերը վե կալավ, իրեքն էլ տըրավ ջըրընը, մտավ մեծ ախպոր ճանապարհը, ետ ճանապարհովը քյնաց, մտիկ արավ տեսավ, որ մեծ ախպերը ըտի ըռնընը մտած, մի փարթուկ հաքին՝ կաղնած:

- Բարև քե, հընգեք:

- Բարև, բարև, հազար բարի:

- Այ տղա, էտ որդիանցի՞ ես:

Թե.- ուրիշ տեղից եմ էլի:

- Էլիե՛, էլիե՛:

- Այսինչ երգրի մարթ եմ:

- Բա ընչի՞ ես ման կլալի:

Թե.- Եկել եմ էլի, ըստիեք.- ասեց.- ըլխա-տանքի, դես-դենի:

- Չա՛, ասեց.- բա հըմանչըմ չե՞ս, ասեց.- որ տու հարիր մանեթով ծառայըմ ես:

Թե.- Բա ի՛նչ անեմ, ի՛նչ անեմ բա:

Թե.- Ես քեզ.- ասեց.- տալիս եմ հարիր ից-ցուն մանեթ ամիսը, տենըմ ե՛ս, ասեց.- սը-հանց:

Էտ ըխճըկեքն էլ, որ պիրըմ ա, չիմ տղամարթի շորըմ եմ, հա՛, տղամարթի շորըմ:

- Տենըմ ե՛ս, ասեց.- սըհոնց:

- Տենըմ եմ:

- Սըհոնց տալիս եմ ամեքը, ասեց.- երկու հարիր մայթ, հմի.- ասեց.- քըզ էլ տալիս եմ, ասեց.- հարիր իցցուն մանեթ, ուզըմ ե՛ս, ա-րի՛, ասեց.- քյնոմըք.- ասեց.- ամոթ չե՛ս քաշըմ

տու, որ հարիր մաներով տրո՞ւմ մոտ ծառայըմ ես, տրո՞ւմ հերն անիծեմ:

Ունի եկավ, թե.- Բա փողը կտա՞ս:

Թե.- Տու արի՛, քու գործը չի:- Բյնո՞ց խազե-
յինին ասեց.- տո՛ւ ես մարթի փողը:

Տալիս չի:

- Տո՛ւ,- ասեց,- բեյիմըտ,- ասեց,- պուկըմ եմ,
տո՛ւր:

Տըրա փողն առավ, պիրավ հետը քցեց, ե-
կավ տյուս պիրավ, եկավ մըտավ ե՞ն մի ախ-
պոր ճանապարհ: Ըտիան էլ քյնոց տըրան
քթով, մտիկ արավ տեհավ՝ չայի սինին լիզը,
կըլխին տըրած տանըմ ա, որ փայ անի:
Եկավ, քյնոց թե.- Արա՛, բարի աչողըմ ծեզ:

- Աստու՛ բարի:

- Ա՛, հընգեր, չայ ունե՞ք:

- Բա ո՞նց չունենք, հընգեր քան:

Քյնոցին մի մտան, չայը պիրին դաքերմուն,
խմեցին:

- Ա՛, հընգեր, որդիանցի՞ ես:

- Ուրյուշ տեղից եմ:

- Որդիա՞ն, էլիե՛:

- Այսինչ ինչն եմ:

- Լավ: Ի՞նչ ա տալի խազեյինըտ:

- Տալիս ա ինձ հարդիցուն մանեթ:

- Թքեմ քե վրա,- ասեց,- հարդիցուն մա-
ներով տու՛ ծառայըմ ե՞ս,- թա ասեց,- ըստեղ:

- Հա՛, բա ի՞նչ:

Թե ասեց.- Խի՞, կարըմ չե՞ս երկու հարի
մանեթ առնես:

- Տալիս չի:

- Դե որ տալիս չի,- ասեց,- արի՛, ես քե
տալիս եմ երկու հարի մանեթը, քյնոցն:

Խազեյինին կանչեց:

- Էս մարթի չչողտ քաշի:

Վերջը գոռ արավ, հռչիվն առավ, հարդից-
ուն մանեթի հռչիվն առավ տվավ իրան, թե.-
Քյնոցն:

Եկան, մի ծեքը կաստում էլ տրա միար
առավ կեցրավ, հաքցրավ, կապեց, դույ ըլան:
Եկան տյուս եկա՞ն ըլետ էտ քարի մոտ:

- Այ ախպերտիմք, ինձ ճընանչըմ չե՞ք:

Թե.- Չէ՛:

- Արա՛, բա ծեք ախպերտ չե՞մ:

Տեսան, որ պուճուր ախպերն ա՛ իրանց
պուճուր ախպերը: Լավ: Տըրանք խայնըվե-

ցին, խայնըվեցին: Էս տըղեն եկավ տյուս
եկավ մեր ընչի պես մի թալա, մեծ թալի պես
մի թալա, մը լավ ախպուր էլ կա ըտեղ, էտ ըխ-
պրի կըշտին նստեցին հաց կերան, դես-դեն:
Տըրանք խայնըվեցին եկան ու էս տղին փռո-
նեցին, փռոնեցին էս տղին տըկըրեցին, մը
լավ էլ թակեցին ո՛ւ ոտները, ծեռները կա-
պեցին ու ճանապարդեցին, էտ կընանիքը վե
կալան ու դույ ըլան:

Էս տղեն շատ կըցավ, քիչ կըցավ, մի սուտ-
կա, ըտիան ո՞նց ըլավ, ի՞նչ ըլավ, մի դուշ
լեզու ըլավ, թե ասեց.- Վոտմերիտ կապը
սիենց,- սիենց կապած էր,- Ետ արա՛:

Ետ արավ: Ետ արավ, նստեց, մտածեց ու
տյուս պրծավ եկավ տյուս եկավ հո՛ր աշխա-
րը:

- Արա՛, ա՛ ամանմուսնի, բա ես ծեզ վա-
դուքյուն արի՞, որ տուք ինձ սիե արի՞ք:

Հերը թամուզ կետ առ, կետ առ մա՞ցով,
կանչեց երկուսին, թե ասեց.- Այ տղեք, մըչև
տասնհինգ հորպե ծեզ ըստի չտենամ, եթե
ծեզ ըստի տեհել եմ, կըտորիլ դեմ, իմ ծեռով
կըտորիլ դեմ ծեզ: Ի՞մ աշխարհը տյուս եկեք,
որ աշխարհ ուզըմ եք, քյնոցեք, իմ էս քաղա-
քըմը, որ յուրուշ քաղաք կարող ա քյնոց, ընդի
էլ չկենաք է՛, հեռացեք, հեռացեք, էլ աչկես
ծեզ չտենա՛:

Էս տղեն մնաց, տըղանց քոչըցրավ դենը,
էս տղեն մնաց տըրա մոտ: Էտ էլ սիե վեր-
չացավ:

19(19). ԹԻԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Է՛, պառավ կյնգա՞մ մի հատ տղա ա ունենըմ,
իրան տղեն ա, պայց տա՞ մորուցը, որ ծնվել
ա՛ ծնվել չի, տա՞՛ թի՛լ, թի՛լ, թի՛լ, թի՛լ: Ենքան
թիլ ա, որ մերը ճուրղ լըցնըմ ա տընըմ ընդի,
կըռանըմ չի, որ ճուրղ վեր ունի, որ խմի,
պետկ ա պիրես պեռնին դեմ անես, որ տա
խմի: Պա՛յ, քու տունըտ չքանդվի, էս ի՞նչ ցավ
ա: Հմի տա՞ սիե ապրըմ ա: Տա՛ ասեց.- Ա՛
ման...

էն օճը¹ դե նանի եր, հմի ա, որ մամա, մայրիկ ա տոռել, էն օճը հետ եր՝ նանի, նանի, նանի²:

- Նանի՛, - ասեց:

- Ի՞նչ ա, բալա:

Թե, - ասեց, - քյընը ես թաքավորի մոտ:

Ամեն օր քյընը ա թաքավորի կուշտը, լճվից-վաղից պիրըմ էտ շանը պահըմ՝ էտ թիւին:

- Քյընը ես թաքավորի մոտ, թաքավորին ասըմ ես, ախճիկըտ իմ տղեն ուզըմ ա:

- Արա՛, ա՛յ բեմուրազ, արա՛, ա՛ թաղեն քե, ա՛ մեռնես տու, ես որ քյընը ասեմ՝ ախճիկըտ իմ տղեն ուզըմ ա, բա իմ տղեն... տու կռա-նըմ չես, թե ծուրը վեր ունես խմես, ո՞նց քյընը ասեմ:

- Տօ թու գործը չի՞, քեզ ինչ ասեմ, տու ինձ ուշ կալ: Քյընը՝ ասա՛՝ ախճիկըտ իմ տղեն ուզըմ ա:

Քյընը ա, վախըմ ա թե ասի՞, ըլետ փեշը հացով-մացով լըցըմը, վեր ա ունըմ կյալի: Էս տղեն տըրը գլիզ հողուն չոքեց, չոքեց: Հա-մա ուրուշ մի պոն չկա, էն ա տիե քյընը ա-կյալի: Այ տղա, քյընը, հմի կյալիս չի, սիե ոտը դեմ ա տվել:

- Ա՛ պառավ, խի՞ չես քյընը, ա՛ պառավ, խի՞ չես քյընը:

- Թաքավորն ապրած կենա, ուզըմ եմ մի պոն ասեմ է՛, մի պոն ասեմ:

- Ի՞նչ ա, ասա տենամ մի:

Թե ասեց, - Բու ախճիկըտ իմ տղեն ուզըմ ա:

- Հո՛ւ, ես քո՛ւ քալթառ դեսը-դենը, - ասեց ու դարավաշներին հիս արավ:

Էս պըռալին հըչքել տվին, հըչքել տվին, հըչքել տվին, էն, էն էլ տեղը թաց մնաց, տեղ չմնաց: Լաշը սկըցրին ճամփա տըրին:

- Բեյմուրազ տու, - ասեց, - ա՛յ գյաղա, տու բեյմուրազ ըլես, խի՞ ես ինձ սպանիլ տալի:

- Անգաճ մի տիր, ա՛ նան, անգաճ մի տիր, տըրենց էլ կըլի, տըրենց էլ կըլի:

Էքսի օրը քյընը, ըլետ թակեցին ճամփա տըրին: Տըրը մյուս օրը, որ մեկ էլ դարավաշ-ներին հիս արավ, որ թակեն, ախճիկը տանի-ցը տյուս պըրծավ եկավ տըրենց չիմունն էլ ալիոր արավ, ածեց էն դղն, ընքելը.

- Բա հըմանըմ չե՞ք, բա ամոթ չե՞ք քաշըմ, հայրիկ, մայրիկ, տու ի՞նչ ես ասըմ, բա էս կետի տարած կնիկը ընչի՞ տեր ա, խի՞ եք սիե անըմ, - ասեց, - խի՞ եք ճարթըմ, փշըրըմ, կոտ-րատըմ:

Թե, - Բա էտ ի՞նչ ա դալաթնի անըմ, էտ ի՞նչ ա ասըմ:

- Լավ չի՞ ասըմ:

- Է՛լ:

- Տղին կա մի բախտ, ըխճկանը կա մի բախտ, միգուցե մեր բախտը տիեց ա, խի՞ եք տուք տիե անըմ, միգուցե իմ ճըկասի կյիրը տրըմ տղի վրա ա կապված, տըրըմը իմի վրա ա կապված, խի՞ եք մարթ սպանըմ, ինչի՞ համար եք սպանըմ: Ըխճկա վրա ասող շատ կիլի, խոսող շատ կիլի, խի՞ եք սիե անըմ:

Տիե մի խելախ հայիոյեց, չըմունն էլ տըզը-ցրավ, պառավը քյընը: Էս պառավը քյընը ասեց կետ առ, կետ առ, հա՛, քյընը կետ առ, կետ առ ասեց, ասեց պրծավ, էն էքսի օրը էլի քյընը: Թե ասեց, - Վե կաց հետը կորի քյըն, հետը վե կաց կորի քյըն:

- Լճվ:

Էտ ախճիկը պիրավ էրկու չամաղան, ամեն մի պոնիցն էլ շինեց, էրկու չամաղան շինեց, կապեց ուտելիքեղենիցը հետ, հաքնիլըքեղե-նիցը հետ, պոնիցը սիե փոնած վե կալավ դույ ըլավ: Եկա՛վ տուն, եկավ տուն տեսավ՝ Թիլը թախտի վրա նըստած, փետը չանին սիե դեմ արած: Թաքավորի ախճիկը քյընը էն դղեն կաղնեց, պառավը ճօհրը տըրավ դաքի՛ն, ճօհրը՝... Սիմիայն պառավին պահ ա տվել, - Ինչ ուզըմ ա ըլի, ծեղըրտ մի պոնի չի տաս, ասա. «Էս գործ չունեմ, հետա՛յ պիրել եմ, թող տը թու ինչը տա, ես էլ գործ չունեմ քեզ հետ»:

- Լճվ:

Տօ էլ ճօհրը տըրավ դաքին:

- Ա՛ նան:

- Հը՞:

¹ Օճը – ժամանակը (հավանաբար) (ժանոթ. բանա-հավաքի):

² Բանասացը պատմությունն ընդմիջում է բացա-տրությամբ (ժանոթ. բանահավաքի):

- Ծարավ մեռնում եմ, մի ստաքան ճուր տու:

- Գործ չունեմ, կորի՛,- ասեց,- հետա՛յ,- ասեց,- տորանից ուզի, ես գործ չունեմ:

Էտ ախճիկը տեղիցը ծուլ ըլավ, բաժակը լըցրավ, տորավ թեփշու միջին, տարավ տըրավ տյուս դոլ՝ մի վարթի ծառ կար, էտ վարթի ծառի ըռխըմը: Տարավ տորավ ըսի:

- Թիլ:

- Յամմե:

- Յրե հա՛յ ճուրն , - ասեց,- քյնտ վե կալ խմի:

Թե,- Բա ես ո՞նց քյնտ վեր ունեմ խմեմ,- ասեց,- կարալ չեմ է՛:

- Խի՞, խի՞ չես կարալ,- ասեց,- էրկու ոտն ա էլի՛, հը՛, մին-էրկու, քյնտ վե կալ խմի,- ասեց,- Բա ես քյնըմ եմ, տու կարոմ չե՛ս քյնտ,- ասեց,- քյնտ, քյնտ,- ասեց,- Թիլ ջան, քյնտ: Զյնտ վե կալ խմի:

Չոքիլով վե կենալով, չոքիլով վե կենալով, բայց ճըլլիլով՝ քյնտց, քյնտց էտ ճուրը վե կալավ խմեց: Խմեց բաժակը տորավ ըսի, ետ տառնով եկավ ետ թըմփալա վեր ընգավ տեղը: Եկավ վեր ընգավ: Էքսի օրը նանին պահ տվավ,- Պ՛նն չի շիանց տաս հա՛, մի սալն էլ ա շիանց չտաս: Ասա՛ «Խմորի ենք, խմորի ենք»,- ասա՛ «Մի քիչ ալիք եմ ճարել, խմորի ենք, քյնտ ըսիքքան մի քիչ չոփ-մոփ արա պի, հաց դեմ թխիլ,- ասեց,- հաց չի կա»: Նա ինչքան ուզեմ ա ժընգըցնի, քե գործ չունես: Ղեհ:

- Ա՛ նան, սոված եմ:

- Ղե հմի սոված ես, ա՛ բալ ջան, ի՞նչ անեմ սոված ես, էլ հաց չի կա, մի քիչ ալիք կա,- ասեց,- քյնտ ըսիքքան, էտ չըփըրտակերիցը մի քիչ չոփը-մոփ արա պի կրակ անենք, հաց թխենք, քյնգի վրա հաց թխենք, համ մենք ուտենք, համ տու կե, են էլ կերակուր կեփենք:

- Ա՛, բա էտքան կարա՞մ:

- Կարա՛ս, կարա՛ս, քյնտ:

- Զյնտ, քյնտ,- թաքավորի ախճիկը,- քյնտ Թիլ ջան, քյնտ,- ասեց,- հրե հա՛յ չոք-չոք անիլով, պալըզիլով, վե կենալով՝ քյնտ, մի կըռնատակ արա, ընքելը ըլետ տե՛ն վե կալ արի:

Տըհե անիլով, տե՛ն անիլով, տե՛ն անիլով՝ էքսի օրն ընգավ: Էտ էքսի օրն էլ ետ դարգեցին, դարգեցին, կյուխը եղեցին դարգեցին: Զյնտց ըսի չոփ-մոփ արավ կիտեց, որ վեր ունի կյա, տեսավ գըրեց, գըրեց, գըրեց, գըրեցովս սա՛ս ա կյալի, մի վախտ մտիկ արավ տեսավ, որ մի քյնտվան ա, կյալիս ա, դե շոշի ճամփե՛ն ա, էս շոշն ա, ըս էլ նրա տունն ա, կյալիս, որ ըսիով քյնտ՝ շոշովը: Ե-կավ, տեսան էտ Թիլը ըսի կաղնա՞ծ՝ փետը ծեռին:

- Պ՛ան, արա՛ Թիլ, տու ե՛ս:

- Յա՛, խազեյին, ես եմ:

- Արա՛,- ասեց,- էտ ի՞նչ լավ պան ա,- ասեց,- խի՞՞ չես կյալի քյնտց,- ասեց,- մեզ հետ: Ամիսը քեզ կտամ,- ասեց,- տասը մանեթ, արի՛ քյնտց:

Խոսկի էլի:

- Բա ո՞նց կյամ, կարամ կյա՞մ:

- Կարա՛ս, կարա՛ս, արի՛ քյնտց,- ասըմ ա,- արի՛ քյնտց:

- Ղե կաց քյնտմ թաքավորի ըխճկանը հըրցենեմ, տեսնա՞մ ի՞նչ ասըմ ա:

- Արա՛, ա՛ սրա բալեն մեռնի, սա՛՝ ո՞վ, թաքավորն՝ ո՞վ, ո՞նց թե քյնտմ թաքավորի ըխճկանը հըրցենեմ:

Փետը ընդի բուրախեց եկավ:

- Ա՛ նան:

- Յը՞, ի՞նչ ա:

- Այսինչ բազըրգյանը ի՛նձ ասըմ ա՛ արի քյնտց, ի՛նչ ես ասըմ:

- Շատ էլ լավ ասըմ ա,- ասեց,- Թիլ ջան, լավ ասըմ ա, շատ էլ լավ ասըմ ա, քյնտ,- ասեց,- ա՛միսը տասը մանեթ ա տալի՛:

- Յա՛:

- Շատ էլ լավ ա տալի, վախիլ մի, քյնտ, տասն էլ ես վրեն կտընեմ, քյնտ, քյնտվտ քյնտ պահի, քյնտ,- ասեց:

Վե կցավ եկավ տըռնաց կուշտը: Մի դավա նստըցրին, ընքելը էտ Թիլին տըրին վրեն, յալլա՛՝ քշեցին քյնտցին, քշեցին քյնտցին ու քյնտցին: Տա՛ մի տարի ըսի ետ ընգավ, մի տարի:

Յա՛, ներեղություն, տա՛ որ տե՛ն քյնտց հա՛, մի ճըրաֆորի ռա՛ստ եկամ: Մի ճըրաֆորի որ ռա՛ստ եկան հա, էտ ճըրաֆորին, պիրին չոփ

քցեցին, որիս դի ընգնիլ, որ քյնալ դի, որ ընդի կաղնի, թախտ կա շինած, ընդիսան, ճուր հա-
նի, որ դավենուն ճուր տան: Չուրը քցեցին, ե-
կավ հակառակի ետ թիլին ընգալ, թիլի կըը-
նըտակերիցը կապեցին կախ արին: Կախ ա-
րին քյնալ, որ էտ թախտի վրա կաղնեց, մտիկ
արավ տեհավ՝ մի տուռն էտ դոլի վրա պաճ ը-
լավ, մի տուռը էտ դոլիցը պաճ ըլավ, մի, աշ-
խարիս տակին մի շքեղ, սուրուն ախճիկ ընդի
կաղնած, մի սև, իշախառանջի պես ախճիկ էտ
ըստի կաղնած, էտ գյաղեն սիե վազ տվավ
ընքելանը կըռները սիե պատ տվավ էտ սև
ըխճկանը պաչեց, որ սա սևին պաչեց հա՛, էտ
սուրունը թե ասեց.- Ի՛, խելքըտ աստոծ առ-
ի,- ասեց.- բա ինձ պես կեղեցիկին կբրա-
խեն, էտ սևին կպաչե՞ն:

Սխըրն էլ չի, ասեց.- է՛, մի քիոր ունի, սըրա
մանա էր, գիդացի թե իմ քիրն ա, ընդուր պա-
չեցի:

- Հա՞:

Թե.- Հա՛:

- Դե, առ, համեցեց.- էտ նուռը քեզ փեշքեշ
եմ անցմ.- ասեց.- կըղարգես քու քվոր հա-
մար,- ասեց.- պաղարկա: Մի հատ նուռը, ոնց
որ... իսկական նուռը: էտ գյաղեն ջըըը տը-
րով, էտ տըռները ըլետ հետ ըլավ, ու ուխտը
ճըրեցին պըրծան, տըռան հանեցին, հանեցին
տյուս դոլ, հանեցին տյուս դոլ, հմի ըստի չոփ
են քցել, որ խազեյինը դի յետ տառնալ, քյնա
ապրանք առնի պաղրաստի, չըքել տըռանք
տանեն ծըխծըխտըն, որ միէլ էտ տառնան
կյան ըլետ պեռնեն, որ քյնան: Եկավ ընգալ
էտ թիլի խազեյինին: Հմի էտ թիլի խազեյինը
էտ ա տառնել, արթեն տվավ էն մի խազեյինին
ու ինքը յետ տառնավ, որ ըստի ըլետ էրկու
դավա, էրկու հընգեր են էլի, ամեքի միար էտ
պեռը պաղրաստի, որ մեկէլ որ կյան, հազիոր
ըլի:

Թե ասեց.- խազեյին, խազեյին:

Թե.- Համեն, ի՞նչ ա,- ասեց.- թիլ:

Թե ասեց.- էտ նուռը խընթորմ եմ,- ասեց.-
խազեյին ջան, կքյնա ընդի կկաղնես՝ թաքա-
վորի ախճիկն ապրած կենա, տյուս արի, որ
տյուս կկյա, էտ նուռը կտաս իրան:

Տըռանք մնացի՞ն ըրմացած:

- Արա՛, թիլն ին՞չ, թաքավորի ախճիկն
ի՞նչ, ա՛ շան տղեք, էս ի՞նչ պան ա:

- Դե պան ա էլի, պըտահել ա:

- Վե կալավ, թե ասեց.- Լա՛վ,- թե ասեց,- որ
մեռնեմ էլ, տանիլ դեմ մի տենամ.- ասեց.- սա
էս ի՞նչ պան ա:

Էտ նուռը տարա՛վ, տըռանը կաղնեց:

- Թաքավորի ախճիկն ապրած կենա,
թաքավորի ախճիկն ապրած կենա:

Տյուս եկավ, մի, մի, մի, մի մարալ տյուս
եկավ:

- Հը՞, ասա, եխալայր ջան:

- Համեցեց.- ասեց.- էտ նուռը թիլն ա
ուղարկել քեզ համար՝ պաղարկա, համեցեց
էտ նուռը:

- Վա՛յ, մեծապատիվ շնորհակալ եմ քեզա-
նից էլ, թիլիցն էլ, շատ շնորհակալ եմ:

Ու խազեյինը վե կըցավ դուր ըլավ: Էս
նուռը պիրավ տըրավ, մի տախտակ ա՛ մըքամ
թե ըստուլ ա, պիրավ տըրավ էտ տըխտակի
վրա: Մի օր, հինգ օր, տաս օր տեռ մնաց էտ
տըխտակի վրա:

Թե.- Ամա՛յ,- էս թաքավորի ախճիկը:

Թե.- Ի՞նչ ա, բալա ջան:

- Հալքեթ,- ասեց.- նա շատ ա կերել կուշ-
տացել, կըտընեց,- ասեց.- մընք էլ համը տե-
նանք էլի, էտ նոռն:

- Քե մատաղ,- ասեց.- քեփը քունն ա,-
ասեց.- ուզմ ես կըտրի, ուզմ ես պահի, ի՞նչ
ուզմ ես արա, բա ինձ ասըմ ես՝ ի՞նչ անեմ,
բալիկ ջան:

Պիրավ տըրավ ըստի, ընքելը դըմալթին
հանեց, ըստի պիրել ա հետը, մի դըմալթի հանեց
տըրավ կե տեղը, ընքելը սիե հուփ տվավ, որ
հուփ տվավ, էրկու տալ ըլավ սիե, բիթա՛վ
անկին քար, բիթա՛վ անկին քար, խուրդա
քար, անկին խուրդա քար, ուրխանիլեն,
ուրխանիլեն՝ սիե հվաքեց ու ածեց յաշիկի
մեջ ու տուռը փակեց: Մինը մի աշխար ա: Էս
անգին քարերի ըռեխը տվավ, մինը ըստի
տարավ ծախիլ տվավ, մինը ընդի ծախիլ
տվավ, մինը ընդի ծախիլ տվավ, պիրին
ընքելը ըստի երեք հարգից հայաթնի ընքըն-
րեկան վե թողիլ տվավ, ինժիները վրեն կաղ-
նած, իրեք հարգից մի հայաթ պաղրաստիլ

տվալ, էլ չեմ կարող ասեմ, չվաքը հոր պատին չվաք անըմ ա՛ հայաթի:

Ես թիւը տառ հըլն կա ոչ: Թըմամվեց տարին, տարին թըմամվեց, թիւը ետ տառնալ եկալ, ետ տառն եկան ըտեղ, հիմա տառ կալիս ա, որ տանովը հընցնի, որ քյնա: Հմի եկել ա, իրան տան տեղը ճընանըն չի:

- Արա՛, էս հայաթը սիե ունացել չենք, էս հայաթը ետ որդիա՞ն ա: Ես հայաթը էս ո՞վ չիմեց, էս ի՞նչ ըլալ, ո՞նց կըլի:

Հը՛, հը՛, տեսան, որ դե տառ թիւի հայաթն ա: Ետ թիւն էլ եկել ա տան տեղին մտիկ անըմ ա, քյնըմ ներքի տուտը, կյալի վիրի տուտը, քյնըմ ներքի տուտը, կյալի վիրի տուտը: Ես ախճիկը փորը քեցեց ակոշկովը՝ ուլիցներին մտիկ անիլով, մտիկ արալ տեհալ, որ, պան, էտ թիւն ա, կյալիցը ցից արած սիե կյալիս ա, մտիկ անիլով՝ քյնըմ դենը, քոծին ասեց.- Այ ախճի, ա՛յ ախճի, այուս արի:

Տյուս ա կյալի:

Թե ասեց.- Են մարթին փըռնի, ասա՛ կանչող կա, խանըմ կանչըմ ա:

Եկալ տըռն փըռնեց, թե ասեց.- Խանըմը քեզ կանչըմ ա:

- Խանըմը ի՞նչ գործ ունի ինձ հետ, ես կյուրոթյուն չեմ արել, մի պան չեմ արել, ո՛ւր ա ինձ կանչըմ:

Թե.- Գիդըմ չեմ, կանչըմ ա, հրե ընդի:

Եկալ, եկալ, դըրվագեն պոց ա, մի մտալ տեսալ էտ թաքավորի ախճիկը ըտի կաղնած:

- Բարև:

- Բարև:

- Բարև:

- Բարև:

Պըռոշտին տառնալ ըտի մի կապել:

- Դե, խազեյին ջան, քյնացեք ծեզ համար ծեր ըշխաղանքին, էլ ես չեմ կյալի:

Ախճիկը պաղասխանը տանըմ ա.- Քյնացեք:

Քյնացին, տա ըտիան ըսկսեց իրան ուղիլը: Հիմի խաբարը տանը որդիի՞ց, խաբարը տանը հորիցը, հորից տանը: Մերը ասըմ ա.- Այ մարթ, ա՛ ըու օջախըտ խըվարի, ա՛ ըու սիրտըտ սեանա, ա՛ տու ողես-ղեն ըլես, բա ախճիկըտ մարթի տվիր, ախճիկըտ տարան, էս ա տարուկես ա՛ տարել եմ, խի՞ չես միետ ասըմ, թե. «Մեր ախճիկը դուրը կորալ, որդի՞»

կորալ, դուրը քյնաց»: Խի՞ չես միետ մի պան ասըմ:

- Բա ջըհանդամի ատակին, նա ինձ ասել ա՞, որ ես ասեմ:

- Հը՛, դե, դե վե կըցեց, վե կաց, վե կաց տե՛նանը ո՞նց ա, վե կաց տե՛նանը, քյնանը ման կյանը, տե՛նանը որդի... ոսկուռն էլ ա կըթա՛նանը: Վե կա՛ց:

Վեր ա ունըմ մարթին, թաքավորի կնիկը, կյալի, ման կյալով, տեղակիլով՝ կյալիս ա ցույց տալի, որ էտ ա, որ էտ ա: Տեսան, որ դե տառ յա, էտ շենքեդն էլ տըռնն ա, արթեն չվաք անըմ ա իրան հայաթին: Դե ըտի տառնալ ըտի մե՛ծ պատմություն, էտ էլ տիե քյնաց, տըռնեց քյնաց, քե մատաղ ետ:

Կարճ էր, տառ, հե՛չ:

20(20). ՃԱՐՊԻԿ ՏՂԱՏ՝

Մի քաղաքըմ մի խանաթ հըրոմի ա պաճառ կյալի: Էտ քաղաքի ժողովուրթին թա՛մուզ կերել ա ռաղ արել, էտ քաղաքը թըմըզ-վել ա, էլ մի մարթ, փափախտլ, չկա: Էտ հըրոմին էտ քաղաքը միջին մի հատ տառփին ա թողըմ, մի հատ վորցակ, մի հատ շու՛ն էտ քաղաքի միջին: Վորցակը կանչի, քյնացող-եկող կըլի ասիլ դեն.- Ա, էտ քաղաք ա, ժղավուրթ կա, քյնանը:

Էտ մարթի աչկը լիս, թե ոնց դի կուլ տալ: Շունը հաչի՛, ասիլ դեն.- Արա՛, քաղաք ա էլի, շըներ են հաչըմ, քյնանը:

Էլի նույնը:

Վերջ տիե ընչով: Էտ մարթն էլ, էտ հարա՛մի շունը, տասնհինգ տուտկա քըմ ա, տասնհինգ տուտկա ման կյալի, տասնհինգ տուտկա ման դի կյալ, տասնհինգ տուտկա՛ քնիլ: Աշխարհաշխարհ սիե ման ա կյալի:

Էտ մարթն էլ ունի քառասուն օթախ: Քառասուն օթախի եռեսունինը օթախը [էտ տղին] ման ա ասել, մի օթախը ման չի ասել: Ասըմ ա.- Խի՞ չես են մինն էլ չիանց տալի:

- Չէ՛.- ասըմ ա.- չի կարելի:

Չուտ մի ծիապահ ա, գուտ մի ծիապահ, էտ, էտ մի ծիապահն ա, իրան իմաստուն մի

հատ ծի ունի, տըրա, իմաստուն, ինքն էլ չի գիդըմ, որ էտ ծին իմաստուն ա:

Տա եկավ մտածեց, մտածեց, էտ գյաղեն շատ մտածեց, քիչ: Տա հմի միջին ա: Բյնաց տա օթախը մտավ սհե մտիկ արավ տեսավ, թե հանիրն իրան ա քաշըմ, իսանաթ ա, թե ուզըմ ա հանիրը քաշի, ըստիան հետ պերան ա¹, սհե պաց ա ըլըմ, խուփ ըլըմ, պաց ա ըլըմ, խուփ ըլըմ: Մտիկ արավ տեսավ պըլանիքը էս բողազի ըստիըմը տըրած ա՝ էտ պըլանիքը: Կամաց պըլանիքը վե կալավ քյնաց տուռը պաց արավ, տեսավ էրկու կըրանդ ա, սհե ամեքի տակին մի աման տըրած, մինը կաթըմ ա, ոսկի ա կաթըմ, մինը կաթըմ ա՝ էրծաթ ա: Ծեղի մինը սհե արավ, ըստեղեն հետ ոսկի տառավ, էն մինը սհե արավ՝ էրծաթ տառավ, սիրտը ճաքիլեն՝ տուռը մեհենց կիսատ թողեց, կիսատ թողեց ու վազ տվավ եկավ ծիու կուշտը, թե. [ծին ասեց թե].- Բու տունը քանդվի,- ասեց,- ժած ա եկել,- ասեց,- վեր ա կենըմ,- ասեց,- ծին թամբի, շուտ արա թամբը պի ըստի:

Թամբը տրավ:

- Արա, շուտ արա,- ասեց,- շուտ արա տուս պի, որ տյուս եկավ ինձ էլ դի կուլ տա, քեզ էլ: Ծին տուս պիրավ, ոտը զանգվըմը տըրած ոտը աշմիշ անիլիս տուռը շըղըխկալա պաց արավ, պաց արավ, ծին օթ ըլավ, որ օթ ըլավ, տա տըրա եղնա շպըրտեց իրան, դես-դեն, ինքն էլ քամի տառավ, յալա²:

Կորավ: Էս տղեն հետը՝ վրեն, կորավ: Տա իրան պըտիտ տըվավ, պըտիտ տըվավ, տաս-նհինգ օրը թըմամեց պըտիտ կյանվ, էս քաղաքը, էն քաղաքը, էս քաղաքը, էն քաղաքը, է՛, աշխարը սհե ման եկավ, կա ո՛չ, կորավ: Եկավ ըլետ մտավ իրան քնի մեջը:

Էս մարթը... էս ծին տըրան տրավ մի թաքավորի պալատի կըշտին կաղենց³:

Մտիկ արավ տեսավ, որ մի չոբան հեռո՛ւ ոչխարն ըրըծըցնըմ ա:

Ծին թե ասեց,- Այ տղա, այ տղա,- ասեց,- վազ տու քյնա էն չոբանի կուշտը, ասա՛ ինձ մի տողլի տու, մի էտ տու, մի ըստակածը կունենաս՝ ինձ տու էլի, մի պան տու, ինչ որ ուզի՝ կտաս, կըպիրես:

Բյնաց:

- Ա՛ չոբան, ա՛ քու որթու արևին մատաղ, հիվանդ իծից, վըջխարից կունենաս, մինն ինձ տու, սհե, դես-դեն:

Մի էտ ունի՝ քամակը որթն ընգած: Թե,- Սա ծախըմ եմ:

- Ի՞նչ տամ:

- Հինգ շահի:

- Առ, քեզ տասը շահի:

Էտ էծը վե կալավ պիրավ, թե ասեց,- Շուտ արա,- ասեց,- մի մորթին վե կալ⁴:

Մորթին պուկեց քցեց էն դղեն, ջամդաքը քցեց էն դղեն, մորթին վե կալավ: Թե ասեց,- Դե էտ մորթին կես արա, ընքելը կեսը,- ասեց,- մի փափախ, սհե մի լավօսալ փափաղ բանդի ասղով, կյուլիլըտ կոխի՝ ընգընտակերքըտ հետ, կյուլիլըտ կոխի՝ ոչով չի տենա:- Ու ասեց,- Էն մնացածները դեն քցի կորչի: Բյնա,- ասեց,- խընըմքարին մստի ըտի,- ասեց,- թաքավորը յեղով,- ասեց,- պան կիմանա, խայտառակ կանի:

- Լավ:

Բյնաց խընըմքարին մստեց, թաքավորը տյուս եկավ:

- Այ տղա, ի՞նչ տղա ես, համեցեք, դեսն արի՛ քյնանք, էտ ի՞նչ ա, ի՞նչ ես ուզըմ:

- Սոված մարթ եմ, թաքավորն ապրած կենա, մի գործ տու գործ անեմ էլի:

Թե ասեց,- Այ տղա, բա քե ի՞նչ գործ տամ:

- Ի՞նչ ուզըմ ես, գործ տու էլի:

Տըրան պիրին տըրին դազերի վրա: Տարավ ըրըծըցրավ պիրավ, մի բանի օր տհե կըցավ: Մըհիլ վե կալան պիրին տըրան տըրին ծախկանցի վրա: Իրեք ախճիկ ունի տըրան [թաքավորին], էտ իրեք ախճիկը օրեկան մի անքամ կյանիս են մտնըմ էտ ծախկանցի մեջը, հովուը կապած, հովուընը լըղանըմ, անց կենըմ քյնըմ իրանց տեղը: Էտ գյաղեն էլ ընդի քրտընքի միջին էրվըմ ա, սհե խըրովվըմ

¹ Բանասացը մեծըրվ ցոյց է տալիս հարամու քե-րանի մեծությունը (ծանոթ. բանահավաքի):

² «-Կերա՛վ,- անհանգստացած հարցնում է բանա-սացի թողը» (ծանոթ. բանահավաքի):

³ «- էտ ծին տարա՛վ,- կրկին հարցնում է բանա-սացի հետաքըրբասեր թոռնիկը» (ծանոթ. բանա-հավաքի):

⁴ Բանասացը ցանկանում է ասել, որ պետք է շտապ մորթել և մաշկել:

ա, որ էլ ի՞նչ ասեմ, տապ անըմ ա, ըխճկեքը լըղանըմ են:

- Այա՛, բա ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, դուրը կորչեմ, ի՞նչ հնար անեմ:- Թե ասեց.- որ գիդենամ ինձ թիքա-թիքա կըտորիլ էլ դի,- ասեց.- լըղանալ դեմ,- ասեց.- մեռնըմ եմ, ի՞նչ անեմ:

Ըխճկեքը եկան մի տառնա լըղացան պըրծան ու տոյուս եկան, թուշթուշնա մտտոտեցին, իրանց շորերը հվաքեցին, հըվաքեցին, իլե դոյ ըլան, տուն քյնալու թուշըմ՝ էտ գյադեն եկավ, եկավ հովուզին հասավ: Էտ պուշուր ախճիկը՝ գլխից պուշուրը, իլե քյնըմ ա սիե յետ մտիկ անըմ, քյնըմ ա սիե յետ մտիկ անըմ, էտ գյադեն, էն անդերը դաքին, իլե սիե պուկեց, գլուխ ընգնիլիս աչկուլըմ ընգնավ, ոնց որ կրակ ըլի, կրակի պես սիե վառվի՛:

Էս ախճակ աչկերը... Էտ ախճիկը թե ասեց.- էս գյադըմը պոն կա,- ասեց.- յավաշ:

Տա տըղա ըսկսեց ուսումնասիրիլը, տըղա՛ն ըսկսեց ուսումնասիրիլը:

Օրերի մի օրը երկու թաքավոր եկան տըղա տուն՝ դոնախ, կերան-խմեցին, թաքավորնի են էլի, տա էտ թուշըմը թե ասեց, հա՛, էս տա ունի բոստանչի, մի երեք հատ ծըմերուկ ու-ղարգեց, հացի վերնուց ծըմերուկի մինը կտրեցի՛ լակ ա, մինը կտրեցի՛ն՝ կետը լավն ա, կեսը՝ չէ: Էն մինն էլ կտրեցին, ոնց որ շաքարն ու շարքաթը խառնես, սիե քաղժոր: Էտ թաքավորը մտածեց, մտածեց, մտածեց, թե ասեց.- Սա ընչի՞ խըմանակ ա,- էտ թաքավորներին:

Թե ասեց.- Գիդըմ չե՛ս, բա տու թաքավոր մարթ ես, գիդըմ չե՛ս:

Թե.- 2է՛:

Թե ասեց.- Էս իրեք ծըմերուկը քու իրեք ախճիկըտ ա, էս մինը տենըմ՝ ես մարթութեցի անց ա կըցել, անց ա կըցել, նրա խըմանակն ա: Էս մինն էլ,- ասեց.- եթե ըստարի մարթի չտաս է՛, տա էլ,- ասեց.- նրա դայդի կուպեկ չաժի, էս մինն էլ,- ասեց.- ա՛յ սա, լավ կըլի:

- Դա՛, հա՛, հա՛, լավ:

Դմի տա տըղանց, տըղանց ընչըմ ա, հա-րայըմն ա ըխճկերանց: Էտ երկուսը քյնաց, էտ

երկու ախճիկը քյնաց, մնաց էտ պուշուրը: Էտ պուշուրի թուշըմը մի թաքավոր տըղա հետ կռիվ վե կցավ, վե կցավ կռիվ, հմի կռիվ մեչ են՞:

Տա ըտիան էս պուշուր ախճիկը որ մընը ա հա՛, էս պուշուր ըխճկանը տենըմ ա, որ հնար չկա, էտ պուշուր ախճիկն էլ տալիս ա էտ դագարածին, լաջու տալիս ա տըղան: Դիմա տա տիե թաքուն էլ կարըմ չի ժաժ կա, էս թաքուն տուս ա կալի, չու քյնըմ կալի պըրծ-նըմ՝ էտ տուն:

Տա, ըտեղից մի թաքավոր տըղա հետ կռիվ վե կցավ, հիմա թաքավորը գլխավոր ինչն ա, գլխավոր կամանդերն ա՛ գլխավոր կամանդերը, գլխավոր մեծը տա յա, մնացածին չիմ մազիդներ, վազիդներ են, կռիվ են անըմ, ո՞նց են կռիվ անըմ, չեմ կարող ասիլ: Թե ասեց.- Այ ախճի, քյնըմ եմ:

Թե ասեց.- Արա՛, ա տնաքանդ, ո՞նց ես քյ-նըմ, կնկատեն,- ասեց.- խայտառակ կըլենք, քյնալ մի՛:

Թե.- 2է՛, քյնալ դեմ:

Տյուս եկավ հեռացավ, դենը մի քիչ քյնաց, սանձքը ջըբիցը հանեց, որ սանձքը տըվավ ո՛չ, եկավ կըշտին կաղնեց, ծին եկավ ու քամու պես կըշտին կաղնեց:

- Դե՛, ասեց.- ոտըտ աժմիշ արա, համա,- ասեց.- լա՛ւ ի՞նչ դուկըմ ա, ի՛ր տենամ,- ասեց.- ի՞նչ ա:

Էս տըղմիցը տվավ, էն տըղմովը տոյուս եկավ, էն տըղմիցը տվավ, էն տըղմովը տոյուս եկավ, էտ կռիվը՝ չիմ արին, ծովի պես սիե արինը խըռալա քյնըմ ա: Ինքը եկավ: Էտ թաքավորը, հմի ծի մատաժ կալիս տեղը, մի, ինքը պիրավ ու իրան մատը շաշկըմը սիե տվավ, իրան մատը շաշկովը կըտըրեց, իրա շաշկովը սիե ըռիխն տվավ մատը սիե կըտըրեց կախ ըլավ: Մատը սիե պիրավ դեմ

² Այստեղ բանասացը կորցնում է մտքի թելը:

«-Դա, էս որդի՛ հասա, արա՛, էս որդի՛ հասա,- ասում է բանասացը:- Էտ ի՞նչ ա, ա՛ բալ:

-Ա՛, ասա, ասա, պապի, ասա՛,- պահանջում է թողը:

-Արա՛, տու ի՛մ մաշալնիկը տառա՛ր, վա՛, էս շան լակտինը, էս ըռիխնը սպասըմ են է՛:

-Ինչքան տու ասել ես, ըղտիցըմ ընգել ա,- արդա-րանում է թողը:

-Դեշտ ա ասի՛լը, բա տու էլ ասա էլի,- ասում է պա-պը» (Ժանոթ. բանահավաքի):

¹ «-Էտ տղե՛ն,- հարցնում է բանասացի թողը» (Ժանոթ. բանահավաքի):

արավ թաքավորին, մատը որ սին դեմ արավ, թաքավորը էլ կըրացավ ոչ... թաշկինակը հանեց իրան, էս տղի մատը սին պինդ կապեց ու հլե կապեց պըրծավ թը չէ, դաքիցը քածի տառնով կորավ: Էլ գիդացավ ոչ թե ո՞վ ա, ով չի, ի՞նչ ա, ինչացո՞ւ ա: Կորավ:

Էտ տղեն եկավ ըտի վեր եկավ, ծին սանձը կըլիսիցը հանեց, ծին բուրախեց, եկավ թաքուն մտավ ըլտ էտ դազանոցը:

Էհ, էտ թաքավորն էլ եկավ քյռաց իրան տուն, ո՞նց ըլավ, ի՞նչ ըլավ ըտի, էտ արունը, էս յաղլուխը, որ կապած ա էտ տղի մատին էլի, էտ յաղլուխը ախճիկը վեր ունի, որ ըվածնա, կըտենա մերը կյալիս ա, հլե սին անըմ ա՛ յորդան դիշնակի տակը կոխըմ: Դա՛, տա ըտեղից յորդան-դիշնակի դաթը, հա՛ էտ յաղլուխը ո՞նց ա ըլե, ի՞նչ ա ըլե, կընիկ ա էլի, կյալիս ա տըրանց տեղաշորը թափ-թափ անըմ, մտիկ անըմ ա տենըմ, պա՛ն, իրան մարթի յաղլուխն ա ըտի կոխած՝ ըռնոտ: Էլ պան չի ասըմ, ո՞նց նիանց ասըմ ա, ո՞նց էլ մարթին ա պան ասըմ, տենց մընըմ ա ըտեղ: Տենց կենըմ ա, որ միառժամանակ կենըմ են, իմ օրն ա ընգըմ տա, էտ թաքավորը ընգըմ ա իմ օրը՝ Ա՛խ, աստո՛ծ: Տըռն աչկերը կուրանըմ ա, աշխարհիս տակին ինչ գիդնականի կա հավաքըմ են. թաքավորի աչկերը կուրացել ա:

Սի՛ն ասըմ ա.- Լա՛վ ա ըլե:

Սի՛ն ասըմ ա.- Պետք ա տըրանից բեթար ըլի:

Սի՛ն ասըմ ա մի պան, մինը՝ մի պան: Վերջը տե՛ն կուր ման ա կյալի: Սի գիդնական՝ շատ լավ գիդնական, կյալիս ա էտ թաքավորին մտիկ տալի, ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, քու աչկերը պանց կըլի, եթե տու մի շիշ փոխի միս ուտես, փոխի միս ուտես մի շիշ, քու աչկերը պանց կըլի, թե չէ քու աչկերին լիութուն չկա՛:

- Արա՛, բա էտ ո՞վ կպիրի, ո՞վ չի պիրի: Ո՞վ կպիրի, ո՞վ չի պիրի:

Թե.- Բու փեսենին սաղ ըլեն, ո՞վ դի պիրի:

- Այ ախճի՛, կանչի կյան մի:

Կնիկը հեռախոսով տալիս ա, կյալիս են ամենը իրանց պալատից կյալիս են:

- Ի՞նչ ա, հայրիկ քան, ասա՛, հայրիկ քան, ասա՛, վախի մի՛, ասա՛:

Թե.- Ի՞նչ դի ըլի, այսինչ գիդնականը ինձ սին ասըմ ա, ի՞նչ եք ասըմ, կարա՞ք էտ պանը:

- Վա՛յ, քու տունը շինվի,- ասըմ ա,- կարալ չենք, մըհիլ քյանք կորչենք էլի,- ասըմ ա,- բա տու մի պան ուզես, մենք կըրենանք ոչ,- ասըմ ա,- էրկու հոքով էտ պանը աչողըցենք:

- Դե,- ասըմ ա,- ծեգա գյուրը, հըլ:

Էս մարթիքը վեր են կենըմ ճանապարհըմ, վեր են կենըմ տղիանը, ծիանն էլ պուծուր ծիան չի, տղիանը էլ թռչող ծիաննի են ըլըմ: Տա ասըմ ա.- Այ ախճի, քյանը են:

- Արա՛,- ասըմ ա,- ա՛ տընաքանը, նիանք էս ա էրկու ժամ ա քյացել են, հմի տեղ հասած կըլեն, տու որդի՞...

- Նիանց էրկու ժամն,- ասեց,- ինձ համար կուպեկ չիարժի, քյանը են:

Թե.- Դե տու ես գիղըմ, տու ես գիղըմ:

Սեց.- Բալամ, քյան,- ասեց,- խըմթի, ասա՛ ուզըմ ա քյան:

Սոր յախեն կտրեց, հորիցը խոռվ ա, մերը քյանց թաքավորին ասեց:

- Ախճի՛,- ասեց,- տա մի հատ քիւռի մինն ա,- ասեց,- ազրեյիլնի են քյանը,- ասեց,- նիանք ի՞նչ դեն շինի, թե տա, էտ կոնդ շան տղեն ինչ շինի, ո՞նց կըլի:

- Դա՛, քըռնդամի ատակին, թող մըհիլ քյան կորչի, ըհը՛, մարթ ա էլի, մըհիլ մարթ ա էլի, թող քյան էլի:

- Դե քյանը ա՛ քյան, քյացեք թովաչուն ասեցեք, հրե մի ոտը կտորած ճուրի կա, ասա՛ իրան տու, թող նստըմ ա դուրը քյանը ա՛ քյան:

- Էտ ոտը կտորած ճուրին,- ասեց,- տյուս պի:

Տյուս պիրին, չլիսին տալով կյալիս ա՛ ինձ դայդի: Աղաք արած պիրին ըտի, էս տղեն տյուս եկավ՝ լանթերի միչին, եկավ ճուր ոռին տալով, տալով՝ մի փոս կար, էտ փոսի վրա տարավ ոտներիցը փըռնեց չալտեց, սենց քըռնչեց ու քցեց էտ փոսի մեջը: Սանձը տվավ չէ՛ ծին կաղնեց

¹ Բանասացը ցույց է տալիս, որ աղջիկը ներքնակի ծայրը բարձրացնում է ու թաշկինակը պահում (ծանոթ. բանահավաքի):

² Բանասացը նկատի ունի իր առողջական վիճակը և վատ տեսողությունը (ծանոթ. բանահավաքի):

- Յը՛, սանըի գյորըմ,- ասեց,- ա՛ դարդընը ալըմ,- ասեց,- գայեքնիմ քյոցե է՞ն՛:

Ոտն ձածիչ արավ, մի էրկու վարկայի¹ մի- չին քյեմը դաքերնուն ընգձով, թռավ քյեմ՝ց, մտիկ արավ տեսավ, որ փիղը պըրանված, էրկու ճուտ ունի, ծիծ ա տալի, ծին դուշշալա՛ վըր էկավ էտ թուշեն: Որ ըստիցը՞ որ տվավ ո՛չ, սոր ա ըստակել, թե էրեգի, ոտերը քըցըմ ա: Շաշկով շըլիքը կըտրեց՝ էտ փիղի, քցեց ընդի ու էս կաթնիցը մի բոթիլ՝ ըռիսիցը հետ լըցրավ ու ընքելը ընդամի՝ մի հատ ձնդձմն էլ կտրեց ու ծիու վրա կապեց, ոտն ձածիչ արավ ու դուշ ըլավ: Եկավ մեր էտ դաժուտի³ պես մի դաժուտ կա, էտ դաժուտի դրաղին ճամփեն ա, ճըմփու դրաղին մի թե՛ժ կրակ արավ, կրակ արավ ու էրկու հատ փեչատ էլ տըրավ ըտեղ կրակի դրաղին: Մի վախտ եկան, եկան, եկա՛ն հասան:

- Պառի աչողըմ հընգեր քան:

- Աստծու պառին, աստծու պառին, բարով հազար պառի եք եկել, տղեք քան, բարով հազար բարի եք եկել: Էտ ո՞ր եք քյըմ, խեր ըլի՛:

Թե.- Բա, քեզ մատաղ,- ասեց,- հընգեր քան,- ասեց,- միկուցե ըստիեք գիղենաս որ- դի՞,- ասեց,- փիղի միս կըճարվի:

- Յա՛, - ասեց,- պահ, բա էտ փիղի միսն էլ եմ ես տալի, կաթն էլ եմ ես տալի, չիմ իմ ծեռին ա էլի, քե մատաղ,- ասեց,- ընչի՞ եք էտքան ընչարվո՛ւ:

- Ղե, հըն, քե մատաղ,- ասեց,- դե որ քու ծեռին ա, քու ծեռին ա, ի՞նչ⁴,- Թե.- դե լավ, սաղ ըլես,- ասեց,- դե որ կըտաս՝ կըտաս:

Մաշկեց էն միսը՝ ձնդձմը, մի փըլանչա կըտրեց, տըրավ ընդեղ, տըրանց պիրավ, բո- թիլը պիրավ ճուր ածեց մեջը լըվացավ ու մըխելախ կաթն ածեց, մի ըստաքան փիղի կաթն ածեց մեջը, ճուրը պիրավ լըցրավ:

- Յամեցեք,- ասեց,- էս ծեզ կաթը, էս էլ ծեր միսը, միմիայն թե,- ասեց,- կացեք, փեչատիլ դեմ եղով, վերջը վերջու,- ասեց,- ինձանից հա- չիվ դեմ պահանջիլ, պետք ա ծեզ,- ասեց,- փեչատեմ:

- Ա, ո՞նց դես փեչատիլ:

- Մըներիտ,- ասեց,- ճակատը դեմ,- ասեց,- դամդիլ, մըներիտ ոռի թուլը:

- Պահ, քու տունը քանդվի,- ասեց,- էտ ի՞նչ ես ասըմ:

Թե.- Յա՛, մըներիտ ոռի թուլը դեմ դամդիլ, մըներիտ՝ ճակատը: Ուզըմ եք ռեյի եկեք, ուզըմ չեք, վե տըրեք էտ պամերը, քյոցեք, դուրը քյըմ եք՝ քյոցեք:

Միմը՝ հա, միմը՝ չէ: Միմը.- Ա, էս անվուրու- վուրու տեղը ո՞վ ա մեր ոռին ման կյալի, ատակը, սև խավարը, ի՞նչ անենք է՛:

Դամդը հանեց էն մնի ճըկատի կես տեղը սիե դամդեց, էն մնի էլ՝ ոռի թուլը: Դամդեց, դամդեքն տըրավ ընդի, պիրավ տըրանց նոր տուպան⁵ տըրին, հաթգի միչին, ճանապար ընգձմ: Տըրանց էնքան ճանապարը կյալիս են, տա կերավ էլ, խմեց էլ, խըտոր ընգձով մի քիչ էլ աչքը կըպցրավ քնեց ու վե կցավ սանձքեն տվավ, ծին եկավ: Էտ միսը պանը թամուզ հվաքեց մեշոքի մեջը, ծիու թարքին կապտեց ու հուփ տվավ, եկավ տըրանց կըլխով եկա՛վ ըստի վեր եկավ, տեհավ ճուրին էնքան տըլվել ա, ոտների տակը փոս ա ընգել: Ծին բուրախեց, ընքելը ըլետ իրան էն լանթը- մանթը հվաքեց ու ճուր ոռիցը փըռեց պըրցըրցրավ, կըրընցրավ ու եկավ, եկավ տուն:

-Արթուրի ծեռն ա, ասա մի,- հանգստացնում է բանասացի թողը: Արթուրի ծեռն ա:

-Յը՛, ու՞՞մ,- հետաքըրվում է բանասացե ա հան- գատաճճ շարունակում է պատմելը (ծանոթ. բա- նահավաքի):

⁵ Բանասացը պետք է ասեր «տուպակ» (ծանոթ. բանահավաքի):

¹ Բանասացը «վայրկյան» բառն աղավաղել է (ծանոթ. բանահավաքի):

² Բանասացը ծեռով ցույց է տալիս, թե հերոսը փղի որ մասին ա ինչպես է հարվածել (ծանոթ. բա- նահավաքի):

³ Դաժի - արևելյան բոլի, 2-3մ բարձրությամբ, 10-15սմ տրամագիծ ունեցող բնով ծառ, շատ տա- րածված է Հայաստանի հյուսիս-արևելյան շրջան- ներում (Իջևան, Շամշադին, Նոյեմբերյան) (ծանոթ. բանահավաքի):

⁴ Այստեղ բանասացը պատումն ընդհատում է և անհամագտացած դես ու դեն ընկնում. «-Այ իմ տղոքնեմ ի՞նչ ըլավ, ա՛ գերա, ըստի ծընգըմ տը- րած էր:

-Ծեռիս ա,- ասում է մեկը:

Թե ասեց.- Այ ախճի,- ասեց,- տազ արա, օյն եմ եկել.- ասեց,- տեճանք ո՞նց կըլի ետ պանք, ետ պանքերը վե կալ պահի:

Անդամ-մանդամ, չիմ էտ ա պըհպըհորեց ըտի, որ մերը կյա ոչ տեճա, ետ ճորին էլ պի-րալ դենը թովլի վրա բըրախեց, հե՛հ, եկալ տուն:

Էտ փեսեճին քյնաճին, քյնաճին, ուռա՛յ տալով, թաքավորի մոտ:

- Արա՛ պիրեկ ե՞ք:

- Այո՛, այո՛, հայրիկ ջան, բա ո՞նց չենք պիրեկ, պիրեկ ենք:

- Լա՛վ:

Մի շամփուր՝ մի շիշ, տարան խորոված արին, պիրին թեփշըմը վեր արին մոտը, ետ կաթը պիրին բըլդուլը լըցրին տըրին ըտեղ ու պամբալ պիրին ետ կաթնիցը քսեցին թաքա-վորի աչկերը: Թաքավորի աչկերը, դե իմ օրը-մը, սիե մըլմոշին ետ տալի, եկալ գըլի՛զ փակ-վեց, փակվեց:

- Արա՛, ծեր տունը քանդվի, գլխիզ փակվեց:

Հա՛ փակվեց, դեհ կուրացալ պըրծալ:

- Այ մարթ, դե ետ ա ինչ ըլալ՝ ըլալ, բա մա էլ ա պիրեկ, պի նրանից էլ տըմենք էլի, տե-ճանք նրանը ի՞նչ ա տառնըմ:

- Տո քու հերըտ եմ անիթել,- ասեց,- ազ-րեյիլները ի՞նչ են պիրեկ, թե են կոնդ միրոխը՝ ի՞նչ պիրի, ի՞նչ ես աքըմ, ի՞նչ ես բեյիներս ցըլըցնըմ:

- Այ մարթ, ի՞նչ դի լիլ, մա էլ ա էլի, մի տեճանք էլի, խի՞ ես էտքան ի՞նչ անըմ, հի-վանդ ես՝ հիվանդ ես, չիմըս էլ գիղըմ ենք, որ հիվանդ ես: Մարթ ա էլի, պիրեկ ա, խի՞ դադ-մըղի տակ ընգմի, մա էլ ա էլի վերջով, շուն-կեկ, քու ջիգյոյը:

- Դե հը՛, ի՞նչ անըմ եք՝ արեք, սև խավարն արեք, հը՛, դե արեք:

- Լա՛վ:

Էս ըլխկանը եկան ասեցին, ես ախճիկը հորը իրես չի տյուս կյալի, տղեն էլ չի հոր իրես տյուս կյալի, միմիայն ասեց.- Մայրիկ,- են թաքավորի կնոջը.- մայրիկ, ես միսը ա-դելնի սիե տանըմ ես խըրովըմ, կարմիր խը-րովըմ ես, թեփշըմը տընըմ ըտեղ, ետ կաթը

տանըմ ես թեփշին լըցնըմ սիե, սիե լըվանըմ ես, սիե մաքըմ ես, թընդըցնըմ ու վրեն տը-նըմ, ետ մսիցը ուտացնըմ:

Պիրին տիե արին ու ետ մսիցը ուտըցրին, ետ ըռավոտը վե կցալ տեսալ թաքավորի աչկերը կարքին լիս ա տալի էլի, լիս ա տալի: Էտ օրն էլ պիրին տիե արին, թաքավորի աչկերը եկալ տառնալ իրան հիմնական աչկե-րը:

- Արա՛, ես ինչ պան ա, ես ի՞նչ պան ա, ես խի՞ սիե արիք տուք, ա՛ շան տղեք, ես ի՞նչ պան էլ:

Թե.- Դե ի՞նչ ասենք, հայրիկ ջան:

Տա՛, կանչեցին, ես փեսին կանչեցին, թաքավորը կանչեց.- Արի՛ ըստեղ:

Քյնաճ, վըխվըխիւլ քյնաճ:

- Այ տղա,- ասեց,- ետ կաթը տու ե՛ս տվել:

Թե.- Այո՛, ես եմ տվել:

- Էս միսը տու ես տվե՞լ:

- Այո՛, ես եմ տվել:

Թե ասեց.- Բա քո՛ւնը:

Թե.- Իմն էլ իմ ծեռին ա:

- Բա ետ ո՞նց ա քունը եսպես ա, լիս ա տալի, լիս տվալ, օքմեց կարքին, սըհանը խի՞ չի օքմեց:

Թե.- Դե ես չիգիղեմ էտքամը, իրանց հար-ցրու:

Էտպես ասիւլով, ասիւլով, ասիւլով՝ մտիկ տվալ տեսալ, որ, պան, գյոդենին սամսեն ըսկի ո՛չ դես են տեիել, ո՛չ՝ դեն, տա յա տվե՛լ: Ոռի են փեչատն ու ճըկատի փեչատն էլ, որ ասեց, ետ էլ պիրալ աքացույց, մտիկ տվալ տեիալ՝ ճակատն էլ ա փեչատած, մեկի ոռի թուշն էլ: Ըտի տեսալ, որ շատ ճիշտ ա՛, գյա-դենուն ըտիան բրակ արալ:

Թե.- Կորեք, էլ իմ աչկի դաքին ըրեաք ո՛չ, ես գյուրզը, ես տեղը, ես ինչը սըրանն ա, յալլա՛, անց կըցեք կորեք:

Կորան, քյնաճին, ես տղին ես գյադին, վե կալալ իրան գլխիզ աչկի լիս փեսա:

Տըիանք քաղաքիցը տյուս արալ:

- Յալլա՛, հեռացեք ըստիան:

Հեռացան, կորան քյնաճին: Վերչացալ տը-րանով, քե մատաղ:

¹ Կոնդ միրոխ- հավանաբար՝ անդամալույծ մորու-քավոր (ծանոթ բանահավաքի):

21(21). ԽԵՉՈՅԻ ԴԵՔԻԱԾԸ

Մի մարթ ու կնիկ երեխա չունեն, լավ կալերի ժամանակն ա ըլըմ, մի հատ ման էկող էլ ըլըմ ա՝ փայ հավաքող, կալերից գնըմ ա, ամենը մի աման վերցնըմ են ածըմ են ամա-նը՝ էտ կախարդի մշոկը: Գալիս ա, որ դրանց կալն ա հասնըմ, որ ըրեխա չունեն, մարթ ու կնիկ են տըրանք, հա՛, մի հատ խան լըցնըմ են ու տալիս են:

Թե.- Քե մատաղ, ասըմ ա,- ընչի՞ եք,- ասըմ ա,- էտքան շատ տալի, ամենը մի աման են տալի, տուր խի՞ եք էտքան շատ տալի:

Թե ասըմ ա.- Մենք շատ տալիս ենք, որ վերևից աստված տենա՝ ժառանգ տա, որպեզի մենք էլ ուրախանանք:

Թե ասըմ ա.- Ես ծեզ կտամ,- ասըմ ա,- չորս հատ խնձոր, ըրիգունը կդնես բալիշի տակը, առավոտը քու տղեքը քու առաջը ման կգան, մենակ մենձին ինձ պտի տա: Մենձի անըմը ես ղնըմ եմ, անունը Խեչո ա, էն իրեքի անունը դուք դրեք, Խեչոն ինձ ա:

Թե.- Լավ, ուրախ ենք, պաժալըստա:

Խեչոն էլ ուծեղ, աշխատավոր ծնեմ ա: Էտ ա առավոտը ուծ տղեքը ամենը... մինը կովն ա գնալու, մինը հորթն ա գնալու, էն մինն էլ ոչխարն ա գնալու, էս Խեչոն էլ տանն ա, հերն ասըմ ա.- Խեչո ջան, մանգեղները սրել եմ, էսոր պտի գնանք արտը հնձենք իրար հետ:

Խեչոյին վեր ա կալնըմ, ու գնըմ են արտը հնձելու: Դնձըմ են, հնձըմ են, հնձըմ են:

- Խեչո ջան, հեռվից խո օչ-ով չի գալի, իմ աչկը էնքան չի կտրըմ, հըլտ տես:

Թե.- Դայիկ, չէ՛, օչ-ով չկա:

Մի քիչ էլ են հնձըմ, ասըմ ա.- Դրե՛, մի հատ սպիտակ ձիավոր ա գալի:

- Խեչո ջան, դե մանգեղտը քցի ու յալլա՝ տուն, մորըտ ասա՝ պահի, միչես ես գամ:

Էս Խեչոն փախըմ ա գնըմ: Թուրմե էտ մարթակերը գալիս ա, որ Խեչոյին տանի: Սըռն տանըմ ա քթոցի տակին պահըմ: Պա-հըմ ա, պահըմ ա, էս մարթակերը ձիուն նս-տած, սիպտակ ձին նստած գալիս ա տըռռըմ կաղըմ:

Թե.- Բարև ծեզ, բարև ծեզ,- թե,- բա պիրեք, ես ժամանակ չունեմ, շտապըմ եմ, ուշ ա ուծե,

պիրեք, իմ Խեչո փայը պիրեք, իմ փայ տղեն պիրեք ինձ տվեք:

Տըռնք բերըմ են, Խեչոյիցը պուճուրին բերըմ են:

- Չէ՛, սա Խեչոն չի:

Էն մինն ա պիրըմ:

- Չէ՛, սա Խեչոն չի:

Էն պուճուրն ա պիրըմ:

- Ի՞նչ ես խոսըմ,- ասըմ ա,- Խեչոն մենձն ա, պտի բերես:

Դա՛, լաց ըլիլով՝ Խեչոյին պիրըմ ա տալիս իրան, տալիս ա իրան, Խեչոն նստըմ ա էտ մարթակերի հետևը՝ ծիլուն, ու ճանապարղըմ են:

Շատ են քյնըմ, թե քիչ են քյնըմ.- Պապի, բա չիսաա՞նք,- ասըմ ա:

- Դէ՛, էն սարի հետևն ա,- ասըմ ա,- էն սարն էլ անց կենանք՝ ընդեղ ա:

Էտ սարն էլ են անց կենըմ:

- Պապի՛, բա էս սարն անց կըցա՞նք:

- Ա՛ որթ,- ասըմ ա,- է՛ն պուճուր սարը որ կա, նրանց հետևն ա:

Էն պուճուր սարն էլ անց են կենըմ ու ահագին գնըմ են, Խեչոն ասըմ ա.- Պապի՛, էս ո՞ւր ես տանըմ,- ասըմ ա:

Թե.- Ի՞նչ տուն եմ քյնըմ, ի՞նչ տուն եմ տանըմ, ո՞ւր եմ տանըմ, ի՞նչ տղեն ես հիմի:

Թե ասըմ ա.- Բա էտքան հեռու ո՞ւր ես տանըմ:

Թե.- Էտ ա, հիմի ի՞նչ տունը ընդեղ ա, ի՞նչ անենք,- թե ասըմ ա,- ձենըտ կըտրի, թե չէ կտամ՝ այրես կըլես հիմի:- Էտ մարթակերն ա ասըմ:

Դե Խեչոն լուռ ա կենըմ, գնըմ ա տուն: Գնըմ են էտ պալատի առաջ վեր են գալի, իրեք հարգանի պալատ ա էտ մարթակերի տունը:

Թե ասըմ ա.- Խեչո ջան, դե ձին տար,- ասըմ ա,- գոճըմը կապի ու,- ասըմ ա,- ինչ-որ ջանըս քոր ա գալի, թորենը վառի,- ասըմ ա,- չորերըս թափ տու:

Թե.- Լավ, պապի:

Ծի՛ն տանըմ ա գոճըմը կապըմ:

- Խեչո ջան,- ասըմ ա,- շատ մարթ ա բերել, շատի գլուխն ա կերել դա, բայց ես չեմ թողա, որ նա քու գլուխը ուտի, քեզ պտի գողանամ

տանձն,- ծին ա ասըմ,- գողանամ տանձն,- ասըմ ա:

Թե.- Լա՛վ:

- Դու,- ասըմ ա,- կմտնես ներքի էն պաղ-վալը՝ ձախ կողմը,- ասըմ ա,- մարթի կլուխներ ա, չվախենաս, աչ սենյակի դուռը բաց կանես, մի թուփ ասեղ կվերցնես, մի բոչկա նավթ կվերցնես, պուճուր բոչկա, աղ կվերցնես՝ հաբզընը կդնես կբերես վրիս կկապես, էրկու կոլա փուշ կպիրես, մի կոլեն կվառես թորոնը, հետո կկանչես շորերը թափ կտաս, որ շորերը հանես, էտ շապիկով մեչկին կքսես, որ հովա-նա, հետևիցը կբռնես ու կըլխի վրեն կքցես թորոնն ու էն մի կոլա փուշն էլ կդնես վրից, վրին կդնես՝ թող վառվի ու կգաս կնստես, ու թըռչենք:

Սա ըստնց էլ անըմ ա, փուշը բերըմ ա, վառըմ ա:

- Պապի՛, պապի՛, արի:

Պապին գալիս ա շորերը հանըմ ա, թափ ա տալի, մեչկին ա քըմ:

- Օ՛ֆ, բալիկ ջան, էս ի՞նչ լավ բան ես անըմ:

Դեղևից բըռնըմ ա քցըմ թորոնը ու փուշը դնըմ, վազըմ ա գոմիցը ծին հանըմ նստըմ, ու ծին թըռըմ ա: Թըռա՛վ: Որ շատ գնըմ ա, ասըմ ա.- Խեչո ջան, էս շուռը պետք ա գա, շուտ-շուտ հետ մտիկ արա, որ տենաս գալիս ա, ինձ ասա:

Գնըմ ա, շատ ա գնըմ, թե քիչ, մի վախտ տենըմ ա մի ակռավի չափ բան ա գալի:

- Դըրե՛ն,- ասըմ ա,- մի ակռավի չափ բան ա գալի:

Թե ասըմ ա.- Խեչո ջան, լավ մտիկ արա:

Խեչոն մտիկ ա անըմ, շատ ա մտիկ անըմ, թե քիչ, ասըմ ա:

Թե ասըմ ա.- Ասեղները թափի,- ասըմ ա.- Ասեղները թափի,- ասըմ ա:

Տա գալիս ա միչև ասեղներին հասնըմ ա, էն ասեղները մտնըմ են տըռա՛ ոտները: Ասեղ-ները միչևը հանըմ ա, միչև բան, ծին ավելի ա շատ հեռանըմ, հեռանըմ ա:

- Խեչո ջան, հմի ո՞նց ա:

- Դա՛, հրե հա՛, պուճուր ըրկըմ ա:

Թե ասըմ ա.- Ոչինչ:

Էլի հուփ ա տալի, թռած գնըմ ա ծին, Խեչոն՝ վրեն:

- Խեչո ջան, չվախենա:

- Դե՛ հրես էկավ, մի ակռավի չափ տռռա՛վ:
- Դա՛,- ասըմ ա,- մի՛ վախի,- ասըմ ա,- աղը գցի:

Աղը գցըմ ա, էտ ծակծկած տեղերն ա մտնըմ, միչև, մըռմըռըմ ա, քըմ ծեմները՝ հո-վըցնըմ ա, տըռռըք էն ա ահագին ճանապար են գնըմ: Էտ ա մեկէլ հա՛ գնըմ են, հա՛ գնըմ են: Դա գնըմ են, էտ քյա՛վթառը՝ մարթակերը, գալիս ա, հոգին գալիս ա էլի:

Գալիս ա ու հետո ասըմ ա.- Խեչո ջան, հետ մտիկ արա նորից:

Դետ ա մտիկ անըմ:

- Դրես մի ակռավի չափ տռռա՛վ:

Ասըմ ա.- Էտ նավթը գցի,- ասըմ ա,- տըռա տիրոջ հերն անիծած:

Էտ նավթը գցըմ ա, պաժառը կապըմ ա, ճամփեն կապվըմ ա: Տա, միչև էտ նավթը վառվըմ ա, տըռռըք էլի ահագին ճանապար են գնըմ: Դա՛, հետն էլ մի բոչկա էլ ջուր են վերցնըմ: Էտ ա, որ շատ գնըմ են, հնար չկա էլի, էլի գալիս ա, ուզըմ ա թե հասնի:

- Գցի էտ ջուրը,- ասըմ ա,- տըռա տիրոջ հերն են անիծել:

Թե ասըմ ա.- Լա՛վ:

Ջուրը, որ հանելու վախտը ծեռիցը դուս ա ընգնըմ, առաչին ա վեր ընգնըմ, առաչը ծով ա կաղնըմ:

- Է՛, Խեչո ջան, էս ի՞նչ արի,- ասըմ ա,- այ տղա, բա ես քեզ ուզըմ էի ազատելի,- ասըմ ա,- տու առաչըս ծով շինեցի, ի՞նչ պտի անենք հմի:

Նորից էտ ծին քիչ հետ ա գալի ու...

- Յա՛ բախտ, ըու բախտից,- ասըմ ա,- թըռըմ են,- ասըմ ա,- թե էն ափը ընգա՛՛ էն ափը ընգա, թե՛ չէ, էրկուսս էլ պտի գնանք ծովի տակը:

Էտ ա գալիս ա ըսեղ, ջուրը որ ծով ա դառնըմ, ծին հետ ա դառնըմ նորից, գալիս ա վազն ա տալի ու թըռըմ ա էն ափը:

Ասըմ ա.- Որ կգա էն ափընը կկաղնի քեզ կխնթի, կասի՛՝ քեզ ո՞վ բերեց, չասես, որ ծին բերեց: Բա ո՞նց անց կըցար, կհարցնի: Ասա որ՝ այ ըտի ճղղացի քարեր կա, մեկը շըլիմ-

քըս քցեցի՝ մեչը ու ընգա մեչը, անց կըցա եւ կողմը: Ու ծին ասըն ա ու ասըն ա.- այ էս էրկու մազը տալիս եմ քեզ, կպահես, որդի տեղըտ կնեղանա, էն մազերը կքսես իրար, ես մոտորտ եմ, չվախեմաս:

Էտ ա թռչնը ա էն ափընը կաղընը ա խեչոն, հմի էս քափթաղը գալիս ա՝ մարդակերը:

Գալիս ա.- Վա՛յ, խեչո ջան, ցավըտ տա- նեմ, բա էտ ո՞նց էկար, այ բալա, բա ես քեզ բերեցի, քեզ, որ քու պապեն եմ ես: Լա՛վ ես, պան:

Ասըն ա.- Դե եկա էլի, եկա էլի, չդիմացա, եկա,- ասըն ա:

- Բա ո՞նց անց կըցար, այ բալա: Դե ասա տենամ՝ ո՞նց ես անց կըցել:

Թե ասըն ա.- Այ էտ ճաղացի քարերիցը վե կալա՝ մի հատ վիզըս քցեցի ու թռա ճուրը ընգա, եկա ես փիղ:

Դե քարերը որ քցես, տակը դի տանիլ էլի: Էն քարը կոխըն ա վիզը՝ շըլիքը, ընգընը ա ջըրի մեչը գընը ա ներքե՛լ:

Էս խեչոն գընը ա: Շատ ա գընը, թե՛ քիչ, գընը ա մի ծառի տակ նստըն ա, մի ծառի տակ նստըն ա, տենըն ա, որ ինչ-որ քըրփիչըղ կա ըստեղ ծառի տակին: Մտիկ ա անըն տե- նըն՝ պուճուր ծակ ա պաճը ըլըն էտ ծառի հեմց քոքի մոտ: Էտ ծակը ինքն էլ ա մի քիչ քըր- փըշըն, քըրփըշըն տենըն ա՝ ծակը պաճը ըլալ, պաճը ըլալ, վա՛հ տենըն ա՝ տուռեկ ա, մտընը ա էտ տուռեկի մեչը, գընը ա: Տուռեկոլ գընըն ա, գընըն ա տենըն ա՝ մի հատ սենյակ գետնի տակին, մի հատ սենյակ ա, իրեք հատ կըռա- վաթ ա դրած, իրեք հատ կըռավաթ, ու էտ կըռավաթը լավ կոխտա, սիրուն ասրքած, ըս- տողը դրած, իրեք հատ թեփչի ճաշերն ածած դրած ա, հաջը կարտած, զարկուկեղենը դրած, ամեն բան պատրաստ: Նստըն ա խե- չոս էտ թեփչեթիցը ամեթիցը մի քիչ ուտըն ա, էտ դրածիցն էլ, ինչ որ զակուսկի կա, քիչ զակուսկի ա անըն, հետո էլ շորերը հանըն ա մտընը մի գողիքի մեչ, քնըն: Մի ժամանակ տենընը ա, որ իրես քըչքըչալա իրեք ախճիկ էկան, իրեքն էլ՝ սիրուն, կոխտա, թըմփլիկ ըխճըկեք են: Էկան՝ հի՛, հի՛, հի՛, հա՛, հա՛, սկսեցին ծիծաղելը, մեկ էլ ճաշերին մտիկ են

անըն տենըն, որ ճաշը կերած ա, քիչ կերած ա ճաշից:

- Քըթալըս կեխտոտ ա:

Էն մեկն էլ ա.- Իմիցն էլ ա կերած:

- Իմիցն էլ ա կերած, էս ի՞նչ բան ա, ո՞վ ա ըստեղ:

Բայց կըրավաթընը խեչոն քնած ա, ըրկըն չի:

Էտ ա.- Դե լավ, կերած ա՝ կերած ա, հետոլ կիմանանք էլի, ո՞վ ա, ի՞նչ ա:

Յետո սըրանց ուտըն են, ածըն են, պարըն են, երբըն են ու հմի լուսը հանգցընը են, շո- րերնուն հանըն են, ամեքը իրանց գողիքըն մտընը: Վի՛, պուճուր ախճկա գողիքընըն ա թուրմե, փաթաթվըն ա էտ ախճըկանը:

- Վա՛յ մէ, էս ո՞վ ա, էս ո՞վ ա:

Թե.- Ես եմ, էս եմ խեչոն եմ:

Մեկ էլ գընըն ա էն մեկի ծոցն ա ընգընը, մեկ էլ՝ էն մեկի:

- Ես ծեթ,- ասըն ա,- ախպերն եմ, դուք էլ՝ ինձ քիր:

Էտ ա էս խեչոն տառընըն ա մի իգիթ տղամաթ: Սա մի օր դուս ա գալի գընըն ա էտ աշխարհի, մի տեղ ա գընը, գընը-գալիս ա վաթշե ըստեղ: Դա՛, անց որ իրան ընտանիք: Գընըն ա, մի գաղղով ոնց կենալիս տեղը շատ ծարավըն ա, մի պառավ կին ճանապարհի դրաղին նստած ա, թե.- Բաթո՛ ջան,- ասըն ա.- կարո՞ղ ա ճուր ունենաք, մի քիչ ճուր տաք էլի, շատ եմ ծարավ:

Թե ասըն ա.- Էս որպէյիս, տղա ջան, էս ա քերեն:

Էտ շան տղի պառավը գընըն ա շըռըն ա ըստաքանընը, պիրըն ա իրան տալի:

- Վա՛յ,- ասըն ա,- բաթո ջան, էս ի՞նչ աղի էր:

Թե ասըն ա.- Տղա ջան, դե մենք մի հատ ախպուր ունենք, ուրեմը,- ասըն ա,- էտ ախ- պրընը դե կա, էտ դեմ,- ասըն ա,- ամեն շա- փաթ օր մի հատ ախճիկ ա ուզըն, որ իրան տանք, որ մա ջուրը թողա, որ ժողվուրը ջուր վերցնի: Ի՞նչ անենք, վաղուց եմ վե կալել, ըստենց աղիացել ա ջուրը:

Էտ օրն էլ ուրփաթ ա, էբուց էլ շափաթ ա, թաքավորի ախճըկանը պտի պիրեն դեկն տան, որ դըը ուտի, որ ճուր թողա ժողվուրը

լըցնեն: Էս Խեչոն էլ՝ թուրը կապած, կոխտա, սիրուն, ասըն ա.- Ես կգնամ էտ դկի հերը կանիծեն:

Էտ ա գնըմ ա տենըմ՝ էտ որդի ախպուրն ա, ըխպիցը դենը կաղընմ ա, տեսնըմ ա՝ հրես զուռնա-դիովով թաքավորի ախճկանը բերըմ են, որ վիշապը պտի դուս գա, վիշապը միչև ախճկանը ուտի, դրանք էլ ջուրը օգտվեն: Էտ ա, որ ըխճկանը պիրըմ են հա՛, էտ Խեչոն գալիս ա էտ ախճկա առաջ, գալիս ա ախպրի մոտ, ասըն ա.- Չվախենաս, ես քեզ պտի ազատեն:

Էտ ա ինքը պառկըմ ա, պառկըմ ա՝ կըլուխը տընըմ ախճկա գոքին, էս ախճիկը նստած ա, տին գրից անիլեն՝ Խեչոյի աչկը կըպչըմ ա, քնըմ ա էլի: Քնըմ ա, մի բաշ որ դեռ բաց ա ըլըմ էտ իրան, որդեղ որ ա, էտ ախճիկը վախիցը սկսըմ ա լաց ըլելը, էտ արտատուրը կաթըմ ա Խեչոյի էրեսին: Խեչոյի էրեսին որ կաթըմ ա, Խեչոն զարթընըմ ա, զարթընըմ ա տենըմ ա դեռ դուրս ա գալի: Ախճկանն ասըն ա.- Տու հետ գնա:

Ախճիկը հետ ա գնըմ, սա քաշըմ ա սուրը, սրան... ու տուր թե կտաս սըռան, տալիս ա գլուխները փըրթըմ, սկսըմ ա արունը ըտեղ արխի պես գնալը, ժողովուրթը վրա են տալի. էտ ախճիկը վերցնըմ ա ու էտ առնի մեջ թաթախըմ ա հինգ մատն ու Խեչոյի սարոչկեն վե քաշըմ ու մեչկընը խփըմ փեչատ՝ էտ ա-րունուղ, փեչատը խփըմ ու ինքը գնըմ ա: Խեչոն ըտեղ իրան հավաքըմ ա, ասըն ա.- Սպասե՛ք, ա՛յ ժողովուրդ, էս արինը գնա, մաքուր ջուրը գա, սպասե՛ք, սպասե՛ք:

Ժողովուրթը լցնըմ ա, է՛, անգաճ չեն անըմ, հենց գիղըմ են, թե էլի պտի կոխպի ջուրը: Էլ ի՛նչ, դկի կըլուխը կերա՛վ: Էտ ա լըցնըմ են, հետո ջուրը գալիս ա լցվըմ, էտ ժողովուրթը բավարարվըմ ա սաղ, հետո թաքավորը էքսի օրը հրաժայըմ ա.- Ով որ,- ասըն ա,- իմ ըխճկանը ազատել ա, թող գա ինձ մոտ:

Էտ ա էտ ժողովուրթը հավաքվըմ են, էն ջահել տղեքը, իգիթ-իգիթ տղեքը գնըմ են, ասըն ա.- Սենակ, որ սուտ էղավ, գըլուխըտ կտըմ են:

Գալիս են, թե.- Ես ազատեցի:

Թե ասըն ա.- Ներքև արի:

Ներքև ա գալի, ասըն ա.- Մի հատ սարոչ-կետ վեր քաշի:

Ախճիկը մտիկ ա անըմ, չէ՞, գիղա, ընչանը տըրել ա: Չա՛, վոփշըմ, էտտեղ շատ ջահելու-թին գնըմ ա էլի, կորչըմ ա ուժե, ոչնչացնըմ են ուժե, ով որ սուտ ա էլի: Չա՛, էտ տղեն ասըն ա.- Ամոթ ա էլի, ես երտասարդութիւնը պրծնըմ ա, գնամ,- ասըն ա,- ես:

Ու գնըմ ա, գնըմ ա, թաքավորը տեսնըմ ա, թաքավորը, թաքավորը տեսնըմ ա, սարոչկեն վեր ա քաշըմ տենըմ ա՝ ախճկա հինգ մատը արյունոտ կըպցրած ա մեչկին:

- Վա՛յ, ես քու ցավը տանեմ, ես քու հոքուն մատաղ, ես քեզ դուրբան, որ իմ ախճկանն ազատեցիր, հմի սասա՛ ի՛նչ տես ես քեզ, որ,- ասըն ա,- քեզանից ես պրծնեմ:

Թե ասըն ա.- Ես,- ասըն ա,- լույս աշխար եմ ուզըմ գնալ:

Չա՛, էտ ա դա ասըն ա, թե ասըն ա.- Գիղա՛ս, ի՛նչ կասեմ քեզ, էս փլան տեղը մի հատ ծառ կա, ընդի մի հատ բուն կա՝ առյուծ դուշ, էտ առյուծ-դուշը վերջի տարին ա, որ ճուտեր տա՝ ուժե պըռապել ա, իսկ նրա ճուտերը,- ասըն ա,- միշտ օցը գալիս ա ուտըմ, որ ուժե թոչելու վախտն ա ըլել, գալիս ա մեկ-մեկ բըռնըմ, խեխտըմ, ուտըմ, թե էն օցին սպանեցիր ճուտերն ազատեցի՛ր, էն դուշը քեզ կարա տանի, թե չէ՛ ուրիշ էլք չկա:

Դե էտ ա, թե.- Լա՛վ:

Սուրը վերցնըմ ա գնըմ ա, գնըմ ա էտ ծառի տակին շվաքընը պառկըմ: Շատ ա նստըմ, թե քիչ ա նստըմ, տըրնա քունը տանըմ ա: Էս անդեր օցը՝ վիշապ օցը, գալիս ա կամաց բարցրանըմ ա, ճուտերը սկսըմ են բղավելը, որ բղավըմ են, էտ օցը նայըմ ա տեսնըմ ներքը մարթ կա քնած, ուրեմը, էտ տղեն զարթընըմ ա, զարթընըմ ա ու սուրը քաշըմ էտ օցին միմեկ ճաշը կտրտըմ, հա՛ փըրթըմ ա, ճուտերն ազատվըմ են: Տղեն բեգարըմ ա, ծառի տակին քնըմ ա, որ քնըմ ա հա՛, էտ մերը գալիս ա՝ էտ ճուտերի, դշերի ճուտերի: Էտ առյուծ-դուշը գալիս ա ուտնըմ ա, որ մարթ կա տակին քնած: Սա հենց գիղըմ ա, որ էտ մարթն ա գալիս իրա ճուտերին ոչնչացնըմ: Գնըմ ա հեռու, մեծ քար ա վերցնըմ ոտերով, բերըմ, որ կըլխին քցի, տըրնա սպանի՝ Խե-

չոյին: ճուտերը բղավըմ են.- է՛), ի՛նչ ես անըմ, այ՛ մեր, այ՛ ծնող, էտ մարթն ա մեզ ազատել, էն օցը կտրտել ա, թափել ա, իրլա տնս:

Էտ քարը տանըմ ա հեռու գցըմ, էտ դուշը իչընըմ ա, կամաց թևերը փռըմ վրին, շվաք անըմ, տո՛ւ էլ քընըմ ա, որ զարթընըմ ա, ասըմ ա.- Այ տղա, տու ի՛նչ տղա ես.- ասըմ ա.- տու ի՛նչ էիր գիղըմ, որ ի՛մ վերջի տարին ա, էս ճուտերը, որ ազատվեցին, ի՛մ ճուտերը՝ ի՛մ հիշատակը, թողացիր, էս պառավ եմ, կարող ա էլ չդիմանամ, չապրեմ, գոնե սրանք մե- ծանան:

Թե ասըմ ա.- Քեզանից ոչ մի խընդիրք չունեմ,- ասըմ ա.- ինձ հասցրու լիս աշխար:

Թե ասըմ ա.- Դե պառավել եմ, էնքան ուժ չկա վըրիս, բայց դե որ ի՛մ ճուտերն ազատել ես, ես,- ասըմ ա,- քեզ անպատճառ, ոնց ուզըմ ա ըլի, պտի հասցենեմ:

Էտ ա թե.- Պահանջըտ ի՛նչ ա, ասա՛, էս գնամ կատարեմ, որպեզի...

Թե ասըմ ա.- Օխտը ոչխարի դըմակ, օխտը ոչխարի դըմակ, մի պուճուր բոջկա էլ ջուր կբերես, կպատրաստես կբերես վրիս կքցես, դու էլ կնստես, էս քեզ կտանեմ: Ամեն կըը- լըխկըցնելով մի դմակ կքցես բերանս, մի երկու թթալ ջուր:

Ըտենց անելով, անելով, անելով՝ գընըմ ա, որ մի քիչ մընըմ ա, որ հասնի, դըմակը պըրծընըմ ա: Կըըլխկցընըմ ա, ի՛նչ անի, վեր ա կալըմ ոտի էս փափուկ միսը կտրըմ ա գցըմ բերանը, տեսըմ ա, որ չէ, սա դըմակ չի, ուրիշ բան ա, ուրեմը, մտածըմ ա, ասըմ ա.- Սա երևի իրանից կտրեց:

Ու տանըմ ա լուս աշխարը իջեցընըմ, ասըմ ա.- Դե գնա:

Ինքը նստըմ ա, ոտը ցավըմ ա, չէ՞, կտրել ա:

Թե.- Գնա՛,- ասըմ ա:

Թե ասըմ ա.- Չէ՛, տու թըռի, շատ շնորակալ եմ, տու թըռի գնա, էս կգնամ:

- Չէ՛,- ասըմ ա,- միչև դու չգնաս, էս չեմ գնա:

Դե որ վեր ա կենըմ, որ գնա, չոլխին ա տալի: Ասըմ ա.- Դետ արի՛, հլա՛ մի ոտըտ վե քաշի, ընչի՛ էս չոլխին տալի:

Տեսըմ ա էս փափուկ միսը կտրել ա քցել բերանը: Էն միսը դընըմ ա տեղը, իրան բը- մբուլիցը հանըմ մի հատ քսըմ, իրան պեռ- նովն թքըմ, սաղացընըմ, ասըմ.- Դե քեզ բարի ճանապար, երթաս բարի, էս էլ գնամ ի՛մ ճա- նապարը:

Խերը ըստի, շառը՝ Բեջանանց քըրըլամա- նընըմ կենա՛:

22(22). ՈՐԴՈՒՆ ՈՒՐԱՑՈՂ ՄԱՅՐԸ²

Եղել ա, ուրեմը, մի ընտանիք՝ մարթ ու կին: Էտ կինը շատ աշխատասեր կին ա եղել իրան օջախի մեջ, ամուսնյակն էլ ամանա- պահ ա եղել, գյուղի ամասուները հավաքել ա, տարել դաշտը՝ արածացրել, բերել: Էս մարթին ասել են, որ պետք ա ամասուները աջ կողմը տանես, ծախ կողմը չտանես, ծախ կողմը որ տանես, ոչ դու հետ կգաս, ոչ ամասուներ հետ կգա: Էտ մարթը շատ մշտա- կան աջ կողմն ա տարել, հետո տեսել ա, որ էտ ամասուներն ուտելու ոչինչ չունի, ասել ա.- Յա բախտ, յա դսմաք, վերցնեմ էս անգամ էլ ծախ կողմը տանեմ:

Վերցրել ա ապրանքը քշել ծախ կողմը, տարել ա տեսել ա՝ հիանալի դաշտ, շատ ա- րոտ, ըսկսել են ապրանքները արածել: Տեսել ա՝ մի հատ մեծ շենք կա էտ դաշտի մեջ: Կա- մաց-կամաց, կամաց-կամաց գընըմ ա էտ շենքին մոտենըմ ա, ոչինչ տեսըմ ա, որ էտ շենքըմ ամեն կարողություն կա, բայց մեղը մարթ չկա, ոչ-ոք չկա, ու տեսըմ ա՝ յոթ հատ պղինձ դրած՝ փլավ ա էփըմ: Վահ, էս մարթը զա- րմանըմ ա՝ էս ի՛նչ փլավներ ա, էս ո՛ւմ համա ա. օչ-ով չկա, ո՛վ պտի առի էտ փլավները: Էտ մարթը վերցընըմ ա էտ փլավների մի պղինձից մի քիչ ուտըմ ա ու մտընըմ ա աջ կողմը, ընդեղ տեսըմ ա՝ սենյակը լիքը մի

¹ Կարծես այս հեքիաթը բանասացը կիսատ է թողել (ծանոթ. բանահավաքի):

² Հեքիաթի վերնագիրն ինձ է [է.հ.]: Այս հեքիաթը բանասացը սովորել է մի շամշուկեցի հայ կնոջից: Բանասացը ասաց. «Մեր պապերն էլ են Դարա- բաղից: Էտ կինը շատ էր պատմըմ, որ մեկը հիշեմ: Ի՛մ կինն էլ շամշուկեցի ա» (ծանոթ. բանահա- վաքի):

ուզվում օսկի ա, մի ուզվում բռնանա ա, մի ուզվում՝ թանգակին իրեր: Էս մարդը իրա հացի չանթեն (սումկեն) վերցնում ա լցնում էտ օսկուցը, բռնանալիցը, ամեն պան, կալիս ա տենձը ապրանքները կշտացած նստած, իրիկ-նապահին քըշում բերում ա:

Թուրմե, դու մի ասիլ, ըստեղ ապրում են վիշապներ՝ յոթ ախպեր, ամենամեծը յոթ գլուխ ունի: Էտ ախպերները, որ գալիս են իրիկունը՝ որսից, գալիս են անտառից, տեսնում են, որ էտ պղնձի կողքիցը կերած ա, ու սըրանք ժողով են անում, ասըմ են.- Ըստեղ մարթ ա եկել, մարթ ա մտել, եկեք,- ասըմ ա,- դի-ժուրնի կաղենք օչերեղով, տենանք՝ ո՞վ ա գալի մեր սենյակները:

Մեծ ախպերը կաղենում ա՝ չի կարում բռնի: Մեծից պուճուրը կաղենում ա՝ չի կարում բռնի, տհենց գնում ա միչև վերջի պուճուրը: Վերջի պուճուրը ուզում ա բռնի, տա՝ վիզը թըցնում ա, փախճնում ա, փախչում ա: Ուփշըմ էտ տղեն էտ օսկին, էտ կարողութիւնը կամաց-կամաց տա-նում ա, կնիկը ուրախանում ա, հարստանում են, իրանց ընտանիքը ավելի մեծացնում են, նոր շենքեր շինում: Վերջը էտ մարթին բռնում են, վերջը բռնում են ու քարոզում են ու դնում պղնձի մեջը, էն, որդիան կերել ա:

Էս տղեն, իրան տղեն՝ էն պստիկը, օրեցօր մեծանում ա: Հարևանը մի պառավ կնիկ ա ըլլում, դրան մի թռնիկ ա ունենում: Էտ թռնիկը, դուրսը խաղ անիլիս, էտ տղեն էլ հետը խաղում ա, դրան կոշտում ա, էտ էրեխուն ծեծում ա, ծեծում ա, բայց տղեն չի գիտա, որ հորը դենքը սպանել են: Էտ պառավ կինը դուս ա գալիս, սկսում անիծել էտ տղին.- Զու հերըտ եմ անիծել,- ասըմ ա,- որ էտպես դոչաղ մարթ ես, պետք ա,- ասըմ ա,- գնաս դենքի հետ կռվես, որ հորըտ քարթեցին, պղինձը կոխես-ցին:

Գալիս ա տուն՝ ջղայնացած, մորն ասըմ ա.- Մամա, ինձ ասա՝ հերըտ ո՞ւր ա:

Թե ասըմ ա.- Մյ որդի, դա ասողի լեզուն չորանա, ընչի՞ քեզ ասեց:

Թե.- Բա իմ հորըս յարաղներ ա ըլել, ո՞ւր ա յարաղները՝ թվանք, շաշկի, խամջալ, որ-դե՞ղ ա:

Թե.- Մյ բալա, ո՞նց ասեմ, բա ո՞նց կարամ ասեմ քեզ:

Ըստեղից էտ կինը ասըմ ա, որ.- Մեր գոմաղքի մեջ քաղած ա տա:

Գնում ա էտ տղեն քանդում ա, գոմաղքից հանում ա, գյուղումը լավ ծի ա եղնում, էտ յա-րաղները կապում ա վրեն, թվանքը վերցնում, գնում ա էտ պալատի առաջը, էտ պալատի առաջը: Կողքին մի հատ մեծ հոր ա կտրում ու մի հատ մեծ քար ա դնում էտ հորի վրին: Իրիզնապահին որսի տեղից էս դենքից կենդ-կենդ գալիս են: Ամենքը իրանց արած որսը շա-լակած գալիս են, որ իրիզունը պտի հաց ու-տեն, էս էկածին ջընջում ա՝ էս տղեն, ոչն-չացնում ա: Գալիս ա յոթը գլխանի դեղ՝ մենձը, ամենամենձը, իրան շաշկեն քաշում ա սըրան խփում ա ու վեց գլուխը կտրում ա, վեցը գլուխը կտրում ա, մեկն ա մնում, սըրան բռնում քցում ա էտ հորը էտ քարովը վրին ծածկում: Չին նստում ա գնում ա մորը բերում:

- Մյ մեր, էտ քու կարողութիւնը վե կալ, արի էս թաքավորի պալատումը ապրի:

Էս կինը գալիս ա ուրախությամ, էտ պա-լատումը ապրում ա, ու խնթրում ա մայրիկին իրա, որ.- Էս ֆորի չորս կողմը չսրփես, ո՞չ ջուր կածես, ո՞չ կսրփես:

Թե.- Լավ, այ բալա, ոնց կասես, ըստեց էլ կանեն:

Էս տղեն միշտ գնում ա անտառը՝ որսի, գնում ա որսի, էտ ժամանակ էտ տղեն բերում ա որսը իրիզունը, թուրմե էս կինը ցերեկը էտ հորի չորսողն էլ սրփում ա, տեսնում ա՝ ինչ-որ ձեն ա գալի հորիցը:

Ասըմ ա.- Հոքուտ մատաղ, էտ ո՞վ ա ըստեղ,- ասըմ ա,- թող, մի հատ,- ասըմ ա,- էս քարը ետ քաշի, էս դուս գամ, դուս գամ քեզ համար էլ կըլեն, ինձ համար էլ կըլեն, հեջ չըվախե-նաս:

Էս կինը բերում ա, լոմ ա բերում, ինչ ա բե-րում, էտ քարը մի կերպ ետ ա քաշում, էտ դեղ դուս ա գալի:

Դա ասըմ ա.- Դու՝ ինձ կին, ես քեզ՝ ա-մուսին:

Էս դեկին տանում ա ամենավերջի օթախըմ պահում: Ուրեմը, ցերեկը սըրանք ժամանակ են անց կըցնում, ուրախանում են, ծիծաղում են,

ուտըմ են, խմըմ են, գիշերը դա գնըմ ա ըտեղ, որպեզի տղեն չտեսնի, իսկ ցերեկը էտ տղեն գնըմ ա, ցերեկը հանգիստ իրանց համար գործ են անըմ:

Ասըմ ա.- Ինչպե՞ս անենք, որ էտ տղին կորցնենք, որ մեզ չխանգառի, մենք հանգիստ ըլենք: Մի հատ իմացի,- ասըմ ա.- սըրա ուժը ընչը՞մն ա, կամ հիվանդացի, ասա՝ անմահական ճուր եմ ուզըմ, թող որտեղ որ ա ճարի, դա որ գնա ընդեղ, էլ հետ չի գա:

Ու վերցնըմ ա էս կինը գողինքն ա մտնըմ.- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Տղեն գալիս ա ըրիգուըմ:

- Վա՛յ, մայրիկ ջան, ի՞նչ ես պատահել, ո՞նց ա ըլել, էտ ի՞նչ խաբար ա:

Թե.- Դիվանդ եմ, մեռնըմ եմ, օքնի ինձ:

- Ի՞նչ անեմ, ասա՝ ի՞նչ ես ուզըմ, քերեմ:

Թե.- Մյ որդի, անմահական ճուր եմ ուզըմ:

Էս տղեն առավոտը նստըմ ա ձին, իրան հաղթեն կապըմ ա, խուրջինը՝ ձիուն, բոթիկ-կեքը դնըմ ու ճամապարվըմ: Ճամապարվըմ ա, բայց շատ ապասնի ճամապար ա էլի, վայրի գազաններ շատ կան, բան կան, բայց ոչ մեկից չվախենալով՝ հասնըմ ա, դե անտառի մեջով գնալիս տեսնըմ ա՝ մի տեղ մի պալատ կանգնած, մի հատ հիանալի գեղեցկուհի բալկոնըմ կաղնած:

- Է՛յ,- ասըմ ա,- այ տղա, արի ըստեղ,- ասըմ ա,- ո՞ր ես գնըմ:

Էտ տղեն շուռ ա գալիս տեսնըմ ա՝ գեղեցկուհին կաղնած, կանչըմ ա իրան, գալիս ա, երրորդ հարկի վրին ա ու ներքև տըռն մոտ մի հատ ալան ա կաղնած, մի հատ ղոփլան՝ առյուծներ, դարավուկներ էլի, որ օչ-ով չբարձրանա:

Թե ասըմ ա.- Բա ո՞նց բարձրանամ, բա էս կաղնած եմ,- ասըմ ա.- ինձ կզգեն,- ասըմ ա.- չեմ կարա ես սըրանց սպանեմ,- ասըմ ա.- քու ծառաներն են:

Էտ ա վերեկից մի հատ օշխար, կես արած, տալիս ա, ասըմ ա.-Էս մեկին տու, մյուսին, անցիր:

Էս տղեն անցնըմ ա, ծանոթանըմ են, ասըմ են, խոսըմ են:

- Բա խեր ըլի, ո՞ր ես գնըմ:

Թե.- Մերս շատ հիվանդ ա, պետք ա գնամ անմահական ճըրի, բայց չեմ գիդա ճամապարը՝ որ կողմով գնամ, որ հասնեմ էտ ճըրին:

Թե ասըմ ա.- Էտ մայրըտ,- ասըմ ա.- քու կըլիսի օյին պտի հանի, ընենք որ ապասնի կին ա տա՝ տա ճամպեն փոխել ա,- ասըմ ա,- տու ինձ լսի, մի լսի տըրռն, ոչ մի տեղ մի գնա:

Թե.- Լավ: Բա՛...,- ասեց:

Ասըմ ա.- Եփոր ուզըմ ես անմահական ճուր, այ ըսենք կգնաս ուղիղ, կփոխվես ծախ, հետո՞ աչ, ուղիղ ճամապարը կընգնես, էտ ճամապարը քնըմ ա էտ ախպորի մոտ:

Էս տղեն ձին նստըմ ա գնըմ ա, գնըմ ա ըտեղ ծըռվըմ, ըսենք ծըռվըմ, ոփշըմ, էտ ուղիղ ճամապարովը գնըմ ա՝ ախպորի մոտ:

- Մենակ, քեզ,- ասըմ ա.- մի պոն կխնդրեմ, տու էտ ճըրից կխմես, ամաններտ կլցցնես, կմտցնես խուրջինի մեջը, ձիուն կկապես, ոտըտ կընես զանգուի մեջ, կնստես ու ձիուն մի հատ՝ պլետ ու փախի: Ինչքա՞ն բղավեն, ճղավեն, ընդեղ քար կա, սար կա, ծառ կա, բոլորը պտի բղավեն քո հետևից, չնայես հետ, հետ նայեցիր՝ քար պտի դառնաս: Ուղիղ քու առաջըտ նայի ու արի:

Էս տղեն էտենց էլ անըմ ա, գնըմ ա էտ ճըրերը լցնըմ ա, ինքն էլ մի լավ խմըմ ա ու գալիս ա էտ պալատի մոտ:

Հա՛, ախճիկը ասըմ ա.- Էկա՞ր: Մյ մալահեց, այ ապրես, ինձ լսեցիր, դե արի վերև:

Էս ախճիկը կանչըմ ա, կանչըմ ա վերև, տանըմ ա էտ ճըրերը հետը վերև, էս ախճիկը՝ դոչաղ, վերցնըմ ա էտ ճըրերը տանըմ կուխին, հասարակ ճըրերը լցնըմ ա, իսկ էն անմահական ճուրը վերցնըմ ա պահըմ իրան մոտ: Տընըմ ա խուրջինըմ:

- Դե, բարի ճամապար,- ասըմ ա.- մենակ,- ասըմ ա.- որ մորտ տաս, քեզ օյին դի անիլ:

Տանըմ ա հասցնըմ ա մորը, մերը խմըմ ա:

- Օ՞Ֆ, սիրտըտ հովանա, այ բալա,- ասըմ ա.- էս ի՞նչ լավ բան արի, ինձ մեռնելուց ազատեցիր:

Ուրեմը, էս տղեն գնըմ ա որսի, անց ա կենըմ մի շաբաթ, նորից կալիս ա տեսնըմ՝ մերը հիվանդ:

- Այ մերա, ի՞նչ պատահեց, այ մերա:

- Դե մենքն եմ էլի, չեմ կարողմ էլի:

Էս անքամ էլ որոշել եմ, որ,- Դու պոի գնաս առյուծի կաթի, որ ես առյուծի կաթ եմ ուզում:

Վա՛հ, տղեն զարմանում ամ, ասում ամ.- Որ-դեղի՞ց ճարեն առյուծի կաթ: Լավ, կգնամ, յա՛ բախտ, յա՛ դամաթ:

Ու ձին նստում ամ ճամապարվում էքսի առավոտ, գնում էտ ախճակ մոտ:

Ասում ամ.- Ես տեսնում եմ, որ տու գիտուն ախճիկ ես, տու ինձ ասա, ես առյուծի կաթ որդի՞ ճարեմ:

Թե ասում ամ.- մեր անտառի մեջ մի հատ կա առյուծ, մա՛ հոի յա, պետք ամ շուտով ազատվի, ու մրա ոտը փուշ ամ ըլել, ուռել ամ: Նա սաղ քըշեր-ցիրեկ բըղավում-ճըղավում, ծառեր ամ, որ կոտրատում ամ: Նրա բունը ամ՝ էն շեկ յալի, էն շեկ յալի տակի ծառ կա, էն ծառի տակին ամ: Կգնաս էտ բնի առաջ կկտրես փոս, կմտնես փոսը, քեզ ճախերով կծածկես, մա իրիզնապալին գալու ամ, ու մի հատ լավ սուր դանակ կունենաս, մա ոտը ձըգըմ ամ դուս, որպեսի հով, սաղը քամին փչի: Էն ոտը որ կծգի, մա կպայթի, դու էլ դանակով տակիցը հետ էմ վերը կտրի, վերքը որ կտրես, էն թարախը պոի դուս գա, մա պոի գծվի, էտ մոմենտին չդուս գաս: Որ ասի որ՝ ո՞վ ես, իսան ես, կենդանի ես, ի՞նչ ես, դուս արի, էն ժամանակ կդուս գաս: Ոտը որ հովանա, թա-րախը կգնա, էտ ժամանակ կդուս գաս, որ դուս գաս մա քեզ կասի՝ ի՞նչ ես ուզում: Դու կասես, որ՝ ես քու կաթիցն եմ ուզում՝ իմ մոր համար:

Էտ ամ տղեն գնում ամ ըտենց էլ անում ամ, ինքը մտնում փոսը ու սպասում ամ առյուծին: Առյուծը, տեսնում ամ, իրիզնապալին ծառերը կոտրատելով, քարդելով, բղավելով, ճըղավելով, գալիս ամ: Գալիս ամ մտնում էտ փոսը, ոտը դըգըմ էտ կակառազ որդի որ էտ տղի գլուխն ամ՝ ըտեղ: Սա՛ դանակը հանում ամ ու էն ուռած սախտակ տեղը մի հատ քաշում ամ թե չէ, ամբողջ թարախը գնում ամ:

- Ո՞վ ես, մի դուս արի, հուկի տամ՝ կուլ տամ,- ասում ամ,- սատկըցնեմ, ի՞նչ արի որ ուտըս,- ու էտեղ ուտե, որ մոր հովանում ամ, ասում

ամ,- ցավըտ տանեմ, ով որ, որ ես, դուս արի, ինչ որ կամենաս, էն էլ կտամ քեզ:

Ու սա դուս ամ գալի, դուս ամ գալի, ասում ամ.- Ցավը տանեմ, էս ամ ես կծնեմ, իմ ծնելու վախտն ամ, ես քեզ կաթը կտամ, մի բոթիկի տեղը էրկուսը կտամ:

Ու տա որ ծնում ամ, մի կես ժամից հետո տա ծնում ամ, ծնվում ամ մի հատ ճուտ, առաջինը որ դուս ամ գալի, տըհանք էրկուսն են բերում, ավել չեն բերում, առաջինը որ ծնվում ամ, մա գցում ամ շավարի թայը, Պեպոյի¹ շավար ամ ունենում, լեն շավար, ճեզինը քաշում ամ գցում շավարը, գցում ամ շավարը: Երկրորդն էլ որ բերում ամ, առյուծը շուտ ամ գալի տենում՝ մի հատ ամ, սա հազդի ամ գալի, որ արծմանի ամ՝ թող տանի:

- Այ, ես քեզ մի հատ տալիս եմ, ասլանը-դովանը շավարըմ ամ: Ու կաթն էլ կքըմ ամ տալի իրան,- Հալալ ըլի, տար,- ասում ամ,- քեզ ըլի, էս տարվանն էլ քեզ ըլի:

Ու դա վերցնում ամ գալիս ախճակ մոտ: Էտ ախճիկը մորից ուրիշ հասարակ կաթ ամ տալի, էտ կաթը վերցնում ամ պահում ամ: Տանում ամ մորը, մորից խմում ամ, խմում ամ, լավանում ամ, մի շափաթ էլի պըրպըրում ամ դեռ-դեռ, մորից հիվանդանում ամ:

Ասում ամ.- Այ տղա, բա մենք,- ասում ամ,- ծնող ենք, տու էլ իմ որթին ես, բա քու ուժը ընչի՞ մեջ ամ, խի՞ չես ինձ ասում:

- Այ մերա,- ասում ամ,- ինչ որ սրտով ուզում ես, ճարում եմ բերում եմ, ինչ հանձնարարում ես, բերում եմ, ի՞նչ ես անում, որ իմանաս՝ իմ ուժը ընչի մեջ ամ:

- Ախրի ի՞նչ գավակն ես, ինձանից ծնվել ես, ես չպոի գիդենա՞մ իմ ժառանգը ինչ ուժ ունի, որդի՞ ամ տրա ուժը:

Էտ ուժն մրա դաստիրակածն ամ՝ դիկ:

Թե ասում ամ.- Այ իմ էրկու մատըմ ամ իմ ուժը:

Բայց ախճիկն ասել ամ.- Հա՛, մուղաթ կաց, կըլխտ օյին դի գալ մերտը:

Բայց տղեն չի համաձայնվում, որ տհենց բան կըլի էլի:

¹ Բանաստեղծ Մկատի ունի Գ. Սունդուկյանի հերոսին՝ Պեպոյին, որը հազում էր կինոյի լայնածավալ շավար (ծանոթ. բանաստեղծի):

Թե.- Բա ի՞նչ անեն,- ասըմ ա:

Թե ասըմ ա.- Ի՞նչ ձիու պոչիցը մի չորս հատ մազ պուկի, բեր,- ասըմ ա,- ի՞նչ էրկու բուֆ մատը կապի, այ ի՞նչ ուժը տրա մեջ ա:

Էտ շան տղի կնիկը գնըմ ա բերըմ ա մի չորս հատ մազ, պիրըմ ա էրկու բուֆը կապըմ ա, դայի՞մ փաթաթըմ ու կապըմ ա, դե ասըմ ա.- Դուրս արի՞:

Չէ՞, ցերողություն¹, դա էլ ասըմ ա.- Այ ի՞նչ ուժը ի՞նչ մարմնի մեջ ա էլի:

Սուր ա ըլըմ, տան միջին մեծ սուր ա ըլըմ, պիրըմ ա էտ սնիցը կապըմ ա ջընջիկներով, փաթաթըմ ա միջև բողազը, փաթաթըմ ա, ասըմ ա.- Դուս արի՞:

Նա որ իրան թափ ա տալի, ջընջիկները կտրվըմ ա, կտրվըմ ա, թե ասըմ ա.- Ի՞նչը դուս գա:

Տղեն ըստեղ հազրի ա գալի ինչ կա ըստի: Տըրանից հետո ուժե էտ մազն ա կապըմ, մազը որ կապըմ ա, ձգըմ ա, ձգըմ ա, միսը կտրըմ ա, ոսկուըը հու չի կարա պուկի, ու դեը դուս ա գալի, դեը դուս ա գալի տըրան խաղիկաղ կըտըմ ա, աժըմ ա խուրջինը, էրկու աչկը հանըմ ա մեկը ասլանին ա տալի, մեկը՝ դովանին, տըրանը էլ հազրի են գալի, լեզուների տակին պահըմ են: Աժըմ ա խուրջինը, գցըմ ձիուն, ձիու վրին գցըմ ու ղըն-թըրղեն տալիս ա ասլանին, դովանին, էլ հետևիցը տանըմ ե՛ն պիսկա պալատի առաջը: Սիսիկը տեսըմ ա, որ ծին էկալ, ասլանը-դովանը էկան, տղա չկա:

- Դա՛, հերըտ են անիծել,- ասըմ ա,- քե չասեցի, քեզ օյին դեն անիլ:

Ու տա վերցըմ ա, իչըմ, էտ խուրջինը տանըմ ա վերելը, ըստիլը բաց ա անըմ, խուրջինը շուր ա տալի, տենըմ ա՝ տղի ջառդաքը: Էն անմահական ջուրը բերըմ ա դնըմ, լավ կիստիկ էլ վերցըմ ա, խաղը խաղի վրա տնըմ, կպցըմ, կպցըմ, կպցըմ, մարթին շինըմ ա՝, էն ստուլի վրին պառկած մարթ, մենակ աչկերն ա մնըմ ու շունչը: Ու ոտու ա գալի, ասըմ ա.- Աստված ջան,- ասըմ ա,- աչկերն ու շունչը:

Էտ ասլան-դովանը լսըմ են, աչկերը քցըմ են էտ գետնի վրին, դա գնըմ ա բերըմ, մենակ աչու աչկը դնըմ ա ծախսըմ, ծախու աչկը դնըմ ա աչըմ, ու էտ շունչն էլ աստված տալիս ա, ու խորը՝ շնչըմ ա, միթո՞մ քնի տեղիցը վեր կացալ տղեն:

- Դիմար,- ասըմ ա,- ես քեզ չասեցի, որ գլխիտ մերտ օյին պիտի գա, դու խելքի արի, դրան մի լսի:

Դա:

- Դե ես էրկու պետը կվերցնես, կգնաս տունըտ, էս պետով կխփես՝ մորըտ կշինես էք էլ, էտ դինն էլ կխփես՝ կշինես որց էլ: Խուրջիններ մե-մեծ սարի խուրջիններ կգցես վրին, կտանես գետի ափը էտ խուրջիննին քարը կլցնես, ոռներին, ոռներին տալով, չթողաս, որ ճամփին խոտ էլ ուտեն, կբերես ի՞նչ պալատի առաջ:

Էտ ա բերըմ ա էտեղ, գնըմ ա խփըմ ա՝ էրկուսին էլ էլ ա շինըմ, խուրջինները քցըմ, քարը լցըմ, բերըմ ա՝ բալկոնի տակին էրկուսին էլ թոկով կապըմ ա: Էտ տղեն արժանանըմ ա էս ըխճկանը, սըրանք էլ էշակ մնըմ են, սատկըմ են սոված-ծարավ:

Խերը՞ ըստի, շառը՞ Բեջանանց քըթըմանըմ:

23(23). ԸՄՍԱՆԹ ԿԱՏՈՒՑ*

Ըլըմ ա, ըլըմ չի՝ մի թաքավոր: Էտ թաքավորի տղեն, ուրեմը, մի պառապի պիսկա սիրըմ ա, թաքավորի տղա յա: Նիե քյախիբ, կորած կնիկ ա: Տղին ինչքան ստիպըմ ա, որ.

- Այ տղա,- ասըմ ա,- բա ես թաքավոր եմ, տու քյառլ դես էն չքավորի,- ասըմ ա,- ըխճկանն ուզիլ, որ իրե մի իրվանցի միջի ա ապրըմ էլի՝ ֆողատան:

Դմի ասըմ ա.- Նրան եմ սիրել, նրան դեմ առնիլ:

Որ տենըմ ա ըլըմ չի, կյգճան ասըմ ա.- Տրան տուս քցեցեք ըստիմ,- ասըմ ա,- քյան դյորն ուզըմ ա, կորչի փայ-մայ միջ տալ,- թաքավորը:

Տրան տուս են քցըմ, թե ասըմ ա.- Մեր են ղազերի են ի՞քը՝ քնակարանը, տվեք իրան:

¹ Բանասացն այստեղ դեպքերի հաջորդականությունը շփոթում է (ծանոթ. բանահավաքի):

Մի դուռը մեկ դռներին հմար շինած ա: Էտ տղեն քյնըմ ա մրած միջին Էտ կյնգաճը վեր ա ունըմ, մորը վեր ա ունըմ, մրած միջին ապրըմ են սոված-ծարավ էլի¹, տնորտնակ տուս են քցել: Տղեն մտածըմ ա, մտածըմ ա.- Այ մերա,- ասըմ ա,- տուք ըտեղ ապրեցեք, ես քյնած աշխատեմ մի իրեք տարի, որ պիրեմ,- ասըմ ա,- մոր ես հըրսանիք ըլեմ էլի:

Տղեն մորն ու կյնգաճը թողըմ ա Էտ հըվանոցի միջին, ինքը քյնըմ: Քյնըմ ա, քյնըմ ա, քյնըմ ա, ասըմ ա.- Էնքան քյնալ դեն, որ ուրիշ թաքավորի ֆողըմ տուս կյնած:

Իրան՝ Էտ թաքավորի հողիցը, տուս ա կյնալի: Մի թաքավորի հողըմ քյնածցել ա հմի աշխատըմ ա:

Չըրցըմ են.- Այ տղա, ի՞նչ կանես, ի՞նչ չես անի:

Թե ասըմ ա.- Բանվորութիւն կանեմ էլի:

Դե պընըցըմ են:

- Դե,- ասըմ ա,- կինըտ ասա, թե օրական քեզ ի՞նչ դենք տալ:

Թե ասըմ ա.- Տասը կոպեկ դեք տալ:

- Վա՛, ա՛յ տղա,- ասըմ ա,- կին ասա, տասը կոպեկը ի՞նչ ա: Փող ասա էլի, փող ասա, որ քե տանք օրական քու վարցը:

- Չէ,- ասըմ ա.- տասը կոպեկն ա իմ կինը: Տասնից մի կես կոպեկ ավել տաք, վե չեմ ունիլ:

Չմարներուն կտորըմ ա, տասը կոպեկ են տալի:

- Բայց ամեն օր աշխատիլ դեմ, ըրուզուըն իմ փողը տալ դեք, տասը կոպեկը տալ դեք:

Էտ տղեն աշխատըմ ա, ըրուզուըն կյնալ տասը կոպեկը վեր ունըմ: Մի տասը կոպեկ ծեռին կյնալիս ա տենըմ, որ մի էրկու ըրեխա, մեկ բաբաթ մի կատվի ճտին մի քյլածնդիր են տրել, քաշ են տալի, տալիս են մի դղլեն սպանըմ են կատվին:

- Ա՛ ըրելեսք ջան,- ասըմ ա,- խի՞ եք տիե անըմ:

- Պա՛, տանըմ ենք սպանեք:

Թե ասըմ ա.- Ի՞նչ տամ, որ իմեմ տաք:

Թե ասըմ ա.- Տասը կոպեկ տու, քե տանք:

Դե տասը կոպեկը հանըմ ա տալիս ըրեխանը, կատուն վեր ունըմ: Կատուն վեր ա ունըմ, հմի խտտած կյնալիս ա: Կյնալիս ա

տենըմ՝ Էս շահի հողիցը Էն մըհալը, որ դավենով, ուրեմն, պեռը պիրին ծախին Նիկոլայի¹ հողըմ, եկել են առըտուր են արել, քյնըմ են:

- Պա՛, ո՞րդի դեք քյնալ, ո՞րդիով դեք քյնալ:

Թե.- Այսինք թաքավորի հողովը քյնալ դենք:

Ոնց որ կյն մեր Էրևանով անց կենան:

- Պա՛, ծեզ մատաղ, Էս ըմանաթը կարալ չե՞ք տանեք՝ այսինք տանը տաք: Կատուն:

Թե ասըմ ա.- խի՞ չենք տանի:

Ֆամիլը կըրիլ ա տալի ընդեղ, հասցեն, որ այսինք պառավի հըմար կտանեք: Ընդիով դեն անց կենալ, ոնց որ կյն մեր ճալովը տիե անց կենան: Կատուն վեր ա ունըմ Էտ բազր-գյանը, տանըմ իրանց պեռի միջին տընըմ, սըզըցըմ յաշկի միջին ու փակըմ: Ու հմի քյնըմ են: Քյնածցին:

Չմի եկել են մի թաքավորի հողըմ տիե ճալըմ վեր են եկել: Էտ թաքավորն էլ պաղ-րաստութիւն ա տեհել, որ, ուրեմը, կյեղի ըլած պաշտոնի մըրթկերանցը կանչիլ դի դոնաղ: Լա՛վ, ուրեմը սեղան ա տարքել ու մանըմ ա, որ այսինք թաքավորի նազըրնին եկել են մեր ճալըմ վեր եկածի են, որ ինքը ծանոթ ա էլի: Մանըմ ա, թե ասըմ ա.- Չասեք,- ասըմ ա,- Էտ նազրգյանին ասեցեք, որ թաքավորը կանչըմ ա, եկեք:

Էտ ա քյնըմ են կանչըմ: Կյնալիս ա հմի տենըմ՝ ժողովուրթը նստած տանը, ժողովուրթը նստած, մի լա՛վ տղա՝ ջընըթաթախ, մի հեր-վարա չոմբախ ուսին տրած, ու սիե ա անըմ Էս պատին ա տալի, Էն պատին ա տալի: Ժողովուրթը նստած հաց են ուտըմ սուփրեն քաշած: Մուկը դալամիշ ա ըլել ըտիով անց կենըմ, ընդիով անց կենըմ, հացի մեչն ա տանըմ: Տա էլ չոմբախով, թաքավորը կար-քաղըլ ա, որ մկները դենն անի, որ հացի մե-չը չտանըմ, ու Էտ տղեն էլ, ընդի շեմընը կաղնած, Էն ա մկները ժած են կյնալի, չոմբա-խով Էն ա սիե անըմ ա՛յ յա Էն մնից, յա Էն մնից, դե մուկը խանից կվախի՞:

¹ Բանաստեղծ Մկատի ունի ռուսական վերջին կայսր Նիկոլայ 2-րդին (ծանոթ. թանախաւաքի):

Էտ նագրոգյանը մտիկ ա անըմ, մտիկ ա անըմ, թե ասըմ ա.- Այ տղա, չի լի՞,- ասըմ ա.- Էն ըմանաթը, որ պիրել ենք, պիրիլ տամ:

Իրան հընգյերին թուխը կըրըմ ա, թե ասըմ ա.- Բյնա՞,- ասըմ ա.- Էն ըքին ասա՞ լա-լաչուն, թե Էն յաշկի միչի Էն պանը, որ պիրել ենք էլի, ըմանաթը, հանի խտտի պի, հենց արա փըխցնես ո՛չ:

Էտ ա պիրըմ ա: Պիրըմ ա, ծեռիցն առնըմ ա ու Էն տղին ասըմ ա.- Չոմբախըտ քցի տուռը:

- Պա՛,- ասըմ ա,- չոմբախը որ տուռը քցեմ,- ասըմ ա,- մկները հրես,- ասըմ ա,- տուխի մեչը դեն տառնալ:

- Այ մարթ,- ասըմ ա,- տու շպրտի Էն ղուլը քցի, կործ չունես:

Ու կատուը, ինքը մեչըը տռռնը դեն անըմ ա, ու սհե պաց թողըմ, որ պաց չի թողըմ, Էտ-Էտի-Էտի ճըլըմ ա մկներին թե չէ, մկները հենց կորչըմ են, էլ մինը չի ըրևըմ: Էս թաքավորը պել-պել ա ըլըմ: Սա Էս ի՞նչ ջանլու ա, Էս ի՞նչ պան ա, որ սհե մկները սրանից վըխծան, փախան: Իրանք էլ կատու դիանդար գիղըմ չեն ինչ ա էլի, տեհած չեն:

Էտ թաքավորը.- Սա ի՞նչ պան ա,- ասըմ ա,- որ Էս պրուհուր պանիցն,- ասըմ ա,- փախան: Չոմբախը ուսին,- ասըմ ա,- նա կարըմ չի դենն անի, սա թող արալ թե չէ,- ասըմ ա,- մկները կորան, ծակերը տռռնը կորան:- Էն նագրոգյա-նին ասըմ ա.- ի՞նչ տամ,- ասըմ ա,- որ ինձ տաս:

Ասըմ ա.- Սա ամանաթ ա, կարալ չեմ: Սրա կինը կարալ չես տաս:

Վերչն ասըմ ա.- Դավենու,- ասըմ ա,- մի ղուլի պեռը ոսկի,- ասըմ ա,- իմ խազնիցը լցուու Էտ մի պեռը ու Էտ կատուն ինձ տու:

Էտ նագրոգյանը մտածըմ ա, մտածըմ ա, ասըմ ա.- Ավելի չի լավ, Էս տղեն, օրինակ, Էս կատուն ղու ա արել, ի՞նչ դի անիլ, հազիր ոսկին կտանեմ իրա մորը կտամ, կապեն էլի:

Ոսկին պիրըմ ա վեր ունըմ ածըմ խուրջի-նը, լցըմ, կատուն տալի թաքավորին, պիրըմ Էտ պեռը շինըմ, Էտ ոսկին պիրըմ, թաքավորի Էն ըքովը անց կենալիս հըրցըմ ա.- Փլանի տուռը, փլանի տուռը:

Թե ասըմ են.- Սիա՛յ Էն հըվանոցն ա՛ Էն դուզըմը, հրե հա՛յ:

Տանըմ ա հասցեն կարթըմ, տենըմ ա, որ իսկապես նրա մերն ա, Էն էլ կնիկն ա:

Թե ասըմ ա.- Էս ըմանաթը ծեզ միար են ղու արել: Էս փողը:

Էտ փողը տալի կնգանը, փողը տալիս ա կնգանը, Էտ կնիկը պիրըմ ա ու սկսըմ հայաթ շինիլը Էտ փողովը՝ ոսկի ա էլի: Ուրենը հենց շինըմ ա, ասըմ ա.- Յենց պետք ա շինեմ, որ արևը դիպչիլիս առաչ իմ պալատին դիպչի ու մի կես ժամից եղը նոր թաքավորի Էն պալա-տին դիպչի:

Տե՛ս պանը շինըմ ա՛ քանի հարգանի, ու կռվի դավա՞թ առնըմ՝ դիտարիցը հետ, էլ ծիու իլխի, տավար: Առնըմ ա ու, է՛, չոբան-չուլուզ վրեն տրած՝ Էն դուզըմը ըրըծըցըմ են:

Յմի խառնարը տանք տղիցը: Տղեն, որ իրեք տարի թըմանըմ ա, թե ասըմ ա.- Չլա բոլ կցա էլի, քյնած տենամ,- ասըմ ա,- մերս սաղ ա, կնիկս սաղ ա: Սոված-ծարավ իլլ արի եկա:

Յա՛, վեր ա կենըմ տղեն կռվի՝ իրան հան-դը տուս կռվի, Էտ թաքավորի հողն ա տուս կռվի: Կռվիս ա տենըմ մի դուզըմ մի իլխի ա ըրածըմ՝ ծիանոց կշտին էլ մի ծիարած:

Թե ասըմ ա.- Տղա ջան, Էտ իլխին ո՛ւմն ա:

Թա ասըմ ա.- Փլանինն ա:

Տենըմ ա ինքն ա:

- Ո՞նց ա փլանինը, ա՛յ տղա:

Թե.- Յա՛,- ասըմ ա,- փլանինն ա:

- Բա սա ո՞րդիան ա:

Ասըմ ա.- Դե կնիկը,- ասըմ ա,- մարթը ըստի չի,- ասըմ ա,- բայց կնիկը,- ասըմ ա,- սհե է՛լ տավար, դիտար, իլխի, տներ ա շինել:

Կռվիս ա տըվարածին հըրցըմ:

Թե ասըմ ա.- Էն փլանինն ա:

Ոխարածին ա հըրցըմ:

- Փլանինն ա:

Թե ասըմ ա.- Սա լավ չի, սա մի պան կա, ասըմ ա,- կնիկս ո՛վ ա գիղըմ ի՞նչ ա արել, որ սհենց ա էլի:

Կռվիս ա կեղի դրաղը, որ մի մտնի, օրինակ, իրանց տանիցը մոտ ա նա արթեն, մի քյածաթա պառավ կռվիս ա աղաքը:

- Պա՛, տղա ջան, Էս ա քանի տարի քյնա-ցել ես, բա խի՞՝ չես վախտին եկել: Բա ասիլ

չես, թե կնիկըտ սհե, սհե բոգություն անիլիս
ա ըլել: Է՞, ինչե՛ր ա շինել, էլ պալատ, դիւար,
հայաթնի ա շինել: Դա: Էն դայդի հալալ մոր
ծառազը ճիւղ կըլի՞:

- Դը՛մ,-ասըմ ա,- բա ես գիղի է՞, որ ոնց ա:
Ուրեմը տհե պան ա արել, բա էս ո՞րդիւսն ա
սհե ստեղծել:

Էլ ասըմ չի, թե՛ կատվիցն ա էլի: Կյալիս ա,
հծի ասել են՝ էտ ա տունը:

Տակին կաղնել ա, ըրմանըմ ա, թե.- Սա բա
մեր տունն ա՞, բա մեր տունը սհե ա ըլել, բա
հըվանոց ա ըլել, հծի, է՛, թաքավորի պալա-
տիցը պաքրն ա, թե քանի հարգանի ա:

Կնիկը բրավուրդ անըմ ա վիրկիցը, որ իրա
մարդը արթեն եկալ: Դմի ընդեղից կոները
չռած՝ չռամիլ ա ըլըմ դռմ մարթի աղաքն էլի,
իրեք տարի ա էլի՝ տեհել էլ: Կյալիս ա, էտ կես
տեղը հասնիլիս տեղը, մարթը էս դղեն դենը
քյնըմ ա կյնգանը տալիս ա թե չէ՛, փլածքնիցը
ընգնըմ ա: Ընգնըմ ա, միչև մերը քըմակիցը
տուս ա կյալի:

- Այ քու տունը քանդվի, խի՞ տհե արիր:

Թե ասըմ ա.- Էս ի՞նչ ա արել,-ասըմ ա,-
կնիկս բոգություն արել ա,-ասըմ ա,- Էս ինչո՞վ
ա կընցրել:

- Այ քու տունը քանդվի, այիւր էն նագր-
գյանի հետ որ դու ես արել, էն թաքավորի
բազդայանը պիրուց: Սհե, սհե փող ա տվել
մեզ, էսքան փող ա տվել, էն փողը:

Նոր ծնգներին տալի, կյնգանը, ուշաթափ
ըլած ա ըլըմ, էտ պիրըմ, տանըմ սըղըցնըմ:
Նոր տենըմ, որ էն պառափի ասիլով տա իրան
կյնգանը տվել ա տհե արել: Վերջը էտ
պառափին էլ քյնըմ սպանըմ: Տիւնըք էլ իրանց
մուրազին են հասնըմ:

24(24). ՍԱՐԹՈՒ ԴԱՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դա՛, մի տղա քյնըմ ա Բաթըմի՛ բուխտ,
ջահել տղա ա ըլըմ, մտնըմ ա ըտեղ պարա-
խողի բանվորների մեջը, աշխարըմ ա մի
տարի, հինգ տարի, բավականին փող ա աշ-

խատըմ, էտ փողը, մտածըմ ա, մտածըմ, ա-
սըմ ա.- Ի՞նչ անեն, ի՞նչ չանեն:

Պերըմ ա որոշըմ ա, էտ պարախողը որ
կյալիս ա, էտ պարախողի կապիտանի հետ
ծանոթըմ ա էլի, ծանոթ ըլըմ էլի, մտիկ ա
ըլըմ, պերըմ ա էտ փողեր հավաքըմ ա տալի
կապիտանին, ասըմ ա, որ.- Կքյնաս, օրինակ,
Ադես, Սևաստոպոլ՝², էս փողն, ինչ որ կպա-
տահի առաջի անքամ, կտաս ինձ համար
կառնես, թանգ ու ժամին մտիկ չանես, կտաս
ու կառնես, առաջի անքամ ինչ մարթ մի պան
կպերի բուխտը՝ ծախի, կտաս ինձ համար
կառնես կպերես:

Ասըմ ա.- Լալ:

Փողը վերցնըմ ա էտ կապիտան քյնըմ ա,
օրինակ, Ադես վեր ա կյալի, պարախողից որ
տուս են կյալի բուխտ, տենըմ ա մի մարթ մի
սիրուն կատու ա խըտտել տանըմ ա, պերըմ
ա էտ փող տալի՝ էտ կատվին, կատուն տընըմ
ա մի յաշլի միչի տընըմ պարախողը: Պարա-
խող ամեն քաղաք տուս կյալով՝ քյնըմ ա մի
ուրիշ քաղաք: Դա՛, էտ քաղաքից մի ծանոթ ա
ունենըմ էտ կապիտան, կյալիս ա պարախո-
ղից տհանց կոնախ ա տանըմ: Կոնախ ա
տանըմ, քյնըմ են սուփրեն պաճ են անըմ, ու
էտ տան տեղ պիրըմ ա ամեքին մի փետ ա
տընըմ կոխքներին: Էտ կապիտան ասըմ ա.-
Բա էտ փետը ընչի՞ ես պերըմ տընըմ սուփրի
կշտին՝ կոխքերին:

Թե ասըմ ա.- Բա միի սուփրեն որ պաճ
անենը, կերակուր պաճ անենը, անիծվածներ՝
մկներ կա,- ասըմ ա,- տուս դեն կյալ խան-
գառի, թող չդեն անիլ հաց ուտենը, տրա հա-
մար ենը տըրել:

Էտ կապիտան իրան ծառայողին ասըմ ա.-
Քյնա մեր ասլանին հան պեր պարախողից:

Էտ կատվի համար ա ասըմ էլի, նրա անու-
նը տընըմ են Ասլան: Դա՛, քյնըմ ա կատվին
պերըմ թող անըմ ընդեղ, իրանք հաց են
ուտըմ, մկներ տուս են կյալի թե չէ, ընդեղ էլ ա
փռնըմ, ընդեղ էլ ա փռնըմ, մկներին շաղ ա
տալի: Որ հաց ուտըմ են պրծըմ են, էտ պանն

¹ Բաթում – նավահանգստային քաղաք Սև ծովի
Կովկասյան ափին (ծանոթ. բանահավաքի):

² Ադես (Օդեսա), Սևաստոպոլ – նավահանգիստ-
ներ Սև ծովի հյուսիսային ափին (ծանոթ. բանա-
հավաքի):

ասըմ ա, էտ տան տերը կապիտանին ասըմ ա.- էտ կատուն մեզ տու:

Թե ասըմ ա.- Իմ չի, ախր, ամանաթ պան ա:

Թե ասըմ ա.- Այ մարթ, ամանաթ ի էլի, ինչ ի էլի, իրան քաշով մին ոսկի կտամ, հավել էլ կտամ, մեզ տու էլի:

Պերըմ են բարըջըմ են, համարյա մի պարկ ոսկի ա վերցըմ էտ կատվի պան՝ հաչողությունը, ու վեր ունըմ կյալի: Կյալի մի ամիս, հինգ ամիս ուշանըմ ա, կյալի նույն իրա տեղը՝ իրան Բաթում, վեր ա կյալի, տղեն կյալիս ա, ասըմ ա.- Եսպես եմ արել էլի, աղըտուր եմ արել, էքսան ոսկի ա թուփ ըլել քեզ համար:

Ոսկին տալիս ա էտ մարթուն, էտ մարթը ոսկին շլակըմ ա Բաթումից, օրինակ, տուս ա կյալի, կյալի կեղը: Կյալիս ա տենըմ ա մի քարվանս ա քյնըմ էս մեր շոշովը էլի՝ Կրիվոյով՝, կըլի մի հալուր հատ դավա: Էտ քարվանսաշուն ասըմ ա.- Էտ ի՞նչ ա ծեր պեռը:

Թե ասըմ ա.- Խուճը ա:

Թե ասըմ ա.- Պերեք ինձ տվեք էտ խուճը:

Թե ասըմ ա.- Այ մարթ, տու կարա՞ս սրանց հաչողություն տա՞մ, քե տանը: Էքսան տու ի՞նչ դես անիլ:

Թե ասըմ ա.- Է՛, ինչ որ կին ա, պերեք թափեք ըստի ծեր պեռներ՝ խուճը, ես ծեզ հաչողություն տամ, տուք քյնացեք ծեր կործին, խուճը թող մնա ըստեղ, խնգան տեր դեմ տառնալ: Տխանք, որ տենըմ են տհենց ա, հաշիվ են անըմ:

Ասըմ ա.- Ես կտամ էտքան ոսկի, էտքան ոսկի ա փոնըմ, կտամ:

Համբարըմ ա էտ մարթկերանց փողը տալի, էտ խուճը թափըմ են էտ շոշի կրախ, տառնըմ ա մի տան դռնը, դե հարուր դավա ա: Հա՛, էտ քարվանս դու ա ըլըմ քյնում, էտ մարթ նստըմ ա ընդի մտածըմ, մտածըմ, վեր ա կենըմ կրակ ա ճարըմ, պիրում ա չորս կողմ կրակ ա տալի, դե խուճը ա էլի, խնգան ֆոտ ընգըմ ա սաղ ռայոն: Վառըմ ա ու, ուրենը,

կյալիս ա Սևբար³ ըրուզու: Հա՛, կյալիս ա Սևբար, տենըմ ա մի հարսանիք ա կյալի: Մի հարսանիք ա կյալի, քյնըմ ա էտ խամի տուտ կաղնըմ ա, դարիք մարթ ա: Էտ հարս ու փեսան որ վերկից կյալիս են, էտ հարս մտիկ ա անըմ էտ տղին, ոտը դեմ ա տալի, ժամը մտնըմ չի:

Թե.- Էտ ի՞նչ էլավ, էտ ի՞նչ չէլավ:

Թե ասըմ ա.- Ես ես տղին առնըմ չեմ, էն տղին դեմ առնիլ, էտ եկող տղին դարիք տղին, որ եկել ա:

Ինչ անըմ են, անըմ չեն, ոտը դեմ ա տալի, ասըմ ա.- Ես տրա հետ պսակվըմ չեմ, ես տրան դեմ առնիլ:

Որ հնարը կտրըմ ա, թաքավորի ախչիկ ա ըլել, ասըմ ա.- Իրան տվեք,- ասըմ ա,- որդի ուզըմ ա քյն կորչի:

Ախչկան, հա: Էտ ախչիկ մի պուճուր չամադան ա ունենըմ իր հետ, տանից որ տուս ա եկել լավ-վատ իրան հավաքել ա երեխա ժամանակից, թանկագին պան ա ըլել, մատանի ա էլել, էն հին բաղդաղըքեր ա էլել, խասեղեն ա էլել: Էն ա հարսանիք քանըմ են էտ էրեխի, էտ ըրեխին են տալի, ասըմ ա.- Ա՛ռ քյնա, որդե ուզըմ ես քյնա:- Թաքավորը ասըմ ա.- էլ իմ ժամառը չի, որդի ուզըմ ես՝ քյնա:

Էտ տղեն վեր ա ունըմ էտ կեղից փոխըմ մի յուրիշ կեղ, քյնըմ ա մի տուն վերցըմ, ո՛չ տեղաշոր ունի, ո՛չ մի պան: Հա՛, ըռավոտը էտ հարսն ասըմ ա, հանըմ ա մի յայլուխ ա տալի՝ մի ապրշեմ, ասըմ ա.- Տար բազար համ մի էրկու կիտ միս կպերես, համ էլ մի էրկու կիտ հաց կպերես, համ էքսան սողան կպերես, վերջը պրավիզա էլի:

Էտ մարթ տանըմ ա էտ յայլուխ, մի ջուհուղ ընդի ա ըլըմ, էտ յայլուխ հանըմ ա ծախի, շատ հեժան ասըմ ա, կնիկն ինչ որ ասել, էտ խոսքով ասըմ, էլ հավել չի ասըմ: Էտ ջուհուղ ասըմ ա.- Այ տղա, այ տղա, էտ կյընի տալ մի, ես էքսան կտամ, պեր ինձ տու:

Թե ասըմ ա.- Չէ՛, տերն ինչ որոշել ա,- ասըմ ա,- էտ կյընին դեմ տալ, էժան-թանկ տալ չեմ:

¹ Կրիվոյ (Кривой мост) – Ծուռ կամուրջ, գտնվում է Իջևանի շրջանում, Աջաթուր և Դիտավան գյուղերի միջև, Աղստև գետի ափին (ժամոթ. բանահավաքի):

² Հաչողություն տալ – այսինքն արժեքը վճարել (ժամոթ. բանահավաքի):

³ Սևբար- գյուղ Իջևանի շրջանում (ժամոթ. բանահավաքի):

Էտ ջիուդ մնում ա փոշման, ինչ անըմ ա, իրան տալիս չի, հեժան կընով ինձ պես մի մարթի ա տալի: Կյալիս ա կենըմ, ուտըմ են, էն էլ լքսի առաժուտ հանըմ ա մի խաս բաղդահի ա տալի, էլի որոշըմ ա, ասըմ ա.- Էսքան միս կպերես, էսքան հաց կպերես, էսքան ուրիշ մրջեղեն կպերես:

Հա էտ մարթ վեր ունըմ քյըմը բազար, էտ ջիուդ էլի ընդել ա ըլըմ, որ կյանհատըմ ա, էտ ջիուդ տենըմ ա՝ կես կին, ասըմ ա էտ պաճին, էդ ջիուդն էլի, մոտանըմ ա, ասըմ ա.- Այ մարթ, պեր ինս տու,- ասըմ ա.- Ես հավել կին կտամ, ընչի՞ ես էտ ապրանք էժան կընով ծախըմ:

- 2Է,- ասըմ ա,- Ես հավել տալ չեմ, ինչ որ տրա տերը տվել ա ինձ, ես էտ կընին դեմ տալ: Ես կարալ չեմ հավել-պակաս տամ:

Ինչ անըմ ա ջիուդը, ըլըմ չի, էտ էլ ա տալի, տալիս ա՝ ջիուդը մնում ա փուշման, փող դի աշխատիլ միջին ջիուդը, առըտուրական ա: Հա՛, լքսի մի երկու օր ուտըմ են էտ պրիպաս, էլի հատըմ ա, մի պաճն էլ ա հանըմ, օրինակ, մի խաս պաճն ա հանըմ, ասըմ ա.- Կտանես էլի էսքան ես պաճն կառնես, էսքան էն պաճն կառնես կպերես մի շաբաթ կուտենք, յուլա կքյ-նանք:

Վեր ա ունըմ քյըմը բազար, էտ ջիուդ տենըմ ա հավելի բանկազին ա էտ, որ պերել ա: Կյիըմ որ ասըմ ա, կես կին էլ չի, շատ հեժան ա: Էլի էտ ջիուդ մոտանըմ ա, ասըմ ա.- Այ մարթ, տու խի՞ ես էտ ապրանքը ճուր քցըմ, բա ես մեծ գուժար եմ տալի, էտ ապրանք ինձ տու՝ հավել տամ, մի քանի հօր հավել ապրեք:

Ասըմ ա.- 2Է՛, տրա տեր ինչ որոշել ա, ես էտ կընի դեմ տալ:

Ըլըմ չի, ջիուդը ասըմ ա.- Պի մի պաճն ա-նենք: Տենըմ ես,- ասըմ ա,- Ես ի՞նչ չենք ա՝ թաքաղորական, տակն էլ պոլոր խանութներ ա,- էտ ջիուդն ասըմ ա,- պի վկաներով թուղթ կրենք, տու էլ ստորագրի, վկաններն էլ ստորագրեն, քյո՛ւ, տու խոսալ մի: Ես չենքերն էլ եմ ինձ, տակի խանութներն էլ եմ ինձ, պի ստորագրությամբ կրենք ու էտ պայմանը կտրենք միջին ու քյո՛ւնք ծեր տու՛ն՝ էտ ապրանք տվողին, տու խոսալ մի, ես ասիլ դեմ, որ այսինչ

ժամանակին ես ապրանքն ա պիրել, ես կընի ծախեց, ես էսքան կին տվի, նա տվուց ոչ: Երկրորդ անքամ ես պաճն պիրուց, ես երկու-տակ տվի՝ ինձ տվուց ոչ, էժան կընի ծախեց, երրորդ անքամն էլ, ես էլ չորրորդ անքամն ա, թե նա կասի սխալ մարթ ա ըլել, խի՞՞ էն հավել կընին տվել չի, էն ժամանակ,- ասըմ ա,- Եթե քեզ սխալ տուս կպիրի, էտ կնիկ ինձ կտաս: Թե կասի՞ չէ, ինչ որ ուզըմ ա, տղամարթ ա էլի, ինչ որ ասի, նա յա տան դեկավարը, նա յա, էն ժամանակ ես չենքն էլ, ես տակի խանութնի՞՞ վրեն, ապրանքնի՞ն էլ քեզ ըլի:

Պիրըմ են էտեղ որոշըմ են, մարթիկ կան-չըմ, ընդի թուխտ կյըմ, վկաներ կյըրըմ՝ մի-չին: Վեր են կենըմ, մի վեց-յոթ մարթ ա, քյըմ էտ մարթի տու: Քյըմ են, էտ ջիուդ պատմըմ ա, ասըմ ա.- Ես քու մարթն ա՞:

Ասըմ ա.- Հա՛:

Թե ասըմա.- Բա փլան ժամանակին եսպես մի ապրանք պերեց, ծախեց, ես էսքան փող տվի, ինձ չտվուց, էժան կընով ճուր քցեց՝ Էկավ:

Թե ասըմ ա.- Տղամարթ ա էլի, իրա խեղք հավելի լավ ա, քան թե ինձ:

- Տա երգորթ անքամ եսպես ապրանք պիրուց, էլի ես ասի՝ էսքան փող կտամ, էլի չտվուց:

Ասըմ ա.- Ինքն ա գիղըմ, տղամարթ ա, կնիկարմատը ի՞նչ գործ ունի տղամարթի գործերի հետ:

- Չորրորդ անքամ ես ապրանք պերուց, ես էսքան տվի՝ էլի չտվուց:

- Ոչինչ,- ասըմ ա,- տղամարթ ա էլի, ի՞նչ են գիղըմ, կնիկարմատ ի՞նչ կործ ունի տղամարթի կործերի հետ:

Էտ էլ որ վերջանըմ ա, էտ մարթ ասըմ ա.- Ա՛՛ կնիկ վե կաց:

Հմի չենքն էլ իրանն ա, խանութնի՞ն էլ իրանն ա, քյըմ են ջիուդի չենքը, արթեն դե պայմանավորվեցին, չէ՞: Էտ չենքը վերցըմ ա իրան համար, տաճըմ են արթեն թաքաղորի հետ, թաքավորի չափ մարթիք: Հմի տես ոնց պտտեց, ոնց եկավ, ոնց հաշդոթյուն ստացավ:

25(25). ՍԵՅԻՌԻ ԴԵՔԻԱԾԸ

Ըլըմ ա, ըլըմ չի՝ երկու եխպայր, երկուսին էլ ժառանգ չեն ունենում: Էտ ա էն մի ախպերը մտածում ա, իրան բալկոնընը նստած, ասըմ ա.- Ինչպե՞ս անենք, որ մեր էտ կարողութիւնը ո՞վ կուտի, մընք էլ երկուսս էլ հասակավոր ենք տառել, ո՞նց կանենք:

Մի դավիշ էտեղ տուս ա կյալի, աչկերնուն երկըմ ա, էտ դարվիշն ասըմ ա.- Այ մարթ, խի՞ ես մտածում:

Թե.- Դե անժառանգ մարթիք ենք երկուսս էլ:

Երկու խնձոր ա վերցնում տալի էտ մարթին, ասըմ ա.- Մեկը կտաս քու եխպորը, մեկն էլ՝ տու, մարթ ու կնիկ տուք կես կանեք, մարթ ու կնիկ էլ՝ նրիանք, մեկիստ տղա կըլի, մեկինըտ էլ ախճիկ կըլի:

Էտ մարթը ուրախանըմ ա: Մի խընձորը սիպտակ ա ըլըմ, մի խընձորն էլ կարմիր ա ըլըմ, ասըմ ա.- Սիպտակը տղա կըլի, մենք մարթ ու կնիկ ուտենք:

Կարմիրն էլ տալիս ա ախպորը, իփր թե ախճիկը են կըլի: Հակառակն ա տուս կյալի, կյալիս են երկունն էլ հոլիանըմ են, ըրեխեք են պիրըմ. են կարմիր խընձորինը տղա ա ըլըմ, իսկ սիպտակ խընձորինը՝ ախճիկ: Տառ հլա ըրեխեքը չըլիլու՝ պայմանագիր են կապըմ՝ որինըս ախճիկ ըլի, տղի տուրունը տա:

Հա՛, համաձայնվըմ են ախպերտինքը: Շատ են կենըմ, քիչ են կենըմ, երեխեքը փըռըշանըմ են, մեծանըմ են, էտ տղի հայրիկը մահանըմ ա՝ Որ մեծանըմ են՝ բըլուլանըմ են, էտ ըխճ-կա հայրը ասըմ ա.- Մխպերս, մի պան որ մա-հացել ա, ինձանից էլ ո՞վ դի դավի անիլ, լծվն են ա պըժանեն, որ էլ իմ ախճիկը սրան չը-տամ:

Պիրըմ ա եխպորը, եխպոր կյնգանը պըժա-նըմ ա, ուրուշ տուն են քյնըմ: Էտ տղեն քյնըմ ա հաղ անըմ ա, հաղ անիլիս տեղը սըրա-նրա ըխճկա հետ դեռ-դեն հաղ անըմ ա, ըխճկեքը աիքը են.- Է՛յ, այ տղա, հիմար չես, հրե քու հրոխպոր ախճիկը ծեզ վրա, քեզ հետ պա-յմանագիր ունեք, քյնա քու հրոխպոր ախճիկը, պայման ունեք, քյնա վերցու, առ էլի, ինչո՞ւ ես սըրա-նրա ախճկա հետևիցը ման կյալի:

Էտ տղեն կյալիս ա մորն ասըմ.- Այ մերա, էս ի՞նչ պան ա, սիե են ասըմ:

Մերն էլ ուզըմ չի ասի, հա՛ ջանին որ հաս-նըմ ա, տենըմ ա, չէ, տղեն շատ ա ստիպըմ, ասըմ ա.- Դե մեզ պայման ունենք, բալա ջան: Բու հրոխպերը հարուստ ա, մընք էլ քյնսիք ենք, քեզ ո՞վ ախճիկ կտա:

Ասըմ ա.- Զէ՛, տու պետք ա քյնաս ասես:

Քյնըմ ա իրան տեքոր տուն էտ հարսը:

- Հա՛, ասըմ ա, կյնգանն ասըմ ա,- վե կաց, իմ ըխպրակինն էկել ա, սոված կըլի, ծարավ կըլի, հաց չինի թող հաց ուտի, մի քիչ յեղից-պանրից չինի, թող վերցնի տանի իրանց տանը ըրեխեքը ուտեն, ապրեն:

Էտ ա տըրուն ճանապար են տընըմ, էտ հարսը հըմանըմ ա, թե ասի: Որ տուն ա կյա-լի, տղեն հարցնըմ ա.- Այ մերա, ի՞նչ տառնավ:

Թե ասըմ ա.- Բալա ջան, հըմանչեցի, ասե-ցի ոչ:

Թե ասըմ ա.- Էս րուպիս հետ քյնա, թե չէ,- ասըմ ա,- երկաթը կըկեծցնեն, ոտներիս կը-տընեն, ոտներըտ կխանձվի: Քյնա անպայման ասա, որ մեր պայմանը՝ պայման ա, ախճիկը տու:

Հարսը որ քյնըմ ա, տեքոն ասըմ ա.- Էլի էկել ա մեր հարսը,- կընգանն ասըմ ա,- այ կնիկ, ենպես պան տու, որ մի քիչ բավարա-վեն, ուշ կյա էլի, խի՞ ես քիչ տվել:

Ասըմ ա, կյնգա հետ ասըմ ա թե.- Հմանըմ եմ, թե իմ տեքորն ասեմ, բա սիե, սիե, են գյաղեն հոգուս մուր ածել ա, աիըմ ա՝ մեզ պայման ունենք, ախճիկը տու:

Կընիկը մարթին ասըմ ա.- Սիրի ես պա-յմանին ա էկել, էս ֆորմի:-Ասըմ ա.- Ես պան չեմ ասըմ, թող ախճիկն առնի, տղեն առնի, ես պան չեմ ասըմ, պայմանը՝ պայման ա:

Ախճիկն էլ քառասուն դարավաշով ա ման կյալի, նա էլ քյնսիքի ըրեխա ա էլի, քաչալ ա ընգել, քաչալ են ասըմ: Էտ ա ախճիկն ասըմ ա.- խի՞, մարթը կըլիսիցս կտրվել ա, էտ քաչալին դեմ առնի՞լ: Չեմ առնի: Նա դորը ման ա էկել, լապատկըքերը վերցրեք են հո-ղերը վերցրեք չպտեցեք:

Տղեն թող անըմ ա, էլ չի կյալի, ըզըզվըմ ա, թող անըմ ա, մնըմ են¹:

Հա՛, էտ ա էտ տղեն իշով փայտ ա կըմ իրանց տուն պիրըմ, տըռնով կառավարվըմ են, ծախըմ ա, փող առնըմ ա, էտ փողով հաց են առնըմ, յոկա են քյընըմ: Մի օր էլ անտառն ա քյընըմ տենըմ ա, որ մի ախպուր կա, դե քաչալ տղա ա էլի, քյընըմ ա իրեսովը ճուր ա տալի, ըըրտնած ա ըլըմ դես-դեն, էտ կողմն էն կողմն, կըլխովն էլ ա ճուր տալի, տենըմ ա, պան, կյուխը սըղացավ, ծեռները սըղացավ: Լողանըմ ա, լավ տռնըմ ա աբրազոննի, լավ քաղաքավարի տղա, սիրուն, մազերը՝ խուճուճ, լավը, գեղեցիկ տղա:

Էն կողմիցը դեսը կյալիս տեղը մի Ջոհրա խանըմ ա ըլըմ, քառասուն դարավաշ ա ունենըմ, էտ քառասունին էլ ճանապարհին քցած, ասել ա.- Ինձ միար մի տղա ճարեցեք, որ ես առնեմ էտ տղին:

Էտ տղեն տըռնաց հանդիպըմ ա թե չէ, էտ տղին կալնըմ են, ըըշըմ տանըմ էտ Ջոհրա խանըմի կուշտը:

- Մյ տղա, տու ի՞նչ փեշակ ունես, ի՞նչ ես, բա ես քե առնիլ դեմ:

Թե ասըմ ա.- Դե առնիլ դես, լավ դես անիլ, բայց ես քյապի տղա եմ, տու ինձ առնիլ չես:

- 2Է՛, փեշակըտ ասա:

Ասըմ ա.- Ես լավ սազ ածող եմ:

Էտ ախճիկը՝ Ջոհրա խանըմը, վեր ա ունըմ մի լավ սազ առնըմ, եռեսուն ռուբլի տալի՝ սազն առնըմ, պիրըմ տըռն տալի, մի եռեսուն ռուբլի ա ուղարգըմ՝ լավ կաստըմ են պիրըմ, հաքցըմ են, լավ փափաղ են տընըմ կըլխին, աբրազոննի տռնըմ ա՝ քաղաքավարի, շախշիաթին տղա: Մի օր, ինքզ օր, տասն օր կենըմ ա էտ տղեն էտ ըխճկա մոտ, ըխճկանն ասըմ ա թե.- Ինձ մի իրեք օր թույլ տու քյեռն մեր տուն դիպչեմ, կյա՛մ:

Ասըմ ա.-2Է՛, ինձ կխափես, կյալ չես:

Ասըմ ա.- 2Է՛ չեմ խափիլ, եփ որ դավին պող տուս կկյա, էն ժամանակ, ղըրմն էլ՝ ծաղիկ, էն ժամանակը ես քեզ մոտ եմ:

- Հա՛, պայմանը՝ պայման ա:

Դարավաշնին ասըմ են.- Ա՛ տնաքանդ, ղըմըմ ծաղիկ ե՞փ տուս կկյա, դավին ե՞փ դի պող տուս կկյալ:

- Դավին որ պող տուս կկյա, ըտով կկյա՛մ, ղըմըմ ծաղիկ տյուս կկյա, էտ ժամանակ կկյա՛մ:- Տղեն էտ ֆորմի ասեց,- ես քյընըմ եմ, կկյա՛մ:

Ասըմ են.- Դավին պող չի տուս կկյալ.- էտ դարավաշնին են ասըմ,- ղըմըմ ծաղիկ չի տուս կկյալ, քե խափըմ ա:

Ասըմ ա.- Տազ արած կըցեք:

Տղեն վե կցավ, սազը վե կալավ, քյա՛ց իրանց տուն, քյա՛ց իրանց տուն, իրանց բալ-կոնըմը նստած հաղ ասըմ ա, լավ հաղեր ասըմ ա, էտ ախճիկը ընդիով անց կենալիս տենըմ ա, որ պա՛, էտ են տղեն չի՞, որ մոտիկ անըմ ա, խելքի ծերը քյընըմ ա, հըմել քյընըմ ա հորն ու մորն ասըմ ա, թե.- Կա, չկա, ինձ տվեք իմ ձառն էն ըքին՝ տղին:

Ախճիկը լըսըմ ա, որ իրան ձառն տղեն տեղափոխվըմ ա ուրուշ աշխար, ըտի ասըմ ա.- Ըձառն տղա, արի տու ինձ առ, քյեռն մի մեր աշխարիցը, ես քե հմի առնըմ եմ, տու արի ինձ առ:

Ասըմ ա.- Թե պես հարիր ախճիկ էլ ըլի, ես էլ քեզ չեմ առնիլ:

Տղեն երազըմ տեսնըմ ա, որ ուրուշ քաղաքըմ իրան մի ախճիկ հավան ա կենըմ: Էտ ախճիկն էլ երազըմ էտ տղին ա տենըմ: Էտ տղեն վեր ա կենըմ, էտ երազի հիման վրա, ճանապար ընգըմ ու քյըն՝ Շատ ա քյընըմ, քիչ ա քյընըմ, հասնըմ ա ճանապարի վրա տենըմ ա, որ մի շենք կա, մի հիքը հարգամի շենք կա ըտեղ՝ ճանապարի վրա, տեսնըմ ա՝ ճանապարի առաջը կտրած, մի քառասուն հատ ախճիկ պոխտ են կյալի:

Էտ տղեն հարցըմ ա, ասըմ ա.- Ծեզ մատաղ ըլեմ, մոթն եմ ընգել, չի՞ կարելի կյա՛մ ըրուզուրը ըտեղ ծեզ մոտ ապրեմ, վաղն անց կենամ քյեռն:

Տղենք ասըմ են.- Ի՞նչ ես համարցակվըմ, մեր խանըմը կըմանա, որ տե՛ս պոն ես ասըմ, քեզ կծծի:

¹ Այստեղ հոգնած բանասացը պատումն ընդհատում է և ասում. «Մի քիչ քեզվեմ ուրիշ տեղ». ընդմիջումից հետո շարունակում է պատմել (ծանոթ. բանասիակաթի):

էտ ա տաւ տհաճաց ասըմ ա.- Դե խընթորմ եմ էլի, խընթորիլով եմ ասըմ, հու ես զոռով չեմ ասըմ:

Տըհաճը ըսկսըմ են էտ տղին ծեծիլը: Խա-նըմը ընդհան՝ վիրի հարգիցը, նայըմ ա տե-նըմ էտ տղին ծեծըմ են, որ էտ տղեն աճկովն ա ընգըմ, ասըմ ա.- Սա իմ տեհած տղեն ա էրագիս մեջը, որ տեհել եմ, նույն էտ տղեն ա:

Դարավաշներին կարքաորըմ ա, որ.- Պիրեք ըստեղ էտ տղին:

Տանըմ են իրան մոտ, տեսնըմ ա, որ էտ տղեն տեսնալուն պես ասըմ ա.- Սա իմ էրագի տեհած ախճիկն ա:

Նա էլ ասըմ ա.- Ի՞մ էրագի տեհած տղեն ա՝: Իրար էտ ա հավանըմ են, իրար հետ ապ-րըմ են [իհմա անդերը ո՞նց ասեմ]¹:

Հա՛, էտ ախճիկն ասըմ ա.- Դե քյնմ մեր վարթապետին պի, որ մեզ պըսակի:

Քյնըմ են կանչըմ, վարթապետը կյալիս ա, որ տըհանց պըսակի: Կյալիս ա պըսակըմ ա, դե տըհանց էլ ըստեղ անտառըմ ապրըմ են:

Էտ ախճիկը տըրաճ ասըմ ա.- Այ տղա, ի՞նչ փեշակ ունես:

Ասըմ ա.- Լաւ սիրըմ եմ հորսկանությունը, լաւ ծի ըլի:

Էտ ըխճկանը լաւ ծի էլ ա ունենըմ, լաւ հրացան էլ ա ունենըմ, տալիս ա մարթին, մարթը հորսկանութենով ըզբաղվըմ ա՝: Որ քյնըմ ա, թե հորս անի, հա՛, հորսի ժամանա-կը, կընիկը որ մտըովն անց ա կենըմ, հրա-ցանը կրակըմ ա, դիպչըմ չի, ուշը դեթի կյն-գաճն ա ըլըմ, հրացանը կաչըմ չի:

Կյալիս ա կյնգաճն ըստիպըմ ա, ասըմ ա.- Ինձ եճախի մի պաճ տու, որ ես ընդի...

Պիրըմ ա մագիցը կըտրիլ տալի, ոսկաճը-րով սարքիլ տալի, տընըմ իրան ջըբըմը, վեր ա կենըմ անտառըմ քյնալիս ֆորսը պըտա-հըմ ա, մագին մտիկ անըմ ա, հորսը սպանըմ ա, կյալիս ա: Մի օր էլ քյնըմ ա, անտառըմը հորսի ման կյալիս տեղը, ինքը ճըրի վրա ա ընգըմ, որ ճուր խմի, կյնգա տված էտ պաճը ջըբիցը վեր ա ընգըմ, ընգըմ ճուրը, ճուրն ըտիան վերցըմ ա ջըբը տանը՝ Դասան փա-

չի չար-հովուզըմ տուս անըմ: Թաքավորի նագիդինն ծիանը ճուր տալու ժամանակը տե-նըմ են, որ աստղի պես մի պաճ պըսպըղին ա տալի, քյնըմ են ճըրիցը մոտանըմ, ծիանը խըրտնըմ են, թե մոտ կյան ճուր խմեն, վերց-նըմ են, ծիանը ճուր են խմըմ:

Տանըմ են թաքավորին ասըմ.- Սիե մի պաճ կար ճըրի միջին:

Տալիս են թաքավորին, թաքավորը մտիկ անըմ ա տենըմ, որ ինչ լաւ կեղեցկուհի ախճ-կա լաւ մագ ա, էն էլ ոսկաճըրով չինած, կարքատըմ ա, որ.- Ուզի՞ չուզի, պետք ա էտ ըխճկանը ինձ համար պիրեք:

Պիրըմ ա քառասուն հատ մարթ զինըմ՝ հրացաններով-պաճով, դարձըմ ախպրի կուշ-տը, որ էտ ախպրի ճուրն ա պիրել:

- Քյաճեք ըխպըրըմ նստեցեք, որ տերը կյա, կամ սաղ փըռեցեք, կամ սպանեցեք, վերջապես տրաւ տուրունչը՝ կնոջը պիրեք:

Էտ տղեն էլ քյնըմ ա էտ ախպրի... որ մտիկ անի տենա մագը ընդնի վեր ընգած ա, վերց-նի, հա՛, քյնըմ ա տենըմ քառասուն հատ զին-ված մարթիք ըխպրի կըլիսին նստած են: Հա՛, էտ ա շարունակըմ ա, տըրաճը ուզըմ են, որ էտ տղին, տա տըրաճաց ասըմ ա, թե.- Տղեք՝ ծի կնոջ մագը կորցրել եմ, ով որ ջըթել ա, խընթ-րըմ եմ՝ հետ տա, իրան նվիրը կըտամ, չանց ջըթած մարթը ինձ հետ տա իմ մագը:

Տըրաճ ասըմ են.- Հենց իսկական տա յա, որ եկալ, կրակեցեք, սպանեցեք:

Էտ մարթին էլ լաւ հրեղեն ծի ա ունենըմ, ծիուն աղաչըմ ա, ասըմ ա.- Ա՛ ծի օան, էտ քառասունին էլ մի կերպ արա, կտորենք, ինձ ազատի ե տըծվար տեղիցը:

Ծին օթը պըրցորանող ծի էր, պըրցորանըմ ա օթը, ըըջանըմ ա, էտ քառասունին էլ սպանըմ ա, երկուսին թող անըմ ա, մեկի պըռոշինն ա կըտըմ, մեկի քինթն ա կըտըմ ու ճանապար տընըմ, տրանց էլ ասըմ են.- Խաբարը տար,- ասըմ են,- Ժեր Դասան փաշի՛ն:

Էտ տղեն էլ անտառըմն ա ապրըմ, կարքա-տըրըմ ա, որ, ուրենը, դոշուն ա ուղարգըմ, որ զոռով էլ ըլի, իրան սպանեն, կընիկը վերցնեն պիրեն: Քյնըմ են տան չորս դուր կըտըմ,

¹ Բանասացը կրկին անհաւորա՛ն է զգում, իսկ ունկնդիրներից մեկն ասում է. «Ո՞նց որ պետք ա ասես, ընենց էլ ասա» (ծանոթ. բանահավաքի):

² - Ա՛՛ դե թուրքերեն ա լաւ՝ ասում է բանասացը (ծանոթ. բանահավաքի):

մարթը մի վախտ տեսնեմ ա ծիանու խըրխն-
ջոց ա կյալի, ա՛, տուս ա կյալի տեսա՝ ի՞նչ ա,
նյոքարին ասեմ ա.- Տուս արի մի տես էտ ի՞նչ
ծիերի ծեն ա:

Նյոքարը տուս ա կյալի բալկոնը թե չէ,
կրակ են տալի նյոքարին սպանեմ, ինքն էլ
հնարավոր չի ըլըմ, որ տուս կյա, պիրեմ ա
սղոցը վերցնեմ պոլը կտորեմ, պոլովը ննարդ-
վաճը կախ անըմ, դվերեմ, ցածրանըմ ա իրան
ծիու մոտ, ծիու յիւր ա տընըմ վրեն, անմեղ
տուս կյալի, անմեղ տուս կյալի ընգնեմ էտ
զյորքի մեջը, զյորքին տալի կըտորեմ, ճարթըմ,
փշորեմ, Յասան փաշի անգաճն ա թուրը կտորեմ,
իքմ էլ թրով անգաճն են կտորեմ: Որ էտ ա
քյընըմ ա հա՛, թրով անգաճը կտորեմ են, մի
պառավ կնիկ սիե անըմ ա.- Յասան փաշա,
ի՞նչ ա ըլել անգաճըտ, իքմիկանց եղը ժող-
վուրթը քեզ քյառա-փաշա դի ասիլ:- էտ ա
ասըմ ա.- Ի՞նչ ես տալի, ես էտ քու ուզած
կնոջը պիրեմ, էտ տղին էլ՝ բանտարկած:

Ասըմ ա.- Բու քաշովը մին ոսկի կտամ:

էտ ա էտ շարունակըմ ա, էտ պառավը վեր
ա կենըմ քյընըմ տրա՛ տան չորս ողլեն կաղնըմ,
աղաչըմ: Մոտ են թողըմ քյընըմ ա տուն, տրա
լավ-վաղը, թաքավորը տրա... Թաքավորիցը
պահանջըմ ա թունավոր տեղ, մեկ էլ լավ
քյաճնդիր, պան, մեկ էլ երկու տեսակ տեղ, ա-
սըմ ա.- Մեկը քնիլու տեղ ըլի, մեկը՝ սպա-
նիլու:

Պիրըմ ա կիրակուրի մեջը քցըմ էտ քնիլու
տեղը, կիրակուրն ուտըմ են մարթ ու կնիկ,
քնըմ են թե չէ, քյաճնդիրը քաշըմ ա պինդ ոտ-
ները կապըմ, մարթինն էլ, կյգաճնն էլ, վե
քցըմ ու ընթելանցը, ինքը տրա խտոր պա-
ժառ անըմ ա, պայմանավորվըմ, որ խտոր
պաժառ անըմ՝ ծուխը, ալավը տուս կյա, զյոր-
քուտ վե կալ արի, որ պաղորաստ ա: Թաքա-
վորը տենըմ ա ծուխը ծուլ ըլավ, կրակը
վառըմ ա՝ ըստովը, գորքերը վեր ա ունըմ
կյալի տենըմ՝ տղեն բանդարկված, կապված:

Տղեն էտ կյգաճըմ դանչաք անըմ ա.- Այ, այ
մայրիկ ջան, բա՛ ես քեզ տիե՛՝ եմ տղուքյուն
արել, ես քե փայփայել եմ, պահել եմ, սօր
երկու ամիս, իրեք ամիս, տու խի՛՝ ես, ինձ թող
արա, ամանգյունուղուն, եկան:

- Ո՛հ, պետք է ես իմ ծեռովը տամ Յասան
փաշին, իմ ծեռը քու կյլիվը կտրի:

էտ ա շարունակըմ ա, զյորքը կյալիս են
տիանց փռընը՝, որ փռընըմ են տրիանց
վերցնըմ են, տանիլու ժամանակը, տիանց
պըսակող էտ վարթապետը, վարթապետը՝
տա՛, էտ կնոջիցը մոտիկ ծանոթ-պարեկամ ա
ըլել, տրան պահ ա տալի, ասըմ ա.- Յենց
արա, որ Սեյդիդին սպանեն ո՛չ:

Մարթի անըմը Սեյիդ ա ըլել:

Վերցնըմ են տանըմ թաքավորի քաղաքը,
որ տըրան ուզըմ ա սպանի թաքավորը, էտ
վարթապետն ասըմ ա.- Այ տղա, այ թաքա-
վոր, տու տրան որ սպանես հա՛, տրա՛ կնիկը
քու կըշտին ի՞նչ դայդի կկառավարվի:

Թե.- Բա ինչպե՛ս անեն:

Թե ասըմ ա.- Տուր երկու տղի, թող տանեն
անտառըմը սպանեն, տրա աչքի դրաղին չի
սպանեն:

Վեր ա ունըմ ասըմ ա.- էլ ո՛ւմ տամ, ո՛ւմ չի
տամ:

էտ վարթապետը ասըմ ա.- Ես կըտանեմ
կըսպանեմ:

Վարթապետին հրացան ա տալի, պան ա
տալի, որ տանի էտ տղին անտառըմը սպանի:
Որ քյընըմ են անտառը հա՛, քյընըմ են անտառը,
ասըմ ա, կրակ ա տալի, էտ տղին ա տալի
հրացանը՝ մի վըրայտոց են սպանըմ, շորերն
առնով փըթաթըմ, որ ասել ա՝ շորերն էլ կպի-
րես, կուռն էլ կկտրես կպիրես: Էն ժամանակ
էտ տղեն, որ էտ քառասուն մարթին կտորել
ա, նրանցից մեկի կուռը կտրել ա, իրան
պալտոնի ջըրըմ տըրել, ջըրմն ա: Պիրել են
էտ կուռն էլ են առնուտ արել, շորերի հետ
վարթապետը վեր ա կալել քյաճել, էտ տղին էլ
քցել ա մի ճըրափորի մեջ, ասել ա.- Յոա հայ,
էն քարի վրա կաղնի, օքմի կյա՛ քե կիանի, ես
քեզ չեմ սպանիլ:

Շորերը վերցրել ա պիրել թաքավորին
ներկայացրել: Կյգաճ հետ պայման ա կապել
էտ տղեն, որ ասել ա.- Օ՛իմ ուրիշ մարթի թող
չի անըմ կերակրեն, ով որ, ում որ թող կանի
կերակրի, էտ ժամանակը մենք իրար հետ
կպսակվենք, թաքավոր, թե հու ծին թող չի
անիլ օքմու...

Համարյա թե հարիր մարթ էտ ծին սպանել ա, թող չի արել, կընկը քյնըմ ա կիրակըմ ծիուն, փայփայըմ, պահըմ, ճըրըմ:

Օրերից մի օրը... խնթարը տանք էտ հորը քըցած տղին: Հորը քցած տղեն, մի բազըր-գյան, ժողովուրթին վերցրած, իրան քյարվանը հետը կյալիս են էտ հորի դրաղին որ վեր կյալի, որ ճուր հանեն, մեկն էլ ա ցածրանըմ չի, որ ճուր հանեն, մա ներքևիցը ծեն ա տալի.- Տղեք ջան,- ասըմ ա,- վեդրոն կախ արեք՝ ես ծեգ ճուր տամ, պայց ինձ հանեցեք:

Էտ ա վեդրոն կախ են անըմ, քյարվանին ճուր են տալի, իրանք ճըրվըմ են, վեդրոն կախ են անըմ էտ տղին հանըմ տուլ.- Յանըմ են տուս, էտ բազըրգյան-բաշին՝ տընանց մե-ծավորը, ասըմ ա.- Ինձ տղա չունեն, հլե վեր ունեն՝ ինձ տղացու:

Վեր ա ունըմ էտ տղին էլ իրան քյարվանի հետ վե կալած իրանց գյուղն ա տանըմ:

Ճանապարհն էտ տղեն ասըմ ա.- Հայրիկ, որ քյնանք տենանք մայրիկը տղա ա պիրել հա՛, ինձ թող կանե՛ս:

Ասըմ ա.- Անպատճառ, եթե տիե պան ըլի, անպայման թող կանեն, թե հուլ է, պիրած չի լիլ, էն ա տուլ իմ տղեն ես:

Էտ բազըրգյանն էլ հինգ տարի ա տանիցը տուս ա եկել քյոցեղ, կյնգանը տանը թող ա արել, քյոցեղ ա տենել, որ աստոծը տվել ա, մի լավ տղա ա ըլել, հիմա աչկալիսեք, ուտոց-խմոց, էտ տղեն էլ հետը, ասըմ ա.- Հայրիկ ջան, դե էտ ա մայրիկը ինձ ախպեր ա պիրել, ինձ էլ տուլ թող արա քյնան էլի:

Պիրըմ ա էտ բազըրգյանը տըրան բավա-կանին ոսկի տալի, էտ ուրախությամբ համար, որ.- Ուղտ պանի էր, ինձ պատահեցիր,- թող անըմ ա, ասըմ ա.- քյնա՛ դե քու աշխարը:

Էտ տղեն շարունակըմ ա, կյալի իրանց էտ թաքավորի քաղաքը, կյալիս ա տենըմ, որ մի տան միջից օխտը տեղից ծուխ ա տուս կյալի, էտ տղեն ասըմ ա.- Կամ սա շատ հարուստ ա, կամ էտ օխտն-ուք տեղ տրա՛ տուըմ ծակած ա՛ ծուխ ա տուս կյալի:

Ներս ա մտնըմ տենըմ համին են պառավն ա, որն իրան ոտն ու ծեռը կապել ա:

- Նանի ջան,- ասըմ ա, տղին մա չի ճը-մանըմ, որոշել ա, որ սպանել են:- Նանի

ջան,- ասըմ ա,- ըլիլ չի՞ թող անես ըրուգունը քու տանը կենամ:

- Ո՛չ տեղաշոր ունեն, ո՛չ հաց ունեն, ո՛չ պան ունեն, բալեն մեռած թաքավորն ինձ ասել ա՝ ես քեզ ոսկի կտամ, ըտ էլ ո՛չ տալիս ա, ո՛նչ էն ա ասըմ ա՝ մըթան թե ծիուն տեր չի կաղըմ, կարալ չեն:

- Պա՛,- ասըմ ա,- նանի ջան, առեն էս տա-սը հատ ոսկին տար յորդան-դյուշակ, հաց-պան առ պի:

Հացը-պանը առնըմ ա պիրըմ տուն, նստըմ են հաց են ուտըմ:

- Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նանի ջան:

- Է՛,- ասըմ ա,- ի՞նչ ասեմ, բալա ջան, մի սատանած հեթինջ կար, թաքավորին, փղոնեցի իրան տըվի, որ ինձ իմ քաշովը մին ոսկի բոլի տալ, էտ էլ ծիուն տեր չկա՛, կընկն էլ փըսակ-վըմ չի հետը, էտենց էլ մնըմ ա:

- Պա՛ն, նանի ջան, ես նրա ծին պահած եմ, էտ ծին ինձ սավոր ա, քյա՛ թաքավորին ասա, ես քյան էտ ծին պահեմ:

Պառավը իրան օրորիլեն, ճոճի-ճոճի անի-լեն, մի կողմն ուրխանալեն՝ վազ ա տալի թաքավորին ասըմ ա.- Հա՛ քեզ միար կնկի եմ ճարել պիրել, ծիուն միար էլ էս ա տեր եմ ճարել, կյա՛ ծին կապիի:

Ասըմ ա.- Շատ լավ կըլի, պառավ ջան, քու ոսկին տուլ կըստանաս:

Էտ ա կյալիս ա էտ տղին տանըմ, ծին, դե իրան տերն ա, ո՞նց չի թող անիլ, ներս ա թողըմ ծին, քյնըմ ա թիմարըմ ա, ծիու թուշը պաշըմ ա, ծին էլ նրան ա փայփայըմ, էս կողմը, էն կողմը՝ իրան տերն ա:

Ըչկըլիսեք են տանըմ թաքավորին, թե.- Ծին էտ տղին թող արավ:

Ըսի կնկիը մատը կծըմ ա, որ սա անպայ-ման իմ մարթը կըլի, որ ծին թող արավ. սա ուրուշ չի: Թաքավորին ասըմ ա.- Դե ես քյնան տեսնեմ հլըմ, իրոք, ճիշտ ա՛, էտ ծին թող անըմ ա:

Քյնըմ ա տենըմ իրան մարթն ա, ըտի ասըմ են, խոսըմ են, ասըմ ա.- Դե որ էտպես ա, հըրսանիցը պետք է ըլի, էս ա ծիուն որ տեր ենք ճարել:

Էտ տղեն ասըմ ա.- Ծին լըղարել ա,- կյնգանն ասըմ ա,- թաքավորին առաջարկի,

տասնըհինգ օր հըրսանիքը հետ քըցի, տասնը-
հինգ օրիցը եղը հըրսանիք կըլի, ծին էլ լըվա-
ցած կըլի՝ ես տուս կկյամ էն ժամանակը կա-
սեմ, թե Սեյիդի շորերը, թուրը իրան տու:

Էտ ա քյընը ա, ասըն ա, էտ թաքավորը նե-
ղանըն ա, ասըն ա.- Ի՞նչ ես էտ դայիդի պաներ
ասըն:

Դես-դեն: Իրան էտ հետի նստած պալա-
տականնին ասըն են.- Այ մարթ, էս հինգ-վեց
ամիս ա նստել ես, հըմ էլ էտ ա տասնըհինգ
օրը երգար չի, կացի: Տասնըհինգ օրը ժամա-
նակ ա՞:

Հա՛ համաձայնվըմ ա թաքավորը: Տասնը-
հինգ օրընը տա՞ն էտ կնիկը, կյարի ա կըրմ,
պան ա կըրմ, ծիուն ըռեխն են տալի, ծին
փայփայըմ ա տերը, թիմարըմ ա, լւով պահըմ
ա:

Հմի էտ ախճիկը առաջարկըմ ա թաքավո-
րին, ասըն ա.- Թող մեր ծիապահը տուս կյա
ծին մեր առաջին հըղըցնի, ու մենք էլ էս ա
պսակվըմ ենք:

Է՞, գուռնենին ածըն են, դրիւլը տալիս են,
ուրախությունը կապել են՝ տասնըհինգ օրը
թնամվել ա: Էտ ա պիրել են, ծին տուս ա
պիրըմ:

- Յիարը պիրե՞ք, յիարը պիրե՞ք:

Յահարը տանըմ են, տանըմ են, էտ ա ծիու
վրա ա տընըմ, ասըն ա, թե.- Թաքավոր,- ա-
սըն ա,- թող Սեյիդի շորերն էլ իրան տանք՝
հաքնի, թուրն էլ իրան տանք՝ կապի:

- Ա, նա ի՞նչ ա, որ տու նրա՝ անընը տվիր:

Էլի պալատականնին ասըն են.- Այ մարթ,
շոր ա էլի, թուր ա էլի, իրան տու:

Թուրը կապըմ ա, շորը հաքընըմ ա, թուրը
կապըմ ա ու ծին նստը՞մ:

- Դե՞,- ասըմ ա.- ծի ջան, էլ ի՞նչ են ասըմ,
քե խընթըրմ են՝ չափ տաս ներքըն, չափ տաս
վիրըն, էնպես անես, սրա էս գլորը թամուզ
ճարթը-փուրթ անես:

Քշըմ ա, ժողովուրթը փախուստի են մատն-
վըմ, տալիս ա, թրի ըռեխն ա տալի՝ կտորըմ
ա, էս կողմը, էն կողմը, տենըմ ա, որ, ուրեմը,
շատ ա: Կնիկը տենըմ ա շատ ա ժողովուրթ
կտորըմ, դեպի իրան մարթի կողմն ա քյընը,
ասըն ա.- Տե՛ն կտորիլ մի՛:

Քյընը ա էլի թաքավորի մոտ կաղընըմ, կյա-
լիս ա թաքավորին ասըն ա.- Հա՛, որ ես Սե-
յիդն ըլեմ, ի՞նչ կանես:

Էլի քյընըմ կյալի դաքնին կաղընըմ, թուրը հա-
նըմ էտ թաքավորի շըլիքը կտորըմ էն դուը
քցըմ, կնիկն էլ ասըմ ա.- Էտ ժողովուրթին էլ
դիպչիլ մի:

Պիրըմ ա, մարթին նշանակըմ են թաքա-
վոր՝ ժողովուրթը, կնիկն էլ՝ թաքուհի: Նհանք
հասնեն իրանց մուրազին, տուք էլ հասնեք
ծեր մուրազին:

26(26). ԱՄԻՐՈՒՄԻ ՏՎԱԻԹԻ ԱԽՉԻԿԸ

Սի թաքավոր իր վազիրի հետ վեր ա կենըմ
քյընը հորսի, մի վախտ մըտիկ անըմ ա տե-
նըմ, որ մի հայաթ կա:

- Արա՛, վազիր,- ասըն ա,- բա ես՝ թաքավոր,
երգրիս տերը, էս հայաթը ի՞նչ ունի ըստեղ:

Թե.- Բա ինձ ասըմ ես, ի՞նչ անեմ, ի՞նչ եմ
գիղըմ:

Ասըմ ա.- Սի արի տենանք՝ էս ի՞նչ պան ա:

Քյընը են տուռը պան անըմ մտիկ անըմ
տենըմ, որ մի կենդու մարթ ա, մի վերստի
վրա հայաթ ա, վազ ա տալի էն դուլի տուտը,
վազ ա տալի կես տեղը, վազ ա տալի էն մի
տուտը: Էտ թաքավորը նի յա մտնըմ, նի յա
մտնըմ:

- Պարի ըրուզուն:- Պաղասխան չտվալ.-
Добрый вечер,- պաղասխան չտվալ, պա-
ղասխան չի տալիս,- գամարջորա՞մ¹, պաղաս-
խան չի տալի,- ..., պաղասխան չտվալ²:

Վերջը ծըտի լուզու էլ պընըցրալ, ոչ մի
պաղասխան, վազ ա տալի կես տեղը, էս դուլի
տուտը, էն... Սե՛ն քաչկի պես պաղըտըմ ա:

- Վազիր, նստի,- ասե՛ք,- սրա հերն են
անիծել,- ասե՛ք,- հրես կլլվիսը թոցնի դեմ,- ա-
սե՛ք,- տենամ սա էս ու՞մ պաղասխանը չի
տալի:

- Տեղըտ նստի մի:

Տեղը նստեց, տեղը նստեցին, տիւնը
գլափ են անըմ, պապիրոզ են քաշըմ, տա՛

¹ Գամարջորա (վրացերեն) - բարև (ծանոթ. բանա-
հավաքի):

² Բանասացը մի քանի լեզվով ասում է «Բարի
երեկո», բայց ձայնագրությունը հստակ չէ, և չեն
կարողացել վերծանել (ծանոթ. բանահավաքի):

պըրծավ, դավթարնին չիմ ծախտեց պըրծավ ու եկավ, քանի լեզվով բարեւել են, էնքան լեզվով տա՛ բարեւեց ետ երկուսին, քանի լեզվով բարեւել են, էնքան լեզվով պատասխանեց:

Թե ասեց.- Այ տղա, տու՛ ետ ի՞նչ մարթ ես, ես՝ թաքավոր, երգրիս տեր, եկել ես ըստի հայաթ շինել մըծած քիչ չի՞, եկել եմ մոտըտ, ինձ պաղասխանը՛ չես, գործըտ պրծնըմ ես՝ նոր պաղասխանըմ:

Թե ասեց.- Պահո՛, - թաքավորն ապրած կե՛նա, - ասեց:

Որ ասեց թե.- Արա՛, եւ շան տղեն ի՞նչ ա գիղըմ, թե ես թաքավոր եմ:

- Թաքավորն,- ասեց,- ապրած կենա, մեկը ծնվըմ ա, մեկը մահանըմ ա, մեկի շունը կծըմ ա,- մեկին,- ասեց,- ծառիցը վեր ա ընգըմ, մեկը քարիցն ա վեր ընգըմ, մեկը սիւն ա ըլըմ, մեկը հիւն ա ըլըմ, ախրի չէ՞ որ հիւնաց ծնվիլն ու ճըկըտակիլըն պտի տանը, մահվողի մահվեց պըղի մենը, օրենը ա, տա պետը ա մոցնենը դավթարըմ, որ ես քու պաղասխանը տամ, վայրկյանը անց ա կենըմ է՛ վայրկյանը, վայրկյանը պիտի չի անցկենա, տրա համար էլ չեմ կարացել տամ: Հիմա ես պըրծել եմ, բոլորիտ պատասխանն էլ տալիս եմ:

- Հա՛, հա՛, բաս,- ասըմ ա,- քու գիղութիւնը իմիցը շատ ա: Լա՛վ:

Տուրս եկան, ըստիան դըրվազեն որ քյա՛ցին հա՛, ասեց.- Յավաշ մի:- Ետ տա՛նալ.- Այ տղա:

- Համեմ՛:

- Ես,- ասեց.- մի խընթըրմ եմ, դե որ ետքան գիղեմական ես, մի խընթըրմ եմ ինձ ասա, թե ես ի՞նչ բախտի տեր մարթ եմ:

- Այ թաքավորն ապրած կենա, ասեմ՝ ի՞նչ անեմ, ո՞ր ասեմ:

- Չէ՛, չէ՛, չէ՛.- ասեց.- տղամարթու նման, եթե տղամարթ ես, ասա՛:

Թե ասեց.- Թաքավորն ապրած կենա Ուսազվըմ¹ կամ Աշխի գյուղըմը² հրե սիւն մի

գյուղըմ, ես գյուղըմը մի նախըջի կա, անըմը՝ Դավիթ, անըմը՝ Տավիթ, տըրա մի հատ ախչիկ ունի, մորիցը որ ծնվել ա՝ հիվանդության, հմի էլ եկել ա տա՛նել էսա քառասունհինգ տարեկան, դարցյալ էլի հիվանդության, էն ախչիկն ա քու ղըսմաթըտ: Դորն ուզըմ ես թըռի, դորն ուզըմ ես տյուս արի, էն ախչիկն ա քու ղըսմաթըտ:

- Պահ, քու մերըտ, քու դեսըտ, քու դենըտ:

Թողեց կլլվիլը թակիլով քյնա՛ց: Քյնա՛ց մի տասն օր, տասնհինգ օր տիւն՝ մուխը սըղ-տըմն ա:

- Արա՛ վազիր:

Թե.- Ի՞նչ ա:

- Արի քյնա՛ց մի,- ասեց.- տենանը ետ ի՞նչ ախճիկ ա, վերչացնեմ,- ասեց, ռա՞ղ անեմ կորչի,- ասեց:- Թե չէ,- ասեց.- քուն չունեմ, թա՛ծար չունեմ: Քյնա՛ց տենանը մի ետ ի՞նչ քած ա էլի, ետ ի՞նչ ախճիկ ա:

- Քյնա՛ց,- ասեց:

Սի հաթա՛զ ոսկի վե կալավ ու իրան բեթըութեթըութը վե կալավ, ու ղոյս ըլան եկա՛ն ետ գյուղը:

- Նախըջի Տավիթը ո՞րն ա, նախըջի Տավիթի տունը ո՞րն ա:

Սի կլլապան ա:

- Հրե հա՛յ, էն ա՛:

Քյնա՛ցն ընդի, մտիկ արին տեհան միներ մեչ ղոլ նվըմն ա:

- Վա՛յ, վա՛յ, մեռա հա՛ մեռա, մեռա հա՛ մեռա:

Էլ նի չի մտան, ինչ որ նա ասել ա միտն ընգա՛վ էլի, էլ նի չի մտան:

Թե.- Այ տղա,- ասեց.- արի՛,- ասեց.- մի բեւի պաղրաստիլ տամ ու,- ասեց.- ես քածին ռա՞ղ անեմ, ինձանից ռա՞ղ ըլի կորչի:

Թե.- Անեմը:

Կանչեց նախագահին՝ թաքավոր մարթ ա:

- Սի հինգ հատ ապրանը ա՛ն:

Առավ:

- Սի հարիր, հարիր իցցուն լիտըր կիմի պի:

Պիրավ:

- Սի հարիր փուտ հաց պի՛:

Պիրավ: Է՛՝ ըտեղեք լըցրավ: Թե ասեց.- Ես ծեզ կարքարըմ եմ էլ ոտը փըռնող ըրեխեն, որ ոտը փըռնըմ ա էլի, որ գռռի ոտը փըռնըմ

¹ Ուսազլու (այժմ Դիտավան) գյուղ Իջևանի շրջանում (ծանոթ. բանասիրական):

² Աշխի գյուղ (այժմ Բազաշեն) - գյուղ Իջևանի շրջանում (ծանոթ. բանասիրական):

ա ման ա կյալի, են ըրեխեն էլ չմնա տանը, մեծ-պուճուր հվաքվում եք այսինչ դյուլը, որդեղ որ կա ետ պաները:

Գվաքեց ետ սաղ գյուղի ժողովուրդը ըստի, սուփրենին քցիլ տվին, հմի ուտոց-խմոց ա: Ուտըմ են, խմըմ, բըղալմըմ, ճըղալմըմ, երքըմ, քաք-տոտոռ¹, վերը երգարացըմ չեն: Որ չիմ ոռից-կըլխից ընգան հա՛, եկան էտ էրկուսն էլ մըտան էտ նախրչի Տավիթի կոկալի տակը, տեսան ոնց որ թե ուռա՛ծ, սեն չիձիշ ըլած, էրկու կյումեշի ինչ ունի: Էն ա. - Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ա՛ր եք եկել ըստի,- ասեց.- ի՛նչ գործ ունեք, կորեք ըստիան, կորեք:

Դե նա ի՛նչ ա գիղըմ, թե ո՞վ ա, ով չի: Էտ թաքավորը բեհուրը տյուս վըստըրավ ու ընքելանը էտ ըխակա էս ծծի թուշեն որ սեն տվալ ոչ, որ տըրաքեց, են դալընթոյ թոփը ինչացո՛ւ ա, թոփի պես՝ էտ կոկալի կտուրը շարտեց են դուր քցեց: Թողեցին տուրս եկան, ծիանը նստեցին ու են մի հաքգա ոսկին էլ, էտ բեհուր-մեհուր, չիմ մտիցն ընգալ, ընդի թողեց, ու ծիանը նստեցին փախան, փախան եկա՛ն ըստ իրանց տեղը: Էտ ժողովուրդը՝ գեղի ժողովուրդը, վե կցան, որը խելը կըլխին էր, եկալ, որը մի քիչ խմած էր, վե կցալ եկալ, վերջը չի՛մ եկան տները հվաքվեցին, աման-չաման, դես-դեն հըվըրթրեցին, վերջը թամուլ ուռն արին:

Էտ ախճիկը տըրաքեց, ախճիկ ա որ՝ աշխարքիս տակին. «Ես ա, որ կամ, ես ա, որ կամ»: Մի շքեղ էլի, մի շքեղ, մենակ նա յա աշխարհիս տակին, թե ինչ կեղեցկության, ինչ բոյով, ինչ բուսաթով ախճիկ: Էտ թաքավորն էլ դե ի՛նչ ա գիղըմ, մտածեց, մտածեց, մտածեց: Դե խաբար պան չկա, հիմա տո ուզըմ ա, ախճիկ ա ուզըմ, որ կարքվի, էս գյուղըմ ճարեց ոչ միեցըմ, են գյուղըմ սենց, վերջապես տիեց ճարվըմ չի: Եկալ էտ գյուղը մտալ, էս, են, հվաքվեցին թաքավորի կոխքերը, դե ասեցին.- Էտ տեսակ ախճիկ որ ասըմ ես, այսինչ մարթինն ա՛ Լլեբեկինն ա, Լլեբեկինն ա²:

¹ Քաք-տոտոռ - բառացի նշանակում է ծայրարկություններով ուղեցնվող արտաթորանք, այստեղ՝ չափը անցած, սամծարծակ քեֆ (ծանր, բանա՛հավաք):

² Բանասացը դիտմամբ Դավիթ անվան փոխարեն Լլեբեկ անունն է օգտագործում ընդգծելու համար,

- Լա՛վ:

Եկալ տեսալ ախճիկ ա ո՛ր, ոտը ոտովը քցած, որ պան արալ, նրա էտ կեղեցկությունից տո ուզեց թե նղավի: Դա՛, էտ թաքավորը: Տա՛, պիրին նշան տըրին, նշան տըրին այսինչ օրը հըրսանիք ա: Դմի տըրո՛ւ հըրսանիքը նստած, վեր են կենըմ կյալի էտ ըխականը օրշըմ, եկան ըստի պիրան մի իրեք օր ըստի մնացին, կերան-խմեցին, է՛, նախրչի Տավիթը ի՛նչ հարստություն ա էտ քցել, ի՛նչ հարստություն ա էտ քցել՝ թաքավորի խազենն ա էլի, նրան ինչ: Ինչ հարստություն ա էտ քցել, չեն կարալ ասեն: Վերցրին տարան: Տարալ թաքավորը իրանց շենըմ ութ օր, ութ քըշեր տըրանք ըստի քեփ արին, կերան-խմեցին, պրծան, ժողովուրդը շաղ հընցան, աման-չաման, դես-դեն վըհըրթրեցին, ուռն արին կորցրին, էտ քըշեր հըվաքվեցին իրանց շենքերը՝ հանգիստությամբ: Դիմա մարթ ու կնիկ հավաքվել են ըստի իրանց հայաթը, մարթ ա էլի, հը՛, ներելություն, նեղանաք էլ ո՛չ, հաղ անըմ ա կյնգա՛ հետ, հաղ անելի թուշըմ, տո՛ են կըրթի վրա, որ սեն ծեռեցըմ սեն տարալ հա՛, մատները ընգալ մի փոսի մեջ, որ փոսի մեջ ընգալ հա՛, էս թաքավորի սըրտին խի՛ մի պիրն դիբալ, թե ասեց.- Սա՛ կամ բոգ ա, վրեն կռիլ ա պըտահել, կամ սըրա... վերջը ի՛նչ ա պըտահել, սա՛ յըրալու տեղ ունի:

Վե կցալ սեն մըլալ, լիս ա էլի, վե կցալ կըրծեցըմ փըռեց սեն մը լավ սեն մտիկ արալ տեսալ, որ սաղ սըլամաթ, բայց էտ փոսերը կա, սեն ոռը շուռ տվալ, իրեքը դենն արալ, ոռը շուռ տվալ տըրո՛ւ վրա՛ արալ:

- Դանգի՛ստ տեղըտ քմի, իմն դիպչես ո՛չ, ըռավորը որ կլխսանա մենք էս պանը կպարզենք:

- Ա՛յ թաքավոր, ա՛յ թաքավոր, աստծուն մտիկ արա, ի՛նչ ա պըտահել, ի՛նչ ա պըտահել:

Կնիկը չիրքի կըլի էլի, դե ինչ ուզըմ ա ըլի, կնիկը գոռ ունի: Էտ թաքավորին շա՛տ դես-դեն, թե ասեց.- Զու ա նրկալ ընչիցըտ չեն ուզըմ հետըտ խոսալ:

- Ի՛նչ ա պըտահել, ա՛յ թաքավոր:

որ թաքավորը չի ճանաչում աղջկան ու նրա հորը (ծանր, բանահավաքի):

- Էտ ի՞նչ ա քու կրծքիտ տակի փոսերը, էտ փոսը ի՞նչ ա: Տա ինձ պաղձի:

- Այ թաքավոր, սհե, սհե, սհե, սհե պան ա ըլել:

- Չեմ հըվատալ:

- Զյնոմ պերեմ բեհուրթը:

- Պեր տենամ:

Վեր կըցավ քյնոց մոր կուշտը, մերն էլ ա ըտի, հերն էլ ա ըտի, քոչել են եկել չիմ, տնովին պիրել ա:

- Վի՛յ էս ի՞նչ էր, ա՛ բալ ջան, էտ ի՞նչ ա, ի՞նչ ա, ի՞նչ պըտահեց:

Թե.- Ամայ ջան, ամայ,- ասեց,- էն բեհուրթը տուր ինձ:

- Ախճի՛, ի՞նչ էս անըմ:

- Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր,- ասեց,- տո՛ւր ինձ:

Զանդուկը պոց արավ, զանդուկի միջիցը հանեց, ընքելը պըմբակըմ փըթաթած, տվավ ըխճկանը: Վե կալավ պիրավ:

- Չամեցեք, թաքավորն ապրած կենա:

Մտիկ արավ տեհավ, որ՝ պան, իրան էն բեհուրթն ա, որ ծեփել ա:

- Ուրեմն,- ասեց,- շան տղեն ինչքան իմաստություն ուներ, որ վերջը, վերջը էն ախճիկն ա քու ղըմամ՞թը:

Սըտածեց դես, մըտածեց դեն, մոր եկավ ինչպես իրան կին միենց վե կալավ ու տըրո՞հետ ապրեց ու ապրե՛ց: Եսքան պանն էլ էտ կարճը, էսքան պանը:

27(27). ՃԱԿԱՍԱԳՐԻ ԴԵՔԻԱԹԸ՝

Ըլըմ ա, ըլըմ չի՝ մի թաքավոր: Թաքավորին երկու տղա ա ըլըմ, էտ մնին ժառանգ ա ըլըմ, մնին ըլըմ չի: Էտ պուճուր տղեն քյնըմ ա քաղաքնին ման կյալու, որ տա քյնըմ ա քաղաքնին ման կյալու, էտ մեծին մի հատ տղա ա ըլըմ: Ինքը քաղաքներըմն ա, բայց մեծ ախպորն արթեն ժառանգ ա ըլել: Տա մի դուզըմ կյալիս տեղը կյալիս ա տենըմ երկու հոքի մի դավթոր վե տրած՝ կյորըմ են:

Ասըմ ա.- Բարի աչողըմ ծեգ:

Մինն էլ ա պաղասխանըմ չեն:

Ասըմ ա.- Էս մարթիքը միուճե՞լի քառ են:

Էտ մարթիքը մատած կյորըմ են պրծնըմ ու ասըմ են.- Ներողություն զբաղված ինք: Բարև, ախպեր, զբաղված ինք տրած համար էլ չպատասխանեցինք:

Թե ահըմ ա.- Խնթորըմ եմ ասեք էլի՝ ինչո՞վ իք զբաղված:

Թե ասըմ ա.- Փլան թաքավորին ժառանգ չըլավ, տղին մոր մի տղա ըրեխա ըլավ, որո՜չեցինք, թե ինչով դի մահանալ:

Տենըմ ա, որ իրան մեծ ախպոր մհար ա ասըմ:

Թե ասըմ ա.- Ինչո՞վ դի մահանալ:

Թե ասըմ ա.- Էտ տղեն հասունանալ դի, կյնգա՞ կուտն ընգած տեղը, կյալ՝ դի կետն անց կենալիս տեղը կետը տանի՞լ դի խեխտիլ:

Թե ասըմ ա.- Ծեգ մատաղ,- ասըմ ա,- խնթորըմ եմ էլի, էտ իմ ախպերն ա, կամ առաչ քցեցեք, ամուսնանալուն չհասնի, կամ էտ քցեցեք:

Թե ասըմ ա.- Չէ՛, կյորվել պրծել ա:

Տրած մհար ա ասըմ, որ կյորվել ա պրծել: Ըլըմ չի: Էտ տղեն վեր ա կենըմ կյալի: Կյալիս ա տենըմ ախպերը քեփ ա կազմակերպել. Է՛, վիաքված ուտոց-խմոցի են:

- Պա՛, ախպեր ջան, լավ վախտ էկար: Արի հա՛, արի, մեզ տղա ա ըլել:

Տա առ ու ճար պտիտ ա կյալի, գիղի, որ ինչ կա, վիճակը ոնց ա էլի: Տա ո՛նչ ուտըմ ա ո՛նչ խմըմ, տհե տխուր, հա ըղըքնին կտրատվըմ ա փորըմը: Վերջը ուտըմ են, խմըմ, քեփ են անըմ, վերջացնըմ են: Տղեն էլ դբրոց ա քյնըմ, վերջը հը՛, հը՛ անիլեն՝ արթեն հասունանըմ ա:

Ասըմ ա.- Ախպեր, գիղես ի՞նչ կա, առանց ինձ տրամ հըրսամիք չանես, աշխարհի տունը՝ մը ըլեմ, ինձ կկանչես, մոր հըրսամիք կտնես:

Ասըմ ա.- Շատ լավ կըլի: Բա կարո՞ղ ա պատահի մի մարթի մի ախպեր ունենա, առանց մրտ տղին հըրսամիք անի:

Ասըմ չի ախպորըմ հա՛, որ սհե հաշիվ կա: Էտ ա, ոնց որ թե թալիցը քյնո՞մ ենոքավան, ախճիկը ընդիան: Քյոցցին ընդի նշան տրին, մի՛կ քյնոցել են հըրսամիքի օրն ա, հարսը պիրիլ դեն: Էտ տղեն մատըմ չի, շուտ-շուտ տուս ա կյալի ամբին մտիկ անըմ: Մտիկ ա անըմ տենըմ, որ մի քիչ թուխա ա ծուլ ըլըմ

ընդի: Նի ա մտնըմ բաժակը վեր ունըմ, ասըմ ա.

- Վերջացնել ուրախությունը, տո՛ւս:

Ասըմ են.- Այ մարթ, էս ի՞նչ հաշիվ ա:

Դե թաքավորի տղա ա՝ հրաման ա տալի, վերջացավ: Տո՛ւս են կյալի ծիավորվըմ են:

- Բշեցեք ծիանը:

Ամբը տրաքտրաքըմ ա, մի կալած կյալիս ա՝ քամախառը, կարկուտը հետը բասմիշ ա-րած կյալիս ա, կետը իրեք մասի ա բաժան-ված: Առաջի մասընը տղին քցըմ ա վրի դոլը, ինքը ընգնի ներքի դոլը: Մեչն ա ընգնըմ տղեն, թաքավորի տղեն հանըմ ա: Հանըմ ա էն ցամաքը, ասըմ ա.- Տղեք, օքնեցեք ինձ, ախպորս տղին տամիլ դի, ինձ օքնեցեք, խնրըմ են:

Ասըմ չի սիե հաշիվ կա հա, մենակ հարա ա տալի, որ.- խնրըմ են, օքնեցեք:

Էտ ամբողջ ժողովուրդը ընգնըմ են ներ-քըղուը, տրամ քցըմ վրիդուը: Էլի մի ա ընգ-նըմ, էլի հանըմ ա տղեն: Երկրորդ ցամաքն ա հանըմ, որ արթեն երրորդ ծուրը անց դի կե-նալ, հարա ա տալի քաղաքին.- Մտեք ճյրրի մեջը.- ասըմ ա.- խնրըմ են ծեզ, ախպորս ըրեխին ազատեք:

Սիե ճրի մեջ պղլկի կապըմ են, պիրըմ ա նորից տրամ ծին մի ուրիշ ծիու փոխըմ, տղին քցըմ վրըղուը: ճյրրի միջին ծին վեր ա ընգնըմ, տղեն ըլետ մի ա ընգնըմ: Խտտըմ ա տղին, խտտըմ ա, սկսըմ ա իրեսն իրեսին քսըմ, պըչպըչորըմ, դեռ-դեն: Խտտին տանիլու ժա-մանակը էտ էրկու մարթը աչքին ըրկըմ են:

- Աչկերըտ կիանեն, էտ ո՞ւր ես տանըմ, քե ի՞նչ ասեցիք:

Հենց էտ մոմենտին կռները թիլանըմ են թե չէ, տղեն մի ա ընգնըմ: Տղեն մի ա ընգնըմ, հա՛ խեխտվըմ: Խեխտած տեղիցը դե հանես, հանես ոչ, էլ ինչ օքուտ, արթեն խեխտվեց պր-ծավ: Հարսը մնաց ցամաքընը կաղնած: Խա-բառը հասավ թաքավորին, որ.- Բա տղեն խեխտվել ա:

Տղեն խեխտվել ա՝ խեխտվել ա, դե հմի ինչ դեն անիլ: Հարսը վե կալան տարան, մեյիդն էլ հետը վե կալան տարան պալատը: Էքսի օրը տղին տարան հողավեր քցեցին: Հարսին ղոճիլ չդի, մարթը ճըմփին ա մեռել, էքսի օրը

ետ տառավ էտ հարսը քյնաց իրանց տուն: Տիանը էլ մնացին մեռ շվարած:

28(28). ԹԱՔԱՎՈՐԻ ԲԱԽՏԸ

Սի թաքավոր ա ըլում՝ իրան թախտի վրա, քյնըմ ա բաղը, նստըմ ա, տենըմ ա մի մարթ ա կյալի: Սի միրուքով մարթ ա կյալի, ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա,- ասըմ ա,- տու քու ընդանիք հավաքի էս քաղաքից տուս արի, որ քաղաք տակն ու վրա դի ըլիլ, որ քաղաքից տուս կկյաք, հետ չտառնաք մտիկ անեք, եթե հետ տառնաք մտիկ անեք, եթե հետ տառնաք մտիկ անեք, քար կտառնաք:

Էտ թաքավորն էլ մտածըմ ա, մտածըմ ա, հավատըմ ա էլի, վերցնըմ ա իրան կնիկ, էրկու երեսեն, քաղաքից տուս ա կյալի, քա-ղաքից տուս ա կյալի: Սի քիչ հեռանըմ ա, տե-նըմ ա մի ծեն եկավ, մի գյոռոց ընգավ աշխար, մի տակն ու վրա էլավ էտ երկիր: Էտ ա սամսեն մտիկ չի անըմ, թե ինչ ա կա-տարվըմ: Քյնըմ ա մի տեղ մի կյուղ ա, քյնըմ ա էտ թաքավորը ո՞րն ա, ըտեղ խնրըմ ա քյոխլին, ասըմ ա.- Սի կործ ետու ես անեն:

Ասըմ ա.- Ի՞նչ կարաա նեն:

Ասըմ ա.- Նախիրը կտանեն կըրըծցնեն:

Հա: Պերըմ են նախիր տալի թակավորին, պերըմ են նախիր տալի թակավորին, քըմ ա տանըմ ա, հաց են տալի օրական, տնտեսու-թյունը մի հաց են տալի, իրան հախ բարըքըմ են: Համ էտ, համ իրան հաց ստանա ուտեն իրան երեսեք, իրան կնիկ, համ նախիր տանի ըրըծցնի. տարվա վերջին իրան հախ կըստա-նա:

Հատ ժամանակ, քիչ ժամանակ ըտեղ աշ-խատըմ են, մի քյարվան ա կյալի ըտեղ՝ էտ քաղաքը: Էտ թակավորի կնիկն էլ շատ սիրուն կնիկ ա ըլըմ: Քյարվանը կյալիս ա, պերը իրանց տան մոտ վեր ա տնըմ: Հա՛, էտ քարվանքաշին էտ քյնըմ ա ուզըմ ա ճուր խմի, աչքը ընգնըմ ա էտ կնկան, տենըմ ա շատ սուրուն կնիկ ա, ճուր ա ուզըմ մոտից, քյնըմ ա տանից ճուր ա պերըմ տալի, խմում ա տո, քարվանքաշին կարքարըմ ա իրա ծառանե-րին, ասըմ ա.- Էս կյնգած վերցրեք:

Էտ կյանքան վերցնում են փխցնում, քյարվան պեռնում էտ քաղաքից տուս կյալի, կնգանն էլ հետ տանում, էտ երեխեք մնում են տուն: Իրիկուն թակավոր կյալիս ա տուն, կյալիս ա տեռնը կնիկ չկա, մնացել են էտ ըրեխեք:

- Ի՞նչ անեն, ի՞նչ չանեն, մախիր տանեն, երեխեք ո՞վ կպահի, ես կենամ, բա ո՞վ դի աշխատիլ՝ մենք ուտենք:- Ասըմ ա.- չէ, տեղափոխվենք մի ուրիշ երկիր:

Վերցնում ա էրեխեք տեղափոխվում ա, քյ-նում ա մի կետի դեմ առնում, մի կետի դեմ ա առնում: Մի տղեն շլակվում ա անց ա կըցնում կետի էն կողմ, տընում ա ընդի, ետ կյալի էն մի ըրեխեն էլ տանի, որ հետ ա կյալի՝ էն մի ըրեխեն էլ տանի, էն մի ըրեխեն էլ ընգնում ա ճուր՝ շլակից: ճուր շատ ա ըլում շշկվում ա ըրեխեն ընգնում ա ճրի միջին, մինչև մտիկ սիե անում ա տենում ա էն մի ըրեխեն, որ տարել ա ճուրը անց կցրել, կելը վե կալավ քյնաց: Մինը ճուրը տարավ, մինը կելը տարավ:

Էտ թակավոր մնաց ծեռները ծոցին ընդի ման կյալի, ի՞նչ անի, ոչ կնիկ կա, ոչ ըրեխա կա, ոչ մի պան, մնաց կենդու: Էտ երկրիցն էլ տուս եկավ, էտ երկրիցը տուս եկավ, շատ քյ-նաց, քիչ քյնաց, քյնաց մի քաղաք՝ մի թակավորի հողը: Քյնաց տեսավ՝ ընդեղ դովաք դուշը կա, հին ժամանակ դուշ ա էլել, ժողովուրթ հավաքվել են, որ թակավոր դեն հընդրիլ: Էտ դավաք դուշն ում կլիս վրա թառ ա ըլել, նրա տրել են թակավոր: Ժողովուրթը հավաքվել են ըրի ու դավաք դուշին թող են արել:

- Տենանք՝ ո՞ւմ կլիսին դի թառ ըլիլ:

Էտ մարթը կյալիս ա մտնում ժողովուրթի միջին, արթեն ժամանակն ա, դովաք դուշին թող են անում, կյալիս ա էտ մարթի կլիսին թառ ըլում էտ նոր եկողի: Ասըմ են.- Սյ մարթ, էս, էս ի՞նչ պան ա, է՛, էտ չի ըլի, էտ ով գիդա որ-դեղացի ա, բոշա յա, ի՞նչ ա:

Հա՛: Պերըմ են հալվի չեն առնում, մի ան-քամ էլ են թող անում, էլի կյալիս ա մարթի կլ-իսին թառ ըլում: Վերջը երկրորթ անքամ, եր-րորթ անքամ, ինչքան թող են անում, կյալիս ա էն մարթի կլիսին թառ ըլում:

Պերըմ են որոշում, ասըմ են.- Էս թող ըլի մեզ համար թակավոր:

Պերըմ են տնում են էտ երկրի թակավորը: Հին թակավոր ա ըլել էլի, էն թակավորություն ստացավ:

Հետ կյանք՝ էտ երեխանց մասին: Մնին ճուրն ա տարել, մնին կելն ա տարել: Էտ կել տարածին, չորան մոտիկ ա ըլում, շներ հաս-նում խլում են, չորան վերջը քյնում ա սրան փռնում ա, տենում ա էրեխեն տառ սաղ ա: Էտ չորան տանում ա իրան համար, տանում ա էրեխեն պահում: Էն մեկն էլ որ ճուրն ա ընգ-նում, ճաղացը մոտիկ ա ըլում, քյնում ա ճաղա-ցի արխն ա ընգնում, քյնում ա, դե սետկա կա էլի, սետկեքին դեմ ա առնում, ճաղացալան տուս ա կյալի տենում ա մի երեխա կա ըտեղ՝ տղա-երեխիս, տառ սաղ ա: Էն էլ ճաղացալանն ա վերցնում: Տանում են պահում են. երկուսն էլ տառնում են քահելնի: Հա՛: Ու երկուսով պանակ են քյնում էտ երկու տղեն՝ ախպերնին: Իրանը չգիդեն, թե ախպեր են, թե ինչ, փոքր ժամանակին ա ըլել՝ մինը կելն ա տարել, մինը ճուրն ա տարել: Ի՞նչ գիդեն ախպեր են:

Էտ կյանք, պանակ են քյնում մի տարի, երկու տարի ծառայում, քյնում են էտ թակա-վորի, տրանց հերը որ ըրի թակավոր ա տա-ռել է՛, էտ քաղաքում ծառայիլս են ըլում, էտ թակավորի պալատի համարյա կարքապա-հերն են ըլում էտ երկու ախպերը, բայց դե գի-դում չեն, ախպեր են, չէ՞: Հա՛: Մի օր տենում են, որ մի էտ քյարվանը եկավ ըտեղ, էտ կնիկ տանող քյարվանը: Էկավ ըտեղ վեր ածեցին էտ պալատի առաջ, էտ ա ամեն մեկ իրան համար քյնաց կերուխումի: Էտ քյարվանի մեծն էլ՝ էտ խագեյինն էլ, քյնաց պանի: Էտ կնիկն միաթամանակ տառ ման ա կյալի էլի, ման ա կյալի, էտ բազրկյան... կյալիս են քնում են, էտ կնիկ քնում չի, ըտեղե պատվում ա, էտ բանակայինների հետ գրից անում ա: Էտ երկու տղի հետ հա՛, խոսցնում ա, պա՛, ասըմ ա.- Տուք ո՞նց եք էլել, ո՞նց չեք էլել:

Դե տղերք ասել են, որ պահողներն են ասել, նրանք իմացել են:

Ասըմ են.- Մեր մեր փխցրել են, տարեր են:

Էտ մի տղեն ասըմ ա.- Բազրկյան եկել ա մեր մորը տարել ա, մեր հերն էլ մեզ շլակել ա պիրել ճուրն անց կենալիս մինը կելն ա տա-րել, մինը ճուրն ա տարել, ճղացալանը ինձ ա

մեծցրել, են չորանն էլ ես մնին և մեծցրել ետպես:

Հա՛ տղեքը եկել են բանակ: Էտ կնիկ որ շատ խորանըմ ա, տեճըմ ա, չէ՛: Էտ երկուսն էլ իրան տղերքն են: Էլ խազեյիճին կուշտը Էնքան քյնում չի էլի, դե քնած ժամանակն ա, քնել են: Մի տղեն պիրըմ ա մի կողքիյեր, Էտ բանակայինների, մինը մի կողքիյեր, մի ծեռը ցրա վրա ա պիրըմ, մի ծեռ... քնըմ են: Զնըմ են, միառժամանակից ես խազեյիճինը մտածըմ ա.- Էս կնիկ ի՞նչ էլավ, ի՞նչ չէլավ, կյալիս ա ման կյալի, տենըմ՝ մի բանակային մի կողքն ա քնել, մի բանակային՝ մի կողքը, ինքն էլ՝ կես տեղը: Էտ ա սկսըմ ա կռվիլը Էտ բանակայինների հետ, կյնգաճ վեր ա կցնըմ, կնիկ քաշ տալով պերըմ ա իր մոտ, քյնըմ ա թակավորին կյանգատ: Որ ասըմ ա.- Տու, քու պալատըմ բոզություն ա, ոչ թե՛ թակավորություն:

Առավոտ կյնգաճ կանչում են, թակավորը կանչում ա խոսցնըմ:

Ասըմ ա.- Ընչի՞ ես Էտպես արել:

Թե ասըմ ա.- Թակավորն ապրած կենա,- ասըմ ա,- Էս ի՞նչ հարազատ տղերքն են,- ասըմ ա:

Թե.- Ո՞նց քու տղեքն են:

Թե ասըմ ա.- Հա՛, ասըմ ա,- տվյալ ժամանակին,- ասըմ ա,- մեր երգիր տակնուկրա ըլավ.- (ինչպես ես պատմեցի),- ի՞նչ մարթ թակավոր էր, մեզ փխծրուց պերեց այսինչ տեղ, նախըրչի տառավ: Բազրկյան էկավ, Էս բազրկյան ինձ փախցրուց, ի՞նչ էրեխեք մնացին անտեր: Տարել ա ճուրն անց կենալիս մին կելն ա տարել, մին ճուրն ա տարել: Մնին մի ճաղացական ա մեծցրել, մնին մի չորան ա մեծցրել: Եկել են բանակ, Էս էլ... Էտ էրեխեք ի՞նչ էրեխեքն են:

Թաքավոր տենըմ ա, ճիշտ, կնիկն էլ ա իրան, ըրեխեքն էլ: Բազրկյանին փռնըմ ա բանտն ա քցըմ, Էտ ըրեխեք վերցնըմ ա, կյնգաճ վերցնըմ ա ճորից իրան: Իրանք հասնըմ են իրանց մուրազին:

29(29). ԳԻՏԱԿԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ¹

Մի մարթ, մի կնիկ պակաս ապրըմ են, քյա-սիր ապրըմ են, կընիկը միշտ նախատըմ ա մարթին.- Այ մարթ, մի տեղից մի աշխատանք չես անըմ, մի տեղից մի գործ չես պիրըմ, բա մինչև ե՛րբի դենք մենք սհե պակաս-պառտ ապրիլ:

- Այ կնիկ, դե ի՞նչ անեմ, դվիւրը քյնում ես:

Հա՛, մի օր պտտակերն ա ընգնըմ Էտ մարթը, մտիկ անըմ տենըմ հընուց պապական, հորական կրքեր կա: Պիրըմ իրարից կայցնըմ, սարքըմ, դես-դեն ու կոնցտակին տնըմ, քյնըմ մի ճամփի դրաղի մատըմ, ըսկսըմ Էտ կյիրըր դես-դեն թերթիլը: Էտ քշերին ըտեղով քյաճրվան ա անց կցել, քյաճրվանիցը պաճ են կյիւղացել: Էտ քյաճրվանի պետը քյնաճցել ա ճանապարհն տեսել, որ իրանից պաճ ա կյիւղացած հետքերտ կյալիս ա, օզլամիշ անիլով, որ տենա որտեղ են Էտ գործը կադարել: Կյալիս ա տենըմ Էտ մարթը մտած՝ Էտ կյիրըր ծեռին թերթըմ ա:

- Մ՛ տղա ջան, Էտ ի՞նչ կիրք ա:

Թե ասըմ ա.- Էս գիտնական եմ,- ասըմ ա,- ուրեճը թերթըմ եմ, կարթըմ եմ, ալորըմ եմ, վերչապես կորած պաճնի տեղը ասըմ եմ, մեռնողինն ասըմ եմ, ապրողինն ասըմ եմ:

- Պա՛, տհե պաճ ե՛ս գիղըմ:

Թե.- Հա՛:

- Բա քշերտ ի՞նչ քյաճրվանը ըստիղով քյնալիս քյաճրվանիցս պաճ են կյիւղացել, կարա՞ս գիղենաս:

Թե ասըմ ա.- Անպայման:

Հա՛ թերթըմ ա Էս կողմը, թերթըմ ա Էն կողմը:

- Բա ի՞նչ դեմ տալ, որ տեղն ասես:

Ասըմ ա.- Չորս մանեթ:

- Դե չորս մանեթ, Էն վախտը երկու մանեթը կտամ, երկուսը կմնա, թե կքքենեմ, կկյամ Էն երկուսն էլ կտամ, թե քյքնիլ չեմ, զաթի Էն ա երկուսը տվել եմ պրծել:

Ասըմ ա.- Ոչինչ:

Հա՛ դես ա թերթըմ, դեն ա թերթըմ, թե ասըմ ա.- Ըտենց առաջ, որ քյնառ առաջիտ մի կար-

¹ Հեքիաքն առաջին անգամ գրառել են 1970 թվականին (ծանոթ. Բանահավաքի):

մուց կա, քու են կյուղացած պաները կըրմնջի տակին պահած ա:

Գիղըմ չի էլի, հինեց ասըմ ա, անկախ ը-քից, ասըմ ա էլի: Էտ մարթը հըրաքյաթ տված քյնըմ ա, հասնըմ էտ կարմնջին տնըմ, որ, իրոք, էտ պանը ըտեղ կյուղացել են ու պահել:

- Պա՛, են մարթի փողն էլ տվի ոչ, բա հմի ո՞նց անեմ:- Դոգին տանըմ ա էլի:- Դետ տանըմ տնամ ընդեղ ա, են երկու մանեթն էլ տամ, որ իմ ապրանքի տեղն ասեց:

Դետ ա կյուլիս տնըմ, տա՛ն էլ մտածըմ ա, ասըմ ա.- Լավ, կքյնա քթնիլ չի, միէլ կկյա են երկու մանեթն էլ ծեղիցս կատնի, հազիր են ա երկու մանեթը աշխատել են:

Վեր ա կենըմ, որ միէլ ուրիշ տեղի վրա քյնա, մա՛ն էլ են կողմիցը կյուլիս ծեն ա տալի.- Այ տղա, ու՞ր ես քյնըմ, կացի կյուլիս եմ փո-ղըտ տալի:

Դա՛ սպասըմ ա, կյուլիս ա.

- Դե,- ասըմ ա,- մենակ տու չես, էտ պանի տերը, շատերն են տինեց պտահըմ:

Երկու մանեթը հանըմ ա տալիս, անց կե-նըմ քյնըմ: Էտ մարթը հասցեն էլ, էտ քյար-վանի պետը ոչ հրցնըմ ա, ոչ գիղըմ ա, թե որդեղացի ա, ինչ գյուղացի ա: Վերջը որ քյնըմ ա հասնըմ իրան տեղը՝ քաղաք, ըտեղ ինչ-որ թաքավորի խազնեն կտրել են: Ըտեղ գիտնա-կաննի են կանչըմ, էս կողմն են հսկըմ, են կողմ են ման կյալի, վերջը կլիսի չեն ըլըմ: Մի օր տինեց էտ մարթը իմանըմ ա՝ էտ քյարվանի պետը, որ ինչ-որ թաքավորի խազնեն կտրել են, ու մինն էլ ա կարըմ չի գիղենա էլի:

- Վա՛յ,- ասըմ ա,- են գիտնականը ըստեղ տուս կյա, հրեաի մա աթի, թե որդեղ ա պանը:

- Բա ո՞նց ա մրա հասցեն, պանը:

Թե ասըմ ա.- Զէ՛, օհնակ, Ուզունթալի փոշ-տըմ¹ այսինչ տեղն են տեղել:

Դա՛, կյուլիս են ըտեղ, հարցը փորց անիլով, ասըմ են.- Դա՛, մա բոի ըլիլ, են փլանը դի ըլիլ:

(Ոնց որ ասըմ են, Կոպալանց Սուրենին ասըմ են, պանը)²:

Կյուլիս են էտ մարթի կուշտը, թե ասըմ ա.- Դա՛, են եմ,- ասըմ ա,- գիտնականը:

- Բա թաքավորի խազնեն կտրել են, քեզ պահանջել ա:

- Պա՛, ա՛ կնիկ,- ասըմ ա,- դե արի, մի ծեղք յորդան-որշակ ա շլակենը, քյնանը, դե հմի ինչ կլիլ՝ կլիլ:

Վեր են ունըմ անց կենը քյնըմ: Քյնըմ են, թաքավորն ասըմ ա.- Գիտնականը տու ե՞ս:

Ասըմ ա.- Դա՛:

- Բա իմ խազնեն կտրել են, կարա՛ս գի-ղենա:

Թե ասըմ ա.- Անպայման, բայց,- ասըմ ա,- թաքավորն ապրած կենա, են քեզանից մի պան են պահանջըմ, էտ պանը կատարի, ու տեղը կասնեմ:

- Դա՛, ասա:

Թե ասըմ ա.- Ինձ քառասուն օր ժամանակ են տալի, քաղաքի դրաղին էլ մի բուրկա չինըմ, քառասուն էլ դազ են տալի, ընդեղից եղը կասնեմ, թե քու խազնեն որդեղ ա:

Քառասուն օր ժամանակ ա տալի, քառա-սուն էլ դազ ա տալի, բուրկեն էլ քաղաքի դրաղին չինել ա, մարթ ու կնիկ քյնացել են ըտեղ: Առաջի ըրուգունը դազերիցը մինը մոր-թըմ ա:

Ասըմ ա.- Ա՛ կնիկ, քյնաց:

Էտ կյուղերն էլ քառասուն հոքի են, որ էտ խազնեն կտրել են: Իրանցից մինը դարգըմ են, որ՝ քյնա, որ ինչ ուզըմ ա ըլի, մարթ ու կնիկ մի պան գրից անիլիս կլեն էլի, մի պան կհասկանաս, կկյա մեզ կասես: Դա՛, որ ասըմ ա.- Ա՛ կնիկ, մինը քյնաց:

Քյնըմ ա, ասըմ ա.- Բա մա ի՞նչ գիղացավ, որ ես ընդող կաղմած եմ, ասեց. «Մինը եկավ քյնաց»:

Դվատացին, որ էտ մարթը գիտնական ա: Էքսի ըրուգունը երկու դազ ա մորթըմ:

- Զէ՛, ա՛ կնիկ, երկուսը քյնաց:

Սիտնը էլ երկուսով են եկել ըտեղ անգա՛մ ասըմ:

¹ Ուզունթալի փոշտ – Ուզունթալ (Այգեհովիտ) գյուղից 2 կմ ներքև Աղտակի հովտում, մայրուղու մոտ գտնվող փոքր բնակավայր, որն այժմ կոչվում է Կայան ավան (Ծանոթ. բանաստեղծություններ):

² Կոպալանց Սուրենը բանաստեղծ համագյուղացին է, որի մասին բանաստեղծը տեղեկություններ էր

հավաքում որպես բանաստեղծ: Այստեղ բանաստեղծ Ալեքի քեռին համեմատում է այդ փնտրությունը (հե-քի):

- Ա՛, բա ի՞նձ հվատըմ չի՞ր, հրե տենըմ ես, ի՞նչ ա գիղըմ երկուսս էլ ըստեղ ենք:

Երկուսը, տասը, քսանը, մինչև եռեսունհինգը եկել են, մտցել են: Հմի քառասունը, իրանց պետն էլ հետերնուն, եկել են ըստեղ ճիշտը իմանան: Վերջի դագն ա:

Ասըմ ա.- Ա՛ կնիկ, քառասունն էլ քյնաց հա:

- Բա ասըմ ենք՝ հըվատըմ չես, ա՛ քու տունը շինվի, մա ի՞նչ ա գիղըմ քառասունս էլ ըստեղ ենք:

Տուռը թակըմ են:

- Հա՛ եկեք, են ովքե՞ր են, եկե՛ք:

Եի են մտնըմ:

- Բա քու ոտին, կըլխին մատաղ, մի հնար արա, մի ճար արա, տեղն ասենք՝ հանի, իրան սև արա, մեզ ըռելս չի տաս, մեզ կկտորի:

- Խի՞, ես էտքան հիմար ե՞մ, որ ծեզ ըռելս տամ, տեղն ասեցեք, իրան անդերը հանեմ իրան տամ, ընդեղից եղը տույք ազատ եք:

- Բա իրան բաղըմը, տարել ենք, կըռացել չենք տեղաց անենք, իրան բաղըմը այսինչ ծառի տակին հրե թաղած ա:

- Հա՛, դե քյնացեք, ազատ եք, ես ծեր անունը տալ չեմ, քյնացեք:

Տրանք քյնացին: Քյնացին, ըռավտը քյնաց, արթեն քառասուն դագը կերել ա, քառասուն օրն էլ թմամվել ա:

- Թաքավորն ապրած կենա, ինձ երկու բանվոր տու, քու խազնեն հանեմ քեզ տամ:

Երկու բանվոր տարավ քանդեց, են խազնեն հանեց պիրավ տվավ իրան, հաշվեց տեհավ, որ ճիշտ ա:

- Հա, դե գիտնական ես, քյնա քեզ համար ընդեղ ազատ ապրի:

Սի օր, երկու օր, հինգ օր, տասն օր տհենց մնաց, ասեց.- Այ՛ կնիկ, ասենք թե՛ ես մի պանը տհենց փուկուզ արիք. վերջապես չիասկացան, էթուց էլ մի պան կըլի, գիղալ չեմ, ու կյլիխս կտրիլ կտա, ո՞նց անեմ: Արի մի պան էլ հնարեմ, ընդեղից եղը բալքամ ազատվենք տրանից:

- Հա՛, ի՞նչ:

Թե ասըմ ա.- Տկըրվեն ես, իրես-միրեսս ցեխ քսեմ, քաղաքըմ փախչեմ, տու էլ եղմես ծղծղվալա, որ գիտնականը ցնորվել ա, շաշվել ա, տենանք վերջը ո՞նց կըլի էի:

Դե՛ ետ ա տկըրվել ա, քաղաքըմ տհենց փախչըմ ա, կնիկն էլ՝ եղմեն ծղծղվալա, հա՛:

- Էտ ի՞նչ ա պատահել, ի՞նչ չի պատահել:

Թե ասըմ ա.- Բա՛ գիտնականը խարաբ ա ըլել, ցնորվել ա:

Թաքավորը կարքաղըմ ա, որ.- Ուրենը փռնեցեք էլի, փռնեցեք պիրեք տենանք:

Հմի թաքավորի ժողովուրթն էլ՝ մեծ, պուճուր տուս են եկել թըմաշա են անըմ էլի, փողոցըմ վերջապես: Էտ թուշենը երկրաշարժ ա ըլըմ, ու թաքավորի պալատը քիթուն փուլ ա կյալի մինչև հիմքը: Տրան փռնըմ են, ասըմ.- Բա ետ ի՞նչ ա պատահել, ետ ի՞նչ ա պատահել:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, այ՛ ետ պանը տենըմ ես, եթե ես եկել ի ասել, որ երկրաշարժ դի ըլիլ, քու շենքը փուլ դի կյալ, քու քյուլփաթն էլ տակը դի ընգնիլ, ինձ վնաս կհասներ, ոչ թե՛ օքուտ: Ես ի՞նչ ես փորցը կատարել եմ, որպեսզի քու քյուլփաթը տուս կյալ, ընգնի ոչ տակը:

Թաքավորը մի շրջանի ինչ տվավ, ասեց.- Քյնա ընդեղ ղեկավարություն արա, ետ շրջանի եկամուտն էլ քեզ ըլի: Քյնա,- ասեց:

30(30). ՀԱՆՈՒՆ ԿՆԻԿ

Սի թաքավոր հեռու տեղից կնիկ պիրած ա ըլըմ: Օրինակ՝ ուրիշ թաքավորի հողից պիրած ա ըլըմ: Տարինի ա անց կենըմ, կնիկն ասըմ ա.- Ա՛ մարթ, բա ի՞նձ հերանք կան, ախպեր ունեմ, հեր-մեր ունեմ, բա տու ասըմ չե՞ս, չե՞ որ սա էլ իսան ա էլի, միտն ա ընգնըմ էլի, են խի՞՛ չես մի դյունըմ հերանք տանըմ ինձ:

Թե ասըմ ա.- Ա՛ կնիկ, ուզըմ ե՞ս դու անեմ էլի:

- Բա,- ասըմ ա.- ո՞նց չի ուզիլ.- ասըմ ա.- մի ժառանգ, որ իրա հերանց տուն քյնա էլի: Սօր քանի տարի ա պիրել ես ու ասըմ չես, թե մի դյունըմ քու հերանց տուն դու անեմ:

Պիրըմ ա մազիրներին կանչըմ, թե.- Կյընգան ուրեմ տանիլ դեք, տանիլ դեք հերանց տուն:

Պաղոաստըմ ա, պրիպաս պան հետներնուն տնըմ, վեր են ունըմ քյնըմ: Շատ են քյնըմ, քիչ են քյնըմ, դե միի անտառըմ ծթըմ

ա: Մթնոլորտ, չափոր են վեր թողնում: Թաքա-
վորի կնիկը երկու ըրեխա ա ունենում: Էտ եր-
կու ըրեխեն իրան հետ մի չափոր միջին ա, են
ա իրա մազիոր-վազորնին էլ, տրանք էլ մի
չափոր են: Որ կյալիս ա լափ մուկը տալիս ա
հա, բայց մի քիչ հեռու ախալիս ա ըլնդ էլի,
որ էտ ըխալիցը ճուր են պիրոն, խորակ են ա-
նում, եղով իրանք խնում են: Որ մթնում ա, էտ
բազորայանի միտքը փոխվում ա, որ պետք ա
թաքավորի կյնգա հետ... պետք է կյալիս վե
տնեն: Տրան կանչում ա առաջարկում, որ ասում
ա.- Սին պետք ա պան անենք:

Ասում ա.- Տին պան չի ըլի.- ասում ա.- բա
հետս ա տրել՝ իմ հերանց տուն տանե՞ս, թե՞
տու պիրեն անամուտայություն անես էլի, տա
մարթկություն չի:

- Չէ,- ասում ա.- մին ա, համոզեցիր՝ համոզ-
վեցիր ոչ.- ասում ա.- ըրեխանցնա էլ դեմ մոր-
թի, քեզ էլ:

Ասում ա.- Ուզում ա ըրեխանցն էլ մորթես,
ինձ էլ մորթես, ես չեմ կյալիս տրեմի քեզ հետ:

Որ պնդում ա, պնդում ա, տենում ա ըլնդ չի
հա,՝ ըրեխանցը երկուսին տալիս ա իրա
մազիորնին, թե ասում ա.- Տարեք սպանեցեք,
բալի նրա ցավալուցը համոզվի էլի:

Ու էտ ըրեխանցը տիտեք տանում են, տա-
նում են հա՝ են ըքքն են, դիմիչ չեն անում,
սպանում չեն: Մեկ էլ կյնգանը են իք անում:

Կնիկը ասում ա.- Դե քյնոմ ըխալիցը ճուր
պիրեն, հա կյանք ու ընքելանը ես արթեն խոս-
կը կտամ:

Թուկ էլ կապում ա իրանից, քյնոմից, թամ
թե քյնոմիցը կապած, որ քյնոմ տենա են ըքքն
ա հա, կըլիս ըլեն էլի: Էն ա քյնում ա ախ-
ալուրը հասնում, թուկ թող անում ա են ճըլում,
ըխալումը հիկ անում ու ինքը ընգնում,
ղեմշկուտ ա ըլնդ, էտ ըղմշկո՞ւտը: Դղմշկուտն
ա ընգնում ու քյնում: Քյնում ա, շատ ա քյնում,
քիչ ա քյնում, էտ ըրեխեքը քյնում են մի կետի
դեմ առնում: Էսքան պուճուր ըրեխեք են ըլնդ,
ճուր են մտնում, թե անց կենան՝ ճուր տանում
ա, ճուր տանում ա, տիտեք քյնում են մի
ճըղացապանի նովում... ճըղացապան տուս ա
կյալի տենում ճուր պիրել ա նովը կոխել: Էտ
ըրեխանցը հանում ա, էտ ա փայփայում ա, ու
ընքելանը էտ ա էտ ըրեխեքը ըսի հին բաբաթ

մեծանում են ու սկսում են էտ ըրեխեքը իրանց
համար աշխատանքի քյնալ: Քյնում են տեսնում
էտ երգիթի թաքավորը մահացել ա: Ամբողջ
ժողովուրթին հըվաքել են ու են իք են անում,
թաքավոր են հընդում: Ձմրուխտ դուշ են
ասում, էտ դուշը ծուկ դեն անիլ: Ում կըլիսին
վեր կեպ, մա ա թաքավորը, թեկուզ գլիզ
պետք ա մի խանի կըլիսի վե կյա՝ մա ա
թաքավորը: Ու տիտեք էլ քյնում են մեկ հեռու,
դրադին կաղնում: Էտ դուշը դվորը ծուկ են
անում, կյալիս ա էտ տղերանց մեկ կըլիսին
կաղնում: Է, կյալիս են էտ տղին խոխի տալի,
ըսիան ըլետ քյնում ծուկ են անում, ըլետ էտ
դուշը քյնում ա քյնում՝ նրա կըլիսին վե կյալի:

Թե ասում են.- Տարեք մի հայաթի մեչ
քցեցեք էտ տղին:

Տանում են մի հայաթի մեչ քցում: Իրեք ան-
քամ, մըն էլ որ ծուկ են անում, քյնում ա կարովը
նի ա ընգնում, քյնում կըլիսին կաղնում:

Թե ասում են.- էլ ըլի չի, ուզեն-չուզենք
ուրեմը թաքավորը տա ա էլի:

Պիրում են տրան թաքավոր տնում, թաքա-
վոր են տնում:

Յի խաբարը տանք էտ կյնգանիցը: Կնիկը
կյալիս ա մի դուշում մի չոբանի ռաաա կյալի,
էտ չոբանը շներիցը անց ա կացնում: Տա են
իրան են իքը պատում ա, որ՝ ոնց են ըլել, սին
երկու ըրեխա են ունեցել, սին եկել են, սին
ուրեմը չուրեն են ընգել, էս քուրովը, պա-
նովը:

Թե ասում ա.- Իմ քիրն ես տու, ինձ քիրացու
ես տու:

Էտ չոբանը պիրում ա, ըրուզուրը մթնում ա,
տեղը չիքնում ա, տրան լավ հուրապիրում ա,
ոխճարը մորթում, ուտեցնում:

Թե ասում ա.- Խնթրում են ոխճարի են իքը
դառնում, տաս,- ասում ա.- կյալիս կոխեն,- են
իրան թափանը էլի,- տա կչորացնես, կչինես,
ուրեմը հաքնիլ դեմ:

Էտ ա էտ չոբանը տիտե անում ա: Էտ ըրու-
զուրը պախում ա, ըռավտում էլ տանում անց
կացնում: Տա վեր ա կենում ու ընգնում ճամփա,
էտ կնիկը ճամփա յա ընգնում: Էտ դառնում էլ
կյալիսն ա կոխում, որ նրան ուրեմը տենա, որ
ուրեմը գիդենան քաչալ ա էլի, մեկնց պանի

տեղ չտնեն, բայց դե ինքը շատ գեղեցիկ, ղոչաղ արված:

Ու քյնըմ ա, քյնըմ ա, քյնըմ ա ըլետ, մի տեղ տըվարածի ռաստ կալի: Էտ տըվարածը ըլետ տրան հյուրասիրըմ ա, տանըմ իրան կուշտը:

- Այ քիրա, բա էտ ո՞ր ես չոլերն ընգած, որդի՞ ես քյնըմ:

Թե ասըմ ա.- Սիե, սիե ըրեխեք եմ ունեցել, ծեռիցս ընգել եմ կորել: Ես էլ ուրեմը սիե ընգել եմ չոլերը, սիե ման եմ կալի:

Էտ տըվարածն էլ ա տրան ճըմփու տընըմ, քյնըմ ա:

Հմի խոսքը տանք մարթիցը՝ արթեն: Մարթը հմի արթեն տեհավ, որ կնիկը եկավ ոչ, տեհակացավ տեհավ՝ ո՞նչ ըրեխա կա, ո՞նչ կնիկ կա: Բազրգյանն էկել ա, բազրգյանը թաքավորին խափել ա, թե.- Բա ուրեմը դաշաղոնին վրա տվին, ծեռեռնուցս խլեցին ճըմփին:

Էտ թաքավորն էլ, հմի տա էլ ա ճամփա ընգել, կյնգանը ման ա կալի: Էտ թաքավորը կալիս ա էտ չորանին ռաստ կալի: Էտ չորանը (թաքավորը)¹ որ պատմըմ ա:

- Պա,- ասըմ ա,- նա իմ քիրն ա, ես էլ դեմ կալմ ման կալմ:

Ոխարը բախըմ ա ու տա էլ թաքավորի հետ ընգըմ, քյնըմ ա: Կալի էտ տվարածին էլ եմ քյնըմ: Տվարածն էլ.- Պա,- ասըմ ա,- ես էլ դեմ կալմ:

Իրեքն էլ վեր եմ կենըմ ու դույ ըլըմ, դույ եմ ըլըմ:

Հմի խաբարը տանք էն տղին, որ ուրեմը թաքավոր եմ տրել: Նույն էտ քաղաքն եմ էկել տեհաք: Կալիս եմ: Ըստի ախպուր կա, էտ ըխպընը հմի պահակ տըրած ա, ըխպընը թաա կա, էտ թաքավորի, էտ որ կնիկը կորել ա, նրա թասն ա: Էտ թաքը տրել ա ըխպրի կշտին, պահակը տրած վրեն, որ ովքեր կկան ճուր կխմեն, է՛, նայըմ եմ, ով որ ասի՝ օՖէ՛, ուրեմը նրան կփռեք, կպիրեք:

Վերջը ժողովուրդը կալիս ա ճուր խնըմ էտ թասովը, հիլ անըմ քյնըմ, խնըմ, հիլ անըմ քյնըմ: Էտ կնիկը մեկ էլ որ կալիս ա, որ ճուր ա խնըմ հա՛, մտիկ ա անըմ տենըմ, որ իրանց

թասն ա: Տա մտածըմ ա, մտածըմ ա.- Սա ի՞նչ պան ա, օՖ,- ասըմ ա,- էս ի՞նչ պան ա, որ եկել ա իմ կըլխին:

Տրան փռնըմ եմ տանըմ: Էն չորանն ա կալի ճուր ա խնըմ ու ասըմ ա.- ՕՖ,- ասըմ ա,- էս ա թաս հա՛:

Տրան էլ եմ փռնըմ տանըմ, էն տըվարածին էլ եմ փռնըմ տանըմ: Նույնն ասըմ ա ըլետ: Որ թաքավորն ա կալի, թաքավորն էլ տենըմ ա, որ իրան թասն ա էլի:

- Վա՛յ,- ասըմ ա,- իմ թասն,- ասըմ ա,- էս ո՞րդի ա տուս եկել,- ասըմ ա, սա ի՞նչ պան ա:

Տրան էլ տարան: Իրեքին էլ քցեցին մի հայաթի մեջ: Հմի թաքավորը տեհնց կենդ-կենդ խոսքըմ ա: Մորը կանչըմ ա, բայց ճնանչըմ չի, որ իրա մերն ա:

Թե ասըմ ա.- Մերա՛,- ասըմ ա,- ինչի՞ ես,- ասըմ ա,- տու եկել ըխպրիցը ճուր խնել ու,- ասըմ ա,- օՖ արել:

- Թաքավորն ապրած կենա,- ասըմ ա,- բա ասիլ չես, թե սիե, սիե, սիե,- ասըմ ա,- իմ մարթը ինձ հերանցս տուն դու արավ, իրա բազրգյանի հետ տրուց: Սիե քյնացիցը չոլըմ մնացից,- ասըմ ա,- սիե դեպք պատահեց, ես չուշաղ ընգա, ըրեխեքիս ուզացին կտորեն, գիղըմ չեմ՝ կտորեցին, ինչ արին, ինձանից քցեցին: Ես էլ փախա ընգա մի ղըմըշկուտը ու էտ ղըմըշկուտով փախչիլեն, փախչիլեն՝ սիե եկա, հմի տուս եմ եկել ըստի:

Տենըմ ա իրան մերն ա, ճըմանչըմ ա: Տրան էլ պան չի ասըմ, չորանին ա կանչըմ:

Չորանն ասըմ ա.- Սիե մի քիր էկավ ինձ ռաստ էկավ,- ասըմ ա,- սիե ղոնաղ արի, սիե պահեցի: Մի ոխմարի մորթի էլ,- ասըմ ա,- էն իք արի, կլիլխը կոխեք ու ասեք. «Ես պետք ա քյնած ման կյամ, բալի իմ ըրեխեքը քթեն՝»: Յըս էլ եմ նրա ման կալմ:

Տրան էլ տարավ հայաթը քցեց: Կանչըմ ա տըվարածին, տըվարածն էլ ա նույնը ասըմ: Կանչըմ ա մարթին, մարթն ասըմ ա.- Դե կնիկս,- ասըմ ա,- ստիպեց, որ,- ասըմ ա,- բա քանի տարի ա պիրել ես ու ինձ հերանց չես տանըմ: Ես էլ ստիպեցի,- ասըմ ա,- իմ բազրգյաններին կարքադրեցի, որ, ուրեմը, տարեք, քանի տարի ա, ուրեմը, հերանց տպտալըմ ա, հերանց քյնա, տարել չեմ: Վե

¹ Փակագծի բառը ծայնագրված չէ (ծանոթ. բանահավաքի):

կացան տարան, տարան,- ասըն ա,- եկան ասեցին՝ բա ճըմփընը ուրեմը խուլիգանին աղաքներնուս կտրեցին, ուրեմը, սին, ուրեմը, խլեցին ծեռերնուս՝ ըրեխեքն էլ, կյնգանըստ էլ: Տհեց էլ,- ասըն ա,- մտածեցի, մտածեցի ճամփա ընգա ուրեմը ման կալելն, տեղա-կիլեն կրեմա՞ն քթեմ: Յձի եկել եմ տուս եկել ըստեղ:

Էն ա ետ տղեն տեմըն ա, որ դե էն ա իրան ծնողինն են էլի: Նոր ուրեմը փաթվում են իրար: Էն չորանին էլ, տվարածին էլ, ուրեմը, մի էլետ ըհագին փող ա տալի, կարողություն ա տալի:

Ասըն ա.- Ապրեցեք ծեղ համար, որ տուր տին հալալ որպես ծեր քիոր տին հարգել եք, ուրեմը, ճանապարհ:

Նոր թաքավորը քյնըն ա իրա բազրգյան-ներին, պանին քյնըն, ուրեմը:

- Դե եկե՛ք ըստի, դե ասեցեք տեմա՞ն էս ի՞նչ ա կատարվել:

Դե հին պաներ ա էլի, աբալ ջան:

31(31). ԱԼԽԱՆՆ ՈՒ ԿԱՐԱ-ՎԱԶԻՐԸ*

Ասըն ա՝ երկու ախպեր են ըլըմ¹, երկուսն էլ որփ են ըլըմ: Երփ որ որփ են ըլըմ, իրանց խորթ մեր տիանց հետ յուլա չի քյնըմ, միշտ ծեծըմ ա, տղիանց էլ վեր են կենըմ ճամփա են ընգընըմ: Որ տուս են կյալի քյնըմ են ման կյալու, են ախպերն ասըն ա.- Քիրա ջան,- ասըն ա,- ես ծարավ եմ:

Էն էլ ասըն ա.- Ախպեր ջան, ի՞նչ անեն ճուր չկա:

Ասըն ա.- Գոմշի ոտի տեղի ճուրը խմըմ եմ:

Ասըն ա.- Չէ, ախպեր ջան, գոմեշ կտռե-նաս:

Կովի ոտի տեղն ա պտահըմ, հիլ չի անըմ, ասըն ա.- Կով կտռեմոս:

Վերջը ոչխարի ոտի տեղն ա պտահըմ, էտ ախպերը խմըմ ա, կյառն ա տռեմըմ, ընգըն ա ետ ախպեկա եղևիցը: Ախպեկն էլ, լաց ըլիլով, քյնըմ ա: Յձի էտ ախպեկն ու տղեն ճանապար-

վըմ են, քյնըմ են, մի անտառի միջի մթնըն ա: Ախպուր ա ըլըմ, ճուր ա խմըմ, վախիլուցը ախ-չիկը պրցրոնըմ ա ծառը:

Ասըն ա.- Կեղից, պանից պաշտպանվեն:

Ախպերն էլ մի թփուտի մեջ ա մտնըմ, քշերը մնըմ են ըստեղ: Էտ Ալխան անունով մի բազ ըլըմ ա, հարուստ, կտաղած մարթ էլի, տրան, տրան էլ մի Ղարա-վազիր ա ունենըմ: Էտ Կարա-վազիրի հետ առավտը Էն բաշտեն վեր են կենըմ, ճամփա ընգընըմ:

Էտ Կարա-վազիրին ասըն ա.- Էս քշեր երազ եմ տեսել, ղսմաթ դեմ ունենալ, արի քյնանք ֆորսի:

Էտ Կարա-վազիրը ասըն ա.- Լա՛վ, արի պայման կապենք, թե որ ամասուն կըլի՝ քունն ա, իսկ որ իսանաթ ըլի՝ իմն ա:

Ալխան բազը ասըն ա.- Լա՛վ:

Էն ա որ պայմանավորվըմ են ճանապարհին, քյնըմ են մի տեղ պըտահըմ՝ ճամփեն երկու մասի ա բաժանվըմ, ման կյալով քյալ դեն, կյալ էլի ըստեղ հանդիպիլ: Էն ա որ ճանապարը արդեն բաժանվըմ ա, տրանք... մեկը մի կողմն ա քյնըմ, մեկն էլ՝ մի կողմը:

Էլի ասըն են.- Տես հա՛, պայմանը՝ պայման ա, ով ինչ քյնի, կյալ ըստի սպասի:

Էտ Ալխանը քյնըմ ա՝ ախպրիցը ճուր խմիլիս տեմըն ա՝ մի շողք քցած ճրի միջին: Շողք որ ճրի միջին տեսնըմ ա, տեսնըմ ա, որ մի լավ, գեղեցիկ ախպեկա պատկեր ա, որ վերև ա մտիկ անըմ, էտ ախպեկան տեսնըմ ա: Էտ ախպեկան բարով ա տալի, ախպիկ չի պատասխանըմ: Էտ ա տռեմըմ, ասըն ա.- Ափսոս, որ, գեղեցկուհի ա, բա որ լեզու չունի՞:

Շին ետ ա թեքըմ, որ քյնա, էտ ախպիկը լաց ա ըլըմ: Որ լաց ա ըլըմ, ասըն ա.- Որ հասկացողություն ունես, լեզու ունես, խի՞ չես պատասխան տալի:

Էտ ախպիկը տրո՞ բարով ետ ա տալի, ասըն ա.- Սին, սին, էս կյառը իմ ախպերն ա, ես էլ անտեր եմ, տիրական չունեն:

Էտ որ իմանըմ ա, էտ ախպեկան վեր ա ունըմ ծիու թարքին տընըմ ու ճամփա ընգընըմ: Գանապարվըմ ա, կյալիս ա էն պայմանավորված տեղը: Էտ Ալխանն էլ էտ ըրեխին, որ թարքին ա տըրել, յափնջին էլ վրեն ա քաշել, որ էտ Ղարա-վազիրը չտեսնա: Էտ Ղարա-վազիրը

¹ Բանաստեղծ սխալմամբ երկու եղբայր է ասում, պետք է լինի քույր և եղբայր (ծանոթ. բանաստեղծը):

մտիկ և անըմ, տենըմ էտ թարքին մի ոտներ և ըրևըմ, ետ և տոռնըմ, ասըմ ա.- Ալխան բազ, պայմանը՝ պայման ա, ինչ որ քթել ես, պետք և կես անենը:

- Մյ մարթ, սա կես անկիւլ չի, խսանաթ ա:

Չէ, որ չէ: Վիճելով սիե ճամփա են կալի:

Ասըմ ա.- Որ տիենց ա, պի պայմանավոր-վենք, սիե տանենք մի պռավի տան վեր տը-նենք, ամենք մի մատանի կամ պան առնենք տանենք տանք իրան, որիսն վեր ունի՝ նրանց ա:

Էտ ա պիրըմ ա, էտ Ղարա-վազիրը քյնըմ ա մի լավ ոսկի մատանի առնըմ, նա էլ քյնըմ ա մի հասարակ մատանի առնըմ, տանըմ են տալի մի փաշկա, տանըմ են տալի էտ փաշ-կան:

Էտ փաշիկը ասըմ ա.- Չէ, իմ հերը շատ հա-րուստ ա ըլել, ես հարստության հետ թամահ չունեմ, ես էն հասարակը վեր կունեմ:

Էն հասարակը վեր ա ունըմ ու տոռնըմ ա Ալխան բազինը: Տո էլ կին չի ունացել ու առել ա էտ փաշկան: Էն ա կալիս են ամուսնանըմ, մի երկու տարուց եղը մի տղա ըրեխա ունե-նըմ: Մի քանի տարուց եղը մինը էլ ունենըմ ա: Վերջը էտ փաշիկ շատ ա կենըմ, քիչ ա կենըմ, մտածումընքի մեչ ա ընգըմ, թե.- Բա ես հեր են ունեցել, ո՞նց անեմ, որ իմ հորը տենամ:

Ամուսինն ասըմ ա.- Էտ ի՞նչ ա ըլել, խի՞ ես մտածումընքի մեչ:

Ասըմ ա.- Բա ի՞նչ անեմ, ասըմ չես, թե՛ ես հեր ունեմ, քյնալ, տենալ ա պետք, ես ո՞նց անեմ:

Որ էտպես ասըմ ա:

- Բա ի՞նչ անեմք, ես կեչ ժամանակն ա: Էս կարողությունը ո՞նց թող անենք, երկուսս էլ քյնանք:

Որ շատ մտածըմ ա, ասըմ ա.- Պիրեմ Ղարա-վազիրի հետ տընեմ, քյնա հերանցտ տուն ու կկա:

Էն ա, որ տիենց ասըմ ա, կինը համա-ծայնվըմ չի էլի, ասըմ ա.- Մյ մարթ, ես վեր կենամ ուրիշի հետ քյնամ, մարթիք ի՞նչ կա-սեն:- Շատ վիճելուց եղը ասըմ ա.- Դե տու ես գիղըմ, դռնըմ են՝ դռնըմ:

Պիրըմ ա մի նոքար էլ հետը տընըմ, մի ֆուրգուն սարքըմ, էտ կընգանն ու ըրեխեքին

էլ միչին տընըմ, Ղարա-վազիրին էլ հետը տընըմ: Նա էլ մտքըմ ուրախանըմ ա, որ ես իմ պանը տենալ դեմ, ոնց ա ես ուզեցի, ինձ ուզեց ոչ, նրան ուզեց: Էտ որ քյնըմ են մի երկու-իրեք օր ճամփա են քյնըմ, մի անտառի միչին մի թալըմ վեր են կալի: Էտ ծիուն նոքարին ա տալի, ասըմ ա.- Տար հեմվըմ ըրածացրու:

Էտ կինն էլ, մի պալատկա ա չինըմ, միչին տընըմ, էտ Ղարա-վազիրն էլ ֆուրգունի միչին ա: Հմի ըտի թեյ են խմըմ, էտ Կարա-վազիրը մի բաժակ քցովի ա անըմ ու դռնըմ էտ հար-սին: Նա էլ էտ բաժակը ետ ա դռնըմ, ասըմ ա.- Ինձ պետք չի էլի, ես էլ ունեմ:

Էտ Կարա-վազիրը վերցնըմ ա խմըմ, ասըմ ա.- Ուրեմն նա իմ խոսքին համաձայնել ա էլի, որ ինձ հմար ավելի քաղցր թեյ ա սարքել դրեց:

Որ մթնըմ ա, արթեն քշեր ա տոռնըմ, քյնըմ ա էտ հարսին ստիպըմ ա, ասըմ ա.- Պետք ա ինձ հետ պառկես:

Նա էլ ասըմ ա.- Չէ:

Որ շատ չեմուռն ա անըմ, էտ մեծ տղի անունը Մահմադ ա ըլըմ, էտ Մահմադին քա-շըմ ա իրա ծնգների արանքը, ասըմ ա.- Կամ համաձայնվի, կամ Մահմադի վիզը կտրիլ դեմ:

Նա էլի չի համաձայնվըմ, խելքը կտրըմ չի էլի, որ ըրեխի վիզը կկտրի: Էն ա էտ ըրեխի կյլուխը կտրըմ ա, քցըմ էտ կյնգա առաչը, որ վիզը կտրըմ ա էն դուք քցըմ, ասըմ ա.- Հա-մաձայնվըմ ես՝ համաձայնի, թե չէ էս մեկի կյլուխն էլ դեմ կտրիլ:

Նա էլ ասըմ ա.- Չէ, ես անարատ ըլել եմ, անարատ էլ մնալ դեմ:

Վերջը էտ պուճուրի կյլուխն էլ ա կտրըմ:

Որ ասըմ ա.- Մի՛ն ա, որ չհամաձայնվես, քեզ էլ դեմ մորթիլ:

Նա էլ շատ խնթըմ ա, լաց ա ըլըմ:

- Ինձ բախշի:

Հի ըլըմ, ասըմ ա.- Հի ըլի, պետք ա մոր-թեմ:

Որ տեսնըմ ա արինը աչքերը կոխել ա, էլ չի ըլի, ասըմ ա.- Դե որ տիենց ա, թող մի քիչ դրաղ ըլեմ, նոր կամ:

Էն ա մի քիչ հեռանքն ա, ցաքեմու քամակն ա անց կենքմ, իրա կըլխի շալը վեր ա ունքմ վերեն քցքմ ու փախչքմ: Էտ ախչիկ փախալ, իրա հոգին էլ ազատեց: Էտ Ղարա-վազիրը տենքմ ա՝ տա փախալ, ման եկալ, ման եկալ քթալ ո՛չ, ֆուրգուքն ետ տվալ, եկալ տուն, բազին ասեց, որ.- Այսինչ թալքմը դաշաղմին վրա տվին ըրեխեքին սպանեցին, կնգռնրտ էլ վե կալան, փախան: Ես էլ կյուխս պրծաքրի, եկա:

Հմի ետ տռռնանք էտ հարսից խոսանք: Էտ հարսը փախչքմ ա, թե ինչ տանջանքով ա փախչքմ, թե ինչ ծուրերով ա փախչքմ, ինչ մոթկերանց ա պտահքմ, վերջը քյնքմ ա իրանց հերանց տուն հասնքմ: Էտ բազն էլ էտ Ղարա-վազիրին վեր ա ունքմ ու ման ա կյալի, որ-դիա՛նց մի սավառ, մի խաբար իմանա: Ման կյալով, ման կյալով՝ շատ են ման կյալի, քյնքմ են էտ քաղաքը տուս կյալի, որդեղ էտ ախչիկը ծնվել ա, մեծացել ա: Քյնքմ ա ըստի էտ քաղաքքմը տուս կյալի՝ տեղեկություն պան անելով: Էտ ախչիկը որդի ա ունեցել, ոչ մի պան էլ ա չի ունեցել, ըստի աշխատքմ ա, էտ ախչիկ իրա կյուխս պահքմ: Հմի էտ քաղաքի թաքավոր մահաքամ ա ըլել, որոշքմ են, որ պետք է մեկին իրանց մեծ նշանակեն: Հին ժամանակ, ուրեմ, եղունիկ են պան թողնելիս ըլել, էտ աղունիկը ում կլխին որ կաղնի, նրան են էտ քաղաքի պետ նշանակել: Էտ աղավմին կյալիս ա էտ ախչկա կյլխին կաղնքմ, էտ ախչկան վերքնքմ են տանքմ պաղվալը քցքմ, որ տրմնից ազատվեն: Էլի ըլքմ չի, ակուշկովը մի ա ընգնքմ, կյալիս կլխին կաղնքմ:

Էտ ժողովուրթը ասքմ ա.- Ուրեմը տա մեզ արծաճի ա, պիրեք տրան տընենք:

Էտ ախչիկը երի որ էտ քաղաքի տեր ու տիրական ա տռռնքմ, իրա նկարը հանքմ ա էտ քաղաքի փողոցներքմը կաքնքմ: Հետո, տըռնքմ որ կյալիս են էտ քաղաքը տուս կյալի, նկարը տեսքմ ա, գարմանքմ ա, ետ ա տռռնքմ ասքմ ա.- Բա, Կարա-վազիր ասեցիր՝ դաշաղմին են տարել, էս ո՛նց ա եկել ըստի հասել:

Տա որ նկարին նայքմ ա, ա՛խ ա անքմ: Տրան վերքնքմ են տանքմ նրա մոտ:

Աքքմ ա.- Բա էն մեկը ո՛ր ա:

Քյնքմ են Կարա-վազիրին էլ են պիրքմ: Հմի դատ են անքմ, ասքմ են.- Կարա-վազիր, բա էն մեծ ըրեխին ընչի՞ սպանեցիր:

Թե.- Համաճայնվեց ո՛չ, տրա համար:

- Բա պուճուրի՞ն:

Թե.- Նրան էլ չհամաճայնվեց, տրա համար սպանեցիր:

Աքքմ ա, իրա դատը տալիս ա իրա մար-թին: Էտ Կարա-վազիրին ծիու պոչիցն են կա-պքմ, պան թողքմ: Իրանք էլ ուտքմ են, խմքմ, ուրախանքմ:

32(32).ԱՂԱՎՆԻԿԻ ՀԵՔԻԱԾԸ

Ըլել ա, չըլել՝ մի ախպեր, մի քիր, տրանք շա՛տ սերով են ըլել քիր ու ախպեր: Տրա ախպրակինը ասել ա.- Էս ո՛նց անքմ, որ ես սիանց իրարից քցքմ ախպորն ու քվորք:

Պիրել ա մի օր սա, էս ախչիկը մի տղա ըրեխա ա ունեցել օրըրոքքմ, էս ըրեխեն մոր-թել, տռռնք՝ ըռնոտ՝ քվոր կախ արած շորի ջիթը քցել: Եկել ա, ինքն էլ լվաքց անիլիս ա ըլել: Ախպերը եկել ա, կնիկն ասել ա.- Բա սա պա՛ն ա,- ասել ա.- քիրտ շորերս վառեց քիչ չէր, մեկ ըրեխես ա մորթել:

Օրթում ա կերել քիրը՝ Աղավմիկը.- Ախպե՛ր ջան, սուտ ա:

Թե.- Ո՛նց ա սուտ, որ,- ասել ա,- ջքմըտ ա տռռնքլ:

Վերջը պիրել ա դես մտածել, դեն, իրան նոքյարին կանչել, թե.- Իմ քվորը կտանես մի տեղ, կռնքը երկու կուռը, կկտրես, կբրախես:

Էս Աղավմիկին տարել են քիչ, հըմի էտ վազրմին էլ ուլքմ չեն էլի որ մորթեն, ասքմ են հայիփ ա:

Ասել ա.- Կմորթեք ու կռան մինը կպիրեք:

Տարել են, շատ են տարել, քիչ, տու մի ախլ թաքավորի կյոմ ա, կյոմի կշտին ա: Կյոմը գիղքմ են էլի, հա՛: Տանքմ են ըստի, կռնքը կտորքմ, էտ ախճկանը բրախքմ: Էս ախչիկը չոք-չոք, չոք-չոք քյնքմ ա տենքմ սիե ծակեր կա ու ծիան կա կապած, դաքներին խուրմա կա, չամիչ կա: Էս ախչիկը քյնքմ ա սիե վրեն ընգնքմ ուտքմ, կուռը չունի պան չունի, տուս կյալի: Կյալիս ա, մի պուճուր արիս ա քյնքմ:

Տենըմ ա ընդի մի դուշ կաղընմ ա ու մի բմբուլ վե քցըմ, ասըմ ա.- Աղավնիկ, էս բմբուլը էտ ճորիցը թաց արա՜ք քսի կռնեղըտ, կռնեղըտ տղանա:

Էն բմբուլը թաց ա անըմ, պերանով է՛, քսըմ, մինը տղանըմ ա, միէ՛լ մինը: Վերջը էս վազըրին քյընմ են թաքավորին ասըմ.- Թաքավորն ապրած կենա, ծիանը լղարըմ են, կերը տալիս ենք, քյընմ ենք տենըմ պակաս:

Ասըմ ա.- Մի բուսը պահեցեք, տեհեք էտ ի՞նչ ա, բայց սպանեք ոչ, պան չի անեք, կպիրեք իմ կուշտը:

Բուսը պահըմ են, տենըմ են մի գեղեցիկ, սիրուն ախչիկ, տկո՛ր, եկավ էն խութմիցը, պամիցը ուտըմ ա:

Էտ վազըրին ասըմ են.- Ախճիկ ջան, կացի, խի՞ ես տեհ անըմ:

Թե ասըմ ա.- Ծեզ մատաղ, ի՞նչ ասեմ, իմ ախպերը կռնես կտորել ա, քյուչեն քցել: Իրան կնիկը իրան ըրեխին մորթել ա, մա ասըմ ա՛ քու քիրն ա արել, պիրել են ըստի կռնես կտորել, բրախել, էս էլ մի դուշ մի բմբուլ տվավ, քսել եմ՝ տղացել ա:

Քյընմ են թաքավորին ասըմ: Թաքավորի տղեն, ազափ տղա յա ըլըմ, շոր, պան ա տալի, ասըմ ա.- Տարեք կըցրեք, պիրեք իմ կուշտը:

Տանըմ են կըցըմ, տանըմ: Որ տանըմ են, էս թաքավորի տղեն սիրահարվըմ ա վրեն: Թե ասըմ ա.- Տու էս տանը կկենաս, էս քեզ հետ կամուսնանամ, իրար հետ կապրենք:- Ասըմ ա.- դե քու հալն ասա, տենամ տու խի՞ ես տեհ քյուչեքըմ:

Ասըմ ա.- Դե, թաքավորն ապրած կենա, ի՞նչ ասեմ, էս, սեհ մի քիր ինք, մի ախպեր, մենք շա՛տ սիրով ինք քիր ու ախպեր, էտ ըխաբակինը նախանմ էր, որ սրանք խի՞ են էսքան սերով: Տա համ իրան շորերը վառեց, ասեց. «Քիրըտ ա արել», ախպերն էլ. «Պան չկա»,.- ասեց կառնեմ: Ախպեր ջան,- ասըմ ա.- էտ էս չեմ արել: Մեհտ էլ իրան ըրեխեն մորթեց, թե. «Քիրըտ ա մորթել»: Տրա համար իմ կռնեղը կտրեցին, քյուչեն քցեցին:

Էտ թաքավորի տղեն քյընմ ա, աղաթ ա էլի, խրիդ ա քյընմ, որ քյընմ ա խրիդ, հորն ասըմ ա թե, կնիկը պատճառավոր ա ըլըմ, ասըմ ա.-

Այ հերա, իմ կյնգանը լա՛վ կպահես, կազատվի լավ կշահես, մի՞նչ էս կյամ:

Աս՝ էս վազիր... ճամակ ա տալի թաքավորը, որ արթեն կնիկտ ազատվել ա, ոսկեքո՜քուլ երկու տղա ա պիրել: Էն բեմուրազ ըլած ըխաբակինը ճըմփըմ ա ըլըմ, ասըմ ա.- Էտ որդի՞ ես քյընմ, ախպեր ջան:

Թե ասըմ ա.- Սեհ, սեհ մի ախչիկ մեզ պտահել ա, հմի ըրեխեք ա պիրել, ճամակ եմ տանըմ՝ մարթին տամ:

Թե ասըմ ա.- Վա՛յ, կբլարես, քչերս քյնալ մի, արի մեր տանը կաց, ըռավտը կքյնա:

Պիրըմ ա քչերը իրանց տուն, ուտըցըմ, խմցըմ, քնցըմ, ծոցի ճամակը հանըմ կարթըմ, տենըմ՝ տեհ կյրած, որ Աղավնիկը ճուխտ՝ գույք, տղա ա պիրել: Կյրըմ ա տղի վրա, որ.- Էս ի՞նչ էր, որ պիրիր, երկու շան թուլա յա ազատվել: Ընդիան էլ՝ էն տղեն կյուլիս էլ, ըլետ մրան պահ ա տալի, թե.- Մեր տունը կյուլա:

Նա՝ թաքավորի տղեն, հանըմ ա ճամակը՝ համ կարթըմ, համ կյրըմ ա, ասըմ ա. «Հայրիկ ջան, ինչ որ ա, թող կենա, մի՞նչ էս կյամ»:

Էս քածը հանըմ ա կյրըմ, որ. «Էս ճամակը քե հասնիլուն պե՜ս՝ տանիցը դժողորպյուն կքցես»:

Էս մարթը մտածըմ ա, ասըմ ա.- Էս սեհ եմ կյրել, սա խի՞ ա սեհ կյրել:

Վերջը դես ա մտածըմ, դեն, պիրըմ ա մի մեծ յաշիկ շինըմ էտ ըրեխեքն էլ, էտ հարսին էլ տնըմ էտ յաշիկը, ճորի իրեսին քցըմ: Էտ ճուլը շատ ա տանըմ, քիչ ա տանըմ, տանըմ ա մի ծառին դեմ ա ըլըմ, որ մի ծառի դեմ ա ըլըմ հա՛, էս կնիկը տուս ա կյուլի, ըրեխեքն էլ ա հանըմ, էն յաշիկն էլ ա հանըմ: Տենըմ ա, որ մի ոսկի ծուլը եկավ, ասըմ ա.- Աղավնիկ, տու, էս հրես քե մի լավ պան դեմ տալ, որ քե տամ, ինչ որ ուզես՝ նա տալ դի քե: Էն սարը տենըմ ե՛ս,- ասըմ ա.- սեհ ճոճալ դի, էտ քյնալ՝ էն սարը: Էն սարի միջին շամդան, հին շամդանը գիղըմ ե՛ս, որ մըմեր են միջին տնըմ վառըմ, մի շամդան դի.- ասեց.- ըրալ, չորս մու՛նը՝ վառած: Կքյնա էն շամդանը վեր ունես, էտ չմտիկ անես, եթե էտ մտիկ արիր, քար դես տառնալ: Թե հու չէ, էն շամդանը պիրես ըստի տընես, ինչ որ ուզես, տալ դի:

էտ ա սարը ետ ա քյնը՝ ճըռճըռալա, էտ հարսը սիրտը քարը կոխըմ ա, ասըմ ա.- Բյնալ դեն, ետ չըեն մտիկ անիլ:

Վազ ա տալի քյնըմ էտ շամդանը վեր ունըմ, քմակիցը կանչըմ են. «Հա՛յ տարա՛վ, հա՛յ պիրա՛վ, հա՛յ տարա՛վ», ետ չի մըտիկ անըմ: Պիրըմ ա էտ շամդանը տնըմ ընդի, տնըմ ա՝ ոսկի ծըկնիկը եկա՛վ, էտ ա.- Աղա՛վնիկ, եկա՛ր: Ասըմ ա.- Հա՛:

Թե.- Դե.- ասըմ ա.- հրենիք քու հմար երկու հարգանի տներ դի կառուցվիլ:

Երկու հարգանի տներ ա շինվըմ, բաղ ու բաղչա ա շինվըմ, է՛, բըլբուլը միչին օխմիչ ա ըլըմ: Դե հին ասած պա՛ն ա, ի՞նչ են գիղըմ՝ դուզ ա, ես էլ...

Հետո էտ թաքավորի տղեն կյալիս ա տենըմ, որ կնիկը, ըրեխեքը կա ոչ: Տրա ախպերը կյալիս ա տրա հետ ընգըմ, ման են կյալի: Էտ ախչիկը բալկոնի ակոշկովը տենըմ ա, որ են մինը իրա մարթն ա, են էլ ախպերն ա:

Ասըմ ա թե.- էն էրկու մարթը կյալիս են, որ կյան տուռը թակեն, ասեն՝ տեղ չունե՞ք մնալի, հիլ կանեք կկյան:

Իրան ծառայողներին ա ասըմ: Էտ ա իրան էլ ունի լա՛վ լիմոնի ծառեր, լիմոնը վրեն փշրվըմ ա՝ գարշոնըմ: Էտ ա, որ կյալիս են թակըմ, հիլ են անըմ կյալիս են: Է՛, հաց ա շինըմ, ուտըցըմ, խմըցըմ, ըրեխանցը սվորցըմ ա, ասըմ ա.- Էն մնին պապա կասեք, էն մնին՝ դայի:

Էտ ըրեխեքը տիե անըմ են: Էս տղեքը իրար իրեսի մտիկ են անըմ, սա ի՞նչ պա՛ն ա: Վերջը տիանք որ քնըմ են, մթա՛մ թե ըռավտը քյնալ դեն, հա՛ էտ հարսը քյնըմ ա երկու լիմոն պուկըմ պիրըմ ախպոր ցիբը քցըմ: Ախպոր ցիբը ա քցըմ, հաց են շինըմ, ուտըմ են, խմըմ են, որ ուզըմ են քյնա՛ն հա՛, ասըմ ա.

- Բա՛, ես ծեզ հյուրասիրեցի, թե տուր կյա՛ք իմ լիմոնը քաղե՞ք:

Օրթու՛մ են ուտըմ ամեքը մի դոլից, վիհ, ախպերը սիե անըմ, տները՝ ջըբըմ:

- Վի՛յ,- ասըմ ա.- քուրիկ, ես մեղավոր չեմ, ես ո՞վ ա իմ ցիբը քցել:

Թե.- Չէ՛ տու մեղավոր ես:

- Չէ՛,- ասըմ ա.- քուրիկ ջան, ո՞նց օրթում ուտեմ, որ տու հկատաս:

Թե.- Դե լա՛վ, բա որ տու մեղավոր չիր, ես մեղավոր ի՞, որ քու կնիկը քու ըրեխեն մորթեց, ի՛նձ ասեցիր... կռներս էլ կտորիլ տվիր:

Էտ տղի ուշը քյնըմ ա, ուշը քյնըմ ա, գոռի ճրով, պանով ետ են պիրըմ:

Թե.- Բա՛, էս քու ըրեխեքն ա, ես էլ քու կնիկն եմ, ես էլ քու ցիրն եմ:

33(33). ՀՈՐԻՑ ՀԱՆՈՇՎԱԾ ԱՂԿԱ ԲԱՆՏԸ*

Մի մարթ ա ըլըմ, մի կնիկ, մի աղջիկ: Կնիկը մահանըմ ա, օսյաթ անըմ ա, որ իմ կոշիկը ու՛մ ոտը մտնի, նրա՛ն կառնես, նրա՛ն կառնես: Հէ՛, ման ածըմ ա, չարչի ա՝ ման ա-ծըմ, մնին էլ ա, մնի ոտն էլ ա մտնըմ չի: Պիրըմ ա տյընըմ ընդի, ասըմ ա.- Ըլա՛վ ո՛չ, ախ-ճիկ ջան:

Ըլա՛վ ո՛չ, ըլա՛վ ո՛չ:

Ախճիկը մի օր տները մաքրըմ ա, տուս ածըմ ա, մոր կոշիկը փորցըմ ա, ասըմ ա.- Հլա տենամ ի՛մ ոտն ա մտնըմ մամայի կոշիկը՝ ի՛մ մոր կոշիկը:

Պիրըմ ա ոտն ա մըտցըմ, մտնըմ ա: Տյը-մըմ ա ընդի, հերը կյալիս ա, ասըմ ա թե.- Այ հերա,- ասըմ ա.- մամայի կոշիկը ի՛մ ոտն ա մտնըմ:

- Ախճիկ ջան, հենց քեզ կառնեմ:

Լաց ա ըլըմ, սուբ-շիվան, թե ասըմ ա.- Բա տու ի՛մ ծնողը, ես ո՞նց քե առնեմ:

Թե.- Գիղըմ չեմ, կոշիկը ոտըտ ա մտել, քու մոր վախաթն ա՛ առնիլ դեմ:

Քյնըմ ա, մի հարևան պառա՛վ ա ըլըմ, նրա կուշտը, լաց ըլըմ, թե.- Սիե, սիե, սիե:

Ասըմ ա.- Աղջիկ ջան, քու հորը ոսկի ունի՞:

Ասըմ ա.- Հա՛:

Պիրըմ ա ոսկին, պիրըմ ա ընդիան տալիս ա: Մի իրեք ոսկի ա վեր ունըմ, մի երկու ոսկի ա պիրըմ, սիե պիրըմ ա էտ պըռավին տալի: Տանըմ ա ըստալարի կուշտը: Ըստալարին ա-սըմ ա.- Էն պա՛նը կշինես, որ աշխարըմս նա ըլի ո՛չ:

Ասըմ ա.- Շատ էլ լա՛վ կըլի:

Մի ոսկի էլ տանըմ ա տերտերին տալի, որ.- Ըստե՛նց ախչիկ դի կալ, ես էլ իրավունք դեմ առնիլ քեզանից:

- Յա՛:

Եինճա՛ծ պիրա՛ծ ընդի պատրաստ ա ըլը՛մ կեղի դրաղին: Էտ ախչիկը էն ա ամուսնանը՛մ ա, ասը՛մ ա թե.- Դե որ տոհե ա, հրսնը՛վ դես տանիլ ին՛ծ:

Էտ ախչիկը էն ա հաքը՛մ ա, շորեր առնը՛մ ա, թե ինչ շորեր առնը՛մ ա՛, էլ ասիլը պետը՛ը չի: Էտ ախչիկը քյը՛մ ա, քյը՛մ են պսակվե՛ն: Պառավը՛ր կյալիս ա, ասը՛մ ա.- Տեր հայր,- ասը՛մ ա,- իրավունք կա՞,- ասը՛մ ա,- հարսին տանեն՛ փիշիկ անի:

Ասը՛մ ա.- Ինչի չէ:

Տանը՛մ ա, տանը՛մ ա քցը՛մ էտ շկափի մեչն ու քացի տալի ճուրը քցը՛մ, ինքը կյալի պատի տակին նստը՛մ, տուս են կյալի ասը՛մ.- Բա հարսն ի՞նչ ըլավ:

Ասը՛մ ա.- Զե մատաղ, պա՛շի տակը քյը՛ռց, տեհա ոչ, կյալիս չի, տուս չի եկավ: Ման են կյալի դես, ման են կյալի դեն, հարսը՛ որ-դիա՛ն, կորավ պրծավ:

Օրինակ, կյալիս ա ընդիան, շատ ա քյը՛մ, քիչ ա քյը՛մ, քյը՛մ ճաղացի քարերին դե՛մ առնը՛մ, նովին ճըրի նովը կա: Էտ մարթիքն ասը՛մ են, որ.- Սկան ցեթը մեր ճըղացին շահատ չի՞, մեր քարերը խի՞ կկաղնի:

Քյը՛մ են երկուտով, մինը պա՛հն ա վեր ունը՛մ, մինը թի ա վեր ունը՛մ, եղան ա, թե ինչ ա, վեր են ունը՛մ քյը՛մ՝ հայ-հույ անիլեն: Տե-նը՛մ են ըրեքնակը, որ մեծ շողշողին ա տալի, մեծ ըրեքնակի պես, պեծերի պես շողշողին ա տալի:

Ասը՛մ են.- Շան տղի կեւն եկել ա. արչ ա, կեւ ա:

Վերջը քյը՛մ են, թե սեռ տան, տենը՛մ են կը-րովաց:

Ասը՛մ են.- Արա՛, կեւ չի: Սա յաշիկ ա, դութիկ ա:

Ինչ որիս ա, պա՛ն ա, շկակը՛ն են զոռի գյու-ջու հանը՛մ, պիրը՛մ տյը՛նը՛մ տըռա՛նը՛ ճըղացի:

Ասը՛մ են.- Միչի կըռանը տը՛նենք, թողը կոիպչի, լաքա կը՛նգնի:

Տո՛ւնը՛մ պահակութի՛ն անը՛մ: Ըռավոտը՛ վեր են կենը՛մ ու մի խուրջին հաց էլ վեր ունը՛մ ու շկակը՛ն քյը՛մ: Շատ են քյը՛մ, քիչ են քյը՛մ (հին խոսքն ա էլի, հին պառավական պա՛ն ա), քյը՛մ են խոգարածի հրցնը՛մ, տվարածի հրց-

նը՛մ, իշարածի հրցնը՛մ, ֆոթարածի հրցնը՛մ, ընդիան ծխապահին հրցնը՛մ, չոբանին հրց-նը՛մ, կյոնարածին հրցնը՛մ: Յրցնիլով տե՛ն քյ-նը՛մ են, հարցուփորց անիլեն քյը՛մ, շատ են քյը՛մ, քիչ են քյը՛մ, քյը՛մ տենը՛մ են մի ծուրը՛մ հարսնիք են, ըտի ճուր են լցնը՛մ: Քյը՛մ են, մինը ճուր ա խանը՛մ, ասը՛մ ա.- Մ քիր քան,- ասը՛մ ա,- թաքավորի ճանձինն դվե՛րն ա, մեզ շհանց տու էլի:

Յարսնիքն ասը՛մ են թե.- Տե՛ն դյերի, էտ դիշեն մի, հետիկ ըտի բանակը խաղ անը՛մ ա՛ թաքավորի, քյը՛ռցեք:

Քյը՛մ են տենը՛մ, որ դուլը՛ որ, խաղ անը՛մ ա բանակն ըտի՞: Խաղ անը՛մ ա, էտ տրան որ տենը՛մ են, թուփ են ըլը՛մ: Վեր են տը՛նը՛մ, որ նստեն, էտ սաղաթը՛ վիաքվը՛ն են էտ մարթե-րանց կըլխին՝ էտ յաշիկ կըլխին: Թաքավորը տուս ա կյալի մտիկ անը՛մ տենը՛մ, որ բանակը խի՞ ա թուփ ըլել, ուրե՛նը՛ մարթ ա մեռել: Մտիկ ա անը՛մ տենը՛մ, ինչպես մի սե՛նց պա՛ն, կես տեղերնուն հուրիքատին ա տալի: Թուփ են ըլել ըտի: Բինկով մտիկ անը՛մ ա, մի նազիր ա դարգը՛մ, ասը՛մ ա.- Քյը՛մ են պա՛նը՛ պի, թող նրաք շարունակեն իրանց սաղաթը՛ խաղաց-նիլը:

Իրան տղեն խըղցնողն ա: Տա՛ պիրը՛մ ա, տա՛ պիրը՛մ են իք անը՛մ տանը՛մ, տանը՛մ, դե թաքավորի պալատը՛ ո՛վ ա գիղը՛մ որդի, ինչ տեղն ա, պա՛նը՛ք: Շըլակա՛ծ տանը՛մ են, տա-նը՛մ են վե տը՛նը՛մ, բալկոնը՛մ վե տը՛նը՛մ, էտ թաքավորն ասը՛մ ա.- Ասա, տենա՛նք էտ ի՞նչ ա:

Ասը՛մ ա.- Զե հմար նվեր ենք պիրել,- ասը՛մ ա,- քշերը՛ ճուրը պիրել ա, քե հմար շկակել ենք պիրել:

- Լավ եք արել:

Կնիկն ասը՛մ ա.- Վեր ունենը՛ք:

Վեր են կալել, կյնգա՛նն ասը՛մ ա.- Խուրջին ունե՛ք:

Ասը՛մ ա.- Յա՛:

Ընդիան կյնգա՛նն ասը՛մ ա.- Մի խուրջինի մի թայը՛ ոսկի լցրու, մի թայը՛ երծաթ [փող], պի

¹ Խաղ անը՛մ ա բանակն ըտի - այդտեղ բանակը զորավարութուն է անու՛մ (ծանոթ. բանահավա-քի):

իրանց տու, որ էս պառնը մեզ են տվել, մեզ միար պիրել են:

Պիրել են: Միի կնիկը ճուկ ա քննմ, մարթը՝ ճուկ, տղեն՝ ճուկ: Մարթը ասել ա.- Իմ սենյա-կանը տընեն:

Կնիկն ասել ա, կնիկը ախտել ա, ասել ա.- Զէ՛ ըրելխիս սենյականը տընենք, շնորքով ըլի:

Տրած տղեն էլ, որցակը կանչիլիս, ժամը հինգիս, թե երկուսին, իրեքին տրա միար մի ստաքան չայ էլ ա քյնմ, մի շղարթ բուլկի ա քյնմ [գալեթ ա քյնմ, պեչենի, վերջը]: Ընդհան մտիկ անըմ ա տենըմ են, որ էտ պառնը ըտի տըրած, որ տըրած ա՝ էս չայի կեսն էլ ա կիսատ, էս գալեթի կեսն էլ ա կծած: Ասըմ ա.- Դա՛յ՛ մաղաթ, հա՛, իմ հետն ը մերը միել կիսատ են դարգըմ, էս պառնի հմար նախանձվել են:

Էն մի երկու հետ տհե մտիկ անըմ ա տենըմ, որ տհենք ա, ասըմ ա.- Այ հերա, այ՛ մերա, խի՞՛ եք տհե կիսատ տընըմ:

Ասըմ ա.- Վի՛յ, չէ՛, բալա ջան, խի՞՛ ենք տհե...

Պիրըմ են քոծը փոխըմ: Տենըմ ա՝ չէ, նույնն ա, բոծը փոխել են՝ նույնն ա: որ ասել ա՝ ասել ա.- Բալա ջան, բուսը պահի, տես իլա որ աղջիկն ա ուտըմ-խմըմ, կիսատ են պիրը՞մ, թե՞ չէ:

Մտիկ արել տհել էտ ախչիկը պիրուց պղնի լիզը, էն գալեթն էլ կշտին վե տրուց, հիլ արավ քյնաց: Տենըմ ա՝ էտ պառնը պաց ըլավ ու մի հուրըմալաց, մի մազերը ըստիան հետ ախճիկ, ոսկըմը մտած, տուս եկավ, էտ տղեն մի քիչ զարգանդվըմ ա, ասըմ ա.- Դրի-շտակ էր, էս ի՞նչ էր:

Ընդհան էտ ախճիկը էկավ էն ստաքանիցը սհե մի կում խմեց ու նրանից էլ կծեց ու հիլ արավ ըլետ քյնաց նի մտավ: Մի իրեթ հետ, մի չորս հետ ստաքաննին ճուխտ ա պիրիլիս ըլել, ամենակըլխիցը միտ կում արել ա, տհանցից էլ կծել, հիլ արել քյնացել: Ընդհան օրեթի մի օրը մարթը-կնիկը գլափ են արել, ասել են.- Մինչև ե՞ս դի մեր ըրելխեն անկնիկ կենալ, խի՞՛ չենք քյնմ ախչիկ ուզըմ:

Դե թաքավորը քյալ դի թաքավորի ախչիկ ուզիլ էլի: Տհանք տղին ասըմ են թե.- Բա տու անկնիկ դե՞ս մնալ:

Ասըմ ա.- Դե տուք գիղեթ, տուք դեք մտածիլ, էս ի՞նչ դեմ մտածիլ:

Վեր են կենըմ տհանք քյնմ, քյնմ նշան տընըմ: Նշան տընըմ: Տհանք որ քյնմ են հա՛, քյնմ ա պարտնոյին պիրըմ, էտ ըխչկանը հանըմ:

- Տուս արի,- ասըմ ա,- տուս արի, սպանիլ դեն:

Տուս ա կյալի: Ասըմ ա.- Ինձ տենող ըխչկանը՝ քեզ մի վնաս կտա:- էտ ախչիկն ասըմ ա:

- Զէ,- ասըմ ա,- վնաս չեն տալ, ո՞նչ շհանք կտամ, ո՞նչ էն ա՝ կպահեն:

Քյնմ ա պարտնո պիրըմ էտ ըխչկա չափսը վեր ունըմ, ծևի էլի շորը, ընդհան ասըմ ա.- Դե ինչ գիղեթ, կյալ դեն շոր ծևիլ տալ, կարիլ տալ էլի:

Էն ա որ կյալիս ա հա՛, մթած թե էտ նշանը տվել են, ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա,- կնիկը,- էրեխի չափն էլ պիրիցը ոչ հարսնացվի:

Պարտնոյին էլ պիրել են նստցոյել: Պարտնոյն ասըմ ա թե.- Բա են ընչի՞ պարտնոյ են, որ չափը տու դես պիրիլ, էս գիղեթ չափ ու ծնը կնիկարմատի:

- Դե կյալ:

Քյնմ ա, տանըմ են կարըմ: Կարըմ ա, շի-նըմ ա էտ ըխճկանը վրովը: էտ պարտնոյը պիրըմ ա տալի թաքավորի տղին՝ էտ շորերը: Թաքավորի տղեն ասըմ ա.- Ես դեմ քյալ պիրիլ [հարսնացուից]:

Դա՛: Պիրավ:

Ասըմ ա.- Դե տար ընդի տի,- մերը:

Տանըմ ա ընդի տընըմ: Թաքավորն ու իրան կնիկը հաց ուտիլիս են ըլըմ, չայ խմիլիս, էտ ըխճկանը շորը հքցըմ, իրան շորերը հաքըմ էտ ըխչկա, պարտնոյի շորը հքցըմ, թևն ընգըմ, որ ինչպես ակնուրեքնալ: Որ էտ տըները պաց անըմ ա, երկուսը իրար թևն ընգած տուս են ըլըմ, հա՛ թաքավորը ստաքա-նը ծեռին մնըմ ա սհե պերսանը պաց արած: Մերը ասըմ ա.- Ես ի՞նչ էր, էս որդիա՞ն էր: Մեր ուզածիցը ավելի ա լավը:

Էն ա ասըմ ա.- Սհե, սհե:

Էն ա հե՛չ, պիրըմ են օխտն օր, օխտը քշեր հրսանիք անըմ: էտ ախչիկը կյալիս ա

ըրեխովանը, կյալիս ա ըրեխովանը: Քոծե-
րն են պահիւմ էլի ըրեխին: Քշերի մի վախտը
վեր ա կենըմ լայա տալի ըրեխին՝ էտ կնիկը,
էտ ախչիկը: Ասըմ ա.- Նենա, նենա, բալա
ջան,- ասըմ ա,- աօր քանի տարի ա,- ասըմ ա,-
ես պահված՝ ո՛նչ արևն եմ գիղըմ, ո՛նչ անծրևն
եմ գիղըմ, ո՛նչ քաղաքի մէջն եմ գիղըմ, ո՛նչ
կինո-թատրոն եմ գիղըմ:

Նենա ա կանչըմ տիե ըրեխին: Էտ թաքա-
վորի տղեն տեղըմը մտնըմ ա՝ քնած: Ըռա-
վոտը վեր ա կենըմ...

Խաբարը տանք էտ ըխչկա հորը, խաբարը
մտնըմ ա, որ թաքավորի տղի ծեռին ա,
թաքավորի տղի ծեռին ա: Մի էծ ա վեր ունըմ,
մի շիռ, պիղըմ ներքեւ էտ նազիկ-վազրների
կշտին ածըմ, էծը պար ածըմ: Էծը որ պար
ածըմ ա, հա՛, էտ ախչկան թաքավորի տղեն
ասըմ ա.- Դե վեր կաց, շորերդ տ հաքի քյ-
նումը:

Ասըմ ա.- Չէ՛, կարալ չեմ ըրեխեն բրախեն:

Չոռ անըմ ա, քյնըմ են: Է՛, որ հարգի կըլ-
խիցը, պալատիցը վեր ա եկել, ըտի կիսըմը
մտիկ արել տեհել իրան հերը էծը պար ածըմ
ա, եղ ա տռռել:

Ասել ա.- Խի՞ ես եղ տռռնըմ:

Թե ասել ա.- Էլ կյալիս չեմ, կյալիս չեմ,-
ասել ա,- ոտներս ցավըմ ա: Մչա նստել եմ,
ոտներս ցավըմ ա:

Վեր ա կենըմ էտ տռռնըմ, էտ տռռնըմ:
Քշերի մի վախտը շուն հերը կյալիս ա տուռը
կտրըմ:

- Տուռը պոց արա, տեղ տվեք:

Թաքավորի տղեն ասըմ ա, որ.- Քյնը ընդի,
նիհանց կշտին տեղ կա, քյնը ընդի:

Ախչիկ ա էլի, ջիգարը վառվըմ ա, ասըմ
ա.- Է՛, հա հիլա կյա շեմքըմը ընգնի, շեմքըմը
պառնի:

Շեմքըմը պառնըմ ա, պոց անըմ ա, պառ-
նըմ ա: Վեր ա կենըմ ըխչկա ջիգը տռռնակը
հանըմ ա, ըրեխեն մորթըմ ըրորոցի միչին:
Թաքավորի տղեն քշերը վեր ա կենըմ, ասըմ
ա.- Է՛, տ ո՛նց ա ըրեխեն լաց չի ըլըմ:

Վեր ա կենըմ տենըմ, որ սիպտակ շորը՝
կարմիր արին: Ըրեխեն...

Էտ մարթին ուզըմ են թե սպանեն, ասըմ ա.-
Հա՛, կացեք, էս որ ինձ սպանըմ եք, ջերերուս

ակը տանք, ու՜մ ջըբըմը տռռնակը՝ առնոտ, ըլի,
նրա տռռնակն ա:

Ակն են տալի, էտ ըխչկա ջըբիցը հանըմ
տռռնակը՝ առնոտ: Թաքավորը հրամայըմ ա,
որ հարսի երկու կուռն էլ կտրի, երկու ծիծն էլ,
ըրեխեն էլ դոշը կապի, տղի մեյդանը տանի,
որ որդի բանակը խղցորել ա, տանըմ են ըսի
մեյդանը՝ ըտի: Մեյդանն են տանըմ, էտ անդեր
ակռավը ծեռին կյալիս ա ու ենիք անըմ, ջամ-
դաք ա էլի, տեհել ա, կըտցըմ ա: Քրիստոսն
ասըմ ա, որ.- Անիծալ,- ասըմ ա,- քյոցեք տե-
հեք էն ի՛նչ ա, որ էն միլլեթի ծեն ա կյալի:

Էս դռնին կա է՛, դռնը քյնըմ ա՝ երկու
ոտը հրե կարմիր ա, տենեք, տենեք ո՛չ, երկու
ոտը կիսիցը կարմիր ա: Տանըմ ա ոտը առ-
նըմը թաղըմ, քյնըմ Քրիստոսին ասըմ, որ.-
Սիե, սիե, մի ըրեխա էլ կա՛, մի մեր էլ կա: Սիե
կըռները կտրատած, սիենց, սիենց, ակռավը...

Ասըմ ա.- Ի՛նչ անեմ, նա սև հաքնի, սիպ-
տակ կըլխին քցի,- ասըմ ա,- ակռավ տռռնըմ,
նրա միսը շան միս ըլի: Քու միսն էլ արթուս
ըլի,- էն ըջին ա ասըմ դռնին: Ընդիան ասըմ
ա.- Թաշկինակս տար,- ասըմ ա,- էտ հարսին
ասա, որ կուռտ տի վրեն, թաշկինակը քսի՝
սըղանա: Էն մի՛ն էլ ծըծերդս էլ տի՛ սըղանա,
ըրեխի կյալիսն էլ վրեն ու քսի՛ սըղանա:

Սըղանըմ ա, սըղանըմ ա, մնէլ ա դարգըմ
դռնին, ասըմ ա.- Քյնը ասա՛ ի՛նչ ես ուզըմ,
տարական խորակ ես ուզըմ, թե՛ հայի հայդ-
նական ճաշ էլի:- Ասըմ ա:

Ստածըմ ա էտ հարսն, ասըմ ա.- Ինձ տա-
րական ուզե՛մ, մի տարի անձրև դի անիլ, մի
տարի կարկուտ դի կյալ, դես դի անիլ, դե՛ն դի
անիլ, սով դի ըլիլ: Ինձ հո՛մար լըվըմ են ա, հայի
հայրնական ուզեմ: Հայ հայրնական,- տո՛ւ ա-
սըմ ա,- հայի հայրնական:

Խըչըկընըմ ա էտ մարթը՝ էտ Քրիստոսը՝
հայի հայրնական:

Տո՛ւ էտ ախչիկը, էն կարողութիւնը եղ ա
քցըմ, էն տները շինըմ, թաքավորի պալատի-
ցն էլ էլել: Բաղ ա քցըմ, որ բլբուլը միչին
խաղ կանի, որ էլ ասիլը պետքը չի: Մի ծառ ա
ըլըմ՝ պուճրիկ, հինգ հատ խնձոր ա ըլըմ,
հինգ հատ՝ էտ ծառի վրա: Էն ա էտ տղեն էլ
մեծանըմ ա, ով տարով կենեմանա, նիհանց օրն
են մեծանըմ: Էտ ըրեխեն մեծանըմ ա:

Ասըմ ա թաքավորի տղեն.- էն ա ղուրդու-
ղուշը միի կերել ա, բանակս տանեն:

Չազար հատ ղոշուն ա տանըմ: Վիրի հար-
գիցը մտիկ ա արել տեհել՝ կյալիս են, մարթը
ղաքին ծիով: Տղին ասըմ ա.- էն քու հերն ա,
այ, ահա՛, տենըմ է՞ս, իրան բանակը պիրըմ
ա խըղըցնի:

Որ կյալիս ա դիմացը, էտ տղեն ասըմ ա.-
էն ո՞վ ա իրավունք տվել, առանց թաքավո-
րին, որ ըստեղ շենք են շինել, բաղ են քցե՞լ,
պարկ են քցել, շնորք են քցել:

Ընդհան քյնըմ ա, քյնըմ ա՝ տհանք վիրեղ,
ղի ա տալի, ասըմ ա.- Քիրա ցա,- ասըմ ա,-
կարելի՞ ա,- ասըմ ա.- ընթունես մեզ:

Ասըմա.- Չինգ էտքան կընթունես, հինգ էտ-
քան:

Չազար ծիավոր ա ըլըմ: Ընդհան վեր են
կյալի էտ բանակը, տասներկու տղա մին մնու-
ցից մեծ են ըլըմ էլի մեհնց, էտ տասներկու
տղեն կյալիս են տուն՝ ղոմաղ են կյալի:
Նստըմ են գրից են անըմ, դես-դեն, օ խա՛ր, օ
շա՛ռ: Էտ տղին էտ ախչիկը տանըմ ա բաղը
ման ածըմ, ասըմ ա.- Ինչ միթք ասես՝ կե,
իրավունք ունես, էս ծառի միթք պուկես ո՞չ:

Ասըմ ա.- Այ քիրա, էս հալ բաղի միչին, խի՞
են էս ծառի...

Ասըմա.- Չա՛, տրան հիլ են արել տենամ
ի՞նչ տեսակ խնծիր ա ըլըմ:

Որ նա անց ա կենըմ, թաքուն պուկըմ ա ու էտ
հինգն էլ քցըմ նրա պալտոնի ջիբը, պալտոնի
ջիբն ա քցըմ: Ընդհան կյալիս են, կյալիս են,
որ թեղ քաշըմ ա պալտոնը հանըմ կախ անըմ,
տենըմ ա թռնթե ծանդոն ա, ասըմ ա.- էս ի՞նչ
ա ջըբիդ՝ ծանդոն:

Ասըմ ա.- Իմ ջըբընը գատ չկա:

Ծեռը տանըմ ա, տենըմ, որ խնծիրն ա, էտ
հինգ հատ խնծիրը:

Ասըմ ա.- էս խնծիրը, են քեզ խնթրեցի, որ
պուկես ո՞չ: Խի՞ են պուկել:

Ասըմ ա.- Ամա՛ն, իմ հոքին քե աստոծ, թե
ես պուկած ըլեմ:- Էտ մարթը սիենց ղաքին
ծոււնդոն ա տընըմ, որ.- էս էտ պաղը արել չեն:

Էն տղեքն էլ ասըմ են.- Սենք տեհել չենք:

Վերջը որ շատ հոքին հանըմ ա, ասըմ ա.-
Չա՛, տեհ ա ծառը: Բա էս էլ սրան չի ձգա՛հ է՛,
էտ տղին չի ձգա՛հ, որ իմ կըռները կտրեցիր,

իմ ծըծերը կտրեցիր, իմ ըրեխին դոշիցս կա-
պեցիր, պիրի ըստի քոճխեցիր: Գիդիր՝ էս
գիղըմ չեն:

Ընդհան կյալի տհանց էնիք անըմ: Էրկու-
տակ են ասըմ, համա էս կարալ չեն ասեն:

Վերջը էտ տղեն կյալի իրան կյնգանը տեր
կաղըմ, խաբարը հասնըմ թաքավորին, որ
աչքըտ լիս, սիե, սիե, սիե, տղեն մեծացել ա,
հարսըտ սիե փայ ա էտ քցել, սիե կարողու-
թին, սիե շենքեր ա քցել՝:

34(34). ՉԱԼԱԼ ԱՇԽԱՏԱՆԸ

..... բայց ասըմ ա.- ի՞նչ կտա՞ս?

Ասըմա.- Ուզո՞ւմ ես,- ասըմ ա,- հինգ մանեթ
հալալն ես ուզո՞ւմ, թե՞ հարիր մանեթ հա-
րամը:

Էտ մարթը մտածըմ ա, մտածըմ, ասըմ ա.-
Չինգ մանեթ հալալն են ուզըմ, հարիր մանեթ
հարամն ինձ պետկ չի:

Պայմանավորվըմ են, մի տարի աշխատըմ
ա էտ մարթը, մի տարուց եղը էտ խաղեյինը
տրւմ վարծը՝ հինգ մանեթ, տալիս ա: Դե հինգ
մանեթը ի՞նչ պտի առնի էտ մարթը: Վի կա
կենըմ քյնըմ բազարը՝ շուկա, որ մի պոն
առնի էլի ըրեխանց համար:

Ասըմ ա.- գոմե՛ս մի խաղալիք էլ ա առնեն
ղարգեն, ի՞նչ անեն:

Էտ բազարընը ման կյալիս տեղը մտիկ ա
անըմ տենըմ, որ մեկը սիենց բազարընը, ծեն
տալով, ման ա կյալի:

- Այ խրատ են ծախը՛մ, այ խրատ են
ծախը՛մ, հա՛յ խրատ առնող, խրատ առնող:

Էտ մարթը մողիկ ա քյնըմ, ասըմ ա.- Էտ
ի՞նչ են ծախըմ, այ մարթ:

Թե.- Խրատ են ծախըմ:

Թե.- Քո խրատըտ ի՞նչ արծե:

Թե.- Խրատըտ արծե հինգ մանեթ:

Էտ մարթը մտածըմ ա, մտածըմ, ասըմ ա.-
էս հինգ մանեթով ես էլ ի՞նչ պտիմ առնուլ, որ

¹ Բանահավաքի այն հարցին, թե բանասացը հե-
քիաթը որտե՞ղ ա ու՛մից էլ լսել, բանասացը պա-
տասխանեց. «Այ, էնքան ասին որ, ես ին գիղեն»
(ծանոթ. բանահավաքի):

² Չեքիաթի սկիզբը չկա, որովհետև ծայնագրու-
թյունը ջնջվել է (ծանոթ. բանահավաքի):

իմ ըրեխանց հմար ինչ անեմ, էն ա էս հինգ մանեթը տամ՝ էս խրատը առնեմ:

Էտ հինգ մանեթը տալիս ա էտ մարթը, թե ասըմ ա.- Դե մի խրատ տու:

Էտ մարթը հինգ մանեթը վերցնըմ ա, ասըմ ա.- Դամբերութիւն անողը աշխարքի չափ յեշամիշ կըլի:

Ասըմ ա.- Էտ է՞ր, պրծա՞ր:

Ասըմ ա.- Դա, պրծա:

Նորից եղ ա տռնըմ էտ մարթը գնըմ էտ խազեյիճի տունը, ասըմ ա.- Խազեյիճ, մի տարի էլ ընթուճիլ չե՞ս:

Ասըմ ա.- Կընթուճեմ, բայց էլի հինգ մանեթ հալալն ես ուզը՞մ, թե՞ հարիր մանեթ հարաւըմ:

Ասըմ ա.- Դինգ մանեթ հալալը:

Ասըմ ա.- Դե լալ:

Անըմ ա, մի տարի էլ աշխատիլուց եղը մարթը էլետ պերըմ ա տրա հինգ մանեթ հալալը տալի, տա գնըմ ա բազաղը, որ պան առնու, տենըմ ա էտ նույն մարթը, էլետ տհենց բղալիլով, ման ա կալի, որ.

- Խրատ եմ ծախը՞մ, խրատ եմ ծախը՞մ:

Մոտիկ ա գնըմ, ասըմ ա.- Այ մարթ, ի՞նչ արծի խրատը:

Ասըմ ա.- Դինգ մանեթ:

Ասըմ ա.- Լալ, կա-չկա,- ասըմ ա,- տամ էս հինգ մանեթն էլ. սրամոլ մի պան չեմ առնելու, ի՞նչ անելու եմ:- Տալիս ա, ասըմ ա,- էս հինգ մանեթն առ,- ասըմ ա.- մի խրատ տուր ինձ:

Էտ հինգ մանեթը վերցնըմ, ասըմ ա.- Դամ-փերությունը կյանք ա, քյնա:

Նորից էտ մարթը վիր ա կենըմ, քյնըմ էտ խազեյիճի տունը, ասըմ ա.- Խազեյիճ, - ասըմ ա.- էլի,- ասըմ ա.- փող չունիմ կնալու, ես ուզըմ եմ նորից աշխատեմ, կընթուճե՞ս քեզ մոտ:

Խազեյիճն ասըմ ա.- Լալ,- ասըմ ա,- կընթուճեմ,- ասըմ ա,- բայց էլի,- ասըմ ա,- ես պետք ա քեզ ասեմ հինգ մանեթ հալալն ես ուզը՞մ, թե՞ հարիր մանեթ հարաւըմ:

Թե ասըմ ա.- Դինգ մանեթ հալալը, խազեյիճ,- ասըմ ա,- ես հարամի հետ գործ չունիմ:

Վեր ա կենըմ էտ մարթը մի տարի էլ աշխատըմ, մի տարուց եղն ասըմ ա.- Խազեյիճ, դե

իմ փողերը տու, ես վե կենամ քյնամ մեր երգիրը:

Խազեյիճը պերըմ ա հինգ մանեթ հալալը տալի, էտ մարթը վերցնըմ ա կընըմ շուկայից էլ մի քանի խաղալիք, պան առնըմ, ճամփա ընգնըմ կալի, որ կա իրա երեխանց, պանին տենու, շատ երգար ծամանալ ա կնացել ա, ասենք տրա ծառայությունը քաշել ա մի երկու տարի էտտեղ ծառայածը, պայց իրան թափառական կյանքը տասնյակ տարիների ա քաշել, ինչ ըլել, էլ հույս չունի էլի, ինքն էլ արթեն մեծանալու վրա յա, հույս չունի, որ ըրեխեքը, պանը կարող ա կենթանի ըլին, պան ըլին: Վեր ա կենըմ կալի, ասըմ ա.- Բյնամ:

Կալիս ա իրանց երգիրը, տենըմ, որ, էտ մարթը, իրան տան տեղը, էտ ըրեխեքը մեծացել են՝ իրան, մեծացել են, իրան տան տեղը հոյակապ մի երկու հարգանի տուն ա շինած, ու տրսից ճնանընըմ ա, իրան էլ ճնանչող չկա: Տենըմ ա կինն ա ըստը, լալ մհենց ինքը՝ առույգ ու մի երկու հատ էլ մհենց բեխատեղերունն սևացած տղերք են՝ ջահել տղերք, հետը հանաք են անըմ, շուլուլ են անըմ, մտածըմ ա, թե ասըմ ա.- Ուրեմը, երևի սրամը,- ասըմ ա,- ըրեխեքս չկան, էս էլ իրան սիրեկաննի ա պահըմ էս կնիկս ու տհենց ինչ անըմ ա,- ասըմ ա.- դե որ սհենց ա, սհենց ա, ըրեխեքս չկան, ինքն էլ ինձ մոռացել ա ու ըսենց էս ու՞մ ա ճարել բերել ըստի, սհենց կյանք ա վարըմ: Ես գնամ մի հատ պան առնեմ, հրացան առնեմ, ըրիգունը կամ իրան էլ, սիրեկաններին էլ սպանեմ ու էս էլ ինձ էլ մի պան, մի փողցանքի տամ, էլ ընչի՞ եմ ապրըմ, որ ըրեխեքս չկան:

Էտ մարթը գյնըմ ա ման կալի, գյնըմ մի տեղից մի հրացան ճարըմ: Ըրիգունը մթնըմ ա, կալիս ա մթան մեջ հեռվից մտիկ անըմ ա, մտիկ անըմ ա, թե ոնց են տհանք իրար հետ շուլուլ անըմ, բան անըմ: Դրացանը մի հատ երեսն ա ունըմ, ասըմ ա.- Գրակեմ:

Որ ասըմ ա՝ կրակեմ, ու էլի միտն ա ընգնըմ էն առաջի վերցրած խրատը, որ չէ՝ ես մի տարեն աշխատավարձս տվի, որ ասալ. «Դամփերությունը կյանք ա», ու ասըմ ա.- Մի քիչ էլ համփերեմ:

Յրացանը հետ ա քաշըմ, էլի բավականի սպաարըմ, տենըմ ա, ասըմ ա.- Չէ՛, էն ա տենըմ եմ՝ սիրեկաննին եմ էլի, էլ ո՞վ պոի ըլի ըստի, մեզ բարեկամ չունենը, պան չունենը:

Մեկ էլ հրացանը որ երեսն ա ունըմ որ կրակի, հանկարծ էտ տղերանց մինը, թե ա- սըմ ա.- Մամա՛,- ասըմ ա.- բա մեր պապայիցը հեջ, ինչ գնացել ա, նամակ չե՞ս ստացել: Նա կարող ա սաղ ըլի, ինչ ըլի:

Որ էտ իմանըմ ա, զգըմ ա, որ տա իրան տղերքն են, երևի մեծացել են: Յրացանը եղ ա քաշըմ ու ըստի մխելի կենըմ, նորից մտիկ ա- նըմ տրանց, լսըմ տենըմ, որ, իրոք, իրանց տղերքն են, մերն էլ պարասխանըմ ա տը- րանց խոսքերին: Մեծացել են, հարուստացել են, տհենց տուն-տեղ տառել, կամաց գյնըմ ա մողիկ՝ տուն, պարի ըրուգուն տալի, ինչ անըմ ճնանցըմ են: Կինը ճնանցըմ ա, տղերքը չեն ճնանցըմ: Նորից կինն ըստեղ ծանոթացըմ ա, որ սա ծեր հերն ա, էն կորածն ա, որ կնացել ա էսենց, էսենց ծեզ կարել ոչ տենու, և էտ մարթն էլ իրան միջին մտածըմ ա, ասըմ ա.- Ուրեմը ես եթե չէի համփերել, համփերությունը, իրոք որ, կյանք ա բերըմ, եթե չէի համփերել, առաջի կրակոցից կրակել ի, ես կա- րող ի իմ տղերանց սպանած ըլել, կամ եթե ես հարուր մանեթ հարամն ի վի կալած եղել, կարող ա տարել ի մի ուրիշ շաշ պանի տվել, որ նա ինձ համար փորցանք էր պերել: Ի՞մ հալալ հինգ մանեթը ինձ միար տհենց երջան- կություն է բերել:

Եվ սկսըմ ա տղերանց հետ ապրիլը:

35(35). ԾԵՆՈՐՈՒՄԻ ՄԻՆԿԵՔԸ՝

Մի ծննորս մարթ օխտն ախչիկ ունի, մի էլ կնիկը, ինքը՝ ինքը հոքի: Ծննորս մարթ ա էլի, ինչքան քցըմ ա, ինքը հատ ծուկն ա կլալի, էլ էվել տուս չի կլալի: Կնիկը պիրըմ ա տրամ ստիարըմ.- Այ՛ մարթ,- ասըմ ա,- էս ո՞ր ես սև օցերը պահըմ, մեզ միար կրակ են տառել, էն ա տար ռաղ արա, կպիրես ինքը ծուգը, կպի- րես մենք էլ կուտենք, աբուռին կապրենք: Էս ինքը սև օցը պիրել ես պահըմ մեր տանը, ամենքս մնովը կարալ չենք բավարարվենք: Պի

սիանց տար ռաղ արա, մենք էն ա, ինքը ծուգը կքնռա կպիրես, կուտենք երկու ժամ, իրեք ժամ յուլա կքնռնք կապրենք:

Էտ կնիկը տրամ ստիարըմ ա, էտ մարթը վեր ա կենըմ քյնըմ մի անտառի դրաղին մի լավ խնձորի ա ըլըմ, խնձորքու տակին մի ֆոր կտրըմ, կլալի էտ ըրեխանցը վիաքըմ, օխտն ախչիկ, տանըմ ֆոր կտրըմ, կարպետն էրես- վը քցըմ ու ինքը ծառի կլլլվալը ըլըմ, կնիկն էլ տակին ասըմ ա.- Վիաքեցեք կիտեցեք, վիա- քեցեք կիտեցեք խնձորը:

Ասըմ են.- Շատ լավ էլ կլլի:

Վիաքըմ են, որ մխելի կիտվըմ ա հա՛, պրծ- նըմ են, ասըմ ա.- Դե վրա թռեք, բուրոտ էլ.- ըխնկերանցը,- որդտ շատ վեր ունեք՝ ծերն ա, ծեզ հմար ա:

Կարպետն էլ հետը՝ էտ ըրեխեքը ընգըմ են ֆորի մեջը, ֆորն են տառնըմ: Ըրեխանցը խնթըմ ա, ասըմ ա.- Կարպետը տվեք:

Էն օխտը ըրեխին խնաիրըմ չի, կարպետն ա նրա դժողը: Կարպետը պրցըմ են իրան տա- լի, մի ճըղացի քար պիրըմ ա վրեն տնըմ, անց կենըմ քյնըմ: Դա՛, էտ ըրեխեքը մնըմ են ֆորի միջին, ֆորին քանդիլեն, ծեռով քանդիլեն- քանդիլեն՝ մի էսքան ծակ են պաջ անըմ, տենըմ՝ ֆորի տակին թովվա ա, ծիան ա կա- պած, խուրմեն, չամիչը ըղաքներնին ախոռ- ներըմ: Իրանց շորերից թուկ շինըմ կախ անըմ, էն ըրեխեն՝ պլուճուրը, տիանց էտ չամիչը կրըմ ա, ուտըմ են ապրըմ, ուտըմ են ապրըմ էտ ֆորըմը: Էտ ծիապանը՝ էտ կոնուկը, քյնըմ ա թաքավորին հայրըմ, ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, ծիանը օրն օրին լղարըմ են, գիղեմ ո՞չ, թե էտ ի՞նչ ա: Կերն էլ լավ եմ տալի, թիմարն էլ լավ եմ թիմարըմ, թե տիանց ի՞նչ պան ա պատահել, որ տհենց ա ըլել:

Թե ասըմ ա.- Բա պահալ կաղնեցեք,- ա- սըմ ա,- ըզգուշ կացեք,- ասըմ ա,- տա՛ մի պան կա,- ասըմ ա,- որ տենաք:

Տենըմ ա օջորքիցը մի ըրեխա կախ արին, եկավ տոպրակնին լցրեց, նրանք քաշեցին տարան: Նիանք տոպրակը լցրին, նիանք իրանց փալաս են ունացել էլի, թուկ են շինել, քաշըմ տանըմ են, նրանով ապրըմ: Փռնըմ ա: Պահալ են կաղնըմ, փռնըմ էտ ըրեխին, ասըմ ա.- Բա սիե, սիե, մենք օխտը քիր ենք,

օխտիս էլ մեր հերը պիտեւ և ֆորեւ ըստի: Հմի էլ անճարությունից եկել ենք ըստի, էս ծիանը պահըմ են:

Քյնըմ են թաքավորին հայրընմ.- Թաքավորն ապրած կենա, սիւս պա՛ն ա, ո՞նց կա՛նենք:

- Պա՛, ուրախալի ա, քյնացեք պիտեք:

Թաքավորը տանըմ ա էտ ըրեխանցը, էտ օխտը ըխականն էլ իրան հաշվով փօկի անթամ շինըմ, պահըմ, պըծպեծըմ, շկոլ տալի, ամեքը իրանց շնորոքով քյնըմ են ապրըմ, մենձանըմ, ըխչկեք տառընըմ:

Էն ծկնորսը, էն ծնողը, որ են քյալեկն արեւ ա, ինչքան քյնացել ա՝ երկու ծուկը, էստի ա թռ ըցել, էնդի ա թռ ըցել, երկու ծուկն ա տուս կյալիս ըլել: Հմի ինքն էլ ա կըլիսին տալի, կնիկն էլ:

- Վա՛, վա՛, վա՛, բա որ սիւս դինք ըլիլ, խի՞ մեր ըրեխանցը տարանք ֆորեցինք, ֆորն ածեցինք, մենք էլ սօր սիւս գուրկ մնացինք:

Բարեխիղճ մարթիքը թող աշխարընը լի ու բոլ ըլեն, էն ծկնորսն էլ քյնա իրան կյալիսը քարերովը տա:

36(36). ՀՈՐՈՒԿԱՆՆ ՈՒ ԳԱԶԱՆՆԻՍ

Մի տղա ա ըլըմ, անտառընը ապրըմ ա, հորսկանություն անըմ ա, հորսը պիտըմ իրան սենյակընը, անտառի միջին էլ սենյակ ա ունենըմ, հորս անըմ ա պիտըմ, էտ մսովը ապրըմ ա՛:

Մի ըրուգուս հորս արած կյալիս տեղը, կյալիս ա տենըմ՝ մի աղվես իրան տան մոտը վեր ընգձծ: Մի կտոր միս էլ տրան ա տալի, ասըմ ա.- Պա՛ն չկա, գենթանի ա, թող ուտի:

Մյուս օրը քյնըմ ա անտառը ման ա կյալի՝ էլի ֆորս անիւլ, տեսնըմ ա՝ ֆորսի ման կյալու ժամանակը, ըրուգուսըն տուն ա կյալի տեսնըմ, որ... ուրեմը, էտ աղվեսը, տեսնըմ ա՝ մի արչ անտառովն անց ա կենըմ, ծես ա տալի.- է՛յ, արչ ախպեր, դո՞րն ես քյնըմ, իմ տերը քեզ մի գյուլլընը վե կքցի, հետ արի ըստեղ:

Արչը էլի կյալիս ա աղվեսի մոտ վեր ընգնը՝: Արչը վեր ա ընգնըմ մոտը, ըրուգուսը հորսկանը կյալիս ա տեսնըմ, որ արչն ու

աղվեսը՝ ըտի: Մի կտոր միս նրան ա տալի, մի կտոր միս էլ նրան ա տալի: Մյուս օրն էլ ա, հորսի ա քյնըմ: Էտ աղվեսը տենըմ ա, որ մի կել ա դենն անց կենըմ, դի ա տալի.- է՛յ, կել ախպեր, դո՞րն ես քյնըմ, դեսն արի, իմ տերը որ տեսիւմ, քեզ մի գյուլլընը վե կքցի:

Էն կելն էլ էկաւ տրիանց մոտ վեր ընգձ՝: Մյուս օրն էլ հորսկանը էլի հորսի քյնաց: Էտ աղվեսը տենըմ ա՝ մի ասլան ա անց կենըմ անտառովը, դի ա տալի.- է՛յ, ասլան ախպեր, դո՞րն ես քյնըմ, դեսն արի, իմ տերը որ տեսիւմ, քեզ մի գյուլլընը վե կքցի, արի ըստեղ:

Ասլանն էլ ա կյալի տհանց մոտ վեր ընգնըմ: Հորսկանը կյալիս ա տենըմ, որ, ուրեմը, էտ գազաննին թուփ ըլած ե՛ն: Էտ ա մյուս օրն էլ որ հորսի ա քյնըմ, էտ աղվեսը տենըմ ա՝ օթընը մի դարա-դուշ ա պտիտ կյալի:

Էտ դարա-դուշին ասըմ ա.- է՛յ, դարա-դուշ ախպեր, դո՞րն ես քյնըմ, իմ տերը տեսիւմ՝ մի գյուլլընը վե կքցի, տու էլ ցածրացի այստեղ:

Նա էլ ա ցածրանըմ: Կյալիս են մսլըհաթ անըմ, տեսնըմ ա, որ բոլորն էլ էկել են, բոլորին էլ միս ա տալի:

Էտ աղվեսնին խորամանկ են ըլըմ, տաւ կարքաղընը ա հընգերտանցը, ասըմ ա.- Ընչի՞, մեր տերը որ կյալիս ա մեզ միս ա տալի, ընչի՞ չենք մեկիս տալի, մեկըս բաժանենք մեր միջին, ա՛յ էլ տեսա, որ մենք էլ ենք պա՛ն հասկանըմ:

Պիտըմ են աղվեսին ասըմ.- Դե տու ինչ որ անիլ դես, տու արա, մեզ էլ տու պա՛ն տու:

Էտ բոլորն իրանց պաժմենին պիտըմ են տալի՝, էտ աղվեսի առաջին վեր ածըմ ա, աղվեսը նորից տըրանց բաժանըմ ա՛:

Օրերից մի օրը էտ աղվեսը տըրանց հետ մըսլըհաթ անըմ ա, թե.- Ինչպե՞ս անենք, մեր տըրունչ հաճար մի կին ճարենք պիտենք մեր տըրունչը տանք, անկին մարթ ա էլի:

Ասըմ են.- Բա ի՞նչ անենք, աղվես ախպեր:

Ասըմ ա.- Փըլան թաքավորին մի ախճիկ ունի, էն ա քյնանք վերցնենք, հա՛ պիտենք:

- Բա, ո՞նց կվերցնենք:

Թե ասըմ ա.- Իրան այգընը ման կյալիս տեղը՝ քառասուն դարավաշի հետ, մեր դարա-դուշը կվերցնի, մընք էլ կկանք հետը:

Վեր են կենք ճանապարհ ընգնք, քնքնք
թաքավորի պալատի դրաղը կտրք, տեսքնք
են՝ ախքիքը աղքնք ման ա կյալի՝ քառասուն
դարավաշք, վերքքնք են տրքնք, դարա-դուշը
վերքքնք ա, հա՝ տրքնք փքխքնքնք օթք, էտ
մեկել գազանքնքնք էլ տաքիքնք մի հեռը կյալիս
են տուն: Որ կյալիս են տուն հա՝, տանք են
տըքնք, գազանքնքնք տենք են իրանք տերը
հորքը արած կյալիս ա հեռու, մի կես կիլո-
մետր հեռու առաքնք են քնքնք, պար կյալեն,
ծուլ ըլիլեն, հաղ անիլեն, իրար շալալք պրծ-
նիլեն՝ քնքնք են տուրուքնքնք ծուլ են ըլքնք, միս
ա տալի, չեն վերքքնք, ուրխանալով, տու-
րուքնք հետ հաղ անիլեն՝ կյալիս են սենյակի
տուքը: Էտ հորսկանը տուն ա մտնքնք տենա՝
ինչ կա, ինչ չկա, տեսքնք ա՝ մի ախքիք իրան
տանք: Էտ ախքիք, որ մնքնք ա մոտիկ անիլիս,
մեք գարնանքնք ա, թե էտ ախքիք էտ ընչի՝ ա
ման կյալի:

Էտ ախքիքը առաչարկքնք ա, ասքնք ա.- Քու
գազանքնքնք են ինքնք պիրել, ընչի՝ են էն ըքքնք,
արի՝, ներս արի:

Էն ա ներս ա մտնքնք էտ մարքը, նոր ասքնք-
խոսքնք, իրար ծանոթանքնք են, հա՝, մեկ էլ¹ ...

... Էտ ա թաքավորը... մի պառավ կնիկ
թաքավորիքնք ասքնք ա.- Ի՞նչ էտ բոյիքնքնք ունքնք,
որ էտ քու ախքիքնքնք քքքնքնք:

Ասքնք ա.- Պառավ, ինչ որ կուգես, քեզ
կտամ, քու քաշքի միքնք ոսկի կտամ, թաք իմ
ախքիքնքնք քքքնքնք:

Պիրքնք ա մի սավառնակ չիքնքնք էտ թաքա-
վորը, տըքնք միչիքնք տըքնք, տա օթքը կյալիս
ա, սենքնք էտ տենքնք ա անտառի կես տեղը մի
օթախ կա, էտ օթախի թուլքնք վեր ա կյալի:
Կետ ա ըլքնք, չարդարքնքնք իրան էտ սավառ-
նակը ըտի պահքնք ա, ընքել ինքը կյալի,
ընքելը կանքնքնք էտ հարսիքնք.- Բալա՝ քան,
քյախի կնիկ են, խընթքնքնք են՝ թող անես կյալ
քու տանքնք ապրեն, տըքնքնք սըրքիքնք, կառա-
վարեն, տուք էլ ինքնք հաք տաք, ապրեն:

Տա մոտ չի թողքնք, էտ ախքիքնք չի թողքնք:

Մարքը ըրուգուքնք կյալիս ա հորսատեղիք,
ասքնք ա.- Էն ի՞նչ կնիկ ա:

Թե.- Մի պառավ կնիկ ա, եկել ա, ասքնք ա՝
թող արքե կյալնք տուն:

Ասքնք ա.- Պառն չկա, իմ մարիքնքնք էլ էր
պառավ, նրան էլ մնան ա, թող կյալ մեր տանք
մեր մի կտոր հաքնք ուտի, ապրի էլի, թող կյալ:

Մարքը կյնգանք գոռ անքնք ա, կընիքնք չի
համաձայնքնքնք, պիրքնք են տո՛ւն: Շատ ա
կենքնք, քիչ ա կենքնք, էտ պառավը էտ իրան էտ
տան կընոքնք ասքնք ա.- Սրի՝ քյնքնք կետքնքնք մի
ըզքսնքնքնք կյալքնք, ման կյալքնք՝ կյալքնք էլի՝
լըվածիկ-պնքի, դեսի-դենի:

Իրան սավառնակը ընդեր պահած ա ըլքնք,
ինքը քյնքնք ա սավառնակիքնք էտ կողքնք, են
կողքնք նայքնք, մեքնք:

- Պի՛յ,- ասքնք ա,- էտ ի՞նչ պնքնք ա, հրես
ըստեղ մի կեղեցիկ պնքնք կա, վախքնք են, թե մի
մտնքնք, արի՛, հըլլա տու էլ նայի:

Էտ հարքը քյնքնքնք ա՝ թաքավորի ախքիքը,
նայքնք ա, ասքնք ա.- Մի պնքնք էլ ա կա ոչ միչիքնք:

Ասքնք ա.- Յըլք, խանքնքնքնք ապրած կենա, մի
հըլլա մի մըտի տես էտ ի՞նչ ա:

Նա մի ա մտնքնք, տուքը փակքնքնք ա վրեն,
նստքնք ա ու խող անքնք քքնք էլի, պիրքնք
թաքավորի տո՛ւն: Գազանքնքնք չեն իմանքնք, որ,
ուրենք, փքխքնքնք տարան: Գազանքնքնք մի
վախտ կըլի էտ ընգնքնք, որ, ուրենք, հարքը
չկա, ուրենք, պառավը տարավ: Վեր են կենքնք
ըտի տխուր-տրտուն, իրանք տխուր մնք
կյալիս, տենքնք են իրանք տերը՝ հորսկանը,
հրես էկավ: Միս ա տալի, ուտքնք չեն, ինչ
ուզքնք ա անքնք են՝ ըլքնք չի, տուն ա մտնքնք
տենքնք, որ ո՛չ պառավ կա, ո՛չ կիքնք կա:

- Յա՛,- ասքնք ա,- պառավը կյուղացավ
տարավ:

Օրերիք մի օրը էտ աղվեսը ըլետ առա-
չարկեք էտ գազանքնքնք, թե.- Սմոթ չի՝ մեզ
համար, մեր տուրուքնք կընիքնք տարան, մենք
քյնքնք վերքքնքնք պիրենք էլի:

Թե.- Բա ո՞նք դենք վերքքնքնք:

Թե ասքնք ա.- Ըխքնքնքնք տարել ա տըրել
մի օթախքնք՝ թաքավորը, ամեն պղիթի վրա մի
մարթ ա տըրել պահակ, որ էտ ախքիքնքնք էլ
կյուղանալ չըլի:

Աղվեսնք ա էտ առաչարկուքիքնքնք անքնք.- Կք-
նքնք, են էտ բուխարիկ ծակքնքնք մի կմտնքնք
նքնք, մի քուռ, մի աչկանի մարթ են տըրել

¹ Այստեղ բանասացը հեքիաթնք ընդհատուն է, պատմաառաքանելով, որ մոռացել է, հետո չարու-
նակուքնքնք (ծանր, բանահավաքի):

բուխարկի ծակի վրա՝ պահակ, քոռ աչկի դուռով մի կմտնեմ, ըխճկանը պոչըս շհանց կտամ թէ չէ, նա տուս կկառ տուռը, դարա-դուռն էլ կվերցնի, իսկը տուք էլ քյաճեքք էտ քաղաքի դիմացընը են արչին ու ապանին լըծի, կելն էլ մաճը փըռնի թաճ թե չուք եք վարըմ, որ ժողովուրթը նրանցով ըլի, գբաղվեն նրանց վրա, ախճիկն էլ տուս կյառ, ասեն՝ գազաննին հրե չուք են վարըմ, ախճըկանը հա դարա-դուռը վերցնի, մեր գործը աչոդ անց կկենա:

Էտ ա էնտեղ գազաննին չուքը վարըմ են, կյուքանը վարըմ են, հոռը՝ հո՛ հոռը՝, ժողովուրթը գբաղվում են դեբի միանց, աղվեսը մի ա մտնող մերս, ախճիկը տյուս ա կյալի չէ՝ դա-րա-դուռը վերցնում ա: Նրանք կըլխի են ընգնում, որ դարա-դուռը վերցոցե, իրանց չու-թը բըրնիւմ են ու փախնում, փախնում են պիրըմ տալիս իրանց տուրո՛ւնքը: Ապրե՛ք, տրանով էլ վերչ:

37(37). ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԽԱՆՈՒԹԸ*

Լինում ա, չի լինում մի ախկատ կին ա լինում՝ այրի կին, տրան ունենում է մի տղա-երեխա: Կինը, որ տեսնում ա ինքը աշխա-դանը չի հասցնում, երեխային կարքում ա քաղաքի մախրապան: Տղան քյնում ա, կյալի միառժամանակ, երբ հասակը հասնում ա քսան տարեկանի, տղան գիտակցում ա, որ մախ-րապահով ոչինչ չի ըլում, ինքը հետ ա տառ-նում, մախիքը թողնում ու առըտուրով գբաղվում: Սըռտուր անում ա մի քանի տարի անընթատ, մեծ գումար ա դըզում:

Օրերիցը մի օր տղեն, մի ծի՝ խաղողը բարցած, քյնում ա հաճան գյուղը, որ տանի ընդեղ ծախի, ապրանքի հետ փոխի: Շատ ա քյնում, քիչ, քյնում ա մի տեղ, որ տեսնում ա բեզարել ա, էտեղ ծիու պեռը վերցնում ա, ծին կապըմ մի չիմանում, ինքը կըլուխը տընում ա պաթի վրա ու քնում ա: Որ քնում ա, էրազիկ մի ախճիկ ա տեսնում նա, էտ ըխճկա հետ, իրոք, սիրահարվում ա, տա հանգարծ վեր ա թռչնում տեղից ու ծին քաշնում պիրըմ պեռը բեռնում, հենց էտեղից էլ հետ ա դառնում դեբի տուն,

պիրըմ ա ծիու պեռը թափում ու մորը կանչում.- Այ մերա, ես գնում եմ:

- Բա, ո՞ր ես գնում, այ բալա, ինձ պահողը ո՞վ ա, ո՞ւմ ես ինձ տալիս, որ գնում ես:

- Չգիդեմ, ես գնում եմ, ամեն ինչ կա, կեր, ապրի մինչև վերադառնամ:

Տղան, էտ տառնալու ժամանակ, որ տուս ա կյալի տանիցը, քյնում ա մի տեղ, որ շատ քյնում ա, ճանապարհին հոքնում ա, մտում ա, որ հանգստանա, աչկը կաչում ա: Քնած ժամանակը տեսնում ա, որ մի բիծա մարթ, երկար մորուքով, էլեկ ա իրան մոտ մտել ու նրան ինչ-որ բան ա պատվիրում, ասըմ ա.

- Որքի՛, տու մըտընըտ տըրել ես, որ քյնաս, միայն թե ես քեզ երեք խրատ տամ, տու էտ խրատները կյանքընտ կօգտագործես, քեզ պետքը կկյառ:

Ասըմ ա.- Ասա՛:

Ասըմ ա.- Առաչին հերթին,- ասըմ ա,- տու ում որ խնդիպես, առաչին անքամը ինչ որ անվանես նրան, ասես, էտպես էլ կշարունա-կես, խոսքըտ չփոփոխես: Երգորթն,- ասըմ ա,- որքան էլ գործըտ վաճմի ըլի, այսինքը, հա՛, որ մի տեղով գնալու ժամանակ, որ տե-նաս մի ուխտատեղ կա, կըքեքվես էտ ուխ-տատեղըմ մուճ կվառես: Եվ երրորթն,- ասըմ ա,- որ գնաս, ճանապար գնալու ժամանակ, որդեղ էլ ա արև մայր մտնի, էնդեղ էլ կմնաս, էլ տեղից չի շարժվես, չասես, որ հա՛, գյուղը մոտիկ ա, քյնում ա կայը:

Տղան լըմ ա մարթու ասածը ու վեր ա կենում, հանկարծ տեսնում ա, որ մարթ չկա, էրազ ա էս բուրը: Քյնում ա նա քաղաքի կեն-տրոն, տեսնում ա՝ մի ֆայտոն կանգնած, մի ծերունի մարթ մատած էտ ֆայտոնի մեջ, մո-տենում ա:

- Բարև, հայրիկ՛:

Ասըմ ա.- Բարև, տղա ջան:

- Չայրիկ, էս ֆայտոնը ո՞ր ա գնում:

- Թիֆլիզ ա գնում, տղա ջան:

- Բա, հայրիկ ջան, ինձ չե՞ս տանիլ:

- Կըտանեմ, ընչի՞՝ չի:

Տղեն բարցրանում ա ֆայտոնը մտնում, ֆայտոնը թեքքն են դեբի Թիֆլիզ, էտ օրը ճա-նապարվում են, երեկոյան հասնում են Թիֆլիզ՝ մի խազեյիմի տուն, որ հենց էտ ֆայտոնը

պատկանում և ետ խազեյինքին: Տղան ուզում և քաղաք քննում, մի որևէ հյուրանոցում քննելի, խազեյինքը չի թողնում, ասում և: Տղա ջան,- ասում և: - մնա մեր տանը,- ասում և: - Ես քննել, վաղը կքննաս քու աշխատանքին:

Բայց չէ՞ որ նրանք ճանապարհում, ամբողջ ետ տղի կենսագրականը, պանը գրուցի միջոցով ետ մարթը հասկացել և, թե ոնց և, ինչ և: Տղեն, իմիջիպալոց շատ լավ տղա և ըլնում, շատ մարիֆաթին, կրթված տղա և ըլնում: Խազեյինքը մտկոնում կա, որ իրան միմուճար ախճիկը պսակի ետ տղայի հետ և իրեն ամբողջ գույքը կտակի տղայի վրա: Տղան մնում և տրա տանը գիշերը, առավոտը շուտ վեր են կենում, ֆայտոնը լծում են, ըխճկանը տընում և տղայի հետ ֆայտոնի մեջը ու ասում և: Զյնացեք քաղաքը, ամեն մի փողոց էլ ման կկյալք ու կկյալք ըստեղ:

Նրանք որ ճանապարհում են, խազեյինքը կնոջը կանչում և, ասում և: Ս'յ կնիկ,- ասում և: - Ետ տղե՛ն, լավ տղա յա, ծեռով-ոտով տղա յա, մարիֆաթին տղա, հազիվ և մեր ծեռը ըզգել, ըխճկանը տ համոզի, թող ետ տղային իրան գրավի, տա մեր փեսացուն տառնա, տառնա մեր տղան, մեր ամբողջ գույքը կտակենք տրա վրա, մեզ մոտ էլ ապրի, մեզ որթություն անի:

Տղան ման կյալուց եղը, երի կյալիս են տունը, ըխճկա մայրը ըխճկանը առանձնացնում և ու ասում: Բալա ջան,- ասում և: - տենում ե՞ս՝ ոնց լավ տղա յա:

Ասում և: - Հա՛, մամա, շատ լավ տղա յա, մարիֆաթին, գրագետ, էսպես, էնպես:

Վերջը ասում և: - Ախճիկ ջան, քու հերը տա քեզ համար և պիտել, տու աշխադիր տրա միտքը թեքի, տուք ամուսնացեք, մեր տանը թող տա մեր տղան տառնա, որ հետագայում մեզ պահի:

Ասում և: - Մամա, չի ըստացվում, ետ կյալու ժամանակ տա ինձ քույրիկ ասել և և քեզ էլ մայրիկ ասել և, երկի մեր հորն էլ հայրիկ ասած կըլի, հենց տրա համար էլ ետ մարթը չի ուզում իր խոսքը փոխի:

Վերջապես մի քանի օր էս խազեյինքի տանը մնում և, ըխճկա հետ քյնում ման կյալի՝ կյալի, մի օր էլ քաղաքով անցնելու ժամանակը

ըխճկա հետ միասին, ոտքով, տեսնում և՛ ճանապարհի տակ մի ճաշարանում լավ նվաք և, թեքվում են, մտնում են ճաշարան, տեսնում են՝ ճաշարանը, ի՞նչ նվաք, այ՛ մարթ, տանը հին ժամանակվա սազերով մի կամպանյա, նրանք անում են ու մուշտարի կանչում, ամբողջ քաղաքի ետ քյնող-էկողը մտնում և էտեղ ճաշում, անց կենում քյնում: Տղանք՝ ախճիկն ու տղան, ճաշարանի մի ծայրում փոքրիկ սեղան են նստում, մի ծերունի մարթ՝ մի մեծահասակ, կյալիս և խնթրում, ասում և: - Բալենի ջան, կարելի և՞ ծեր սեղանին մասնակցեն:

- Այո՛, ընչի՞ չի, հայրիկ,- ասում են,- արի մասնակցի:

Ծերունին մոտանում և, աթոռը քաշում և նստում ու տրանց ասում: - Ախճիկ ջան,- ասում և: -սա քու ի՞նչն և, էս երիտասարդը:

Ասում և: - Իմ ամուսինն և, հայրիկ:

Տղան առարկում և: - Ո՛չ, ո՛չ, հայրիկ,- ասում և: - տա իմ քույրն և:

Մարթը մնում և շփոթված, հըմի ո՞րին հավատա, առաջինի՞ն, թե՞ վերջինի: Վերջապես էտպես էլ անցնում և, ախճիկը պատվերներն և տալի ուտելիքի, պիտըն են սեղանը լցնում, ուտում-խմում՝ իրեքով, ճաշարանումն էլ ետ նվաքի կամպանյան արթեն դողդացնում և: Տղան ասում և: - Հայրիկ,- ասում և: - որ են նրանցից մեկը... մի սազ տան,- ասում և: - մի երբ էլ ես կասեմ:

Ասում և: - Աչկիս վրա, տղա ջան, հմի ես նիանցից մի սազ վերցնեմ քեզ տամ:

Կանչում և նրանց համբարանի դռստա-բաշուն¹, ու ասում և: - Ընկեր ջան,- ասում և: - կարելի և՞ մի սազ տաք էս անժանոթ տղային, սա էլ մի երկու խոսք ասի, երբ ասի:

- Լավ,- ասում և: - հայրիկ, աչկիս վրա:

Եվ հենց իր սազն էլ տալիս և տղային, տղան մի էրկու անքամ ճրնկըտացնում և էս կողմը, են կողմը ու արթեն վերջին հաշվով բաց և ըլնում: Սա էնպես և նվազում, էնպես և երբըն, որ ամբողջ ճաշարանի ամբողջ հաճախորդը գրավում են սրա կողմը: ճաշարանի

¹ Համբարանի դռստա-բաշուն - արհեստակցական միության, խմբավորման գլխավոր, ղեկավար (ծառք. բանաստեղծություն):



Ճաշարար կամ Քար (Համզի քար)

վարիչն ասըմ ա.- Տղա ջան, ի՞նչ մարթ ես,- ասըմ ա.- ի՞նչ մարթ էլ որ ըլես, արի՛, ես քեզ որքան էլ ուզես՝ աշխատավարձ տամ, տու ես իմ քյառօգի հետ մատիր, տըրոճնց հետ երքիր, նվաքիր, գուցե իմ հաճախորդը շատ ըլի, շատ փող առնեն ես ճաշարանըմ:

Ասըմ ա.- Հէ՛,- ասըմ ա.- ես ճամփորթ մարթ եմ, չեմ կարալ:

Վերչապես կարողանըմ են համոզել, որ կոնյա մի ամիս ես մարթը ըտեղ նվաքի ետ տղաների հետ: Էտ օրը նվաքըմ են, ամբողջ քաղաքի անցուդարց անողները թեքվըմ են էտ ճաշարանըմ ուտըմ-խմըմ, լսըմ, էնպես որ ճաշարանը լեփ-լեցուն ա ըլըմ, անքամ մատ տընելու տեղ չի ըլըմ: Այդ օրը էտ ճաշարանի վարիչը էնքան ա աշխատըմ, էնքան ա դրամ աշխատըմ, որ գրեթե կյանքըմ էտքան աշխատած չի ըլըմ, էտ տղի շնորհիվ: Էս դաստաբաշին՝ տըրոճնց համքարը խայնըվըմ ա տղայի վրա, ասըմ ա.- Եթե սա մեզ հետ մնաց, վերչի վերչո,- ասըմ ա,- մեզ փորցանքի կպիրի:

Երեկոյան տղային խնթրում ա, ասըմ ա.- Տղա ջան, վաղը կկլաւս,- ասըմ ա.- կքմաս աշխիչ փուռը՝ քաղաքի, ինչ որ ես պան պղի պատվիրեմ, էտ պանը կպերես:

Ասըմ ա.- Շատ լալ, ուստա ջան,- ասըմ ա,- աչկիս վրա, լափ էլ քշերով վեր կենամ կյամ:

Ու քյընըմ ա փռան վարիչին ասըմ.- Զեզ էսքան փող կտամ, մեծ գումար կտամ, էնքան որ ժամի միչև յոթը մի մարթ պղի կյա, մի տղա, երիտասարթ տղա, տու փոմես ու նրան կոխես փռի մեչը՝ վառվի:

Փռնընչին համամայնըմ ա մարթու հետ, ու տա թողըմ ա քյընըմ:

Առավուռը շատ շուտ խազեյիցի տանիցը վեր ա կենըմ էտ տղեն, ըխճկանն էլ չի հայտնըմ, ըխճըկանից ծածուկ կյալիս ա, որ իրան էտ ինչ-որ պանը կաղարի, պլանը կաղարի, կյալիս ա, որ տեռ փուռը չի հասած, քաղաքի մեչ տեսնըմ ա ճանապարհի տակ ինչ-որ մի եգեղեցի կա, միայն թե մարթիք անց ու դարց են անըմ, ներս են մտնըմ, տուրս են կյալի, մա հիշըմ ա քըշերվա երազին ծերուկի ասածը, որ որքան էլ գործըտ վաժմի ըլի, եթե մի ուխտատեղ տեսնես, անցի ուխտատեղըմ մուլ վառի: Սա ներս ա մտնըմ եգեղեցին մուլ

ա վառըմ, հետաքըրքությունից մայըմ ա էս կողմ, էն կողմը, տըրոճնով բազկանի ժամանակ ա շահըմ, ուշանըմ ա: Կյալիս ա ժամանակը անց ա կենըմ, էս նվաքի խմբի վարիչը քյընըմ ա փուռը, թե տենա իլա՞ արդյո՞ք իրա հրամանը կաղարված ա, թե՞ չէ, հենց որ... փուռը մըտնիլիս տեղը փռնընչին մեշուկը կոխըմ ա կըլուխը ու տըրոճն կոխըմ փռի մեչը, տեղն ու տեղը վառվըմ ա:

Քիչ հետո տղեն քյընըմ ա, քյընըմ ա, ասըմ ա.- Ընգեր փռնընչի,- ասըմ ա,- իմ խազեյիցը քեզ պան ա պատվիրե,- ասըմ ա,- տուր տանեմ:

Ասըմ ա.- Ամեն ինչ պաղրաստ ա,- ասըմ ա.- տղա ջան, ազատ ես, քյոն:

Կյալիս ա էն ճաշարան, մտըմ են էս կողմը, էն կողմը, տենըմ են, որ էս նվաքողների խմբապետը չկա: Ըստեղ ասա-կոսա ա ընգնըմ, տեսնըմ են, որ արթեն էսպես էտենց կործ ա պատահե՞լ: Սխճիկը կյալիս ա տրան էտ ճաշարանըմ գըթնըմ ու, հանգամանքից օքտվելով, որ ինչ ա կատարվըմ շրջապատըմ տղայի, տղային էլ չի թողըմ ըտեղ աշխաղի, վեր ա ունըմ տանըմ տո՛ւն: Տանըմ ա տուն, մի օր, երկու օր էլ մնալով, ա խազեյիցին ասըմ ա.- Տղա ջան,- ասըմ ա,- ես ուզըմ եմ քեզ մի քան ասեմ, ի՞նչ ես ասըմ:

Ասըմ ա.- Ասա՛, հայրիկ:

Ասըմ ա.- Տու եկ իմ փեսեն տառ,- ասըմ ա,- իմ ըխճըկանից լալ ախճիկ չես ճարելու և,- ասըմ ա.- ամուսնացեք,- ասըմ ա.- իմ ամբողջ գույքը, խազեյին մարթ եմ, քեզ վրա կտակեմ, ապրեցեք,- ասըմ ա,- մենք էլ, եփ որ կմեռնենք, կտանք ուրիշների մամա կիողարեք:

Ասըմ ա.- Հէ՛, հայրիկ, ես քեզ հայրիկ եմ ասել, նրան ջուրիկ եմ ասել, մամային էլ մամա յեմ ասել, հետևապես անկարելի պան ա, ես չեմ կարալ իմ խոսկըս ատկազ ըլեմ:

Հա՛ մարթը ըստիպըմ ա, որ. — Տղա ջան, մեծ գույքի տեր մարթ եմ, լալ տղա եմ, սիե, սիե:

Տա չի կարողանըմ համոզի: Վերչի խոսկըմ ասըմ ա.- Հայրիկ,- ասըմ ա,- տու քու քրոջը հետ կամուսնանա՞ս:

Ասըմ ա.- Հէ՛, ո՞նց կարելի ա:

Թե ասըմ ա.- Հայրիկ ջան, տա էլ իմ քույրն ա, մի անբամ քույր եմ ասել, հարցը վերջացաւ, էլ չեմ ամուսնանալ:

Խազեյիմը տենըմ ա, որ արթեն հանգամանքը ուրիշ ա, չի կարողանըմ էտ տղայի հետ լեզու քըթնի: Հա՛, տղան վեր ա կենըմ մի առաւփոտ, թե.- Ես քյնըմ եմ:

Բաքու պտի քյնա, էտ երազը որ տեսել ա, առաջի երազը, տա՛ Պաքվի վրա յա տեսել, Բաքու քաղաքի, որ պետք է քյնա Բաքո՛ւ, էտ իրա էն առաջվա երազի սիրածին կըթնի: Առաւփոտը քըշերիսանա խազեյիմը, ախչիկը, հետո խազեյիմի կինը տրան վեր են ունըմ ֆայտոնով մըչկ կայարան տանըմ են, տոմսակ վերցնըմ, մեծ գումար էլ տալիս են տղային ու ճանապարհը:

Ասըմ են.- Տղա ջան, կքյնաս, եթե գործուտ չի հաջողվի, էլի կվերադառնաս:

- Շատ լավ.- ասըմ ա,- հայրիկ, անպայման: Տղան գնում ա: Տղեն քյնըմ ա գնացքով, քյնըմ ա Բաքվի մոտ մի կայարանըմ իջնըմ ու էտեղ էտ կայարանից միչկ քաղաքը ընթանեմը մնացած ա ըլըմ մի երկու կիլոմետրի հեռւիվ: Հանգարծ արեւը մտնըմ ա, որ արեւ մայր ա մտնըմ, հա՛, նա հիշըմ ա ծերուկու ասածը, որ.- Արեւ որդի մայր մտնի ընդեղ էլ կքըշերես, էլ տեղիցըտ չշարժվես:

Ասըմ ա.- Եթե էն մարթը ինձ ասել ա, ես պետք ա նրա ասածները կադարեմ, նա խորութներ ա տվել:

Թեքվում ա, ու ճանապարհի տակ մի հատ հանգիստարան ա ըլըմ, մտնըմ ա էտ հանգիստարանի պատի տակ ու նստըմ ա էսպես կուշուր անըմ, որ էտ քըշերը ըտեղ լուսացնի, առաւփոտը մտնի քաղաք: Շատ ա մնըմ, թե քիչ, չգիտեմ, հանգարծ քըշերով կիսի ժամանակ, լույսնակ քըշեր ա ըլըմ, տեսնըմ ա հանգըստարանի դուռը բացվեց: Նայըմ ա տենըմ՝ երկու մարթ մի դագաղ, ամեքը մի ծայրը ուսերնին տըրած, պերին հանգըստարանըմ վեր տըրին, վըռազ-վըռազ, վըռազ մի փոս փորեցին ու դագաղը տըրին մեչը ու ծածկեցին ու իրանք թողեցին հեռացան:

- Դե՛յ վա՛խ,- ասըմ ա,- էտեղ մի բան կա,- ասըմ ա,- գիշերը մեռել չեն թաղիլ՝ մեկ, երկու հոգով դիակ չեն փորիլ՝ երկու, էտեղ.- ասըմ

ա,- մի պան կա: Էտեղ էլ,- ասըմ ա,- իրես թաղեցին, կարքին կըրեզման չի փորեցին, տա էլ.- ասըմ ա,- երեք: Ըստեղ մի բան կա,- ասըմ ա,- քյնա՞մ մի տենամ էտ ո՞վ ա:

Տըռնը որ քյնըմ են, տա՛ քյնըմ ա կամաց էտ հողը ետ ա տալիս, էտ դագաղը հանըմ ա, հենց դագաղը բացըմ ա թե չէ, լուսնի լույսով նայըմ ա տեսնըմ իրան սիրած ախճիկն ա, քըշերվա սիրած ախճիկը: Միայն, որ ականջը տընըմ ա ախճիկա սրտին, տեսնըմ ա՛ սիրտը դեռ աշխատըմ ա: Վեր ա ունըմ էս ըխճկանը շըլակըմ ու մտնըմ էտ քաղաքը, էստեղ, էնտեղ, տեսնըմ ա մի գետնափոր տան ինչ-որ լույս ա վառվըմ քըշերվա մի ժամին: Տուռը ծեծըմ ա, մի պառապ կին բացըմ ա դուռը և ասըմ ա.

- Մայրիկ ջան,- ասըմ ա,- քըշերը թեպետ անժամանակ էլ ա,- ասըմ ա,- էսպես դեպք ա պատահել, խնթըմ եմ, ասըմ ա,- մեզ ընթուկեք:

- Արի՛,- ասըմ ա,- որթիս, արի՛:

Տանըմ ա, էտ ինչ-որ հիվանդին, տընըմ ա թախտին ու ասըմ ա.- Մայրիկ, էստեղ շուտ,- ասըմ ա,- մի բժիշկ, մի բան, մի հեքիմ կանչի,- ասըմ ա,- էս երկուսսարթի կյանը փրկենք:

Ասըմ ա.- Տղա ջան, բախտի բերմամբ,- ասըմ ա,- ես հեքիմ եմ, ես կարող եմ տըրան փըրկեմ:

Ասըմ ա.- Դե հնարըտ տես,- ասըմ ա,- մայրիկ,- որքան էլ ուզես,- ասըմ ա,- քեզ,- ասըմ ա,- կհատուցեմ:

Կինը տըրան պիրըմ ա բուժըմ ա, փաթաթըմ ա վերքերը, էս ա անըմ, վերջապես մի քանի օրից եդո ախճիկը ուշի ա գալիս: Ախճիկը որ նայըմ ա տղայի երեսին, մա էլ ա իրան երազ հիշըմ, որ էտ նույն գիշերը, նույն օրը երազի ժամանակ մա էլ ա տեսել էտ տղային, որ մա ըխճկանն ա տեսել, տղեն էլ նրան ա տեսել: Տըռնը իրար ծանոթըմ են, փաթաթըմ են, մոտիկանըմ են: Վերջապես էտ ախճիկը, բոլոր վերքերը բուժվըմ ա՛, առանըմ ա սափ-սաղ ախճիկ: Մի քանի օրից եդով ասըմ ա.- Տղա, գիդես ի՞նչ կա, հիմա,- ասըմ ա,- մենք,- ասըմ ա.- կամուսնանանք, ես քնըմ կլինեմ, տու՛ւ իմը, միայն թե ըստեղ մի վրեժ

կա, միչևը չլուծենք, մենք էս քաղաքիցը տուս եկողը չենք:

Ասըմ ա.- Ասա՛:

Տա՛ հինքն էլ բաքավորի ախճիկն ա լինըմ, Բաքվի թաքավորի ախճիկն ա լինըմ:

Ասըմ ա.- Փողոցի, այսինչ փողոցի էն ծայրում երկու տախտակից շինած արիես-տանոց կա: Մեկի մեջ ժամագործ ա աշխատըմ, իսկ էն մյուսի մեջ կոշկակար ա աշխատըմ, կքնատ ժամագործին կասես ինձ համար մի ժամացույց պաղրաստի, որքան էլ փող ուզի՝ կտաս: Կոշկակարին կասես՝ ինձ համար վազ մի գույզ կոշիկ՝ կանացի, որքան էլ փող ուզի՝ կտաս ու զակազ կտաս թողնես կկոշ:

Տղան լսըմ ա աղչկանը, քյըմ ա էտ պանը կըթըմ ա, էտ արիեստանոցին ու ամեքին էլ զակազ ա տալի, թողըմ հեռանըմ: Էքսի օրը կյալիս ա տենըմ՝ զակազները պատրաստ: Մեծ-մեծ գումար ա տալի տղրանց, էնքան, որ երկուտակ արժեք ունեցող, ու էտ իրերը վեր ա ունըմ ու տանըմ իրանց տուն: Ախճիկն ասըմ ա.- Դե տա՛ռ բալական չի,- ասըմ ա.- տղրանց,- ասըմ ա.- էտ երկու տղայի՞ն էլ մեզ մոտ պետք ա պիրես, մեզ հյուր պտի պիրես, մենք հյուրասիրենք տղրանց:

Քյըմ ա տղերանցը ասըմ ա.- Բա տուք իմ պատվերը ժամանակից շուտ կատարելու համար, ես երախտապարտ եմ ծեզ էլի, պետք ա տուք ինձ մոտ հյուր կյա՛ք:

Տղան վեր ա ունըմ էտ տղերանցը տանըմ ա էտ պընալի տուն, հյուր ա տանըմ: Տա՛ ամեն ինչ պաղրաստած ա ըլըմ, ուտելիք, խմելիք, ամեն ինչ պաղրաստած ա ըլըմ, տղերանցը ուտացնըմ ա, խմացնըմ ա, հանգարծ էն մյուս սենյակիցը ախճիկը որ տուս ա կյալի հա՛, տղեքը մնըմ են ապշած:

- Դե՛յ վա՛խ,- ասըմ են,- սըրտն մի քանի օրից առաջ մենք ըսպանել ենք երկուսով, տարել հանգըստարանըմ թաղել, ի՞նձ սա դեռ գենթանի ա՞, էս ո՞վ հանց սըրան, ո՞վ բուծցն, ո՞վ սըղացրուց:

Տղեքը մի տեսակ, ուրենը, մեկը սրտի պայթում ա ստանըմ տեղն ու տեղը, իսկ մյուսին էլ տղեն սպանըմ ա ու քցըմ են ըտեղ, անհետացնըմ ու վեր են կենըմ, քյըմ ա էտ տղեն էրկու ծի առնըմ, թամքըմ, պիրըմ նստըմ

են ու ախճիկ ու տղա դեպի Երևան քաղաք ճանապարհը՛մ:

Շատ են կյալի, քիչ են կյալի, կյալիս են, մի անտառի բացուտի միջով անցնելու ժամանակ, բեգարած են ըլըմ և՛ իրանք, և՛ ծիերը, իջնըմ էտ բացուտըմ ծիերը թող են անըմ էտ չիմանըմը արածելու, իրանք էլ մի փոքր նստըմ են: Դանգստանալու ժամանակ ախճիկը, շատ ա բեգարած ըլըմ, կըլուխը տընըմ ա տղի ծընգին ու հանգարծ քուըն տանըմ ա, քնըմ ա: Տղեն նրա մազերի հետ խաղ ա անըմ մատներով, հորդորըմ ա, շոհըմ ա մազերը, հանգարծ ծեռը ինչ-որ մի բան ա կըպչըմ, տա՛ տեսնըմ ա, որ անգին քարեր են՝ աղամանդներ՝ թել շարած էտ թագերխի նման՝ տղոցմի նման ու կլիսըլ պատ տված, մազերի տակին կապած: Տա՛ տեսնըմ ա, որ շատ գեղեցիկ պան ա, որ կյանքըմ էտ տեսակ պան չի տեսել, վեր ա ունըմ էտ շարած աղամանդները նայելու ժամանակ... տընըմ ա կոխկին, հանգարծ մի թռչուն կյալիս ա ու տա՛ կըտըցըմ ու թռչըմ, քյըմ՝ Տղեն կամաց ըխճըկա կյուլիսը տընըմ ա կետնին ու վեր կենըմ էտ դշի հետևիցը քյըմ: Շատ ա քյըմ, քիչ ա քյըմ, շատ ա քյըմ, քիչ, քյըմ ա է՛ անցնըմ, հորիզոն ա կտըմ, տենըմ ա՛ մի բարցըր ծառ կա, էտ թռչունը քյնաց ծառի վրա կաղնեց՝ էտ աղամանդները կըտըցին: Էտ ծառի վրա տա՛ բուն ա ունենըմ, մտնըմ ա իրան բունը, էտ աղամանդները տընըմ էտ պընի մեջը, ու էտ մարթը քյըմ ա տեսնըմ, որ էտեղ մի տըրախտի այգի ա, մեծ այգի, միայն թե տըրա մեջ մտնելը անհնար ա, տըրա մեջ էլ մի մե՛ծ չիմարի ծառ ա՛՝ էտ թռչունը տրա կըլխին մի բուն տըրած:

-Դե՛յ վա՛խ,- ասըմ ա,- ի՞նչ անեն, որ ներս մտնեն, գուցե մի հանքով պաղցրանամ ծառին, հանեն, ի՞նչ անեն:

Տեսնըմ ա՛ այգուցը մի մարթ տուս եկավ:

Ասըմ ա.- Այ տղա, ի՞նչ մարթ ես:

Ասըմ ա.- Դե մարթ եմ էլի, թափառական մարթ եմ:

Ասըմ ա.- Ինձ ծառա չե՞ս ըլի, իմ այգըմ աշխատես:

Ասըմ ա.- Կըլեմ:

Սերժանտ Կարի, ամսական ինքնաշարժային կուզետ, կտամ, իմ այգին քեզ եմ տալիս, տու պահիր, պաշտպանիր, ես էլ ամսական ճեշտ, էրկու հետ կկյամ,- ասըն ա,- իմ այգուն կնայեն:

- Լա՛վ,- ասըն ա,- խազեյի:

Տա՛ն Գերս ա մտըն ու ճալըն ա տենըմ՝ էտ ծառը էնքան հաստ, էնքան ա դժվար բարցրանալ, որ հնարավոր չի:

Էս մարթը ըստի մընըն ա մի քանի տարի, յոթ տարի անընթառ աչկը էտ ծառի վրա, հայ հրես կկտորի, հայ հրես քածին կփչի: Մի առավուտ իրան բախտ ա վիճակվըմ, վեր ա կենըմ առավուտը տեսընը, որ ծառը քածին կկտորել ա, տապալել գետնին: Բլընըն ա էտ անգին քարերը հանըմ, տանըմ լըվանըմ ու էտ տղան, ասըն ա,- Ի՛նչ անեն, որ դարցյալ էս չի կորցընըմ:

Բլընըն ա մի փուտ աղած աղ առընըմ, մի մեշկի մեշ Կառըն ու էտ անգին քարերը էտ աղի մեշը թաղըն ու շըլակըն ճանապարհըմ, թե որտեղ ա քյընըմ, չգիտեն:

Խաճաթը տանըն ըխակահին: Ախճիկը քընըն-տեղիցը գարթընըն ա տենըմ, որ տղեն մոտը չի, ասըն ա,- Դիմա կկյա:

Սպասըն ա, սպասըն, տենըմ ա տղեն չկա: Մի ժամանակ ծեղը տանըմ ա կլուխը, իրան մազերը հորդորելու ժամանակ տենըմ ա՝ անգին քարերը չկա՛:

- Դե՛յ վա՛խ,- ասըն ա,- ճամարդ, ո՞նց,- ասըն ա,- թամաի արավ,- ասըն ա,- ինձ էս անտառընը թողեց,- ասըն ա,- էս անտառի խորըն ու ինքը քարերը վեր կալավ ծըլկեց, մարթկանց էլ դավերյա չկա,- ասըն ա:

Ախճիկը վեր ա կենըմ ճալըն էս կողմ, էն կողմը, ծիերը պիրըն ա մեկը ճալըն, մեկն էլ քաշըն, քյընըն ա մոտակա գյուղըն ծիերը էրկուսն էլ ծախըն ա՝ փող չիընը, տընըն քեթըն ու անցընը քյընըն մի ճավի պատահըն, էտ ճավըն ճալըն ա, անցընը քյընըն էն ծովի մյուս կողմը, էն ծովի մոտ մի քաղաք ա ըլըմ, էտ քաղաքիցը հեռու, էնդեղ մի խանութ ա չիընըմ, մի փողբիկ հյուրանոց, մի փողբիկ ճաշարան ու էտ խանութի անուկն էլ տընըն ա, գրըն ա վրեն՝ վիժեսկայի վրա. «Կորուստների խանութ»: Սա ըստըն սկսընըն ա աշխաղիլը: Ով ինչ

կորցընըն ա, կըթընըն են պիրըն էս խանութին հանձնընը, ով ինչ կորցընըն ա, կյալիս ա էտ խանութից իրան իրը ճընանընըն ա, տանըն ա, ծըրի, առանցի փողի, առանցի դեպի-դեպի և երփենըն կյալիս են քըլերակաց մընըն են, ճաշարանըն ուտըն են, հյուրանոցընըն քընըն են՝ առանց փողի:

Տղան էտ աղը շըլակած քյընըն ա, շատ ա քյընըմ, քիչ, քյընըմ ա մի ծովի դեն առընըմ, քյընըմ ա տենըմ մի ճավ՝ կաղնած, ասըն ա,- Էս ճավըն ո՞ր ա քյընըմ:

Սերժանտ Կարի ասընըն:

- Լա՛վ:

Ինքն էլ ա բարցրանըմ, տանըմ ա աղը տընըն մի հարմար տեղ, որ ինքն էլ մոտըն մոտի, հարցընըն ա, ասըն,- Նավը քա՞նի օր պիի ճանապարհ քյընըմ:

Սերժանտ Կարի ասընըն:

Սերժանտ Կարի ասընըն ու տեղից չուկեն, քյընըն մի քիչ հաց առնեն ու կյա՛ն, որ տասնհինգ օր են ճավընը տըլվարանա՛ն ոչ:

Սա քյընըն ա մըշկը հաց ա առընըմ, մըշկը կյալիս ա, տեսընըն ա ճավըն արթեն ատիտղ ա ըլել, հը՛, հասել ա բավականի տեղ ա կտրել, աղը տանըմ ա, ինքըն մընըն ծովի մյուս ափին: Ընդեղ հարցընըն ա,- Բա էս ճավըն որդե՞ղ ա քյընըմ, ե՞փ պիի վերադառնա:

Սերժանտ Կարի ասընըն վերադառնալու ա, տասնհինգ օր քյընըն ա, տասնհինգ օր՝ կյալի:

Նա պետըն ա ընդեղ տասնհինգ օր սպասի, որ մեկն էլ ճավըն էտ կյա՛ն, տենա՛ իրան աղըն մեշն ա՞, թե՞ չէ:

Տասնհինգ օր սպասըն ա, ճավըն մորից ա հետ կյալի, բարցրանըն ա ընդեղ, տեսըն ա՝ աղը չկա: Բլընըն ա ճավապետի մոտ, ասըն ա,-

- Բա, էս ըստըն աղ եմ ունացել, ժամանակին չհասցրի, որ ես էլ ճավըն մոտըն, աղըն եկել ա՞,- ասըն ա,- որդե՞ղ կըլի տա՛ն, որդե՞ղ ա մնացել:

Սերժանտ Կարի ասընըն, քաղաքի մոտ մի խանութ կա՝ «Կորուստների խանութ», ըստ աղըն հանձնել ենք էն խանութին:

Սերժանտ Կարի ասընըն:

Սերժանտ Կարի ասընըն վերադառնալու ենք,- ասըն ա,- կըլնա՛ն էն խանութի մոտ կիջնեն,

հենց ծովի ափին ա, ու կհարցնես, քու աղըտ վեր կուճես կը քյնա, էնպես որ չի կորչիլ:

Տղան նալ ա նստըմ քյնըմ, քյնըմ ա ծովի են ափընը իչընըմ, քյնըմ ա էտ խանութը, տեսնըմ ա մի տղա՝ չոբանի հաքուստըմ, կոշտ ու կոպիտ հաքուստըմ ընդեղ ինչ-որ գործակատար ա խիթ թե, էտ խանութի վարիչն ա:

Ասըմ ա.- Տղա ջան,- ասըմ ա,- ես աղ ունեմ ըստի,- ասըմ ա,- եկել եմ, որ տանեմ:

Ասըմ ա.- Գիշտ ա, ըստեղ աղ կա, միայն թե,- ասըմ ա,- էտ աղը ես չեմ ընթուճել, էտ աղը ընթուճել ա մի ախճիկ, էն ախճիկն էլ իրեք օրից պըտի, երեք օրից հետո պըտի կյա, նրա սմեճը չի, երբի որ կկյա, քու աղը կըվերադարձնի:

Թե.- Բա ես ո՞նց կանեմ ըստեղ, ի՞նչ կուտեմ, ի՞նչ կապրեմ:

Ասըմ ա.- Ախպեր ջան, մեզ ծրրի ճաշարան էլ ունենք, ծրրի հյուրանոց էլ ունենք, քյնա կեր-խմի, հյուրանոցըմ քնի, մըչև ախչիկը կյա:

Քյնըմ ա ըստեղ էտ ա իրեք օր մընը ա, ուտըմ-խմըմ, իրեք օրից եղը տենըմ ա մի տղա, մի մարթ հրես եկան, կյալիս են ըստեղ, տու մի ապիլ, տալ են ըխճկա հերն ու ախպերն են՝ թաքավորն ա, թաքավորի տղան, իրանց ըխճկանն են ման կյալի: Բաղաքընը ցույց են տվել «Կորուստների խանութ» կա ըտի, որ քյնա, ախճիկըտ կըքըքըմ ինչ-որ մի տղա ա աշխաղըմ, ասըմ ա.- Բա մենք մի ախչիկ ենք կորցրել, դես-դեն:

Վերչը ասըմ են.- Դե ախչիկ էլ կա ըստի աշխաղող, միայն թե իրեք օրից եղը դի կյալ, քյացեք կերեք-խմեցեք, ապրեցեք մըչևը կյա, ախչիկը կկյա, թե կընճանչիք տանք, թե չէ՝ չէ, էն ա կճան ըստեղ:

Իրեք օրից հեղը տղան ու էտ մարթն ու էն մյուսը քյնըմ են, անհամփեր սպասըմ են, որ էս ախճիկը կյալ դի, որ իրանց աղը տա, կամ թե չէ ըխճկանից տեղեկություն տա: Դանգարծ էտ, հենց էտ խանութընը անհամփեր սպասելու ժամանակ, տեսնըմ են հենց հարկան սենյակը բաց էլավ, իրանց ախճիկը տուրս եկավ՝ ըխչկա շորըմ ու առաչներին կաղնեց: Դերը վազ տվուց փաթաթվեց, ախպերը փաթաթվեց, տղեն վազ տվուց փաթաթվեց: Տըրանք

մնըմ են զարմացած, ասըմ են.- Լավ, տղա ջան,- ասըմ են,- էս իմ ախճիկն ա, իմ տղի քիրն ա, մենք փաթաթվըմ ենք, բա քու ի՞նչն ա:

Թե ասըմ ա.- Իմ սիրած ախճիկն ա:

Էստեղ տենըմ են, որ հանգամանքը ոճն ա՝: Էս ա էս ըխճկանն ասըմ ա.- Վաճիկ ջան,- ասըմ ա,- բա ա՞ղը:

Ասըմ ա.- Աղտո հետ ա ըստեղ:

Քյնըմ ա վնագ ակը տալի, տենըմ ա, որ էտ աղամանդները, էտ անգին քարերը դեռ մեչը մնըմ են: Դե աղ ա էլի, ի՞նչ են թամաի արել, ասել են.- Աղի մեչ ի՞նչ կըլի՝ ոչ մի պան:

Նա էլ էնպես, սկզբից էնպես արել ա, որ ոչ մի մարթ կնկատի, որ ըստեղ ինչ-որ աղի մեչ թանկարժեք ինչ-որ իր կըլի թաքնված: Դա՛, վերչը ախճիկն ասըմ ա.- Այ տա,- ասըմ ա,- տու խի՞ ինձ դավաճանեցիր,- ասըմ ա:

Ասըմ ա.- Չի դավաճանեցի:- Պատմությունը պատմըմ ա.- սհե, սհե, սհե, տպես, էսպես եղավ, ես էտ անկին քարերի հետևիցը քյնացի, քեզ մոռացա, հմի էս քանի ժամանակ ա ես քու հետևիցը ման եմ էկել, հազիվ բախտ վիճակվեց ինձ, ես քեզ քըբա:

Էտ ա մարթը, էտ տղան, հետո էտ մյուսը վեր են ունըմ ըխճկանը, իրա խանութ-մանութը բըրախըմ տեղն ու տեղը, քյնըմ են Բաքու քաղաքը, տանըմ են հարսանիք անըմ էտ տղին, իրան լավ օժիտով-պանով, տալիս էտ տղին ու տըղանով քյնըմ են կյանք վայելո՞ւմ: Թող իրանք բախտավորվեն իրանց միար, տուր էլ ծեզ համար բախտավորվեք:

38(38). ՀԱՎԱԿՈՑՈՒՄ

Սի մարթ մի կնիկ են ըլըմ, էտ մի ախճիկ են ունենըմ: Երկու տղա ա ուզիլիս ըլըմ: Էն մի տղեն փախծըմ ա տանըմ, էն երգորթ տղեն, իրան հենց սիրիլու տղեն (իրան որ սիրըմ ա), էն տղեն յեղենն քյնըմ ա՝ ծեռիցը խըմ, տանըմ բուճըմ ինչ-որ¹: Դե էն ա, էն տարել ա, դե գիղըմ չե՞ս, որ տարել ա՝ էն ա մի պան անիլ դի էլի: Տարել ա ըրեխն քաշ-քաշ արել

¹ «Բա ի՞նչ էր եղել, որ տարավ բուժեց, մանրամասն պատմի», - խնդրում է բանահավաքը (ծանր. բանավաքի):

ա, ըրեխեն համոզվել չի ու նույն հիվանդացել ա, են ախճիկը, իրան քոյայնութենիցը:

Էն տղեն հասել ա ծեռիցը խել, տարել բուժել երկու ամիս, մըիկ քյացել են մի սարի, մի սարի վրա՝ մի անտառըն մի ծառ ա ըլել, թփի ծառ, տակին նստել են: Էտ տղեն տըրել ա կյուխը են ըխճուկա կյոքին մի քիչ քնել, մի քիչ քնել ա, էտ ախճիկը համ լաց ա ըլել, համ ասել, լացի կաթիլը էտ տղի կըլխին վեր ա ընգել, էտ տղեն գարթեն ա տենել էտ ախճիկը լաց ա ըլլըմ, թե.- Խի՞ ես լաց ըլլըմ:

Թե.- Դե լաց եմ ըլլըմ էլի, որ եկել եմ ըստի հասել, տուն չունենք, տեղ չունենք:

Մըիկ էտ տղեն ասըմ ա.- Կյուխըտ տիր կյոքիս տու էլ քնի:

Կյուխը տըրնըմ ա կյոքին՝ քնըմ, տղեն ծեռ-ները մազերն ա քսըմ ու են բռնաբողի մատանին վեր ա ընգընըմ մազիցը, դուշը կյալիս ա վեր ունըմ տանըմ, տառ եղենք քյնըմ ա: Շատ ա քյնըմ, քիչ ա քյնըմ, քյնըմ ա տենըմ՝ իրեք ծառ կա, կեն տեղի ծառի փղջակըմ պյուն կա, էտ դուշը ըստի մտավ: Քյնըմ ա տենըմ մի մարթ, մի կնիկ ըրեխա չունեն, էտեղ նոքյոր ա մտնըմ, ասըմ ա.- Նոքյոր չե՞ք ուզըմ:

Ասըմ ա.- Ուզըմ ենք:

Ըստի նոքյոր ա աշխատըմ, իրեք տարի ըշխաղըմ ա, թե թա՞մ թե էտ մատանին քյքնի, քյքնըվըմ չի: Իրեք տարի ըտեղ մնըմ ա: Իրեք տարուց հետո՞վ, որ ուզըմ ա իրան աշխատավարցը ըստանա կյա, են տան կնիկը՝ խանըմն, ասըմ ա թե.- Պժն արեք, ասա՝ ծառը կտրի նոր քյնա, դե մենք տղա չունենք, ըրեխա չունենք, որ մեր ծառերը կըտրատի:

Երկու ծառը կտրիլ են տալի, իրանց միար ծըմեալին փետ ա, ու էտ մատանին վեր ա ընգընըմ, էտ տղեն վառա՞վառա՞վ վեր ա ունըմ ջըրին տըրնըմ ու ասըմ ա.- Ես քյնա՞մ:

Տիանք խնթըմ են, թե.- Ծառը կտրի:

Կտրըմ ա, էտ որ հըրաքյաթ տալի, որ պրծնի, վեր ունի կյա՝ էտ մատանին: Էտ ըխճուկանիցը տեղեկություն չունի: Վեր ա ունըմ կյալի, ճամփունը, որ բըզաղըմ ա, աղն առնըմ ա բանկեն լքցնըմ, էտ մատանին միջին տըմըմ ու տընըմ կըլխի տակին, որ ո՞վ որ պա՞ց անի, տենա, որ աղ ա, մատանի չկա, պա՞ն չկա, ոսկի չկա: Մի տղա հենք իմանըմ ա, թե ոսկի

ա, վեր ա ունըմ էտ աղի բանկեն տանըմ, տանըմ ա, ասըմ ա.- Էս ա, լա՞վ ա, աղ ա:- Դե ընդով էլ աղը ճարվեր ո՞չ:- Հա՛, լա՞վ ա տանեմ Հալվագյոզալին, մա խանութպան ա, ծախըմ ա, մի լա՞վ ախճիկ ա, հալվա ա ծախըմ, տանեմ իրան տամ մի կտոր հալվա տա՝ ուտեմ փորքս կուշտանա:

Էտ ա պիրըմ ա Հալվագյոզալին տալի: Հալվագյոզալին էտ հալվեն էփիլիս տենըմ ա մատանին մեջեն վեր ա ընգընըմ: Հա՛, վեր ա ունըմ ընդիան ասըմ.- Վա՛, էս մատանին ի՞նչ ա, են տղեն սրա՞մ ման ա կյալիս:

Էտ ա վեր ա կենըմ, տենըմ ա էտ տղեն էկավ, որ բանկեն պիրեմ ա իրան տվել՝ էտ տղեն տառ ըտեղ ա: Էն ա մըն էլ տենըմ ա մի պառա՞վ մարթ տուն մտավ: Տա՛ ասըմ ա.- Ախճիկ ջան, որ մըջել ըրուգու ըստեղ կենամ, մի կորուստ կա կըքըթեն՝մ:

Ասըմ ա.- Հա՛, ի՞նչ կորուստ ա:

Թե ասըմ ա.- Մի ախճիկ ա, սիե, սիե, սիե: Ես իրեք տարի ա ման եմ կյալի քյքնըմ չեմ:

Ասըմ ա.- Հա՛, ըտեղ կացի:

Ճըմանա՞լըմ ա, որ իրոք իրան հերն ա էլի, ման ա կյալի եղենք:

Ասըմ ա.- Ըստի կացի:

Դե էտ ախճիկն էլ քոլընը հու մնալ չդիր, մի տեղ քյացել ա գյուղը մտել, գյուղիցն էլ ըտեղ ա էլի...

Հա՛, են ա մնըմ են իրեքն էլ ըտեղ, էտ տղեն էլ ա կյալի ըտեղ, էտ հերն էլ ա կյալի ըտեղ, են բանկեն ծախաղ տղեն էլ են ա ըստի ա ու ըստի:

Ասըմ ա.- Պապա՛ա, կացի մըջել ըրուգու մի գուցե կյալիս ա քու Հալվագյոզալին: Էտ ա են տղին էլ.- քու կորո՞ւստը:

Էն տղեն էլ ասըմ ա, թե.- Սիե, սիե,- ասըմ ա:

Ասըմ ա.- Հա՛, տու էլ կացի, բալի կյալիս ա քու կորուստը:

Տիե անըմ ա, մթընցըմ, տանըմ իրանց տանը հաց սարըքմ, հաց ուտիլ տալի ու ասըմ ա, թե.- Հմի որ ծեր կորուստնին պիրեմ, կըճըմանա՞լք մեկտ ու մեկտ:

Թե ասըմ ա.- Հա՛:

Ինքը հաց ուտիլուց եղը քյնըմ ա չորերը փոխըմ կյալի, կյալի ասըմ ա, որ.- Ծեր կո-

րուստն ե՛մ:Յա՛, կյա՛լիս ա ասըմ.- Ծեր կո-
րուստն եմ:

Էն ա նրան հըրցնըմ ա, թե.- Ի՞նչ ես
կորցրել:

Ասըմ ա.- Ըխճըկանս եմ կորցրել:

Նրան հըրցնըմ ա, ասըմ ա.- Սիրածիս եմ
կորցրել:

Վերջը էտ տղին վեր ա ունըմ խայտառա-
կըմ՝ էտ բանկին կյողանողին, ընդհան էտ
մարթը իրան փեսին վեր ա ունըմ կյա՛լի, օխ-
տն օր, օխտը քըշեր հրսանիք անըմ: Նրանք
հասնըմ են իրանք մուրազին, տու էլ հասնես
քու մուրազին:

39(39). ԹԱԲԱՎՈՐԻ ԱՆՉԻԿՆ ՈՒ ԱՎԱԶԱԿԱՐԵՏԵՐ*

Լինում ա, չի լինում մի հարուստ թաքավոր
ա լինում: Էտ հարուստ թաքավորը ունենում
ա մի միումնար ախչիկ: Էտ ախչիկը մեծանըմ
ա, տռռնըմ ա մոտավորապես տասնութ տա-
րեկան, ասըմ ա.- Սի հատ գնամ իմ հորս
պալատները ման գամ տեսնամ ի՞նչ կա, ի՞նչ
չկա էլի, էսքան մեծացել եմ:

Գնըմ ա հորը գլուխ տալի ու ասըմ ա.-
Պապա, թույլ տու ես գնամ պալատները ման
գամ:

Ասըմ ա.- Լավ գնա:

Գնըմ ա պալատները ման գալի, տեսնըմ
ա, որ հերը շատ հարուստ ա, ոսկին հորերը
լի՛քը, պաղվալները լի՛քը, ասըմ ա.- Պապաս
ես ի՞նչ հարուստ ա: Ու թողըմ գնըմ:

Անցնըմ ա արանըր մի ամիս, երկու ամիս,
նորից ա էլի, էլնըմ ա ման գալի: Յետո էլի ա
գնըմ ման գալու մի անքամ, մեկ էլ տեսնըմ ա,
որ հոր ոսկին ինչ-որ պակասեւ ա, ասըմ ա.-
Աստված, էն վախտ էսքան լիքն էր, ինչի՞ հմի
էսքան պակասեց ոսկին:

Էլի տհենց մի ամիս մնըմ ա, գնըմ ա էլի
ման գալի, տեսնըմ ա, որ էլի շատ ա պակա-
սեւ, ասըմ ա.- Ըստեղ մի բան կա, սպասի մի:

Գնըմ ա հոր մոտը, թաքավորին գլուխ ա
տալի, ասըմ ա.- Բա մեր ոսկին,- ասըմ ա,-
էսքան պակասեւ ա, ո՞նց կըլի:

Ասըմ ա.- Աղջիկ քան,- ասըմ ա,- տու կե,
խմի, քեզ համար ման արի, ինչի՞ ես մտածըմ,
լի՛քը, հարուստ, ամբողջ աշխարհը մեր
ծեռին ա: Կեր, խմի, քեզ համար ման արի, իմ
ոսկին կպակասի, ինչ կըլի՞ ջիանդամը:

Ասըմ ա.- Դե լավ:

Ասըմ ա ու ինքը գնըմ թաքուն հոր թուրը
վերցնըմ ու մի հատ պուճուր խալի վերցնըմ,
գնըմ պաղվալը մտնըմ, պաղվալի մեջը քնըմ
հոր թուրն էլ ծեռին: Գիշերվա ժամը երեքը մի
սովորական մեռյալ ժամ ա, թե ցերեկվա ժա-
մը իրեքը, թե քշերվա ժամը իրեքը մեռյալ
ժամեր են: Էտ մեռյալ ժամի ժամանակը մեկ էլ
ախչիկը շղիկշղիկոց ա լսըմ: Մեկ էլ տեսնըմ
ա, չէ՛ կամաց-կամաց էտ շղիկոց-թղիկոցը
մոտացաւ, մոտացաւ: Մեկ էլ տեսնըմ ա, որ
վիրկիցը մեծ փըլձքձան իջաւ պաղվալի մեջը,
ու ընդեղից էլ արթեն մարթիք են իջնըմ: Տու
մի ասիլ, տա՛ւ ավազակներ են, եռեսնընը ա-
վազակ ա, մի սիստ պետ: Պետը մնըմ ա
ընդեղ, էտ եռեսնընը մարթը գնըմ են գալի՝
ոսկին հանըմ, տանըմ ընդեղ տեղավորըմ
գյալի: Էտ ախչիկը մեջը կայնած, որը
փըլձքձնով գալիս ա՝ գլուխը տալիս ա,
տասնհինգը գալիս ա՝ տասնհինգի գլուխը
տալիս ա: Էտ ավազակապետը կտիս ա
ընգնըմ, որ ըտեղ մի պան կա: Յետո էլի ասըմ
ա.- Լավ, մի քիչ էլ սպասեմ:

Սինչըր մի քիչ էլ սպասըմ ա էտ տասն-
հինգն էլ գյալիս են, տըհանց կյլուխն էլ ա
տալի, տասնչորսը, տասնչորսն էլ գալիս են,
տիանց կյլուխն էլ տալիս ա¹: Տալիս ա արթեն
սպանըմ ա, արթեն ինքն էլ սիե սառած ար-
ծանի նման կաղնած ա արթեն: Շուռն էլ չկա,
որ շնչի: Էտ ավազակապետը տեսնըմ ա, որ
արթեն, չէ՛, ըտի բան կատարվեց, իջնըմ ա:
Գալիս ա փըլձքձնի վերևը կանգնըմ լուսը
քցըմ տեսնըմ ա, որ եռեսնընընը մարթը
կտորված, մի հատ ախչիկ կաղնած, թուրը
ծեռին արծանի պես կաղնած ա, ծեն չկա: Էտ
մարթը լուսը քցըմ ա ախչիկ երեսը, նաև
ասըմ ա.- Սինչև, թաքավորի ախչիկ, ես գնըմ

¹ Բանասացն ավազակների փվը չփոթում է, հավանաբար պետք է քանչորս ասի, որովհետև թագավորի աղջիկը երեսունընը ավազակի է գլխատում (ծանոթ. բանաստեղծի):

եմ, տոււ իմ եռեսունհինգը մարթին սպանել ես, ես գնում եմ, միայն լուսը քցւում եմ իմ երեսը, որպէսզի տոււ ինձ որդեղ տենաս՝ ճնանչես, լա՛ւ մայի,- ասըմ ա,- որ ինձ մի տեղ տենաս՝ ճնանչես:

Աղջիկը ուշքը գնացած ա ըլըմ, տրա ոչ մի խոսքը չի լսըմ, ոչ մի խոսքը չի լսըմ տրա, ու ավազակապետը մարդկանը քաշըմ ա, փաթաթըմ ա ու գնըմ ա, իրարից քցըմ, փոնըմ գնըմ:

Էտ ավազակապետը ըտեղից գնըմ ա կոշկակար ա սվորըմ: Մինչև մի տարի ժամանակ կոշկակար սվորի, հետ տառնաճը տենանք ախչիկը մահացա՛վ, թե՞ սաղ ա: Էտ ա տրիվոզը ընգըմ ա, որ թաքավորի ախչիկը չկա, ման եմ կլալի ես կողմ, եմ կողմ, վերջը հերոն ասըմ ա.

- Հլա գնացեք ոսկու պահեստը, հլա տեսք:

Գնըմ են տեսնըմ եռեսունհինգ մարթը կտորած, ինքն էլ անշունչ վեր ընգած, զոռով տըրըվըմ ա, այլ ըսենց՝: Էտ ա վերցնըմ են բերըմ տուն, ես կողմ, եմ կողմ, բոխկ-պան, մինչև մի տարի տրան բուժըմ են, հազիվ լուզուեմ բացվըմ ա: Էտ ա թաքավորի ախչիկը լավացել ա, կամաց-կամաց բալկոնըմ ման ա կլալի: Էտ ավազակապետը կոշկակար սվորել ա, եկել թաքավորի հենց դեմ ու դեմ մի հատ բուսկա սարքել, կոշիկ ա ծախըմ: Էտ շան տղեն էլ էնքան սիրուն ա, որ էն ա, որ ախչիկը տեսնըմ ա, ասըմ ա.- Էս ուտիլու բան ա, էս ի՞նչ ա, էնքան գեղեցիկ, էնքան սիրուն:

Հետո թաքավորի ախճիկը, որ տեսնըմ ա հա՛, բուսկա կա, սինց բուսկա, կամաց-կամաց փլըճաճն իչնըմ ա, կլալի ըտի տեսնըմ մի սիրուն տղա կոշիկ ա կարըմ: Ներս ա մտնըմ:

Ասըմ ա.- Հա՛, ասըմ ա,- ախճիկ քան, էտ ո՞վ ես, ումանցի՞ց ես:

Ասըմ ա.- Թաքավորի ախչիկն եմ:

- Ի՞նչ ես ուզըմ,- ասըմ ա,- զակազ տու՛քեզ համար կոշիկ կարեմ, վախիւ մի փող չեմ ուզիլ, մեր թաքավորի ախչիկն ես: Ուղտ ո՞ր համար ա:

- Էս համարն ա,- ասըմ ա, թողըմ գնըմ:

Էքսի օրն ա գալի, գալիս ա տեսնըմ, որ կոշիկնին պաղրատտ ա: Հանըմ ա իրան ձեռովը ոտները իքցնըմ, շինըմ, ասըմ ա, թե.- Ինչ լա՛վն ա, ախչիկ քան, քեզ փեշքեշ ըլի, գնա:

Գնըմ ա էտ հորը պատմըմ, որ սինց, սինց ես կոշկակարը ինձ հմար սին կոշիկ ա կարել, հաքցրել:

Ասըմ ա.- Դե լա՛վ արել ա:

Ու էտ կոշկակարը ըրուզիւնը վեր ա կենըմ քյնըմ տրանց տունը էտ ախչկանը ուզելու: Քյնըմ ա, ասըմ են-խոսըմ են, վերջապես թաքավորը ասըմ ա, որ.- Տոււ պտի տան վրա գաս, ինձ տղա չունեն, որ ժամանազին իմ փայը գրեմ ծեր ճակատին, որ տուք փայի տեր տառնաճ, վաղը էլ տոււ թաքավոր ըլնես իմ տեղը:

Ասըմ ա.- Լա՛վ, պապա, ինչ ասես, ես կըլսեմ, էնքան, որ աչքս ընգել ա քու ըխչկանը, պտի ուզեմ:

Էտ ա համաձայնվըմ են, պիրըմ են յորը օր, յոթ քշեր հրսանքի անըմ, պատկըմ տրանց: Նրանք ապրըմ են, ավազակապետը և էտ ախչիկը միասին ապրըմ են՝ որպէս ամուսիններ: Յորը տարի ապրըմ են, ունենըմ են հինգ տարեկան մի հատ տղաըրեխա, մեկ էլ չորս տարեկան մի հատ տղաըրեխա: Օրերիցը մի օրը էտ մարթը գալիս ա տուն, կնգա մոտը մտըմ ա, ասըմ ա.- Այ կնկի, տոււ իմ կնիկն ես եղե՛լ էքքան, էս յորը տարի:

Ասըմ ա.- Հա՛:

- Տոււ ինձ ճնանչըմ ե՞ս,- ասըմ ա:

- Հէ՛, որ,- ասըմ ա,- ասեմ չէ, կիավատա՞ս, ո՞նց չեմ ճնանչըմ, իմ ամուսինն ես եղել յորը տարի, մենք երեխեք ունենք:

- Լա՛վ,- ասըմ ա,- էլ ուրիշ ձևի չես ճնանչը՞մ:

Ասըմ ա.- Հէ՛:

- Բա տոււ մի անքամ ինչի՞ չասեցիր, որ, այ մարթ, տու ի՞նչ ցեղից ես, ի՞նչ մարթ ես, ո՞վ ես, ծնողներ ունե՞ս, թե՞ ինչ ես:

Ասըմ ա.- Եսիմ, դե չեմ ասել էլի:

- Հա՛, դե որ չես ասել հա՛, ուրեմը մեղավորութիւնը քեզանըմ ա, հիմա մենք պտի գնանք իմ ծնողներին մոտ, պապայիտ ասա, թող

¹ Բանասացը ցույց է տալիս, թե ուշագնաց աղջիկն ինչ վիճակում է (ծանոթ. բանաստեղծ):

պատրաստութիւն տեսնա, առաւորող մենք ճանապարհները:

Գնում, էտ ա պատրաստը ա պապան ամեն ինչ, սարքը ա, երկու մի են բերըմ բարցըմ, էլ խալի¹, էլ կտո², էլ ոսկի³: Երկու ծին էլ բարցըմ են ամեն ինչով էլ, ինքը ծիուն մտղըմ ա՝ մեծ տղին դնըմ առաջին, կնիկն էլ մեկին ա մտղըմ պուռուր տղին տընըմ առաջին, ճամփա են ընգնըմ, ախչիկ քան⁴:

Շատ են գնըմ, քիչ են գնըմ, գնըմ են հասնըմ մի ուրիշ թաքավորութիւն, թաքավորութիւն անց են կենըմ իրանց, որ էտ մարթը, էտ տղեն՝ էտ ավազակապետը, ուրիշ թաքավորութիւնից ա: Գնըմ են երկուսի սահմանի արանքըմը մեկնց երկու հատ մեծ ծոր կա, պտի էտ ծորովն անցնեն գնան: Էնքան լավ խտտ ա ըլըմ, որ էտ մարթն ասըմ ա.- Դե ծիանը թողենք, ըստեղ մտղենք մենք հաց ուտենք ու մի քիչ էլ համազտանանք, կգմանք:

- Լամ:

Էտ ա ծիանը թողըմ են, հաց են քցըմ, հաց են ուտըմ, պըրծնըմ, ըրեխըմ վեր են կենըմ ծախիկ մեչը խաղ են անըմ, ինքը էլի կյնգանը սկսըմ ա, կյնգանը հարցըվորը անիւ, թե.- Այ կնիկ, բա տու ինձ չես ճանչըմ⁵:

Ասըմ ա.- Տու էտ խոսքը քանի անքամ ասեցիր, դե իմ մարթն ես եղել էլի, ի՞նչ ճանաչեմ:

- Սկի չես ճանչըմ⁶:

- Չէ՛:

- Բա ես են ավազակապետը չե՞մ, որ իմ եռեսնինը մարթին կտորեցիր, հմի ասա դե, քու բերանովը ասա, ի՞նչ անեմ: Ի՞նչ ա արծանի քեզ, որ պատիծ տամ էլի:

Ասըմ ա.- Դե էլ ի՞նչ ասեմ, էն ժամանակ պտի տու ինձ սպանեիր կենդու, հիմա էլ մենք երեքն ենք տռռել իրան էլ չի ասըմ էլի, մենք երեքն ենք՝ երկու երեխա, ես: Դմի տու կալա՞ս սպանես, ի՞նչ ասեմ:

Էտ անաստվածը գնըմ ա մեծ տղեն բերըմ թրի տակը քաշըմ, մորթըմ:

- Էլի ի՞նչ ես ուզըմ:

Ասըմ ա.- էլ բան չեմ ուզըմ, ինձ մորթի,- ասըմ ա,- թող էտ պուռուր տղեն ճնա մեզ հիշատակ:

Գնըմ ա էլ ա պիրըմ ծնգի տակին տընըմ մորթըմ: Խոտերի միջին էտ երկու ըրեխեն սիե թըվորտըմ են:

Ասըմ ա.- էլ ի՞նչ ես ուզըմ:

- Դիմա էլ,- ասըմ ա,- մնացել ես տու:

Տրան էլ քաշըմ ա, թուրը քաշըմ ա, որ մորթի, ախչիկը ծեռը դեմ ա անըմ սիեմց, ասըմ ա.

- Խընթըմ են սպասի:- Ծեռը թրին դեմ անըմ ա,- մի խոսքը ասեմ յոթ տարի մենք իրար հետ ապրել ենք, խընթըմ են ինձ մի քթալ ճուր տաս, մոր ինձ սպանես:

Էտ մարթը հետ ա տռռնըմ, թուր քցըմ ա են յանը, մտղըմ ա մտածըմ՝ ըստեղից մըչի Կրիվոյ² ճուրը հեռու ա, ասենք, մոտավորապես տիեմց ասենք էլի: «Ի՞նչ անեմ, ո՞նց գնամ ես ճուրը բերեմ հասցնեմ, ուրուշ հնար չկա, մտածեմ, ո՞նց անեմ, ի՞նչ անեմ»:

Պիրել ա ախչկանը պառկացրել մեչքի վրա ու ծեմնեիր միջիցը, էն մետրաճոց մնիլ ա ըլըմ, թե ի՞նչ մեխերով մեխել, ոտները մեխել տափին ու ինքը մնացել ջրի: Գնացել ա ջրի, որ ահագին տեղ անց ա կացել, ախչիկը սկսել ա հավար բռնալ:

- Դավա՛ր, օքմեցե՛ք, օքմեցե՛ք, ինձ սպանեցին, օքմեցե՛ք:

Էտ ծեմի վրա մի բիծա մարթ հանդերըմը աթար ա հվաքըմ կովի թրիք, ապրանքի թրիք, հավաքըմ ա, որ, մի մարթ ու կնիկ են էլի պառալ, ծերացած, էտ թրիքը չորացնըմ են, ապրըմ են ձմեռը: Էտ մարթը ծեմ ա լսել, տեսել, որ մի հատ ծեմ ա կլալի, մի հատ հավար են բռնըմ: Չեմի վրա էկել ա, էկել ա էտ ըխչկա վրա կայնել: Տեսել ա, որ սիե մի լավ օղլուշաղ ա՝ ըսիեմց տափին մեխած: Քաշել ա մեխերը տուս քաշել հանել, ախչկանը ու վռազ-վռազ կոխել էտ մեշոքի մեչը, մի քիչ աթար ա լլլուխն ածել, մեշոքը շլուկել ու ճամփա ընգել: ճամփա ա ընգել, շատ ա գնացել, քիչ ա գնացել, վերջապես էտ մարթը

¹ Բանասացը դիմում է բանահավաքին (ծանոթ. բանահավաքի):

² Ձողազից մինչև Կրիվոյ մոտ (Կրիվոյ կամուրջ) մոտավորապես տաս կիլոմետր կլինի (ծանոթ. բանահավաքի):

ճրդիցն էկել ա, ավագակապետը ճրդիցն էկել ա, տեսել, որ ախչիկը չկա, մեխերը, պանը սաղ թափած, ընդի արին-պան, ծեռներից բան արյուն ա քյնացել, ու ախչիկը չկա: Ման ա եկել էս կողմ, էն կողմ, քյնացել ա հասել բիծին:

- Բիծա ջան, սինց մի ջահել չե՞ս տեսել, ըստեղեք ման գալիս:

- Չէ, քե մատաղ... ասել ա:

- Բիծա, բա տու ի՞նչ ես հավաքըմ:

Թե.- Աթար եմ հավաքըմ, էն ա մեշոքը շալակիս:

- Դե հլա մեշոքըտ պի տեսամ:

Մեշոքը տընըմ ա, տե՛նըմ ա՝ աթար ա ու թողըմ ա ծին ջըըմ հետ գնըմ: Ծին ջըըմ ա հետ գնըմ, էտ բիծեն մեշոքը շըլակըմ ա, հասնըմ ա տուն, դե ախչիկը արնաքամվըմ ա էլի, ուզըմ ա շուտ տուն հասցնի: Տուն ա հասցնըմ, ախչկանը բուժըմ են, ախչիկը ըստեղ ապրըմ ա, ինչպես տհանց ախչիկը: Սկսըմ ա ապրելը:

Յմի խաբաթը տանք էն ավագակապետին, տե՛նանք ու՞ր գնաց նա: Ավագակապետը ըստեղից իրան վեշը, բանը հվաքըմ ա մի ծղյուղ նատըմ ա, մի ծին էլ քաշըմ ա ու ճամփա ընգնըմ գնըմ: Գնըմ ա հասնըմ իրանց տուն, գնըմ ա, մեծ-մեծ տղերք ունի, տե՛նըմ ա տղեքն էկան առաջը, կնիկը տուս եկավ, հերն ու մերը տուս եկան, մեծ տուն, ընտանի՛ք, մե՛ծ, հարու՛ստ: Ծիանը տանըմ են ներս քաշըմ, տանըմ են թափըմ վեշը, պանը, ըստեղ էտ մարթն ասըմ ա.- Այ հերա, այ մերա, իմ գործը շատ ծանոթն ա, ես շատ կորուստներ եմ տվել, ես էլի գնըմ եմ:

Տա՛ գնըմ ա մեկ էլ ցիրկ ա սվորըմ, մի վեց-յոթ մարթ ա հավաքըմ ու ռոճիկն էլ ինքն ա տալի տրանց ու ցիրկ ա սվորըմ, ցիրկ ա սվորըմ: Թող տա՛ ցիրկ սվորիլեն գնա իրան գործը կադարի, գնանք տե՛նանք ախճիկը ըստեղ ո՞նց եղավ:

Ախճիկը ըստեղ ապրըմ ա, էտ բիծի տանը, լավ էլ շնորք ունի, ծեռի ճուրղով-բանով՝ անըմ ա, էտ բիծին, պանին պահըմ ա:

Օրերից մի օր էտ թաքավորի տղեն էստեղից ծին քաշած անցնիլիս ա ըլըմ, անցնիլիս ա ըլըմ, մեկ էլ տեսնըմ ա, որ էտ բիծի տանը մի հատ սիրուն ախչիկ աչքովն ընգավ ու մողանըմ ա, պատուհանիցը նայըմ տե՛նըմ, որ... Ախչիկն էլ չի տեսել, որ էրեսը էն վախտը ցեխ էր քսըմ, որ սիրունութիւնը չերկա էլի, բայց որ տե՛նըմ ա տանը մարթ չկա, գլուխը լվացել ա, մազերը երգիլեն սանդղըմ ա: Էտ թաքավորի տղեն էլ տեսել ա, ուշքը գնացել ա, ուշքը գնացել ա:

Թե.- Ի՞նչ անեմ,- ասըմ ա,- սա ի՞նչ ախչիկ ա,- հետ ա դառնըմ գնըմ տուն, թե.- Պապա,- ասըմ ա.- Մինց փլան տանը սինց, սինց ախչիկ կա, որ ինձ հմար չես ուզել, ես կլլուխս կառնեմ կկորչեմ, ես էլ քու տղեն չեմ:

- Տեր աստված,- ասըմ ա,- այ ըրեխա, միանք ծերացած մարթ ու կնիկ են, ըսկի երեխա չեն ունեցել, ընդեղ ախչիկ չկա, սուտ ես ասըմ:

Վերջը թաքավորը մարթ ա ուղարկըմ, գալիս են տեսնըմ, որ, իսկապես, մի հուղփե-րի ախչիկ: Մեկ էլ թաքավորը իրիգունը մի քանի մարթ ա վերցնըմ կյալի տրանց տուն, տրանց տուն, որ ասըմ ա էտ բիծին.- Ասա, որ քու ախչիկը տալ դես իմ տղին: Ես էլ թաքավոր եմ, քեզ ամեն հարմարութիւն էլ կտամ, մի հատ ծառա էլ կտընեմ ծեր առաջին ծեզ պահի՛, էնքան որ տղիս խոսկը չկատարեք՝ տղես կլլուխ առնըմ ա տանիցը կորչի:

Ասըմ ա.- Լա՛ւ, կհամաձայնեմ ես, բայց դե պտի ախչկան հարցնեք էլի, տե՛նանք ախչիկը ի՞նչ ա ասըմ:

Էտ ա կանչըմ են ախչկանը, ախչկանն ասըմ են.- Ախչիկ ջան, բա թաքավորի տղեն քեզ ուզըմ ա, ի՞նչ դես անիլ:

Ասըմ ա.- պապա ջան,- ասըմ ա,- միայն իմ գործը շատ վայնի մեջ ա էլի մինց, ես դու՛ւման ունեմ, ես ամուսնացած եմ եղել, ես երկու տղա եմ ունեցել, ես էլ մի դու՛ւման եմ ունեցել, ավագակա ա եղել, իմ ըրեխանցն էլ սպանել ա, ինձ էլ էտ բիծեն ա սպանիլու տեղից ազատել բերել: Այ էսպես, էսպես, էսպես: Ես ամուսնացած եմ եղել, իմացեք, որ հետո բան չանեք էլի, չկռվեք, բան չանեք հա՛: Միայն պետք է պարծի շենքեր ըլի, որ մենք

¹ Ծեռի ճուրղով-բանով - աստեղագործելու և կարելու շնորք, կարողություն (ծանոթ. բանահավաքի):

բարձր շենքերում ապրենք մինչև էտ դուշմանին տեսանք ի՞նչ ենք անում:

Տղեն ասել ա.- Ամեն ինչ էլ կանենք, ամեն հարմարություն էլ կանենք, միայն թե ախչիկը համաձայնվի:

Էտ ա ախչիկը համաձայնվել ա, ըրուգուրը վեր են կացել վե կալել էտ ախչիկանը տարել իրանց տղի համար: Էն ա հարսանիք չեն անում մինչև առժամանակ: Էտ ա տիռնք ըտեղ մի իրեք-չորս տարի ապրում են, մի հատ տղաըրեխա էլ ունենում ա էտ կնիկը:

Չմի թող տիռնք ըտի ապրեն, խաբար տանք ավազակապետից, տենանք իկա ցիրկոթինը սվորե՞ց, թե՞ չէ: Ավազակը ցիրկը սվորել ա, ցիրկ տալեն ամեն աշխարհ էլ ման եկել, եկել ա հասել էտ քաղաքը: Հասել ա էտ քաղաքը, էկել ա հասել, համարյա թե տիռնք մայլեն ա հասել: Մի քիչ հեռու ա ըլել, տղեն տեսել ա, որ ցիրկ են տալի, էկել կյնգանն ասել թե.- Արի գնանք ցիրկ: Էնպես ցիրկ են տալի,- ասում ա,- որ չտեսնված, սաղ ծիծաղից թուլանում են, էնենք բաներ են անում: Էկեք գնանք մի քիչ զվարճանանք էլի:

Տա ասել ա.- Չէ՛,- ասել ա,- չէ՛,- ասել ա,- Ես չեմ գա, տու գնա, խնդրում եմ տու գնա, ես չեմ գա:

Վերջը գուռ արել ա, ինքը չի գնացել: Մեկել որ էկել ա ու հենց տըռած դեմն ա չադիրը խփել են անդերը, հա՛, փախկան ա էլի, քլումդըրբա՞զ ա էլի, խաղ անում ա, հա՛մ էլ ցիրկեր ա տալի: Հետո կյնգանն եկել ա ասել.- Դե հմի էլ մեր տան դաքին ա, արի գնանք տենանք:

Տա ասել ա.- Չէ՛:

Էտ կինն էլ, իրան հերը եղաքի երկու ատամը գուր քցած ա ըլել, մաքուր ոսկի էլի, հեռվից էլ տա պսպղոյին ա տալի: Ասել ա.- Ես կկյած բալկոնիցը կնայեմ, տու գնա ընդեղից նայի:

Ախճիկը տուս ա եկել բալկոնը, նա էլ, փախկանի պես, են անդեր գծի վրա ու նայում ա տիանց բալկոնին, բալկոնին նայում ա, մեկ էլ տեսնում ա՝ հետք մի ախճիկ տուս եկավ, մի ախճիկ տուս եկավ, տա որ էնենց ուժեղ պան ա անում հա՛, հա՛ ախչիկը ըտեղ ծծողաղմ ա, որ ծծողաղմ ա, երկու գուրը բացվում ա: Երկու

գուրը որ բացվում ա, ասում ա.- Դե,- իչնում ա, ասում ա,- լավ,- ասում ա,- արթեն մեր խաղը վերջացավ, ըստեղ կարաք,- ասում ա,- ամեն-քըտ ծեր տուս գնաք, ծեր ռոճիկն էլ, իրեք ամսեն ռոճիկ էլ կտամ, որ ծեզ համար գործ ճարեն՝ չքել իրեք ամիսը: Էլ արթեն ըստեղ վերջացավ մեր խաղը:

Էտ ա իչնում ա, իրան սուճկիցը սաղ գործիքները հավաքում, տղերանցն էլ ռոճիկով բավարարում, ճանապարհը, ինքը գալիս ա մի տեղ նստում, մինչև մթնի: Մութը մթնում ա, արթեն ախճիկը իմացած ա ըլում, ախչիկը շորը չի հանում, որ քնի, մի քիչ գործ ա անում ու քյնում շորերը հաքին սիտ տղի մոտը պառկում, ըրեխեն քնացնում ա, բան անում ա, ըսպասում ա, որ մեռյալ ժամին անպատճառ տուս կկյա, քշերվա իրեքին տուս կկյա: Մեկ էլ տեսնում ա քշերվա իրեքին հետք սողունի պես սնովը սիտ բարձրացել ա: Բարձրացել ա սնովը ու քյնացել ախչկա կուշտը, քյնացել բալկոնը, հլե պատուհանի դաքին տուս ա կյալի էտ տղեն, ախչիկն ասում ա.- Սու՛ս,- ասում ա.- արթեն գալիս եմ, ձեն չի հանես:

Կամա՛ց, շորերն էլ հաքին ա, հանել չի, արթեն գիդի էլի ինքը ա ուս ա կյալի կամաց, դուռն էլ հետ ա անում, ասում ա.- Դե իմ արյունը քեզ հալալ ըլի, արթեն էլ չեմ կարա, էսքան փախի-փախի արի, վերջը իմ աջալը քու ծեռով պտի ըլի, կարաս արթեն սպանես:

Տղեն թուրը քաշում ա, որ սպանի, ախչիկն ասում ա.- Լավ էլի, դե հմի են ա քունն եմ, պտի սպանես, սպասի մի քիչ գուրց անենք, քանի տարեն ամուսիններ ենք ըլել, մի քիչ հանաք անենք՝ նոր:

Հա՛, էտ ա հանաք են անում մի քիչ իրար հետ, բան-ման են անում, ջան ախճիկ, ո՞նց ա ըլում էտ ախճիկը մի կեշ տեղից դրանից բռնում ա ու էտ քանի, էսքան հարգիցը տրան քցում ներքե: Հա՛ հաղալու ժամանակ անմեղեցնում ա, մի կեշ տեղից բռնում ա ու քցում, քցում ա, նոր ախճիկը տրիվեզը տալիս ա, զանգերը խփում ա, խփում ա զանգերը, տուս են կյալի ժողովուրդը՝ սաղ:

Ասում են.- Ի՞նչ ա եղել:

- Բա ես իմ դուշմանին սպանեցի:

Գնում են տեսնում, որ ներքևը եռեսնինը կտոր ա եղել, փաշիկն էլ տրա հետ՝ քառասուն կտոր: Ինքը եռեսնինը մարթ էր չէ՞, որ սպանեց, տղեն միանց հետ քառասունն էր չէ՞, հմի էլ եռեսնինը կտոր, մաքուր հաշվում են, տեսնում են եռեսնինը կտոր ա ըլել էտ տղեն, փաշիկն էլ տրա հետ՝ քառասուն¹:

Ես իմ հեքիաթը պոծա:

40(40). ՃԻՆԿԻ

Երկու հոգի են՝ քիւր ու փապեր, վերջը ապրում են էլի իրանց համար: Միսպերը միշտ փետ ա տանում բազարումը ծախում: Մի օր էլ տանելիս մի չոր կարկաժ ա պղտաիւմ, քացի ա տալի:

Կարկաժը ասում ա.- Տանես՝ կփոշմանես, չտանես՝ կփոշմանես:

Առ պիրում ա իշի փետը վեր ա ածում վառում, էրվում ա պրծնում, տեսնում ա մի հուլունք, քցում ա ջիբը:

Մի քանի օրից հետո քիւրը ասում ա.- Միսպեր քան, շորերդ տ հանի լվանամ, կեխտոված ա:

Շորերը հանում ա, լվանալու ժամանակ, ջեբերը ման ա կլալիս, ասում ա.- Թղթից, փողից կըլի, չթռչվի:

Տեսնում ա՝ էտ հուլունքը ջրբերը: Ծեռները թաց ա, վեր ա ունում պերանը քցում, որ տեսա ինչ պան ա: Պերանն ա քցում՝ կուլ տալի: Մի քանի ժամանակիցը էղը հղի ա ըլում:

Միսպերն ասում ա.- Այ քիւր, էտ ի՞նչ հիմարություն ա, որ տու արել ես:

Դե, - ասում ա.- փապեր քան, ասսանից թաքուն չի, քեզանից ի՞նչ թաքցնեն,- ու պատնում ա:

Միսպերն ասում ա.- Ընդուր էր ասում՝ տանես՝ կփոշմանես, տանես ոչ՝ կփոշմանես:

Կլալիս ա ժամանակը, էտ կինը խաշ-խմորի ա, էտ փապերն էլ մի լիւծ եզն ա ճարել,

քյնացել ա հանդընը վար ա անում, ցավը փռնել՝ փուռը վառած: Հետո ազատվում ա, երեխեն վեր ա կենում, ասում ա.- Շուտ արա դայիմի համար լոշ քցի, տանեն՝ հանդը:

Էտ ա վեր ա կենում, լոշ ա քցում, տալի ըրեխեն, վեր ա ունում տանում հանդը: Դե տեղը ի՞նչ ա գիղում:

- Բարև, դայի:

- Աստծու պարին, բալա քան, էտ ո՞վ ես, որ դայի ես ասում:

Թե.- Բու քրոջ տղեն եմ, քեզ համար հաց եմ պիրել, արի մստի հաց կեր:

Նստում են: Հաց ուտիլուց հետո դային ասում ա.- Չուրի մատը տու ես փռնում, թե՞ ես:

- Այ բալա, տու չուրի մատը պահող չես, ես կպահեմ, տու կարում ես՝ ուլախը քշի:

Նստում ա եզմանց ուսին, դային էլ չուրի մաճը փռնած ա: Հա՛յ-հա՛յ եզնիցը քշում ա, մաճը քեռու ծեռիցը վեր ա ընգնում, ասում ա.- Այ ճիխկո՛ կըլխամեռ, քիչ կամաց քշի էլի:

Անընդ կաչում ա ճիխկո: Սրանից հետո տեսանք ճիխկոն ինչ ա կատարում:

Մի թաքավոր միշտ էրազ էր տեսնում, մի մուլա էլ ուներ, կանչում էր նրան պատնում էր էրազը: Նա էլ սուտից-դորթից ասում էր, թե ինչ ա, թաքավորն էլ նրան փող էր տալի:

Թաքավորը էրազ ա տեսել, որ սև ծովը ու սիպտակ ծովը իրար են խառնվել: Մուլին կանչում ա:

Ճիխկոն ասում ա.- Դայի, մի մեշոկ վեր կալ, արի քյնացք թաքավորի պալատը:

Դայու հետ մեշոկը վեր կալան քյնացին: Թաքավորն էլ մուլին կանչել ա: Մուլին ասում ա.- Մուլա, քշերս էրազ եմ տեսել:

Մուլեն հարցնում ա.- Ի՞նչ էրազ ես տեսել:

Ասում ա.- Սև ծովը ու սիպտակ ծովը խառնվել են իրար:

Մուլեն ասում ա.- Անգլինն ու Ամերիկեն մտադրվել են քեզ վրա պատերազմ կլան, զգուշ մնա:

Ճիխկոն տրեռն տակիցը ասում ա.- Թաքավորն ասարած կենա, մուլեն քեզ խափում ա:

- Էտ ո՞վ էր էտ ասողը, կանչեցեք մի դիմաց կյա: Դիմաց ա տյուս կյալի, տեսնում ա՝ մի ըրեխա:

- Ասա՛:

¹ «-Մխմիկն էլ ա՞ ընգել,- հետաքրքրվում է պատուհնի ունկնդրող բանասաց Նատո Դազարյանը:

-Չէ, փաշիկը չի ընգել, փաշկա սաղ կտորն էլի, սաղ կտորը նրա հետ ըլնում ա քառասունը,- բացատրում է Սաթենիկ Հարությունյանը» (ծանոթ. բանահավաքի):

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, մոլլեն քեզ խափեց: Ան ծովը, սիպտակ ծովը քու քառասուն կյանգա մեջ ա, քու քառասուն կնա-նունցից մինը մարդ ա: Մի ժամով քու աթոռը տու ինձ, ես քու կնանուց հաշիվը իմանամ:

Թաքավորը համաձայնվում ա, ճիխկոյին աթոռին նստըցնում, ինքը՝ են կողմին նստում: Ճիխկոն, որպես թաքավոր, իրաման ա տալիս՝ էտ կնանուց կանչեն: Կանչում են: Հրա-մայրմ ա, ասըմ ա.- Մերկացեք:

Կանայք բոլորն էլ մերկանում են, մեկը շորերը չի հանում:

Ասըմ ա.- Շորերըս հանի:

Չի հանում:

Ասըմ ա.- Մեկ ա, քեզ ոչնչացնիլ դեմ, հա-նի:

Հանում ա, տենում են տղամարդ ա:

Ասըմ ա.- Տեհա՞ր, թաքավորն ապրած կենա, ոնց ա սև ծովն ու սիպտակ ծովը խառնվել: Իսկ մոլլեն քեզ խափում էր, ասըմ էր՝ Անգլիեն ու Ամերիկեն դեն քեզ վրա հար-ցակվիլ:

Մոլլեն դեռ ընդեղ էր: Թաքավորն ասըմ ա.- Տարեք խազնեն, տուրը պոց արեք, ճիխկոն ինչքան կարճ ա, թող ոսկի վեր ունի:

Մոլլեն տեսավ տն ըրեխեն ինչ ասեց, ինչ չասեց՝ նրա շալակը ոսկի տվին, իրան հինգ մանեք: Թող արին քյաջին:

Մի քանի օրից եղը թաքավորը նորից էրազ տեսավ: Էրեխու տեղը գիղըմ չէր, ըլետ մոլլին կանչեց, մոլլեն էկավ:

Ճիխկոն ասեց.- Դայի, ըլետ թաքավորը էրազ ա տեսել, մոլլեն դուք ասիլ չոի, արի նորից քյանք:

Դայուն վե կալավ նորից քյանք, իսկ թա-քավորը մոլլին կանչել էր, իրան արազը պատմում էր.- Մոլլա, քչերս էրազըմ իմ պալատի վրա կանանչ-կարմիրը ընգել էր, կանանչը՝ ես կողմին, կարմիրը՝ են կողմին:

Մոլլեն ասըմ ա.- Հմի էլ Գերմանինն ա մտադիր քե վրա պատերազմի:

Մոլլի հինգ մանեքը տվավ ճանապարհեց: Ճիխկոն ընդեղից ասեց.- Թաքավորն ապրած կենա, մոլլեն քեզ խափեց:

- Էտ ո՞վ էր, կանչեցեք կյա:

Եկավ, տեհավ են ըրեխեն ա:

- Հա՛, էս են ըրեխեն ա, ճիշտը սա կասի:

- Թաքավորն ապրած կենա, դե հմի ասա:

- Բչերս էրազըմ կանանչ-կարմիրը ընգել էր իմ պալատին. էս կողմը՝ կանանչ, են կողմը՝ կարմիր:

- Թաքավորն ապրած կենա, իմ ներկա-յության բանվոր ես պիրում, որ, քու հերը հիմքը տընիլիս կանանչ կողմին արծաթ ա սնդուկով թաղել, կարմիր կողմին՝ ոսկի, որ կհանես, ինչ որ տուք ցանկանում եք, կանեք, բայց մոլլեն քեզ խափեց:

Մոլլեն ընդեղ էր, մտիկ արավ տեհավ, որ էտ անքանն էլ ճիշտ ասեց: Քանդեցին տե-հան, որ մի կողմըմ արծաթ ա՝ սնդուկով, մի կողմըմն էլ՝ ոսկի: Թաքավորն ասեց.- Տարեք էս ըրեխուն բավարարեցեք, ճանապարհեցեք:

Մոլլեն կանչեց, տեսավ, որ էս տղեն իմաս-տուն ա էլի, ամեն պոն գիդի, կանչեց ասեց.- Այ տղա, արի մի ախճիկ ունեմ, արի քե տամ:

Մոլլի ախճիկը քառասուն տարեկան ա՝ տանը մնացած: Ճիխկոյին վեր կալավ մոլլեն տարավ տուն, բայց ճիխկոն գիղեր մոլլի նպատակը: Տարավ տուն, առանձնացավ, ախչկանը ասեց.- Ախչիկ ցան, էս տղին պետք ա մորթես: Կմորթես, սրա ուղեղը կեփես՝ կյա՞մ ուտեմ, բալի սրա խելքը իմ կլլուխը հվաքվի:

Ճիխկոն իմացավ մոլլեն ինչ ասեց ախչը-կան: Մոլլեն թող արավ ուրիշ տեղ քյանք: Ախչիկը՝ էս կողմը, են կողմը, տղի հետ ասըմ-խոսըմ ա, տղեն հարցրավ.- Ի՞նչ էր ասըմ քու հերը:

Ախճիկն էլ հոր ասածը չպահեց, ասեց.- Ըսենց խոսքեր ասեց, որ սրան մորթի, ուղեղը էփի, ուտի:

Տղեն ասեց.- Նա շա՞մ ա, նա որ իմ ուղեղը ուտի, կշա՞շվի: Արի էտ մոզածա՞քը մորթի, ուղեղեղ էփի, կուտի, կխեղդե՞ս, միսն էլ մենք կուտենք:

Մոզածա՞քը մորթում են, մսից խորոված ա անըմ, ուտում են, ուղեղն էլ էփում ա, որ հերը կյա ուտի: Ճիխկոն ինքը ասըմ ա.- Դե ես տյուս եմ կյալի՞ կյա՞մ:

Տյուս ա կյալի, են քյանքն ա, որ քյանք ա:

Մոլլեն կյալիս ա, հարցնում ա.- Գործը ո՞նց ըլավ, պաղրաստ ա՞:

Էլ գիղըմ չի, որ ինչ ա ըլել:

Ասըմ ա.- Դա՛, պաղրաստ ա:

Մուլլեն ուտըմ ա ու շա՛շվըմ: Էտ մուլլի շա՛շ-վիլը, էտ կնանուցն, վերջապես, մեկը մարթ ըլիլը, էտ սնդուկով ոսկի քթեղը տարածվեց, որ էտ բուրդը ճիխկոն ա արել: Էտ բուրդը հասնըմ ա թաքավորին: Էտ թաքավորը իմա-նըմ ա, թե էտ ճիխկոն մի ավազակ ա: Թաքա-վորը ուխտերին ոսկի ա պարզըմ, դրզըմ քա-ղաք, ասըմ ա թե.

- Տեհեք որդի՞ ա, որ տեղը իմանաք:

ճիխկոն մորը հարցնըմ ա.- Բա քաղաքըմ պարեկամ չունե՞նք:

Մերը ասըմ ա.- Դե, այ՛ բալա, ես պուճուր եմ եղել, մի քիռ եմ ունեցել, մարթու ա քյանցել՝ Թիֆլիզ, ոչ տեհել եմ, ոչ էլ գիղեմ:

Ասըմ ա.- Դե տու ու դային էն ոսկովը ապրեցեք, ես քյանցի:

ճիխկոն քյանց Թիֆլիզ: Էստեղ հարցնիլով, էնդեղ հարցնիլով՝ եկավ մոքրին ըքթով:

- Բարև, մոքրի:

- Բարև, հազար բարի, որթի ջան, էտ ո՞վ ես, որ մոքրի ես ասըմ:

- Զու բվորդտ տղեն եմ, ճնանջըմ չե՞ս:

- Որթի ջան, բա որ ես եկել եմ, քիրս փոքր էր, էտ ե՛փ մեծացավ, մարթի քյանց ու քեզ պես էլ տղա ունեցավ:

Տեսավ մոքրի կրավաթի տակին մի դազ կռկոցնըմ ա, ասեց.

- Մոքրի, էս ի՞նչ դազ ա:

Մոքիրը պատասխանեց.- Որթի ջան, էս ա պարիկենթան ա առաջներին, դազը պահիմ եմ, որ պարիկենթանին մորթեմ:

- Մոքրի, ինձ տու տանեմ ծախեմ, պարի-կենթանի օրը հեշտ ա:

Մոքիրը դազը իրան տվավ, ճիխկոն էլ վե կալավ քաղաք տուս եկավ: Էստեղ՝ դազ, էն-դեղ՝ դազ, դազը կըռնտակին ման ա կյալի: Մի հարուստ վաճառական տուս եկավ առա-ջը:

- Տղա ջան, դազը ի՞նչ աժի:

- Մի մանեթ:

- Առ տասը կոպեկ տամ, ինձ տու:

- Բա, խազեյին, տասը կոպեկով դազ կտա՞մ:

Էս կողմովը քյանց՝ առաջը կըտրեց, էն կողմովը քյանց՝ առաջը կըտրեց, գալիլեն քյ-

նոց, վե կալավ տասը կոպեկով տվեց էտ մարթին, տասը կոպեկով սըմիչկա առավ, ցի-բը լցրեց, էտ մարթի եղնա քյանց: Խազեյինը տարավ տուն:

- Այ կնիկ, տասը կոպեկ եմ տվել, էս դազը առել, պոկըմ ես փուռը տալի, ժամը մեկին ով որ կկա՞ պատուհանիցը մատը կմեզնի, կտաս նրան, կըպիրի այսին՝ տեղը, մենք հընգերա-կան քեփ ենք անըմ:

Ժամի մեկին ճիխկոն եկավ, պատուհանիցը մատը մեզնեց: Խազեյինի կնիկը, դազը պաղ-րաստ, մի քիչ էլ ուրուշ պաներ հետը, պողոն-ցով պիրավ տըվավ ճիխկոյին: Վեր կալավ պիրավ մոքրի տուն:

- Մոքրի, էսոր պարիկենթան, էքուց պար-կենթան, դազը տեսա ծախվըմ չի, փուռն եմ տվել, էս պաներն էլ հետը պիրել եմ:

Ժամը մեկից տասնհինգ-քսան ռուպե անց մի տղա եկավ մատը մեզնեց:

- Այ տղա, նոր չտարա՞ր:

Թե բա.- ճիխկոն տարավ:

ճիխկոյի անունը ըտի էլ տուս ըլավ: Մո-քրի մարթը պառավ մարթ էր, փողոցըմ մա-տած պաչինկա-մաչինկա անըմ, օրվա հացի փող ա պիրըմ: Դե մոքրի դուրթուրը տենըմ ա էլի: Մոքրիին ասըմ ա.- Մոքրի, փեսին ասա ինձ հմար էլ մի էշ առնի:

- Տղա ջան, փեսեն պաչինկա-մաչինկա ա անըմ, մեր օրվա հացի փողը հազիվ ա պի-րըմ, էշը ընչո՞վ առնի:

Փեսին ասըմ ա: Իշի միըն իրեք մանեթ էր, տալիս ա մի էշ առնըմ:

Տեսանք հըմի ճիխկոն իշով ի՞նչ դի անիլ: ճիխկոն իշի փալանը վրին տրավ, խուրջինը վրին քցեց, անցավ դազ առնող խազեյինի տըռնովը:

- Ո՞ւմ աման ունի կլեկիլու:

Մթած թե լազգու տղա ա: Խազեյինը մա-ցավ, ասեց.- Այ կնիկ, ինչքան ամաննի ունենք, հըվաքի տու էտ տղին, տանի կլեկի պիրի:

Դավաքեց էտ պղնձի ամաննիքը՝ իրա մոք-րի տուն:

- Մոքրի, թող մնա էս պաները էստեղ:

Երկու օր արանքովը անց կացավ, քըննց էլետ էտ քուգովը.- Ո՛ւմ խաչա օւնի վա-նալո՛ւ, ո՛ւմ խաչա օւնի վաճաղո՛ւ:

Խազեյինը ասեց.- Այ կնիկ, էտ աճանհիքը տարել են կկենկեն կպիրեն, հմի խաչեքը տու տանեն, վաճան պիրեն:

Խաչքերն էլ պիրավ:

- Մոքիր, թող ճնա ըստեղ:

Տասը կուպենի հաշիվը ա է՛:

Մի շափաթ արանքովը անց կացավ, էկավ ախչկա շորեր հաքավ, վե կացավ քըննց խազեյինի տուն: Խազեյինին հարցրավ.- Խազեյին, ծառա չե՞ք ուզըմ:

- Դա՛, ախճիկ ջան, խանըմը քեզ մճան մի ախճիկ ա ուզըմ, ծեռնի պընըցնի:

Տարավ տուն, խանումին ասեց.- Բա էս ախճիկ-ընեխին քեզ մոտ պահի՛ տանը ծառայի:

- Դա՛, ասըմ ա,- լավ կըլի:

Մի քանի օրից հետո խանումի հերանց տանից մամակ եկավ, թե ուրախութիւն ունենը, համեցեց: Խազեյինը ասեց.- Այ կնիկ, արի տու մի օրն առաջ քընն, էս էտ օրը կկամ:

Կընգճըմ ճանապարեց քըննց: Խազեյինը, էտ օրը որ քըննը դի, էտ ըրեխին ցույց տվավ, ասեց.- Էստեղ հույրամոցն ա, էստեղ քնիլու տեղն ա:

Մի սենյակ ցույց չտվավ:

Ասեց.- Խազեյին, բա ըստի ի՞նչ ա, բա որ քու տուն հյուր կյա, սաղ ցույց տամ, էս ի՞նչ ասեմ:

Ասըմ ա.- Ըստի ընենց պճն ա, որ քու տեճալու չի:

- Խազեյին ջան, խազեյին, պճց արա տեճամ: Էտ ի՞նչ ա էլի:

Խազեյինը պճց ա անըմ, տենըմ ա սենյակի մեջ տեղը մի մեքենա ա տըրած: Ասըմ ա.- Խազեյին, էս ի՞նչ ա:

Դամա ինքը գիդի էլի:

Ասըմ ա.- Տա մարթ ճարթիլու մեքենա ա:

- Բա ո՞նց ա ըլըմ,- ճիխկոն ասըմ ա,- հլա մի մտնեմ մեչը, փորցի:

Մտնըմ ա մեչը, խազեյինը վիճտերը պնդըմ ա, որ ծվըմ ա, խազեյինը պճց ա թողըմ:

- Խազեյին,- ասըմ ա,- բա ինձ պես պուճու-րին փոքրացրի... մեքենան, բա՛ մեծի՞ն:

Խազեյինը մեծացնըմ ա, ասըմ ա.- Դե մտի մեչը մի պորթ անեմ, տենամ:

Խազեյինը որ մտնըմ ա մեքենայի մեչը, սկսըմ ա հուփ տալը: Խազեյինին որ հուփ ա տալի, խազեյինը ծվըմ ա, ինքը շուտ ա անըմ մի վեորա սապնաճուր ա անըմ պոլի վրա շաղ տալի ու փախչըմ: Խազեյինի էտ ծրվոցին կյալիս են հարևանին, ուզըմ են հանեն ազատեն, համա պոլի վրա սապնաճուր ա՛ սոթ են տալի, էլ կարըմ չեն հասնեն խազեյինին ազատեն: Խազեյինին ազատըմ են հարցնըմ, ասըմ են.- Էս ի՞նչ ա, էս ի՞նչ ա պտահել:

Թե ասըմ ա.- Ի՞մ տանը մի ախճիկ ըրեխա էր, էս գործը մա կատարեց:

Ուրեմը տա՛ ճիխկոն ա:

Էտ էլ տարածվեց, ասիլով-ասիլով՝ խաբարը հասավ թաքավորին, որ ճիխկոն ըսենց գործ ա կատարել: Վեր կալավ մի ուխտ ոսկին պարցեց, մի հինգ գինվոր տրավ հետը, ասեց.- Կտանեք քաղաք ման կածեք, ճիխկոն որդի տյուս կկյա, էն տեղը մշան կանեք, ճիխկոն մի դաչաղ մարթ ա, փոնենը:

ճիխկոն գիդեղ, որ էտ գործը կյալ դի իրան հասնիլ, տյուս եկավ փողոց, տյուս եկավ տեսավ էտ հինգ գինվորը, ուխտը պարցած, տյուս եկան առաջը: Քըննց առաջնըր:

- Բարև ձեզ:

- Բարև:

- Տղեք, էս ի՞նչ պճն ա:

Ասըմ են՝ ըսենց, ըսենց:

- Է՛,- ասեց,- տուք կարալ չեք ճիխկոյին քըթնիլ:

Սկսավ նրանց գրըցովը անիլը, ուխտը մի ուզըմ մտավ: Էտ մարթիքը ասեցին.- Ա, ուխտը դի՛րը քըննց, դի՛րը քըննց:

Ասեց.- Այ, էս ճամփովը քըննց:

Ինքը ուխտը քշեց պիրավ մոքրի տուռը: Ձիվկորնիքը էտ տառն թաքավորին ասեցին.- ճիխկոն հազար գորքով տուս եկավ, ուխտը խլեց:

ճիխկոն էլ ուխտը պիրավ մոքրեց, միս արավ աճանհիքը լցրեց:

Էտ գինվորնիքը որ էտ տառն, էտ ուխտի տանիլն էլ տարածվեց: Մի պառավ ասեց.-

Թաքավորն ապրած կենա, ի՞նչ ես տալի, ես էտ ճիխկոյին քըթքենմ:

Ասեց.- Պառավ, ես քու քաշով մին ոսկի կտամ:

Պառավը կյալիս ա քաղաք, ըստեղ իրըց-նիլով, ընդեղ իրըցնիլով՝ կյալի մոքրին ռաստ կյալի: Ուխտի միս էր ուզըմ, մթամ մի մինուհար հիվանդ տղա ունի, պետք ա ուխտի միս ուտի, որ լավամա: Մոքիրը պիրըմ ա մի կտոր միս տալի, պառավն ասըմ ա.- Մի քիչ էլ արին հետն ածա:

Արին ա ածըմ, պառավը ծեռը թաթախ ա անըմ պատին նշան տալի, որ կյալ դի ճիխկոյին էտ նշանով քըթքի: ճիխկոն կյալիս ա.- Մոքիր, սօրի մեր տուն եկող չի ըլն՞:

Մոքիրը պատասխանըմ ա.- Բա, տղա ջան, ըսենց մի պառավ եկավ, մի տղա ունի հիվանդ, ուխտի միս էր ուզըմ:

- Է՛, մոքիր, լավ չես արել, գործը խարաք ես արել:

Էտ ուխտի միսը շաղ տվավ կորցրավ: Շաղ տվավ էտ միսը, ինքը մի վերոքա արուն լցրավ, մտավ քաղաք՝ էս պատին նշան արավ, էն պատին նշան արավ: Եկան ման եկան, էտ տունը քըթքան ո՛չ:

ճիխկոյի էտքան արած գործը, ասենք, Աղբեջանի թաքավորը Յայաստանի թաքավորին ասըմ ա՝ բա քու երկրընը էտքան պան ա ըլըմ, տու կարըմ չե՞ս փոխե:

Թաքավորը հայտարարըմ ա, ասըմ ա.- ճիխկո, խազնիս տուռը պանց ա, թե որ կարեցար եկար տարար՝ ուրեմըն ճիխկո ես:

Էն իմաստով, որ խազնի տռան առաջին կպրի փոս ա փորել, որ ճիխկոն ընգնի մեջը, փոռի դադաստան անի:

ճիխկոն ասըմ ա.- Փեսա՛, արի քյանընք թաքավորի խազնեն պիրենք:

Փեսեն ասըմ ա.- Ինչի՞ս ա պետք:

Վերջը կյալիս են, ճիխկոն թռչըմ ա փոսի վրովը, փեսեն ընգնըմ ա մեջը, կաչըմ կպրիցը, մընը: ճիխկոն ոսկին վեր ա ունըմ քյնըմ ա: Ըռավորը կյալիս տենըմ են մի մարթ փոսի միջին, տալիս են սպանըմ: ճիխկոյին սպանեցին:

Թաքավորն ասըմ ա.- Էտ մեյիղը տարեք քաղաքիցը տյուս մի տեղ տղեք, ճիխկոյին

պարեկամ կունենա, կկյան տերութին կանեն, էն վախտը կարելի ա փոխել: ճիխկոն գիղըմ ա, թե փեսին ինչ արին: Պիրըմ են քաղաքիցը տյուս ախարիցը մոտիկ մի չաղրի միջի տը-նըմ, որ քյացող-էկող տենա: Վերջը էտ զինվորնին հետևըմ են տենան ով կկյա, ով չի կյա: ճիխկոն, մոքրին երկու հատ ախչիկ ա ունենըմ, ասըմ ա.- Ամեքըտ մի կուլա վե կալեք քյացեք ախարի կըշտին ծեր կուլեքը կոտրեցեք ու ծեր հոր վրա լաց ըլեք, որ կհարցնեն ընչի՞ եք լաց ըլըմ, կասեք՝ ամեքս մի չքավոր ընտանիքի ախչիկ ենք, կուլեքը կոտրել ենք, լաց ենք ըլըմ:

Ինքն էլ կարտ ա վեր ունըմ կյալի:

- Բարև, տղեք:

- Բարև:

- Բա կարտ չեք ուզըմ խաղ անե՞ք:

Ասըմ են.- Բա մենք էլ տենեց պանի ենք ման կյալի:

Կարտը տալիս ա, նստըմ են խաղ անըմ:

Քյնըմ ա կյալի.- Տղեք ջան, կարտս տվեք, ես քյնըմ եմ, էս ա մութն ա ընկնըմ:

Ասըմ են.- Կքյնա՞ս էլի:

Ասըմ ա.- Չէ, ես էս մեռելիցը վախըմ եմ, էշըս կկյողմա:

Շոքաղըմ են, ասըմ են.- Մեռելը ո՞նց էշ կկյողմա:

Ասըմ ա.- Սա հենց մեռել ա, որ կկյողմա:

Տյուս ա կյալի մեռելը տընըմ էշի վրա, քշըմ, ինքը ետ ա կյալի, ասըմ ա.- Բա որ ասըմ ի՞ մեռելը էշըս կկյողմա:

Ձիվորնին ասըմ են.- Այ տղա, դե էտ ա քու էշն էլ քյնաց, մեյիղն էլ, բա մենք թաքավորին ի՞նչ պատասխան տանք:

Ասըմ ա.- Ես ծեղ ասեմ, թե ինչ ասեք:- Ասըմ ա.- Կիրեք ծեր շորերը, գենքերը ըստի վեր ածեցեք, կքյոք կասեք ճիխկոն հազար գոր-քով տյուս եկավ, մեզ զինաթափ արավ ճամփու տրավ:

Ըտենց էլ անըմ են, քյնըմ են թաքավորին ասըմ.- Թաքավորն ապրած կենա, ճիխկոն հազար գորքով տյուս եկավ, մեզ էլ զինաթափ արավ:

Էտ էլ տարածվեց: Միջիկը եկավ թաքավորին ասեց.- Յայրիկ, ինձ մի հարիր զինվոր տու, ես էտ ճիխկոյին փոխեմ:

Ախշիկը մի հարիր զինվոր վեր կալավ, եկավ քաղաքի դրաղին չաղիր տվավ նստեց, սպասեմ ա, որ մի տեղից ճիխկոն կյա, վրա կտան կփռեն: ճիխկոն իմացավ թաքավորի ախշակ նպատակը, եկավ տրա չաղիրին կողքը դեմ արավ, կաղենց: Տյուս եկավ էտ ախշիկը, տեսավ էտ տղին, հարցրեց.- Ռ՛վ ես, ո՞վ չես:

Ասըմ ա.- էս քաղաքիցն եմ:

- Ռ՛վ ունես, ո՞վ չունես:

Ասըմ ա.- Մենակ տղա եմ:

Ներս ա կանչեմ, հաց-մաց տալի: Ասըմ ա.-

Մի ճիխկո կա, գիտե՞ս:

Ասըմ ա.- Է՞, տու նրան կարալ չես քյոթնի:

Ախշիկը ասըմ ա.- Բա մթնըմ ա, խի՞ չես քյոթն:

Ասըմ ա.- Ռ՛րդի քյոթմ, ո՛չ տուն ունեմ, ո՛չ տեղ, որդի մթնըմ ա՝ ընդի էլ քոնըմ եմ:

Ասըմ ա.- Դե որ ըտենց ա,- ասըմ ա,- ըստի չաղիր կողքին քոնի:

Քըշերվա մի վախտը վա՛յ հա վա՛յ, ասըմ եմ.- Ի՞նչ ա ըլել:

Ասըմ ա.- Վախըմ եմ:

Ասըմ եմ.- Էս հարիր զինվորի միջին ինչի՞ց ես վախըմ:

Ախշիկը ասըմ ա.- Դե դեսը արի:

Վերջը մոտանալով, մոտանալով՝ մտնըմ ա թաքավորի ախշակ թևի տակը: Թաքավորի ախշիկը քաղաքի դրաղին մի օր ա կենըմ, երկու օր ա կենըմ, վերջը տենըմ ա՝ ճիխկո չկա, էտ ա կյալի հորն ասըմ.- Սուտ ա, ըտենց մարթ չկա:

Թաքավորի ախշիկն էլ հղի ա ըլըմ: Թաքավորն ասըմ ա.- Ես քեզ գործի դրգեցի՞, թե՞ լրիության:

Ասըմ ա.- Դե ի՞նչ անեմ, հայրիկ, ըտենց ըլավ:

Էտ էլ եմ ճիխկոյի վրա տընըմ: Թաքավորը հայտարարըմ ա, որ՝ ճիխկո, որ տու ըտենց հուճառով մարթ ես, արի՛, իմ ախշիկն էլ քեզ կըտամ, մի երկրամաս էլ՝ հետը:

ճիխկոն կյալիս ա, ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, քու ախշիկը քեզ կենա, պա՛մ չեմ ուզըմ: Տու մի դոչ մորթի՝ պարկը ինձ տու, աչքը հետը, պոզը հետը, ամեն մագիցն էլ՝ մի զանգուլակ կախ:

Թաքավորը ճիխկոյի ուզածը կատարըմ ա: ճիխկոն պարկը կընընտակին ա տընըմ, անց ա կենըմ Ադրբեջանի թաքավորի պալատը: Պահակներին ասըմ ա.- Թաքավորին եմ ուզում:

Պահակնին հայտնըմ են թաքավորին, որ ըսենց մի մարթ կա, քեզ պահանջըմ ա:

Ասըմ ա.- Թույլ տուր կյա:

Մտնըմ ա ներս, կալիորըմ մտնըմ էտ դոչի մորթու մեջը, զանգուլակնին զըրընզըցնիլով, քյոնըմ ա թաքավորի առաջը, ասըմ ա.- Եկել եմ, հոքիս տու:

Թաքավորի ոտները սկսըմ ա լըլըլըլըլըլ:

Ասըմ ա.- Որ հոքիս տալիս չես, մի սնդուկ չինիլ տու, մտի մեջը:

Թաքավորը հրամայըմ ա, վարպետնին կյալիս են մի սնդուկ չինըմ, թաքավորը մտնըմ ա մեջը:

ճիխկոն տյուս ա կյալի սնդուկը տընըմ մաշիընըմ, տանըմ վազգալ, ընդիան էլ տանըմ ա Չայաստանը, ընդի սընդուկիցը հանըմ ա: Ասըմ ա.- Ես ո՞րդի եմ:

Ասըմ ա.- Չայաստան ես: Տու ո՞նց ասեցիր մեր թաքավորին՝ քու երկրընը մի ճիխկո ա, խի՞ չես փոնըմ: Եկա քու մոտ, բա խի՞ չփոնեցիր:

Եղմա թաքավորին ասըմ ա.- Չըմի քու ախշիկը ինձ ա:

Ու հըրսամիջ ա անըմ:

41(41). ՔԱՉԱԼԸ ՈՒ ԻՐԱ ՂԱՅԻՆ

Մի մեր եմ ըլել, մի տղա: Էտ տղեն քաչալ ա ըլել: Մերը քյա՛սիթ կնիկ ա ըլել, ուզեցել ա տղին վեր ունի տանի մի փեշակի տա:

Ասել ա.- Տղա՛ ջան, ի՞նչ փեշակ ես ուզըմ:

Թե.- ուզըմ եմ դայնի փեշակը սվորեմ:

Էտ ա տղին վեր ա կալել տարել դայնի կուշտը, ասել ա.- Էտ ի՞նչ փեշակ ունես, որ ուզըմ ա սվորե:

Թե.- Թող մնա:

Դայնի ասել ա.- Ինչ որ անեմ, կարա՞ս անես:

Ասել ա.- Չա՛:

Ասել ա.- Դե, ես դուրը քյոթմ, եղես կկյա:

Քյոնցել ա, մի չինարի ծառ ա ըլել, հետո ասել ա.- Ես չինարի ծառը տենըմ ե՛ս:

Ասել ա.-Յա՛:

Ասել ա.- Ես ծառի վրա մի դուզդուն կա, դուզդունի տակին ծու կա, եթե կրացիր, դուզդունի տակիցը, պըրցըռնաւ ծուս հանես, որ դուզդունը մանա ոչ, ուրեմը իմ փեշակը կսվորես: Եթե կրացիր ոչ, ուրեմը՝ կրացիր ո՛չ:

Ասել ա.-Յա՛:

Ասել ա.- Դե առաջ ես ոյերեմ, տու մտիկ արա:

Որ նա ոյերել ա, քաջալը դայու չալվարը հենց հաքիցը հանել ա, որ դային մտցել չի: Դային դվերել ա, տեհել ա հաքին չալվար չկա:

- Քաջալ, չալվարս ո՞ր ա:

Թե.- Յանել եմ:

Ասել ա.- Յա՛:

Քաջալը ետ ա դայինի հետ ա ընգել քյնացել են մի թաքավորի խազինի տեղ արել, ամեն քշեր քյնացել են կտրել: Ինչ արել են, արել չեն, կրացել չեն փոռնել: Մի ուրիշ թաքավոր ետ թաքավորի հմար մի լաջակ ա դրգել, ասել ա.- Ետ լաջակը քցի կլխիս՝ նստի, որ կարըմ չես քու խազին կյոհնի փոռնես:

Ետ թաքավորը տեսել ա, որ տիւնը առաջը փոռվում չի, պիրել ա մազութի հովուզնի կապել իրա պալատի առաջին, որ տրանք փոռվեն: Ետ ա, որ քյնացել են ետ հովուզը ընգել հա, ետ քաջալը առաջին ա ըլել: Դային ընգել ա մեջը: Քաջալը դայինի ուտերին կաղնել ա տուս եկել, ասել ա.- Դայի՛, դե կլլուխտ մընը ա ի՞նչ անի, պի կլլուխտ կտրեմ տանեմ քոակնգանը տամ վրեն լաջ ըլի:

Դայու կլլուխը կտրում ա, տանըմ քոակնգանը տալիս, ասըմ ա.- Գյովզն էլ եղո կկյամ տանեմ:

Տրանք մի իմաստուն էլ ունին: Ետ ա էլը վեր ա կալել քյնացել, որ դայու գյովզը պիրի: Տու մի ասի ետ թաքավորը գորք ա հվաքել, ետ գյովզի վրա դարաուլ կղցրել: Յմի պետք ա ետ ժողովուրդը քշերը քնեն ոչ, որ տենան ով դի կալ: Ետ քաջալն էլ մի սազ ա վեր ունըմ, էշին նստըմ քյնըմ: Տըռնըք տենըմ են հրես ա քյնըմ ա, կանչըմ են.- Ուստա, արի՛, արի՛,- ասըմ են,- քշերը դմդալ կանի, քնիլ չենք:

Տա ասըմ ա.- Չէ՛, էշս կորչի, տուք կարալ չեք տրա գինը տաք: Իմ էլը իրա քաշովը մին ոսկի ա:

Թաքավորին էլ իրա քաշովը մին ոսկի ա մնացած ըլել: Ասըմ են, թե.- Կքյնանք թաքավորին կասենք, եթե քու էլը կորչի, իրա քաշովը մին ոսկի տա:

Ետ ա քյնըմ են թաքավորի կողքը պայման են անըմ: Ետ ա քյնըմ ա ուրուր-տուրուր անըմ, մի վախտ ետ ժողովուրդը սանգ են ըլըմ: Տա պիրըմ ա գյովզը էշի վրա կապըմ ա պաճ թողըմ: Ինքն էլ քնըմ ա, վեր կենըմ ասըմ ա.- Էշս պիրեք:

Դե որդիա՞ն պիրեն, խաբարը քյնըմ ա թաքավորին, թե.- Էլը կորել ա:

Թաքավորը, դե պայմանը՝ պայման, պիրել ա էշի քաշովը մին, մի էլ են պիրել, ոսկին քաշել տվել իրան: Յմի թաքավորը ժողով ա անըմ, ամեն տեղից մարթ կանչըմ, որ ով որ ետ տղությունը, ետ հերոսությունը արել ա, իմ թաքավորությունը նրան եմ տալիս:

Սա ա տուս եկել ասել.- Ես եմ արել:

Նա ա տուս եկել, ասել.- Ես եմ արել:

Ասել ա.-Չէ՛: Որ տղեն որ կքյնալ այնիչ թաքավորիցը մի նմուշ կալիր իմն կտա, ուրեմն նա ա արել:

Տա տուս ա եկել ասել.- Ես եմ արել:

Ասել ա.- Բա ետ ո՞նց ես արել: Ուրեմը քյնա են թաքավորիցը մի նմուշ պի:

Թե.- Ուզըմ ե՛ս թաքավորին իրան պիրեմ:

Թե.- Յա՛:

- Դե՛,- ասել ա,- մի բիզ էլ տու, մի գրնգան էլ, մի ծու էլ, մեկ էլ մի մըքթասեդ:

Քյնացել ա քշերը տուը կտրել, տառն տալին գըրնգ-գըրնգ: Թաքավորն ասել ա.- Ետ ո՞վ ես:

Թե.- Ես եմ՝ Կափուիլ հրեշտակը, եկել եմ հոքիտ առնեմ:

Թաքավորը տուը պաճ ա արել: Տղեն տեհել ա մի գանդուկ պալատըմ տրած, ասել ա.- Քյնա մտի գանդուկի մեջը:

Տեհել ա մտնըմ չի՝ բզով ծակել ա, ծուս էլ ճըկատին կտրել, կոխել գանդուկի մեջը՝ շլալել տարել: Ճամփին, տակին տռել ա: Թաքավորն ասել ա.- Բա Կափուիլ հրեշտակը կտոի՞:

Ասել ա.- Բա քեզ պես էլը՝ չլակին, տոփլ չի՞:

Տարել ա թաքավորի առաջին վեր տրել, գռնդուկը պճաց արել, տեհել թաքավորը իրես միջին աչքերը պլզցրած: Էտ ա թաքավորը պիրել ա նրա դրգած լաչանը կլխին քցել, ասել ա.- Լավ ա, որ իմ ոսկին կյուղացան, հլե քեզ եմ կյուղացել:

Թաքավորը պիրում ա էտ տղին չինըմ իրա փեսեն ու թաքավորությունը տվել նրան:

42(42). ՊԵՐԿԵՓՈՒՄԱՆ ԿՆԻԿԸ

Մի մարթու կին սիրեկան ունի, ինչ աշխատում ա, աշխատում չի, կյառի հաց ա ուտում: մի օր ասըմ ա.- Այ կնիկ, էս կյառի եմ ցանըմ՝ կյառի եմ ուտում, ցորեն եմ ցանըմ՝ կյառի եմ ուտում:

Ասըմ ա թե.- Ի՞նչ անեմ, քու քիրը Ռևազվըմ՝ թսըմ ա, քու հացը կյառի ա տառնըմ:

Էտ մարթը նեղացած քյըմ ա քվոր տուն: Քիրը տանը չի, կյալիս ա.- Բա, բարով ես եկել, ախպեր ջան, բարով ես եկել:

- Տո՛, քյնա է՛.- ասըմ ա.- խի՞ ես ըսենց պան անըմ, որ իմ հացը կյառի ա տառնըմ:

Ասըմ ա.- Ուրեմը դեռ մի ոտոմանի ես, աշխարհը պան չես հասկանըմ: Իմ էս քաչալին տար, քու հացը ցորեն կըտառնա:

Էտ մարթը քաչալին վեր ա ունըմ պիրըմ: Կնիկը վրեն նեղանըմ ա.- Ըսկի քու ցավը չեմ կարըմ քաշեմ, էտ ի՞նչ ես պիրել:

- Այ կնիկ.- ասըմ ա.- դե ըրեխա ա էլի, թող ըտող մեր փեչի դրաղին մնա էլի:

Դային եկավ, բըզարած, պըրանվեց քնեց: Սիրեկանը եկավ, ասեցին, խոսեցին, վերջապես ասեց.- Ըռավոտը տու ուրդի՞ դես աշխատանքի քյնա, որ քե իըմար լավ ու վաղ պիրեն:

Ասըմ ա.- Ըսենց դեմ քյալ ըռավոտը՝ խյարի կլեպ կլալիով, տրա իզովը կկոծա:

Էտ սաղ քաչալը լսեց: Ըռավոտը քաչալը վեր կացավ, ասեց.- Ա՛ դայ, վե կաց,- ասեց,- չուք ունեմ, դե համի:

Վեր են կենըմ էտ մարթու քյնացած ճանփովը քյնըմ: Մի քաշըմ սկսըմ են վար անիլը, ծորըմն էլ են մարթն ա վար անըմ: Կնիկը վեր ա կենըմ հավից, պանից սարքըմ ա, վեր ունըմ քյնըմ: Քյնըմ ա տենըմ մարթն էլ ընդի:

Մարթն ասըմ ա.- Այ կնիկ, ի՞նչ կա:

- Հեչ,- ասըմ ա.- ծեզ համար հաց եմ պիրել:

Նատըմ են, էտ հացը, էտ մարթը ոչ տեհել ա, նատըմ են ուտըմ:

Ըրուգունը հվաքվեցին, քաչալը կրակի դրաղին պառկեց, մարթն էլ, բըզարած, պրանվեց քնեց: Սիրեկանը եկավ:

Կնիկը ասեց.- Կրակվեն սրանք, հաց պիրի, էս շները ռաատ եկան, կոխեցին կերան, ջանիս ցավ տվեց: Էքուց որդի՞ դես ըլի:

Ասըմ ա.- Էլի նույն տեղը դեմ ըլի, եզանս միճն էլ չալ ա:

Ըռավոտը քշերով վեր կացավ քաչալը:

- Դայի, վեր կաց հա՛, վեր կաց:

- Ի՞նչ կա, այ բալա:

- Ես քեզ ինչ ասըմ եմ, են արա:

Քաչալը չվանով եզանը փաթեց, չալ շինեց, քյնացին նույն տեղը՝ աշխատանքի: Էտ կնիկն էլ վեր կացավ, լավ-վաղ սարքեց, քյնաց տեսավ՝ էլի քաչալն ու իր մարթը: Հացը տարավ:

- Այ կնիկ, էտ ի՞նչ ա մտերմուտ ես քցել:

Ասըմ ա.- Դե դարիք ըրեխա ա:- Ասըմ ա,- դե ըստի նատել եք ուտըմ եք, են մարթը դիմացըմն ա, կանչի էլի:

Ասըմ ա.- Քաչալ ջան, քաչալ, քյնա կանչի:

Քաչալը քյնըմ ա ասըմ.- Այ շան տղա, իմ դային ասըմ ա. «Ըստեղից կորի, թե չէ որ եկել եմ, ճարթիլ դեմ»:

Էտ ա կյալի ասըմ.- Ա՛ դայ, եկավ ոչ:

Կնիկը ասըմ ա.- Ա՛ մարթ, դե տու մեծղահան դենը կաղնի, ասա՛ կյալ էլի:

Մարթը որ վեր ա կենըմ ասի, քաչալն ասըմ ա.- Դայի, կողքին շուն կա, փետից-քարից վե կալ:

Էս մարթը որ կռանըմ ա փետ վեր ունի, են մարթը փախչըմ ա, կանչըմ ա.- Կաց, կաց:

¹ Ռևազու – ներկայիս Դիտավան գյուղն է, որը Այգեհովիտ (Ռեզուսթալ) գյուղի ծախ կողմում է գտնվում (ծանոթ. բանահավաքի):

Համա որդի՝

Մթնեց, Էկան հաց կերան, պառկեցին, քաշալը քննեց չի: Սիրեկանը եկավ, հաց շինեց, հաց ա ուտըմ:

- Կրակը սրունց վրա վեր կյա՞մ, երկու անքամ շինեցի պիրի, ես բեմուրազնին կոխեցին կերամ: Վերջը քաշալին ղըրգեցինք, որ քեզ կանջի:

Սաըմ ա.- Քաշալը եկավ ասեց. « Իմ դային ասըմ ա՛ ըտիան կորի»:

Վերջը սաղ պարզվըմ ա:

Քաշալը իմացավ, որ սիրեկանի հետ էտ պատմությունը պարզվեց: Ըռավոտը քաշալը քեռու կյնգանը ասըմ ա.- Ես ինչ տեղը մի փչակ կաղդի ծառ կա, փչակըմ խաչ կա, առաջն էլ խլչա ա քաշած, լավ-վաղ կտանես ընդի, ինչ որ ասես, հա դի ասիլ ու մուրազըտ կատարիլ, վերջն էլ ճուր դի տուս կյալ, էտ ճըրիվը իրեսըտ կլվանամ:

Քաշալը մի կարպետ վեր ա ունըմ տանըմ էտ ծառի փչակին քաշըմ, ինքը մտնըմ հետեը:

Էտ պատրաստությունը տանըմ ա, կարպետը ետ քաշըմ տընըմ տակին, կարպետի առաջին ծուկն ա չըքըմ, ասըմ ա.- Այ խաչ, իմ մարթը մեռնի, քաշալը տհենց ըլի, հիենց ըլի:

Քաշալն էլ ընդիան, սա ինչ որ ասըմ ա, ասըմ ա՛ հա:

Վերջն էլ չըքըմ ա, քեռակինը իրեսը լըվանըմ ա: Ըրիգուըն սիրեկանը կյալիս ա, պատմըմ ա, թե.- Բա տհենց մի հրաշք խաչ կա, մատաղ եմ արեւ, ինչ որ ասեցի, ասեց՝ հա՛: Սրանց ֆոտը կըտրի, մեռնի:

Հմի սիրեկանին դի ճամփու տընի: Քյնըմ ա պուկիցը եղ հանըմ լցնըմ կոթավորը, քյնըմ ա ծու ման կյա պիրի, որ եղուծու սարքի: Սիրեկանն էլ նստած ննջըմ ա, կյալիսն էլ մինմին հետ քցըմ: Ետ ա կյալի տեմըմ՝ եղը չկա:

- Վա՛յ,- ասըմ ա,- քոռանամ, ես էնքան ուշացա, որ եղն էլ վառվեց:

Քյնըմ ա պուկիցը նոր եղ ա պիրըմ ձվածեղը սարքըմ ա, վեր ա կցնըմ.

- Այ տղա, այ տղա:

Տեմըմ ա մեռել ա: Վա՛յ, բա ի՞նչ անի, կըլխին խաթա ա տառել: Քաշալն էլ վեր ա կենըմ, մթած քնիցը նոր ա զարթըմ, ասըմ ա.- Քըռակին, ի՞նչ ա ըլել:

Սաըմ ա.- Ես ի՞նչ գիղամ, ես մարթը եկել ա ըստի մեռել, մեր կըլխին խաթա տառել:

Սաըմ ա.- Դե սուս, քեռին մանն ոչ: Տրանց տան տեղը գիղե՛ս:

Թե.- Հա՛, գիղեմ:

- Դե շալակս տու:

Քաշալը, ոտները քաշ տալով, տարավ: Էտ էլ մի պառավ կընգա տղա ա: Քյնաց տընիցը քաշալը ծեն տվավ:

- Նանի՛, վեր կաց տուըը պոց արա:

- Քյնա՛մ կորի, շան տղա, որդի ըլել ես քյնա ընդի խիսըցու:

Քաշալը վեր կալավ քաշ տվավ, տարավ կտուըը, կտրիցը ասեց.- Նանի, վեր կաց տուըը պոց արա:

Թե.- Պոց չեմ անի:

- Այ, դե որ պոց չես անըմ կտրովը դվեր եմ ընգըմ:

Ու քաշալը ոտներիցը փոնըմ ա քցըմ տուն: Նանը վեր ա կենըմ ճրաքը վառըմ, տենըմ ա՛ տղեն մեռած:

- Վա՛յ, բալա ջան, վա՛յ:

Քաշալը կյալիս ա տուն քեռու կյնգանն ասըմ ա.- Քըռակին, դե գիղեմ, որ տու էլ կքյնաս, արի մի պոց ասեմ:

Սաըմ ա.- Ասա՛:

Սաըմ ա.- Սրի ծնգներիցտ պարկ կարի, որ ծընգանտ տաս, թխկոցը վե կյա՞մ, սաղ տեման, որ ինչքան ես դառղ անըմ:

Էտ կնիկը տհենց էլ անըմ ա, կյալիս ա, դե կնանիք են, սաղ լաց են ըլըմ ու ծընգներին տալիս, թըմփոցը վեր ա ըլըմ: Քաշալն էլ կյալիս ա ասըմ.- Ռ՛վ ա արեւ, ռ՛վ չի արեւ, պըրկըփոխան կնիկն ա արել:

Ըրեխին քըմ են կտրիցը, նորից ա ասըմ.- Ռ՛վ ա արեւ, ռ՛վ չի արեւ, պըրկըփոխան կնիկն ա արել:

Վերջը որ տեմըմ են շատ ա զախա տանըմ, ասըմ են.- Ասված խոսք ա՛ կեդի տուտը քյնա, ըրեխիցը պոց մացի:

Պիրըմ են սաղ կընանուընց ստուգըմ ու քեռու կընգանը քըթըմ: Ըրեխեն էլ ասըմ ա, թե ոնց ա ըլել: Որոշըմ են ու էտ կընգանը ծիու պոչիցն են կապըմ քաշ տալի:

Ընձակա սիրածը իրեք տարի սիրահար ա: Վերջը տանք ա: Տանք ա վեց ամիս հետը ապրեմ, վեց ամսիցը եղը էտ հարսը մահանք ա: Զեր-ցիրեկ կրեզմանի վրիցը էտ տղեն հեռանք չի: Վերջը մերը հորը դահիրք ա էլի, ասք ա.- Այ մարթ, տղիտ էտ քաշի, խրատի, վերջապես քյնք ա, կիկվնդանա, մի պան կպատահի, ինչ կըլի:

Ասք ա.- Այ կնիկ, դե ասք եմ, լսք չի, ի՞նչ անք: Լավ, ի՞նչ անք:

Հա ըտենց տղեն քնած, աստված հրեշտակի դարգք ա, ասք ա.- Զյնա ասա, այ տղա, ափսուզ ես, ինչի՞ ես կյալի ըտենց քեր-ցիրեկ վրեն մնք, կիկվնդանա, լավ չի:

Հրեշտակը կյալիս ա ասք ա, ասք ա.- Ձհանդամին, աստակին հիվնդանա, թող հիվնդանա, ես էլ սրա հետ մահանա: Վերջը, առանց սրան ապրեմ ոչ:

Զյնք ա պաղասխանը տանք ա, ասք ա.- Զյնա ասա, որ ութանասուն տարի տու ապրիլ դես, եթե ուզք ես կյանքիտ կեսը տուր, կենքընցենք, իրար հետ ապրեցեք:

Հրեշտակը կյալիս ա, թե ասք ա.- Աստված ասք ա, որ ութանասուն տարի ապրիլ դես, կյանքիտ կեսը եթե տալիս ես, գենքընցենք հետն ապրի:

Ասք ա.- Հա, թող քառասուն տարի ապրեմ հետն ապրեմ:

Կյանքի կեսը տվալ:

- Դե կենթանի ա, հանի:

Կրեզմանը քանդք ա, դե էն ժամանակ պատանով էր, կուր չի ըլել, պան չի ըլել: Հանք, կյալի, որ կեղիցը մոտանք են, ասք ա.- Սինց անհարձար ա էլի, որ քյնքնք մանի, ապիկի կուտը: Զյնա շորերս պի հաքենք ու հա քյնքնք:

Տղեն հըրձքթ տված կյալիս ա, որ շորերը տանի, որ ճանապարհն հըքցնի պիրի: Էտ մընչև տուն հասնիլը, միճև վերջապես ասիլ-խոսալը, ըտեղով քյնքվան ա անց կենք: Էտ հարսն էլ էտ քարվանի պետին մտիկ ա անք:

Վերջը մըթիք որ անց են կենք, ասք ա.- Խի՞ չհարցրի, թե մա ո՞վ էր, ինչացո՞ւ էր ընդել:

Հետ ա կյալի տենք կնիկարմատ ա:

- Ա, էտ ի՞նչ ա:

- Բա՞, ասք ա.- սինց, սինց կենթանացել եմ մեռած տեղից, մարթս քյնքնք ա, որ շոր պիրի, եկավ ոչ, ով գիրի ի՞նչ պատահեց, եկավ ոչ:

- Սիի ես կնիկ չունեմ, որ կյան, կյան՞ս ես քեզ տանք ինձ կնիկ:

Թե ասք ա.- Բա խի՞ չեմ կյալ:

Վե կալավ տարավ, քյնքվանի հետ տարավ: Տղեն էլ եկել ա տունը՝ մորիցը շորերն ուզք ա:

Մերն ասք ա.- Մարթս որ անքծք ի, սրա հմար ի ասք էլի, խեղճ տղես ցնորվել ա էլի: Մեռած ո՞նց ա կենթանացել, ո՞նց ա ըլել:

- Այ մերա, դես-դեն:

Քարով, քուլով ա քցք, որ ինչ ա տենա խելքի ա կյալի, մթած թե շաշ ա էլի: Որ շատ գոռ ա անք, վեր ա ունք շորերը իրան տալի: Տղեն քյնք ա տենք ըտեղ չի: Դե ըտեղ չի՞ ըտեղ չի, սրան հարցնիլով, մրան հարցնիլով, ասք են.- Ինչ-որ մի քյնքվան քյնքնք ըտեղով, կարող ա էն քյնքվանի հետ քյնքնք ըլի:

Էն քյնքվանի իզին քյնք, շատ քյնք, թե քիչ քյնք, քյնք տեսավ քարվանը հասել ա իրան քաղաքը: Ուխտերի պեղը վեր են տրել, վերջապես ամենքը իրանց տեղը դասավորել են, տրան էլ տարել են վիրի հարգք, դե էն ա իրան հմար կնիկ ա տարել էտ մարթը՝ էտ քյնքվանի պետը:

Հա՞ տղեն քյնք ըտեղեք ծանոթացավ մի քանի օր, եկավ ասեք.- Խաղեյիմ, բա ծառա չե՞ս ուղի, մի որևէ աշխատանք տաս, ես քու տանը ծառայեմ:

Որ կնիկը տենա, որ մարթն ա, հետևից եկել ա, որ իրեք տարի սիրահար ա ըլել, միել էլ կյանքի կեսը տվել ա, վերջը: Հա՞, թե ասք ա.- Կարա՞ս, ասք ա.- դազեր պահես, դազարա-ծի ժամանակը թմանվել ա, ազատվել ա:

Թե ասք ա.- Հա:

Տանք ա դազերը ցույց տալի, տեղը ցույց տալի, որդեղ դի քնիլ, որդեղ դի ապրիլ: Ու

¹ Սա հեքիաթի երկրորդ՝ ծայնագրված տարբերակն է (ծանոթ. բանահավաքի):

երկու օրից եղը ասըմ ա.- Ես ուրիշ քաղաք եմ քյնըմ, վերջը ըստեղեք մտիկ կանեք:

Ուրիշ էլ նոցաքոնի, պան ունի, ամեքն իրանց հերթին: Հա՛, խազեյիցը որ քյնըմ ա, հա՛ տո՛ւ պիրըմ ա երկու դազ սպանըմ շլակըմ քյնըմ, որ կնիկը տենա, որ իրան մարթն ա, եղենն եկել ա էլի: Տանըմ ա տուռը թակըմ, տուռը պոց ա անըմ, ճնանըմ ա, որ մարթն ա էլի:

- Շան տղա՛,- ասըմ ա,- եկել ես ինձ բռնա-բարե՞ս,- ասըմ ա,- խազեյիցը կկոյա, կտենաս քու կլխիտ ի՞նչ օյին եմ տնըմ:

Հա՛ խազեյիցը կոյալիս ա երկու օից եդո, պատմըմ ա, թե ասըմ ա.- Բա քու մոքարը սհենց, սհենց եկավ, ուզըմ էր ինձ բռնաբարի: Վերջը:

Թե ասըմ ա.- Ոչինչ այ՛ կնիկ, ես տրո՛ւ դատ ու դիվանը կանեմ:

Վեր ա ունըմ ժողվուրթին հայտարարըմ, որ.- Սհենց ինձ մի ծառա ունեմ, վերջը նրան կախաղան եմ հանըմ, ով որ ցանկանըմ ա, թող կոյա թըմաշի:

Հա՛, դարաղաջին սարքըմ եմ, տրո՛ւն կախ դնեմ անիլ, ու դազնանին կարթըմ ա, որ. «Սհենց եկել ա, սհե դազերը սպանել ու սհե եկել ա իմ կյնգանը վերչապես անպատվել ա»:

Ես կողմը, են կողմը, դե ժողվուրթ եմ էլի մինն ասըմ ա.- Այ՛ մարթ, երիտասարդ տղա յա, ով գիդի ի՞նչ ա մտքովն անց կըցեյ, խնահի՛:

Մինը մի պան ա ասըմ: Մինն էլ ասըմ ա.- Լա՛վ ես անըմ, կախ արա՛:

Հա՛ էտ դազնանին կարթիլուց եղը ուրեմը տրան հարց ա տալի խազեյիցը, որ.- Բու վեր-չի խոսքն ասա, որ ի՞նչ ես ուզըմ, ի՞նչ ես պահանջըմ մեզանից, քեզ են ա կախ ենք անըմ էլի:

Ասըմ ա.- Ես ոչ մի պահանջ չունեմ,- ասըմ ա.- մենակ են եմ պահանջըմ, որ ինչ որ տվել եմ, թող աստված հետ տա:

Կնիկն էլ եկել ա ժողվուրթի հետ ըստեղ թըմաշի, որ մարթին կախ եմ անըմ: Կնիկը հենց ընդեղ տեղն ու տեղը մահանըմ ա, խազեյիցն ասըմ ա.- Տղին վեր պիրեք տարեք,- ասըմ ա,- մի առանձին տեղ պահեցեք մինչև ես գործը

վերչացնեմ, տենամ էտ ի՞նչ էր տրո՛ւ վերչի խոսքը, որ իմ կնիկս ըստեղ մահացավ:

Հա՛, տղին վեր եմ պիրըմ, տանըմ եմ: Տարան թաղեցին վերչացորին, էկավ տղին կանչեց:

- Ի՞նչ էր,- ասըմ ա,- այ՛ տղա, քու վերչին խոսքը, որ իմ կնիկը ընդեղ մահացավ:

Ասըմ ա.- Խազեյին, մա քու կնիկը չի, մա իմ կնիկն էր, իրեք տարի սիրահար եմ ըլել, իրեք տարուց հետո վեց ամիս հետը ապրել եմ, վեց ամսից եղը քշեր-ցիրեկ կյրեզմանի վրա, աստված ինձ ասել ա՛ կյանքիտ կեսը իրան տու, կենթընցնեմ: Տվել եմ: Ութանա-սուռ տարի որ ես ապրիլ դի, քառասուռ տարի եմ ապրըմ՝ հետն ապրեմ:

Ասըմ ա.- Լավ էլ արել ես, որ հետ ես պա-հանջել, եթե քեզ, որ իրեք տարի սիրահար ես, տհենց դավաճանություն ա արել, նշանա-կըմ ա ինձ էլ կտաներ մի ճրի հոր կքցեր: Լա՛վ էլ արել ես:

Կանչըմ ա մի ուրիշ նոցաքոնի, մի ուխտ ինչ որ ուտելիք ա, հաքնիլիք ա, լավ ա, վաղ ա պարցըմ, ասըմ ա.- Ես տղին կտանես իրան տեղը ու ընդեղից էլ գյուղխորհուրթիցը թու-խտ կպիրես, որ սալամաթ տարիր տեղ հըսց-րիր:

Ու տհենց տղին պիրըմ ա տեղաց անըմ ու ըստեղից էլ թուղթ վեր ունըմ, անց կենըմ քյնըմ:

44(44). ԲԱՆՏԻ ՀԵՏԿԻՑ ՄԱՆ ԵԿՈՂՈ

Սարթու մեկը քշերը երազ ա տեսնըմ, կողմնակի մարթ, ասըմ ա.- Քյնա բախտիտ հետևից ման արի:

Սարթը արթնանըմ ա տեսնըմ երազ ա: Նո-րից ա պառկըմ, նորից եմ էտ երազը իրեն հայտնըմ, որ.- Քյնա բախտիտ հետևից ման արի:

Սարթը վեր ա կենըմ առավոտը, շորերը հավաքըմ ա, ճանապարհըմ, շատ ա քյնըմ, քիչ ա քյնըմ, ճանապարհը որ կիսըմ ա, հա՛ տենըմ ա՛ մի ծիրանի ծառ, ծառի տակին մտուռ ա, որ հանգիստանա, քեզարած մարթ ա էլի, հանգարծ քուրը տանըմ ա, աչկը կաչըմ ա:

էլի էտ մարթը կ'ալիս ա ասըմ.- Այ մարթ, ինչի՞ ես քնել, վեր կաց քյնա բախտիտ հետեկն ման արի: Այսինչ տեղը, այսինչ փողոցում, այ էն քարի տակ ոսկի կա թաղված, քյնա կյթի, էտ ոսկին տար օգտագործի:

Մարթը էլի արթնանըմ ա, արթնանըմ ա տեսնըմ ա՝ ծիրանի, մի հատ ծիրան ա ընգել կողքը, մի հասած ծիրան, վեր ա ունըմ էտ ծիրանը անուշ ա անըմ ու ասըմ.- Երևի էս ա իմ ղըսմաթը, ես հետ տռնռնեմ քյնա տուն:

Ետ ա տռնռնըմ կ'ալի, բավականի ժամանակ ճանապար քյնացած մարթ ա ըլըմ, կ'ալիս ա, որ քաղաք մտնըմ, թեքվըմ ա պարիկ-մախերի մոտ, ասըմ ա.- Թրաշվեմ, նոր քյնա տուն:

Թրաշվելու ժամանակ պարիկմախերը հարցնըմ ա, ասըմ ա.- Ի՞նչ մարթ ես, որտեղի՞ց ես կ'ալի:

Տա պատմըմ ա, որ.- Է՛ սհե, սհե երազըմ.- ասըմ ա.- միշտ ինձ ասըմ են, որ քյնա բախտիտ հեղկիցը ման արի, հիմա էլ քյնացել եմ ման եկել, ախպեր, մի հատ ծիրան եմ քյթել, իմ բախտը երևի նա էր գրված, ուրիշ ոչինչ չկա:

Ասըմ ա.- Այ մարթ, երազին էլ հավատալ կըլի որ, երազը սուտ պնձ ա, ես էլ եմ երազըմ տեսնըմ եմ, որ ամեն օր կ'ալիս եմ ասըմ՝ այ մարթ, այսինչ փողոցըմ ոսկի կա թաղված, քյնա հանի՞, բայց որ տեսնըմ եմ երազ ա, էլի հե՛չ, փոշմանըմ եմ:

Էտ պարիկմախերը, իրոք, էտ ոսկու տեղը ասըմ ա. այսինչ փողոցըմ, այսինչ քարի տակ ինձ ցույց եմ տալիս երազըմ, որ էնդեղ ոսկի կա թաղված:

Մարթը էտ պարիկմախերի ասելով վեր ա կենըմ քյնըմ նույն փողոցի քարի տակը քանդըմ, տեսնըմ չորս փողբիկ կուռն ոսկի ա դրված ընդդէ: Հիմա մարթը մտածըմ ա.- Ի՞նչ անեմ, որ ես ոսկին ես տանեմ ու ուտեմ մարսեմ, ուրիշները չըողոքեն, տանեն տրա համար ինձ տուժի ենթարկեն, չարչարեն:

Տա ոսկու էտ պուլիկիցը մի հատ ոսկի ա վերցնըմ ու նորից ծածկըմ, քարը քցըմ պերահին ու թողըմ կ'ալի, թեքվըմ ա բազարիցը մի հատ ծու էլ առնըմ, երեսանց համար ուտելիք էլ առնըմ, կ'ալիս տուն: Կ'ալիս ա տուն, էտ

մարթի միտկը էն ա, որ առաջին հերթին իր կյնգանը փորցի, տեսա, եթե տա գաղտնիք պահող ա, կայուն կին ա, քյնա ոսկին պիրի ու ուտի վայելի: Տա քիչ հետով կյնգանը փորցելու համար փորիցը փռնըմ ա:

- Վա՛յ, փորըս ցավեց, այ կնիկ, փորս ցավըմ ա, փորըս ցավըմ ա:

Ու հետով գրպանիցը մի ծու ա հանըմ ու ասըմ.- Այ կնիկ մի ծու ածեցի:

Կինն ասըմ ա.- Այ մարթ, բա մարթն էլ ծու կածի՞, էտ ի՞նչ պնձ ա, որ տու արել ես:

Ասըմ ա.- Դե արի, ի՞նչ անեմ, այ կնիկ ջան:

Միայն մարթը խընթրում ա կնոջը, որ.- Սա մարթու համար անպատվաբեր բան ա էլի, խնթրում եմ՝ ոչ մի տեղ չասես, մեռակ ես, տու իմանանք էլի, այ կնիկ:- Շատ ա խնթրըմ մարթը:

- Լա՛վ.- ասըմ ա.- այ մարթ, չեմ ասիլ.- ասըմ ա, բա ես քու գաղտնիքը ուրիշ տեղ կ'առնե՞մ, չեմ ասիլ:

Հենց էտ մոնեստին կուլը առնըմ ախպուրը քյնը՝ կինը: Քյնըմ ա տեսնըմ մի ծանոթ կին ծուր ա լցնըմ:

Ասըմ ա.- Քիրա՛, որ ես քեզ հետ մի պնձ ասեմ, ուրիշի կասե՞ս:

Ասըմ ա.- Չէ՛, չեմ ասիլ:

Ասըմ ա.- Բա չես ասիլ, թե սորի մեր մարթը էրկու ծու ա ածել:

- Վի՛յ,- ասըմ ա, այ ախիշ, բա մարթն էլ ծու կածի՞:

Ասըմ ա.- Դե չգիդեմ, ածել ա:

Էտ կնիկը վեր ա կենըմ քյնըմ իրանց տուն, մարթուն ասըմ.- Այ մարթ,- ասըմ ա,- մի գարմանալի հրաշք պնձ եմ լսել:

Ասըմ ա.- Ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Ես ինչ մարթը,- ասըմ ա,- էսորի իրեք ծու ածել ա:

- Այ կնիկ.- ասըմ ա.- տա ստից պնձ ա, մի ասիլ, մարթը ծու չի ածիլ, պնձ:

- Չէ՛, էն կնիկը համ խնթրեց, որ ուրիշի բան չի ասեմ, համ էլ ասեց, որ մարթը սորի էրկու ծու ա ածել:

Մարթը վեր ա կենըմ քյնըմ հանդ աշխարհնքի, էնդեղ տղաները, որ թուփ եմ ըլըմ հետը գրուցըմ, ասըմ ա.- Բա չեք ասիլ, թե այսինչ մարթը սորի չորս ծու ածել ա:

Եվ եղափոխվ լուրը հասնում և թաքավորին, միայն ինժամանակ, երբ ինստուկցիաներ ծու և տոնումը: Թաքավորը կանչում և ես մարթին մի հալ ու հարց անի տեսնի, իրոք, մարթը ծու ածում ա՞, թե՞ չէ: Իհարկե, տոն զարմանալի պան և էլի: Թաքավորը կանչում և մարթուն ու ասքը.- Այ մարթ, ասքը եմ՝ տու հարուր ծու ես ածել, ճիշտ ա՞:

Մարթը ծիծաղում և, ասքը ա.- Թաքավորն ապրած կենա, դե որ ետպես ա, ես իմ գաղտնիքները քեզ ասեմ, որ տոն ընչի և մի ծուսն տոնել արթեն հարուր ծու:

Թաքավորը տեսնում և, որ իսկապես, մի ծու էլ ինքն և ավելացրել, պերանից պերան անցնելով՝ մի ծուսն տոնել և հարիր ծու:

Մարթը թաքավորին պատմել և, ասել ա.- Ես ոսկի եմ քըթել այսինչ տեղը և իմ կնոջ կայունությունը, նրան դավերենությունը փորցելու համար ես էտ ծուսն իմ գրպանիցը հանել եմ ցույց տվել, որ, իրոք, ծուսն եմ ածել, բայց ընթամենը հինգ օր քաշած՝ ծվերը հասել են հարուրի: Դմի տրա համար էլ ես գիդեմ, որ էն ոսկին ես չեմ կարալու վայելեմ, կինըս ուրիշ տեղ կըբամբասի, կասի, կկան ինձ կնեղացնեն, խընթորմ եմ՝ մարթ տաս, թաքավորն ապրած կենա, տանեմ ոսկին հանեմ տամ քեզ, պիր թու խազնեն ածա՞:

Թաքավորը մարթ և տալի, մարթս էլ քյնըմ և հետը, ոսկին՝ չորս կնուռ ոսկին, հանքը եմ տանքը թաքավորի պալատը, թաքավորը մայրը և, մայրը, տեսնքը ա, որ խեղճ ախկատ մարթ ա, ասքը ա.- Լա՛վ, արի ես ոսկին մենք էրկուսով կիսենք, երկու կնուռը՝ քե՞զ, էրկուսը՝ ինձ, և տու էլ տար վայելի, ոչ ոք էլ քեզ ոչինչ չի ասիլ:

Այդափսով կինը մնում է անգաղտնապահ, և մի ծուսն տոնքըմ և մինչև, վերջը, հարուր ծու:

45(45). ՈՎ ԸՇԽԱՍՏԻ՝ ՆԱ ՈՒՏԻ

Մեր ու տղա եմ ըլըմ, մի լյւծ եզ եմ ունեցնմ, իրանք էլ տուն չեն ունեցնմ, մի կյոմի միջի էտ եզն էլ և ապրքը, էտ մեր ու տղեն էլ: Էտ մերը հիվանդաանը և, տղին ըստիպքըմ ա,

որ.- Զու եզան մինը մորթի ես ուտեմ ըլվա-նամ:

Տղեն ասքը ա.- Այ մերա, բա եզը մորթեմ, մնա մի հատ, մենք կարուսնքը քյնանք չլաք վարենք, բա մենք ո՞նց կքյնանք կվարենք:

Թե.- Զգիդե՛մ, ես հիվանդ եմ, պետք և ուտեմ՝ լավանամ:

Էտ տղի հնարը կտրած՝ պիրքըմ և մորթքըմ, էտ մերը ուտքըմ և լավանքըմ: Արթեն գարունը կյալիս ա, սաղ պիրքըմ եմ իրանց չլաք ա, լյւծն ա, իրանց սամին ա, սըմետա յա (սըմետեն որ կապքըմ եմ), ըստնք լոխ՝վ հազքըմ ա, սաղ լքծըմ եմ տուս ըլըմ, իրանց եզը չկա: Մորն ասքը ա.- Այ մերա,- ասքը ա,- էլ հնար չկա, արի,- ասքը ա,- տու էտ լյւծն ուսիտ տի, ժնջիլը վե կալ, յըս էլ չլաք վեր ունեմ ու եզը առաջ անենք, քյնանք մեր հողը:

Տանքըմ և ընդեղ, պիրքըմ և էտ ժնջիլ-մընջիլ վրեն անքըմ, էտ մորը հետը լքծըմ, էտ հողը վարքըմ ա: Թաքավորն իրան պալատից մտիկ անքըմ և տենքըմ՝ մի տղա կյնգանքըմ լքծել ա, վար անքըմ ա: Թաքավորը ըրուգունքըմ էտ տղին կանջիլ և տալի մազըր-վազըրներիմ: Քյնքըմ ա: Ասքըմ ա.- Խի՞ն ես կյնգանքըմ լքծել:

Ասքըմ ա.- Թաքավորն ասարած կենա, կը-նիկս չի, մերս ա: Դե ինքը հիվանդացա՛վ, եզն, ասե՛ք՝ մորթի ուտենք: Մղիլ էս եզը չունեմ, բա ընչո՞վ իմ հողը վարեմ:

Ասքըմ ա.- Դե լավ, կքյնաս առավոտըմ էն փլան հողըմը իմ տավարը ըրըծցնող կա, մախրչուն կասես, որ քեզ, մի հատ բուղա կա, էն քեզ կտա, կպիրես կլքծես թու հողը կվարես:

Ասքըմ ա.- Լավ:

Ըտավորը կյալիս ա, էտ տղեն դու և ըլըմ, հըլա հեռու և, մախրչին առաջն և կյալի, ասքըմ ա.- Սպասի՛,- ասքըմ ա.- սպասի՛:

Սպասքըմ ա, էտ տղեն կյալիս ա, ասքըմ ա.- Տու ուր ես ըստեղեք էկել, օցն իրան պորտով, դուլն իրան թուվը ես տըվարի մեղ չի կյալի, բուղեն քե կըստենի կտորի, հետ տոն:

Ասքըմ ա.- Լավ:

Էտ և տոնքըմ կյալի մի հատ պան վեր ունքըմ մեծ խրամատ կտրքըմ ու ինքը քյնքըմ տուն: Առավոտը մի մարթի խնթքըմ ա, որ.- Մի հատ ծի տու ինձ, մի եզը կա քյնամ պիրեմ:

Պիրըմ ա էտ մարթը ծին տալի իրան: Կյան-
լիս ա շեպած քյըմ տըվարի միջին ընգնըմ,
ըլետ էտ մարթը՝ նախըջին, աղաքն ա կյանլի,
որ.- Այ մարթ, էն բուղեն կտորոի:

Դե նա ասըմ ա.- Ոչինչ:

Բուղեն տրան տենըմ ա թե չէ, կյանըմ ա հե-
տկիցն ընգնըմ, ինչքան ջըմմ ա, բուղեն հետ-
կընգին, հետկընգին ուզըմ ա, որ ծին հետը
տըրոր տա, էտ ծին թռչըմ ա, բուղեն ուզըմ ա
թըռչի, ընգնըմ ա էտ խրամատի մեջը:

Մի իրեք օր, չորս օր, հինգ օր թողըմ ա ու
կյանլի, կյանլիս ա ճամփա պաջ անըմ, էն բու-
ղին անգաճիցը փռըմ հանըմ, թուր ճըտին
տընըմ տանըմ հողըմը լըծըմ: Էն թաքավորը
պատուհանիցը տենըմ ա, որ էտ բուղեն էտ
տղեն եզն ա շինել լըծըմ ա, ասըմ ա.- Պա՛, էս
ի՛նչ տեսակ տղա յա սա:

Հողը վարըմ ա, ցանըմ ա պոծըմ, էտ
տղին նորից կանչիլ ա տալիս: Ասըմ ա.- Այ
տղա, բա տու ի՛նչ տեսակ տղա ես, որ կը-
րացել ես էն բուղեն եզը շինես, բու հողը
վարեցիր, ցանեցիր:

Թե.- Դե արի էլի:

Ասըմ ա.- Դե էտքան լավ տղա ես, արի՛,-
ասըմ ա,- ես մի լավ ղոչաղ ախչիկ ունեմ,
տամ քեզ:

Էտ ախճիկն էլ շատ թամբալից թամբալ ա
ըլըմ:

Ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, ես
քյա՛սիք ընտանիք եմ, ես մենակ մի մեր ու-
նեմ, մի կյան, եզն էլ ա միջին ապրըմ, իմ մերն
էլ, ես էլ:

Ասըմ ա.- Ոչինչ, ես իմ ախճիկը տալիս եմ
քեզ:

Դե ասըմ ա.- Դե թաքավորի ախճիկ ա, ես
տանեմ ո՛նց պահեմ:

Ասըմ ա.- Ոչինչ:

Պիրըմ ա էտ ախճիկը տալի իրան, էտ
տղեն պիրըմ ա: Ուզըմ են էրկու կնանիք հետը
կյան, ասըմ ա.- Բա տուք ո՛ւր եք կյանլի:

- Կյանք շորերը հանենք, իջքցենք, տեղը
շինենք միջին տընենք, վեր կենանք ըռավտը
իրեսն ու ոտը լըվանանք:

Ասըմ ա.- Զէ՛, մենք ունենք, էտ գործերը կա-
տարողն ունենք:

Պիրըմ ա էտ ըխճըկանը, դե հմի մի էսքան
պուճուր թախտ ա, մերը մի ծերին ա քնըմ,
տղեն էս մի ծերին ա կուչ կյանլի, էտ ախճիկն
էլ մնըմ ա ըսի նստած:

Ասըմ են.- Շորերըտ հանի, քնի՛:

Դե շորերը հանող չկա, ինքն էլ կարըմ չի
հանի, էտ ախճիկը մնըմ ա տիե նստած՝
մըչկել լիսը: Ըռավտը վեր ա կենըմ քյնըմ ա:

- Այ մերա, ես քյնըմ եմ,- ասըմ ա,- գործի,
ով ըշխաղի՛ նա կուտի:

Էտ մերը վեր ա կենըմ եզների տակը մաք-
րըմ ա, քյնըմ ճուր պիրըմ, կյանլի տուրը-տուրը
սրվըմ, ըրգաճավախտը ճաշ ա էփըմ տղի
հըմար: Էտ տղեն կյանլիս ա, ասըմ ա.- Այ մերա,
ո՛վ ա ըշխատել:

Ասըմ ա.- Տղա ջան, ո՛վ դի ըշխաղիլ, էն ա
ես եմ, տու:

Ասըմ ա.- Լավ:

Հացը պիրըմ ա, իրանք ուտըմ են, նրան
տալիս չեն: Մին, էրկու, էտ ախճիկն ասըմ ա.-
Հալքաճ սրանք դայդեն սըհենք ա, պետք ա
աշխատեն, որ ուտեն էլի:

Կեսուրը որ ճըրիցը կյանլիս ա, հա՛ քյնըմ ա
կուժը ուսից վեր ունըմ վե տընըմ՝ ճըրի կուժը:
Էն ա կեսուրն ուրխանըմ ա, ասըմ ա.- Ջան, էս
ա ինձ քյումակ արավ:

Տղեն կյանլիս ա հմի հըրցնըմ ա, ասըմ ա.-
Այ մերա, ո՛վ ա սօրի ըշխատել:

Ասըմ ա.- Տղա ջան, սօրի,- ասըմ ա,- հար-
սըս կուժը ուսիցըս վեր ա կալել վե տըրել:

Ասըմ - Հա՛:

Կանչըմ են սիե մի պատառ հաց են տալի:
Ասըմ ա.- Դե էսքան ես ըշխաղել, էսքան դենք
տալի:

Էքսի ըռավողն էլ կեսուրը տները սրվըմ ա,
տըռան տակն անըմ ա ըխաղիարը, էվիլը սիե
դեմ անըմ ա: Էվիլը որ վեր ա ընգնըմ, քյնըմ ա
թըրազըմ: Տիե կամաց-կամաց էտ ըխճկանը
պիրըմ են հարս սարքըմ, լըվանըմ ա:

Խաճաթը հասնըմ ա թաքավորին, որ սիե,
սիե յա: Որ տարին թըմամըմ ա հա՛, էն ասըմ ա
թաքավորը.- Սրի՛ քյնանք,- ասըմ ա,- մեր
ըխճկանը տենանք էս ի՛նչ պան ըլավ:

Կյանլիս են տենըմ, որ ըլետ էտ քյա՛սիք
տուրն ա, էտ տղեն ա, էտ տեղն ա, էտ ախ-
ճիկը գործ անըմ ա, որ կյանլիս են, մի պղինձ

խաշ են էփած ըլըմ, հա՛ խաշ էլ էփած ա ըլըմ¹...

Չերը-մերը որ կյալիս են, պիրըմ ա ոստերը, են որ կծիկ են անըմ, մանած, կեսուրի ոստերը պիրըմ ա տընըմ մոր դաքին, ասըմ ա.- Այ մե-րա ջան, կծիկ արա, որ քեզ հաց տան:- Չորն ասըմ ա,- հայրիկ ջան, արի՛ վստորը կլաի, գործ արա, որ քեզ հաց տան:

Էս մարթը մատը կծած ա, հը՛մ, ուրեմը ըստի մի պա՛ն կա: Կյալիս են հըվաքըմ են, քյախթ են, մըրթաքի ա, քըրեղան ա, փետի քյալ ա, պիրըմ են վե տընըմ, հա՛ հաց են ուտըմ: Էտ մարթը մտիկ անըմ ա տենըմ, որ հա՛, ախճիկը թարագվել ա, պիրըմ ա ըտեղ էտ տղի՛ն ասըմ ա.- Տղա ջան, բա որ սիե լա՛վ տղա ես տու, ի՛մ թաքավորության կեսը քեզ եմ տալի, քեզ էլ օխտն օր, օխտը քըշեր հըրսա-նիք եմ անըմ:

Պիրըմ ա օխտն օր, օխտը քըշեր հըրսա-նիք ա անըմ, թաքավորության կեսն էլ նրան տալի, արթեն սկսըմ են լա՛վ ապրիլը:

46(46). ՈՎ ԱՇԽԱՍԻ, ՆԱ ԴԻ ՈՒՏԻԼ

Չին ժամանակ թակավորները կեղական չոր են հաքըմ, դարվիշնին տներ ման են կյալի, եղելություն են հըվաքըմ էլի ժողովո-թից: Մի թակավոր մի ըրուգու քյըմ ա մի տուն կոնախ ա ըլըմ, մի տղա, իրան մերն են ըլըմ: Տենըմ են մի կոնախ ա եկել, գաստ չկա տընեն ըռաչին:

Սերը տղին ասըմ ա.- Ո՛նց անենք, էս մարթին ո՛նց ճամփու տընենք:

Երկու եզ են ունենըմ:

Տղեն ասըմ ա.- Մամա՛, պիրենք մի եզը մորթենք էս մարթին ճամփու տնենք էլի...

Պերըմ են մի եզան թայ մորթըմ, մորթըմ են, էտ մարթին՝ էտ թակավորին, բայց գիղըմ չեն թակավոր ա էլի, ինձ պես մի մարթ ա, հյու-րասիրըմ են ճամփու տնըմ, ծմեռն ա ըլըմ: ճամփու են տընըմ:

Չմի՛ կյարուճք, մի թայ եզ ա, վարի ժամա-նակն ա, գիղըմ չեն ինչ անեն:

Մորն ասըմ ա.- Մամա՛, տու պատճառ տա-ռա՛ր, որ ես մորթեցի, էն մարթին հյուրասիրե-ցինք, պետք ա քեզ լծեմ: Պետք ա քեզ լծեմ վար անենք, սոված կենա՛նք:

- Բա.- ասըմ ա,- բալիկ ջան, տու ես գիղըմ, ինչ անըմ ես արա՛,- ասըմ ա,- բալի ես եմ պատճառ տառե՛լ:

Պերըմ ա, տանըմ ա հողըմ մորը լծըմ՝ մի թայ եզ, միել մորը մի կողըմ լծըմ, վար անըմ ա: Էտ թակավորը միի ման կյալով տենըմ ա, որ մի մարթ ճանաչին ա տալի, տենըմ ա էտ մարթ մոր լծած վար անըմ ա, քյըմ ա մոտանըմ ա, մոտանըմ ա:

Սըմ ա.- Տղա ջան, ընչի՞, բա կնկկարմա-տին կըլծե՞ն:

Սըմ ա.- Չա՛, պետք ա լծեմ,- ասըմ ա,- նա ա պատճառ տառե՛լ, որ ես նրան լծըմ եմ:

Պատըմ ա ինչպես էր պատմությունը:

Սըմ ա.- Տղա ջան, էտ կյնզան թող արա, քու մոր թող արա, արի, ես քեզ մի եզ կտամ, պի լծի, հետ վար արա:

Սըմ ա.- Լա՛վ:

Տանըմ ա էտ տղեն, տանում ա իր հետ, իրանք մի բուղա են ունենըմ, իսան կարալ չի մոտանա, դե գիժ բուղա յա: Կապըմ ա, պան անըմ ա, ասըմ ա.- Տար լծի վար արա, կյնզան լծիլ մի:

Պերըմ ա, կարըմ չի լծի: Տանըմ ա չորս-հինգ օր սոված պահըմ ա, սոված պահըմ ա, բուղեն ճլորըմ, սամսեն հալից ընգըմ, պերըմ ա լծըմ, պերըմ ա լծըմ սկսըմ ա վար անիլ: Սովըմ ա, արթեն տառնըմ ա եզ:

Էտ թակավոր մի քանի օրից եղ էլի կյալիս ա մտիկ անըմ էտ բուղի, գիղի ոչ էղ բուղեն ոնց դի լծիլ: Կյալիս ա տենըմ էտ տղեն էտ բուղեն լծել օրինավոր վարըմ ա:

Սըմ ա.- Տղա ջան, էտ ո՛նց սվորցիր, էտ ո՛նց պան արիր, որ էտ բուղեն վար անըմ ա:

Թե ասըմ ա.- Չա՛, ես կավորցնեմ, ես սվորց-նող մարթ եմ:

Էտ թակավորին էլ մի ախչիկ ա ունենըմ, ըսկի տեղից վե չի կենըմ, ըստեղան՝ ընդեղ, ճուր վեր ունի խմի, թամբալ ախչիկ ա: Էտ թակավոր մտածըմ ա, մտածըմ, ասըմ ա.- Չե, պերըմ եմ իմ ախչիկ տամ սրան, էս հուճար

¹ «Չիշողությունս կորավ», - գանգատվում է բանա-սացը:

ունի, որ էս բուղեն սովորցրեց վար անըմ ա, էս իմ ախչկան էլ կսովորցնի, իմ ախչիկ տամ:

Հա':

Ասըմ ա.- Տղա ջան,- ասըմ ա,- ես մի ախչիկ ունիմ, արի քե տամ:

Թակավոր մարթ ա է': Հա', քյնըմ եմ էտ ախչկան պերում պսակվում, հարսանիք անում, դես անում, դե թամբալ ախչիկ ա, էտ տղեն պերում ա տուն: Էտ տղեն մորը գիդե'ս ինչ ասում ա:

Ասում ա.- Մամա՛ ջան, էս մեր տուն ով աշխատի, նա դի ուտիլ, ով չաշխատի նրան հաց-ճրի պլան չկա:

Հա', մեկ կարքադրեմ ա, քյնըմ ա: Էտ պառակ տախտը մաքրեմ ա, ավլոմ ա, կյալիս ա նստըմ հաց ուտըմ, էտ հարսն էլ՝ նստած ընդի, տղեն տրան զատ չի տալի:

Մի օր, հինգ օր, տաս օր, էտ ախչիկ սամսեն լղարըմ ա վեր ա ընգնըմ: Լղարըմ ա, մի օր վեր ա կենըմ կամաց էվիլը վեր ունըմ էքքան տեղ թածուլզցնըմ¹, էքքան տեղ որ թածուլզցնըմ ա, պառակ պերըմ ա էսան հաց ա տալի: Էտ ախչիկը ուտըմ ա, մի քիչ նյութ ա կյալի, էքսի օրը սենյակը մաքուր թածուլզ սրփեմ ա, հացն ա էվլցնըմ, կերակուր էլ ա տալի: Էքսի օր էտ ախճիկ մտածըմ ա, մտածըմ, ասըմ ա. «Ով աշխադի, նա դի ուտիլ»: Վեդրով ճուր ա քյնըմ արթեն, կնանուցն հետ ախպուրն ա քյնըմ ճուր պիրըմ ասենք, կերակուրն էլ ա էվլցնըմ, ամեն պան տընըմ ա, ուտըմ ա, կշտանըմ ա: Տառնըմ ա իսկական կնիկարմատ, լավ հարս, ուտըմ ա, խըմ ա:

Էտ թակավոր ասըմ ա.- Տենաս ի՞նչ տառակ իմ ախճկա պան, քյնած մտիկ անեմ:

Քյնըմ ա, կյալի տուն, տենըմ ա ախճիկ մի շուտարի ախճիկ ա տունը՝ մաքրիլ, էվլիլ, ճուր պիրիլ, սեղան պատրաստիլ:

Ասըմ ա.-Քե մատաղ, էս ի՞նչ պան ա,- մտքի միջի:

Էտ ախչիկ հոր ասըմ ա.- Հայրիկ, գիդե'ս, որ քստի ով աշխատի, նա դի ուտիլ, մի պան արա, որ քեզ հաց տան, թե չէ տալ չեն:

Թակավոր մտածըմ ա, մտածըմ ա, ասըմ ա. «Իրան միջին հյուսար կա ուրեմը»:

Հա', էտ թակավոր իրեք օր մնըմ ա ախչկա կուշտը, տենըմ ա՝ ախչիկը օրինավոր ախչիկ ա տառել, էլ ախչկան խոսք չկա, լավ հարսնություն ա անըմ, լավ կանոնավոր պան ա տունըլ:

Պերըմ ա, ասըմ ա.- Տղա ջան, որ տու էտպես հյուսար ունես, արի քյնանք քեզ մեծ պան տամ, զանծ տամ, ոսկի տամ, քեզ մեծ ոսկեղեն տամ, պի տուն շինի, հարստություն ստեղծի, ապրի: Ինչ որ քե տամ, արժանի ա քե տալը:

47(47). ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՍ

Մի մարթ ա ըլել, ըրեխա չի ունեցել: Էտ մարթին գող նյութ, ապրանք ա ունեցել: Ասել ա.- Ի՞նչ անեն, քյնած մի մարթ ճարեն պիրեն ապրանքի վրա տընեն:

Էտ մարթը տուս ա եկել կեղորանը, որ բատրակի ման կյալ: Կյալիս ա տենըմ՝ մի քանի ըրեխա ճամփըմ խաղ են անըմ: Էրկու ըրեխա են ըլըմ Էրկու ախպեր: Էրկուսն էլ եթիմ են ըլըմ, միըն՝ մեծ, միըն՝ փոքր: Էտ մեծ ըրեխեն ասըմ ա.- Ա՛ դայ, էտ ո՛ւր ե ս քյնըմ:

Թե.- Քյնըմ եմ մի բատրակ ճարեմ՝ ապրանքին մտիկ անի:

Ասըմ ա.- Ա՛ դայ, էս պուճուր ըրեխեն քեզ ծեռք կտա՞:

Թե.- Հա': Հենց ըտենցն ա պետքը:

Ասըմ ա.- Դե որ տենց ա տալ: Տու ու քու խիղճ, ոնց կպահես՞ պահես:

Էտ մարթը տանըմ ա էտ ըրեխին, տանըմ ա տուն, ասըմ ա.- Ա՛ քեռ ջան, դե որ պիրել ես, տարեկան հախս էլ խոսանք, նոր աշխատեն:

Ասըմ ա.- Խոսանք, բալա ջան:- Ասըմ ա.- ով որ նեղամա, նրա մեջքիցը մի զուլ կաշի դենք հանիլ:

Թե.- Լավ, քիծա ջան:

Ըտեղ էտ մարթը, հացը ուտըմ են, ըռավուտը վե կենըմ:

- Դե', տղա ջան, էս չուրք վե կալ, թագին էլ հետը, որդի վե կընգանի, ընդի էլ կկարես:

¹ Բանասացը ծեռքով ցույց է տալիս պատումի հերոսուհու մաքրած տարածությունը (ծանոթ. բանահավաքի):

Էտ տղեն քյնըմ ա, էտ թագին մի քարափըմ վեր ա ընգըմ: Էտ տղեն չուքը վեր ա տընըմ, կյալիս էտ թագու կլխին տալիս սպանըմ, քյնըմ ա մի խելախ տեղ փափուկ վարըմ ա ու կյալիս տուն:

- Ա' տղա, թագին ի՞նչ արիր, ա' տղա ջան:

Ասըմ ա.- Դռչանը եկավ, եղենն ընգավ քյնոց, էն քյնալն էր, որ քյնոց:

- Դե՛ ապրանքը տար ըրոծցու:

Էտ ըրեխին էնքան չոչարըմ ա, էնքան պընցըմ ա, որ էլ հնար չկա:

- Բալա՛ ջան, նեղացա՛ր:

- Ա' քեռ ջան, բա ի՞նչ անեմ:

- Դե՛ մեչկըտ դեսն արա:

Կաշին բերըմ ա, էտ ըրեխեն մկտալոն կյալիս ա իրանց տուն:

- Էտ ի՞նչ ա, ախպեր ջան:

Թե.- Բա սիենց, սիենց:

- Պա՛, ես տրած սիենցը-սիենցը:

Էտ ա ըրեխուն եղևըմ են: Էտ ա ասըմ ա.- Լավ:

Էտ մարթը մի տարի պտտըմ ա, մարթ չի ճարըմ, ասըմ ա.- Էլի քյնոմ կեղորանքը:

Ասըմ ա էն տղեն.- Էն մարթը հրեն կյալիս ա:

Էտ մեծ ախպորը տալիս ա անց կենըմ, ասըմ ա.- Ա' քեռ, էտ ո՞ր ես քյնըմ:

Էտ ա մտիկ ա անըմ տենըմ ա տրան, ասըմ ա.- Քյնըմ եմ մարթ ճարեմ:

Ասըմ ա.- Ա' քեռ, ես կյալիս եմ:

Ասըմ ա.- Լավ:

Ընգըմ ա տրած եղնա, քյնըմ: Քյնըմ ա տուն:

- Ա' կնիկ, հաց շինի:

Հաց ա ուտըմ:

- Դե քնի.- ասըմ ա.- տղա՛ ջան, որ ըռա-վոտը վեր կենա գործ անես:

Էտ մարթը վեր ա կենըմ քյնըմ ըռավոտը՝ ճաշ ա տառել:

- Ա' բալա, վե կաց է՛:

- Ը՞ը՛...

- Ա' բալա, վե կաց է՛:

Էտ ա ճաշ ա տառըմ:

- Ա' բալա, վե կաց է՛:

- Ը՞ը՛... Խազեյին ջան, յավաշ՝ շորերս հաքենեմ:

Սի թևը մի ժամ ա հաքըմ, մի թևը մի ժամ ա հաքըմ: Վերջը էտ մարթը վեր ա կենըմ:

- Դե հիլա տրեխինս հաքենեմ:

Տրեխինս հաքըմ, տրխետենը քցըմ ա հա-նըմ, քցըմ ա հանըմ ա:

- Ա' բալա, դե վե կաց, օրը ճաշ տառավ, չուքը քյնոց:

Ասըմ ա.- Հաց ուտենը:

Հացը ուտըմ են, վեր ա կենըմ ասըմ ա.- Տղա ջան, դե չուքը լծի:

Չուքը լծըմ ա: Հայ՛ դես, հայ՛ դեն, թե ասըմ ա.- Թագին վե կալ քյնոմ:

Թագին վեր ա ունըմ քյնըմ: Թագուն սպանըմ ա կյալիս ա տուն:

Ասըմ ա.- Թագին ի՞նչ արիր:

- Դե դուշանի եղկիցը ընգավ քյնոց: Խա-զեյին ջան, հու նեղանըմ չե՛ս:

Թե.- Չէ:

Ասըմ ա.- Պրծա՛ր:

Ասըմ ա.- Սի քիչ տեղ ա մնացել:

Էքսի օրը վեր ա կենըմ, մի պուլիկ մածուն ա տալի ու մի հաց, ասըմ ա.- Կտանես հացը հենց կուտես, որ դրաղը չկտրես, պուլիկի մածունըն էլ հենց կուտես, որ սիրեկը՝ պա՛ց չըլի:

Ասըմ ա.- Հա:

Քյնըմ ա, ընդեղ հաց ուտիլիս տառնակը հա-նըմ ա մեչ տեղը պուլիկ կըտրըմ, վեր ունըմ պուլիկի ոռը պա՛ց անըմ, քմակովը ուտըմ, սի-րեկը ետ չի անըմ: Ըրուզուըն կյալիս ա տուն:

- Խազեյին ջան, էս քու հացը՝ դրաղը կտ-րած չի, ես էլ քու պուլիկը՝ սիրեկը պա՛ց չեմ արել: Հու նեղանըմ չե՛ս, խազեյին ջան:

Թե.- Չէ:

Էքսի օրը ասըմ ա.- Ոչխարը տար ըրոծցու:

Քյնըմ ա, տանըմ ա հանըմը պտտիլեն կյալիս ա տենըմ՝ մի խնձորի ծառ՝ վրեն պուլիկի լիքը, պրցրանըմ ա, թափ ա տալի: Վիրկիցը ասըմ ա.- Արա՛, ինձ հծար էլ կպահեք:

Դե հու ոչխարը հսկանըմ չի: Ինքը թափ ա տալիս, ոչխարը ուտըմ ա, թափ ա տալի՝ ոչ-խարը ուտըմ ա: Մինը քյնըմ ա իծի պողընը

¹ Սիրեկ- կոչվում է ոչխարի մշակած մորթին: Ոչ-խարի մորթու վրայից բուրդը պոկում են, կաշին աղով ու շիբով մշակելուց հետո օգտագործում են պուլիկների բերանը կապելու համար (ծանոթ. բա-նահավաքի):

ցից ա ըլըմ: Էտ մարթը վեր ա կյալի տենըմ մի հատ կա ոչ, ու իծի պղզըմը՝ մի հատ ցցված:

- Այ, ես ծեր տերը... Բա ես ծեզ ասեցի ո՛չ՝ ինձ հմար կպահեք:

Տանակը հանըմ ա ու ոչխարը մաքուր կտորըմ: Էտ էձը աղաք ա անըմ ըրուգունը պիրըմ:

- Տղա ջան, ոչխարը բա ի՞նչ արիր:

- Այէ՛, խազեյին ջան, կեղը մի ընգա՞վ սաղ փըրթեց, էս մի իծին զոռով փրկեցի: Խազեյին ջան, հու նեղանըմ չե՞ս:

Թե.- Չէ՛:

Ասըմ ա.- Դե ըռավոտը տավարը կտանես:

Ըռավոտը տավարը տանըմ ա: Կովերը տանըմ ա, տանըմ ա պտտըմ, չի՞մ դես ու դեն կորցնըմ, ըրուգունը մի էրկու քոռ կով պիրըմ:

- Ա՛ տղա, ապրանքը ի՞նչ արիր:

- Այէ՛, խազեյին ջան, չի՞մ կեսո արին փախան, էս մի էրկուսն էլ զոռով ե՞մ սովել պիրել: Խազեյին ջան, հու նեղանըմ չե՞ս:

Թե.- Չէ՛:

Էտ ա ըռավոտն էլ վեր ա կենըմ ծիանը տանըմ ա: Իլխեն տանըմ ա քարափն ը վեր ածըմ, ըրուգունը մի ծի մատըմ կյալիս:

- Ա՛ տղա, ծիանը ի՞նչ արիր:

Ասըմ ա.- Խազեյին ջան, չի՞մ փախան կորան, էս մինն էլ զոռով ե՞մ փոնել, մատել եկել:

Արթեն ծըմեռնանըմ ա, ապրանքը կյո՞մ ա մտնըմ: Ասըմ ա.- Տղա՛ ջան, կյո՞մեշների, ուլախի տակը կքիրես, յեղը որ վեր ածես, հվաքվի:

Ասըմ ա.- Շատ լավ, խազեյին ջան:

Տա քյնըմ ա կյո՞մը քիրըմ ա ու տան պուլկների եղը պիրըմ կյո՞մըմ վեր ածըմ ու ծփծփըմ:

Քյնըմ ա ասըմ.- Խազեյին, արի տես սիե՞նց ա:

Կյալիս ա տենըմ:

- Պա՛, ա՛յ տղա, էս ի՞նչ ես արել:

- Խազեյին ջան, հու նեղանըմ չե՞ս:

Թե.- Չէ՛:

Էտ մարթը տիե մեկ էլ ասըմ ա.- Բալիկ ջան, ախոռին տըրմա՞նով լքցրու, կյո՞մեշին կխներնուս թաղած ուտեն:

Էտ ա էտ մարթը քյնըմ ա տա՞րմա՞նը պիրըմ ախոռին լցնըմ ու կյո՞մեշնու կյուլսին կտ-

րըմ տըրմա՞նըմ թաղըմ: Քյնըմ ա ասըմ.- Խազեյին, արի տես սիե՞նց ա:

Կյալիս ա տենըմ, ասըմ ա.- Ա՛ քու տունը քանդվի, էս ի՞նչ ես արել:

Թե.- Խազեյին ջան, սիե չես ասե՞լ, հու նեղանըմ չե՞ս:

Որ ծթնել ա, հա՛ մատել եմ հացի ու հաց են ուտըմ: Նոր մի ըրեխա ա ըլել, մեր էս պուճուր ըրեխի չափ՛, որ հաց ուտիլիս են ըլել, էտ ըրեխեն ասել ա.- Պապա՛, կեխտ ե՞մ անըմ:

Ասել ա.- Արա՛, արա՛, մի էս ըրեխին տար տու՛ս: Կեխտ անի:

Տարել ա տա՞նը պուպուզ տրել, ասել ա.- Արա՛, կեխտ չանես, թե չէ էս խանչալը փորըտ դե՞մ կոխիլ:

Ըրեխեն վախից կեխտ չի անըմ: Կյալիս ա մատըմ սկսըմ ա կուտապ-կուտապ անիլը:

Ասըմ ա.- Էտ ի՞նչ ա:

Թե կեխտ ե՞մ անըմ:

Ասըմ ա.- Արա՛, արա՛, մի տար ճոթուկտոր արա է՛, շներին տու:

Էտ ըրեխուն տու՛ս ա պիրըմ: Էտ ըրեխուն տու՛ս ա պիրըմ խանչալը հանըմ էտ ըրեխի քրքըմ՝ շներին տալիս: Տուն ա մտնըմ ասըմ ա.- Խազեյին, քյրիսի շանը փայ չիսաավ:

- Ա՛ տղա, ի՞նչը չիսաավ:

Թե.- Դե ըրեխիցը էլի՞:

- Պա՛, քու տունը քանդվի, էտ ի՞նչ ես արել:

Թե.- Խազեյին, հու նեղանըմ չե՞ս:

Թե.- Չէ՛:

Ասըմ ա.- Դե ըռավոտը վե կկենանք, մի կտոր տափ կա, կքյնա՞նք էրկուսով կվարենք:

Ասըմ ա.- Շատ լավ կըլի:

Էտ ըրուգունը հաց են ուտըմ, քնըմ են, ըռավոտը վեր են կենըմ չուքը վեր ունըմ կամագ-կամագ քյնըմ են ֆողի դրաղը:

Ասըմ ա.- Խազեյին, հաց ուտենք:

- Ա՛ տղա, մոր չկերա՞ր:

Թե.- Չէ՛, ես սովել եմ:

Էտ մարթ պիրըմ ա, էտ ա ուտըմ են ու վեր են կենըմ մի հետ վարըմ են, տենըմ են հրևան-մին մատել են հաց են ուտըմ, թե.- Խազեյին, մենք էլ հաց ուտենք:

¹ Բանասացը ցույց է տալիս իր երեքամյա թոռնիկին (ծանոթ. բանահավաքի):

երկու զուկ կաշին հանքն ա, ասքն ա.- Խա-
զեյին, տու իմ ախպորիցը երկու զուկ կհանքն:՝
Հետ ա կյալիս խազեյինի տուն, ըլաժ-չը-
լածն էլ հվաքքն, տանքն իրա տուն:

48(48). ԴԼԻՆԱՐԸ

Մի տերտեր ա ըլում, սա ամեն հունվարի
քյնում ա բազար, ծառայող ա փղոնում, պայց
պայման ա կապում, որ ով նեղանա, նա մեկե-
լից պետք ա մի զուկ կաշի հանի: Էտպես տեր-
տերը մի ծառայող ա փղոնում, լավ պընքընքն
ա, վերջը մի զուկ կաշի ա հանում, ճամփու
տընքն:

Եփոր մի ծառայողին տուս ա անում, տուն
ա քյնում՝ յարալու-փարալու, մի փոքրիկ ախ-
պեր ա ունենում, ասում ա.- Սխպեր, էտ ի՞նչ
ա ըլել:

Ասում ա.- Բա ֆլան տերտերը էսպես արեց:

Տրան մի փոքրիկ ախպեր ա ըլում, անունը՝
Դլինար: Էտ Դլինար ասում ա.- Սխպեր, դե
կացի, ես քյնալ դեմ տրան ծառայող տառնամ,
մի զուկ կաշի տրանից հանեմ, նոր կյամ:

Սխպեր՝ էտ Դլինար, հունվարի ժամանակ-
ներ քյնում ա բազար: Տերտեր կյալիս ա որ
ծառայող փղոնի, իրարու հանդիպում են: Տեր-
տերը էտ Դլինարին ասում ա.- Մեր պայմանը
էսպես պայման ա, եթե տու փոշմանես, ես
պետք ա քեզանից մի զուկ կաշի հանեմ, թե ես
փոշմանեմ, տու ինձանից մի զուկ կաշի
կհանես:

Ժամանակն էլ քյնում են մինչև կուկուն
տուս կյա, կուկուն որ տուս կյա, ծառայողի
վաղեն քըմամքն ա: Բարիչըն են, էտ մարթը
վեր ա ունքն տանում տուն: Սկսում ա արթեն
ծառայիլը:

Մի օր դարգում ա վար անիլ: Դլինար տա-
նում ա լծում եզնիք: Մի եզան ոտ մի քիչ
չուլախ ա ըլում, նա վարում չի, պերում ա էն
չուլախ ոտը կտրում ա: Դե հմի ոտը կտրեց, էլ
սամսեն քյնում չի, պերում ա էն մի ոտն էլ ա
կտրում, տուտուզը ընգնում ա տափին: Եփոր
երկու ոտ կտրում ա, էլ քյնում չի, պերում ա
երկուսն էլ ա կըտրում, որ հավասարվի ու
քյն: Եզը ընգնքն ա կետին: Հետո ինչ անքն

ա, քյնքն չի, պերում ա էն մի եզան չորս ոտն
էլ ա կըտրում, որ հավասարվեն ու քյնան:
Տերտեր մտիկ անում, որ սկի Դլինար վար չի
արել, օրը եղել ա ճաշ: Տերտեր քյնում ա Դլի-
նարի կուշտ:

Տերտեր կյալիս ա ասում.- Դլինար, էտ ի՞նչ
ես արել:

Ասում ա.- Բա եզ չուլիս էր՝ կտրեցի ոտը,
հետո էլ հավասարեցի, որ քյնա, էն էլ քյնում
չի:

Տերտեր դե գիդի, որ փոշմանի, ըլում չի:
Ասում ա.- Դլինար, քյնա տուն, մի երկու էշ,
տանալ-մանալ պի, որ եզները մորթենք,
տանենք ծախենք:

Միս տարան տուն, ինչ արին-չարին, պր-
ծան: Դե տերտեր նեղանում ա իրան միջին:

Տերտերին ասում ա.- Խո փոշմանել չե՞ս:

- Չէ՛, ասում ա.- փոշմանել չեմ:

Մյուս առավոտ Դլինարին ասում ա.- Քյնա
փետ պեր շըլակով:

Առավոտ թոկն ու կացինը վեր ա ունքն Դլի-
նար քյնում: Թոկ տընում ա քարի վրա կաց-
նով կըտրատում, ու կացինն էլ մաշում ա,
իրիկուն առանց փետ կյալիս ա տուն:

Տերտեր ասում ա.- Դլինար, բա ո՞ր ա
փետը:

Ասում ա.- Էնքան փետ եմ արել, որ կացինը
մաշել ա, թոկն էլ տըրի որ կապեմ, էն էլ կտր-
րատվեց: Տերտերին ասեց.- Խո փոշմանել
չե՞ս:

Տերտեր ասում ա.- Չէ՛:

Տերտերը կիշերը կընկան հետ խորիըր-
թակցում ա, թե ի՞նչ անեն, որ տըրանից ա-
զատվեն:

Ասում են.- Հացի վախտը էրեխին կըլըցըց-
նենք, կասենք Դլինար, էրեխին տար խաղըց-
րու, կտանի կխաղըցնի, մենք էլ հացը կու-
տենք, կկյա կտենա հաց չկա ուտելու, կթողի
կքյնա:

Երեխեն մի քանի իրիզու լաց ա ըլում հաց
ուտելու վախտ, էրեխեն Դլինարի շալակն են
տալիս, Դլինար մնում ա տված: Մի իրիզու էլ
որ լաց ա ըլում, տերտեր ասում ա.- Տար
ճըղի՝ տուր շան:

Դիմարն էլ տանում և ճղում, քցում շան առաջ ու կռվիս նստում, որ նստում և, տերտեր ասում և։ - Բա երեխին ի՞նչ արիր։

Ասում և։ - Բա չասի՞ր՝ տար շանը տուր։

Տերտեր քյնում և տենում երեխեն երկու կես արած՝ շան առաջ։

Էլի ասեց։ - Տերտեր, փոշման չե՞ս։

Տերտեր ի՞նչ կարա ասի, երեխեն էլ քյնաց։ Տերտեր պերում և մի որոշում անում, մորն ասում և։ - Զյնա ծառին լիի ըլի՝ կուկու կանչի, Դիմարը կլսի, կասենք՝ վաղեղ թամամել և։

Տերտերի մեր քյնում և ծառին լիի և ըլում, մի ճղիկ նստում։ Դիմար որ կյամից տուն և կռվի, էտ պառավը ծառիցը ասում և։ - Կուկու։

Դիմար գիղի, որ հունվարին կուկու չի ըլի, մի քար վեր և ունըմ քցում, տալի պառավին սպանում։ Եփոր Դիմար կռվիս և տուն, ասում և։ - Դիմար, կկուն եկել և, իմացա՞ր, էտր կանչում էր։

Ասում և։ - Տերտեր, բա հունվարին կուկու կըլի՞, կուկուն հրեն պրանված ծառի տակ։

Տերտեր քյնում և տենում իրա մերը հրեն մեռած, վեր ընգած ծառի տակ։ Կյռվիս և տխուր նստում տերտեր։ Դիմար հըրցնում և։ - Փոշման չե՞ս, տերտեր։

Էլի փոշմանում չի։

Ետո էտ տերտեր մտածում և, մտածում, կընգան ասում և։ - Արի՛ ասենք՝ առավոտ մենք քոչում ենք ուրիշ երկիր, բռլի կյա ոչ մեզ հետ, մենք ազատվենք սըրանից։

Արթեն առավոտ տերտեր ասում և։ - Մենք քոչում ենք։

Դիմար ասում և։ - Դե վաղեն դե թծամել չի, որդի քյնաց, ես ծեզ հետ կյամ։

Դիմար վեշ շլակում և ընգնում ճամփա։ ճամփին տերտեր, իրա կընիկ առաջուց են քյնում, Դիմար էլ, վեշ շլակին, եղնուց և քյնում։

Տերտեր կընգան ասում և։ - Իրիգուն կետի ղրաղին կքենք, քշեր Դիմարին վեր կունենք կըրցենք կես։

Դիմար իմանում և էտ խոսքեր՝ տըրանց որոշում։ Զյնում են կարմըջի վրեն տեղ են շինում, որ քեն, մոտիկ շենլիզ չկա։ Տերտեր, իրա կնիկ առանձին շինեցին իրանց տեղ,

Դիմարին՝ առանձին։ Դիմար քնում չի, վախում և։ Տերտեր, իրա կնիկ որ քընում են, Դիմար վեր և կենում քյնում և մտնում երկսի արանք։ Գիշերվան մի ժամանակ էտ Դիմար բըրթում և տերտերին, ասում և։ - Վեր կաց, վեր կաց, սրան քցինք ճուր, մենք ետ տռռնանք քյնանք տուն։

Սուր ցիշեր և ըլում։ Տերտեր ու Դիմար վեր են կենում տերտերի կընգա ոտ ու ծեռ փըռնում, ըրցում ճյուր։ Տերտերի կընգան որ քըցում են ճուր, տերտեր ասում և։ - Զյնա, քու հերըտ էլ անիծած, ինձ տանից-տեղից քցեցիր, կարողությունս էլ կորավ, հարստությունս էլ։

Յետո Դիմար ասում և։ - Գիղե՞ս ինձ ինչքան սոված և թող արել։

- Պա՛, ասում և, Դիմար, տո՛ւ ես։

Տերտերոջ Դիմար մորից հարց և տալիս։ - Փոշմանել չե՞ս հո՛։

Էլ տերտեր խոսում չի։ Պերում և տերտերին տընում ընդեղ, մի գյլ կաշի հանում ու թողնում քյնում։

49(49). ԱՐՉԸ, ԿԵՆԸ ՈՒ ՄՈՒԿԸ

Երկու ախպեր էլ, ախչիկ ջան, քյառիք են ինձ դայդի, մի որսի տղա յեն։

Ասել և։ - Վեր կենանք մինըս քյնանք աշխատանքի։

Վեր են կացել քյացել, մինը քյացել և, մինը՝ մնացել։ Զյացել և, շատ և քյացել, քիչ և քյացել, մի հին ճաղաց, միջին տուս և եկել էտ մարթը, կուչ և եկել։ Տեհել և մի արջ էկավ, արջն էկել և ըտի նստել, տեհել և մի կել էլ էկավ, կեն էկել և նստել։ Տեսել և մի մուկն էլ եկավ։ Եկան ըտի թուփ ըլան, տռ էլ թաքուն ըտի կուչ և եկել։

Ասել և։ - Ի՞նչ պլնի ես, արջ ախպեր։

Ասըմ և։ - Ինչ կա, փլան ծառի տակին օխտը գյուլգյուլ ոսկի ունեն թաղած, որ քյնըմ են տանըմ ուտըմ վեր կյռլի, զըրնգըմ և, թե արի ինձ տար։

Կելն էլ ասել և։ - Էն փլան ճղի միջին մի որց կա, սոր, որ թաքավորի ախճիկը հիվանդ և, ուտի՛ կսըղանա։

Մուկն էլ ասել ա.- Փլան կեծանի աղաքին մի պուճ ունեմ՝ ոսկին լիզը, ըռավոտը փռնեմ, ըրուգուճը հվաքըմ, մինը կկամ սալբա կտա ինձ, ես պուճը կծտնեմ, ոսին կտամի:

Ըսի չիմ, ինչ ասել են, էտ մարթը թամուզ մտցել ա: Ըռավոտը շուտ քլացել ա էտ մարթը, թամուզ կադարել ա, էտ մարթը թամուզ կադարել ա: Էքսի ըրուգուճն էլ էկել են էտ կեղը, պանը, թուփ ըլել ըսի, էտ իրեքը:

Ասել ա.- Արչ ախպեր, խի՞ չես գյաժի անըմ,- ասել ա:

Ասել ա.- Բյնացել են էն գյուգյում ոսկին հանել, տարել: Բյնացի տեճամ կենըմ ա, տեսա տարել են:

Կեղն ասել ա.- Բա ասիլ չե՞ս, թե քյնացել են ճըրի միչի որոցը տանեմ թաքավորի ըխճկանը, ուտի, որ սղանա, տարել են:

Մուկն էլ ասել ա.- Բա եկան ինձ էլ սալբա տվին, տուն մտան՝ ոսկին տարան:

Զիմ էլ ճեղացած են:

Էտ պատմության կատարողը քյնացել ա տուն՝ էտ մի ախպերը, էն մի ախպերը քյնասիբ ա՝ տամինը, ասել ա.- Բա տու՛ որդի՞ քյնցիր, որ տիե փող պիրո հարստացար:

Թե ասել ա.- քյնա էն փլան ճըղացի պատի տակին կուչ արի, ինչ որ ասեն, կմոճաս:

Էտ էլ քյնացել ա ըսի միչին կըցել: Էքսի ըրուգուճն էտ արչը, պանը կոխել են կերել էտ մարթին: Տիեճը վերջացել քյնացել:

50(50). ՕԶԻ ԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ*

Լըմ ա, լըմ չի՝ մի մարթ, մի կնիկ: Էտ կնիկը շատ ջղային կնիկ ա լըմ, էտ մարթին լսիլիս չի ըլըմ: Շատ տուժե՛ր ա տալի էտ մարթին, շատ ա չարչարվըմ էտ մարթը տրա ծեռիցը, տա հնար չի հանըմ: Վերջը էտ մարթը քյնըմ ա քուլը, տենըմ՝ մի մեծ ֆոր կա էտ քուլի միչին, կողքին էլ մի հատ խնձորի կա: Կյալիս ա կյնգանը ասըմ ա.- Խնձորի եմ քթել, ըռավոտը ես քյնամ թափ տամ, տու՛ կկտա:

Ասըմ ա.- Զթնիլ չեմ քեզ:

Մոխիր ա վեր ունըմ: Ասըմ ա.- Մոխիրը ճամփին շաղ տալով կքյնամ:

Ճամփեն ճի շաղ տալով մոխիրը տանըմ ա, քյնըմ ա տենըմ՝ մարթը խնձորբու վրա: Կարպետը քցել ա ֆորի ըռիսին ընթելանը ինքը խնձորբուն ոյերել: Կնիկը կյալիս ա, տա պիրըմ ա շղճարըմ, մի քանի խնձոր ա՝ վեր ընգնըմ, ասըմ ա.- Այ կնիկ, մի լավ ճուղն եմ կոտորըմ՝ լիքն ա, իսկույն վե՛ կուճես չքելը տանենք մեր պատիցը կախ անենք:

Էտ կնիկը թռչըմ ա որ վեր ուճի կարպետի վրիցը, կարպետը ընգնըմ ա ֆորի մեջը, տա՛ հետը: Էտ ա խնթըմ ա.- Ինձ հանի, հանի:

Յանըմ չի: Ասըմ ա.- Կարպետը ինձ տու՛, փալաը ինձ տու՛, քեզ հանեն:

Փալան իրան ա տալի, հանըմ չի: Էտ մարթն ասըմ ա.- Ես սրան, որ ինձ եքան տուժ ա տվել, էնպես պաներ պիրեմ էս ֆորի մեջն ածեմ, որ սա՛ վախիլուցը մեռնի:

Պիրըմ ա ընդիան քյնըմ մի կել փռնըմ, կել ա փռնըմ պիրըմ էտ ֆորը քցըմ: Ման ա կյալի մի արչ էլ ա փռնըմ, էտ էլ ա պիրըմ ֆորը քցըմ, ման ա կյալի մի օց էլ՝ քթնըմ, էտ էլ ա պիրըմ ֆորը քցըմ, հիլ անըմ քյնըմ: Բյնըմ ա մի հինգն օր, տասն օր ըտեղ կենըմ իրան տանըմ, ասըմ ա.- Բյնամ տեճամ կնիկս մեռել ա՞:

Կյալիս ա տենըմ կնիկն էլ ա սաղ, տրանք էլ են սաղ: Աղաչըմ են, խնթըմ են.- Սեզ հանի, մեզ հանի:

Կնիկն ասըմ ա.- Ես իմ խաչաթը կփոխեմ, քեզ լավ կնգութին կանեմ, քեզ կհարգեմ, էնքան որ ինձ ազատես:

Խիղճը կյալիս ա էտ մարթի, կյնգանն էլ ա ազատըմ, տիեճը էլ ա ազատըմ կյալի: Տիեճը էլ ամեքը մի պան են բոյիմներնուն ունըմ, արչը, օցը, կեղը, որ.- Մեճը քեզ լավութիք էլ կանենք, շատ ենք խնթըմ մեզ ազատես:

Ասըմ ա.- Լավ:

Վեր ա կենըմ կյալի տուն:

Մի ըրուգու էտ մարթ ու կնիկը՝ քյնասիբ, աղքատ տնտեսութիւն են, մարթ ու կնիկ տանն են ըլըմ, տենըմ են տուժը թակեցին: Մտիկ ա անըմ տենըմ՝ կելը քյնացել ա ոչխարի մեջը ընգել մի տաս հատ ոչխար կտրկիան արել, պիրել էտ մարթի տուճն արել: Էտ մարթը պիրըմ ա անըմ իրան հայաթը, մորթոտըմ կտորըմ

ընդհանք դաուրմա անըմ, ուտըմ են, տազ ա-
րած ուտըմ են:

Մի քանի օր անց ա կենըմ տենըմ ա՝ մեկ էլ
տոււռը թակեցին: Մտիկ ա անըմ տենըմ՝ մի
արշ, ուխտը պարցած, քարվանիցը խրտնցրել
ա, պիրել տոււռն արել: Նա էլ իրան լավու-
թյունն ա ետ տալի: Էտ կտորը, էտ խանութի
վեշը էտ մարթը վեր ա ունըմ տնըմ տանը, էտ
ուխտը բրախըմ, քյնըմ ա: Խաթարն ընգըմ ա
թաքավորին, թե ասըմ են.- Ուխտը՝ պարցած
կորել ա:

Ասըմ ա, հայտարարըմ ա, որ.- Քթեք, եթե
ով որ բոյինը չունի իրան տանն ա, նրա տոււռը
ավերակ անեն: Իմ ուխտը ոնց որ պարցած
տարել ա, պարցած մեզ տա:

Էտ կնիկը ասըմ ա.- Մյ մարթ, պի քյնանք
ասենք: Ասենք ինքն ա եկել, խրտնել ա եկել:

Ասըմ ա.- Չէ՛, այ կնիկ, ծենըտ կտրի, ես
պառազ մարթ եմ ընդել նկատել չեմ, աչքս
տենըմ չի, անգաճն մնըմ չի: Նաղդի վրա
նկատել կաքը է՛, որ եկել ա:

Ասըմ ա.- Չէ՛:

Տա ուզմ ա մարթին դավաճանի, ինքը վեր
ա կենըմ քյնըմ մարթից թաքուն թաքավորի
մոտ:

Ասըմ ա.- Մյ թաքավոր, թաքավորն ապրած
կենա, քու ուխտը, վեշը հրե մեր տանը: Մար-
թս քյնցել ա քարվանից կյողացել, խրտնցրել
պիրել պարցած ուխտը, թափել, ուխտը բրա-
խել: Դրե մեր տանը:

Իսկույն էտ թաքավորը հրաման ա տալի,
էտ մարթին պիրըմ են տանըմ քցըմ պերթի
մեշը, պերթի մեշն են քցըմ, ստուգըմ տենըմ
նույն էտ վեշը էտ տանը, ճիշտ ա ասըմ էտ
կնիկը: Էտ ա մնըմ ա էտ պերթի միջին, էտ օցն
էլ իմաստուն պան ա, լըմ ա, որ էտ մարթը
պերթըմն ա: Տա իրան լավությունը ետ չի
տվել: Տա կյալիս ա, էտ օցը, էտ թաքավորի
թռը ըրօրցի մեշ քնած ա, էտ թաքավորի
թռըն ճտովը պատ ա հնցըմ, պատ ա
հնցըմ, ծվըմ ա ըրեխեն: Մերը քյնըմ ա ուզըմ
ա ծիծ տա, մտիկ ա անըմ տենըմ ա՝ օցը
ճտովը փթաթված: Էտ հարսը ճըմ ա, ծվըմ
ա.- Դայ, հարա՛, հա՛յ դիամաթ, օցն ըրեխիս
պատ ա հնցել:

Էտ ա տա վեր ա կենըմ, խաթարը քյնըմ ա
թաքավորին: Թաքավորն էլ ա կյալի տենըմ՝
թռըն ճտովը օցը պատ ա հնցած ըրօրցի
մեշին, բայց կծել չի, նինց պատ հնցած ա:
Ասըմ են.- Թե օցը կսպանենք, ըրեխին կկծի,
ո՞նց անենք, որ անցատենք ըրեխիցը:

Դնար չեն հանըմ: Խաթարը քյնըմ ա պեր-
թը, պերթըմ մրթեխանց միար հաց տանող
պան ա ըլըմ, թե.- Բա՛, թաքավորի թռըն
ճտովը ըրօրցի մեշը օցը պատ ա հնցել:

Էտ մարթն ասըմ ա.- Մյ, վա՛յ հա՛, տա իմ
օցն ա, ուզմ ա լավութիւնս հետ տա:

Նորից խաթարը կյալիս ա թաքավորին,
թե.- Բու փռած մարթը, որ փռնել ես ընդել
քցել, նա ասըմ ա՝ տա իմ օցն ա:

Դրաման ա տալի, թե.- Բյոցեք՝ պիրեք էտ
մարթին:

Էտ մարթին պիրըմ են, ասըմ ա.- Դե, հը՛,
թաքավորն ապրած կենա,- ասըմ ա,- դե թե
օցիս կսպանե՛ք, ընչիլ չեմ, ազատիլ չեմ: Թե
չէ օցիս չսպանե՛ք՝ կազատեն:

Խնթըմ են, թե.- Սպանիլ չենք:

Ասըմ ա.- Օց ջան, արի, օց ջան, արի:

Փեշը դեմ անըմ ա, էտ օցը կյալիս ա էտ
մարթի փեշը մտնըմ: Ասըմ ա.- Թաքավորն
ապրած կենա, կտանեն օցը կբրախեն, կկյոմ
պատմութիւնը քեզ կասեն:

Էտ թաքավորն ասըմ ա.- Լավ, տար:

Օցը բրախըմ ա կյալիս: Ասըմ ա.- Թա-
քավորն ապրած կենա, սիե ջղային կյնգա ի
պտահել, սիե, սիե, սիե:

Ոնց որ ասեցի՝ նինց:

- Դա՛:

- Թաքավոր, իմ կնիկը ինձ դավաճանել ա,
ես սինց եմ ըլել, ջղային կյնգա ֆորն եմ
քցել, ֆորիցն էլ... Օցն իրա լավութիւնն ա
տվել, արչն իրա լավութիւնն ա ետ տալի, կելն՝
իրան:

Էտ ա իսկույն էտ կյնգանը կանչըմ են
սպանըմ, էտ մարթին էլ ազատըմ:

51(51). ՄԱՆԵՇՆԿԻՑ ՓԱՆԶՈՐ ՕՅԸ

Ըլետ իմ օրըմ մի խեղճ մարթի մի կնիկ ա
պտահըմ, բայց շատ բարըշմազ ա ըլըմ, էտ

մարթն ասըմ ա.- Ո՞նց անեմ, որ սրանից պղծոնեմ:

Որ քաներնուն հասնըմ ա, մի օր ասըմ ա.- Սխմի՛, բա թու հերանք միտըդ չեն ընգնը՞մ, արի, քեզ թու հերանց տանեմ:

Ասըմ ա.- Հա՛:

Ոտով են քյնալիս ըլըմ, որ շատ քյնըմ են, ծըրավըմ են, ասըմ ա.- Այ մարթ, ծարավ մնացինք է՛, ծարավ մնացինք, ո՞նց անենք:

Ասըմ ա.- Այ ախճի, ես մի տարի մի տեղ ճրաֆոր եմ տեհել, քյնանք ընդի ճուր խմեմք: Կընգանը տանըմ ա ճըրաֆորին հըսցնըմ, բայց միչին ճուր չկա: Կյնգա անունը Մանիշակ ա ըլըմ: Ասըմ ա.- Մանիշակ, ես ինչքան մտիկ եմ անըմ, կարըմ չեմ կըլխի ըլեմ, թե ճուր կա՞: Արի տու մտիկ արա, թե ճուր կա, նի մտենեմ հանեմ:

Որ կյալիս ա սհե Մանիշակը կռանըմ ա ֆորի մեջը, տալիս ա քցըմ ֆորը ու վոնեմ մի քար քցըմ:

Ասըմ ա.- Դե բոլ ա էլի, եսքան տարի ինձ տանջել ես:

Հիլ ա անըմ քյնըմ տուն:

Կյալիս ա տուն, մի իրեք օրից եղը ասըմ ա.- Քյնած տենամ տուս ա եկել, թե՞ մեռել ա:

Որ քյնըմ ա, որ սհե տակ պըրցնըմ ա, տենըմ ա մի հերվարա օց միչիցը տուս ա կյալի: Որ օցը տենըմ ա, ուզըմ ա քարը վե քցի, օցը լեզու ա առնըմ ասըմ ա.- Հիլա կենա, ըստի մի կնիկ կա, անըմը՝ Մանուշակ, հոքիս կերել ա, հիլա տուս կյամ, քեզ լավութին կանեմ:

Որ տուս ա կյալի, ասըմ ա.- Դե քեզ լավութին դեմ անիլ.- ասըմ ա.- այսինչ տեղը մի կաղնի ծառ կա, փչակընը ոսկի ունեմ, քյնա հանի տար ապրի, բայց այլևս իմ գործերին խառնվես ոչ, բոլորովին խառնվես ոչ:

Էտ օցը քյնըմ ա թաքավորի պալատը մտնըմ ու մտնըմ ախճկա սենյակը, փաթվըմ ախճկանն ու կյալիս տընըմ ուսին: Ամբողջ էտ պալատականներին հկաքըմ ա էտ թաքավորը, գիտնականին ա պիրըմ, բժիշկնին ա պիրըմ, խորոթատունին պիրըմ, որ օցին մի կերպ հանեն, վախըմ են գոռեն, ըրեխին խայթի էտ օցը: Հնար չի ըլըմ, բոլորովին հնար չի ըլըմ, չեն կարըմ օցին ըրեխիցը արցակեն:

Հրատարակըմ են աշխարով մին. «Ով կարա կյա արցակի, ես նրան քաշով մին ոսկի դեմ տալ»:

Էտ մարթն էլ ա իմանըմ, Մանըշակի մարթն էլ ա իմանըմ, որ տհե մի բանդալար ա, ասըմ ա.- Ես էլ դեմ քյնալ, բալի ինձ հարգի, էտ ըրեխին բրախի:

Հա՛, վեր ա կենըմ, որ քյնըմ ա, տանըմ են ասըմ.- Ես սենյակն ա:

Որ քյնըմ ա, օցը կյալիսը պըրցցնըմ ա, ասըմ ա.- Բա ես քեզ ասեցի ո՞չ՝ իմ գործերին խառնվես ոչ, էս ո՞ր ես եկել:

Ասըմ ա.- Ես եկել չեմ է՛, որ թու գործին խառնվեմ, ես եկել եմ ասեմ, որ Մանըշակը ֆորիցը տուս ա եկել, կյալիս ա:

Որ մանըմ չի՞, օցը բըրախըմ ա փախըմ, էնքան էրված ա ըլըմ Մանըշակիցը: Օցը Մանըշակիցը էնքան ըզգված ա ըլըմ, էնքան վըխած ա ըլըմ, որ բըրախըմ ա փախըմ: Թաքավորն էլ էտ մարթին իրան քաշովը մին ոսկի ա տալի ճամփըմ:

52(52) ՆՈՒՔԱՐՆ ՈՒ ՀԵՂՆԱՐԸ

Սի մարթ ա ըլել, մի կնիկ, մի ախչիկ են ունացել: Էտ մարթի կնիկը մահացել ա, մի ուրիշ կնիկ ա առել: Տա հետը մի ախչիկ ա պիրել: Էտ երգորթ կնիկը ուզըմ չի էտ առաչի կյնգա ըխչկանը պահած ըլի:

Ասըմ ա.- Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, էս ըխչկանը ոռոյ անեմ:

Էտ ըխչկանը, պիրըմ ա մարթին ասըմ (էս անըմը Նուբար ա ըլըմ ըխչկա), ասըմ ա.- Նուբարին տար էն հեռու սարի տակին, քարերի միջին էրեք ա էլի, էտ էրեքըմ տի, թող կենա էլի:

Հետը մի քիչ չոր հաց ա տընըմ, էլ պոմ չի տընըմ: Տա վեր ա կենըմ քյնըմ, հերը լըսըմ ա՝ տանըմ ըխչկանը: Տանըմ ա Նուբարին տընըմ էտ քարի էրըմ, էտ քարի էրըմ ա տընըմ, ըստի էլ արչ ա միշտ կյալի ման կյալի: Ըստիան էտ ախչիկը էրըմ ա տընըմ հերը քյնըմ, հերը քյնըմ ա, մկները կյալիս են: Տա հաց ա ուտըմ, մկները կյալիս են ասըմ.- Նուբար, մեզ մի քիչ հացի չորուկ-մորուկ տու էլի:

Պիրըմ ա փշըրմ տիւանց տալի, պիրըմ ա փշըրմ տիւանց տալի: Էտ մկները ուտըմ են, ասըմ են.- Նուբար, հրես արչը կյալ դի, նրա վզին զնգզնգաննի կա, քեզ դի տալ, ասիլ դի՝ արի իրար հետ խաղ անենք, ով կախտվի կախտվի:

Դե արչի դաքին են ոնց դի փախչիլ: Էտ ա էտ ախչիկը ասըմ ա.- Լա՛վ:

Արչը կյալիս ա ասըմ ա.- Նուբար, եկել ե՞ս:

Ասըմ ա.- Եկել եմ:

Ասըմ ա.- Դե արի զըրնգզըրնգաննին քեզ տամ, տոււ իմ դաքին վազ տու, ես էնքան վազ տամ, եթե ես կըզարեմ քեզ համար շլակով մի պեղը ոսկի կպիրեմ, եթե բզարիլ չեմ քեզ կուտեմ:

Ասըմ ա.- Լա՛վ:

Էտ ա պիրըմ ա իրան տալի, մկները կյալիս են, էտ ախչիկը տապ անըմ ա ուրուշ քարի տակին: Էտ մկները, մկանն ի՞նչ դի տենալ են արչը, քարերի միջովը ման են կյալի դես-դեն, զընգզը-զընգզը, զընգզը-զընգզը: Արչը էնքան պտիտ ա կյալի, էնքան պտիտ ա կյալի, տեղն ու տեղը մընըմ ա, էլ կարըմ չի ժաժ կյալ:

Ասըմ ա.- Լա՛վ, լա՛վ, Նուբար,- ասըմ ա,- տոււս արի, մի պեղը ոսկի կպիրեմ քեզ կտամ:

Տանը մի շուն ու կատու ա ըլըմ, էտ հոր տանը, Տիւանց Նուբարին շատ են սիրըմ:

Սի քանի օր կենըմ ա, հմի էտ խորթ մերը ասըմ ա, էտ մարթին ասըմ ա, թե.- Բյնա ըխչկանիցը մի տեղեկութիւն պի:

Գիղըմ ա, որ արըը կերած կըլի էլի: Էտ ա էտ մարթը վեր ա կենըմ ըխչկա տոււըը կյալի՝ քարի տակը: Կյալիս ա տենըմ ախչիկը փառաւոր ճատած, ոսկին կողքին կիտած: Վեր ա կենըմ ճամփա ընգընըմ, ճամփա ընգընըմ տուն ա կյալի, ոսկին պիրըմ ա: Զմի էտ կնիկը էտ կատվենին թակըմ ա՝ կատվին ու շանը.- Բյնացեք տեհեք Նուբարի ոսկուննին պիրըմ ա՞ իրան հերը:

Բյնըմ են, կյալի՝ խաղ անիլով.- Նուբարը կյալիս ա, Նուբարը կյալիս ա, ոսկին շլակած, պապը պիրըմ ա:

Էտ ա տա ասըմ ա.- Լա՛վ: Պիրեմ նորից, իմ ըխչկանը կղարգենք:- Մարթին ասըմ ա.- դե արի միւլ Զեղնարի տար:

Էտ Զեղնարի հետ պիրըմ ա ծավար տընըմ, հաց տընըմ, ուտելիք տընըմ, թե.- Բյնա, էտ քարի տակին տուն կտես, ոսկի կպիրես, կհարստանանք:

Էտ ա հերը տանըմ ա ըտեղ տընըմ, էտ ախչիկը պիրըմ ա ճաշ էփըմ, մկները կյալիս են.- Զեղնար քան, մեզ էլ տուր էլի:

Ասըմ ա.- Վա՛յ, ֆողեմ ծեր կլլուխը, ծեզ հմար եմ պիրե՞լ, ծեզ տալ չընեմ:

Զաց ա ուտըմ, տալիս չի: Ասըմ ա.- Լա՛վ, հրես արչը կկյալ քեզ հմար:

Արչը կյալիս ա.- Պա՛, Զեղնար, եկել ե՞ս:

Ասըմ ա.- Զա՛:

- Դե,- ասըմ ա,- առ էս զըրնգզըրնգաննին, տոււ դաքին վազ տու, ես ըու եղենն վազ տամ, էնքան պտտվենք, եթե կըզարեմ քյնըմ եմ մի շալակ ոսկի կպիրեմ, ինչքան իմ ուժը կապտի, թե բզարիլ չեմ քեզ կուտեմ:

Ասըմ ա.- Լա՛վ:

Դե Զեղնարը ո՞նց դի վազ տալ արչի առաջին, դես ա քյնըմ, դեն ա քյնըմ, էտ Զեղնարը բզարըմ ա, արչը ընգընըմ ա կյըլխին ուտըմ:

Զմի էտ շանն ու կատվին էտ կնիկը թակըմ ա: Ըլետ մարթին դղզըմ ա: Մարթին դղզըմ ա:

- Բյնա,- ասըմ ա,- Զեղնարի ոսկին շլակալի, արի:

Բյնըմ ա, էտ շանն ու կատվին ասըմ ա.- Բյնացեք տեհեք,- ասըմ ա,- Զեղնարիս պիրըմ ե՞ն, ոսկին պիրըմ ե՞ն:

Բյնըմ են, կյալիս, ասըմ են.- Զրե պապը կյալիս ա՝ Զեղնարի ոսկուննին շլակած:

Թակըմ ա տանիցը տոււս անըմ: Վերչը տենըմ ա էտ մարթը եկալ՝ Զեղնարի ոսկուննին շլակած: Դե ամեքի բախտը չի, որ քյնան տեհենց կատարվի:

Նա եթիմ ա ըլել, նրա խելըը հեհենց ա ըլել: Նա էլ հերատեր, մերատեր, աբահով ա ըլել, ո՛չ մկներին ա պան տվել, ո՛չ էլ ծտերին ա պան տվել, տալ էլ արչը կերել ա:

53(53). ԱՍՏԾՈՒ ԳՈՐԾԵՐԻՆ ՄԻ ԽԱՌՆՎԻ

Երկու շատ մոտիկ ընկերներ միշտ ֆորսի են քյնըմ:

Ասըմ ա.-Արա՛ պաշար շատ վե կալ, կարող ա ֆորս չպատահի, մի քանի օր մնանք:

Էտպես էլ անըմ են, լավ պաշարով քյընըմ են մի մուք անտառ, որդի ֆորս կա էլի: Էնքան անփորց ֆորսկաննի են ըլըմ, որ ո՛չ աղ են վե կալած ըլըմ, ո՛չ էլ լուցկի: Առաջի օրը ոչ մի պան չի պատահըմ, մի նապաստակ են խփըմ: Միսը, ըլանի միս, անկրակ ի՞նչ դեն անիլ: Երկորթ օրը մի առեւելի քեյրան են խփըմ, մոտավորապես տե՛ս ժամը 5-ի՞ն՝ մթան վրա: Էտ քեյրանը միս շատ ա ունենըմ, խոշորնե-րիցն ա ըլըմ, ո՛չ կարան տանեն, ո՛չ էլ լուցկի ունեն, որ գոնե խրովեն ուտեն: Տեսըմ են հրե անտառընը հեռու մի լիս ա ըրկըմ: Ընգերին ասըմ ա.- Այ՛ տղա, քյնա՛ հրե հա՛ են կրակը տենըմ ե՛ս, էն մարթիցը հա՛մ կրակ պի, հա՛մ աղ պի, հա՛մ էլ պատմի մեր վիճակը, թե էլ ունի, մի էլ էլ տա՛ են միսը տանենք:

Ընգերը քյընըմ ա տենըմ, որ մի մեծ մարթ՝ մորուքով, հըլիվեր մարթ, կրակի կոխկին նստած, կրակը խառնըմ ա:

Ասըմ ա.- Պարը ըրուզու՛ն, պապի՛:

Ասըմ ա.- Աստծու պա՛րին, արի՛, արի տե-նամ՝ պահանջըտ ի՞նչ ա:

Որ կյալիս ա մոտաընըմ, ասըմ ա.- Ասա, տենամ դարըտը ի՞նչ ա:

Պատմըմ ա, որ սհե, սհե ֆորսկաննի ենք, ո՛նչ աղ ունենք, ո՛նչ կրակ ունենք, ո՛նչ էլ ունենք, ի՞նչ գիդանիք, որ մենք ես անա-տուըն խփիլ դենք:

Ասըմ ա.- Նախքան քու պահանջները կա-տարիլը քեզ մի հարց դեմ տալ, թե պա-տասխանես, քու պահանջնին կկատարեն:

Ասըմ ա.- Ասա՛, պապի քան, հարցըտ տու:

Ասըմ ա.- Ինձ է՛ն ասա առավոտը եղանակը ո՞նց կըլի. արև դի ըլի՞, թե՞ անձրև:

Ասըմ ա.- Արև դի ըլիլ:

Վրա պիրըմ ա, տրաք, էտ մարթը տալի էտ մարթին ու սարքըմ մի լա՛վ քու հավան կա-ցած էլ, աստոծն ա, տղենց ա անըմ:

- Ի՞նչ ուզըմ ա ըլի,- ասըմ ա,- հրես սրա՛ հընգերը կյալ դի:

Ընգերը ճամփա ա պահըմ, ճամփա ա պահըմ, տեսըմ ա՛՝ հընգերը կյալիս չի. լիսի վրա ինքն էլ ա ճամփա ընգըմ, էտ լիսի վրա քյընըմ, մի տենա՛ քյթել ա, քյթել չի՛ կորել ա:

Քյընըմ ա տենըմ՝ է՛ն ա էտ կրակի կողքին մուրըքավոր մի մեծ մարթ ա նստած, մի էլ էլ ծառիցը կապած:

Ասըմ ա.- Պարը ըրուզու՛ն, պապի քան: Բա հընգերս քեզ մոտ են ըլըրգել, էկել չի՞:

Ասըմ ա.- Չէ՛:- ատկազ ա անըմ:

Ասըմ ա.- Պապի, բա վերջը ո՞նց կըլի, սպիչկա ա պետկը ինձ, աղ ա պետկը ինձ, էս էլը ինձ չե՛ս տալ տանեն՝ միսը մեր տուն, ըռավոտը ըլետ կպիրեն:

Ասըմ ա.- Ամեն ինչ կարելի ա, միայն մի հարց դեմ տալ, տես հա, սխալ-մխալ պան չասես:

Ասըմ ա.- Ասա՛:

Ասըմ ա.- Դե ինձ ասա՛՝ էքուց արև դի՞ անիլ, թե՞ անձրև: Ինձ պատասխանի:

Նույն հարցն էլ տըրան ա տալի:

Ասըմ ա.- Դե ես ի՞նչ գիդամ, պապի,- ասըմ ա,- տա՛ իմ խելքի պան չի, տա՛ ինքը գիդի:

- Ինքն ո՞վ ա:

- Դե աստվածն էլի:

Ասըմ ա.- Հա՛, ապրես:

Էտ տղային հացավորըմ ա, ոնց որ պետկն ա պատիվ ա տալիս, ասըմ ա.- Էս էլը քե են տալի՛՝ միսը տար տուն, համա էլը դաքիտ կկապես տանը, աչքիցըտ քցես ո՛չ, ամանաք էլ ա:

Էտպես էլ անըմ ա, էլը տանըմ ա, միսը վրա ա տալի, էլ խրոված չի անըմ, հաց կերած ա, միսը առաջ տանըմ ա հընգերի տունը: Կեդի դրադին ա ըլըմ հընգերի տունը, կյնգա՛ ներ-կայության միսը կես անըմ ու ասըմ ա.- Ըրե-խին ինձ տու,- ասըմ ա,- միսը տանեն՝ մեր տուն, էլ էլը տանեն ոչ մեր տուն: Էլը ծեր տանը կկապես սընիցը, քու աչկի դաքին հա՛:

Կնիկն ասըմ ա.- Բա իմ մարթն ու՞ր ա:

Ասըմ ա.- Դրգել են, որ քյնա՛ աղ ու կրակ պիրի, քյնա՛ցել ա, եկել չի, կկա՛ էլի, սօր ա, էքուց ա, կկա՛:

Ասըմ ա.- Դե մորից են զգուշացնըմ էլը դաքիտ, դաքիտ կպահես, խոտ կտաս, ըռա-վոտը կկա՛ն կտանեն:

Ասըմ ա.- Հա՛, լավ կըլի:

Կնիկը տենըմ ա, որ է՛ն ա մարթը ու էլ կկա՛, իրան սիրեկանին իմաց ա տալի, ասըմ ա.-

Արի՛, սին միս կա, խրոված կանենք, քըշերը քեփ կըքաշենք:

Էտ քըշեր տրանք ուտըմ են, խմըմ, իրար հետ շուկուղ-մուկուղ անըմ, ինչ դալաթ անըմ են՝ անըմ են: Էշը դե մարթկային հասկացողություն ունի, ոտները տափովն ա տալի, ծիք-ծիք ա անըմ, զգըմ ա էլի, որ պաճն ինչըմն ա: Էտ հիմար մարթը տենըմ ա, որ շատ ա զահլա տանըմ, մի փետ ա վեր ունըմ ու տալիս ա էշակի աչկը հանըմ ա, սոսը կըտորըցնըմ ա: Ըռավոտը քըշերով հընգերը կյալիս ա տենըմ, ասըմ ա.- Էշը պի, այ՛ ըխարակին, էշը պի տանեմ իրան տամ, համ էլ տենամ իմ ախպերն ի՞նչ ըլավ:

Յա՛, էշը պիրըմ ա, որ տենըմ ա իշի աչքը քոռացել ա, ասըմ ա.- Էս ի՞նչ ես արել, բա քեզ ասեցի ոչ՝ աչկըտ վրեն կպահես:

Ասըմ ա.- Դե ես ի՞նչ գիղամ, հալվան ա էլի, կարող ա կյլուխը սընովն ա տվել, ես ի՞նչ գիղամ:

Ասըմ ա.- Պի, պի տանեմ, տենամ ի՞նչ դեմ ասիլ:

Էշը էտ ա վեր ա ունըմ պիրըմ քիծին տալի ու հետն էլ ներեղութիւն ա խնթըմ, ասըմ ա.- Սին, սին պաճ:

Ասըմ ա.- Բա քեզ ի՞նչ ասեցի, ասեցի ո՞չ՝ սըլամաթ կըտանես ու սըլամաթ ետ կպիրես, բա ես հմի մի աչկով էս էշը ո՞նց պընըցնեմ:

Ասըմ ա.- Դե դեպք ա էլի, եղել ա:

Էտ հըլիվորը փետը որ վրա ա անըմ, կըլվիսին տալիս ա, էտ էշը տառնըմ ա մարթ, էտ իրան հընգերը, աչքը՝ քոռ: Որ տառնըմ ա մարթ, ասըմ ա.- Աղա՛, բա տուլ ըսկի գիղըմ չես, թե քու կընիկն ընչով ա զբաղվըմ, տուլ ո՞նց կարաս իմանաս էրուց արև կըլի՞, թե՞ անձրև: Տու՛ նախ՝ քու տան գործը իմացի, նոր՝ աստծու գործերին խառնվի: Դե քյնա հմի քու մի աչկովը կյնգաճըտ լավ հսկի:

54(54). ԴՈՒՐԳԱՐ ՈՒՍԵՓԻ ԲԱԽՏԸ

Մի ճըղացալան տուլս ա կյալի տենըմ, որ նովի միջին մի եսքան ընքի՛ լլորի քյթուկ: Յա մեչը տուլս տված փակած ա, էն իք ա էլի: Ճուլը պիրել ա, հա՛՛ նովովն ա պիրել կախ

արել, նովը էն իք արել: Քյնըմ ա տենըմ ճուլը, որ արթեն ճըղացի ներքևից տալիս ա հա՛: Ասըմ ա.- Բար ընգյաժ կըլի:

Քյնըմ ա տենըմ՝ էտ քյթուկը նովի միջին: Էտ քյթուկը հանըմ ա պիրըմ պատի տակին վե տնըմ՝ ճըղացըմ: Շատ ա կենըմ, քիչ ա կենըմ, թե ասըմ ա.- Էս քյթուկը էս ա քանի տարի ա էլի, փթըմ ա էլի, ընչիս ա պետըը, տանեմ դուրգար Ուսեփին տամ.- ասըմ ա.- ճա դուրգարութուն անըմ ա էլի, պաճ կշինի էլի, լլորի ա էլի:

Վեր ա ունըմ խտտըմ տանըմ, թե ասըմ ա.- Դուրգար Ուսեփ,- ասըմ ա.- քու հմար էս քյթուկը պիրել եմ պաճ շինես:

- Այ՛,- ասըմ ա.- Պ՛ր ես պիրել, կճղտոտիր կերիր էլի:

- Չէ՛,- ասըմ ա.- պաճ կշինես էլի քե հմար, կծախես:

Ու ինքը հիլ ա անըմ՝ կյալի: Էտ Ուսեփը հմի էն իք անըմ ա, օրերի մի օրը ասըմ ա.- Էն ըթեմ էլի, ճղեմ տենամ էս ի՞նչ ա:

Պա՛, ճղըմ ա տենըմ, որ ոսկին մեչը լիզը, ոսկին մեչը լիզը:

- Պա՛,- ասըմ ա.- տրա տուլը քանդվի,- ասըմ ա.- բա փողը պիրել ա մեզ տվել,- ասըմ ա.- ո՞նց անենք, որ,- ասըմ ա.- իրան տանք էլի, մեղք ա:

Օրերի մի օրը կանչըմ ա: Տա՛ կյալիս ա՛՝ էտ մարթը, որ քյթուկը տարել ա տվել:

Թե ասըմ ա.- Այ տղա,- ասըմ ա.- քյթուկը տ վե կալ տար էլի:

- Է՛,- ասըմ ա.- քյթուկը ի՞նչ եմ անըմ է՛, ընչիս ա պետըը:

Վե չի ունըմ: Ինչ անըմ են, անըմ, էտ ա տանըմ չ: Կյնգաճն ասըմ ա.- Ա՛ կնիկ,- ասըմ ա.- մի օխտը հաց շինի, իրանք էլ հաց չունեն էլի, քյախթե են: Եղով էտ ոսկեմին հացի միջին տի, էտ հացերի մեչը շարի՛ հացերի, օխտը հաց ու տի խուրջինըմ: Էն ա, որ ինքը գիղըմ ա, որ վեր չի ունըմ, էն ա էտ հացը կտանք կասենք՝ տար քու ըրեխեքն էլ ա կուտեն:

Յացը վեր ա ունըմ ու քյնըմ, թե ասըմ ա.- Այ՛ կնիկ, բա Ուսեփի կնիկը օխտը հաց ա տրել հետս:

Ասըմ ա.- Մ' ճարթ, բա օխտը հաց տրել ա, օխտը հաց եմ պարտ է': Էն ա հլե կակրագ տանեմ իրանց փոխը տամ:

Նորից կնիկը վեր ա ունեմ տանեմ էտ հացերը ըլետ տալի էտ Ուսեփին:

- Մ' քե մատաղ, էս ի՞նչ պան ա,- տենեմ ա ըլետ ոսկին միջին պիրել ա:

Բա ասըմ ա.- Պարտ ենք էլի, նրանցից հաց եմ պիրել, հազիր էն ա օխտը հացը պիրել ես, տանեմ իրան փոխը ետ տամ:

Էտ փողը ուրենը տոմ մի կոպեկ էլ ա ուտըմ չի է', ըլետ նո ա մարսըմ: Իրեք հետ տհե տանըմ ա, տանջըմ ա, ըլըմ չի, պտտիլեն՝ ըլետ փողը կյալիս ա իրա մոտ:

- Է',- ասել ա.- էլ ըլիլ չի,- ասել ա,- էտ փողը նրան արծանի չի: Ելակել ա քյոթուկը պիրել՝ ոսկին միջին ինն տվել, մըն էլ եկել ա, էլետ իրան փողը տվի, վեր չկալավ, մըն էլ հացի միջին տրի, էլետ նույնը՝ պիրուց ետ տվուց:

55(55). ՆՈՐԱՊԱՍԿԻ ՌԻՍԸ

Մի տղա՝ քահել տղա, ամուսանանըմ ա, միայն ուխտ ա անըմ էլի, իրան մեչ որոշըմ ա, որ մինչևը, ես առանձին դեմ պառկիլ, մինչևը իմ նշամածը իրան ոտովը կյա ոչ իմ անկողինը, ես նրա հետ գործ չդեմ ունենալ¹: Եվ էտպես էրկու ամիս բոլորովին մոտ չի կյալի: Կինն ասըմ ա.- Այ մարթ,- ասըմ ա.- բա էս էրկու ամիս ա, ինչ պիրել ես, էս խի՞ չես ասըմ՝ քյնանք իմ հերանց:

Ասըմ ա.- Քյնանք էլի, բա ի՞նչ ա ըլել:

Էտ տղին թուր էլ ա ունենըմ, հրացան էլ, իրանց տանից լավ-վատ վիաքըմ են՝ ծիանու վրա տընըմ, մարթ ու կնիկ նստըմ ու շարժ-վըմ: Հա՛, շատ են քյնըմ, թե քիչ են քյնըմ, ոնց որ ասենք, Կապի տակին², տու մի ասիլ ըտի

ավագակնի են ասըմ, ճամփորդների աղաքը կըտըմ են, թըլանըմ: Հանկարծ տհանց կըղըցնըմ են էտ ավագակների պա-հակնին ու քշըմ իրանց կացարանը: Յոր հատ ավագակ են ըլըմ ըտեղ, տանըմ են: Էտ տա-նողների մինը տըրա կնոջը տանըմ ա ավա-գակապետին ա տալի, ասըմ ա.- Էս քեզ ա հասնըմ, էս՝ քեզ: Հրացանն էլ.- ասըմ ա,- էս էլ քու տեղակալին:

Հրացանն էլ նրան ա տալի: Էտ տղեն ասըմ ա.- Դե խնթըմ եմ իմ թուրն էլ ինն տվեք, ես ուն կըցանկանամ նրան տամ:

Թուրը վեր են ունըմ իրան տալի: Թուրը իրան են տալի թե չէ, սկըմ ա: Դե տրանց հրացանինն էլ պատերիցը կախած ա ըլըմ, իրանք էլ՝ արըշան-փարըշան, մտքենրովն անց չի կենըմ, որ էս մարթը մենակ էսքանիս միջին կրեսա մնին վնաս տա: Էտ քյուլան տղեն թուրը որ ծեմ ա ունըմ, սկըմ ա սաղին էլ սպանիլը, յոթին էլ սպանըմ ա, կարըմ չեն թե մի պան անեն: Կըտորեք պըրծավ, տըրանց ինչ որ հարստություն կա, կյուղություն կա, ծիանը պաղթեք, էլ ասըմ չի թե.- Այ կնիկ, տես էս ինչ ղոջղութիւն արի:

Պարծենըմ չի, քյնըմ են:

Քյնըմ են հասնըմ էտ հարսի հերանց տուն հանոր տուն: Համա դե էրկուսն էլ առնոտել են, որ էտ սենյակի միջին սպանել ա:

Չանքաչն ասըմ ա.- Էտ ի՞նչ ա ըլել, էտ խի՞ եք առնոտ:

Ինքը պան չի ասըմ, բայց ախչիկը մորը մի ղոլն ա քաշմ ասըմ ա.- Սիե, սիե պան ա:

Վերջը վեչերը տեղավորըմ են պըրծնըմ, կյալիս են հաց են շինըմ, հաց են ուտըմ, բայց ետ տղեն պան չի ասըմ, պարծենըմ չի էլի, որ.
«Ես մի մարթ, էտքան մարթ եմ սպանել»: Մուլն ա արթեն, քնըմ են, զընքաչին ասըմ ա.- Իմ տեղն առանձին ես շինըմ, իմ կյնգանն առանձին:

Քյնըմ ա ախչկանն ասըմ ա.- Էս ի՞նչ պան ա, բա տուրք միասին չե՞ք պատընել:

Ասըմ ա.- Չէ', էս էրկու ամիս ա տարել ա, տհե ա:

¹ Այստեղ բնասացն անհարմար զգալով ասում է. «Կնեթես ինձ» (ծանոթ. բանահավաքի):

² Կապի տակ - գտնվում է Իջևանի շրջանի Աջա-ջուր գյուղից վերև. քաղաքապետ, դժվար հաղթա-հարվող ճանապարհի է դեպի սարերը: Անվանումը Կապ. արդեն իսկ ասում է, թե ինչ դժվար ճա-նապարհ է: Ճանապարհի տեսքն այսպիսին է. ահե-ռելի կուտակ-կուտակ ժայռեր ու ժայռի լանջով՝ մի

Տե՛ն լիսացնեմ են, ու ասըմ ա էտ տղեն.- Այ ախչի, վե՛շ արա, քյնըմ ենք էլի:

Դե ախչիկը մորը, ինչ որ համգամանքները կա, պատմեմ ա.- Էսենց, էսենց, էսենց, էտ մարթը ինձ բոլորովին պանի տեղ չի տընըմ:

Ասըմ ա.- Չէ՛, ես ուզըմ եմ մնամ էլի միառաժամանակ, հետո կկտա ինձ կտանես:

Ասըմ ա.- Լա՛վ կըլի,- ասըմ ա,- մնա:

Տա ծիանը վեր ա ունըմ, թվանքը վեր ա ունըմ, թուրը վեր ա ունըմ, կյալի իրան տուն:

Հա՛: Տրանք, էտ գաղտնիքը, որ լոխվ իրան մորը պատմըմ ա էտ ախչիկը, մերն ասըմ ա.- Էլ ո՛ր ես քյնըմ, ըստեղ մի տղա կճարենք կամուսնըցենք:

Ի՞նչ օրըմ մի խընդլիկի պիրըմ են նշան տընըմ, մի ամիս կենըմ ա: Ըրուգուցը սեղանի վրա մի ճանջ ա կյալի, էտ նոր փեսեն տրան տալիս ա սպանըմ, սկսըմ ա.- Տեհա՛ք՝ էս ի՞նչ արի, տեհա՛ք՝ ես ճանջը ոնց սպանեցի:

Որ շատ պարծենըմ ա հա՛, էտ ախճիկն ասըմ ա.- Էս ի՞նչ օյին ա, էն մարթը յոթ մարթ սպանեց, ո՛չ իմ հորն ասեց, ո՛չ իմ մորն ասեց, ո՛չ էլ ինձ ճըմփին մի պան ասեց: Չէ՛, սա իմ պանը չի, ավելի լավ ա հա կյա տանը, թե ինչ կանի՞ կանի, հլա տղամարթ տղա յա:

Էտ տղին ճըլըմ են, ասըմ ա.- Բյնա, տու արծանի չես մեր ըխչըկանը, մի ճանջ ես սպանել, սաղ քշերը ասեց. «Մի ճանջ եմ սպանել, մի ճանջ եմ սպանել»:

Էտ տղեն թող քյնա իրան գործին, խաբարը տանք իսկական փեսից: Մի ամիսից եղը էտ տղեն ասըմ ա.- Մի ծի նստեմ քյնամ, կյալիս ա՛ կյա, կյալիս չի՛ ինքն ա գիղըմ:

Էտ տղեն քյնըմ ա պրյամը տղիանց տուն չի քյնըմ, քյնըմ ա տղիանց բաղը, ծին կապըմ ա, ինքն էլ շվաքըմը պառկըմ ա քնըմ: Հա՛: Էտ ախճիկը, իրանց մի պուճուր ըրեխա ա ըլըմ, թաթիցը փռըմ ա քյնըմ բաղը՝ իրան միար ման կյալու, գիղըմ չի էլի, որ իրան մարթը եկել ա, ըտի ա: Էտ ախճիկը հանկարծ քյնըմ ա ենըմը՝ իրան մարթը ըտի պառկած քնած ա, բայց արևը եկել ա վրեն ընգել, ճուր ա տառել, քրտնել ա: Պիրըմ ա էրկու հատ ճախ էտ կըլիսի վրի ղոլեն տընգըմ ու իրան շորերից քցըմ վրեն, շվաքարան ա շինըմ տղի հմար: Բայց տղեն կըլիսի ա, որ եկել ա, ղաստի սու-

տըմենուկի ա տալի: Միառաժամանակից հետո էտ ախչիկը կամաց գարթըցնըմ ա էտ տղին էլի ու տհենց, շատ ինձ կնեթես, էտ ախչիկը քյնըմ ա, համփուրվըմ են, իրան տղամարթկությունը շիանց ա տալի: Վեր են կենըմ, ծին քաշըմ մարթ ու կնիկ, իսկական մարթ ու կնիկ, քյնըմ զընքաչի-հանոր տուն: Ըտեղ գաղտնիքն ասըմ ա, թե ընչի ա էտ ախչ-կանը... Էրկու ամիս պանի տեղ չի տըրել:

Ասըմ ա.- Ես ուխտ եմ ունեցել, որ մինչև ախչիկը ինքը սիրաբանի ո՛չ, ես տրա հետ գործ չընեմ ունենալ:

Առավոտը վեր են կենըմ մի լա՛վ քեփ կազմակերպըմ, մի քանի մարթ էլ կանչըմ են, ուտըմ են, խմըմ են ու էտ թալանից, դե ոսկի էլ ա ըլըմ, գարթ էլ ա ըլըմ, մի ծի էլ տալիս են իրանց տանից, մարթ ու կնիկ սըզըցնըմ են, նստըմ վրեն ու կյալիս իրանց տո՛ւն: Եվ այդ-պես աստուճը վե կյա իրեք խնձոր, մինը՝ աստ-ղին, մինը՝ գորղին, մինը էլ՝ պլամ աշխարքին:

56(56). ԲԵՋԱՆԻՑ ԲԵԹՆՈՐ ՇԱՇԸ

Մի մարթ ճամփեն մի անց կենալիս ա ըլըմ, մի կնիկ, մի մեծ կնիկ էլ կաղնած մտիկ անիլիս ա ըլըմ, ասըմ ա.- Տղա ջան, էտ չի՞ ես ման կյալի, էտ ի՞նչ ես անըմ:

Ասըմ ա.- Է՛, մերա ջան,- ասըմ ա,- Էն դուլնիցն եմ կյալի:

- Վի՛,- ասըմ ա,- քե մատաղ, իմ տղեն էլ ա Էն դուլնիցն, տեհել չե՛ս:

Ասըմ ա.- Տեհել եմ, մայրիկ ջան:

Տենըմ ա էտ կնիկը մի քիչ խելքից թիթև ա:

Ասըմ ա.- Բա ի՞նչ ասեց, ի՞նչ չասեց, քե մատաղ:

- Դե, մերա ջան,- ասըմ ա,- ասեց համ շոր կղոգես, համ ուտելիք կղոգես, համ փող կղոգես:

- Վի՛,- ասըմ ա,- արի՛, քու ցավը տանեմ, արի՛:

Պիրըմ ա, է՛, ալիք ա, ծավաթ ա (ի՛նչ պան էլի), փողի՛նձ ա, հաց ա, շինըմ ա, փող էլ տալիս ա, մի շինել էլ վեր ա պիրըմ, ասըմ ա.- Տղա ջան, կտանես իրան կտաս, որ մրսի ո՛չ:

Ասըմ ա.- Հա՛, մերա ջան, կտանեմ:

Էտ տղեն տանըմ ա իրան տուն: Էտ պառակ կըգա տղեն կըլիս, ասըմ ա.- Տղա ջան, բա ասիլ չես, թե մի մարթ էն դունիցը էկավ, ըրենես պառն էր ուզել, յըսէլ սիես, սիես սարթեցի, ղըրզեցի:

Ասել ա.- Է՞, մերա ջան, էտ ի՞նչ շաշ պառն ես արել: Ասըմ ա.- դե՛, այ մերա,- ասըմ ա.- ես քյնըմ եմ աշխար-աշխար ման կըլի, թե քե պես մեր քյթա՝ ապրիլ դես տու, թե չէ՝ կըլ ղեմ քե սպանիլ:

- Վի՛, ասըմ ա.- էս ի՞նչ կրակ էր:

Էտ տղեն վեր ա կենըմ քյնըմ, քյնըմ ա սիես մի վիրի հարգ ա, սիես որ տակովն անց ա կենըմ, մի կնիկ վերնուց ասըմ ա.- Ախպեր ջան, ընչի՞ եմ ման կըլի:

Ասըմ ա.- Է՞, քիրա ջան, մեր խոզին հըրսա-հիք եմ անըմ, քավորի եմ ման կըլի:

- Վի՛, ասըմ ա.- քե մատաղ, մենք ունենք, արի՛:

Տենըմ ա մը լավ խոզ է տըռանը՝ մի տաս-տասներկու կյուճի էլ տակին: Պիրըմ ա էտ հարսը էտ խոզին կարծիր շոր կապըմ՝ սիես կոլի տակովն ու իրան կյուճենուն էլ կարծիր շորեր պառն կապըմ, սարքըմ շինըմ պաղվողը, պիրըմ մենք լըցըմ ու ասըմ ա մյոքայորին.- Դե տար:

Ասըմ ա.- Չէ՛, քիրա ջան, ես կտանեմ, ես ոնց որ տանեմ, էն ձկի էլ կպիրեմ:

Պիրըմ ա էտ խոզերը մեչն ածըմ, էտ մարթն էլ պաղվողին նստըմ ա, ծիանը լըծըմ ա ու ճամփա ընգըմ: Պիրըմ ա իրան տուն, պիրըմ ա ասըմ ա.- Մերա ջան,- ասըմ ա.- փըրզվեցիր, քեզանից քեթոր շաշը կա: Բա էս կյուճենին էլ, էս պաղվողն էլ լըծիլ ինձ ա տվել, պիրել եմ մեր տուն: Դե հմի էն կնիկը հու եղնես ման չըղի կըլ, էն ա մերն ա ու մերն ա:

Հա տիենց էլ մնըմ ա:

57(57). ՖՈՐԻ ԿԻՏՈՒԿՆ ՈՒՄ ԿԵԼԽԻՆ*

Մի մարթ ճանապարհն մի քյնըմ ա՝ մի երիտասարդ: Զյնըմ ա տենըմ մի մարթ իրեք տեղ ֆուլ ա կիտուկ-կիտուկ անըմ: Մխելի անց ա կենըմ ու ետ-ետ կըլի, ասըմ ա.- Հայրիկ

ջան, հայրիկ, էտ ընչի՞ ես կիտուկ-կիտուկ արել:

- Այ տղա ջան, ասըմ ա.- քու ի՞նչ գործն ա, ճամփնորթ մարթ ես, քյնն էլի,- ասըմ ա:

- Չէ՛, ինձ ասա:

Ասըմ ա.- Էս մի հողը էն մարթի համար ա, որ սա ախարը թողըմ ա՝ ուրիշ ախպերացու փոնըմ՝ նրա համար ա էս մի կուչկեն: Էս մինն էլ էն մարթի համար ա, որ նորաքիսա մարթից քյնըմ ա փող ծեռնափոխ անըմ: Էս էլ նրա համար ա: Էս մինն էլ, ով որ իրա կախտնիքը կասի իրան կյնգանը՝ նրա համար ա: Էս իրեք կուչկա ֆուլը տրա համար ա,- ասըմ ա, բալիկ ջան,- վե կաց քյնըմ:

Վեր ա կենըմ քյնըմ էտ տղեն: Միառժա-մանակ անց ա կենըմ տո՛մ մի ախպերացու ա փոնըմ ղրաղիցը, մի նորաքիսից էլ մի տասը մանեթ ա առնըմ ու քյնըմ իրա հմար ման կըլի:

- Բա ես ո՞նց անեմ, որ կյնգանն էլ փորցեմ, տենամ սո՛ ի՞նչ ա:

Միառժամանակ անց ա կենըմ, քյնըմ՝ թաքավորի ջեյրանը կյուղանըմ: Թաքավորի ջեյրանը կյուղանըմ ա, կըլիս ա՛:

Զյնըմ ա թաքավորի ջեյրանը կյուղանըմ պիրըմ, ասըմ ա.- Ա՛ կնիկ, գիրե՞ս ինչ, մի պառն եմ արել:

- Ի՞նչ ես արել:

- Զյնացել եմ թաքավորի ջեյրանը կյուղացել պիրել, վե կաց փետ ու կրակ արա, մորթենք ուտենք, անց կենա քյնըմ:

- Վի՛, էտ ի՞նչ լավ պառն ես արել:

Զյնըմ թաքավորի ջեյրանը կործիտ անըմ, արխեյին պահըմ, մի չեփիչ ճարըմ պիրըմ մորթըմ, կնիկը հետը... ուտըցըմ ա:

Միառժամանակ անց ա կենըմ տրան՝ կյնգանը, սոխպըմ ա էլի, թակըմ ա, վրա պրծնըմ, ի՞նչ:

- Կացի՛, կտենաս, թե ես քե ինչ կանեմ, քու սիենց ու միենցը, քյնեմ թաքավորին ասեմ:

¹ Այստեղ բանասաց Մեքուպ Հանազարյանն ընդ-միջում է իր խոսքը և ասում. «Զմի տո՛մ տպիլ դի, տանես տաս էլի: Հա՛, լավ ա, շատ լավ ա: Կընթումի՞՝ էտ պաները, որ ասըմ եմ:

- Անպայման:

- Հա՛, դե լավ ա» (ծանոթ բանահավաքի):

Բա տոււ նրա ջերյաւնը ուտես, ինձ էլ նեղութիւն տա՛ս:

Քյնըմ ա թաքավորին բողոքըմ: Թաքավորն ընդհան վեր ա կենըմ մելիցա դու անըմ, որ.- Քյնացքեք են փլան տղին պիրեք:

Արթեն աղրեսը-պանը տվել ա, արթեն կնիկը քյնացել ա թաքավորի կշտին: Մելիցքերը կյալիս են, հմի աղաք են արել տանըմ են: Էն ախպերացուն, որ փռնել ա, իրան դոլմագին հիլ ա արել.- Ա, ի՞նչ...

Էն ինչ ախպերն ա.- Տղեք ջան,- ասըմ ա.- տրան տանիլ միք,- ասըմ ա.- քյուլփաթը շատ ա, մեխք ա, տրան հիլ արեք, ինձ տարեք տրա տեղը: Սեխք ա,- ասըմ ա.- ի՛ր կք տա-նըմ:

- Չէ՛, քյնա:

Էն ախպերացուն ասըմ ա.- Տա հլե վաղվան խուլիգանն ա ըլել, թող տանեն:

Էն տասը մանեք տվող նորաքիսա մարթն էլ դանչաք անըմ ա, միմնաք ա անըմ.- Տղեք ջան, հիլ արեք իմ տասը մանեքը տա, եղով տարեք:

Էն դոլմագի ախպերը տրա տասը մանեքն էլ ա տալի, ասըմ ա.- Քյնա, էտ քու տասը մանեքը:

Ինքը հետը վեր ա կենըմ քյնըմ: Էտ թաքավորի ջերյաւնը կորել ա, մորթել ա, կերել, վերջը նրան դատիլ դեն, ինչ դեն անիլ: Էտ դոլմագեն հետը վեր ա կենըմ քյնըմ: Քյնըմ ա թաքավորի կուշտը, քյնըմ ա տենըմ՝ կնիկը կշտին նստած.- Դա՛, էս ա էկավ:

Դա՛:

- Թաքավորն ապրած կենա, ընչի՞՞ ես կանչել ինձ:

Թե ասըմ ա.- Իմ ջերյաւնը պիրել ես մորթել կերել, տարել ես:

- Դա՛, շատ էլ լավ կըլի: Թաքավորն ապրած կենա,- ասըմ ա.- ես էտ պանը չեմ արել,- ասըմ ա.- ես սիե մի փորցառութիւն եմ կատարել,- ասըմ ա.- ուզըմ ես ինձ դադի,- ասըմ ա.- ուզըմ ես խնահի:- Ասըմ ա.- Ճանփեն մի կյալիս սիե մի մարթ ա պտահել, իրեք հող կիտուկ արած, ինձ աքացուցել ա. Էն էրկու մարթը, որը որ ախպերացու ա, որն էլ նորաքիսեն՝ կատարվել ա: Դժի էլ ես տրան փորցառութիւն եմ կատարել: Ջերյաւնըտ քեզանից

էլ լա՛վ պահել եմ, լա՛վ կործիտ եմ արել, ինչ որ որ կարիք ա՛ տանեմ, կամփսիեն տանեմ, ջերյաւնդ հրե պաղրաստ: Ես տրան փորցառութիւն եմ կատարել, էտ ի՛ր ա եկել քեզ բողոքըմ ա:

Դա՛, Էն ա իսկապես կամփսիա ա դու անըմ, կյալիս եմ տենըմ ջերյաւնը պատվավոր պահած, պըծպեծած, իրանից էլ քյուքըցած: Վեր են ունըմ տանըմ, էտ դոլմագի ախպերն ասըմ ա.- Թաքավորն ապրած կենա, եթե դադիլ դես, ինձ դադի: Թող քյնա իրան քյուլփաթը շատ ա:

Սիեց էլ մերժըմ ա, ասըմ ա.- Շատ ապրես, որ էտ փորցառութիւնը տոււ կատարել ես:

Անց ա կենըմ քյնըմ¹:

58(58). ՎԱՍԿՈՏԻ ԲԱՍՏԸ*

Սի մարթ, մի կնիկ, քյուսիթ մարթ ա էլի, տուս ա կյալի տենըմ՝ լիսնա՛կ, ճրճորքըմ ա, վախկոտ մարթ ա: Կյալիս ա կյնզան ասըմ ա.- Ա՛ կնիկ, ինչ քարվան կտրիլու քշեր ա է՛: Ես ինչ լավ քշեր ա:

- Էրվես տուս,- ասըմ ա.- վախըմ ես, թե տուտը տուս ըլես, քյնալ դես քարվան էլ կտրի՛լ,- ասըմ ա:

- Չէ՛,- ասըմ ա.- լավ լիսնակ ա, լավ քշեր ա:

Դե՛: Էտ մարթը կյալիս ա, կյալիս ա ըռավոտը վե կենըմ քյնըմ կնզա հետ,- ասըմ ա,- սա խի՞՞ ինձ ասըմ վախկոտ ես, կարալ չես քարվան, պան կտրես:

Քյնըմ ա մի ճամփու դրադի տակոռի, պան հանկիս տեղը, որ պիրի կրակ անի, ըրեխեքը, պանը տքանան: Տենըմ ա մի պուլիկ տուս եկավ, էտ պուլիկը ակն ա տալի, տենըմ՝ ոսկի ա, փող ա մեջը լիզը ընդեղ տրած: Տակոռն շլակըմ ա, կյալիս ասըմ ա.- Ես սրա կենդու ո՞նց հանեմ,- ասըմ ա.- քյնա՞մ մի հընգեր էլ վեր ունեմ կյա՞մ պուլիկը հանենք Էն ա, կտանենք կիսենք:

¹ Վերջում բանասացն ավելացրեք. «Թե էտ քովիւր պաները ախլը կարիք ա ասեմ» (ծանոթ. բանահավաքի):

Տանըմ էտ հընգերին շհանց տալի բա, որ.- Սիե պան եմ քըթել, արի քըմանք:

Հրևանն ա էլի: Ասըմ ա.- Այ տղա,- ասըմ ա,- էս օրը ճաշին կհանենք, կտենան մեզ ան- պատիվ կանեն,- ասըմ ա.- թող կենա, քշերս կկանք կհանենք կտանենք:

Նա նրան պիրըմ ա, էտ քթնողին պիրըմ ա, ասըմ ա.- Քյնա տուն, ես էլ եմ քըմըմ: Էն ա ըրուգունը ժամը ես վախտին կկամ, կքըմանք կհանենք կտանենք:

Ասըմ ա.- Լավ:

Էտ տղեն կենդու քըմըմ ա, էն եղի, որ հընգերացրել ա, քըմըմ ա ընդիան հանըմ, էտ փողը հանըմ ա՝ պուկկավոն տանըմ իրան տուն: Տանըմ իրան տուն, ուրախ-ուրախ կյա- լի տրան իմաց անըմ, որ քըմանք հանենք: Կյալիս եմ տենըմ պուկիկը կա ո՛չ, արթեն կյուղացել եմ տարել:

- Վա՛յ, էս ի՞նչ տնաքանդ պան էր:

Խափըմ ա էլի նրան, սըտանուփին անըմ ա: Էն ա էտ մարթը փոշ ու փոշման կյալիս ա: Նա ուրախ-ուրախ կյալիս ա, ասըմ ա.- Էս ա լավ ա, տարա:

Պուկիկը պանց անըմ տենըմ՝ լոփվ օցեր ա, ըռխիցը հետ լիզը՝ օցը լիզն ա պուկիկը, ոսկին օց ա տունել: Տրա տունն էլ պրիմխով տուն ա, միե կտրավոր տուն, պիրըմ ա, ասըմ ա.- Տրա հերը անիծած, որ ոսկի չի ըլել ինձ խի՞ ա խափել, տանեմ իրան կտրովը դվեր քցեմ իրա ըրեխանը ուտեն, հա՛ պրծնեն:

Պիրըմ ա կտրովը պուկիկը դվեր քցըմ, էտ օցերը տառնըմ են ոսկի, օջաղի դրաղին կիտվըմ: Կյնգանը ասըմ ա.- Ա՛ կնիկ, տեհար, որ ես քեզ անեցի, որ քարվան կտրելու քշեր ա, էն ա էն քշերը քըմացի, էս պատահեց: Զմէլ դէն ա ոսկի ա, էտ ա պիրենք միջոց ստեղծենք ապրենք, անց կենա քըմ:

Նա էլ էտ ոսկովն ա միջոց ստեղծըմ, քյախիթ մարթ ա, իրան ըրեխեքը պահըմ, անց կենըմ քըմըմ:

59(59). ԿԸՆԱՆՈՒՄ ԵՅՏԸՐԱՐ ԶԿԱ

Ըլել ա, չըլել՝ մի թաքավոր, էտ թաքավոր- ին մի վազիր ա ըլել: Վազիրին օրը մի օրը

ասել ա.- Վազիր, արի մեր էս աշխարը ման կյանք, տենանք էս ժողովուրթը ո՞նց ա ապրըմ:

Վազիրին վեր ա կալել վըռտով, դե էն վախտեն ավտորուզ-մաշին որդիա՞ն ա եղել, ասել ա.- Սի քըմանք վըռտով ման կյանք՝ դավրիշի, դավրիշի շորով:

Կըմացել են իրե հա՛, էն գյուղը տենըմ ե՞ս՝ Լուսածորը՝¹, տե՛ն մի գյուղի պատահել են: Մթնել ա, մտիկ են արել տե՛նել՝ էտ գյուղըմ մի լուս կա, ասել ա.- Դավրիշ, քըմանք էն լուսը, գըշերը խընթրենք մեզ տեղավորեն էլի, ըտեղ գըշերենք, վաղը ըլետ վեր կենանք քըմանք ման կյալու:

Քյնըմ են էտ լուսի ակոշկովը մտիկ անըմ տենըմ՝ մի տղա յա, մի ախճիկ իրար փըթաթված, իրար պաշըմ են²: էս թաքավորը դավրիշին ասըմ ա.- Սա անպայման սրա սիրեկանն ա:

Տա ասըմ ա.- Քըշերըս, եթե թույլ կտա մնանք ըստի, տա կիմանանք էլի, տենանք սիրեկանն ա՞, թե՞ իրան հարազատ մարթն ա: Էտ ա թըխթըխկացնըմ են, էտ մարթը կյա- լիս ա.- Դը՞:

Ասըմ ա.- Քե մատաղ, կարելի ա՞ գիշերենք ծեր տանը, ճըմփնորթ մարթիք ենք, վաղը քըմանք էլի մեր գործին:

Ասըմ ա.- համեցեք:

Էտ ա գնըմ են տուն, նստըմ խոսըմ, դես- դեն, ասըմ ա.-Սի պան եմ խնթըմ:

Թե.- Խընթրեն:

Ասըմ ա.- Տույը կին ու մարթ ե՞ք:

Ասըմ ա.- Հարազատ:

- Հա՛, ուրախ ենք:

Էտ վազիրը թաքավորին ասըմ ա.- Ի՞նչ էս տալի, ես էս, որ էքքան սիրող են, ես էտ կընոջը հեղափոխեմ, մարթին սպանի:

Ասըմ ա.- Պա՛, մի՞թե կարելի ա էտ պանը:

Ասըմ ա.- Հա՛:

¹ Լուսածորը գտնվում է հաշթառակ գյուղի դիմաց՝ Աղսու գետի ձախափնյա լանջին, մայրուղուց 2-3 կմ հեռավորության վրա (ժամոթ. բանահավաքի):

² Այստեղ բանասացը ասում է «Համփերըմ են, համփերըմ ո՞րն ա, պաշըմ են իրար»: Ունկնդիր- ները ծիծաղում են, նա ասում է. «Այ, տենըմ եք, ես լավ պան դեմ ասի: Հա՛, իրար համփերըմ են»: Բանասացի մոտ «համբուրել» բառը դարձել է «համփերել» (ժամոթ. բանահավաքի):

- Դե լավ:

Գիշերը եմ: Էտ գիշեր մընը եմ, ըռավոտը Էտ վազիրը, Էտ թաքավորը ասըմ եմ.

- Մի պա՛ն եմք խընթորըմ,- Էտ տան տուրուն- չըմ:

Ասըմ ա.- Խընթորեմ:

Ասըմ ա.- Բըզա՛րա՛ծ եմք էլի, Խըքնա՛ծ եմք, ման եմք եկել, Էսօր Խանգստանանք, վաղը կըզնանք:

Թե ասըմ ա.- Մնացե՛ք:- Ինքը թողըմ ա ու գընը աշխատանքի, Էտ մարթը:

Էտ վազիրը փըռըմ ա Էտ կնոջը ասըմ ա.- Պա՛հ, քե պես,- ասըմ ա,- գեղեցկուհին, լավը, ո՛նց ես տու Էտ մարթի ծեռին կնըմ: Արի,- ասըմ ա.- ես քեզ տանեմ, մի թաքավորի լինես տիկին:

Ասըմ ա.- Բա ո՛նց անեմ իմ մարթուն:

Ասըմ ա.- Ես էնպես քեզ կսովորացնեմ, քու մարթուն կսպանես, ու քեզ կտանեմ թաքավորին, կլինես թաքավորի կինը՝ թաքուհի:

Ասըմ ա.- Լա՛վ, բա ո՛նց կանենք:

Ասըմ ա.- Ըրուզուըն, որ քու ամուսինը կկա՛, կպիտես լավ, տաք ճուր կտընես,- ասըմ ա,- տեղըմը կքնի, յորդանի փեշի ծեռը կքարծրացնես կտենաս, որ քնել ա, Խըսայ տապուրը, տապուրովը կըլխին կտաս, կոչնչացնես, տու կըլես թաքուհի:

Տըռանք էլ ըսի թաքնված եմ, Էտ ա լըղըցըմ ա, լա՛վ սարըմ. դես-դեն, ընքելանը Էտեղ, որ Էտ տղեն քնըմ ա Խա՛, Էտ տղի կինը տապուրը վերցըմ ա ու կաշի կաղըմ, ամուսնուն... որ տապուրը բարցրացըմ ա, որ սիես տա, էն վազիրը քըմակնուց տապուրը բընըմ ա, թողըմ չի:

Թե ասըմ ա.- Լա՛վ, բըրախի:

Բրախըմ ա, Էտ ա Խե՛չ, Էտ թաքավորն էլ մտիկ անըմ ա տենըմ, որ ասըմ ա.- Դուեյա դա (թուրքն ասըմ ա) արվաղըմ էտըքարըն յոխտուր: Կըմանունց էտըքար չկա: Տեհա՛ր, էն փաթված իրար Խամփերըմ ին, Խըմի փռնել ա, որ, ուրեմը, իրան ամուսնուն սպանի:

- Դա՛, բա ո՛նց կանենք:

Դես-դեն: Վերչը Էտ թաքավորը որոշըմ ա, գիդե՛ս ի՛նչ ա որոշըմ: Ասըմ ա.- Վազիր, որ էնքան սիրով, էնքան իրար պաչըմ ին, որ տա

ուզացավ իրան ամուսնուն սպանի, արի, մի պա՛ն եմ որոշըմ:

- Ի՞նչ ա:

- Ըստեղից որ կվերադառնանք մեր պալա- տը, առաջի Խերթին իմ կնոջը, քո կնոջը, նրա, նրա, նրա, բոլոր Էտ ցեղը, պտի բոլորը կտո- րես:

Տա մտածըմ ա, Էտ վազիրի Խերն էլ լինըմ ա տրա՛ Խոր վազիրը՝ Էտ թաքավորի: Էտ վա- զիրը քնըմ ա Խորն ասըմ, որ,- Դայրիկ, բա թաքավորն ասըմ ա, որ ես կանանց ցեղը պը- տի կտրեմ:

Ասըմ ա.- Սո՛ւս, տազ արա, ես կըզնամ:

Գընըմ ա թաքավորի մոտ, ասըմ ա.- Էտ ի՛նչ ես որոշել, ուզըմ ես կանանց ցեղը կտրե՛ս:

- Դա՛:

Ասըմ ա.- Բա որ կանանց ցեղը բոլորը կտ- րես, բա իսանությունը որդիա՛նց դի ըլի, մինը մահանըմ ա, մինը դես ա քնըմ, չի կարելի Էտպես պա՛ն մտածել:

Ստիկ անըմ ա տենըմ թաքավորը՝ Էտ պա- ըը սխալ ա որոշել, որ կանանց ցեղը պըտի կտրել: Զի՛ կարելի, բա էքը, որցը որդիա՛նց դի ըլի, ծնեն, շատանան, զարգանան, ամեն պա՛նն էլ լցնեն: Դամեցե՛ք, կարճ եմ ասըմ¹:

60(60). ՄԵՌԵԼ ԿՈՐՑՆՈՂ ԲԱՂԻՏ*

Ուրեմը, եղել ա մի մարթ, որ երկար տարի չի պսակվել էլի, ասել ա.- Էնքան պտի ման գամ, մի Խատ գեղեցկուհի ճարեմ, որ ամբողջ մեր ռայոնըմը չըլի:

Ուփշըմ, ուփշըմ, շատ ման գալով՝ գալիս ա մի գյուղի մեջ մի Խատ ախճկա ռաստ ա գալի, շատ գեղեցիկ, կարծես մոմից Խալած ըլի: Վերցըմ ա դրան կին, բերըմ ա տուն, բերըմ ա տուն, ասըմ ա.- Կին ջան, տանից չղուս գնաս, ուտելուտ էլ կա, խմելուտ էլ կա, այ, է՛, տուլալեսն էլ ա ըտեղ, չկաֆն էլ ա ըտեղ, ստաքանն էլ ա ըտեղ, ուտելիքն էլ, խմելիքն էլ, չղուս գաս տանից:

Ինքը գընըմ ա անտառ՝ գործըլի վառելու՝ անձող վառելու:

¹ Բանասացը Խեքիարը «Կարճ կապեց» և գնաց տուն (ծանոթ. բանահավաքի):

Օրեց մի օր էս գյուղի քյոխվեն, իրա կյ-գիրը, կյգրի պամոշնիկը ման են գալի գյուղը, հարկերը հվաքըմ են: Որը փող ա տալի, որը ցորեն ա տալի, ով ի՞նչ տալիս ա, իրանց հարկը պոծնըմ են: Տըրանք ծիանը նըստած օշերեղով գալիս են էտ մարթի տուն:

Կանչըմ ա.- Այ տմաստեր, այ տմաստեր:

Տուս էկող չկա, զգըրին ասըմ ա.- Մի ծիու-ցըտ վեր արի, արա՛, մի պատուհանից նայի, տենանք էտ ո՞վ ա, որ չի դուս գալի տանից:

Դե գամոկը վրեն ա, ո՞նց պտի դուս գա տանից: Հա: Էտ ա բալանիքն էլ էտ ախճկա մոտն ա: Թե ասըմ ա.- Մեկը նստած ա, քյոխ-վա ջան, մեչին նստած ա, չի շարժվըմ:

Թե ասըմ ա.- Կանչի գա:

Թե ասըմ ա.- Չի գալի, ի՞նչ անեմ, տուռը կոխպած ա:

Քյոխվեն իչըմ ա, ասըմ ա.- Սխչիկ ջան, մի մոտիկ արի:

Կիմը պատուհանին որ գալիս ա, էս քյոխ-վեն գժվըմ ա:

- Վահ, իմ գրանիցըմը էսենց գեղեցիկ ախ-չիկ, ես՝ բեխաբար, էս ի՞նչ բան ա: Ըտեղից ասըմ ա.- Գիդա՛ս, ախչիկ ջան, ընչի՞ չեք հարկը բերըմ տալի:

Թե.- Ես չեմ գիդա:

- Դե որ չես գիդա,- ասըմ ա.- էս իրիգունը կգամ մոտըտ:

Հա՛, էտ ա էտ քյոխվեն անց ա կենըմ, էտ գզիրն ասըմ ա.- Վա՛, քյոխվա, տու որ քյնաս, էս էլ դեմ կյալ:

- Բա ո՞նց կըլի:

Ասըմ ա.- Ես էլ դեմ կյալ:

- Ո՞նց թե կյալ դես, այ՛ մարթ:

- Հա՛, ամեքը մի-մի ժամից հետո:

- Դե լալ:

Էս քյոխվեն աղլուխը կապըմ ա՝ քիշմիշ, կանֆետներ՝ տեսակ-տեսակ, շոկոլատ-մոկո-լատ հավաքըմ ա, գնըմ ա էտ կնոջ մոտ: Տա էլ իմացել ա, որ ամուսնյակը անտառըմ ա: Առ վեր ա կենըմ գնըմ ա, չի գնըմ, վեր ա կենըմ էտ դուռը բաց անըմ, քյոխվեն գալիս ա, քյոխ-վից հետո գզիրն ա գալի, գզրից հետո պա-մոշնիկն ա գալի, ուիշիմ:

Էս կնիկը էքսի օրը մի հատ հարևանի ըրե-խա ուղարկըմ ա, ասըմ ա.- Գնա՛, շուտ արա Կոստոյին ասա՝ թող գա:

Էտ ա քյնըմ ա էտ ըրեխեն, վազելով գնըմ ա անտառը, էտ մարթին ասըմ ա, որ.- Կոստո ծիյա, կինըտ ասըմ ա՝ անպատճառ արի՛:

Էտ Կոստոն իմեզերոջն ասըմ ա.- Դե տու վառի կրակը, էս գնամ տենամ էս ի՞նչ խաբար ա:

Գնըմ ա տենըմ ա, ի՞նչ ա տենըմ՝ կնիկը փեչըփեչման նստած ա:

- Ի՞նչ ա, այ՛ կնիկ, ի՞նչ ա պատահել:

Թե.- Բա,- ասըմ ա.- կեղի քյոխվեն եկել ա՝ հարգն ուզըմ ա, դու էլ տանը չես, էս ի՞նչ հարգ դեմ տալ, էս չեմ գիդալ, դես, դեն:

Թե.- Խու չե՞նք նեղացրել քեզ:

Թե ասըմ ա.- Չէ՛,- ասըմ ա.- կարող ա նեղացնեն, դե մենակ կնիկ եմ, ի՞նչ կարամ անեմ:

Ու վերցնըմ ա պատալուկիցը մի հատ փարդի հանըմ ա էտ մարթը: Էս էլ տուն ա, էն էլ դուռ ա, դենը գոմն ա, էս գոմի առաջը փոս ա կտրըմ, մեծ, խոր փոս, ջուրը լցնըմ ա ու ինքը բարձրանըմ կրիշեն, փարդուցը նայըմ ա: Կինն էլ էրկու հատ ծու, մի քըթալ յուղ թեփշու միջին ա դնըմ, ասըմ ա.- Որ կգա քյոխվեն, ասա՝ էսօր շատ ցորեն եմ խախա-լել, բեզարել եմ, հաց էլ չեմ կերել, սպասի էս էրկու ծուն չինեմ, ուտենք, հետո:

Հա՛, ու սա ուզըմ ա իլե ծուն վերցնի կոտ-րի, ամուսնյակը կրիշըմն ա չէ՛, վերևից դուռը փետով թըխկըցնըմ ա: Քյոխվեն գիդա, որ նա մի ժամից հետո պտի գա, իրա պամոշնիկը:

- Էս ո՞վ ա:

Թե.- Կարող ա մարթս ըլի, լողանալու ժամանակն ա, էկած կըլի:

- Բա որդի՞ մտնեմ:

Ասըմ ա.- Գոմը մտի:

Հենց գնըմ ա, հորն ա ընգնըմ՝ ջրի մեչ խեխտվըմ: Նժանապես պամոշնիկն ա անըմ, նժանապես գզրին ա անըմ: Մարթը իչըմ ա կրիշիցը, դրանց հանըմ են ջրից, քյոխվեն ի՞նչ շորեր կունենա հաքած, ի՞նչ փողեր կու-նենա կեղիցը հավաքած, պաչկեթով փողերը ծոցերը լիզը: Էտ փողերը հանըմ են, տըրունց շորերը հանըմ են, իրեքին էլ պատան են

կարճ, տուպրակներ հագցնում, էրկուսը տը-
նըմ են կըռավաթի տակին, մեկին էլ պատիցը
կախ են անըմ:

Ասորթ ու կնիկ նստել են մտածըմ են.- Ի՞նչ
անենք,- ասըմ ա,- ո՞նց ես մարթկերանը
կորցնենք, էրուց որ լուսանա,- ասըմ ա,- գյու-
ղը պտի քոխվա ուզի, որ գան տենան մեր
տանը կախ արած, այ կնիկ, մեր տունը ըտեղ
կքանդեն, բա ո՞նց անենք, բա ի՞նչ անենք:

Թե.- Գնա Բաղնիկ կանչի:

Խեղքից պակաս մի հատ ըլլմ ա գյուղըմը:
Քյնըմ ա.- Բաղի, այ Բաղի:

Թե.- Էն ի՞նչ ա, խազեյին ջան:

Թե ասըմ ա.- Արի, հետըտ գործ ունեմ:

Էս Բաղիկ հեղկիցն ա ընգըմ, գալիս ա:

- Բաղի ջան,- ասըմ ա,- էս Աղբեջանից իմ
շատ մոտիկ դոստոն էր, էկալ տուն, այ մարթ,
տիկինը չայ շինեց, նստեցինք ամեքս էրկու
բաժակ չայ խմեցինք, վեր ընգալ մեռավ,-
ասըմ ա,- էս շան տղեն, հմի պտի սրան տա-
նես մի հենց տեղ հեռու քցես, որ շունը տեղը
չգիղենա էլի, տեղը օչ-ով չիմանա:

Թե.- Բա, խազեյին ջան, մի մանեթ կտա՞ս
կտանեմ:

Թե.- Կտամ, Բաղի ջան, կտամ:

Էս Բաղիկ շղակըմ ա էս տըռուզ քոխվի՞ն՝
փորն ուռած, տանըմ ա հեռու-հեռո՞ւ, տանըմ
ա կորցնըմ ա, ընդեղ մի ձոր ա քցըմ, որ ընդի
աղվեսն էլ չի մտնըմ էտ ձորը, քցըմ ա:

Սըրանք կըռավաթի տակիցը են մեկն էլ են
հանըմ կախ անըմ, հանըմ են կախ են անըմ,
Բաղիկ կալիս ա:

- Խազեյին ջան, դե մանեթս տու:

Թե ասըմ ա.- Այ մարթ, էս որդի՞ տարաթ
քցեցիր,- ասըմ ա,- հրես եկել ա կախ ըլել էլի,
բա սիես խայտառակ բան ըլի՞, էս ի՞նչ ան-
նամուս մեռել ա,- ասըմ ա:

Սըրան մորից չալակըմ ա էս խեղճ Բաղիկ
տանըմ ա, տանըմ ա, շատ ա տանըմ, թե քիչ,
տանըմ ա հասցնըմ մի քարափի գլուխ: Ըն-
դիհան, որ հետևինք քացի ա տալի քցըմ էտ
քարափիցը հլա ներքևը, վայ թե տուլմի միս էլ
ա տռնըմը:

Տըրանք երրորդն են հանըմ՝ կախ անըմ:
Բաղիկ կալիս ա.- Խազեյին ջան, դե տուր,-
ասըմ ա,- մանեթս տուր գնամ:

- Ա՛, ասըմ ա,- ի՞նչ անեմ:

Տենըմ՝ երրորդը կախ արած:

- Արա՛, տու ինձ հարի՞քի տեղ ես տընըմ, ա՛
շան տղա,- ասըմ ա,- տանըմ ես, ո՞վ գիդա, էս
չըփարի տակին վեր ես քցըմ, կալիս ա կախ
ա ըլլմ ըստի:

Հա՛:

- Հա՛, ես տըրնա հերն եմ անիծել, բա ի՞նչ
անեմ, ես տըրնա ո՞ւր տանեմ:

Էն ա որցակն էլ կանջըմ ա, էս ա պտի լու-
սանա: Շղակըմ ա էս նաչար Բաղին՝ քըտոն-
քըմը կորել ա, տանըմ ա մի կարմնջի կլիսի
կաղնըմ:

- Էս քու հերըտ եմ անիծել,- ասըմ ա,- ա՛
շան տղա, դե բոլ ա էլի ինձ տանջես, տո՛:

Թուրմե մի անդեր թուրքի մոլլա էլ, իբլու-
խը ծեռին, կարմնջի տակին իրեսը լըվանըմ
ա: Էտ մեռելը որ քցըմ ա ջուրը, մոլլեն տենըմ
ա ու վախճալուց իբլուխն էլ թողըմ ա ըտեղ՝
փախճըմ, փախճըմ ա:

- Այ քու հերըտ եմ անիծել, կանգնի,- ասըմ
ա:

Հասնըմ ա էտ մոլլին էլ փըռնըմ, լա՛վ ճար-
թըմ ա ու քցըմ ճուրը:

- Դե քյնա:

Իրեքը չորսն ա տռնըմը:

61(61). ԹԱՔԱՎՈՐԻ ԵՐԱՋՆԵՐԸ

Թաքավորը գիշերը երազում տեսնում ա,
որ աղվեսը եկալ պալատում պտտվեց, գնաց:
Կանչում ա իրա երազահաններին, ոչ ոք չի
կարողանում բացատրի: Թաքավորը իրա տե-
րության մեջ հայտարարություն ա տալիս, թե՛
ով որ բացատրի, նրան մի պարկ ոսկի կտա:

Մի օձ մի աղքատ մարթի ասում ա.- Ես քեզ
ասեմ, գնա մեկնաբանի, ոսկին բեր կիսենք:
Կգնաս կասես, որ քո տերության մեջ խաբե-
բայություն կտիրի, հայրը որդուն կխաբի:

Էս մարթը գնում ա թաքավորին ասում, մի
պարկ ոսկին վերցնում ա ու ուրիշ ճանապար-
հով գնում ա տուն, որ օձին չհանդիպի:

Անցնում ա միառժամանակ, թաքավորը
մորից երազ ա տեսնում, որ գայլը եկալ պա-
լատում պտտվեց, գնաց: Նորից կանչում ա

իրա երազահաններին, բայց ոչ ոք չի կարողանում բացատրի: Ախքատ մարթը գնում և օծի մոտ և ասում: Ինձ ներիր, ես վատություն արի, դու մի անի: Սաա՛, գնամ ասեմ, ոսկին բերեմ կեսը քեզ տամ, կեսը ես վերցնեմ:

Օձն ասըմ ա.- Գնա ասա՝ մարդիկ պետք է գողանան, մեկը մյուսին ուտեն:

Էս մարթը գնում և ասում, մի պարկ ոսկին շալակած, փայտը ձեռքին գալիս և, որպեսզի օծի գլխին տա սպանի: Օձը, որովհետև գիտեր, որ մարթը պետք և խփի, հենց որ հեռվից տեսնում և, մտնում և բնի մեջ, որ չխփի:

Նորից անցնում և միառժամանակ, և թաքավորը երազ և տեսնում, որ գառը եկավ պալատում պտտվեց, գնաց: Նորից կանչում և իրա երազահաններին, բայց ոչ-ոք չի կարողանում բացատրի:

Ախքատը նորից գնում և օծի մոտ ասում ա.- Խնդրում եմ սրա բացատրությունը տուր, էս անգամ ամբողջ ոսկին կբերեմ կտամ քեզ:

Օձն ասում ա.- Գնա թաքավորին ասա, որ՝ քո տերությունում խաղաղություն պետք և լինի, գառն ու գայլը իրար հետ կարածեն:

Գնում և թաքավորի մոտ բացատրությունը տալիս, ոսկին պարկով բերում և դնում օծի առաջ:

Օձն ասում ա.- Ինձ ոսկի հարկավոր չի, դու մեղավոր չէիր էն ժամանակ, ժամանակներն էին եղես:

62(62). ԻՍԱՍՏՈՒՆ ԱՆՊԵՐՏԻՆԷԸ

Ղարաբաղա իրեք ախպեր են, մի թայ եզն ունեն: Էտ եզը կյուղացել են: Հրմի իրեք ախպերով խոսքը են, թե.- Մեր եզը ո՞վ կյուղացավ:

Մեծ ախպերն ասըմ ա.- Մեր եզը կյուղացողի ամուսնը Մուսա ա:

Միջնակ ախպերն էլ ասըմ ա.- որ անըմը Մուսա ա, ուրեմը բոյը կարո՞ւ:

Էն պուճուր ախպերն էլ ասըմ ա.- Որ բոյը կարո՞ւ, ուրեմը կյուլխը քաչալ ա:

Առավոտը վեր են կենըմ քյնըմ եզանը ման կյալ: Ճամփին մի մարթ և պըտահըմ:

- Այ քե մատաղ, անըմտ ի՞նչ ա:

Ասըմ ա.- Մուսա ա:

Ասըմ են.- Այ, մեր եզը տանողը էս ա:

Միջնակն ասըմ ա.- Տենըմ ե՞ք՝ բոյը կարո՞ւ:

Պուճուրն էլ ասըմ ա.- կյուլխը քաչալ ա:

Իրեքով էլ էտ մարթին առաչ են անըմ տանըմ պրիստավի կուշտը: Պրիստավը հարցնում ա.- Հա՞ հինչ կա, էտ հուր եք եկել:

Պաղասխանըմ են.- Մեր եզը տանողը էս մարթն և ըլել:

- Բա տուք հի՞նչ եք գիղըմ:

- Մենք իմաստուն ենք:

- Թե որ իմաստուն եք տյուս եկեք, ես կկանչեմ:

Տրանք տուս են կյալի, պրիստավը պիրըմ և մի սրկեվիլ տընըմ դոշակի տակին ու կանչըմ:

- Թե գիղաք իմ դոշակի տակին ի՞նչ կա, ես գիղամ, որ ծեր եզը կյուղացողը տո՞ւ:

Էն մեծ ախպերը ասըմ ա.- Բու դոշակի տակին մի բեցըր ծովի նման պեն կա:

Միջնակ ախպերն էլ ասըմ ա.- Որ տոե պեցրն և ծովի նման սերկեվիլն ա:

Էն պուճուրն էլ ասըմ ա.- որ սերկեվիլ ա՝ տեղին ա:

Պրիստավն ասըմ ա, որ էտ մարթիքը իմաստուն մարթիք են: Հմի էտ մարթի տեղը նեղըմ ա, որ քյնա տրանց եզը իրանց տա: Վերչը կյալիս և սրանց եզը առըմ տալի տրանց:

63(63). ԱՄԵՆԱՆՈՇ ՊԱՆԸ՝

Մի քիր, մի ախպեր են ըլըմ: Քիրն ախպորն ասըմ ա, էլ ուրիշ հնարավորություն չունեն, մի քիր են, մի ախպեր, ախպորն ասըմ ա.- Ախպեր ջան,- ասըմ ա,- աղից անոշ ախպեր:

Ախպերը խռովըմ ա, ասըմ ա.- Ա, էտ ի՞նչ ես ասըմ, բա ես հենց կամ ոչ, որ տանըմ ես ինձ աղին թայ անը՞մ: Աղն ի՞նչ ա, որ տուս ինձ աղին... ասըմ ես՝ աղիցը անոշ ախպեր:

Ասըմ ա.- Դե ես աղն եմ լավը գիղըմ:

Մխելի վախտ խռով կենըմ ա: Պիրըմ և քիրը ճաշ եփըմ տընըմ նրան՝ անաղ, նրանն էլ աղով, դաքին: Որ տընըմ և դաքին հա՛, ասըմ

ա. Էս խի՞ ա սհե, էս ի՞նչ պանն ա պատահել, խի՞ չես աղ քցել հետը:

Ասըմ ա.- Տու՛ն աղին հավան չես կենըմ, ասըմ ես՝ աղն ինչի ա պետքը, որ ես քու ճաշի մեջը աղ քցեմ:

Ասըմ ա.- Լավ:

- Դժի,- ասըմ ա.- ո՞նց ա, լավ ա՞, թե՞ չէ, որ ես քեզ ասել եմ աղից անոշ ախպեր, խի՞ ես նեղանըմ: Այ տրա համար եմ ասըմ, որ աշխարհս մեջ աղն ա ամենամաքու պանը:

Դժի էլ ետ եմ ասել, էլ կասեմ, աշխարհս մեջ աղն ու հողը անոշ են, որ երգիորը շնչավորը տհանց կպրկի, էտ էլ ասածը, էն հին մարթիքը: Աստոծից ինչ որ վեր ընգնի, տափը կընթուլի, տրա միար էլ տափին ասել եմ տափն անոշ պանն ա, ինչ կյա՛, ուզըմ ա հողի իրեսի շնչավորիցը, ուզըմ ա աստծանիցը, ինչ որ կարի, հողը վեր կուցի:

64(64). ԾԵՐ ՅՈՐ ԽՈՐՀՈՐԴ

Դին ժամանակներին ծնողնին որ ծերացել են, ժառանգությունը ծնողին վեր ունիլիս ա ընել տանիլիս մի հեռու սարըմ, պանըմ հիլ կանիլիս, կյալիս, որ, որ մի հեր ծերացել ա, տղեն վեր ա կալել էտ¹ հորը տըրել քթոցի միջին ու տարել մի սարի քմակի թողել ու ինքը ետ տառել կյալիս ա, որ ետ ա տառել, կյալիս տեղը հերն ասել ա.- Այ բալա, ետ արի,- ասել ա.- ետ արի:

Ետ ա տառել, ասել ա.- Ի՞նչ ա:

Թե.- Քթոցը վե կալ տար, քեզ պետկը կկյա:

Որ տհե ասել ա, տղեն մտածել ա, մտածել ա, ասել ա. «Որ իմ հերը քթոցի հմար էլ ա մտածոմ, որ կորչի ոչ, ես սրան ո՞նց ըստեղ հիլ անեմ: Քյնոմ վեր ունեմ,- ասել ա.- տանեմ մեր մարաքըմը կպահեմ, օքմի գիղենալ չի էլի»:

Դորը վեր ա կալել տարել իրանց մարաքըմը պահել, ըստը մնացել ա, տհե ըտի հաջ ու ճուր ա տալիս ըլել, ըտի պահիլիս:

Օրերի մի օրը էտ քաղաքըմ ծովիցը մի հրեշ ա պհամ եկել, ժողվուրթին կոխած ուտըմ ա, տրոմ առաջը կարըմ չեն առնեմ: Վերջը թաքավորը գորջ ա, ինչ ասես տուս ա պիրըմ, տրոմ առաջը առնըմ չի: Մի օր տղեն քյնըմ ա հոր կուշտը, հերը տրան հըրցըմ ա, ասըմ ա.- Այ բալա, ի՞նչ կա հնից-հորից էլի, մի պան ասա տենանք՝ ի՞նչ կա էլի:

Ասըմ ա.- Այ հերա, ի՞նչ ես ուզըմ մտնալ է՛:

Թե ասըմ ա.- Դե մի կենթանի մարթիկ եմք էլի, ուզըմ եմք մեմք էլ մի պան մտնանք:

Թե ասըմ ա.- Ի՞նչ ասեմ,- ասըմ ա.- մի հրեշ ա պհամ եկել,- ասըմ ա.- ուրեմը, աշխարհն կոխած ուտըմ ա:

Թե.- Բա տրոմ առաջը կարըմ չե՞ն առնեմ:

Թե ասըմ ա.- Զէ՛: Թաքավորը էսքան թոփ, պլիմոտ, գորջ տանըմ ա, կյալիս ա չիմ խմըմ ա քյնըմ:

Ասըմ ա թե.- Կքյնոս թաքավորին կասես՝ էտ հրեշը որդեղից տուս ա կյալի, ըստեղից կփռնես մի ակազին տարածություն հալի կքցես: Էտ հալին տհե քցած՝ էտ հրեշը որ տուս կյա հա՛, էտ հալըմը իրան շողը տենալ դի, եթե տեսալ, նա անպայման նրանից վախիլ դի, ասիլ դի, որ սա էլ ուրեմը ինձանից ա ուժեղ էլի, ինձ կուտի, հիլ դի անիլ փախչի: Տհենցով թե էտ ժողվուրթի առաջը առնվեց՝ առնվեց, եթե չէ, ուրեմը՝ չէ: Պետք ա տհենց անպայման առաջն առնվի:

Տղեն վախըմ ա, ասըմ ա.- Բա որ չի ըլի, թաքավորը իմ կյալիսը տա:

Թե ասըմ ա.- Զէ՛,- ասըմ ա.- տրոմ առաջը պետք ա տհե առնվի:

Տղեն վեր ա կենըմ քյնըմ թաքավորի կուշտը, թաքավորին ասըմ ա, որ.- Թաքավորն ապրած կենա, ես մի պան ասեմ, սհենց, սհենց մի պան էլի, արա, տենանք՝ ի՞նչ ա տառնըմ, կարող ա տրանով առաջն առնվի:

Թե ասըմ ա.- Լավ, տղա, էտ էլ կանենք, տենանք:

Թաքավորը պիրըմ ա, էտ որդեղից հրեշը տուս ա կյալի, ըստեղից փռնցըմ ակազին տարածություն, էտ հալին սարքըմ ու ըլետ իրան գորքը կոնցըմ: Քշերը մտիկ են անըմ տենըմ՝ հրեշը ծովին հրես լափու տալով՝ շըրմի-թըրմի կյալիս ա: Որ կյալիս ա հենց

¹ Այստեղ բանասացն ընդմիջում է պատումը և ասում. «Կարըմ չեմ է՛», որովհետև նա հիվանդ էր, և ծայրագրությունը կատարվում էր հիվանդանոցում (ծանոթ. բանահավաքի):

հասնում, հայրուհի մտիկ անում և ու ետ դետ
թռնում ընդհանուր ծովի մեջը ու քնում փախչում
կորչում: Են կորչիլն ա, ինչ կորչում, էլ կարում չի
տուս կյան: Հետո թաքավորը տղին կանչում ա,
ասում ա.- Ասա տեսնա՞մ ո՞ւմ խելքովը տու ետ
խոսքն ասեցիր ինձ, որ էտ գործը ըլի:

Ասում ա.- Ես եմ ասել:

- Չէ՛, ասում ա,- տղա,- ասում ա,- ասա տե-
սնա՞մ ի՞նչ ա, ո՞վ ա ասել:

Ասում ա.- Թաքավորն ապրած կենա, դե
ըստածանից թաքուն չի, քեզանից ի՞նչ թա-
քուն ըլի: Հորս տարա սինց, սինց քոլումը
տղրի, ինձ էս խոսկերն ասեց, դիմի՜ չարի,
հորս շլակեցի նորից ետ պիրի, տրել եմ մեր
մարաքընը պահել: Հմի որ քյնացի, ինձանից
հարցը փորց արավ, ես իմ հորն ասեցի, հերս
ինձ պատասխանեց, թե ասեց, որ կքյնաս թա-
քավորին սինց կասես: Հա՛, ասել ա հերս:

Ասել ա.- Էտ ա դե կքյնաս, հորըս ըտեղից
կհանես կպիրես,- ասում ա,- ես քու հորը
ուտելիքը, ամեն ինչը կտամ կտանես կուտը-
նես, փառավոր կպահես ծնողիս և էտ օրվա-
նից կընթուներ ծնողների խոսկերը, որ ուրեմը
ծնողը ավելի լավ ա ամեն ինչ հասկանում,
քան թե ջահելները: Երբ ծնողներին պահե-
ցեք և ծնողի խոսքն էլ անեք՝ վնաս չեք անի:

65(65). ՎԻՇԱՄՈՒ ՈՒ ՀԱՅԵԼԻԻ*

Հա՛, էտ ա էտ երգընը էտ սավետը՝ էտ
սեպեն, որոշում ա, որ իցցուն տարեկանիցը
պաշտը ինչքան մարթ ըլի, պետք է բոլորը
կտորեն՝ թամուլ: Պայց մի տղա էտ խորուրթի
անթամ ա ըլում, տղիանց հընգերն ա ըլում, մի
հայրիկ ա ունենում, շատ սիրիլիս ա ըլում
նրան, որ էտ որոշումը հանում են, ինքը շատ
տխրվում ա, ասում ա.- Էս ո՞նց դեմ անիլ, ի՞նչ
դեմ անիլ:

Ինքն ուզում ա իրան խփի, հերը էտ ցավին
ռռատ չկա՛ն էլի, իցցուն տարեկանից պաշտը
ա: Էտ ա մտածում ա, որոշում անում են պրծ-
նում, էքսի օրը ըսկսիլ դեն, որ արթեն էտ որո-
շումը կատարեն, իցցուն տարեկան հասակից
պաշտը բոլորին թամուլ կըտորեն:

Ըրուգունը կյանիս ա նեղացած իրանց
տուս, արթեն ռանգը-ռուշին մըտիկ են անում,
տան խալխերը տեսնում են՝ քեփը քեփ չի:

Ասում են.- Էտ ի՞նչ ա, էտ ի՞նչ ա:

Պան չի ասում, առանձին հորն ասում ա, որ.-
Հայրիկ, սին մի որոշում հանեցինք, իցցուն
տարեկանից պաշտը հասակավորներին թա-
մուլ ուրեմը կըտորիլ դեն, պայց ես քեզ
պաշտպանիլ դեմ, ինձ ուզում ա մորթեն, ուզում
ա կըռցեն, ինչ ուզում ա անեն:

Էտ ա վեր ա ունում հայրիկին մի էնպես
տեղ պատի միջի պաշտպանում, ըռավորը քյ-
նում ա ասում տղեն.- Ես ըրուգունին քյացել եմ
տեհել՝ իմ հայրիկը չկա:

Գիդեյին վըստահելի հընգեր ա, տա
խափիլ չի նըրանց, տըրանով էլ հավատում են,
որ տրա՛ հայրիկը չկա, էտ մեկելին կըտորե-
ցին՝ իցցուն տարեկանից պաշտին թամուլ
փըրթեցին: Միառժամանակ անց կըցավ, մի
քանի ամիս ա անց կենում, թե շատ ա անց
կենում, քիչ ա անց կենում, մի անդեր, ծովից մի
հըրամի տյուս ա կյանի, փեյդա՛ն ա ըլում էտ
ծովիցը, տյուս ա կյանի ծովիցը, ժողովորթին
դըռա՛ ծովը քաշում ա, հուրքով քաշում ա,
քյնում են, թամուլ տանում ա, կոխում ա ուտը,
աշխարհը հըվաքում ա կոխում ուտը: Կարում
չեն, ինչքան կըռվում են, հնար չի ըլում, հախ ու
իլլա՛ջ չի ըլում, ճարերնուն կտորում ա էտ դեկա-
վարության, մատում են մտածում:

- Ենձ մատաղ լոնց որ տու ասում ես, մեծ
մարթ ես, մի պան կգիդենաս՝¹, բա մի մենձա-
հասակ մարթ չկա՞, տեսնա՞ք իղև:

Մենձահասակ մարթ ե՞ն հիլ արել, իցցուն
տարեկանից պաշտը չի՞մ ճարթել եմ:

- Տեսնա՞ք էս ի՞նչ ցավ ա, ի՞նչ անենք
սըրուն, ո՞նց անենք, հնար չի ըլում:

Էտ ա էտ տղեն քյնում ա, գաղտնի, հոր
կուշտը, ասում ա.- Հայրիկ, սին մի պան կա,
կոխել ա ժողովորթին ուտը ա հարամին, կա-
րում չեն հախընմի՜ անեն, ինչքան կըռվում են՝
իլլա՛ջ չի ըլում, ո՞նց անենք:

Ասում ա.- Որթի՛, քյնացե՛ք էս պանի ճակա-
տի՛ շըֆաներիկ էտ հայրիկն որ չկա՞, տըրանից
էլ մենձ, մի քանի մետրը լեն, պաշտը, երգան

¹ Այս խոսքերով բանասաց դիմում է բանահավա-
քին (ծանոթ. բանահավաքի):

տիեմց մի հայրի շուշա կտրեցեք, տարեք, ինչ սահմանը որ մն ըրեքն ա, տոյուս ա կյալիս, էն ուղղության տարեք սարեցեք, կաղնըցրեք ընդի:

Էտ ա տիե տանըն են մախօրք սարքըն, պաղորաստըն, տոն որ տոյուս ա կյալի, Էսթեր ջան, դըքն մտիկ անըն ա տենըն, որ իրանից մի բեթարն էլ, էն հայլին... ինքն ա հա՛ էտ հայրի միջին՝ կեշ, ըռեխը պոց արած, մազերը փուշ արած, դըքի իրան դըժ արած հրե կյալիս ա էլի: Դետ ա քաշվըն ծովը մտնըն, էն օրեց մընկել սօր էլ, ուրեմը, միջև էս յոթանասնըհինգ թիվը էլ տոյուս չի կյալի, քյնացել ա կորել:

66(66). ԱԵԾԻ ԽՈՐՈՒՐԹԸ

Մի ազգ, մի ցեղ՝ քոչվորական, էտ ցեղը քոչվորմի են, տեղափոխվիլ դեն մեկ էլ մի ուրիշ տեղ: Դա՛, քյնըն են մի անապատ ընգըն էտ մարթիք, ճուր չկա: Էտ ազգի սովորությունն ա ըլել ծնողներին մինչև վաթցուն տարեկանը պահեն, ուզըն ա մեռնի, ուզըն ա՛ չէ, իրանք շարքից հանըն են: Տրանցից մեկը՝ մի ջառի, իրան հորը պահըն ա տեղաշորի միջին, գաղտնի պահըն ա, որ ոչ ոք չիմանա: Զուս ասմունքի, դե քյուլփոթ ա էլի, Ժղովուրթ ա, ճուր են ուզըն, օրգանիզմը ճուր ա պահանջըն: Տղեն կյալիս ա հորն ասըն ա.- Այ հերա, դրությունը շատ վատ ա:

Ասըն ա.- Ի՞նչ ա պըտահել:

Ասըն ա ճուր չկա, կտորվըն են, մարթ, թե անասուն:

Դորը որ կյալիս ա ասըն, հերն ասըն ա.- Զյնն մեր անասունիցը մի քառասուն աչառը չի, քանի տրանք քյնն, եղենն քյնն, քանի քյնն, եղենն քյնն:

Էտ տղեն էլ անասունին քընն ա: Դա՛ քյնըն են, հա՛ քյնըն են, որ հասնըն են մի դրիին, էտ անասունին սկըն են պառնաց-պառնաց անիլ, պոչով են անըն, ոտով են քանդըն, սկսըն ա... ճուր ա տուս քընն: Անասունին ճուր են խնըն, ինքը ճուր ա խնըն, հետ են կյալի, ասըն ա.- Բա, ճուր են քընել:

Դվաքվըն են քյնըն: Վերչը ասըն են.- Էս ո՞վ ա էս հընարքը քընել, էս ո՞վ ա ճուր քընել:

Տրանք ցեղապետը սկսըն ա, ասըն ա.- Ո՞վ էր սա:

Մի ջառիկ տուս ա կյալի, ասըն ա.- Էս են:

Ասըն ա.- Սոն քու խելքի պոն չի, ինձ ասա տենամ՝ էս ո՞վ ա:

Ասըն ա.- Սոն ի՞նչ հերն ա ասել, էս պահել են ի՞նչ հորը:

Ասըն ա.- Դա՛, ուրեմը մենք սխալ ենք արել, որ մեծերին կըտորել ենք, պետք ա մեծերին պահենք, մրանց խորուրթն էլ լսենք:

67(67). ԼԻՍՆԱԿԸ ԱՐԵՎԻ Ա՞, ԹԵ՞ ԱՆՁՐԵՎԻ

Էրկու ջառիկ տղա են ըլըն: Թե ասըն ա.- Արի քյնանք ֆորսի:

Տրանք վեր են կենըն քյնըն ֆորս: Սան են կյալի, ման, էտ օրը ոչ մի պոն քյնըն չեն: Մի տեղ մընըն ա, ասըն ա.- Էստեղ կրակ անենք, քչերս մնանք ըստեղ:

Ըստանց էն տղեն ասըն ա.- Դրե հա՛, մի կրակ ա ըրեքն, քյնն էն կրակիցը պի, էս էլ փետ հվաքեն, կրակ անենք:

Էտ տղեն քյնըն ա: Զյնըն ա տենըն ըստը աստվածը վեր ա էկել, մի թուխտ ծեռին կարթըն ա:

Ասըն ա.- Պառի ըրուզուս, պապի:

Թե.- Պառ ըրուզուս: Էտ ի՞նչ էս անըն:

- Պապի, եկել են քեզանից կրակ անենք, կրակ վառենք, հրեն հնգերս ընդի սպասըն ա:

Աստված դե գիղըն ա, ասըն ա.- Մի պոն հրցնեն, թե պատասխանես, կրակ կտամ:- Ասըն ա.- Լիսնակը արևի ա՞, թե՞ անձրևի:

Ասըն ա.- Անձրևի:

- Թոքը՞ չ:

Սոն էլ ա տառնըն: Տրան ծառիցը կապըն ա: Խառնարը տանք տրոն հնգերիցը: Ընդիան ղի ա տալի թե.- Արա՛, արի՛:

Որ շատ կանչըն ա, տենըն ա՛՝ եկող չկա, ինքն էլ ա ղվեր ընգընը կյալիս էտ լսի կողքը: Կյալիս ա ասըն.- Պառի ըրուզուս, պապի:

Թե.- Պառի ըրուզուս: Խեր ըլի, ընչի՞՞ Էս ման կյալի:

Թե ասըմ ա.- Դնգերս դրգել եմ կրակի, բա եկավ ո՞չ:

Թե ասըմ ա.- Դրես կկոծ:

Թե ասըմ ա.- Դե կրակ տու տանեմ, որ հնգերս կկոծ, կասես՝ ես տարա:

Ասըմ ա.- Տղա ջան, լիսնակը արկի ա՞, թե՞ անձրևի:

Ասըմ ա.- Պապի ջան, աստծու պանը ո՞վ կգիդենա:

Ասըմ ա.- Ապրես, բալես:

Տրան ըտի գրըցով ա անըմ մինչև լիսանըմ ա:

Ասըմ ա.- Տղա ջան, ես էլը հետդ կտանես իրա տիրոջ կյանընը կկապես, ժամանակով սա մարթ կտանում:

68(68). ԹԱՔԱՎՈՐԻ ՏՐԵՆ ՈՒ ԼՈԹԻՆ՝

Թաքավորի տղեն քյնըմ ա մի լոթի տղի հետ ախպերանըմ: Թաքավորը տրան ասըմ ա.- Այ տղա,- տղին էլի,- ա՛ բալա,- ասըմ ա.- խի՞ տիե բեղասլը պան արիդ,- ասըմ ա.- մի կնյազի տղա, մի պամեշչիկի, մի թաքավորի տղի հետ կախպերանիր, քյնոցել ես են լոթու հետ ախպերացել, թե ի՞նչ հասկանամ ես տրանին: Բա տու՛ թաքավորի տղա, մա էլ՝ են իք՝ լոթի:

Ասըմ ա.- Այ հերա, լավ տղա ա է՛, լավ տղա:

Ասըմ ա.- Դե որ լավ տղա ա, փլանքասը իմ թշնամին ա՛ են մարթը, թե էտ տղի հետ կքյնա մրան կտաք կապանեք, կպրտակեք, հիլ կանեմ մրա հետ ախպերանա, թե հու չէ՛ չէ:

Ասըմ ա.- Շատ էլ լավ կլլի:

Քյնըմ ա ես լոթուն ասըմ: Լոթին ասըմ ա.- Արի՛ քյնանը:

Էտ մարթին փոնըմ են տանըմ, քյնոցական ճուր ա էլի՛ արխ ա, տանըմ արխընը ֆորը կտրըմ, արխը կտրըմ դեն անըմ, ֆոր կտրըմ: Էտ մարթին տանըմ մորթըմ, սպանըմ քցըմ էտ ֆորի մեջը, ֆորը անըմ, ճուր ել վրովը բրախըմ: Ըրուզունը կռվիս ա, հերն ասըմ ա.- Ի՞նչ տանավ, բալա ջան:

- Այ հեր,- ասըմ ա.- բա որ ես քեզ ասըմ եմ լավ տղա ա, ըտենց էլ լավ տղա:- Ասըմ ա.-

սենց տարավ, մորթեց, ֆորը քցեց ու ճուրն էլ վրովը հա՛ բրախեց:

Թե ասըմ ա.- Շատ էլ լավ կլլի: Արի քյնանը:

Կռվիս են բազարն էլի՛՝ յարմուրկա, ոնց որ էտ մեր էրևանի շուկեն: Եդդ հերն ասըմ ա.- Դե մա հու ինձ ճաննըմ չի, տուն կկանչես ինձանից քիչ մոտիկ մրա ըռիսին մի լավ սիլլա կտա: Էտ լոթուն: Տենամ հլա քեզ ի՞նչ ա պաղասխանըմ:

Կռվիս են, որ մոտանըմ են հա՛, էտ թաքավորի տղեն էտ լոթու ըռիսին մի լավ սիլլա ա տալի: Որ սիլլեն տալիս ա, էտ լոթին կաղնըմ ասըմ ա.- Դարիր հատ սիլլա էլ տաս,- ասըմ ա.- ճուրը առնի վրովը քյնա, չեմ ասի:- Էտ լոթին.- Սխպեր,- ասըմ ա.- սիե հարիր սիլլա տաս, ճուրը առնի վրովը քյնա, չեմ ասի:

Դերը կաղնա՞մ ընդի, դովրիշի ֆորմըմ, մա՞նըմ ա, ասըմ ա.- Ըրուզունը կպիրես էտ տղին:

Ըրուզունը վեր ա ունըմ էտ տղին կռվի: Դա՛, այ տղա, ո՞նց, դե-դեն ասիլեն, խոսիլեն պիրըմ, որ տենըմ էտ շնորքի տեր մարթ ա, են մասսայի միջին մա մրան սիլլա ա տվել, մա դարցյալ էտ ա տանել փոխարինաբար ասըմ.- Տուն որ հարիր հատ սիլլա տաս, ես իմ արած գործը չեմ ասի ոչ մի տեղ: Մորթել ենք արխընը թաղել, ճուրը վրովը կապել, էտ պա՞նըմ ես չեմ ասիլ:

Պիրըմ դազավոր կազմըմ, պայմանագրով երկուսին էլ ախպերցնըմ: Էն լոթին տուս ա կռվի մի հրաշալի տղա, իրան տղեն էլ: Երկուսն էլ: Առաջի հերթին տրան ա թաքավոր տնըմ էտ լոթուն: Տանըմ իրան համար թաքավոր՝ են լոթին, աշխար դեկավարըմ, իրան թուշին դեկավարուրին անըմ: Իրան են տղեն էլ՝ իրան սեփական տղեն էլ, հետը տանըմ են ախպերացու, ախպերտինք տանըմ, իրար հետ էլ ապրըմ:

69(69). ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՂՏՆԻՔԸ՝

Իրեք ախպեր են ըլըմ, էտ երկու փոքրը պըռավըմ են, սիպտակըմ են, էտ մենձը պըռավըմ չի, սիպտակըմ չի: Տերինք են ասըմ, դե հու մենք մրան չենք տեսել, վեր ա կենըմ

ճամփեն նի քյնալիս, քյնըմ ա տենըմ էտ ծերունի ախապերտիները չափար են անըմ իրանց հողի դրաղին, որ փերզեն էլի, անասուն, պան չը մեչը տառնա:

- Փլանի տունը ո՞րն ա, տղե՛ք ջան:

- Յա՛, էն ա, կքնաս նրա տուն:

Վեր ա կենըմ էտ մարդը քյնըմ նրա տուն: Յա՛, քյնըմ ա տուն, դո՞ւնա ա էլի: Ասըմ ա.- Ղո՞նաղ չե՞ք ուզի:

- Ղա՛, դո՞նաղն աստծունն ա, խի՞ չենք ուզիլ:

Նստըմ են, կյնգանն ասըմ ա.- Այ կնիկ, դարիք մարթ ա էլի,- ասըմ ա,- հաց չի՞ն պի ճաշենք, հաց-պան ուտենք, տենանք՝ ի՞նչ ենք անըմ:

Էլ ուրուշ պան չի ունենըմ, էտ մարթի տանը մի հատ ծծերուկ ա ունենըմ: Տա՛ տրան քննելու ա քյնացել, որ՝ տենամ՝ սա խի՞ չի պառավըմ:

Իրեք հետ դու անըմ ա, ասըմ ա.- Այ կնիկ, քյնա էլի,- ասըմ ա, հու ուրիշ լավ, թանգարծեք պան չունենք, մի ըրմակի ծծերուկ պի էլի:

Էլ ունի ո՛չ, սուտ ա: Կենդ է՞մ մինն ա: Իրեք հետ տազ արած քյնըմ ա կյալի, քյնըմ ա կյալի: Յա՛ վերջըմ, որ կյալիս ա հա՛, ասըմ ա.- Լավն ա, տա իսկականն ա:

Էտ տերիքն ասըմ ա.- Այ տղա, ո՞նց ա քու փոքրն ախապերտիները պըռավել են, տուն չես պըռավըմ: Ի՞նչ ա պտահել քեզ:

Ասըմ ա.- Նկատեցիր ո՞չ:

Ասըմ ա.- Ի՞նչ դե՞մ նկատիլ, էն ա, նստած՝ սեղանին, հաց ենք ուտըմ:

Ասըմ ա.- Արի քյնանք մեր տունը-տեղը ման կյանք, մեր պաղվալնին, ոչ մի՞նը չկա: Էն իրեք հետ որ ես նրան դու արի, էն ծծերուկը տարավ պաղվալը ետ ետ եկավ, նրանով էլ ես չեմ պռավըմ, որ իմ կնիկը իմ առաջին ծեղը ետ չի թեքըմ, լուզվին չի անըմ: Տրանով էլ ես պռավըմ չեմ: Միայն միանց մի պլետեմի ծնջիլ ա պակաս, որ ճտերնուն քցեն կապեն ֆըրմայըմ: Տրանով էլ ես պռավըմ չեմ:

Նկատըմ ա տերիքը, որ իսկապես ճիշտ ա: Սշխարիս մեչ համեստութիւնը, ամեն տեղ էլ հաղթանակ կտանի:

Էտ Ղարիքը աշուղ ա ըլըմ, ըրեխա էլի, մի մեր ա ունենըմ, մի քիչ: Յիմա էտ խոջա Բաղալի ըխճկանը սիրըմ ա (Շահ-Սանամը), որ իրար հետ հարմարվըմ են, ասըմ ա (դե քյնսիք տղա ա ըլըմ էլի), ասըմ ա.- Այ մարթ,- ասըմ ա,- դե ի՞մ հերը հարուստ ա,- ասըմ ա,- տոււ փող չունես, ես,- ասըմ ա,- փող կըտիզեմ,- ասըմ ա,- քեզ կամուսնացնեմ:

Էտ աշուղ Ղարիքը շատ կնըզվըմ ա, ման կյալիս ա ըլըմ, քյնըմ ա տենըմ՝ մի տուն, մտնըմ տենըմ, որ մարթ ու կնիկ կռիվ են անըմ իրար հետ:

- Ի՞նչ ա պատահել:

Ասըմ ա.- Բա դե ի՞մ փողովը հըրսանիք եմ արել,- էտ ախճիկն ասըմ ա,- մեկ էլ,- ասըմ ա,- իրար հետ յուլա չենք քյնըմ:

Յա՛, էտ Ղարիքը, որ լսըմ ա հա՛, կյալիս ա ընքելան ասըմ.- Չէ,- ասըմ ա,- Շահ Սանամ, ես քյնացի փող աշխաղիլու, եթե,- ասըմ ա,- յոթ տարի կկենաս՝ կկենաս, կենալ չես՝ մեղըը քու շլիքը: Ես քյնալ դե՞մ յոթ տարի,- ասըմ ա,- աշխաղիլ, փող աշխաղիլ կյալ, որ,- ասըմ ա,- հըրսանիք ըլիլ, քեզ տանիլ:

- Դե,- ասըմ ա,- քյնա, պորի ճանապար:

Էտ Աշուղ Ղարիքը վեր ա կենըմ քյնըմ թավրիզ՝ Օսմանլի քաղաք: Թավրիզ քաղաքն ա քյնըմ, քյնըմ տենըմ, որ ըտեղ մի հայաք ա, տատրկու սազ կախ արած, սազերը կախ արած էլի: Էտ փաշի՝ Ամըր փաշի սազանդարնին են ըլըմ էտ մարթիք: Իրան սազը տանըմ ա ընքելը բոլորից պացրը կախ անըմ, էտ աշուղ Ղարիքը, որ բոլորից պացրը կախ անըմ ա հա՛, աշուղնին կյալիս են տենըմ, որ իրանց սազերից պացրը մինը կախ արած ա: Թե.- Էս ի՞նչ պան ա:

Քյնըմ են փաշին խաբար տալի, որ սիե, սիե մարթ ա եկել:

- Լավ,- ասըմ ա էտ փաշեն:

Կանչըմ ա էտ Ղարիքին նստըցնըմ, կլուրըմը նստըցնըմ էտ տասներկու աշուղին էլ, տըրան էլ: Էտ աշուղ Ղարիքը բոլորին էլ կապըմ ա, էտ աշուղ Ղարիքը տառնըմ ա տը-հանց մեծը, էտ տատրկու աշուղի մեծը, ըսկսըմ էտ փաշի միար խաղ ասիլիս:

Յոթ տարին թմամվում ա, յոթ տարին թմամվում ա, հիմա էտ Շահ-Ստնամին հերը պիրում ա, Շահ-Վալադդ կա, Շահ-Վալադդին նշան ա տընը, որ հըրոսանիք անեն: Էտ Ստնամը էտ Ղարիբի թվորը վեր ա ունըմ կետի ափին ման կյալիս ա ըլըմ, կետի ափին ման կյալիս ա ըլըմ՝ սև շոր հաքած, քիրն էլ, Ստնամն էլ՝ սև շոր հաքած ման կյալիս են ըլըմ: Սան կյալիս տեղը մտիկ ա անըմ տենըմ քյալվանը կյալիս ա, հա՛, բազըրգյանի քյալվանը կյալիս ա: Կյալիս ա, որ կաղըմ ա, ըտի ման են կյալի հա՛, էտ բազըրգյանը կանչըմ ա, ասըմ ա:¹

Թիփլիզ են ապրիլիս ըլըմ: Կանչըմ ա, ասըմ ա.- Բույրիկին,- ասըմ ա,- էկեք ըստեղ տենամ էտ ի՞նչ ա ծեղ դորդը, որ սև հաքած էտ գետի ափին ման եք կյալի:

Էտ ա ման կյալեն, ման կյալեն՝ կյալիս են, էտ մարթն ասըմ ա թե.- Ասա տենամ, քույրիկ, ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Բա ես սիրած ունեմ, սիրածս էս ա յոթ տարի ա քյալցել ա, խաբար չկա, մըրի իմ հերը զոռով նշան ա տըրել ինձ՝ Շահ-Վալադդին ա տալի, վաղը չէ մյուս օրը հըրոսանիք ա, մի քանի օրից եղը հըրոսանիք ա էլի:

Էտ Շահ-Ստնամն էլ՝ ճարը ծեղին, որ պըսակիլու ժամանակը ճարը խմի՝ ոչնչանա:

- Լա՛վ.- ասըմ ա,- դե հասցեն տու,- ասըմ ա:

- Նո թավրիզ շահարըմն ա, թավրիզ շահարըմն ա:

- Լա՛վ.- ասըմ ա:

Էտ Ստնամի առին ոսկու պուճրիկ թաս ա ըլըմ, նվեր տված ա ըլըմ էտ Ստնամին: Էտ թասը տալիս ա էտ բազըրգյանին, էտ բազըրգյանը էտ տասներկու ուխտը ծախիլեն, վերջացնիլեն դես անիլեն, դեն անիլեն՝ քյնըմ ա հասնըմ թավրիզ քաղաքը, քյնըմ ա թավրիզ քաղաքը հասնըմ: Թավրիզ քաղաքըմը, կեղի դրաղին մտիկ անըմ ա տենըմ, որ մի տիե երկու ըրեխա կոճի են խաղ անըմ, կոճի են քցիլիս ըլըմ: Մի պուճուկը կա էլի, իմ թոռան պես մի պուճուկը կա, էտ պուճուկը հարերդա, նիե հեռու կաղնել ա մտիկ անըմ ա էլի, էտ

պուճուկը հարերդա տըհանց ախտըմ ա: Ասըմ ա.- Բալիկ քան, էտ ո՞նց ա...

Ասըմ ա.- Պահ, էտ էր պակաս, բա աշուղ Ղարիբն էլ ա պուճուկ ըլել.- ասըմ ա,-որ էկել ա հրե տասերկու սագիցը խլել ա, պաճորը կախ արել:

- Վա՛յ, ես քե մատաղ,- ասըմ ա,- տեղը գիղե՞ս:

- Չա՛:

- Առ,- ասըմ ա,- դե ես մի հատ ոսկին, ինձ տար,- ասըմ ա,- տար շիանց տու նրան:

Էտ ըրեխեն ոսկին վեր ա ունըմ, էտ բազըրգյանի դաքին քյնալեն, քյնալեն՝ քյնըմ ա նրա հանրագացարանը, մտիկ անըմ տենըմ, որ էտ աշուղը տոռ կա ոչ, տեղը չի: Գեղդանգեք էտ աշուղը կյալիս ա տենըմ, որ իրան կռավաթի վրա մի մարթ՝ խըտոր ընգած:

- Բարև:

- Բարև, քեզ մատաղ:

Ասըմ ա.- Տու ո՞վ ես:

Ասըմ ա.- Ես բազըրգյան եմ: Բա տու՞ ով ես:

- Ես էլ աշուղ Ղարիբն եմ:

Ու հազ-պան են սարքըմ ըստը, արաղ-կնի, պան են տընըմ, ու հա՛՝ մատանին հանըմ ա քցըմ ըստաքանի մեջը, էն ոսկա թասը հանըմ ա քցըմ, մտիկ անըմ ա տենըմ՝ իրան տվածն ա:

- Պահ, բազըրգյան կարդաշ, էկած ճամփին մատաղ ըլեմ: Ասա ինձ՝ հասկանամ քեզ: Ո՞նց տեհար Շահ-Ստնամին տու:

- Է՛,- ասըմ ա.- Ղարիբ, քիրտը էլ, Շահ-Ստնամն էլ կետի ափին, սև շոր հաքած, լւաց ըլիլեն՝ ման են կյալիս, չեն քյնըմ, կորել ես, չեն քյնըմ քեզ: Չիմա էկա քյած քեզ, վաղը չէ մյուս օրը,- ասըմ ա,- Շահ-Ստնամի հըրոսանիքն ա, հնար ունես, կարըմ ես ներկայանաս:

Տա՛ վեր ա կենըմ քյնըմ փաշի կուշտը՝ Ա՛մըր փաշի կուշտը, բազըրգյանին էլ հետը տա՛նըմ:

- Բա տու Ղարիբ, տու ահեցիր, որ ես մի պան էլ չունեմ, ես ու ես եմ, հիմի ինչպե՞ս անեմ քեզ, ախըր տու իմ աշուղն ես, էկել ես իմ բոլոր աշուղներին էլ վոն արել, հիմա ինչ-պե՞ս անենք մենք:

Վերջը նրա կնիկը, մերը, պանը, կնանիքը սիե վրած են տառնըմ էտ փաշին համոզեցնըմ,

¹ «...Ո՞ր քաղաքում են ապրում», հարցնում է բանահավաքը:

պիրճմ ա մի տոպրակ ոսկի տալի, մի ծի տալի, ասըմ ա.- Դե քյնմ:

Սազը վեր ա ունըմ կյալի մի սարի կըլիս էտ ծին մնըմ ա, ծին մնըմ ա, բըրախըմ ա էտ ծին: Սազը վեր ա ունըմ կյալի մի սարի կըլիսն մատըմ ընքելը ածըմ, ածըմ լաց ըլըմ, ածըմ լաց ըլըմ, ածըմ լաց ըլըմ, սազին տալի է՛, ասըմ ա.- Ինչ տեղ հասցիրք,- սազով ածըմ ա:

Դե լավ աշուղ ա ըլել, ածիլեն, ածիլեն՝ մտիկ ա անըմ տենըմ՝ հրես մի ծիյավոր եկավ, բոզ ծիյավոր եկավ:

- Տղա,- ասըմ ա.- որդե՞ղ ես քյնըմ:

Թե ահըմ ա.- Բյնըմ եմ էլի:

- 2է՛, չէ՛, ասա տենամ որդե՞ղ ես քյնըմ:

Էտ էլ ահըմ ա սուրփ Սարքիսն ա ըլել էլի: Եկել ա:

- Վեր,- ասել ա,- թարքս ըլի,- էտ ինչը,- ասեց,- խուրջինը ինձ տու:

Տալիս չի ըլել:

- Մի վախիկ,- ասըմ ա.- մի վախիկ, գիդեմ որ ոսկի յա, տո՛ւր,- ասըմ ա.- էլի քունն ա ոսկին:

Պիրճմ ա ըլետ էլի մի տեղ վե տընըմ, քյնըմ: Դե գիդըմ ա, որ թիփիլզ դի քյնըմ՝ սուրփ Սարքիսը: Ըլետ վեր ա կյալի, ըլետ սկսըմ ածիլը, ածըմ լաց ըլըմ, ածըմ լաց ըլըմ: Եկավ:

- Մյ տղա, բա տու ահեցիր, որ փլան տեղը դեմ քյնըլ, ասա էլի, ասա:

Ասըմ ա.- Ես թիփիլզ դեմ քյնըլ, Կոճոր սարը՝ Կոճոր:

Թիփիլզա կըլիսին Կոճոր կա, կիիշե՞ս¹: Զա՛, Կոճոր: Էտ ա պիրճմ ա ըտեղ վե տընըմ, էտ մարթը վեր ա կենըմ կյալի, կյալի քաղաք, իրանց տան մոտ ախարա ա ըլըմ, արթեն ըրգանթեմ ա ըլել, ապրանքնին հըվաքվիլիս տեղը, մտիկ ա անըմ տենըմ, որ մի ախճիկ ճուր ա լըցնըմ:

- Քույրիկ,- ասըմ ա.- կարելի՞ ա մի բաժակ ճուր տաս:

Էտ ախճիկը ըստաքանը ըրողըմ ա, վեր ածըմ, վեր ածըմ, վեր ածըմ, վեր ածըմ, հե-տով ասըմ ա.- Դե, խի՞ տհե արիր:

Ասըմ ա.- Եխալայր,- ասըմ ա.- տու քըրդնած իր, քըրդնած իր,- ահըմ ա,- սա էլ սառը ճուր ա, կըիվընդանաս,- ասըմ ա.- թող մի քիչ հանգստանաս՝ յեղով:

Էտ ա, որ ճուրը խմըմ ա, ասըմ ա.- Բա տու խի՞ ես սև շոր հաքել:

Թե բա ի՞նչ անեմ,- ասըմ ա.- Ես,- ասըմ ա.- աշուղ Ղարիբի քիրն եմ, նրա սիրած Շահ-Սանամն էլ, ըրուգունը հըրսամիքն ա:

Չըրսամիքն էլ ածիլիս եմ ըլել:

- Ես ըրուգու էլ,- ասըմ ա.- նրա հըրսամիքն ա, հրե ածըմ եմ, Շահ-Վալադը տանըմ ա էլի, բալի,- ասըմ ա.- աշուղ Ղարիբիք...

Ասըմ ա.- Աշուղ Ղարիբը ճամփին ա, կամ կկյա, կամ էկած կըլի:

Էտ Ղարիբն ա քվորն ասըմ, իրար ճընամ-չըմ չեն: Թե հլե, վա՛յ ֆուքի, թե ախպերը ճընամչըմ ա, հա՛ էլի, հա՛, ախպերը...

- Ես աշուղ Ղարիբի քիրն եմ:

Ասըմ ա.- Կա՛ց, մի վախիկ,- ասեց,- աշուղ Ղարիբը ճամփի յա, կամ կկյա, կամ էկած կըլի, մի մտածիլ:

Էտ ախճիկը քյնըմ ա ասըմ.- Նանի՛:

Ասըմ ա.- Ի՞նչ ա, բալա քան:

Մի տղա էր էկել,- ասըմ ա.- Էկել ախպերըմ սհե, սհե ճուր խմեց, ասեց՝ Ղարիբը կամ կկյա...

- Է՛,- ասըմ ա.- լաչառի մեկը, էկար ըլետ,- ասըմ ա.- սարսաղ պոմ ասեցիր,- ասըմ ա.- Ղարիբն ո՞ր ա, որ կյա:

Մերն էլ կուր մտած ա ըլըմ, մերը կուր մտած ա ըլըմ տան միչի, լաց ա ըլըմ, սազն էլ կախ արած, ասըմ ա.- Օխտը տարի,- ասըմ ա.- թող կախ արած կենա,- ասըմ ա.- իմ սազը, եթե սմերը կտրատվեց վե տոնով, հա՛ մացի կաց, որ ես էլ չկամ, եթե սմերը սաղ կենըմ ա հա՛, ուրեմը ես սաղ եմ:

Էկել ա տեհել, որ սմերը սաղ կենըմ ա, հա՛:

- Մայրիկ,- ասըմ ա.- կարելի ա՞,- ասըմ ա.- սազը վե պիրիլ:

Ասըմ ա.- Զա՛:

Եր ա պիրճմ տալի:

- Վի՛յ,- ասըմ ա.- քու մանգզիլտ կարճ մնա², ասըմ ա.- խի՞ ասըմ ա.- ըրեխիս սազը

¹ Բանասաղը հարցն ուղղում է ունկնդրին (ծանոթ. բանահավաքի):

² Մանգզիլտ կարճ մնա (անեծք) – կյանքը կարճ մնա (ծանոթ. բանահավաքի):

սըմերը կտրատեցիր, ուրեմը ըրեխես կա ոչ, որ կտրատել աս:

Վերջը էտ ա ըտեղան փուշի պիրած ա ըլըմ, ծիյու տակիցը փուշի յա վրիաքըմ պիրծը, լաժ էլ կտոր ա պիրած ըլըմ, լաժ պան ա պիրած ըլըմ¹: Զը՝ մոխիր ա, մոր աշկերն ա քսըմ, աշկերը պանց ա ըլըմ:

Վերջը ըտեղան կյալիս ա, թե.- Բա են ի՞նչ հըրսանիք ա:

Թե ասըմ ա.- են էլ.- ասըմ ա.- իմ տղի հըրսանիքն ա:

Էլ չի ասըմ, թե՝ քու տղեն եմ եկել եմ է՝

- Իմ.- ասըմ ա.- աշուղ Ղարիբիս սիրեկանն ա: Ղարիբս քյնաց.- ասըմ ա.- հետ չի եկալ:

- Դե՝, մայրիկ.- ասըմ ա.- մի մտածիլ կամ եկած կըլի, կամ ըստեղ կըլի:

Էտ ա, որ մոր աշկերը պանց անըմ ա, հա՛:

- Ես.- ասըմ ա.- աշուղ Ղարիբն եմ, եկել եմ:

Սազը վեր ա ունըմ քյնըմ հըրսանքատուն, քյնըմ տենըմ՝ մարտքեն նստած, որ տուռը պանց անըմ ա, ասըմ ա.- Տեսնեմ.- ասըմ ա.- ծըրքին բարև տամ, տեսնեմ.- ասըմ ա, որ դոլն ա ինձ ընթուրուն էլի:

Մի դոլը քահելանցոցն ա ըլըմ, քահել մասը, մի դոլը մեծահասակն ա ըլըմ: Էտ, Գիժ Մանուկն ենք ասըմ, Գիժ Մանուկն էլ տըհունց խըմքապետն ա ըլըմ էլի, տե՛ն: Զը՝ թամայեն: Գիժ Մանուկը, Թիփլիզա Գիժ Մանուկը, թամայեն ա ըլըմ: Սազին տալիս ա, տալիս ա, ծեն ածըմ ա, Շահ-Սանամն էլ էտ ճարը ծեռին փարդուկի տակին, քիրը քյնըմ ա ասըմ թե.

- Շահ-Սանամ Ղարիբը եկել ա:

Թե.- Ի՞նչ ես ասըմ, Ղարիբը որդեղա՞ն ա եկել:

Թե ասըմ ա.- Ղարիբն եկել ա:

Որ սազին տալիս ա հա՛ Ղարիբը, են իքը եղ ա քցըմ, սկսըմ են ասիլը: Նա ասըմ ա՛ նա ասըմ ա, նա ասըմ ա՛ նա ասըմ ա, հա՛ էտ Շահ-Վալդոը մի հիմզանց ոսկի ա հանըմ:

- Տարեք.- ասըմ ա.- իրան տվեք, ռաղ ըլի կորչի:

Մանըմ ե՛ս, թե՛ չէ, որ տանի իրան տա, ռաղ ըլի կորչի, հա՛, տուս ըլի կորչի: Էտ Գիժ Մանուկը վրա ա պըրծըմ, ասըմ ա.- Զի կարելի, թող ամի:

Վերջը պիրծ են, ո՞նց անեն, ի՞նչ անեն, համոզեցնըմ, էտ աշուղ Ղարիբի քիրը տալի տըրանց, հըրսանիքը խընգարըմ չեն, խընգարըմ չեն, ամուսնանըմ են իրար հե՛տ, Շահ-Սանամը Ղարիբին ա առնըմ, Ղարիբի քիրն էլ Շահ-Վալդոին ա առնըմ: Տե՛ն էլ ըլըմ ա, բալա քան: Դա՛, տըրանով վերչանըմ ա:

Դա՛, ասըմ ա, խաղ ա կանչըմ ասըմ.- Է՞,- ասըմ ա.- ըռվողվա նամազն.- ասըմ ա.- արել եմ Թավրիզ քաղաքըմ, ըրուզվա նամազը կատարել եմ Կոճոր սարի կըլխին:

Ըռավողին Թավրիզից տուս ա եկել, ըրուզուցն էլ եկել մտել Թիփլիզա քաղաքը:

71(71). ԹԱՔԱՎՈՐԻ ԿՅԼԽԻՆ ՊՈՋ ԿԱ

Մի թաքավորի ճըկատըմ պոզ ա տուս էկած ըլըմ: Դալլաքնին քյնըմ են թըրաշըմ:

- Զի պան ասեք հա՛, պան չխոսիք, որ թաքավորի կըլխին պոզ ա տուս եկել:

Էտ մի դալլաքը քահել ա ըլըմ, համփերըմ չի էլի, քյնըմ ա մի խոր ֆոր կըտորըմ, էտ ֆորըմը կռանըմ.- Թաքավորի կըլխին պոզ կա, թաքավորի կըլխին պոզ կա:- Ասըմ ա ֆորի միչին, կըլլալը ծածկըմ, տուս ըլըմ քյնըմ:

Էտ ֆորիցը մի դարդուս ա հասիլ կյալի էլի՝ չոթան, օրինակ, չոթան: Էտ դարդուն հասիլ ա կյալի, մի ճոզարած ըրեխա քյնըմ ա էտ դարդուն կտորըմ թուքով շինըմ, օրինակ, շվու, ածըմ ա: Զանի ասըմ ա.- Շուռ տուր ինձ.- շուռ ա տալի, ասըմ ա.- թաքավորի կըլխին պոզ կա, թաքավորի կըլխին պոզ կա:

Էտ ըրեխեն որդի նստըմ ա ածըմ ա.- Թաքավորի կըլխին պոզ կա:

Հայդարարըմ ա, որ. «Փաղշահըն բույնուզու վար», թուրքերեն ասըմ են. «Փաղշահըն բույնուզու վար»: Դմի խանաթը ինքքան կախտին գործ ուզըմ ա փըրնի, նա օխտը մետրա ֆորի միչին ասել ա, դարդուս ա հասիլ էկել, էն դարդուն լուզուս ա ըլել, որ էս կեղծ մարթ ա, թաքավորի կըլխին պոզ ա տուս էկել:

¹ «...Փուշին ո՞րն ա», - հարցնում է բանահավաքը: